ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ



ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Նվիրում եմ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արտակ Մովսիսյանի *լուսավոր հիշատակին*

HOVHANNES KHORIKYAN

ADMINISTRATIVE DIVISION OF ACHAEMENID PERSIA

GYUMRI
ELDORADO
2021

9(55)
Խ-82
6370

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

13.12.2021թ.

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԳՅՈՒՄՐԻ
ԷԼԴՈՐԱԴՈ
2021

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Խ 826

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր ***Էդուարդ Խուրշուդյան***

Գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ***Երվանդ Մարգարյան***
բանասե. գիտ. թեկնածու, դոցենտ ***Վարդան Ոսկանյան***

Խորիկյան Հովհաննես

Խ 826 Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը/ Հ. Խորիկյան.- Գյումրի: Էլդորադո, 2021. – 456 էջ:

Աշխատության մեջ քննարկվում են Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման և էթնիկական կազմի հնդիրները, որոնց պարզաբանումը կարևոր է ոչ միայն իրանագիտության, այլև Հին Արևելքի պատմության ուսումնասիրության համար:

Հասցեագրվում է արևելագետներին, ուսանողներին, ինչպես նաև Հին աշխարհի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-826-87-5

© Խորիկյան Հ.Գ., 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1.1. Հոնիայի վարչական բաժանումը.....22
1.2. Կարիայի վարչական բաժանումը.....32
1.3. Լյուկիայի վարչական բաժանումը.....41
1.4. I սատրապության մյուս ժողովուրդները.....51
1.5. II սատրապության տարածքը.....60
1.6. Մեծ ու Փոքր Փռյուգիաների տարածքը.....72
1.7. III սատրապության մյուս ժողովուրդները.....88
1.8. Կապադովկիայի տարածքը և սահմանները.....92
1.9. Կիլիկյան սատրապության տարածքը և սահմանները.....105

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀՅՈՒՍԻՍԱՖՐԻԿՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՄԻՋԵՐԿՐԱՇՈՒՅՑԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Եգիպտոսի սատրապական բաժանումը.....116
2.2. Արաբիայի և Պաղեստինի վարչական բաժանումը.....126
2.3. Սիրիայի վարչական բաժանումը.....140
2.4. Փյունիկիայի վարչական կացությունը.....150

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

3.1. Հին Հայաստանի տարածքը մ. թ. ա. VI-IV դարերում՝ ըստ Մովսես Խորենացու և այլ հայկական աղբյուրների.....160
3.2. XIII սատրապության վարչական կացության մի հարցի շուրջ.....172
3.3. Սատրապական Հայաստանի կենտրոնի հարցի շուրջ.....175
3.4. Ալեքսանդր Մեծը և Հայաստանը.....187
3.5. Սասպեյրների տեղորոշումը.....197
3.6. Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ.....204
3.7. XIX սատրապության տեղադրությունը.....215
3.8. Ութերորդ սատրապության տեղադրությունը.....215
3.9. Բաբելոնական սատրապության վարչական բաժանումը.....226
3.10. Մարական սատրապության տարածքը.....233
3.11. Կադուսիների տեղադրությունը.....262
3.12. Մարական մյուս ցեղերի տեղադրությունը.....278
3.13. Պարսա երկրի վարչական կացությունը.....287

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
4.1. Միջին Ասիայի սատրապական բաժանումը 295
4.2. XIV սատրապության էթնիկական կազմը 311
4.3. XI և XV սատրապությունների տեղադրությունը 318
4.4. Սակա երկրի տեղադրությունը 334
4.5. VII սատրապության տեղադրությունը 344
4.6. XX սատրապության տեղադրությունը 354
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ
5.1. Վարչական բաժանման սկզբունքն Աքեմենյան Պարսկաստանում 362
5.2. Սկուդրայի վարչական կարգավիճակն Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգում 370
5.3. Վերաբնակեցումներն Աքեմենյան տերությունում 374
5.4. Ակաուֆաչիյա երկրի տեղադրությունը 379
5.5. Աքեմենյան ռազմավարչական մի պաշտոնի շուրջ 388
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 395
SUMMARY 400
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 403
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 407

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մ. թ. ա. 550 թվականին՝ մարաց Աստյուագես թագավորին պարտության մատնելուց հետո, Կյուրոս Բ-ն կարճ ժամանակաշրջանում ստեղծում է աշխարհակալ մի տերություն, որի սահմանները Դարեհ Ա-ի օրոք ձգվում էին Հնդկաստանից մինչև Բալկանյան թերակղզու հյուսիսային շրջաններ, Կովկասյան մեծ լեռնաշղթայից մինչև Հյուսիսային Աֆրիկայի առափնյա շրջաններ և Եթովպիա: Համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ ստեղծվում է նախադեպը չունեցող վիթխարածավալ մի կայսրություն, որտեղ բնակվում էին տասնյակ ցեղեր և ժողովուրդներ: Սրանց հնազանդության մեջ պահելու և հարկային գործը կարգավորելու համար Դարեհ Ա-ն մ. թ. ա. մոտ 517 թվականին ստեղծում է վարչական կառավարման այնպիսի ձև, որը պատմության մեջ հայտնի է սատրապական համակարգ անվանումով: Վարչական այս միավորներն ընդգրկում էին խոշոր տարածքներ, որոնք երբեմն համապատասխանում էին մինչաքեմենյան պետական կազմավորումների սահմաններին[1], և Աքեմենյան վարչական համակարգի ձևավորման շատ տարրեր ժառանգեցին նաև Սելևկյանները:

Սատրապությունների[2] ցանկը կամ պարզապես հարկացուցակը[3] պահպանվել է պատմահայր Հերոդոտոսի աշխատությունում[4], սակայն ցուցակի բաղդատումը, համաձայն որոշ ուսումնասիրողների, անհամապատասխանություն է դրսևորում պարսից արքաների արձանագրություններում հիշատակվող երկրների հերթականությանը: Խնդիրն այն է, որ սեպագիր արձանագրություններում, ի դեմս թվարկվող երկրների, փորձել են տեսնել Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման արտացոլումը: Օրինակ, տարակարծությունների տեղիք կարող է տալ այն հարցը, թե ինչու՛ Պարթևստանը, Արեյան, Սոգդը և Խորեզմը ընդգրկված են XVI սատրապության մեջ, երբ արձանագրություններում այդ երկրները հիշատակված են առանձին-առանձին: Այս և այլ անհամապատասխանությունները, բնականաբար, պատճառ

[1] Henkelman W. F. M., Jacobs B., Stolper M. W., Introduction: Tracing the Imperial Signature, in: Administration in the Achaemenid Empire, CO, Band 17, 2017, p. XXXIII.
[2] Lehmann-Haupt C. F., Satrap, RE, München, 1921, SS. 82-188.
[3] Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, in: Coinage and Administration in the Athenian and Persian Empires: The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History, Oxford, 1987, pp. 113, 138.
[4] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986, III, 89-97:

կհանդիսանան զգուշությամբ և վերապահությամբ քննելու Հերոդոտոսի տեղեկությունները: Այսպես, հերոդոտյան ցուցակն ընդհանրապես համարվել է Հերոդոտոսին կամ նրա աղբյուր Հեկատեոսին հայտնի էթնիկական և աշխարհագրական անունների կամայական հավաքածու[5]: Որոշ ուսումնասիրողներ էլ կարծում են, որ արձանագրություններում թվարկվող երկրները ներկայանում են որպես պատմաաշխարհագրական և մշակութային ընդհանրություններ, որոնք միշտ չէ, որ պետք է համապատասխաներին վարչական բաժանումներին[6], հատկապես, եթե նկատի ունենանք, որ Բեհիսթունի բարձրաքանդակներում ընդգծված են խռովարար, ինքնակոչ թագավորների ազգագրական նկարագրի առանձնահատկությունները: Կարծիք է հայտնվել նաև, թե Հերոդոտոսը նկարագրել է իր ապրած ժամանակաշրջանի պարսից պետության բաժանումը, որը համընկնում է Արտաքսերքսես Ա-ի կառավարմանը[7]:

Բազմաթիվ ուսումնասիրողների ենթադրությամբ, Հերոդոտոսին աղբյուր է ծառայել Հեկատեոսը, չնայած Հերոդոտոսը նույնպես կարող էր կատարել որոշ հավելումներ, ընդ որում՝ Հեկատեոսի կամ Հերոդոտոսի ցուցակի հիմքում ընկած է պարսկական պաշտոնական աղբյուր[8]: Սակայն կա նաև տեսակետ, որ Հերոդոտոսը տվյալ հատվածը շարադրելիս ոչ մի պարսկական պաշտոնական աղբյուր էլ չի ունեցել, այլ օգտվել է Հեկատեոսի երկից և քարտեզից, որտեղ ներկայացված են Ասիան բնակեցրած տարբեր ժողովուրդներ[9]:

Ի. Դյակոնովի կարծիքով, Հերոդոտոսի ցուցակում սատրապությունները թվարկված են նախ Մարական տերությանը, հետո Աքեմենյան պետությանը միացնելու հերթականությամբ[10]: Է. Հերցֆելդը գտնում է, որ Հեկատեոսը ունեցել է մինչև մ. թ. ա. 514 թվականը կազմված սատրապությունների ամբողջական ցուցակի ընդօրինակությունը, իսկ Հերոդոտոսի մոտ ցուցակը ներկայացված է աղճատված, առանձին մեջբերումների տեսքով, չնայած դրանք պարունակում են սատրապությունների պաշտոնական անվանումները և հիմք են տալիս պատկերացում կազմել հեկատեոսյան ցուցակի վերաբերյալ[11]: Բոլոր այս տարակարծությունների պատճառն, անշուշտ, այն է, որ պարսկական պաշտոնական աղբյուրը մեզ չի հասել: Մեր կարծիքով, հարցի լուծման բանալին առկա է հենց պատմահայր Հերոդոտոսի երկում, ինչը կպարզենք քննության ընթացքում: Նշենք նաև, որ Դարեհ Ա-ից հետո, հավանաբար, նոր սատրապությունների առաջացումը և հների վերաձևումը չէր ուղեկցվում նոր և համապատասխան համակարգերական հրամանագրերով (կամ էլ այդ հրամանագրերը մեզ չեն հասել) և ուներ տեղական նշանակություն: Այդ իսկ պատճառով հերոդոտյան ցուցակի հիմքում ընկած վարչական վերակազմության վերաբերյալ պաշտոնական աղբյուրն Աքեմենյան արքունիքի կողմից չի ենթարկվել լրացումների և փոփոխությունների, այսինքն՝ Դարեհից հետո հանդես եկող գահակալները չեն ձեռնարկել համապետական մակարդակի վարչական վերափոխումներ: Սակայն, պետք է ուշադրություն դարձնել մի իրողության վրա, որտեղ, ըստ էության, կրկին արտացոլված է Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման պատկերը: Վերջինս, կարծում ենք, իր արտացոլումն է գտել Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի նկարագրության մեջ, որի հիմքում, դատելով Հերոդոտոսի տեղեկությունից, ընկած է պարսկական պաշտոնական աղբյուրը, քանի որ ինչպես հաղորդում է պատմահայրը, Քսերքսեսի հրամանով և ուղղակի ներկայությամբ գրագիրները գրի են առնում արշավանքին մասնակցող բոլոր ազգությունների անունները, որոնք տրամադրել էին ցամաքային և ծովային ռազմական ուժեր[12]: Սատրապությունների ցանկը որոշակիորեն արտացոլված է նաև Արիանոսի և Ռուփոսի մոտ, որոնք թվարկում են Գավգամելայի ճակատամարտին պարսից բանակի կազմում մասնակցող ժողովուրդներին ու ցեղերին:

Մենագրությունը հիմնված է տարալեզու սկզբնաղբյուրների, դասական և նորագույն մասնագիտական գրականության համակողմանի քննության և վերլուծության վրա, ինչը թույլ է տալիս առաջադրվող եզրակացությունները և կարծիքները հնարավորինս հիմնավորված և փաստարկված ներկայացնել:

[5] Junge J., Saka-Studien. Der ferne Nordosten im Weltbild der Antike, Klio, N. F. Beiheft 28, Leipzig, 1939, SS. 44, 90.
[6] Тураев Б. А., История Древнего Востока, Минск, 2002, с. 544-545; Массон В. М., Древнеземледельческая культура Маргианы, МИА, вып. 73, 1959, с. 148; Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, М., 1961, с. 92.
[7] Olmstead A. T., History of the Persian Empire, Chicago, 1960, p. 291; Массон В. М., Древнеземледельческая культура Маргианы, с. 149; «История таджикского народа», т. I (այսուհետև՝ ИТН), под ред. Б. Г. Гафурова, Б. А. Литвинского, М., 1963, с. 206.
[8] Дьяконов И., История Мидии, М.-Л., 1956, с. 340 и след.; ИТН, с. 158.
[9] Altheim F., Weltgeschichte Asiens im griechischen Zeitalter, Bd. I, Halle, 1947, S. 142.
[10] Дьяконов И., История Мидии, с. 342.
[11] Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, pp. 288, 292, 296.
[12] Հերոդոտոս, VII, 100:

Մեթոդաբանական առումով մենագրության աղբյուրագիտական հիմքը միանշանակ չէ այն առումով, որ առանձին հարցերի կամ նույնիսկ ամբողջ սատրապության վերաբերյալ սեպագիր աղբյուրները կա՛մ լռում են, կա՛մ էլ երբեմն զիջում են հունահռոմեական ակզբնաղբյուրների (Հերոդոտոս, Քսենոփոն, Դիոդորոս Սիկիլիացի, Արիանոս, Ռուփոս և այլք) տեղեկություններին, չնայած ցանկացած հարցի ուսումնասիրություն կատարել ենք բոլոր համաժամանակյա ու տարաժամանակյա տարալեզու և տարատեսակ աղբյուրների համակողմանի քննությամբ: Անկասկած, պատմաաշխարհագրական բնույթի ցանկացած ուսումնասիրություն պահանջում է տարածժամանակային լայն ընդգրկում, ինչը և լրացուցիչ արժեք է հաղորդում մեր քննությանը:

Աքեմենյան տերության վարչական բաժանմանը վերաբերող աղբյուրները կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) հին պարսկական և այլ սեպագիր արձանագրություններ, բ) հունահռոմեական աղբյուրներ, գ) գրավոր և նյութական այլ աղբյուրներ, որոնք ամբողջացնում են ուսումնասիրությունը:

Հին պարսկական արձանագրությունների մեջ իր ուրույն նշանակությունն ունի Բեհիսթունի եռալեզու սեպագիր արձանագրությունը, որտեղ նկարագրված դեպքերն ու հպատակ երկրների թվարկումը թույլ են տալիս կատարել կարևոր պատմաաշխարհագրական եզրակացություններ: Բեհիսթունի արձանագրության աքքադերեն և արամեերեն տարբերակներում երբեմն կան հավելյալ տեղեկություններ և աշխարհագրական անունների տառադարձումներ, որոնք թույլ են տալիս խնդրո հարցերի քննությունն էլ ավելի շահեկան դարձնել[13]: Քննության ընթացքում կարևորվել են ոչ միայն Դարեհ Ա-ի տարբեր արձանագրությունները, այլ նաև Քսերքսեսի, Արտաքսեքսես Բ-ի կամ Գ-ի արձանագրությունները: Վարչական և պատմաաշխարհագրական բնույթի

[13] Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի, Եր., 1964; The Sculptures and Inscription of Darius The Great on the Rock of Behistûn in Persia, a new collation of the Persian, Susian, and Babylonian texts, with English translations, ed. by L. W. King and R. C. Thompson, London, 1907; Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953; "The Bisitun Inscription of Darius the Great", Aramaic Version, Corpus Inscriptionum Iranicarum, Part I, Inscriptions of Ancient Iran, London, 1982; Malbran-Labat F., La version akkadienne de l'inscription trilingue de Darius à Behistun, Roma, 1994; "Les inscriptions de la Perse achéménide" traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq (այսուհետև՝ Lecoq), Paris, 1997; Schmitt R., Die altpersischen Inschriften der Achaimeniden, Wiesbaden, 2009.

եզրակացություններ կատարելու համար օգտագործել ենք նաև համաժամանակյա և տարաժամանակյա հինարևելյան՝ խեթական, աքքադական, ուրարտական, բաբելոնական, արամեերեն տարբեր աղբյուրներ[14], որոնք թույլ են տվել մեր կողմից կատարված աշխարհագրական նույնացումներն էլ ավելի փաստարկված հիմնավորել:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը կազմում են հունական և վերջինիս լրացնող հռոմեական աղբյուրները: Հունահռոմեական աղբյուրների նշանակությունը պատմական հավաստիության տեսանկյունից երբեմն խիստ էական է, հատկապես այն պարագայում, երբ քննում ենք հելլենական աշխարհի հետ սերտ շփումների մեջ գտնվող Փոքր Ասիայի կամ Արևելյան Միջերկրածովքի պատմությունը: Աքեմենյան տերության արևմտյան սատրապություններում երկարատև պարսկահունական պատերազմների և լեզվամշակութային սերտ փոխազդեցությունների պատճառով այս տարածքների վերաբերյալ անտիկ հեղինակներն ավելի շատ տեղեկություններ են հաղորդում, ընդ որում՝ այդ տեղեկություններն էապես արժանահավատ են և ստուգվում են նաև այլ աղբյուրների լույսով:

Հարկավ, անտիկ աղբյուրների մեջ իր նշանակությամբ առաջին հերթին կարևորվել է Հերոդոտոսի «Պատմություն»-ը[15], քանի որ վերջինս պահպանել է ոչ միայն սատրապությունների ցանկը, այլև հաղորդում է տեղեկություններ, որոնք շատ կարևոր են Մերձավոր և Միջին Արևելքի, երբեմն նաև Հնդկաստանի պատմության ուսումնասիրության համար: Պատահական չէ, որ մ. թ. ա. V դարում ապրած Հերոդոտոսը եղել էր Ասորեստանում, Բաբելոնում, Ասորիքում, Փյունիկիայում, Պարսկաստանում, Եգիպտոսում և Լիբիայում, հետևաբար նրա՝ որպես ականատես պատմաբանի տեղեկություններն ունեն վկայությունների արժեք:

[14] Cooke G. A., A Text Book of North-Semitic Inscriptions, Oxford, 1903; Clay A.T., Business Documents of Murashû Sons of Nippur dated in the Reign of Darius II (424-404 B.C.), Philadelphia, 1904; Ward W., The Seal Cylinders of Western Asia, Washington, 1910; "Aramaic Documents of the Fifth Century B. C.", abridged and revised edition by G. R. Driver, Oxford, 1957; Hallock R. Persepolis Fortification Tablets, Chicago, Illinois, 1969; Bowman R. A., Aramaic Ritual Texts from Persepolis, Chicago, Illinois, 1970; Del Monte G., Tischler J., Répertoire Géographique des Textes Cunéiformes, VI. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978 (այսուհետև՝ RGTC, VI); "Mesopotamian Chronicles", by J.-J. Glassner, Society of Biblical Literature, Atlanta, 2004; Salvini M., Corpus dei Testi Urartei, Vol. I, Le iscrizioni su pietra e roccia (Documenta Asiana 8), Roma, 2008; Grayson A. K., Novotny J., The Royal Inscriptions of Sennacherib, King of Assyria (704–681 BC), Part 1, Winona Lake, Indiana, 2012; Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Եր., 2013 և այլն:

[15] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986:

Հինարևելյան երկրների, տեղանունների, ցեղերի և ժողովուրդների տեղադրության և նույնացման համար արժեքավոր են Հեկատեոս Միլեթացու[16] և Սկիլաքս Կարիանդացու[17] տեղեկությունները, որոնք, թեկուզ երբեմն խառնաշփոթ, թույլ են տալիս մեր տեղադրություններն ավելի հիմնավորված դարձնել:

Ի տարբերություն Հերոդոտոսի՝ մ. թ. ա. V դարի մեկ այլ հեղինակի՝ Թուկիդիդեսի[18] տեղեկությունները խիստ արժեքավոր են Փոքր Ասիայի արևմտյան շրջանների և Բալկանյան թերակղզու պատմության ուսումնասիրության համար, այսինքն՝ այն տարածքների համար, որտեղ հույներն ու պարսիկները երկարատև պատերազմներ էին մղում:

Պատմական արժանահավատության տեսանկյունից առանձնապես ուշագրավ են Քսենոփոնի (մ. թ. ա. մոտ 430-356 թթ.) աշխատությունները[19], որոնք կարևոր են ոչ միայն հին պարսկական տերության՝ առաջավորասիական սատրապությունների վարչական բաժանման և պատմական աշխարհագրության ուսումնասիրության, այլ նաև քաղաքական, հասարակական համակեցության, ազգագրության և շատ այլ տեսանկյուններից:

Արիանոսի[20] և Ռուփոսի[21] տեղեկություններն անչափ կարևոր են

[16] Müller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. I, Parisiis, 1841.

[17] Скилак Кариандский, Перипл обитаемого моря, ВДИ, 1988, 2, с. 260-269.

[18] Фукидид, История, пер. Ф. Мищенко, М., 2012; Thucydides, History of the Peloponnesian war, with an English translation by Ch. F. Smith, Vol. I, Books I-II, London, Cambridge, Massachusetts, 1956; Vol. IV, Books VII-VIII, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library.

[19] Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970; նույնի՝ Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 2000; նույնի՝ Анабасис. Греческая история, пер. С. Лурье, М., 2010; նույնի՝ Киропедия, издание подготовили В. Г. Борухович и Э. Д. Фролов, М., 1976; նույնի՝ Anabasis, with an English translation by Carleton L. Brownson, Vol. III, Books I-VII, Cambridge-Massachusetts-London, 1980, Loeb Classical Library; նույնի՝ Cyropaedia, Vol. I, with an English translation by W. Miller, Cambridge-Massachusetts-London, 1960; Vol. II, London-New York, 1914, Loeb Classical Library; նույնի՝ Scripta Minora, with an English translation by E. C. Marchant, Cambridge, Massachusetts, London, 1946, Loeb Classical Library.

[20] Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Եր., 1987; Арриан, Поход Александра, перевод с древнегреческого М. Е. Сергеенко, М.-Л., 1962; Arrian, Anabasis Alexandri, with an English translation by E. Iliff Robson, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, Vol. I, 1967; Vol. II, 1966.

[21] Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Եր., 1987; Квинт Курций Руф, История Александра Македонского, М., 1963; Rufus Curtius Quintus, History of Alexander, with an English transl. by John C. Rolfe, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, Vol. I, 1971; Vol. II, 1946.

Աքեմենյան տերության մայրամուտին այդ տերության վարչական կացության քննության առումով, հատկապես որ Ալեքսանդր Մակեդոնացին իր նվաճումների գոնե սկզբին պահպանում էր նախկին պարսկական վարչամիավորները:

Աքեմենյան տերության վարչական համակարգի ուսումնասիրությունը և վերջինս պայմանավորող եզրակացություններն ամբողջական և հաստատուն չէին լինի առանց հին աշխարհի երեք հայտնի աշխարհագետների՝ Ստրաբոնի[22], Պլինիոս Ավագի[23] և Կլավդիոս Պտղոմեոսի[24] երկերի: Այս երեք հեղինակների աշխատություններն օգտագործել ենք մեր ուսումնասիրության բոլոր բաժիններում, այսինքն՝ Աքեմենյան տերության տարածքում՝ արևելքից արևմուտք, հյուսիսից հարավ, հնարավոր չէ պատկերացնել տեղագրական ճշգրտումներ առանց նրանց երկերից օգտվելու: Առանձին հարցերի դեպքում նշված հեղինակների տեղեկությունները XIII սատրապության հարևան երկրների վերաբերյալ համադրել կամ լրացրել ենք հայկական աղբյուրներով, օրինակ՝ «Աշխարհացոյց»-ի[25] տեղեկություններով:

Անտիկ հեղինակների շարքում առանձնահատուկ կարևորություն ենք տվել նաև Դիոդորոս Սիկիլիացուն[26], Պոլիբիոսին[27], Պլուտարքո-

[22] Ստրաբոն, քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, Եր., 1940; Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Стратановского, Л., 1964; Strabonis Geographica, ed. C. Müller, Parisiis, 1853; The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, Vol. V, Books X-XII, Cambridge-Massachusetts-London, 1969; Vol. VII, Books 15-16, 1954, Loeb Classical Library.

[23] The Natural History of Pliny, by J. Bostock and H. T. Riley, Vol. II, London, 1855; Pliny, Natural History, Vol. I, Libri I-II, with an English translation by H. Rackham, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1967; Vol. II, Libri III-VII, 1947; Vol. III, Libri VIII-XI, 1967, Loeb Classical Library.

[24] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, Lipsiae, 1843; t. II, Lipsiae, 1845; Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, Voluminis primi, Pars secunda, Parisiis, 1901; Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998.

[25] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881; Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944; Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003; Патканов К. П., Армянская География VII века, СПБ, 1877.

[26] Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Եր., 1985; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Lipsiae, 1826; Vol. I, Pars I, Lipsiae, 1828; Vol. II, Lipsiae, 1826; Vol. III, Lipsiae, 1826; Vol. IV, Lipsiae, 1826.

սին[28] և մյուսներին, որոնց տեղեկությունների հիմքում իրենց հերթին ընկած են փաստագրական նյութեր. ուղեգրություններ, զեկույցներ, սկզբնաղբյուրներ, որոնք ուղղակի կամ անուղղակի պահպանվել են նշված հեղինակների կողմից:

Աղբյուրագիտական առումով առանձին խումբ են կազմում նաև այն աղբյուրները, որոնք համադրվում են անտիկ աղբյուրների հետ կամ լրացնում են վերջիններիս աղբյուրագիտական բացը: Խոսքը վերաբերում է հայկական[29], վրացական[30], աստվածաշնչյան[31] աղբյուրներին, որոնք այս կամ այն սատրապության վարչական բաժանման կամ տվյալ երկրի քաղաքական կացության հարցում երբեմն ունեն առաջնային նշանակություն: Նման նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ աղբյուրներն ուղղակիորեն կապված են տվյալ տարածաշրջանի (օրինակ, Հայաստան, Վիրք, Արևելյան Այսրկովկաս, Մարաստան և այլն) աշխարհագրական միջավայրի պատմական իրողությունների հետ:

Աղբյուրների դասակարգման հաջորդ խումբը կազմում են հպատակ ժողովուրդների լեզուներով՝ փոյուգերեն, կարիերեն, լյուկիերեն պահպանված գրավոր հուշարձանները[32], որոնք կարևոր տեղեկություններ

[27] Polybius, The Histories, with an English translation by W. R. Paton, Vol. III, London, Cambridge, Massachusetts, 1979, Loeb Classical Library; Polibii Historiae, Vol. IV, Libri XX-XXXIX, ed. Th. Buettner-Wobst, B. G. Teubner, Stuttgart, 1985; Vol. III, Libri IX-XIX, 1985.

[28] Պլուտարքոս, Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Ս. Գրքաշարյան, Եր., 2001; Plutarch's Lives, translated from the original greek by J. Langhorne and W. Langhorne, Cincinnati, 1850; Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, Vol. VII, Cambridge-Massachusetts-London, 1967; Vol. VIII, 1959; Vol. XI, 1954, Loeb Classical Library.

[29] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա.՝ Բ. Սարգսեանի, Եր., 1991; Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Եր., 1979; Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, Եր., 1987 և այլն:

[30] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Եր., 1934; Քարթլիս ցխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բառգրքով լույս ընծայեց Ի. Աբուլաձեն, Թբիլիսի, 1953; Картлис цховреба, глав. ред. Р. Метревели, Тбилиси, 2008.

[31] Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2014:

[32] Briant P., Cités et satrapes dans l'empire achéménide: Xanthos et Pixôdaros, in: Comptes rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, 142e année, № 1, 1998, pp. 305-347; Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, Copenhagen, 1986.

են տալիս տվյալ սատրապության ներքին կառավարման հարցերի վերաբերյալ:

Քննությունը համակողմանի դարձնելու համար ուսումնասիրությունում որոշակի տեղ է հատկացված նաև տերության տարբեր տարածքներում հայտնաբերված դրամների[33] և հնագիտական նյութի[34] մեկնաբանությանը:

Աքեմենյան Պարսկաստանի[35] պատմությունը տարեցտարի ավելի ու ավելի է գրավում ուսումնասիրողների ուշադրությունը, ինչը պայմանավորված է ոչ միայն գոյություն ունեցող աղբյուրների մանրակրկիտ, համակողմանի և նորովի քննության անհրաժեշտությամբ, այլև հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութական և գրավոր նոր աղբյուրների ի հայտ գալով: Հարկ է խոստովանել, որ Իրանի

[33] Işin G., An Achaemenid Stamp Seal from Patara, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-fourth Centuries B.C.), ed. by I. Delemen, Istanbul, 2007, pp. 75-82; Bodzek J., Remarks on the Origins of Achaemenid Satrapic Coinages, Folia Numismatica 28/1, Supplementum ad Acta Musei Moraviae, Scientiae sociales XCIX, 2014, pp. 3-10; նույնի՝ A Note on a Satrapal Coin – Perhaps another Mazaces Issue?, Notae Numismaticae, Krakow, t. IX, 2014, pp. 13-20, նույնի՝ Achaemenid Asia Minor: Coins of the Satraps and of the Great King, In: The First International Congress of the Anatolian Monetary History and Numismatics - Proceedings, ed. by K. Dörtlük, O. Tekin, R. Boyraz Seyhan, & M. Wilson, Suna & Inan Kiraç Research Institute on Mediterranean Civilization, Antalya, 2014, pp. 59-78; Shannahan J., Satrapal Coins in the Collection of the Australian Centre for Ancient Numismatic Studies: Tiribazus, Pharnabazus, and Mazaeus, JNAA, Vol. 27, 2016, pp. 41-57 և այլն:

[34] Вергазов Р. Р., Официальный стиль Ахеменидов и его отражение в искусстве северных сатрапий на материале архитектуры, ПИФК, 2017, 2, с. 294-306; Summers G. D., Archaeological Evidence for the Achaemenid Period in Eastern Turkey, AS, Vol. XLIII, 1993, pp. 85-108; Melikian-Chirvani A. S., The International Achaemenid Style, BAI, New Series, Vol. 7, Iranian Studies in Honor of A. D. H. Bivar, 1993, pp. 111-130; Dusinberre E. R. M., Satrapal Sardis: Achaemenid Bowls in an Achaemenid Capital, AJA, Vol. 103, № 1, 1999, pp. 73-102; L'archéologie de l'empire achéménide: nouvelles recherches. Actes du colloque organisé au Collège de France, 21-22 novembre 2003, Persika 6, P. Briant et R. Boucharlat éd., Paris, 2005; Knauss F., Ludwig N., Mehnert G., Sens U., Wicke D., Ein Perserbau auf dem Ideal Tepe bei Karačamirli (Aserbaidschan), ARTA 2, 2007, pp. 1-51; Knauss F., Ancient Persia and the Caucasus, IA, Vol. XLI, 2006, pp. 79-118; Grave P., Kealhofer L., Bilgen N., Marsh B., The Archaeology of Achaemenid Power in Regional Western Anatolia, CAJ, Vol. 26, Issue 4, 2016, pp. 697-720.

[35] Մենք նախընտրում ենք Աքեմենյան Իրանի փոխարեն գործածել Աքեմենյան Պարսկաստան անվանումը, քանի որ Աքեմենյան արքաները սերում էին Պարսքից և իրենց համարում էին Պարսքի թագավորներ: Հետևաբար մ. թ. ա. VI-IV դարերում Իրանի մասին խոսք լինել չի կարող, և պատմականորեն ճիշտ է պետությունը կոչել Աքեմենյան Պարսկաստան:

հին պատմության գրեթե բոլոր կողմերն ամենայն մանրամասնությամբ են ուսումնասիրվում իրանագետների և ընդհանրապես արևելագետների կողմից, ստեղծվում են այդ համաշխարհային կայսրության պատմության և Աքեմենյան համակեցության ամենատարբեր տեսակետներ և մոտեցումներ, որոնք միանգամայն փոխում են մեր ունեցած պատկերացումներն Աքեմենյանների երկհարյուրամյա ժամանակաշրջանի վերաբերյալ: Շատ դեպքերում ուսումնասիրողները հին Իրանի քաղաքական, տնտեսական, հասարակական, կրոնական և այլն պատմության վերաբերյալ առաջ են քաշում եզրակացություններ, որոնք կա՛մ միանշանակ ժխտում են նախկին տեսակետները, կա՛մ էլ առաջադրված տեսակետները փորձում են տեղավորել գոյություն ունեցող որոշակի սխեմաների կամ կաղապարների մեջ:

Մենագրությունում լայնորեն օգտագործված մասնագիտական գրականությունն առաջին հերթին արժևորված է սկզբնաղբյուրների մանրակրկիտ վերլուծության տեսանկյունից, քանի որ միայն այս պարագայում ցանկացած ուսումնասիրողի եզրակացությունները կարող են համոզիչ կամ ընդունելի լինել: Ասվածը վերաբերում է գիտական մեթոդաբանության այն մոտեցմանը, երբ հետազոտողը մինչև սեփական եզրակացությունները, բացահայտում է իր գիտական խոհանոցը: Այս առումով ուսումնասիրությունում օգտագործված են աշխատություններ, որտեղ շատ դեպքերում հեղինակը չի բացահայտում իր աշխատանքային խոհանոցը՝ կատարելով աշխարհագրական նույնացումներ: Նման դեպքերում մենք ինքներս ենք փորձել հասկանալ տվյալ հեղինակի եզրակացությունների քննական ընթացքը: Օրինակ, հայտնի իրանագետ Է. Հերցֆելդը[36] ներկայացնում է Աքեմենյան սատրապությունների տարածքը և դրանք բնակեցնող ցեղերի տեղադրությունը՝ հիմնականում հենվելով լեզվաբանական նյութի վերլուծության վրա: Սակայն նրա նույնացումները լեզվաբանական առումով ոչ միայն որոշակիորեն հնացել են, այլև շատ դեպքերում աղբյուրագիտական-պատմագիտական նյութի քննությունն է ոչ խորը և մակերեսային: Է. Հերցֆելդն առանց լուրջ հիմնավորումների XIII սատրապությունը՝ Հայաստանը, համարակալում է X սատրապություն՝ XVIII և XIX սատրապությունների տարածքը միավորելով Արմինային, կամ էլ անտիկ աղբյուրների խալդայներին նույնացնում է ուրարտացիների հետ[37], ինչը քննություն չի բռնում:

[36] Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968.
[37] Անդ, էջ 313-314:

Աքեմենյան տերության վարչական բաժանման համակարգին անդրադարձել է նաև Թ. Պետիտը[38] նախորդ դարի վերջին: Հեղինակը տերության սատրապական համակարգը ներկայացնում է Կյուրոս Մեծից մինչև Քսերքսես ընկած, մասամբ նաև Դարեհ Գ-ի, ժամանակահատվածում: Հեղինակը մանրամասն ներկայացնում է սատրապի գործառույթները և սատրապ եզրի գործածման հինարևելյան և անտիկ աղբյուրագիտական համարժեք ձևերը՝ հյուպարքոս, [եվ]pāhatu, Xssaθrapa, praetor, praefectus և այլն[39]: Թ. Պետիտն ամեն դեպքում սատրապությունների սահմանների ճշգրտմանը չի անդրադառնում՝ նույնիսկ ամբողջությամբ չներկայացնելով անտիկ աղբյուրների տեղեկությունները:

Հաջորդ ուսումնասիրողը, որն անդրադարձել է Աքեմենյան Պարսկաստանի սատրապական կառավարման համակարգին, Բ. Յակոբսն[40] է: Հայտնի մասնագետը խնդրո առարկա հարցերը քննել է Դարեհ Գ-ի ժամանակաշրջանում: Չնայած Բ. Յակոբսն անդրադառնում է բոլոր սատրապություններին, այդուհանդերձ, մեր ուսումնասիրությունն աղբյուրների ընդգրկման, քննության և եզրակացությունների առումով շատ ավելի խորն ու բազմակողմանի է: Ոչ միայն գիտական, այլև մեթոդաբանական առումով ցանկացած սատրապության տրոհումը գլխավոր կամ փոքր սատրապությունների, թերևս, ճիշտ չէ հեղինակի կողմից: Օրինակ, հեղինակը գլխավոր սատրապություն Հայաստանի կազմում առանձնացնում է Արևելյան և Արևմտյան Հայաստան փոքր սատրապությունները՝ մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթա ընկած տարածքները ներառելով Հայաստանի սատրապության մեջ[41]: Նման մոտեցման դեպքում Բ. Յակոբսը տուրք է տալիս Է. Հերցֆելդի կողմից XVIII և XIX սատրապությունները Հայաստանի մեջ ընդգրկելու տեսակետին: Ամեն դեպքում, Բ. Յակոբսի կողմից բոլոր սատրապությունների նմանատիպ ներքին վերաձևումները երբեմն անհասկանալի են:

Ուսումնասիրության մեջ օգտագործված մասնագիտական գրականությունը, բացի վերոնշյալ քիչ թե շատ ընդհանրական աշխատություններից, կարելի է դասակարգել ըստ ուսումնասիրվող վարչական

[38] Petit Th., Satrapes et satrapies dans l'empire achéménide de Cyrus le Grand à Xerxès Ier, Bibliothèque de la Faculté de Philosophie et Lettres de l'Université de Liège, Fascicule 254, «Les Belles Lettres», Paris-Liège, 1990.
[39] Անդ, էջ 15-20:
[40] Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, Wiesbaden, 1994.
[41] Անդ, էջ 183-186: Համմ. Jacobs B., Armenien von der Eroberung durch die Perser bis in die Zeit Alexanders des Grossen, Armenien: Frühzeit bis 1. Jahrtausend-Sprache, Kunst und Geschichte, Linzer Archäologische Forschungen 18, Linz, 1990, SS. 37-46.

միավորի աշխարհագրական տարածքի: Բնականաբար, օրինակ, Փոքր Ասիայի սատրապական բաժանմանը նվիրված գլխում օգտագործված գրականությունը հիմնականում կապված է հենց այդ տարածքների պատմական աշխարհագրության հարցերի հետ:

Քննության ընթացքում օգտագործել ենք նաև տարբեր ժամանակներում հրատարակված գիտական ընդհանրական աշխատություններ[42], որտեղ ի մի են բերված անտիկ աշխարհագրական մտքի պատկերացումները և գիտական ամենատարբեր տեսակետները: Կան աշխարհագրական նույնացումներ և տեսակետներ, որոնք տասնամյակներ շարունակ քաղաքացիություն են ստացել պատմագիտության մեջ, սակայն մեր քննության ընթացքում ցանկացած տեսակետ նորովի քննությամբ կա՛մ հաստատել ենք, կա՛մ մերժել:

Ուսումնասիրությունում օգտագործել ենք նաև այս կամ այն երկրի՝ Իրանի, Եգիպտոսի, Հնդկաստանի և այլ երկրների հին պատմությանը նվիրված քեմբրիջյան և այլ ակադեմիական հրատարակություններ[43], որտեղ ներկայացված են այս կամ այն երկրի՝ պարսկական տիրապետության ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ գիտական շրջանառության մեջ եղած հիմնական տեսակետները:

Աքեմենյան Պարսկաստանի պատմության տարբեր հարցերին նվիրված գիտական մենագրությունների և հոդվածների շարքում առանձնապես կարևորել ենք խոշորագույն իրանագետ-արևելագետ Մ. Դանդամաևի աշխատությունները[44], որոնք մեծապես նպաստել են մեր

[42] Доватур А. И., Каллистов Д. П., Шишова И. А., Народы нашей страны в «Истории» Геродота, М., 1982; Cramer J. A., A Geographical and Historical Description of Asia Minor, Vol. I-II, Oxford University Press, 1832; "Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, Vol. I, Boston, 1854, Vol. II, London, 1857; "A Commentary on Herodotus Books I-IV", ed. by O. Murray, A. Moreno, New York, 2007; Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, London, New York, 2009.

[43] The Cambridge History of India, Vol. I, Ancient India, ed. by E. J. Rapson, Cambridge University Press, 1922; The Cambridge Ancient History, Vol. II, The Egyptian and Hittite Empires, Cambridge, 1931; Vol. IV, 1988; Vol. VI, 1994; The Cambridge History of Judaism, Vol. I, ed. W. D. Davies, L. Finkelstein, Cambridge University Press, 1984; History of Civilizations of Central Asia, ed. J. Harmatta, Vol. II, Paris, 1996; The Oxford History of Ancient Egypt, ed. by I. Shaw, Oxford University Press, 2000.

[44] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.), М., 1963; նույնի՝ Политическая история Ахеменидской державы, М., 1985; նույնի՝ Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.: Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009; նույնի՝ Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения, Санкт-Петербург, 2013; Дандамаев М. А., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, М., 1980; Dandamayev M., Iranians in Achaemenid Babylonia, CLIS 6, 1992; նույնի՝ Achaemenid Imperial Policies and Provincial Governments, IA, Vol. 34, 1999, pp. 269-282 և այլն:

քննության ամբողջացմանը և եզրակացությունների հիմնավորմանը:

Հին Իրանի պատմության հաջորդ խոշորագույն հետազոտողները Ա. Օլմսթեդը[45] և Ռ. Ֆրայն[46] են: Այս հեղինակներն իրենց աշխատություններում անդրադարձել են Աքեմենյան տերության պատմության ամենատարբեր կողմերին, սակայն վարչական բաժանման համակարգի ներկայացումը երբևէ նրանց ուսումնասիրությունների անկյունաքարերից չի եղել, և բավարարվել են սոսկ համառոտ տեղեկատվական ընդհանրացումներով:

Հայաստանի, վերջինիս հարևան երկրների և Միջին Ասիայի հին պատմության համար գերմանացի մեծանուն գիտնական Յ. Մարկվարտի աշխատությունները[47] միշտ էլ կմնան արդիական ու թարմ՝ տարալեզու աղբյուրների պատմագիտական և բնագրային-լեզվաբանական խորքային մեկնաբանություններով:

Հայաստանում Աքեմենյան Պարսկաստանի պատմության ուսումնասիրությունը երկար ժամանակ ոչ միայն իրանագիտության, այլև արևելագիտության սակավ կամ գրեթե չհետազոտված բնագավառներից մեկն էր: Հայալեզու մասնագիտական գրականության մեջ Աքեմենյան Պարսկաստանի պատմության ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է հայոց հին պատմության համատեքստում, երբ քննվել է Հայաստանի՝ Աքեմենյան դարաշրջանի պատմության ամենատարբեր կողմերը: Վերջին շրջանում ակադեմիական հանրության և ուսանողության համար խոշորագույն ներդրում էր «Հայաստանի հարակից երկրների պատմության» առաջին հատորի հրատարակությունը[48], որտեղ ներկայացված է նաև Աքեմենյան տերության քաղաքական պատմությունը և քաղաքական-տնտեսական կարգն ու մշակույթը: Հասկանալի է, որ նմանատիպ հրատարակությունում Աքեմենյան տերության վարչական բաժանման և պատմական աշխարհա-

[45] Olmstead A. T., History of the Persian Empire, Chicago, 1960.

[46] Фрай Р., Наследие Ирана, М., 1972; նույնի՝ The History of Ancient Iran, München, 1983; նույնի՝ The Heritage of Central Asia, Princeton, 1998.

[47] Marquart J., Untersuchungen zur Geschichte von Eran I, "Philologus: Zeitschrift für das klassische Altertum", Göttingen, 1896, SS. 213-244, նույնի՝ Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901; նույնի՝ Untersuchungen zur Geschichte von Eran II, "Philologus: Zeitschrift für das klassische Altertum", Supplementband X/1, Leipzig, 1905; նույնի՝ Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930; Markwart J., Messina G., A Catalogue of the Provincial Capitals of Ērānshahr, Analecta Orientalia 3, Roma, 1931.

[48] Հայաստանի հարակից երկրների պատմություն, խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ., հ. I, Հին շրջան, Եր., 2013, բաժինը գրել է Երվանդ Գրեկյանը:

գրության հարցերը չէին կարող խորը և ծավալուն տեղ գրավել, հետևաբար մեր ուսումնասիրությամբ այս տեսանկյունից ևս կփորձենք այդ բացը լրացնել և ամբողջացնել:

Հարկավ, նկատենք նաև, որ հին Իրանի պատմության շատ ու շատ հարցեր նորովի քննություն են պահանջում, և նույնիսկ մեթոդաբանական առումով հետազոտության ընթացքում վերհանվող հարակից տարաբնույթ հարցերը ինքնըստինքյան վերանայվում են՝ հաճախ ստանալով միանգամայն այլ մեկնաբանություններ: Կարող ենք արձանագրել, որ խնդրո առարկայի ուսումնասիրությունը թերի է, առկա մասնագիտական գրականությունը չի հենվում նյութական և գրավոր աղբյուրների համալիր քննության վրա, ուստի և շրջանառվող տեսակետները հաճախ հնացած են:

Մենագրության նպատակն է Աքեմենյան տերության վարչական բաժանման ուսումնասիրությունը՝ ժամանակագրորեն ընդգրկելով այդ տերության գոյության ամբողջ ժամանակաշրջանը՝ մ. թ. ա. VI-IV դարերը: Աքեմենյան Պարսկաստանի քսանից ավելի սատրապությունների վարչական բաժանման ուսումնասիրությունը գիտական և մեթոդաբանական առումով դուրս է գալիս զուտ իրանագիտության շրջանակներից՝ կապվելով արևելագիտության մեջ արդիական բազմաբնույթ հիմնախնդիրների և այլ գիտակարգերի հետ: Բնականաբար, խնդրո առարկա նյութը, աշխարհագրական առումով ընդգրկելով հին աշխարհի բնակեցված մասի հիմնական մասը, հետազոտողների առջև բացում է նաև նոր հարցադրումներ, որոնց ուսումնասիրությունը դուրս է գալիս իրանագիտության շրջանակներից: Հետևաբար, մեր ուսումնասիրությունն առաջին հերթին ուղղված է գիտական աշխարհին՝ քննելով Աքեմենյան տերության վարչական բաժանման և պատմական աշխարհագրության չուսումնասիրված կամ խնդրահարույց խնդիրները:

Ներկայացվող ուսումնասիրությունը նպատակ չունի պատասխանելու Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգին վերաբերող բոլոր կնճռոտ հարցերին: Ուստիև, առանձին հարցերի վերաբերյալ նորովի մոտեցումները, այսինքն՝ այսպես ասած նոր գիտելիքի ստեղծումը, կարող են իրենց հերթին ավելի նեղ ոլորտային քննության առարկա դառնալ, օրինակ՝ լեզվաբանների համար: Առավել ևս այն դեպքում, երբ կցկտուր կամ սակավ աղբյուրագիտական նյութը թույլ չի տալիս ամբողջությամբ խորամուխ լինել այս կամ այն խնդրի ամբողջական քննությանը:

Առաջին անգամ մասնագիտական գրականության մեջ փորձել ենք

առաջադրված խնդիրների համակողմանի քննությամբ գիտական հանրությանը ներկայացնել մի մենագրություն, որտեղ մանրամասն ուսումնասիրվել են՝

ա) բոլոր 21 սատրապությունների և կարևոր ենթաշրջանների սահմանների, վարչական բաժանման ու կացության հետ կապված տարաբնույթ հարցերը՝ կատարելով պատմաաշխարհագրական ճշգրտումներ, հստակեցումներ,

բ) բոլոր 21 սատրապություններում ներառված ցեղերի և ժողովուրդների, բնակավայրերի, աշխարհագրական անվանումների (լեռներ, գետեր) տեղադրությունների, նույնացման ու նաև էթնիկական վերաբնակեցումների հարցերը,

գ) Աքեմենյան տերության վարչական սկզբունքի ձևավորման առանձնահատկությունները, սատրապական բաժանումը պայմանավորող սկզբունքները և վարչական քաղաքականության բնույթը:

Մեր ուսումնասիրությունը գիտական առումով խիստ արդիական է և շատ ավելի վաղ հրատարակված ամփոփիչ աշխատություններին գերազանցում է նյութի ընդգրկման, քննության խորության և եզրահանգումների թարմության ու արդիականության տեսանկյունից:

Բացի գիտական արդիականությունից, ուսումնասիրությունն արդիական է նաև քաղաքական առումով, ինչը հատկապես էական է Հին Հայաստանի պատմական տարածքի և հարևան երկրների պատմությունն ուսումնասիրելիս, քանի որ թուրք, ադրբեջանցի, վրացի, նաև որոշ արտասահմանցի գիտնականներ բացահայտորեն նենգափոխում և խեղաթյուրում են տարածաշրջանի պատմությունը:

Աքեմենյան Պարսկաստանի պատմության վերաբերյալ մեր հետազոտությունները սկսել ենք 2000-ական թվականների երկրորդ կեսից՝ կապված Աքեմենյան դարաշրջանում Հայաստանի և Այսրկովկասի վարչական բաժանման ուսումնասիրության հետ: Հետագա տարիներին ընդլայնեցինք մեր ուսումնասիրության շրջանակները՝ ուսումնասիրելով արդեն ամբողջ Աքեմենյան տերության վարչական բաժանման համակարգը:

Մենագրությունում արծարծված հարցերը տարբեր հետազոտողների համար կարող են ուղենիշ ծառայել Աքեմենյան Պարսկաստանի քաղաքական պատմության, կրոնի, մշակույթի հարցերի և արևելագիտության այլ բնագավառների ուսումնասիրության համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1.1. Հոնիայի վարչական բաժանումը

Չնայած փոքր տարածքին՝ I սատրապության վարչական ենթաշրջան հանդիսացող Հոնիան և՛ քաղաքական, և՛ տնտեսական առումով ուներ բացառիկ կարևոր նշանակություն, քանի որ Բալկանյան հույների հետ լարված ռազմաքաղաքական հարաբերությունները միշտ էլ վտանգում էին պարսկական գերիշխանության ամրությունը Փոքր Ասիայի արևմտյան ընդարձակածավալ տարածքներում[49]: Հին հունական էթնոաշխարհագրական պատկերացմամբ հոնիական հույները չէին պատկանում պարսիկներին, քանի որ ապրելով Ասիայում՝ նրանք մնում էին հույներ, դառնում Հելլադայի մի մասը[50], այսինքն՝ չէին ենթարկվում Ասիայի տերերին՝ պարսիկներին:

Այդ իսկ պատճառով հույն հեղինակները ծավալուն տեղեկություններ են հաղորդում Աքեմենյան դարաշրջանի Հոնիայի և, առանձին վերցրած, վերջինիս տարբեր քաղաքների մասին: Հարկավ, հին հեղինակների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի պատմահայր Հերոդոտոսը, որի տեղեկություններն էլ կքննենք առաջին հերթին: Հույն պատմիչը գրում է. «Հոնիացիներից, Ասիայի մագնեսյաններից, էոլյաններից, կարիացիներից, լյուկիացիներից և միլյուացիներից և պամփյուլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպես առաջին նահանգ»[51]: I սատրապության մեջ թվարկված ժողովուրդներն աշխարհագրական առումով բնակվել են Փոքր Ասիայի արևմտյան և հարավային շրջանների մեծ մասում, ընդ որում՝ հոնիացիները գտնվել են Փոքր Ասիայի արևմտյան ծովամերձ հատվածի գրեթե կենտրոնական մասում՝ լյուդիացիներից արևմուտք, Էոլիսից հարավ[52]:

Լյուդիական թագավորության ժամանակաշրջանում հոնիացիները նվաճվում են Կրեսոսի կողմից[53]: Համաձայն Հերոդոտոսի՝ հոնիացիները երկրորդ անգամ նվաճվում են պարսիկ Կյուրոսի կողմից[54]: Պատմիչի տեղեկություններից նաև պարզվում է, որ հոնիացիները պարսկական բանակի, հատկապես՝ նավատորմի կազմում ունեցել են կարևոր դերակատարություն[55]: Հերոդոտոսի տեղեկություններից երևում է, որ Հոնիայի մեջ մտել են նաև Քիոս, Սամոս, Լեսբոս կղզիները[56], Փոկայա, Միլետ, Տեոս, Կլազոմենե, Պրիենա, Միուս, Էրիթրեա քաղաքները[57]:

Միլետը և հարևան հողերը մինչև Միկալե «Իլիական»-ում համարվում են կարիացիների բնակության տարածքներ[58]: Հեկատեոս Միլեթացին Միլետը համարում է կա՛մ Հոնիայի, կա՛մ Կարիայի քաղաքը[59], այսինքն՝ Միլետը նախապես եղել է կարիացիների հողը, ապա՝ հնամարվել հոնիական: Հերոդոտոսը Միլետը՝ խեթական դարաշրջանի Միլավատա-Միլլավանդան[60], համարում է Հոնիայի զարդը՝ Լադա փոքր կղզու դիմաց[61]: Միլետի ապստամբությունը ճնշելուց հետո միլետացիների մեծ մասը վերաբնակեցվեց Կարմիր ծովի մոտ՝ Ամպե քաղաքում: Միլետ քաղաքը իր շրջակայքով և դաշտավայրը պարսիկնե-

[49] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., 2005, էջ 47; Плутарх, Алкивиад, XXIV, Избранные жизнеописания, т. I, М., 1987, с. 372; Xenophon, Scripta Minora, Agesilaus, I, 14, p. 66; Ксенофонт, Греческая история, с. 252-253 и след. Վերջին գրքում հոնիական քաղաքները և կղզիները բազմիցս հիշատակվում են ռազմաքաղաքական դեպքերի կապակցությամբ, սակայն մենք կանդրադառնանք միայն այն տեղեկություններին, որոնք ունեն պատմաաշխարհագրական նշանակություն:

[50] Provencal V. L., Sophist Kings: Persians as Other in Herodotus, London, New Delhi, New York, Sydney, 2015, p. 90.

[51] Հերոդոտոս, III, 90:

[52] Անդ, V, 49; 123: Հմմտ. Страбон, с. 129; Pliny, Natural History, Vol. II, V, XXIX, 103, p. 298; XXXI, 112, p. 304. Հոնիացիները հիշատակվում են նաև առանձին-առանձին էոլիացիների և հելլեսպոնտոսցիների հետ (տե՛ս Xenophon, Scripta Minora, Agesilaus, I, 14, p. 66; II, 11, p. 84):

[53] Հերոդոտոս, I, 6; 28: Հերոդոտոսի մի տեղեկությունից երևում է, որ պարսիկների համար Հոնիա էր նաև Բալկանյան Հունաստանը (VII, 51): Հոնիական քաղաքների նվաճումը սկսվել էր Գյուգեսի ժամանակներից (տե՛ս Свеницкая И. С., Ионийские города в составе Лидийского царства, Проблемы античной истории и культуры, I, Ер., 1979, с. 254):

[54] Հերոդոտոս, I, 169-171: Հմմտ. Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5:

[55] Հերոդոտոս, IV, 89; Georges P. B, Source Persian Ionia under Darius: The Revolt Reconsidered, Historia: Zeitschrift für Alte Geschichte, Bd. 49, H. 1, 2000, p. 21.

[56] Հերոդոտոս, VI, 8: Հերոդոտոսի տեղեկությունից պարզվում է, որ Լեսբոսում բնակվել են էոլիացիները, թեև սրանց ևս ընդհանուր անվանում է հոնիացիներ: Սկիլաքս Կարիանդացին Լեսբոսը համարում է էոլական կղզի (տե՛ս Скилак Кариандский, с. 261): Հմմտ. Плутарх, Алкивиад, XXXV, с. 384.

[57] Հերոդոտոս, I, 170; IV, 138; V, 123; VI, 8:

[58] Հոմերոս, Իլիական, հին հունարեն բնագրից թարգմանեց Հ. Համբարձումյան, Եր., 1955, II, 370:

[59] Müller C., FHG, Vol. I, fr. 225, p. 15.

[60] Bryce T., The Routledge..., p. 472.

[61] Հերոդոտոս, V, 28; VI, 7:

րը պահեցին իրենց, իսկ լեռնային մասերը հանձնեցին Պեդասայի կարիացիներին՝ Հալիկառնասոսից հյուսիս-արևելք[62]: Հետագայում Միլետի փոխարեն Հոնիայում կարևոր նշանակություն ուներ Եփեսոսը, որի հիշատակությունը փոքրասիական երկրների շարքում հավասարազոր էր ամբողջ Հոնիային[63]:

Հոնիայի Միկալե թերակղզում գտնվող Պանիոնիոն բնակավայրում՝ ներկայիս Գյաուր-Չանղլին[64], գումարվում էր Հոնիայի քաղաքներից ժամանած ներկայացուցիչների համահոնիական ժողովը[65], և տեղի էին ունենում Պոսեյդոնին նվիրված զոհաբերություններ[66]: Ավելի ուշ համահոնիական այս սրբավայրը տեղափոխվում է Եփեսոս[67], որը Սպարտայի համար դառնում է կարևոր հենակետ Արևելքում[68]: Կյուրոս Կրտսերը նույնիսկ սպարտացի զորավար Լիսանդրոսին հանձնում է հոնիական քաղաքների կառավարումը և հարկերի հավաքումը[69]:

Քսերքսեսի հելլենական արշավանքին հոնիացիները, որոնք իրենց անունը ստացել էին Քսութոսի որդի Իոնից[70], տրամադրել էին հարյուր նավ և զինված էին ինչպես հելլեններ: Հերոդոտոսը նաև գրում է, որ արշավանքին «կղզեբնակները տրամադրել էին տասնյոթ նավ և զինված էին ինչպես հելլեններ: Սրանք ևս պելասգյան ազգ էին, իսկ հետագայում կոչվեցին հոնիացիներ նույն պատճառով, ինչ և հոնիական տասներկու քաղաքները բնակեցրածները, որոնք եկել էին Աթենքից:

...Հոնիական և կարիական նավատորմի հրամանատարն էր Արիաբիգնեսը՝ Դարեհի որդին Գոբրյուասի դստրից»[71]:

Մինչև Դարեհ Ա-ի վարչական վերափոխումները Փռյուգիան, Լյուդիան և Հոնիան՝ որպես մեկ սատրապություն, ենթարկվում էին Օրոյտեսին[72]: Քսենոփոնը ևս գրում է, որ Կյուրոս Մեծը Լյուդիայի և Հո-

[62] Անդ, I, 175; VI, 20:
[63] Polibii Historiae, Vol. IV, Libri XX-XXXIX, X, 49, p. 87.
[64] Скилак Кариандский, с. 268.
[65] Հերոդոտոս, I, 141; 142; 143; 148; VI, 7; IX, 90:
[66] Страбон, с. 598.
[67] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XV, 49, pp. 458-459. Տե՛ս նաև Лаптева М., У истоков древнегреческой цивилизации: Иония XI-VI вв. до н. э., Санкт-Петербург, 2009, с. 111.
[68] Рунг Э. В., Греция и Ахеменидская держава: История дипломатических отношений в VI-IV вв. до н. э., Санкт-Петербург, 2008, с. 269.
[69] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XIII, 104, p. 278.
[70] Հերոդոտոս, VIII, 44:
[71] Անդ, VII, 95; 97:
[72] Անդ, III, 127:

նիայի սատրապ է նշանակում Քյուսանտասին[73], ընդ որում՝ հոնիական քաղաքները, որոնց մեջ իրենց նշանակությամբ առանձնանում էին Միլետը և Եփեսոսը[74], մ. թ. ա. V դարի վերջին վարչական առումով ենթարկվում էին նախ Լյուդիայի և Կարիայի սատրապ Տիսսաֆեռնեսին, ապա՝ Կյուրոս Կրտսերին[75]: Կյուրոս Կրտսերը Թամոսին նշանակում է Հոնիայի, Էոլիսի և մերձակա երկրների կառավարիչ[76], ինչը վարչական առումով նույնանում է I սատրապության տարածքին: Թամոսին՝ որպես Հոնիայի հյուպարքոսի, հիշատակում է Թուկիդիդեսը[77]: «Անաբասիս»-ի վերջում Լյուդիան հիշատակվում է առանձին սատրապով[78]: Մ. թ. ա. մոտ 392 թվականին Լյուդիան, Հոնիան կառավարում են առանձին սատրապներ, իսկ Կարիան՝ բնիկ տիրակալը, սակայն շուտով՝ 388 թվականին, Հոնիան և Լյուդիան կրկին մեկ սատրապի ենթակայության տակ են[79]: Մ. թ. ա. IV դարի 60-ական թվականներին Հոնիան Լյուդիայի և Պափլագոնիայի հետ ենթարկվում էր մեկ սատրապի[80]:

Մասնագիտական գրականության մեջ, հենվելով Դիոդորոսի տեղեկությունների վրա, կարծիք է հայտնվել, որ Մյուսիայի սատրապ Օրոնտեսը պետք է համարվի Հոնիայի սատրապ[81], ինչը հազիվ թե աշխարհագրական առումով պատմիչի կողմից շփոթություն լիներ: Մյուսիան Օրոնտեսի ակտիվ գործողությունների հետևանքով պարզապես կարող էր արևմուտքում ժամանակավորապես դուրս գալ ծովափնյա շրջաններ մինչև Կայկոս գետի ստորին հոսանքի շրջանը և Կյումե[82]: Ալեքսանդր

[73] Կյուրոպեդիա, էջ 355:
[74] Քսենոփոն, Անաբասիս, էջ 8: Плутарх, Лисандр, III, Избранные жизнеописания, т. II, М., 1987, с. 9; Агесилай, VII, IX, с. 243, 245.
[75] Քսենոփոն, Անաբասիս, էջ 9, 10, 17, 32, 41, 116, 139, 140; Ксенофонт, Греческая история, с. 259, 304; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 66; Плутарх, Лисандр, IV, с. 9.
[76] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 57: Diodori Bibliotheca Historica, Vol. II, XIV, 19, p. 314. Դիոդորոսը Թամոսին մի տեղեկության մեջ հիշատակում է Հոնիայի սատրապ (անդ, XIV, 35, p. 332), որը չի ենթարկվում առափնյա երկրների սատրապ Տիսսափեռնեսին:
[77] Thucydides, History of the Peloponnesian war, Vol. IV, Books VII-VIII, VIII, XXXI, 2, p. 242.
[78] Քսենոփոն, Անաբասիս, էջ 197:
[79] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 238; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 390.
[80] Cornelius Nepos, London, Cambridge, Massachusetts, 1960, Loeb Classical Library, Datames, XIV, II, 2, p. 512.
[81] Weiskopf M., The so-called "great Satrap's revolt": 366-360 B.C., Historia, Heft 63, Stuttgart, 1989, pp. 71, 74.
[82] Անդ, էջ 89-90:

Մակեդոնացու արշավանքների ժամանակ Հոնիան և Լյուդիան հիշատակվում են կա՛մ առանձին-առանձին, կա՛մ էլ որպես մեկ սատրապություն[83]: Հոնիայի հիշատակվելը նշանակում է, որ Հոնիան հին հեղինակների կողմից համարվել է ոչ թե առանձին սատրապություն, այլ լյուդիական սատրապության ենթաշրջաններից մեկը, հետևաբար՝ Դարեհ Ա-ի վարչական վերաձևումներից հետո I սատրապության նախկին ենթատարածքը, ավելի շուտ ռազմաքաղաքական նկատառումներից ելնելով, միացվել էր լյուդիական սատրապությանը: Օրինակ, հետաքրքիր է Արիանոսի այն տեղեկությունը, որ Հոնիայի և Լյուդիայի կամ էլ հենց Լյուդիայի սատրապ Սպիթրիդատեսին Ալեքսանդրը նշանակում է ենթակա մարզերի կառավարիչ[84], այսինքն՝ պետք է նկատի ունենալ Լյուդիայի մեջ ներառված Հոնիան, որի կառավարիչը նշանակությամբ շատ կարևոր էր ու բարձր[85]: Մասնագիտական գրականության մեջ կարծիքներ են հայտնվել նաև, որ հոնիական քաղաքները Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների մեջ չեն մտել և ենթարկվել են, օրինակ, Կյուրոս Կրտսերին ու Տիսսափեռնեսին ոչ թե որպես սատրապներին, այլ մասնավոր անձանց և եղել են ինքնավար, չնայած պարսից թագավորը ստանում էր այդ քաղաքներից եկամուտ[86]: Փյունիկիայի և Հոնիայի որոշ քաղաքներ նույնիսկ հատում էին իրենց սեփական դրամները[87]: Սակայն նման մոտեցման դեպքում անտեսվում են Հերոդոտոսի տեղեկությունները սատրապությունների մասին:

Հերոդոտոսը Եփեսոսը, Փոկայան, Սմյուռնեն տեղադրում է Հոնիայում[88]: Պատմիչը հայտնում է, որ հոնիացիները խոսում են չորս տարբեր բարբառներով. ամենից հարավ գտնվում է Միլետը, այնուհետև դեպի հյուսիս՝ Միուս և Պրիենե քաղաքները, որոնցից առաջինը գտնվել է Մեանդրոս գետի ձախափնյակին՝ Միլետից մի փոքր հյուսիս, իսկ երկրորդը՝ նույն գետի աջափնյակին՝ գետաբերանին մոտ[89]:

[83] Արիանոս, էջ 28, 33; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 47, p. 51.
[84] Արիանոս, էջ 34:
[85] Ксенофонт, Греческая история, с. 378.
[86] Lewis D. M., Sparta and Persia. Lectures delivered at the University of Cincinnati, autumn 1976 in memory of Donald W. Bradeen, "Cincinnati Classical Studies", № 1, Leiden, 1977, p. 122; Рунг Э. В., Греция и Ахеменидская держава, с. 277. Հմմտ. Olmstead A. T., History of the Persian Empire, p. 44.
[87] Фрай Р., Наследие Ирана, с. 152.
[88] Հերոդոտոս, I, 163; II, 106:
[89] Bryce T., The Routledge..., pp. 488, 564. Միուս քաղաքը Ստրաբոնի ժամանակ փոքրաթիվ բնակչության պատճառով միացել էր Միլետին (տե՛ս Страбон, с. 595): Տե՛ս DGRG, Vol. II, p. 392.

Նշված քաղաքները գտնվել են Կարիայում, և բնակիչները խոսել են մեկ ընդհանուր լեզվով, այսինքն՝ բարբառով: Կարիան Հերոդոտոսի տվյալ հատվածում ունի աշխարհագրական նշանակություն[90], որի սահմանը հյուսիսում Մեանդրոս գետն էր, հետևաբար՝ Պրիենեն աշխարհագրորեն Լյուդիայի մեջ էր: Հոնիական մեկ այլ բարբառով խոսել են Լյուդիայում գտնվող Եփեսոսի (ներկայիս Սելջուկի մոտ, Արցավայի մայրաքաղաք Ապասասը[91] Կաիստրոսի ձախափնյակին՝ գետաբերանի մոտ), Կոլոփոնի (Իզմիրից հարավ[92], հավանաբար ներկայիս Դեղիրմենդերեն), Լեբեդոսի (ներկայիս Ուրքմեզը Կոլոփոնից հյուսիս-արևմուտք[93]), Տեոսի (ներկայիս Սիղաջիկը[94]), Կլազոմենեի (ներկայիս Ուրլան Իզմիրի ծոցի հարավային ափին, Սմյուռնեի և Էրիթրեայի միջև[95]), Փոկայայի (ներկայիս Ֆոչան[96]) բնակիչները: Բացի վերջինից՝ մնացած քաղաքները ևս աշխարհագրական առումով մտել են Լյուդիայի մեջ: Ինչ վերաբերում է Փոկայային՝ Հերմոս գետի գետաբերանից հյուսիս, ապա այն կարող էր լինել ոչ թե Լյուդիայի, այլ արդեն Էոլիսի մեջ, քանի որ նույն Սմյուռնեն՝ ներկայիս Բայրաքլիին Իզմիրից մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք[97], նախքան հոնիացիների կողմից նվաճվելը էոլական քաղաք էր[98]: Պլինիոս Ավագը Փոկայան համարում է Հոնիայի սահմանային քաղաքը հյուսիսում[99]: Սկիլաքս Կարիանդացին ամբողջ Հոնիան տեղադրում է Լյուդիայում[100], հավանաբար նկատի ունենալով Լյուդիական տերության ժամանակաշրջանը: Հոնիական երրորդ բարբառով խոսել են քիոսցիները և երյութրեցիները[101], իսկ սամոսցիներն ունեցել

[90] Հմմտ. Страбон, с. 293. Հույն աշխարհագրագետը հիշատակում է նաև հոնիական տասներկու քաղաքների մասին (տե՛ս Страбон, с. 365, 592, 593):
[91] Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Եր., 1999, էջ 43; Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, էջ 66; Bryce T., The Routledge..., p. 230; RGTC, VI, SS. 26-27.
[92] Bryce T., The Routledge..., p. 171.
[93] Greaves A., The Land of Ionia: Society and Economy in the Archaic Period, Oxford, 2010, p. 100.
[94] DGRG, Vol. II, p. 1129.
[95] DGRG, Vol. I, pp. 631-632.
[96] Greaves A., The Land of Ionia: Society and Economy in the Archaic Period, p. 97.
[97] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 179; Bryce T., The Routledge..., p. 658.
[98] Հերոդոտոս, I, 149:
[99] Pliny, Natural History, Vol. II, V, XXXI, 119, p. 310; Страбон, с. 544; Plutarch's Lives, Vol. XI, Artaxerxes, XXVI, 3, p. 190.
[100] Скилак Кариандский, с. 261.
[101] Էրիթրեան, Լեբեդոսը՝ որպես հոնիական քաղաք և կղզի, հիշատակում է Հեկատեոս Միլեթացին (տե՛ս Müller C., FHG, Vol. I, fr. 215, 219, p. 15):

են իրենց ուրույն բարբառը[102]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոնիական տասներկու կամ ավելի ճիշտ տասներեք[103] քաղաքները վերաբնակեցրել են աքայացիները, փիլոսցիները, թեբեացիները, բեովտիացիները և այլն[104]:

Հոնիան Աքեմենյան թագավորների սեպագիր արձանագրություններում սովորաբար հիշատակվում է Սպարդա-Սարդեսի, այսինքն՝ Լյուդիայի հետ կողք կողքի[105], ինչը համապատասխանում է աշխարհագրական հերթականությանը: Սուզայի պալատի շինարարության ժամանակ հոնիացիները և կարիացիները լիբանանյան մայրին Բաբելոնից բերում էին Սուզա, իսկ Հոնիայից բերվածքարդարանքներով զարդարվում էին պալատի պատերը: Միաժամանակ հոնիացիները և լյուդիացիները պալատում աշխատում էին որպես քարի փորագրիչներ[106]:

Այժմ անցնենք հին պարսկական սեպագիր արձանագրություններում բազմիցս հիշատակվող աշխարհագրական բառակապակցությունների քննությանը, որը կարևոր նշանակություն ունի պետության վարչական ընդհանուր կացության պարզաբանման համար: Ստորև ներկայացնում ենք աշխարհագրական այդ հասկացությունները՝ ըստ տարբեր արձանագրությունների. ***DB***-... Եգիպտոս, այն երկրները, որոնք ծովի մոտ են, Սարդես, Հոնիա, Մեդիա, Հայաստան, Կապադովկիա, Պարթևստան... «... Mudrāya : tyaiy drayahyā : Sparda : Yauna : Māda : Armina : Katpatuka : Parθava :... »: ***DPe***-...Հայաստան, Կապադովկիա, Սարդես, ցամաքի հոնիացիներ և այն երկրները, որոնք ծովի ափին են, և այն երկրները, որոնք ծովի այն կողմում են, Սագարտիա... «...Armina : Katpatuka : Sparda : Yaunā : tyaiy : uškahyā : utā : tyaiy : drayahyā : utā : dahyāva : tyā : para : draya : Asagarta :... »: ***DNa***-... Հայաստան, Կապադովկիա, Սարդես, Հոնիա, ծովից այն կողմ ապրող սակեր («անդրծովյան սակեր»), Սկուդրա, վահանակիր հույներ, լիբիացիներ... «...Armina : Katpatuka : Sparda : Yauna : Sakā : tyaiy : paradraya : Skudra : Yaunā : takabarā : Putāyā :... »: ***DSe***- ... Հայաստան, Կապադովկիա, Սարդես, հոնիացիներ, այն երկրները, որոնք ծովի ափին են և այն երկրները, որոնք ծովից այն կողմ են, Սկուդրա, լիբիացիներ... «...Armina : Katpatuka : Sparda : Yaunā : tyaiy : drayahyā : utā : tyaiy : paradraya : Skudra : Putāyā :... »: ***DSm***-...Սարդես, Հոնիա, Մեդիա, Հայաստան, Կապադովկիա, Պարթևստան... Սինդ, Սկուդրա, վահանակիր հույներ... «...Sparda : Yaunà : Māda : Armina : Katpatuka : Parθava...Hiduš : Skudra : Yaunā : takabarā :...»: ***XPh***-...Սարդես, Եգիպտոս, հոնիացիներ, նրանք, որոնք ապրում են ծովի մոտ և նրանք, որոնք ապրում են ծովից այն կողմ, Մակայի մարդիկ... «...Sparda : Mudrāya : Yaunā: tya: drayahiyā : dārayatiy : utā : tyaiy : paradraya : dārayatiy : Maciyā:...» ***A?P***-...Սա հայ է: Սա կապադովկիացի է: Սա սարդեսցի է: Սա հոնիացի է: Սա անդրծովյան սակ է: Սա սկուդրացի է: Սա վահանակիր հույն է: Սա լիբիացի է... «...20 iyam : Arminiya : 21 iyam : Katpatuka : 22 iyam : Spardiya : 23 iyam : Yaunā : 24 iyam : Sakā : paradraiya : 25 iyam : Skudra : 26 iyam : Yauna : takabarā : 27 iyam : Putāya :...»[107]: Մեջբերված տեղեկություններում կա մի կարևոր հանգամանք, ինչը և ուշադիր քննության պարագայում հնարավորություն է տալիս հստակորեն տեղադրել խնդրո առարկա աշխարհագրական հասկացությունները: Հարցն այն է, որ այդ հասկացությունները հիշատակվում են որոշակի աշխարհագրական հերթականությամբ, ընդ որում, հերթականությունը գրեթե անխախտ է մնում, ինչը սովորաբար պարսկական սեպագիր արձանագրություններում խստորեն չի պահպանվում: Այսպես, Բեհիսթունի արձանագրության «այն երկրները, որոնք ծովի մոտ են»[108] աշխարհագրորեն նույնանում են Կիլիկիային և Կիպրոսին: Կարծում ենք, որ **DPe** «այն երկրները, որոնք ծովի ափին են» նույնպես տեղորոշվում է Կիլիկիայի և թերևս Կիպրոսի տարածքներում, ընդ որում, նման եզրակացության մեզ մղում է այն հանգամանքը, որ երկու արձանագրություններում Կարիայի բացակայությունը[109] թույլ է տալիս Կարիան և նրանից

[102] Հերոդոտոս, I, 142:

[103] Տասներեքերորդը Սմյուռնեն էր, որը հոնիական միությանը միանում է ավելի ուշ (տե՛ս Лаптева М., У истоков древнегреческой цивилизации, с. 105-107):

[104] Лаптева М., У истоков древнегреческой цивилизации, с. 96-99.

[105] Kent R., Old Persian, pp. 117, 137, 145 և այլն:

[106] Kent R., Նշվ. աշխ., էջ 143; Schmitt R., Die altpersischen Inschriften der Achaimeniden, SS. 131-133.

[107] Kent R., Նշվ. աշխ., էջ 117, 136-137, 141, 145, 151, 156:

[108] Գ. Նալբանդյանի մոտ թարգմանված «այն երկրները, որ ծովում են» (տե՛ս Դարեհ Կշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի, Երևան, 1964, էջ 8) ենթադրել է տալիս, որ խոսքը կղզիների մասին է (հունական կամ թերևս Կիպրոսը), բայց Բեհիսթունի արձանագրությունում հունական կղզիների մասին դեռևս չէր կարող խոսք լինել, իսկ Կիպրոսը հազիվ թե առանձին հիշատակվեր, ընդ որում, երբ խոսքը գնում է երկրների մասին: Եվ ընդհանրապես, Բեհիսթունի արձանագրության այլ թարգմանություններում ևս կարդում ենք «այն երկրները, որ ծովի մոտ են» (տե՛ս, օրինակ, Хрестоматия по истории Древнего Востока, под редакцией В. В. Струве и Д. Г. Редера, М., 1963, с. 358; Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах, с. 262): Ա. Օլմսթեդը tyaiy drayahyā-ն նույնացնում է Հելլեսպոնտոսյան Փոյուգիային (տե՛ս Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 44):

[109] ***DNa***-ում կարիացիներն արդեն հիշատակվում են:

արևելք ընկած Լյուկիան ու Պամփյուլիան ևս ընդգրկել աշխարհագրական այդ ընկալման մեջ: Բնականաբար Կիլիկիայի և Կիպրոսի ներգրավումը Կարիայի, Լյուկիայի, Պամփյուլիայի հետ միասին աշխարհագրական նման սահմանների մեջ, ցույց է տալիս, որ այս հիշատակությունը նախորդել է Դարեհի վարչական վերափոխումներին, քանի որ I սատրապության մի մասի և IV-ի ներառումը աշխարհագրական միևնույն սահմանման մեջ չի համապատասխանում Դարեհի վարչական համակարգի մասին պահպանված տեղեկություններին: Ինչ վերաբերում է ***DPe*** հոնիացիներին, ապա սրանք հստակորեն համապատասխանում են Փոքր Ասիայի և Էգեյան ծովի պարսկահպատակ հոյներին[110], իսկ «անդրծովյան երկրները» տեղադրվում են Թրակիայում, Մակեդոնիայում և Դանուբի գետաբերանի շրջանում: Մյուս արձանագրություններում արդեն կան տեղագրական որոշակի սահմանազատումներ: Այսպես, ***DNa***-ում առանձին հիշատակված հոնիացիներին հաջորդում են անդրծովյան սկյութները, իսկ վերջիններիս հաջորդում են Սկուդրա երկիրը[111] և սաղավարտակիր կամ վահանակիր հոյները (petasos-wearing Ionians)[112]: Տվյալ հիշատակությունը գնում է ըստ աշխարհագրական հերթականության՝ արևելքից արևմուտք: Այս արձանագրության մեջբերված հատվածի վերաբերյալ աշխարհագրական մեր նույնացումները հետևյալն են: Հոնիացիները համապատասխանում են մայրցամաքի և կղզիների հոյներին, «անդրծովյան սկյութները»

[110] O. Szemerényi-ի մոտ (տե՛ս Szemerényi O., Four Iranian Ethnic Names: Scythian-Skudra-Sogdian-Saka, Wien, 1980, p. 11) հենց այդպես էլ թարգմանված է «the Ionians of the land (i. e. Asia Minor) and the sea (i. e. the islanders)», սակայն, մեր կարծիքով, կղզիաբնակ հոյները սույն հատվածում ուղղակիորեն արտացոլված չեն և հանդես են գալիս առաջին բառակապակցության մեջ:

[111] Անունը ծագում է մակեդոնական Scydra (Pliny, Natural History, Vol. II, IV, 34, p. 142; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, III, 12, 39, p. 199) քաղաքի անունից:

[112] Այս հոյները նույն արձանագրություններում հիշատակվում են նաև «Ionian with shield on head» և «this is the shield-bearing Ionian» բնորոշումներով (տե՛ս Persepolis, Takht-I-Jamshid, by Ali-Sami, 5th ed., Shiraz, 1967, pp. 41, 83): Պերսեպոլիսի ապադանայի սանդուղքի բարձրաքանդակներից մեկում պատկերված են Թրակիայի և արևելյան Մակեդոնիայի բնակիչները, որոնք արքային բերում են վահաններ, նիզակներ և ձի (անդ, էջ 33), այսինքն՝ վահանների պատկերումը թույլ է տալիս մտածել, որ վահանակիր հոյների՝ որպես Սկուդրա սատրապության ժողովուրդներից մեկի տեղորոշումը Էգեյան ծովի հյուսիսային ափամերձ շրջանում լիովին արդարացված է: ***DNa***-ի Yaunā takabarā-ն (ըստ Ռ. Քենթի =DB և DPe tyaiy drayahyā, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ) աքքադերեն տարբերակում ունի «the second Ionians, who wear shields on their heads» թարգմանությունը (տե՛ս Kent R. G., The Lists of Provinces, JNES, Vol. II, 1943, p. 305, n. 15):

տեղադրվում են հոնիացիների և Սկուդրայի միջև՝ Դանուբի գետաբերանի շրջանում, իսկ Սկուդրան տարածվում էր Թրակիայի և Մակեդոնիայի տարածքներում: Սաղավարտակիր կամ վահանակիր հոյները տեղադրվում են Էգեյան ծովի հյուսիսային ափերին[113]: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Կարծում ենք, որ վարչական առումով և՛«անդրծովյան սկյութները», և՛ սաղավարտակիր կամ վահանակիր հոյները մտել են Սկուդրա սատրապության մեջ, ընդ որում, պարսկական սեպագիր արձանագրություններում մի քանի երկրներ կարող էին հիշատակվել կողք կողքի, այն դեպքում, երբ վարչականորեն կազմում էին մեկ ամբողջություն. օրինակ՝ պարթևները, քորասմները, արեյները, սոգդերը հիշատակվում են արձանագրություններում և միաժամանակ հանդես են գալիս XVI սատրապության կազմում: Հերոդոտոսը, նկարագրելով Աքեմենյան տերության վարչական բաժանումը, վերջում ավելացնում է, որ որոշ ժամանակ հետո հարկատու են դառնում նաև կղզիներում և Եվրոպայում մինչև Թեսալիա ապրողները[114], այսինքն՝ Թրակիան, Մակեդոնիան, «անդրծովյան սկյութները», սաղավարտակիր կամ վահանակիր հոյները և Էգեյան ծովի պարսկահպատակ կղզիները: Սա նշանակում է, որ մինչև նշված շրջանների նվաճումը սատրապությունների ցուցակն արդեն գոյություն ուներ, այսինքն՝ քաղված էր Հեկատեոսից, և վարչական վերափոխումն էլ արդեն կատարված իրողություն էր: Համենայն դեպս ոչինչ չի խանգարում, եթե Սկուդրա սատրապությունը համարենք XXI վարչական միավորը: Աշխարհագրական այս նույնացումները ***DSe***-ում անվանական առումով որոշակի փոփոխություններ են կրում: Հոնիացիները, ինչպես և Սկուդրան, մնում են իրենց տեղերում, իսկ դատելով վահանակիր հոյների բացակայությունից՝ սրանց համապատասխանում են «այն. երկրները, որոնք ծովի ափին են», իսկ «այն երկրները, որոնք ծովից այն կողմ են» նույնանում են ***DNa*** «անդրծովյան սկյութներին»: ***DSm***-ում աշխարհագրական հերթականությունը գրեթե պահպանված չէ: Հոնիան հիշատակվում է Սարդեսի ու Մեդիայի միջև, իսկ Սկուդրան և «սաղավարտակիր կամ վահանակիր հոյները»՝ Հնդկաստանից հետո: ***XPh***-ում աշխարհագրական հերթականությունը նույնպես խստո-

[113] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 111. Է. Հերցֆելդն իր աշխատություններից մեկում վահանակիր հոյներին տեղադրել է Մակեդոնիայում (տե՛ս Herzfeld E., Archaeological History of Iran, London, 1935, էջ 112-ին հաջորդող քարտեզը):

[114] Հերոդոտոս, III, 96:

րեն պահպահված չէ: Հոնիացիները հանդես են գալիս Եգիպտոսից հետո, որից առաջ նշված է Սարդեսը: Հոնիացիներից հետո հիշատակվող «նրանք, որոնք ապրում են ծովի մոտ» նույնանում են ***DSe*** «այն երկրները, որոնք ծովի ափին են», այսինքն՝ «սաղավարտակիր կամ վահանակիր հույներին», իսկ «նրանք, որոնք ապրում են ծովից այն կողմ» «անդրծովյան սկյութներն» են: Սկուդրան էլ հայտնվել է աշխարհագրական բոլորովին այլ միջավայրում՝ տիգրախաուդա սակերի և Âkaufaçiyā-ի միջև: Ինչպես երևում է, Աքեմենյան տիրակալների համար ոչ միշտ է թվարկվող երկրների աշխարհագրական հերթականությունը իրենց արձանագրություններում խստորեն պահպանելը առանձնապես կարևորություն ներկայացրել: Իսկ, օրինակ, ***A?P***-ում և՛ աշխարհագրական հերթականությունը, և՛ անունների հիշատակությունը լիովին համապատասխանում է ***DNa***-ին:

Այսպիսով, ելնելով կատարված քննությունից՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած Աքեմենյանների վարչական վերաձևումներին՝ հոնիական հարուստ քաղաքներն Աքեմենյան Պարսկաստանի I սատրապության համակարգում և ընդհանրապես Փոքր Ասիայում ավելի քան երկու հարյուր տարի պահպանեցին իրենց ռազմաքաղաքական ու տնտեսական կարևորագույն նշանակությունը:

1.2. Կարիայի վարչական բաժանումը

Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների մասին Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ Կարիան մտնում էր I սատրապության կազմի մեջ: Հերոդոտոսը հայտնում է, որ «Հոնիացիներից, Ասիայի մագնեսյաններից, էոլյաններից, կարիացիներից, լյուկիացիներից և միլյուացիներից և պամփյուլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպես առաջին նահանգ»[115]: Հերոդոտոսը Կարիայի և կարիացիների մասին հաղորդում է նաև այլ տեղեկություններ, որոնք կքննենք հին աղբյուրների համադրության լույսի ներքո:

Դասական աղբյուրների Կարիան մասնագիտական գրականության մեջ լեզվաբանական տեսանկյունից նույնացվել է խեթական աղբյուրների Կարկիա-Կարկիսա երկրի հետ[116], ինչը, սակայն, որոշակի դժվա-

[115] Հերոդոտոս, III, 90:
[116] RGTC, VI, SS. 182-183.

րություններ է ներկայացնում աշխարհագրական առումով[117]: Հոմերոսի «Իլիական»-ում կարիացիները Նաստեսի գլխավորությամբ տրոյացիների կողմից կռվում են հելլենների դեմ: Հետաքրքիր է, որ հույն հեղինակը միաժամանակ ուրվագծում է կարիացիների բնակության տարածքը՝ նրանց տեղադրելով Մեանդրոսի գետի հովտում, Միլետում, Ֆըթիրոսում ու հյուսիսում մինչև Միկալե[118]: «Բարբարոս կարիացիների»[119] բնակության նման սահմանները հավանաբար խոսում են, այսպես կոչված, նախնական Կարիայի մասին, որտեղից կարիացիները, որոնց Ստրաբոնը նույնացնում է լելեգների հետ կամ համարում տարբեր ցեղեր, հոնիացիների ճնշման տակ հեռացել էին[120] դեպի հարավ-արևելք: Հոմերոսը կարիացիներին և լելեգներին հիշատակում է առանձին-առանձին[121], այսինքն՝ չի նույնացնում երկու ժողովուրդներին:

Հեկատեոս Միլեթացին հիշատակում է բազմաթիվ կարիական քաղաքներ, ընդ որում՝ Միլեթը տեղադրում է հոնիական Կարիայում[122], ինչը նշանակում է, որ հոնիացիների ճնշման տակ կարիացիները շարժվել էին հարավ: Սկիլաքս Կարիանդացին Կարիայի մեջ է մտցնում ոչ միայն Միլեթը և բազում այլ քաղաքներ, այլև Հերակլեան, ներկայիս Քապի-Քերենի ավերակները: Ընդ որում, դատելով պատմիչի տեղեկություններից, կարելի է ենթադրել, որ Հոդոսը վարչական առումով մտել է Կարիայի մեջ[123]: Լաթմոս լեռը (թուրքերեն Բեթչեկ

[117] Adiego J. I., The Carian Language, Leiden, Boston, 2007, p. 1; Garstang J., Gurney O. R., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 108; Herda A., Greek (and our) views on the Karians, Luwian Identities: Culture, Language and Religion Between Anatolia and the Aegean, Leiden, Boston, 2013, p. 433. Կարիացիների լեզուն պատկանել է անատոլիական լեզուների հնդեվրոպական ընտանիքին, ավելի ճիշտ, այսպես կոչված, լուվիական խմբին (Adiego J. I., The Carian Language, pp. 4-5; Yakubovich I., The Carian Language, by Ignacio J. Adiego, JNES, Vol. 71, № 1, 2012, p. 131):
[118] Հոմերոս, Իլիական, II, 870: Համմ. Страбон, c. 592. Ֆըթիրոսը հավանաբար նույնանում է Պլինիոս Ավագի Ֆյուրիթեսին (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 115, p. 306) կամ էլ Լաթմոսին, չնայած Ստրաբոնը նույնացնում է Լաթմոսին զուգահեռ ընկած Գրիոս անունով լեռներին (տե՛ս Страбон, c. 595; DGRG, Vol. II, p. 625): Թուկիդիդեսը Մեանդրոսի հովիտը ևս տեղադրում է Կարիայում (տե՛ս Фукидид, История, c. 136): Ֆըթիրոսը նույնանում է ներկայիս Բեշպարմակին (տե՛ս Herda A., Greek (and our) views on the Karians, p. 430):
[119] Herda A., Greek (and our) views on the Karians, pp. 429, 471.
[120] Страбон, c. 68, 293, 536. Լելեգների անունը, թերևս, կապված է խեթական լուպախի «օտարական» բառի հետ (տե՛ս Дьяконов И. М., Предыстория армянского народа, Ер., 1968, с. 118):
[121] Հոմերոս, X, 429-430:
[122] Müller C., FHG, Vol. I, fr. 225-239, pp. 15-16.
[123] Скилак Кариандский, с. 262.

Փարմակ[124]) և Լաթմոսյան Հերակլեան՝ Միլեթից արևմուտք[125], կարիական բարբառի սահմանների մեջ է մտցնում Պլինիոս Ավագը[126]:

Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ կարիացիները մինչև Աքեմենյանների տիրապետությունը մտնում էին Կրեսոսի տերության մեջ[127]: Հերոդոտոսը նաև հայտնում է, որ կարիացիները, որոնք կոչվում էին լելեգներ, Փոքր Ասիա են եկել կղզիներից և հնում հպատակ էին Կրետեի կիսապատմական-կիսառասպելական թագավոր Մինոսին[128]: Համաձայն պատմիչի հաջորդ տեղեկությունների՝ դորիացիների և հոնիացիների ճնշման հետևանքով կարիացիները տեղահանվում են կղզիներից և գալիս մայրցամաք՝ Փոքր Ասիա: Այդուհանդերձ Հերոդոտոսը նաև հայտնում է, որ կարիացիները իրենց համարում են մայրցամաքի տեղաբնիկներ և իրենց եղբայրակից համարում մյուսիացիներին և լյուդիացիներին՝ մատնացույց անելով Մյուլասայում՝ ներկայիս Միլաս քաղաքում[129] գտնվող Կարյան Զևսի հնամենի սրբավայրը[130]: Կարիացիների երկիրը նվաճում է Հարպագոսը[131]: Վերջինս նվաճում է նաև կնիդոսցիների երկիրը՝ Կնիդիան կամ Տրիոպիոնը, ներկայիս Թալփանի-չայի գետաբերանի շրջանում, ու Հալիկառնասոսից՝ ներկայիս Բոդրումից[132] հյուսիս-արևելք գտնվող պեդասացիներին[133]: Հույն հեղինակի տեղեկություններից երևում է, որ կնիդոսցիները և պեդասացիները գտնվել են Կարիայում: Պատահական չէ, որ Հերոդոտոսը և Քսենոփոնը Կերամիկոս ծոցը՝ ներկայիս Քերմեն, համարում են Կարիայի մասը[134]: Կարիացիների համար պարսիկների գերիշխանությունը բավականին մեղմ է եղել, քանի որ վերջիններս հարգում էին տեղական ավանդույթները և ինքնավարությունը[135]:

[124] Cramer J. A., A Geographical and Historical Description of Asia Minor, Vol. I, p. 394.
[125] Bryce T., The Routledge..., p. 307.
[126] Pliny, Natural History, Vol. II, XXXI, 113, p. 304.
[127] Հերոդոտոս, I, 28:
[128] Համմ. Страбон, с. 618.
[129] Bryce T., The Routledge..., p. 487.
[130] Հերոդոտոս, I, 171: Պլինիոս Ավագը Մյուլասան նշում է որպես ազատ քաղաք (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, XXIX, 108, p. 300):
[131] Հերոդոտոս, I, 174:
[132] Bryce T., The Routledge..., p. 278.
[133] Հերոդոտոս, I, 175; VII, 104; Страбон, с. 573. Կնիդիան, Տրիոպիան և կարիական բազմաթիվ քաղաքներ հիշատակվում են Պլինիոս Ավագի կողմից (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, XXIX, 104, p. 298):
[134] Հերոդոտոս, I, 174; Ксенофонт, Греческая история, с. 276.
[135] Ефремов Н. В., Династия Гекатомнидов в современных им греческих надписях, Вопросы эпиграфики, вып. IV, М., 2010, с. 85.

Քսենոփոնը գրում է, որ կարիացիներին նվաճել է Կյուրոսի մեկ այլ զորավարը՝ Ադուսիոսը, որին ավելի ուշ Կյուրոսը բնակիչների խնդրանքով նշանակում է Կարիայի սատրապ[136]:

Հերոդոտոսի մի տեղեկությունից էլ պարզվում է, որ կարիացիներն ապրել են Եգիպտոսում[137], ինչը վկայում է Եգիպտոսում կարիացիներից կազմված ռազմական գաղութի մասին: Կարիացիներն ավելի ուշ հաստատվում են Մեմփիսում, որտեղ հայտնի էր նրանց թաղամասը[138]: Եգիպտոսում հելլենները և կարիացիները՝ որպես վարձկաններ, կռվում են պարսիկների դեմ[139]:

Արիանոսը Գավգամելայի ճակատամարտում պարսկական բանակի կազմում, բաբելոնացիների և սիտակենների հետ միասին հիշատակում է «գաղթական» կամ «արտաքսված» կոչված կարիացիներին[140], որոնց անվան տակ հեղինակը նկատի ունի Հարավային Միջագետքում Աքեմենյանների կողմից վաղուց վերաբնակեցված կարիացիներին[141]:

Քսերքսեսի հունական արշավանքին կարիացիները տրամադրել էին յոթանասուն նավ, և հոնիական ու կարիական նավատորմը գլխավորում էր Արիաբիգնեսը՝ Դարեհի որդին Գոբրյուասի դստրից[142]:

Հույն-պարսկական պատերազմների ժամանակ կարիացիները ապստամբում են պարսիկների դեմ և համառ դիմադրություն ցույց տալիս: Ապստամբ կարիացիները հավաքվում են Սպիտակ սյուներ կոչված վայրում՝ Մարսիաս գետի մոտ, որը հոսելով Իդրիաս երկրի միջով՝ թափվում էր Մեանդրոս գետը: Պարսիկներն անցնում են Մեանդրոս գետը և Մարսիաս գետի մոտ ջախջախում կարիացիներին, որոնք ապաստան են գտնում Միլեթից 48 կմ հարավ-արևելք տեղադրվող[143] Լաբրաունդայում՝ Զևս Ստրատիոսի (բառացի՝ ռազմատենչ) սրբավայրում[144]: Տեղեկությունից պարզվում է, որ Մեանդրոս

[136] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 284, 355:
[137] Հերոդոտոս, II, 61:
[138] Adiego J. I., The Carian Language, p. 2.
[139] Հերոդոտոս, III, 11:
[140] Արիանոս, էջ 97, 101, 103:
[141] Herzfeld E., The Persian Empire, p. 9; Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 362.
[142] Հերոդոտոս, VII, 93, 97:
[143] Bryce T., The Routledge..., p. 401.
[144] Հերոդոտոս, V, 118-119: Լաբրաունդան Հեկատոմնոսյանների կրոնական կենտրոնն էր (տե՛ս Williamson Ch., Labraunda as Memory Theatre for Hellenistic Mylasa, Herom, 2013, Vol. 2, p. 144):

գետը Կարիայի վարչական սահմանն էր, ինչի մասին ավելի ուշ ժամանակների համար հաղորդում է նաև Ստրաբոնը[145]:

Հերոդոտոսը հիշատակում է նաև Կարիայի Ալաբանդա, Միուս և Պրիենե քաղաքները[146]: Վերջին երկու քաղաքները գտնվել են համապատասխանաբար Մեանդրոս գետի ստորին հոսանքի ձախ և աջ ափերին, հետևաբար Հերոդոտոսը Կարիան աշխարհագրական առումով տարածում է նաև գետից հյուսիս, ինչն արդեն չի համապատասխանում Կարիայի վարչական սահմաններին: Ալաբանդա քաղաքը՝ խեթական աղբյուրների Վալիվանդան[147], տեղադրվում է ժամանակակից Չինեից 11 կմ արևմուտք[148] և, հավանաբար, նույնանում է Հերոդոտոսի հիշատակած փռյուգիական Ալաբանդա քաղաքին[149], ինչը խոսում է այն մասին, որ Ալաբանդան կամ անցել էր Փռյուգիական սատրապությանը, կամ էլ աշխարհագրական առումով համարվում էր Փռյուգիայի մաս: Հերոդոտոսը Կարիայի հարավարևելյան անկյունում հիշատակում է Կավնոս քաղաքը՝ ներկայիս Դալյան գյուղի մոտ՝ Կալբիսի՝ Դալյան գետի ստորին հոսանքի շրջանում[150], որը գրավում է Հարպագոսը[151]: Ստրաբոնը Կարիայի սահմանը Փռյուգիայի ուղղությամբ համարում է Կարուրը[152] ներկայիս Դենիզլիից հյուսիս-արևմուտք[153]:

Արիանոսը նույնպես աշխարհագրական առումով ընդարձակ տարածք է հատկացնում Կարիային՝ Մեանդրոս գետի հարթավայրը մինչև Միլեթ համարելով Կարիայի տարածք, բայց միևնույն ժամանակ գետի աջափնյակին գտնվող Տրալես քաղաքը՝ ժամանակակից Այդինը[154], չի տեղադրում Կարիայում[155]:

Քսենոփոնը գրում է, որ Կարիան Տիսսափեռնեսի՝ մերձծովյան շրջանի կառավարչի[156] բուն տիրույթն էր[157], այսինքն՝ սատրապությունը: Հյուդառնեսի սերունդ[158] Տիսսափեռնեսի մահից հետո Կարիան կառավարում է Արիեոսը[159]: Արամեերեն, լիկիերեն և հունարեն լեզուներով հայտնաբերված մի արձանագրության մեջ, որը թվագրվում է Արտաքսերքսես Գ-ի թագավորության առաջին տարով (մ. թ. ա. 359/358 թվական) կամ ավելի ստույգ Արշեսի թագավորության սկզբներին՝ 337 թվականին, հիշատակվում է Կարիայի և Լյուկիայի սատրապ Պիկսոդարոսը, որին էլ հենց պատկանել է արձանագրությունը[160], ինչը վկայում է այն մասին, որ Պիկսոդարոսը ստացել էր նաև Լյուկիայի կառավարումը:

Կարիայի մայրաքաղաք Հալիկառնասոսը համառ դիմադրություն է ցույց տալիս Ալեքսանդր Մակեդոնացուն, որին միայն երկարատև պաշարումից հետո է հաջողվում մ. թ. ա. 334 թվականին գրավել ու կործանել քաղաքը[161]: Կարիան գրավելուց հետո Ալեքսանդրը Կարիայի տիրուհի է նշանակում Ադային՝ Հեկատոմնոսի դստերը, որին հաջողվել էր պահել միայն Ալինդոսը՝ կարիական մայր ամրոցը, իսկ մինչ

---

[145] Страбон, с. 541.

[146] Հերոդոտոս, VII, 195: Պլինիոս Ավագը Ալաբանդան հիշատակում է որպես ազատ քաղաք (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 109, p. 302):

[147] Garstang J., Gurney O. R., The Geography of the Hittite Empire, p. 79; RGTC, VI, S. 472.

[148] Bryce T., The Routledge..., p. 20.

[149] Հերոդոտոս, VIII, 136:

[150] Bryce T., The Routledge..., p. 155; Konuk K., Erbbina in Caria?, Ancient History, Numismatics and Epigraphy in the Mediterranean World. Studies in Memory of Clemens E. Bosch and Sabahat Atlan and in honour of Nezahat Baydur, Istanbul, 2009, p. 194; Страбон, с. 609. Կալբիսի նույնացումը Ինդոս գետի՝ ներկայիս Դալամանի հետ սխալ է (տե՛ս DGRG, ed. by W. Smith, Vol. I, p. 576):

[151] Հերոդոտոս, I, 176: Կավնոս քաղաքը Կարիայում հիշատակում են Դիոդորոս Սիկիլիացին (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. II, 1826, XIV, 79, 10, p. 375), Ստրաբոնը (տե՛ս Страбон, с. 609):

[152] Страбон, с. 620.

[153] DGRG, Vol. I, p. 554.

[154] Bryce T., The Routledge..., p. 713.

[155] Արիանոս, էջ 35, 178:

[156] Фукидид, История, с. 402. Հայտնաբերվել են Տիսսափեռնեսի դրամները (տե՛ս Bodzek J., Achaemenid Asia Minor: Coins of the Satraps and of the Great King, p. 64), ինչը մեկ անգամ ևս ապացուցում է պարսից այս պաշտոնյայի բարձր դիրքի մասին:

[157] Ксенофонт, Греческая история, с. 313, 323. Տե՛ս նաև Xenophon, Scripta Minora, Agesilaus, I, 15, p. 66; Рунг Э. В., Греция и Ахеменидская держава, с. 267, 291.

[158] Рунг Э. В., Тиссаферн и Гидарниды в контексте политической истории Ахеменидской державы в V в. до н. э., ВДИ, 2012, 1, с. 16-39.

[159] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 235.

[160] Дандамаев М. А., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, М., 1980, с. 288; Weiskopf M., The so-called "great Satrap's revolt", p. 65. Արձանագրության տեքստը տե՛ս Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, pp. 92-93; Briant P., From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, translated by P. T. Daniels, Winona Lake, Indiana, 2002, pp. 706, 708.

[161] Արիանոս, էջ 39-44: Հալիկառնասոսից արևմուտք հիշատակվում է Մինդոս քաղաքը՝ ներկայիս Բոդրում թերակղզու արևմտյան ծովափին, իսկ հյուսիս՝ Մյուլասան (անդ, էջ 40-41): Ալեքսանդրի կողմից Կարիան նվաճելու և մ. թ. ա. IV դարի վերջին վերջինիս վարչական կացության մասին տե՛ս Capdetrey L., Le roi, le satrape et le *koinon*: la question du pouvoir en Carie à la fin du IVe siècle, in: Stephanèphoros de l'économie antique à l'Asie mineure. Hommages à Raymond Descat by K. Konuk, Mémoires 28, Bordeaux, 2012, pp. 229-246.

այդ Կարիան կառավարում էր Օրոնտոբատը[162]: Հին աղբյուրների տեղեկություններից երևում է, որ Կարիայում պահպանվել էր սեփական արքայատոհմը, որի ներկայացուցիչները հիմնականում նաև պարսից արքունիքի կողմից ընդունվում էին որպես կառավարիչներ[163], հատելով սեփական դրամները[164]: Օրինակ, Դիոդորոս Սիկիլիացին հիշատակում է Կարիայի դինաստ Իդրիոսին, որը սկսած իր նախնիներից՝ պարսից թագավորի դաշնակիցը և բարեկամն էր[165]:

Մ. թ. ա. մոտ 392 թվականին Կարիան կառավարում է տեղական դինաստ Հեկատոմնոսը (մ. թ. ա. 395-377 թվականներ), որը փորձում է ստեղծել իր անկախ պետությունը[166], հատելով նաև առյուծի պատկերով սեփական դրամներ[167]:

Հեկատոմնոսի որդու՝ Մավսոլոսի կառավարման տարիներին (մ. թ. ա. 377-353 թվականներ) հունական մշակույթը Կարիայում մեծ տարածում ու ազդեցություն է ձեռքբերում, իսկ մայրաքաղաքն էլ Մյուլասայից տեղափոխվում է Հալիկառնասոս՝ չնայած Մյուլասան մնում է որպես սատրապական կենտրոն[168]: Սատրապների մեծ ապստամբության ժամանակ Մավսոլոսը, բացահայտ չհարելով ապստամբներին, կարողանում է ճկուն քաղաքականության շնորհիվ ընդլայնել իր երկրի սահմանները և նվաճել Հռոդոսը: Դիոդորոս Սիկիլիացին Մավսոլոսին անվանում է ապստամբ[169], ինչը խոսում է այն մասին, որ Հալիկառնասոսի դինաստը պարսից արքայի և սատրապների հակամարտության ժամանակ, կախված ուժերի հարաբերակցությունից,

[162] Արիանոս, էջ 44: Ալինդոսը նույնացվում է խեթական աղբյուրների Իյալանդային՝ ներկայիս Դեմիրչի-դերեսիի տեղում (տե՛ս Garstang J., Gurney O. R., The Geography of the Hittite Empire, p. 78):

[163] Համմտ. Դիոդորոս Սիկիլիացի, էջ 71, 75; Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 117; Рунг Э. В., Ранние греческие тираны и персы, "История: Мир прошлого в современном освещении", Санкт-Петербург, 2008, с. 89.

[164] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 205; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 390.

[165] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 42, 20, p. 46; XVI, 45, 30, p. 50.

[166] Дандамаев М. А., Նշվ. աշխ., էջ 238, 241, 245; Konuk K., The Coinage of Hyssaldomos, Dynast of Mylasa, Zurück zum Gegenstand. Festschrift für Andreas E. Furtwängler, Band II, 2009, p. 357; Ефремов Н. В., Династия Гекатомнидов в современных им греческих надписях, с. 86.

[167] Bodzek J., Remarks on the Origins of Achaemenid Satrapic Coinages, p. 7; Konuk K., The Hecatomnids, in: Antik Anadolu'nun Taniklari: Testimonies of Anatolian Antiquity: Muharrem Kayhan Collection, Izmir, 2015, pp. 34-35.

[168] Konuk K., The Hecatomnids, pp. 34-35; The Cambridge Ancient History, Vol. VI, p. 217.

[169] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XV, 90, 20, p. 499; Briant P., From Cyrus to Alexander, pp. 667-668.

փոխում էր իր դիրքորոշումն այս կամ այն կողմի նկատմամբ[170], վարելով նաև ակտիվ ռազմական գործողություններ Լյուդիայում, Լյուկիայում, Հոնիայում[171]: Ապստամբության ժամանակ, ունենալով բավականին ուժեղ նավատորմ[172], Մավսոլոսի շահագրգռությունների կենտրոնում էին Լիկիան և Էգեյան ծովի կղզիները[173]: Օգտվելով քաղաքացիական պատերազմից՝ Մավսոլոսին հաջողվում է Հռոդոսից, Քիոսից, Կոսից, Էրիտրեայից և Բյուզանդիոնից ստեղծել միություն, որն էլ գլխավորում է: Նույնիսկ Կրետեն Հեկատոմնոսյանների դիվանագիտության ծիրում էր, ինչը թույլ է տալիս Կարիան համարել փոքր կայսրություն[174]: Քիոսում հատված դրամների վրա Մավսոլոսը պատկերված է Հերակլեսի կերպարանքով, ինչից էլ սկսվում է նրա աստվածացումը[175]: Մավսոլոսն ուժեղ հելլենացված արևելյան կառավարչի լավագույն օրինակ է, ով ոչ միայն հունարենը դարձրեց պաշտոնական արձանագրությունների լեզու, այլև զբաղվեց քաղաքաշինությամբ, ինչի համար պահանջվող հսկայական գումարները ձեռք բերելու համար խաբեությամբ թալանում էր իր ենթակայության տակ գտնվող ժողովուրդներին[176]:

Մավսոլոսին հաջորդում է կինը և միաժամանակ քույրը՝ Արտեմիսիան (մ. թ. ա. 353-350 թվականներ), այնուհետև՝ Հեկատոմնոսի երկրորդ որդին՝ Գիդրեոսը, և դուստրը՝ Ադան, իսկ մ. թ. ա. 340-ից 335 թվականներին՝ Հեկատոմնոսի կրտսեր որդին՝ Պիկսոդարոսը[177]: Ալեքսանդրի մահից հետո Կարիան կառավարում է Կասանդրոսը[178] կամ Ասանդրոսը[179]:

Մ. թ. ա. V դարի սկզբին շատ կարիացիներ արդեն երկլեզվախոս էին և գիտեին հունարեն: Կարիայի մայրաքաղաք Հալիկառնասոսը

[170] Քսենոփոնը հաղորդում է, որ Մավսոլոսը ոսկով օգնում էր Ագեսիլայոսին (տե՛ս Xenophon, Scripta Minora, Agesilaus, II, 27, p. 96):

[171] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 425-426; Олмстед А., История Персидской империи, М., 2012, с. 458.

[172] Xenophon, Scripta Minora, Agesilaus, II, 26, p. 96.

[173] Weiskopf M., The so-called "great Satrap's revolt", pp. 16, 38, 68; Рунг Э. В., Греция и Ахеменидская держава, с. 386-387.

[174] The Cambridge Ancient History, Vol. VI, pp. 226-227.

[175] Олмстед А., Նշվ. աշխ., էջ 458-459; Ефремов Н. В., Династия Гекатомнидов в современных им греческих надписях, с. 95-96.

[176] Անդ, էջ 459-460; Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, p. 146.

[177] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 433-436; Дандамаев М. А., Նշվ. աշխ., էջ 246-248.

[178] Ռուփոս, էջ 596:

[179] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110, 113: Տե՛ս նաև Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, 10, p. 228.

կիսով հոնիական, կիսով կարիական քաղաք էր: Հալիկառնասոսում տարածված էին խառն ամուսնությունները, երբ նույն ընտանիքում հանդիպում են կարիական և հունական անուններ: Հույները հիմնականում բնակվում էին Կարիայի ծովափնյա շրջաններում՝ հետագայում դառնալով երկլեզվախոս[180]: Դիոդորոս Սիկիլիացու վկայությամբ՝ Փոքր Ասիայի քաղաքների բնակչությունը երկլեզվախոս էր և խոսում էր ինչպես հուներեն, այնպես էլ տեղական լեզուներից որևէ մեկով[181]:

Կարիան հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Կարկա, Հին Կտակարանում՝ Կար կամ Քար, աքքադերենում՝ Կար-սա անվանածևերով[182]: Հին պարսկերեն Karkā-ն բաբելոներեն թարգմանվում է և՛ Karsāja, և՛ Bannēšāja, որոնցից առաջինը փոխառություն է եգիպտերենից և նշանակել է Կամբյուսեսի նվաճումից հետո Եգիպտոսից տեղափոխված, «եգիպտականացման» ենթարկված կարիացիներին, իսկ երկրորդը՝ փոքրասիական կարիացիներին[183]: Գոյություն է ունեցել նաև կարիացիների Բանեշու անունով գյուղը՝ որպես նավակայան, Շաթ ալ-Արաբ գետի վրա, ներկայիս Մուխամմիրայի մոտ[184], այսինքն՝ խոսքը վերաբերում է «արտաքսված կամ գաղթական» կարիացիներին: Բեհիսթունի արձանագրությունում Կարիան չի հիշատակվում, և միայն Դարեհ Ա-ի Նաքշե Ռոստամի արձանագրության մեջ կարիացիներն արդեն նշված են[185]: Հնարավոր է ենթադրել, որ Բեհիսթունի արձանագրությունում կարիացիները լյուկիացիների, պամփյուլիացիների, կիլիկեցիների, կիպրոսցիների հետ ներառված են «այն երկրները, որ ծովի մոտ են» աշխարհագրական սահմանման մեջ[186]: Հին պարսկական արձանագրություններից մեկում էլ հաղորդվում է, որ կարիացիները հոնիացիների հետ լիբանանյան մայրին Բաբելոնից տեղափոխում են Սուզա[187]: Դիոդորոս Սիկիլիացին էլ Սուզայի

[180] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 286-287:
[181] Diodori Bibliotheca Historica, vol. II, XI, 60, 3-5, p. 61.
[182] Herzfeld E., The Persian Empire, p. 43-44; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 192; Simon Z., Against the Identification of Karkiša with Carians, in: Nostoi: indigenous culture, migration + integration in the Aegean Islands + Western Anatolia during the late bronze + early iron ages, ed. by N. Chr. Stampolidis, C. Maner, K. Kopanias, Koç University Press, 2015, pp. 794-795. Վերջինս գտնում է, որ Karkiša/Karkiya-ն լեզվական, գուցե նաև աշխարհագրական առումով կապված չէ Կարիայի և կարիացիների հետ (անդ, էջ 802-803), ինչը հավանական չէ:
[183] Waerzeggers C., The Carians of Borsippa, Iraq, 68, 2006, pp. 4, 7-8.
[184] Herzfeld E., The Persian Empire, pp. 43, 277.
[185] Kent R., Old Persian, pp. 137, 141, 151, 156.
[186] Անդ, էջ 117: Հմմտ. Рунг Э. В., Тиссаферн и Гидарниды..., с. 22-23.
[187] Kent R., Նշվ. աշխ., էջ 143:

մոտ հիշատակում է կարիական գյուղերի մասին[188]; այսինքն՝ կարելի է նկատել, որ գործ ունենք կարիական վերաբնակիչների հետ:

Ըստ Պլուտարքոսի և Ստրաբոնի՝ կարիացիների անունը նշանակում է աքաղաղ և կապված է նրանց սաղավարտներին ամրացված փետրափնջերի հետ, որոնք կոչվել են kariká[189]:

Այսպիսով, ամփոփելով կատարված քննությունը՝ կարող ենք եզրակացնել, որ կարիացիների հետ Աքեմենյանները հաստատել էին վարչական կառավարման այնպիսի համակարգ, որը պայմանավորված էր ոչ միայն պարսիկների քաղաքականությամբ, այլ նաև Կարիայի ներքին առանձնահատկությամբ: Կարիան I սատրապության կազմում ուներ ռազմավարական կարևոր նշանակություն և բավականին ընդարձակ տարածք, որը կառավարվում էր պարսիկ սատրապի կամ էլ տեղական կառավարիչների, հատկապես՝ Հալիկառնասոսի դինաստների կողմից:

1.3. Լյուկիայի վարչական բաժանումը

Աքեմենյան Պարսկաստանի I սատրապության մեջ մտնող Լյուկիայի վարչական կառավարումը պարսից արքունիքի կողմից իրականացվում էր մի սկզբունքով, որն էականորեն տարբերվում էր մնացած սատրապությունների նկատմամբ կիրառվող քաղաքականությունից: Ընդ որում, հետաքրքիր է, որ այդ քաղաքականության առանձնահատկության հարցում սկզբնաղբյուրների տուղ տեղեկությունները գրեթե համահունչ են: Ստորև կքննենք Հերոդոտոսի և մյուս աղբյուրների այն տեղեկությունները Լյուկիայի և լյուկիացիների մասին, որոնք վերաբերում են վարչական կացության և պատմական աշխարհագրության հարցերին:

Ըստ Հերոդոտոսի՝ լյուկիացիներն այլ ժողովուրդների հետ ներառված էին I սատրապության կազմի մեջ: Հույն պատմիչը գրում է. «Հոնիացիներից, Ասիայի մագնեսյաններից, էոլյաններից, կարիացիներից, լյուկիացիներից և միլյուացիներից և պամփյուլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպես առաջին նահանգ»[190]: Տեղեկությունից երևում է, որ I սատրապությունն Աքեմենյան տերության, այսպես ասած, «ամենաբազմազգ» վարչական միավորներից մեկն էր, որի կազմում հիշատակված յուրաքանչյուր ժողովրդի՝ որպես առանձին վարչական ենթաշրջանի նկատ-

[188] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 110, 20-30, p. 212.
[189] Plutarch's Lives, Vol. XI, X, I, p. 148; Страбон, с. 618; Strabonis Geographica, ed. C. Müller, XIV, II, 27, p. 564; Herda A., Greek (and our) views on the Karians, p. 446.
[190] Հերոդոտոս, III, 90:

մամբ պարսից արքունիքն ուներ իր կոնկրետ քաղաքականությունը՝ Դարեհ Ա-ից հետո պարբերաբար վերաձևելով սատրապության վարչական կառուցվածքը:

Մասնագիտական գրականության մեջ լյուկիացիները ծագումով համարվում են փոքրասիական էթնոս, որը պատկանել է հնդեվրոպական լեզվաընտանիքին և կապված է խեթերենի ու լուվիերենի հետ[191]: Լյուկիայի տարածքը խեթական աղբյուրներում հայտնի է «Լուկկա երկիր կամ երկրներ» անվանումով[192], ընդ որում՝ Lukkā երկրի և ժողովրդի անունը հավաքական առումով համարժեք է ամբողջ լուվիական Անատոլիայի տարածքին[193]: Լյուկիացիները հիշատակվում են եգիպտական տեքստերում «ծովի ժողովուրդների» շարքում[194]:

Լյուկիացիները, որոնք եկել էին Քսանթոս գետի մոտից, որպես տրոյացիների դաշնակիցներ՝ ամենաշատն են հիշատակվում «Իլիական»-ում և տրոյացիներից հետո նշանակությամբ երկրորդն են[195]: Վերջին տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Լյուկիան Քսանթոսի հովիտն է: Լյուկիացիները երկու խմբերով են մասնակցում տրոյական պատերազմին. լյուկիական զորքի մի մասի զորավարներն էին Սարպեդոնը և Գլավկոսը, իսկ մյուս մասինը՝ Պանդարոսը՝ ծագումով Զելեայից, Տրովադայից[196]: Պանդարոսի մասին հիշատակությունից կարելի է եզրակացնել, թե լյուկիացիների մի մասը՝ զելիական լյուկիացիները, բնակվել են Տրովադայում, կամ էլ նրանց բնակության նախնական վայրը եղել է Տրովադան, այսինքն՝ լուվիացիները էթնիկական տեղաշարժման արդյունքում հասել էին մինչև Զելեա[197]: Բացառված չէ նաև, որ խոսքը վերաբերում է Ուշ բրոնզի դարաշրջանի Լուկկա ժողովրդին, որի մի հատվածը հաստատվել էր Միլեթի շրջանում և ավելի ուշ՝ Ուշ բրոնզի դարաշրջանի վերջում, վերաբնակվում է Քսանթոսի հովտում[198]:

Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ լյուկիացիները և կիլիկեցիները չեն ենթարկվել Կրեսոսին[199]: Լյուկիացիներին, որոնց ավելի ուշ նվաճում է Հարպագոսը, Հերոդոտոսը համարում է կրետական գաղթականներ[200]: Վերջիններս բնակություն են հաստատում Միլյուաս երկրում, որը Հերոդոտոսի ժամանակներում մտնում էր Լյուկիայի կազմի մեջ: Ըստ պատմիչի՝ լյուկիացիներին հարևաններն անվանում են տերմիլներ, իսկ նրանց երկիրը՝ տերմիլների երկիր[201]. լյուկիացիներն իրենց անունը ստանում են աթենացի Պանդիոնի որդի Լյուկոսից[202]: Լյուկիացիները համառ դիմադրություն են ցույց տալիս Հարպագոսին, բայց վերջինս, ի վերջո, գրավում է Քսանթոսը[203], խեթական աղբյուրների Ավարնան[204]՝ ներկայիս Կինիկի մոտ[205]: Հարպագոսի (լյուկիերեն՝ Arppakuh[206]) նվաճումից հետո Քսանթոսը դառնում է տարածաշրջանի վարչական կենտրոնը (byrta)՝ լյուկիական և իրանական իշխող վերնախավի խառնումով, որը թույլ կերպով է հունականացման ենթարկվում[207]: Հարպագոսից սերում են նաև Քսանթոսի մ. թ. ա. V դարի իշխող դինաստիայի կառավարիչները[208]:

---

[191] Горожанова А., Родосско-ликийский конфликт (по данным «Илиады» Гомера), Вестник Нижегородского университета, 2008, 5, с. 138.

[192] Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը..., էջ 23; Garstang J., Gurney O. R., The Geography of the Hittite Empire, pp. 81, 98, 106; RGTC, VI, SS. 249-250; Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, p. 2; Payne A., Lycia-Crossroads of Hittite and Greek Traditions?, in: Papers on Ancient Literatures: Greece, Rome and the Near East, ed. by E. Cingano & L. Milano, Padova, 2008, p. 472.

[193] Гиндин Л.А., Цымбурский В. Л., Гомер и история Восточного Средиземноморья, М., 1996, с. 231.

[194] Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, p. 6.

[195] Гиндин Л.А., Цымбурский В. Л., Гомер и история Восточного Средиземноморья, с. 229-230.

[196] Հոմերոս, Իլիական, II, 825, 875; IV 115-120; V, 105: Տե՛ս նաև Страбон, с. 529, 536, 548, 559. Ստրաբոնը գրում է, որ Սարդեսը կիմմերներից, տրերներից բացի գրավել են նաև լյուկիացիները (անդ, էջ 588): Արդյոք այս տեղեկությունը չի՞ նշանակում, որ լյուկիացիները Տրովադայից դեպի, այսպես ասած, հետագայի Լյուկիա շարժվելիս հարձակվել են Սարդեսի վրա:

[197] Гиндин Л.А., Цымбурский В. Л., Гомер и история Восточного Средиземноморья, с. 237-240.

[198] Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, pp. 26, 29.

[199] Հերոդոտոս, I, 28:

[200] Անդ, I, 171, 173: Տե՛ս նաև Herzfeld E., The Persian Empire, p. 257.

[201] Լյուկիացիներն իրենց անվանում էին Trmmili, իսկ երկիրը՝ Trmmisa (տե՛ս Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, p. 22): Տերմիլների անունը՝ որպես թագավորական տնտեսություններում լյուկիական ծագում ունեցող աշխատողներ, հանդիպում է պերսեպոլիսյան տեքստերում (տե՛ս Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 169, 281; Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 441):

[202] Հերոդոտոս, I, 173; VII, 92:

[203] Անդ, I, 176; Bryce T. R., Political Unity in Lycia During the "Dynastic" Period, JNES, 1983, Vol. 42, № 1, p. 32; Олмстед А., История Персидской империи, с. 63.

[204] Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը..., էջ 23:

[205] DGRG, Vol. II, p. 1338.

[206] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 159.

[207] Անդ, էջ 197:

[208] Горожанова А., Политические структуры в Ликии V в. до н. э. (Проблема ассимиляции инокультурных компонентов в автохтонной среде), Вестник Нижегородского университета, 2012, 6, с. 138.

Հերոդոտոսը հիշատակում է նաև Լյուկիայի Պատարա քաղաքը, որը նշանավոր էր իր տաճարով, որտեղ գուշակություններ էր անում քրմուհին[209]:

Լյուկիացիները մասնակցում են Քսերքսեսի հելլենական արշավանքին: Լյուկիացիները չեն հիշատակվում Քսերքսեսի ցամաքային բանակի կազմում, այն դեպքում, երբ պիսիդիացիները և միլիացիներն ունեին լյուկիական զենքեր: Լյուկիացիները հիշատակվում են պարսից բանակի նավատորմի կազմում. «Լյուկիացիները տրամադրել էին հիսուն նավ: Նրանք կրում էին լանջապաններ և սռնապաններ, ունեին հոնի փայտից պատրաստած աղեղներ, եղեգնյա անփետուր նետեր և նիզակներ. նրանց ուսերին գցած էր այծենի, իսկ գլխին՝ փետրավոր շրջանակով գլխարկ. նրանք ունեին նաև դաշույններ և մանգաղներ»[210]: Լյուկիացիների տրամադրած նավերը ավելի քիչ էին, քան նույն սատրապության մեջ հիշատակված հոնիացիների և կարիացիների նավերը. հոնիացիները տրամադրել էին հարյուր, իսկ կարիացիները՝ յոթանասուն նավ[211]: Մյուս կողմից էլ լյուկիացիների նավատորմը ավելի շատ էր, քան պամփյուլիացիների և էոլիացիների նավատորմերի քանակը միասին վերցրած՝ քառասունվեց նավ[212]: Նավատորմի զորավարներից էր նաև լյուկիացի Կյուբեռնիսկոսը[213]:

Ի տարբերություն Հոնիայի և Կարիայի՝ Լյուկիայի վարչական կացության վերաբերյալ անտիկ աղբյուրների տեղեկությունները համեմատաբար ժլատ են: Օրինակ, Լյուկիայի մասին ավելի ընդարձակ տեղեկություններ տալիս են ուշ ժամանակաշրջանի հեղինակներ Արիանոսը և Ռուփոսը: Ըստ առաջինի՝ Ալեքսանդր Մակեդոնացին Կարիայից շարժվում է Լյուկիա և Պամփյուլիա, որպեսզի ծովափը գրավելով՝ թշնամու համար անօգուտ դարձնի նրանց նավատորմը[214]: Արիանոսի տեղեկություններից պարզվում է, որ Ալեքսանդրը Հիպարնոսը գրավելուց հետո ներխուժում է Լյուկիա[215], այսինքն՝ Հիպարնոսը Կարիայի մեջ էր: Այնուհետև Ալեքսանդրին առանց դիմադրության ենթարկվում են թելմեսոսցիները: Անցնելով Քսանթոս գետը՝ ներկայիս Կոջա-չայը՝ մա-

[209] Հերոդոտոս, I, 182:
[210] Անդ, VII, 92:
[211] Անդ, VII, 93-94:
[212] Անդ, VII, 91, 95: Դիոդորոսը լյուկիացիների և պամփյուլիացիների նավերի քանակը յուրաքանչյուրի համար նշում է 40-ական (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. II, XI, 3, p. 7).
[213] Հերոդոտոս, VII, 98:
[214] Արիանոս, էջ 45:
[215] Անդ:

կեդոնացի նվաճողը գրավում է Պինարամոսը, իսկ Քսանթոս (լյուկիերեն՝ Arnna, արամեերեն՝ Wrna[216]), Պատարամոս քաղաքները ենթարկվում են հոժարակամ[217]: Պինարամոս կամ Պինարա քաղաքը, Քսանթոս քաղաքից հյուսիս՝ ներկայիս Մինարա գյուղի մոտ[218], գտնվել է Քսանթոսի աջափնյակին, իսկ Քսանթոսը և Պատարամոսը կամ Պատարան՝ ներկայիս Քելեմիշը՝ ձախափնյակին՝ գետաբերանից 5 կմ դեպի արևելք[219]: Ալեքսանդրը նվաճում է նաև Պամփյուլիայից արևմուտք գտնվող Միլիաս մարզը՝ Արյուկանդա քաղաքով (ներկայիս Այկիրիչայ գյուղի մոտ, Էլմալըի-Ֆինիկե ճանապարհի վրա),[220] որը պարսից արքունիքն անջատել էր Մեծ Փռյուգիայից և միացրել Լյուկիային[221]: Ալեքսանդրին ինքնակամ ենթարկվում է նաև Լյուկիայի ծայր արևելքում գտնվող Փասելիս քաղաքը՝ Պամփյուլիայի հետ սահմանին[222], որից հետո Ստորին Լյուկիայի շատ քաղաքներ ևս հպատակվում են Ալեքսանդրին[223]: Հետաքրքիր է, որ պիսիդիացիները Փասելիսի մոտ կառուցել էին ամրություն, որը քանդում է Ալեքսանդրը[224]: Սա նշանակում է, որ Աքեմենյան տերության կործանման ժամանակ ռազմատենչ պիսիդիացիները հարավային ուղղությամբ բավականին ընդարձակվել էին ի հաշիվ ոչ միայն Լյուկիայի, այլև Պամփյուլիայի: Ալեքսանդրը նվաճված բոլոր քաղաքներում նշանակում է իր կառավարիչներին:

Փասելիսից Ալեքսանդրը շարժվում է Պերգամոս՝ Պերգե, այնու-

[216] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 196.
[217] Արիանոս, էջ 45:
[218] DGRG, Vol. II, p. 630. Պինարայում գտնվում էր Պանդարոսի, իսկ Պատարայում՝ Ապոլլոնի պաշտամունքը (տե՛ս Страбон, с. 622):
[219] Պլինիոս Ավագը Թելմեսոսը և Պինարան համարում է Լյուկիայի սահմանային քաղաքներն արևմուտքում, որոնցից հյուսիս՝ Լյուկիայի կազմում, Քսանթոսի վերնագավառում Կաբալիա մարզն էր՝ Օենիանդա, Բալբուրա, Բուբոն քաղաքներով (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 101, p. 296): Լյուկիայի գլխավոր քաղաք Քսանթոսը՝ համանուն գետով, և Պատարան հիշատակում է դեռևս Հեկատեոս Միլեթացին (տե՛ս Müller C., FHG, Vol. I, fr. 241-242, p. 16): Տե՛ս նաև Bryce T., The Routledge..., p. 533. Ստրաբոնը Լյուկիայի սահմանն արևմուտքում սկսում է հոդոսցիների Դեդալա քաղաքից (տե՛ս Страбон, с. 620)՝ Դալաման-չայի և Քսանթոսի միջին հոսանքի միջև, Ինիգի-չայ գետակի արևմտյան ափին (տե՛ս DGRG, Vol. I, p. 745):
[220] Pliny, Natural History, Vol. II, V, 95, p. 292.
[221] Արիանոս, էջ 45:
[222] Страбон, с. 623.
[223] Արիանոս, էջ 45-46:
[224] Անդ, էջ 46: Փասելիսը Լյուկիայի կազմում հիշատակում է Սկիլաքս Կարիանդացին (տե՛ս Скилак Кариандский, с. 262): Փասելիսը նվաճում է Կիմոնը և ստիպում փասելիսցիներին դաշնակցել իր հետ (տե՛ս Плутарх, Кимон, XII, Избранные жизнеописания, т. II, с. 96):

հետև՝ նախ Սիդե (ներկայիս Սելիմիյեն), հետո Սիլիոս (ներկայիս Անթալիայից 28 կմ դեպի հյուսիս-արևելք) և Ասպենդոս, վերջինս Եվրիմեդոնտոս գետի՝ ներկայիս Քյուփրուչայի գետաբերանից 13 կմ դեպի հյուսիս և Անթալիայից 30 կմ դեպի արևելք[225]: Ասպենդոսից Ալեքսանդրը կրկին վերադառնում է Պերգամոս-Պերգե (խեթական Parha-ն)՝ ներկայիս Անթալիայից 16 կմ դեպի հյուսիս-արևելք,[226] որտեղից պետք է անցներ Փռյուգիա: Ալեքսանդրի ճանապարհին անցնում էր Թելմեսոս կամ Թերմեսոս քաղաքի (ներկայիս Ֆեթթիյեն[227]) մոտով, որի բնակիչները նախկինում սոլիմներ[228] կոչված պիսիդիացիներն էին: Ալեքսանդրը չի կարողանում գրավել Թելմեսոսը և հարձակվում է պիսիդիացիների Սագալաս քաղաքի վրա, որը նույնացվել է Ագլասուն գյուղին[229], իսկ պիսիդիացիների մեկ այլ քաղաք՝ Սելգեն՝ Ասպենդոսից հյուսիս՝ Բուջակ գյուղի մոտ[230], հոժարակամ է ընդունում մակեդոնացիների իշխանությունը[231]: Ի վերջո, բոլոր պիսիդիացիներն էլ ենթարկվում են Ալեքսանդրին[232]:

Արիանոսի տեղեկությունները հետաքրքիր են ոչ միայն Լյուկիայի, այլև վերջինիս հարևան սատրապությունների համար: Այսպես, Արիանոսը նշում է, որ Փասելիսը՝ ներկայիս Թեկիրովան՝ Անթալիայից 50 կմ հարավ-արևմուտք[233], Լյուկիայի քաղաքն է, այն դեպքում, երբ չի նշում, որ Պերգեն, Սիդեն, Սիլիոսը, Ասպենդոսն[234] արդեն Պամփյուլիայի մեջ են: Թելմեսոսը, Սագալասը, Սելգեն պիսիդիական քաղաքներ են, որոնք, ինչպես նաև պիսիդիական բոլոր հողերը, վարչական առումով մտել են Մեծ Փռյուգիայի կազմի մեջ, քանի որ Պերգամոսից հյուսիս Արիանոսի համար Փռյուգիա է: Մյուս կողմից էլ հետաքրքիր է, որ ո՛չ Լյուկիայում, ո՛չ էլ Պամփյուլիայում և Պիսիդիայում Ալեքսանդրը չի կռվում կամ բանակցում ոչ մի պարսիկ սատրապի հետ, մինչդեռ երբ մ. թ. ա. 370-ական թվականներին արևելյան և արևմտյան Լյուկիայում կային պարսիկ կառավարիչներ[235], այսինքն՝ հյուպարքոսներ: Արիանոսի տեղեկություններից պարզվում է, որ նշված երկրներում պարսից արքունիքը տվյալ ժամանակաշրջանում չի ունեցել սատրապներ, և այդ երկրները, ավելի ճիշտ այդ երկրներում գտնվող քաղաքները վարչական տեսանկյունից առանձին-առանձին կամ մի քանիսի կողմից ստեղծված դաշնությունների ձևով են ենթարկվել պարսից արքունիքին[236]: Պատահական չէ, որ Ալեքսանդրը ևս գրավված տարածքներում սատրապներ չի նշանակում, այլ քաղաքների կառավարումը հանձնում է իր կողմից նշանակված կառավարիչներին: Ասպենդոսցիները երկրորդ անգամ ենթարկվում են Ալեքսանդրին ավելի խիստ պայմաններով, այն է՝ ենթարկվելու էին Ալեքսանդրի կողմից նշանակված սատրապին[237], որի մասին դժվար է ասել քաղաքի կառավարի՞չն էր, թե՞ Պամփյուլիայի սատրապը, քանի որ Արիանոսն այլ տեղեկություններ չի հաղորդում:

Պլինիոս Ավագն էլ, օրինակ, նշում է, որ Լյուկիան նախկինում ունեցել է 70 քաղաք, որոնց թիվը հեղինակի ժամանակ 36 էր[238], ինչն, անկասկած, կարող է վկայել այն մասին, որ Լյուկիայի վարչական կացությունն Աքեմենյան տիրապետության ժամանակ ունեցել է իր առանձնահատկությունը, քանի որ սատրապական վարչակարգի մասին տեղեկություն չկա:

Արիանոսը մեկ այլ տեղեկության մեջ ևս նշում է, որ Ալեքսանդրի

---

[225] Արիանոս, էջ 47-48; Bryce T., The Routledge..., pp. 81, 649, 653.

[226] Bryce T., The Routledge..., p. 538.

[227] Անդ, էջ 698; DGRG, Vol. II, p. 1122.

[228] Pliny, Natural History, Vol. II, V, XXIV, 94, p. 292. Սոլիմներն աշխարհագրական առումով նույնանում են պիսիդիացիներին՝ չնայած Ստրաբոնը կողք կողքի հիշատակում է նրանց: Ամասիացի աշխարհագետը նաև գրում է, որ Կաբալիայի բնակիչները սոլիմներն են (տե՛ս Страбон, с. 12, 520, 591): Հեղինակը Կաբալիայի Թերմեսոսը՝ Օենիանդան, շփոթում է հյուսիս-արևելքում գտնվող պիսիդիական Թերմեսոսի հետ:

[229] DGRG, Vol. II, p. 873.

[230] Անդ, էջ 955:

[231] Արիանոս, էջ 50:

[232] Ալեքսանդրի արշավանքը Լյուկիայով, Պամփյուլիայով, Պիսիդիայով համառոտ նկարագրում է նաև Պլուտարքոսը (տե՛ս Плутарх, Александр, XVII, XVIII, Избранные жизнеописания, т. II, с. 377-378): Պատմիչի տեղեկությունից երևում է, որ Փասելիսը Պամփյուլիայի մեջ էր:

[233] Bryce T., The Routledge..., p. 551.

[234] Պերգեն, Սիդեն, Ասպենդոսը Պամփյուլիայի կազմում հիշատակում է նաև Պլինիոս Ավագը (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 96, p. 292. Հմմտ. Скилак Кариандский, с. 262): Ընդ որում, Պլինիոս Ավագը Փասելիսը համարում է Պամփյուլիայի ծայրհարավային քաղաքը ծովափին (անդ): Սկիլաքս Կարիանդացին Պերգեն հիշատակում է Լյուկիայի կազմում, ինչը զուտ աշխարհագրական առումով կասկածելի է (տե՛ս Скилак Кариандский, с. 262):

[235] Childs A. P. W., Lycian Relations with Persians and Greeks in the Fifth and Fourth Centuries Re-Examined, Anatolian Studies, Vol. 31, 1981, p. 76.

[236] Օրինակ, ուշ ժամանակներում Ստրաբոնը խոսում է լյուկիական 23 քաղաքների դաշնության մասին (տե՛ս Страбон, с. 621):

[237] Արիանոս, էջ 49:

[238] Pliny, Natural History, Vol. II, V, 101, p. 296.

գրաված երկրներից էին նաև Լյուկիան և Պամփյուլիան[239]: Ալեքսանդրը Նեարքոսին նշանակում է Լյուկիայի և մինչև Տավրոս ընկած հողերի սատրապ[240]:

Ռուփոսն առանց մանրամասների հաղորդում է, որ Ալեքսանդրը գրավում է Լյուկիան և Պամփյուլիան[241]: Համաձայն պատմիչի՝ Ալեքսանդրի մահից հետո Լյուկիան Պամփյուլիայի և Մեծ Փռյուգիայի հետ միասին անցնում է Անտիգոնոսին, որին Անտիպատրոսը նույնպես հանձնում է Մեծ Փռյուգիայի և Լյուկիայի կառավարումը՝ առանց Պամփյուլիան հիշատակելու[242]. վերջինիս տարածքը, հավանաբար, նույնպես Անտիգոնոսի ենթակայության տակ էր:

Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ առասպելական Նինոս թագավորը, որի անվան տակ թաքնված է Աքեմենյան Կյուրոս Մեծը, բազմաթիվ երկրների շարքում նվաճում է նաև Լյուկիան և Պամփյուլիան[243]: «Սատրապների մեծ ապստամբության» ժամանակ լյուկիացիները, պամփյուլիացիները, պիսիդիացիները նույնպես հարում են ապստամբությանը[244]: Վերջին տեղեկությունից երևում է, որ նշված ժողովուրդները չեն ունեցել սատրապական կառավարման համակարգ և լյուկիական, պամփյուլիական, պիսիդիական քաղաքներն իրենք են հարել ապստամբությանը:

Տիսսափեռնեսի՝ Լյուկիայում հատված դրամներից կարելի է եզրակացնել, որ Լյուկիան վարչական առումով ենթարկվում էր Տիսսափեռնեսի սատրապական իշխանությանը՝ աջակցելով վերջինիս[245]: Մ. թ. ա. 365-360 թվականների միջև Կարիայի դինաստ Մավսոլոսը նվաճում է Լյուկիան, իսկ մ. թ. ա. 337 թվականին հիշատակվում է Կարիայի և Լյուկիայի սատրապ Պիկսոդարոսը[246]: Ավելի վաղ՝ մ. թ. ա. V դարի սկզբներին, Լյուկիան հայտնվում է Լյուդիայի սատրապ Ավտոփրադատեսի ենթակայության տակ[247]:

[239] Արիանոս, էջ 200:
[240] Անդ, էջ 95; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 514:
[241] Ռուփոս, էջ 279:
[242] Անդ, էջ 596: Տե՛ս նաև Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110, 113:
[243] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17:
[244] Անդ, էջ 75:
[245] Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, p. 109; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 197; Childs A. P. W., Lycian Relations with Persians and Greeks..., p. 67.
[246] Weiskopf M., The so-called "great Satrap's revolt", pp. 65, 68.
[247] Олмстед А., Նշվ. աշխ., էջ 423; Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, pp. 47, 111; Childs A. P. W., Lycian Relations with Persians and Greeks..., p. 74.

Մ. թ. ա. V դարի երկրորդ կեսով թվագրվող Պատարայում հայտնաբերված դրոշմակնիքը մասնագիտական գրականության մեջ որոշ հարցադրումների տեղիք է տվել: Սովորաբար ենթադրվել է, որ որևէ վկայություն չկա մ. թ. ա. IV դարից առաջ Լյուկիայում պարսկական կայազորների կամ պարսիկների առկայության մասին, հետևաբար դրոշմակնիքը կարող էր պատկանել Քսանթոսի դինաստին ծառայող տեղական բարձրաստիճան պաշտոնյայի կամ էլ արտոնյալ վաճառականի[248]: Այս հանգամանքը կրկին վկայում է Լյուկիայի լայն ինքնավարության մասին, քանի որ Լյուկիան Աքեմենյան խոշորագույն դրամահատարանն էր Փոքր Ասիայի տարածքում[249]:

Լյուկիական քաղաքների դինաստները հաճախ պատերազմում էին ոչ միայն մեկմեկու հետ, այլև նույնիսկ ապստամբում էին պարսիկների դեմ: Մ. թ. ա. 466 թվականին Եվրիմեդոնտոս գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո լյուկիացիները կարիացիների հետ մտնում են Դելոսյան լիգայի մեջ՝ դառնալով հարկատու[250]:

Լյուկիացիները հիշատակվում են մ. թ. ա. 454-453, 452-451, 451-450, 446-445 թվականների Աթենական հարկացուցակներում[251], ընդ որում՝ նախկին լյուկիական Թելմեսոս քաղաքը վարչական առումով Կարիայի կազմում է, իսկ հարկային առումով Լյուկիայի հետ է[252]:

Մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսին Քսանթոսի հովիտն անցել էր կարիացի Պիկսոդարոսի տիրապետության տակ, որն էլ Լետոյի եռալեզու արձանագրության հունարեն տարբերակում, կարծես թե, ընկալված է որպես սատրապ[253], ինչը թերևս ցույց է տալիս, որ լյուկիական քաղաքները կորցրել էին իրենց ազդեցությունը, և Լյուկիայի արևմտ-

[248] Işin G., An Achaemenid Stamp Seal from Patara, pp. 78-79.
[249] Անդ, էջ 78; Bodzek J., Remarks on the Origins of Achaemenid Satrapic Coinages, p. 6.
[250] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XI, 60, pp. 61-62; Bryce T. R., Political Unity in Lycia During the "Dynastic" Period, p. 34; Олмстед А., Նշվ. աշխ., էջ 295; Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, pp. 103, 105. Հմմտ. Մելեսանդրոսի արշավանքը դեպի Կարիա և Լյուկիա (տե՛ս Фукидид, История, с. 108):
[251] Bryce T. R., Political Unity in Lycia During the "Dynastic" Period, p. 35; Childs A. P. W., Lycian Relations with Persians and Greeks..., p. 56.
[252] "The Athenian Tribute Lists", by B. D. Meritt, H. T. Wade-Gery, M. F. McGregor, Vol. III, Princeton, New Jersey, 1950, pp. 25, 27.
[253] Briant P., Cités et satrapes dans l'empire achéménide, p. 333; Raimond E., Persian Power and Lycian Religion, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-fourth Centuries B.C.), ed. by I. Delemen, Istanbul, 2007, p. 71.

յան շրջանները, որտեղ հունարենը պաշտոնական լեզու էր[254], անցել էին Կարիային:

Լյուկիայում տեղի էին ունենում նաև ներքին պատերազմներ: Այսպես, արևելյան Լյուկիայի դինաստներից մեկը՝ Պերիկլեսը (մ. թ. ա. 380-360 թվականներ), գրավում է Թելմեսոսը և իրեն անկախ հայտարարում[255]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Աքեմենյանների գերիշխանությունը տերության բոլոր հատվածներում ուղղված էր հարկերի հավաքմանը և պատերազմների ժամանակ հպատակ ժողովուրդներից զորքերի հավաքագրմանը: Այս քաղաքականությունը սատրապություններում իրականացվում էր տարբեր միջոցներով, և պատահական չէ, որ Լյուկիայում Աքեմենյանների գերիշխանության հաստատումը ունեցավ իր յուրահատուկ դրսևորումը: Վերևում բերված տեղեկությունների քննությունը ցույց տվեց, որ Լյուկիայում սատրապական կառավարման առկայություն չի եղել: Ե՛վ Հարպագոսը, և՛ Ալեքսանդրը Լյուկիան նվաճելիս ռազմական կամ դիվանագիտական հարաբերություններ են ունենում լյուկիական քաղաքների հետ, որոնցից ամենանշանավորը Քսանթոսն էր՝ լյուկիական դինաստիական համակարգի վարչատարածքային կենտրոնը[256]: Մասնագիտական գրականության մեջ նշվել է, որ լյուկիական քաղաքները կառավարվում էին տոհմային արիստոկրատիայի ներկայացուցիչների՝ դինաստների կողմից, ինչի մասին հաստատում են լյուկիական դինաստիական քարոզչության տեքստերը[257]: Հետաքրքիրն այն է, որ Աքեմենյան արքաներն «անձնական ունիա» էին հաստատում ոչ թե տիրանների, այլ իրենց գերիշխանությունն ընդունած լյուկիական քաղաքների տիրապետող ընտանիքների՝ մի ամբողջ տոհմի հետ[258]: Լյուկիական

[254] Raimond E., Hellenization and Lycian Cults During the Achaemenid Period, in: Persian Responses: Political and Cultural Interaction with (in) the Achaemenid Empire, ed. by Ch. Tuplin, Swansea, 2007, pp. 143-162.
[255] Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, p. 112; Payne A., Lycia-Crossroads of Hittite and Greek Traditions?, p. 473.
[256] Bryce T. R., Political Unity in Lycia During the "Dynastic" Period, p. 33 (այս հոդվածում տե՛ս նաև Քսանթոսի դինաստների կառավարման թվագրությունը); Баранов Д., Ликийская династическая система VI-V веков до н. э., Вестник Воронежского государственного университета, 2010, 2, с. 55. Լյուկիացիները փոքրասիական տարբեր ժողովուրդների հետ միասին վերաբնակեցվում են Նիպպուրի մոտ գտնվող գյուղերում, որոնք կոչվում են նրանց անուններով: Լյուկիացի ռազմական գաղութաբնակները հայտնի էին tarmulaya անունով (տե՛ս Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 362, 441):
[257] Горожанова А., Политические структуры в Ликии V в. до н. э., с. 139.
[258] Баранов Д., Ликийская династическая система VI-V веков до н. э., с. 56.

դրամներին պատկերված դինաստներն ունեն պարսկական գլխարկներ, և նման դրամները կոչվում են «սատրապական տեսակի»[259]: Մյուս կողմից էլ պետք է նկատի ունենալ, որ, ելնելով Լյուկիայի քաղաքական մասնատվածությունից և էթնիկական խայտաբղետությունից, Աքեմենյան թագավորները չէին ուզում կամ հետաքրքրված չէին բոլոր դինաստների հետ առանձին հարաբերություններ հաստատել: Հետևաբար դինաստների համադաշնությանը փոխարինեց «դինաստիական պրինցիպատի» պարսկական տարբերակը, երբ մնացած դինաստները ենթարկվում են ամենաուժեղ և ազդեցիկ ընտանիքին, տվյալ դեպքում՝ Քսանթոսի դինաստին, իսկ Քսանթոսը, բնականաբար, պարսից արքունիքի համար դառնում է Լյուկիայի գլխավոր հարկային կենտրոնը[260]: Ընդ որում, նկատենք, որ լյուկիական «դինաստիական պրինցիպատն» ընդհանրապես կրկնում է Աքեմենյան տերության քաղաքական կառավարման համակարգը, երբ Լյուկիայի տարածքը ներկայանում է որպես պարսից տերության առանձին «միկրոկոսմոս», որտեղ Քսանթոսի դինաստն իր վասալների նկատմամբ ուներ այն նույն դերն ու նշանակությունը, ինչ որ Աքեմենյան արքաներն իրենց ենթակա սատրապների և կայսերական պաշտոնյաների նկատմամբ[261]:

1.4. Ի սատրապության մյուս ժողովուրդները

Մագնեսյաններ: Մագնեսյանների առանձին հիշատակվելը Ի սատրապության կազմում հետաքրքիր է այն առումով, որ վերջինիս հետ Աքեմենյան արքաները, ըստ էության, ունեցել են քաղաքական հարաբերությունների այնպիսի ձև՝ «անձնական ունիա», որը թույլ է տվել մագնեսյաններին՝ որպես առանձին վարչական միավոր, ներառվել սատրապության կազմում: Մագնեսիա քաղաքը, որը գտնվում էր Մեանդրոսի հովտում[262]՝ Մեանդրոսի վտակ Լեթայոսի ափին՝ Թորաքս լեռան ստորոտին[263]՝ ներկայիս Թեքքե կամ Ինեկ-բազար վայրում[264], նվաճում է մեդացի Մազարեսը[265], սակայն այլ մանրամասներ Հերոդոտոսը չի հաղորդում:

[259] Անդ:
[260] Անդ, էջ 57:
[261] Bryce T., Political Unity in Lycia during the "Dynastic" Period, pp. 41-42. Հմմտ. Ստեփանյան Ա., Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Եր., 2012, էջ 284:
[262] Pliny, Natural History, Vol. II, V, 114, p. 306.
[263] Страбон, с. 605.
[264] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 482; DGRG, Vol. II, p. 252.
[265] Հերոդոտոս, I, 161:

Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ Փռյուգիայի, Լյուդիայի և Հոնիայի սատրապ Օրոյտեսի նստավայրը Մեանդրոսի Մագնեսիան էր[266]: Արտաքսերքսես Ա-ն Մագնեսիան՝ որպես «հաց»՝ ուտեստ, տալիս է Թեմիստոկլեսին[267]: Պլուտարքոսն ավելացնում է ևս երկու քաղաք՝ Լամպսակոսը՝ որպես «գինի», և Միունտը՝ որպես «ձուկ»[268]: Ստրաբոնը հայտնում է, որ Մագնեսիան գրավվել է Լյուդիայի թագավոր Գյուգեսի կողմից և կործանվել տրերների կողմից մ. թ. ա. 650 թվականին: Տրերներից հետո Մագնեսիան նվաճում են նաև միլեթցիները[269]: Հետաքրքիր է, որ Մեանդրոսի Մագնեսիան հռոմեացիների տիրապետության ժամանակ հայտարարված էր ազատ քաղաք[270]: Ստրաբոնը նույնպես գրում է, որ Քսերքսեսը (իմա՝ Արտաքսերքսես Ա-ն) Թեմիստոկլեսին Մագնեսիան շնորհում է «հացի համար»[271]: Մագնեսիայի բնակիչները ծագումով Թեսալիայից և Կրետեից էին[272]: Համաձայն Արիանոսի՝ Մագնեսիան ենթարկվում է Ալեքսանդր Մակեդոնացուն[273]:

Դասական աղբյուրների տեղեկությունների մեջ հատկապես կարեվոր է Ստրաբոնի այն հաղորդումը, թե Մագնեսիան էոլական քաղաք է[274]: Ըստ էության, Մագնեսիայի կամ մագնեսյանների հիշատակվելը Ի սատրապության կազմում ցույց էր տալիս Մագնեսիայի յուրահատուկ կարգավիճակը, ինչով էլ պայմանավորված՝ այն հետագայում շնորհվում է Թեմիստոկլեսին: Սա կարող է նշանակել, որ Աքեմենյանների համար Մագնեսիան եղել է, այսպես կոչված, արքունի տիրույթ, որը ծառայության համար տրվում էր այս կամ այն անձին:

Էոլյաններ: Էոլյանները կամ էոլիացիները գաղթել են հետագայում հայտնի Թեսալիա և Բեովտիա մարզերից՝ սկզբում հաստատվելով Լեսբոս և Տենեդոս կղզիներում, ապա՝ Տրովադայի առափնյա շրջանում ու վերջինիցս հարավ ընկած տարածքներում[275]: Էոլիսը և էոլիացիները էթնոլեզվական հասկացություններ են՝ չունենալով քաղաքական կամ աշխարհագրական բովանդակություն: Համաձայն Պլինիոս Ավագի՝ Էոլիսը նախկինում կոչվել է Մյուսիա[276]:

Էոլներին Հալյուս գետից արևմուտք ընկած բազմաթիվ ժողովուրդների հետ նվաճում է Կրեսոսը[277]: Կյուրոս Մեծը Հելլեսպոնտոսյան Փռյուգիան և Էոլիսը հանձնում է Փառնուքոսի կառավարմանը[278], ինչը ցույց է տալիս վերջիններիս՝ մեկ վարչական միավորի մեջ լինելը: Հերոդոտոսը հիշատակում է էոլական տասնմեկ քաղաքները՝ Կյումե, որը կոչվում էր Փռիկոնիական, Լարիսե, Նոր Բերդ (բառացի՝ Նոր պարիսպ, որը հիշատակում է նաև Ստրաբոնը[279]), Թեմնոս, Կիլլա, Նոտիոն, Այգիրոեսսա, Պիտանե, Այգայա[280], Մյուրինա, Գրյունեյա: Նախկինում էոլական քաղաքները տասներկուսն էին, որոնցից մեկը՝ Սմյուռնեն՝ ներկայիս Իզմիրի մոտ[281], նվաճում են հարևան հոնիացիները[282]: Էոլական քաղաքների մեջ իր նշանակությամբ ամենակարևոր քաղաքը Կյումեն էր, որն Էոլիսի կենտրոնն էր: Կյումեն՝ ներկայիս Նեմրուդ Լիմանին, կառավարում էր պարսից արքայի կողմից նշանակված հյուպարքոսը[283], ով, հավանաբար, Էոլիսի՝ որպես վարչական միավորի ղեկավարն էր: Թուկիդիդեսը և Արիանոսը նույնպես Կ-

[266] Անդ, III, 122:
[267] Фукидид, История, с. 69, 423; Cornelius Nepos (Loeb), Themistocles, X, 2, p. 406; Diodori Bibliotheca Historica, Vol. II, XI, 57, p. 59.
[268] Плутарх, Фемистокл, XXIX, Избранные жизнеописания, т. I, с. 241.
[269] Страбон, с. 605-606.
[270] Անդ, էջ 582:
[271] Անդ, էջ 595:
[272] Անդ, էջ 595, 605: Քսենոփոնի հիշատակած մագնեսիացիները Թեսալիայից էին (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 138):
[273] Արիանոս, էջ 35:
[274] Страбон, с. 605, 607.
[275] Bryce T., The Routledge..., pp. 7-8.
[276] Pliny, Natural History, Vol. II, V, 121, p. 310. Պլինիոս Ավագն իր գրքում հիշատակում է բազմաթիվ էոլական քաղաքներ (անդ, էջ 310-313):
[277] Հերոդոտոս, I, 6, 28: Տե՛ս նաև Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 241:
[278] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 355:
[279] Страбон, с. 582.
[280] Էոլական փոքրիկ քաղաք Այգայան հիշատակում է Պլուտարքոսը (տե՛ս Плутарх, Фемистокл, XXVI, с. 238).
[281] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 179.
[282] Հերոդոտոս, I, 149: Այգայան նույնանում է ներկայիս Նեմրուդ Քալեսիին՝ Պերգամոնից 35 կմ դեպի հարավ, Գրյունեյան՝ Թեմաշալիկ Բուրնուին, Մյուրինան գտնվել է Պերգամոնից 37 կմ դեպի հարավ, Լարիսեն տեղադրվում է Իզմիրից 28 կմ դեպի հյուսիս գտնվող Բուրունջուկ գյուղի կամ վերջիններիցս արևելք ընկած Յանիքքյոյի մոտ, Նոտիոնը գտնվել է Սմյուռնեից 55 կմ դեպի հարավ և հաճախ նույնացվում է Կոլոփոնի հետ, Պիտանեն տեղադրվում է Կայկոսի գետաբերանի մոտ (տե՛ս Bryce T., The Routledge..., pp. 7, 262, 409, 489, 514, 562), Այգիրոեսսան, թերևս, գտնվել է Լեսբոսում, Նոր Բերդը՝ Նեոնթեյխոսը, գտնվել է Հերմոսի և Լարիսեի միջև, Թեմնոսը նույնանում է ներկայիս Մենեմենի հետ (տե՛ս DGRG, Vol. I, p. 35; DGRG, Vol. II, pp. 418, 1124): Կիլլան հիշատակվում է «Իլիական»-ում (տե՛ս Հոմերոս, Իլիական, I, 37) և գտնվել է Անտանդրոսի մոտ (տե՛ս Cramer J. A., Geographical and Historical Description of Asia Minor, Vol. I, p. 130):
[283] Հերոդոտոս, VII, 194: Համմտ. Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, p. 127.

յումեն համարում են էոլական քաղաք[284]: Արիանոսը, առանց քաղաքների անունները նշելու, գրում է, որ էոլական քաղաքները նվաճվում են Ալեքսանդրի կողմից[285]:

Կյուրոս Կրտսերը Հոնիայի, Էոլիսի և մերձակա երկրների կառավարիչ է նշանակում իր ընկերոջը՝ Տամոսին[286], որի կառավարման շրջանը համապատասխանում է I սատրապության տարածքին:

Աքեմենյան պետության կործանման ժամանակ Էոլիսը հիշատակվում է առանձին[287], ինչը խոսում է այն մասին, որ Էոլիսն Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ առանձին վարչական միավոր էր: Էոլական և հոնիական քաղաքներում Ալեքսանդրի զորավար Լիսիմաքոսը նախկին հարկերը վճարելու պայմանով պետք է վերականգներ դեմոկրատական կարգերը և հին օրենքները[288]:

Մինչև Աքեմենյան պետության անկումը մ. թ. ա. IV դարի սկզբին էոլական Թեմնոսը, Այգայոսը և այլն հիշատակվում են որպես քաղաքներ, որոնք կարող են գոյատևել՝ չլինելով պարսից արքայի հպատակության տակ[289]: Այս տեղեկությունը հիմք է տվել ենթադրելու, թե պարսից իշխանությունը Էոլիսում մ. թ. ա. IV դարի սկզբին իրականում չկար[290]: Մ. թ. ա. 399 թվականին սպարտական զորավար Դերկյուլիդասը, գրավելով Լարիսսան, Համակսիտոսը, Կոլոնայը, առաջարկում է էոլական քաղաքներին դաշնակցել իր հետ և դառնալ ազատ[291]: Հարկավ, մ. թ. ա. IV դարի սկզբին պարսից իշխանությունը Փոքր Ասիայում ենթարկվում էր անընդմեջ փորձությունների, ինչը պայմանավորված էր հույների հետ անվերջ պատերազմներով: Սակայն չի բացառվում, որ Թեմնոսին, Այգայոսին վերևում մեջբերված տեղեկությունը վերաբերում է այն հարցին, որ նշված քաղաքները, ինչպես նաև այլ քաղաքներ, ունեցել են «սրբազան և անձեռնմխելի» լինելու իրավունք, ինչը շնորհվում էր պարսից արքայի կողմից: Այս իրողությունը լայն տարածում է ստանում հելլենիստական ժամանակաշրջանում:

Հերոդոտոսը նաև հայտնում է, որ Իդայի վրա գտնվող էոլական

[284] Фукидид, История, с. 141; Արիանոս, էջ 48:
[285] Արիանոս, էջ 36:
[286] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 57:
[287] Ռուֆոս, էջ 327:
[288] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 499:
[289] Ксенофонт, Греческая история, с. 364.
[290] Sarakinski V., The Fallacy of the European Satrapy, ŽA, 60, 2010, 1-2, p. 90.
[291] Ксенофонт, Греческая история, с. 307. Համմտ. Քսենոփոն, Անաբասիս, էջ 127; Seager R., Tuplin Ch., The Freedom of the Greeks of Asia: on the Origins of a Concept and the Creation of a Slogan, JHS, Vol. 100, 1980, p. 144.

բնակավայրերն առանձնացած են[292], այսինքն՝ պատմիչի մոտ Էոլիան համապատասխանում է միայն տասնմեկ քաղաքների միությանը: Մեկ այլ տեղեկության մեջ ևս Հերոդոտոսը կրկնում է, որ էոլիացիները բնակվել են Իլիոնի երկրում[293], ինչը խոսում է այն մասին, որ Իլիոնում ապրող էոլիացիները վարչական առումով դուրս են գտնվել I սատրապության կազմում հիշատակվող էոլիացիների վարչական տարածքից: Էոլիացիները բնակվել են նաև Լեսբոսում[294], ընդ որում՝ Սկիլաքս Կարիանդացին Լեսբոսը համարում է էոլական կղզի[295]: Էոլիացիներին ավելի ուշ նվաճում է մեդացի Հարպագոսը՝ ենթարկելով պարսից իշխանությանը[296]:

Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի կազմում նախկինում պելասգներ կոչվող էոլիացիները տրամադրել էին տասնվեց նավ և զինված էին հելլենների նման[297]: Դիոդորոս Սիկիլիացին էոլիացիների, լեսբոսցիների և թենեդոսցիների նավերի քանակը հաշվում է քառասուն[298], այսինքն՝ հեղինակը նկատի ունի ամբողջ Էոլիդա վարչական միավորի տարածքը, քանի որ Տենեդոսը և Լեսբոսը համարվել են էոլական տարածքներ[299]:

Էոլիդայից հարավ գտնվել են Հոնիան, Կարիան և Լյուկիան[300]: Էոլիացիների իշխանությունը, ըստ Ստրաբոնի, հնագույն ժամանակներում տարածվել է Տրովադայի վրա[301]:

Էոլիդայի և Հոնիայի սահմանը սկսվում էր Փոկայա քաղաքից[302], որը Հոնիայի սկիզբն էր հյուսիսում: Ստրաբոնը հաղորդում է, որ էոլական գաղութները ձգվում էին հյուսիսում՝ Կյուզիկոսից, հարավում՝

[292] Հերոդոտոս, I, 151:
[293] Անդ, V, 122:
[294] Անդ, VI, 8:
[295] Скилак Кариандский, с. 261. Հեկատեոս Միլեթացին Լադե կղզին՝ Միլեթի դիմաց, համարում է էոլական (տե՛ս Müller C., FHG, Vol. I, fr. 226, p. 15), հետևաբար ենթադրելի է, որ էոլիացիները հարավային ուղղությամբ շարժվել էին բավականին հեռու:
[296] Հերոդոտոս, I, 171:
[297] Անդ, VII, 95:
[298] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XI, 4, p. 7.
[299] Հերոդոտոս, I, 151; Thucydides, History of the Peloponnesian war, Vol. IV, VII, LVII, 5, p. 112. Տենեդոսը հիշատակվում է դեռևս «Իլիական»-ում (տե՛ս Հոմերոս, Իլիական, I, 37):
[300] Страбон, с. 124, 129, 146.
[301] Անդ, էջ 530:
[302] Անդ, էջ 544:

մինչև Կայկոս և նույնիսկ մինչև Հերմոս գետը[303]: Էոլական գաղութացման ժամանակ Տրովադան մտնում էր Էոլիդայի կամ Էոլիսի տարածքի մեջ, որը տարածվում էր Աբյուդոսից մինչև Կյումե[304]: Ստրաբոնն իր ժամանակաշրջանի բուն Էոլիդան հասցնում էր Հերմոս գետից մինչև Լեկտե[305]՝ ներկայիս Բաբան[306]: Թուկիդիդեսը Անտանդրոսի բնակիչներին համարում էր ծագումով էոլիացիներ[307]:

Համաձայն Ստրաբոնի՝ էոլիացիները գաղթել են Թրակիայից և հաստատվել Կյումեում: Նրանք կարողանում են պարտության մատնել Տրոյական պատերազմից թուլացած պելասգներին և գրավել Լարիսսա քաղաքը: Ստրաբոնը հիշատակում է նաև Թեմնոսը, Այգայան, Մյուրինան, Գրյունեյան, Պիտանեն[308]: Ստրաբոնը Մեանդրոսի Մագնեսիան անվանում է էոլական[309]:

Քսենոփոնը հայտնում է, որ Էոլիսը վարչական առումով գտնվում էր Փոքր կամ Հելլեսպոնտոսյան Փռյուգիայի սատրապ Փառնաբազոսի գերագույն հրամանատարության տակ, ընդ որում՝ էոլիացիներն ունեին իրենց սատրապը՝ Զենիսը, որի հիմնական պարտականությունը հարկերի գանձումն էր: Հետաքրքիր է, որ Էոլիսի սատրապին նշանակում էր Փառնաբազոսը. Զենիսից հետո սատրապ է նշանակում վերջինիս կնոջը՝ Մանիային[310]: Նոր սատրապը կարողանում է իր տիրույթներին միացնել Լարիսսան, Համակսիտոսը՝ ներկայիս Գյուլփինարը, և Կոլոնայը՝ ներկայիս Բեշիկթեփեն, որոնք նախկինում նրան չէին ենթարկվում: Սկիլաքս Կարիանդացու տեղեկությունները ցույց են տալիս, որ Լարիսսան, Կոլոնայը, Համակսիտոսը վաղ ժամանակներում մտնում էին Տրովադայի մեջ[311], հետևաբար Մանիան նշված քաղաքները գրավում է Տրովադայից: Մանիային ենթարկվում էին նաև Սկեպսիսը (Կուրշունլութեփե), Գերգիթան (Յիրչե), Նեանդրիան

[303] Անդ, էջ 545, 563:
[304] Անդ, էջ 545:
[305] Անդ, էջ 549; Հոմերոս, Իլիական, XIV, 280:
[306] DGRG, Vol. II, p. 153; Cramer J. A., Geographical and Historical Description of Asia Minor, Vol. I, p. 117.
[307] Фукидид, История, с. 453. Տե՛ս նաև Скилак Кариандский, с. 261.
[308] Страбон, с. 583.
[309] Անդ, էջ 605, 607:
[310] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 117:
[311] Скилак Кариандский, с. 261; Thucydides, History of the Peloponnesian war, VIII, CI, 3, p. 380. Պլինիոս Ավագը Համակսիտոսը կամ էլ վերջինիցս հարավ ընկած Լեկտեն համարում էր Տրովադայի սկիզբը հարավում (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 123, p. 312; V, XXXIII, 124, p. 312):

(Չիգրի Դաղ), Իլիոնը, Կոկիլիոնը (Կարաև)[312]: Էոլիսը վարչական առումով ավելի ուշ դուրս է գալիս Փառնաբազոսի ենթակայությունից և անցնում Տիսսափեռնեսին, սակայն Էոլիսը հետագայում կրկին անցնում է Փառնաբազոսին[313]:

Քսենոփոնը «Անաբասիս» երկում մի առիթով կողք կողքի նշում է «Էոլիսը, Փռյուգիան (իմա՛ Հելլեսպոնտոսյան Փռյուգիա-Հ. Խ.), Տրովադան և Փառնաբազոսի իշխանության տակ գտնվող ամբողջ երկիրը»[314]: Քսենոփոնի՝ վերևում բերված տեղեկություններից պարզվեց, որ «Անաբասիս»-ի տվյալ հաղորդման մեջ հիշատակվող երկրները գտնվել են Փառնաբազոսի գերագույն ռազմական հրամանատարության տակ, իսկ որպես սատրապ՝ Փառնաբազոսը կառավարում էր Հելլեսպոնտոսյան Փռյուգիան և Բյութանիան: Մ. թ. ա. 389 թվականին Սպարտան կարողանում է Փառնաբազոսից խլել էոլական քաղաքները[315]:

Էոլական քաղաքները հիշատակվում են մ. թ. ա. 454-453, 450-449, 447-446 թվականների աթենական հարկացուցակներում՝ հելլեսպոնտական, կարիական և հոնիական փորոսների մեջ[316]:

Մ. թ. ա. IV դարի սկզբին Էոլիսի կառավարիչը սեփական գանձարանում ուներ այնքան դրամ, որը բավական էր մեկ տարի շարունակ 8000 զինվոր պահելու համար[317]:

Միլյուացիներ: Լյուկիացիների և պամփյուլիացիների միջև հիշատակվող միլյուացիները տեղադրվում են Միլյուաս երկրում, որն, ըստ ավանդության, գրավում են լյուկիացիները: Միլյուասը նվաճվում է Ալեքսանդր Մակեդոնացու կողմից[318]: Միլյուասցիների հին անվանումն էր սոլյումներ[319]: Վերջիններիս Ստրաբոնը հիշատակում է առանձին՝ չնույնացնելով միլյուացիներին[320]: Չնայած մեկ այլ տեղեկության մեջ ամասիացի աշխարհագետը միլյուացիներին նույնացնում է տերմիլների՝ լյուկիացիների և սոլյումների հետ[321]: Ստրաբոնը սոլյումներ համարում է Կաբալիայի բնակիչներին և թերմեսոսցիներին[322],

[312] Ксенофонт, Греческая история, с. 306.
[313] Անդ, էջ 313, 371:
[314] Քսենոփոն, Անաբասիս, էջ 127:
[315] Olmstead A. T., History of the Persian Empire, p. 393.
[316] "The Athenian Tribute Lists", pp. 20-28, 53, 56.
[317] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 204:
[318] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 500:
[319] Հերոդոտոս, I, 173:
[320] Страбон, с. 520.
[321] Անդ, էջ 536:
[322] Անդ, էջ 591:

այսինքն՝ նկատի ունի ոչ թե Լյուկիայի արևմուտքում գտնվող Կաբալիան, այլ Թերմեսոսը հարակից շրջաններով ընդգրկող Կաբալիան, որին հարավից և հարավ-արևմուտքից սահմանակցել է Միլյուասը: Ստրաբոնի տեղեկություններից երևում է, որ Միլյուասը գտնվել է Պիսիդիայից հարավ, Պամփյուլիայից արևելք[323]:

Միլյուասը Պամփյուլիայի հարևանությամբ հիշատակում է նաև Պոլիբիոսը[324]:

Քսերքսեսի բանակի կազմում միլյուացիները և կաբալները գտնվում են Հյուստանեսի որդի Բադրեսի հրամանատարության տակ, ընդ որում՝ միլյուացիների մի մասը զինված էր լյուկիական աղեղներով[325]:

Պամփյուլիացիներ: Պամփյուլիա հունարեն նշանակում է «բոլոր ցեղերի բնակավայր, հավաքատեղի»[326]: Պամփյուլիացիները խոսել են հունարենի առանձին բարբառով, որը կապված է կիպրերենի և արկադերենի հետ՝ պարունակելով նաև Անատոլիական լեզվի ազդեցությունը[327]: Ըստ Դիոդորոս Սիկիլիացու՝ առասպելական Նինոսի հետ նույնացվող Կյուրոս Մեծը նվաճում է Պամփյուլիան[328]: Վերջինս տեղադրվում է I սատրապության ծայր արևելքում: Կյուրոս Կրտսերը Հոնիայի, Էոլիսի և մերձակա երկրների կառավարիչ է նշանակում իր ընկերոջը՝ Տամոսին[329]:

Մ.թ.ա. V դարի 60-ական թվականներին Արտաքսերքսես Ա-ի գերիշխանության ներքո Պամփյուլիայում դրամներ են հատվում[330], ինչը վկայում է Պամփյուլիայի ինքնավարության և առևտրական նշանակության բարձրացման մասին: Պատահական չէ, որ մ.թ.ա. V-IV դարերի կեսերով թվագրվող ժամանակաշրջանում Պամփյուլիայի արևմտյան մասում՝ Պերգե քաղաքից հարավ գտնվող Կարաչալլի հնավայրում, հայտնաբերվել են մեծ թվով Աքեմենյան դարաշրջանի կավե ամաններ, անոթներ[331], որոնք վկայում են պարսկական ուժեղ ազդեցության մասին:

[323] Անդ, էջ 627:
[324] Polybius, The Histories, Vol. III, V, 77, p. 190.
[325] Հերոդոտոս, VII, 77:
[326] Cramer J. A., Geographical and Historical Description of Asia Minor, Vol. II, p. 273.
[327] Bryce T., The Routledge..., p. 523.
[328] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17:
[329] Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, XIV, 19, p. 826.
[330] Bodzek J., Remarks on the Origins of Achaemenid Satrapic Coinages, p. 6.
[331] Çokay-Kepçe S., Recke M., Achaemenid Bowls in Pamphylia, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-fourth Centuries B.C.), ed. by I. Delemen, Istanbul, 2007, pp. 83-86.

Պամփյուլիացիներին Հերոդոտոսը համարում է տրոյական գաղթականներ, որոնք Քսերքսեսի՝ Հելլադա արշավող նավատորմում ունեին երեսուն նավ և զինված էին հելլենական զենքերով[332]: Պամփյուլիայում են գտնվել Էվրիմեդոնտ և Կատարակտես գետերը[333]:

Ստրաբոնը Պամփյուլիայի սկիզբը ծայր հարավ-արևմուտքում համարում է Քելիդոնիոն կղզին, ինչն, անկասկած, վերաբերում է հեղինակի ժամանակներին, իսկ ընդհանրապես Պամփյուլիան տեղադրում է Լյուկիայի և Կիլիկիայի միջև՝ արևելքում հասցնելով մինչև Կիլիկիա Տրաքեա[334]: Ստրաբոնը նշում է նաև Պամփյուլական ծովը[335], որն արևելքում միանում է Կիլիկյան ծովին[336]: Անտիկ աշխարհագետը գրում է, որ Պամփյուլիայի սկիզբը հարավ-արևմուտքում Փասելիս քաղաքից հյուսիս ընկած Օլբիա քաղաքն է՝ ներկայիս Կորուման, իսկ հարավ-արևելքում՝ Կորակեսիան[337]՝ ներկայիս Ալանյան: Պլինիոս Ավագը Պամփյուլիայի վերջին կետը ծովափին համարում է Փասելիսը[338], ինչն ուշ շրջանի իրողություն է:

Ալեքսանդրի մահից հետո Պամփյուլիան, Լյուկիան, Մեծ Փռյուգիան անցնում են Անտիգոնոսի կառավարմանը[339]:

Մ. թ. ա. 362-361 թվականների ապստամբության ժամանակ պամփյուլիացիները միանում են հակապարսկական ապստամբությանը[340]:

Այսպիսով, մագնեսյաններին, էոլիացիներին, միլյուացիներին, պամփյուլիացիներին վերաբերող հին աղբյուրների տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ սրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պարսից արքունիքը հաստատում էր կառավարման այնպիսի համակարգ, որը պայմանավորված էր I սատրապության ձևավորման տեղական առանձնահատկություններով: Մյուս կողմից էլ, ի վերջո, Աքեմենյանների նպատակն էր առավելագույնս արդյունավետ կազմակերպել հարկատվության գործը և հաջողությամբ պաշտպանել Փոքր Ասիան բալկանյան հույների հարձակումներից:

[332] Հերոդոտոս, VII, 91: Դիոդորոս Սիկիլիացին պամփյուլիացիների նավատորմը հաշվում է 40 նավ (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. II, XI, 4, p. 7):
[333] Фукидид, История, с. 52; Pliny, Natural History, Vol. II, XXVI, 96, p. 292. Պամփյուլական բազմաթիվ քաղաքներ և գետեր հիշատակվում են Հեկատեոս Միլեթացու կողմից (տե՛ս Müller C., FHG, Vol. I, fr. 243-250, pp. 16-17):
[334] Страбон, с. 125, 491, 592, 620.
[335] Անդ, էջ 535:
[336] Pliny, Natural History, Vol. II, V, 96, p. 292.
[337] Страбон, с. 623-624.
[338] Pliny, Natural History, Vol. II, V, 96, p. 292.
[339] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110:
[340] Անդ, էջ 75:

1.5. II սատրապության տարածքը

Պատմահայր Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան պետության II սատրապությանը, գրում է. «Մյուսիացիներից, լյուդիացիներից, լասոններից, կաբալներից և հյուտեններից (ստացվում էր՝ հինգ հարյուր տաղանդ. այս էլ երկրորդ նահանգն էր»[341]: Հերոդոտոսը II սատրապության մեջ գտնվող ցեղերին հիշատակում է տարբեր առիթներով ևս մի քանի անգամ, և ստորև կքննենք ոչ միայն Հերոդոտոսի, այլև մյուս հին աղբյուրների տեղեկությունները հիշյալ ցեղերի և նրանց բնակեցրած երկրների վերաբերյալ:

Մյուսիացիներ: Հերոդոտոսը գրում է, որ մյուսիացիները և լյուդիացիները այլ ժողովուրդների հետ գտնվել են Հալյուս գետից արևմուտք և ենթարկվել Կրեսոսի իշխանությանը[342]: Պատմիչը հիշատակում է Մյուսիայի Օլիմպոս լեռը[343]: Հույն պատմիչը հայտնում է, որ կարիացիները, մյուսիացիները և լյուդիացիները սերել են Կարոս, Մյուսոս և Լյուդոս եղբայրներից, ընդ որում՝ Մյուլասայում Կարյան Զևսի սրբավայրը պատկանել է մյուսիացիներին և լյուդիացիներին[344]: Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմում մյուսիացիները և լյուդիացիները հիշատակվում են միասին. «Լյուդիացիների զենքերը շատ նման էին հելլենականներին: Լյուդիացիները հնում կոչվել են մեյոններ, իսկ Ատյուսի որդի Լյուդոսից հետո փոխեցին իրենց անունը և կոչվեցին նրա անունով: Մյուսիացիներն իրենց գլխին դնում էին տեղական սաղավարտներ. նրանք կրում էին փոքր ասպարներ և ծայրերը խանձած տեգեր: Սրանք լյուդիական վերաբնակիչներ են և Օլիմպոս լեռան անունից կոչվում են օլիմպոսյաններ: Լյուդիացիների և մյուսիացիների առաջնորդն էր Արտափրենեսի որդի Արտափրենեսը, որը Դատիսի հետ ներխուժել էր Մարաթոն»[345]: Հերոդոտոսը կրկին մյուսիացիներին և լյուդիացիներին վերագրում է ցեղային ընդհանրություն՝ միաժամանակ մյուսիացիներին Օլիմպոս լեռան անունով անվանելով օլիմպոսյաններ: Մյուսիացիները պարսկական բանակի կազմում հիշատակվում են նաև Պլատեայի ճակատամարտին[346]: Ատառնեոն անունով վայրը՝ Կալե Թեփեն Դիկիլիի մոտ, և Կայկոս դաշտը հիշատակված են Մյուսիայում՝ Լեսբոսին հանդիպակաց[347]: Սակայն Ատառնեոնը՝ ներկայիս Դիկիլիի մոտ[348], և Կայկոս գետի՝ ներկայիս Բակիրչայի ստորին հոսանքի շրջանը գտնվել են I սատրապության տարածքում և կապ չունեն II սատրապության Մյուսիա երկրի հետ:

Լյուդիացիներ: Լյուդիացիները մինչև պարսիկների կողմից նվաճվելը ստեղծել էին ուժեղ և ընդարձակ պետություն, որը մեդական տերությունից բաժանված էր Հալյուս գետով[349]: Լյուդիական տերության կենտրոնն էր Սարդես քաղաքը[350], որի դիմաց գտնվող ընդարձակ դաշտում հանդիպում են Կյուրոսի և Կրեսոսի բանակները: Ըստ Հերոդոտոսի՝ այդ «դաշտով հոսում են Հյուլոսը և ուրիշ գետեր. սրանք թափվում են Հերմոս կոչվող առավել խոշոր գետը, որը բխելով Մայր Դինդյումենեի սրբազան լեռից՝ ծովն է թափվում Փոկայա քաղաքի մոտ»[351]: Հյուլոս գետը ներկայիս Դեմիրչիչայ գետն է, իսկ Հերմոսը նույնանում է ներկայիս Գեդիզչային[352], որը Փոկայա-Ֆոչա քաղաքի մոտ թափվում է ծովը: Պատմիչը հիշատակում է նաև Լյուդիայում հոսող Տմոլոս գետը, որը բերում է ոսկու ավազ[353]:

Հերոդոտոսը հայտնում է, որ Կյուրոսի մեկնելուց հետո լյուդիացի Պակտյուեսը լյուդիացիներին ապստամբության դրդեց Սարդեսի պարսիկ կառավարիչ Տաբալոսի ու Կյուրոսի դեմ և իջնելով դեպի ծով՝ վերցրեց Սարդեսի ամբողջ ոսկին: Լյուդիացի Պակտյուեսը վարձկաններ է հավաքում և առափնյա մարդկանց համոզում իր հետ արշավել՝ Սարդեսի միջնաբերդում պաշարելով պարսիկ Տաբալոսին[354]: Տեղեկությունից ակնհայտ է, որ Լյուդիան արևմուտքում չի հասել մինչև ծով, և «առափնյա մարդիկ» I սատրապության մեջ հիշատակված հոնիացիներն են:

Միլեթի տիրան Արիստագորասը պղնձե տախտակի վրա հոնիացի-

[341] Հերոդոտոս, III, 90:
[342] Անդ, I, 28:
[343] Անդ, I, 36, 43:
[344] Անդ, I, 171:
[345] Անդ, VII, 74: Ատյուսի որդի Լյուդոսի մասին տե՛ս նաև անդ, I, 7:
[346] Անդ, IX, 32:

[347] Անդ, I, 160; VI, 28; VIII, 106:
[348] DGRG, Vol. I, pp. 252-253.
[349] Հերոդոտոս, I, 72:
[350] Սարդեսը գտնվել է Եփեսոսից ոտքով երեք օրվա հեռավորության վրա և հայտնի է եղել ուժեղ ամրություններով ու պարադիսով (տե՛ս Dusinberre E. R. M., Satrapal Sardis, p. 73):
[351] Հերոդոտոս, I, 80:
[352] Payne A., Wintjes J., Lords of Asia Minor: An Introduction to the Lydians, Philippika, 2016, Wiesbaden, p. 16.
[353] Հերոդոտոս, I, 93:
[354] Անդ, I, 154: Տե՛ս նաև Rung E., The End of the Lydian Kingdom and the Lydians after Croesus, Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, pp. 8, 15.

ներից արևելք հիշատակում է լյուդիացիներին, որոնց երկիրը բարեբեր է և խիստ արծաթաշատ, որոնցից արևելք արդեն փռյուգներն են[355]: Եփեսոս, Կոլոփոն, Լեբեդոս, Տեոս, Կլազոմենե, Փոկայա քաղաքները գտնվել են Լյուդիայում[356]:

Նույն Արիստագորասը կազմակերպում է արշավանք Սարդեսի դեմ՝ զորքերի հրամանատարությունը հանձնելով ուրիշ միլեթացիների. «Այս նավատորմով հոնիացիները, հասնելով Եփեսոս, նավերը թողնում են եփեսոսյան երկրի Կորեսոսում, իսկ իրենք, մեծ զորքով, արշավում են երկրի խորքը՝ ուղեցույց ունենալով եփեսոսցիներին: Նրանք գնում էին Կաուստրիոս գետի երկայնքով. այնուհետև անցնելով Տմոլոսը՝ հասնում են Սարդես և այն գրավում անարգել...»[357]: Այնուհետև Հերոդոտոսը, հաղորդելով մարտական գործողությունների մասին, գրում է, որ Պակտոլոս գետն (ներկայիս Սարթ-չայը[358]) իր հետ ոսկու ավազ է բերում և, բխելով Տմոլոսից, անցնում է շուկայի միջով և թափվում Հերմոս գետը, իսկ Հերմոսը թափվում է ծովը: Հիշատակվում է նաև Տմոլոս՝ ներկայիս Բոզ Դաղ կոչված լեռը[359]:

Փռյուգիան, Լյուդիան և Հոնիան միասին կազմել են մեկ սատրապություն[360]: Նկարագրելով Քսերքսեսի բանակի երթուղին՝ Հերոդոտոսը գրում է, որ[361] Լյուդիայից Քսերքսեսի «զորքն ուղղվեց դեպի Կաիկոս գետը և Մյուսիա երկիրը, իսկ Կաիկոսից դուրս գալով, ձախ կողմում ունենալով Կանե լեռը՝ Ատառնևս (բնակավայրի) միջով անցավ ու հասավ Կարենե քաղաքը: Այս քաղաքից զորքը Թեբե դաշտի միջով գնաց Ադրամյուտտեոն քաղաքը և անցավ պելասգյան Անտանդրոս քաղաքի մոտով: Երբ զորքը գիշերելու համար կանգ առավ Իդայի ստորոտին, սկզբում ամպրոպ պայթեց ու փոթորիկ, և կայծակից շատերը շանթահարվեցին ու կործանվեցին»[362]: Կայիկոս գետը համապատասխանում է ներկայիս Բակիրչային, Կանե լեռը՝ Կարա Դաղին, Չանդարլիի մոտ, Կարենեն՝ Ասսար Կայային, Ադրամյուտտեոնը՝ Էդրեմիտին, Անտանդրոսը՝ Դեվրեն-Ավչիլարին, Իդան էլ՝

[355] Հերոդոտոս, V, 49; 52:
[356] Անդ, I, 142:
[357] Անդ, V, 101:
[358] Payne A., Wintjes J., Lords of Asia Minor, p. 17.
[359] Հերոդոտոս, V, 101; Payne A., Wintjes J., Lords of Asia Minor, p. 17.
[360] Հերոդոտոս, III, 127:
[361] Երթուղու սկզբնահատվածի քննությունը տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի III սատրապության վարչական բաժանումը, ՀԱ, 2013, թիվ 1-12, էջ 212-218:
[362] Հերոդոտոս, VII, 42:

Կազդաղին[363]:

Սարդեսում բնակվել են մեծ թվով պարսիկներ, հույներ և կարիացիներ[364], ինչի մասին վկայում են լյուդիերեն-արամեերեն, լյուդիերեն-հունարեն երկլեզու արձանագրություններն ու, այսպես ասած, Աքեմենյան կավե, արծաթե գավաթները, թասերը, սափորները, պարսկական դամբարանները, զրադաշտական պաշտամունքը[365], որոնք ցույց են տալիս Սարդեսում խառն ընտրախավի գոյության և պարսկական մշակույթի ուժեղ ազդեցության մասին: Ենթադրվել է, որ Սարդեսում էին հատվում նաև Աքեմենյան դրամները[366], ինչը պայմանավորված էր Սարդեսում դրամահատման նախաաքեմենյան ավանդույթներով: Ընդհանրապես, տեղական ընտրախավի պարսկական նույնականացման փորձերը հստակ երևում են Սեյիթյոմեր հնավայրի (ներկայիս Քյոթահիայի մոտ) պեղումներից հայտնաբերված խեցեղենի (նաև գունազարդ) համեմատության մեջ[367], այսինքն՝ տարանցիկ մի շրջանում, որտեղ սահմանակցել են Լյուդիան, Մեծ ու Փոքր Փռյուգիաները՝ կապվելով Բալկանյան Հունաստանի հետ: Անկասկած, մշակութային նման ազդեցությունը պայմանավորված էր Աքեմենյան սատրապական վարչակազմի կենսունակ գործունեությամբ:

Լասոններ, կաբալներ, հյուտեններ: Հյուտենների մասին այլ տեղեկություններ հույն հեղինակը չի հաղորդում, իսկ Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմի մասին կարդում ենք. «Կաբալները, (որոնք) մեյոններ են և կոչվում են լասոնիներ, ունեին նույն հանդերձանքը, ինչ կիլիկեցիները. այդ ես (Հերոդոտոսը- Խ. Հ.) կնկարագրեմ կիլիկյան զորամասերի մասին խոսելիս: Իսկ միլիացիները կրում էին կարճ նիզակներ և ճարմանդով ամրացրած հագուստ: Նրանցից

[363] Դատելով Թուկիդիդեսի տեղեկություններից՝ վերջիններս վարչական առումով ենթարկվում էին Տիսսափեռնեսին (տե՛ս Фукидид, История, с. 453):
[364] Pedley J. G., Carians in Sardis, JHS, Vol. 94, 1974, pp. 96-99.
[365] Dusinberre E. R. M., Satrapal Sardis, pp. 75, 78, 101-102; Melikian-Chirvani A. S., The International Achaemenid Style, pp. 120-125; Balcer J. M., The Greeks and the Persians: The Processes of Acculturation, Historia, Bd. 32, H. 3, 1983, p. 266; Gates Ch., Tracking the Achaemenid Persians in Anatolia, AJA, Vol. 109, № 4, 2005, p. 109; Payne A., Wintjes J., Lords of Asia Minor, pp. 90-91, 108.
[366] Konuk K., Asia Minor in the Archaic and Classical Periods, in: Survey of Numismatic Research 2008-2013, General Editors C. Arnold-Biucchi-M. Caccamo Caltabiano, International Association of Professional Numismatists, Special Publication 16, Taormina, 2015, pp. 84-85.
[367] Grave P., Kealhofer L., Bilgen N., Marsh B., The Archaeology of Achaemenid Power..., pp. 700-701.

ոմանք ունեին լյուկիական աղեղներ, իսկ գլուխներին՝ կավե սաղավարտներ: Այս բոլորին առաջնորդում էր Հյուստանեսի որդի Բադրեսը»[368]: Որոշ ուսումնասիրողներ հյուտենների փոխարեն նախապատվություն են տալիս հյուգեններ ձևին և նույնացնում են Հերոդոտոսի սիգիններին[369]: Հյուտենները Հյուտենա քաղաքով տեղադրվում են սատրապության ծայր հարավում՝ Լյուկիային և Կարիային մոտ[370]: Հյուտեններին նույնացրել են ետեններին, որոնք լեռնային ցեղ էին և հայտնի էին Ետեննա քաղաքով[371]: Պիսիդիայում բնակվող լեռնաբնակ ետեններին մ. թ. ա. III դարում հիշատակում է Պոլիբիոսը[372]:

Հեկատեոս Միլեթացին Լյուդիայում հիշատակում է Կյունե, Միմնեդոս անունով քաղաքները[373]:

Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանի Փոքր Ասիայի վարչական բաժանման մասին արժեքավոր են Քսենոփոնի տեղեկությունները: Պարսկական զորքերի հավաքատեղի Կաստոլոսի դաշտը գտնվել է Լյուդիայում[374], Հերմոս գետի հովտում: Ըստ Քսենոփոնի՝ Լյուդիան հարավում հասել է մինչև Մեանդրոս գետը, որից հետո Փռյուգիան էր[375]: Կերամոն-ագորա քաղաքը գտնվել է Մյուսիայի ծայր սահմանում կամ ուղղությամբ[376]: Կյուրոս Կրտսերը կռվել է պիսիդիացիների և մյուսիացիների դեմ՝ նրանց համար նշանակելով կառավարիչներ[377]: «Անաբասիս»-ի վերջում Լյուդիան Արտիմասի ղեկավարությամբ հիշատակվում է առանձին սատրապություն[378], իսկ «Կյուրոպեդիա»-ում Լյուդիան Հոնիայի հետ մեկ սատրապություն է[379]: Լյուդիան և Հոնիան Սպիթրիդատեսի ղեկավարությամբ մեկ սատրապություն են նաև Աքեմենյան պետության մայրամուտին[380], ինչը պայմանավորված էր ռազմական իրադրությամբ: Արիանոսը Սպիթրիդատեսին հիշատակում է նաև Լյուդիայի սատրապ[381], իսկ Դիոդորոս Սիկիլիացին՝ Հոնիայի սատրապ, կամ էլ Հոնիան և Լյուդիան համարում է մեկ սատրապություն[382]: Համաձայն Հերոդոտոսի՝ Փռյուգիան, Լյուդիան, Հոնիան Օրոյտեսի սատրապության մեջ էին[383]: Դիոդորոսը և Աթենիոսը հաղորդում են, որ Դարեհ Ա-ն հետ է վերադարձնում Հոնիան, Դասկիլեան և Սարդեսը[384]:

Աքեմենյան Պարսկաստանի II սատրապության ցեղերի և ժողովուրդների մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում ամասիացի աշխարհագետ Ստրաբոնը: Այսպես, Ստրաբոնը մյուսիացիներին համարում է թրակական ցեղ, որոնց մի հատվածը բնակվել է լյուդիացիների, փռյուգիացիների և տրոյացիների միջև[385]: Ստրաբոնը մյուսիացիներին, մեոններին և մեյոններին[386] համարում է մեկ ժողովուրդ[387]: Համաձայն Ստրաբոնի՝ Մյուսիան գտնվել է Բյութանիայի և Էսեպոս գետի գետաբերանի միջև՝ հարելով ծովին և հասնելով գրեթե մինչև ամբողջ Օլիմպոս[388]: Մյուսիային սահմանակցել է Փռյուգիա Էպիկտետը, որը ձգվել է մինչև Ասկանիա լճի արևելյան հատվածը, իսկ մյուսիական Ասկանիան գտնվել է Նիկեայի մոտ, այսինքն՝ կրկին լճի արևելյան կողմում[389]: Սակայն Քսենոփոնի մի տեղեկությունը թույլ է տալիս ենթադրել, որ Ասկանիա լճից արևմուտք ընկած շրջանն էլ հայտնի է եղել մյուսիական անվանումով, քանի որ հույն պատմիչը հիշատակում է մյուսիական Կիոս քաղաքը[390]: Ստրաբոնը հայտնում է, որ, ըստ Հոմերոսի, մյուսիացիների սահմանը Էսեպուս գետն է, որը միաժամա-

---

[368] Հերոդոտոս, VII, 77:
[369] Անդ, V, 9: Տե՛ս Herzfeld E., The Persian Empire, p. 311; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 483.
[370] Herzfeld E., The Persian Empire, p. 311.
[371] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 483.
[372] Polybius, The Histories, Vol. III, V, 73, p. 180.
[373] Müller C., FHG, Vol. I, fr. 221, 222, p. 15.
[374] Քսենոփոն, Անաբասիս, էջ 7, 31:
[375] Անդ, էջ 10:
[376] Անդ, էջ 11:
[377] Անդ, էջ 32: Մյուսիացիները և պիսիդիացիները հարձակումներ էին գործում հարևան տարածքների վրա (Ксенофонт, Греческая история, с. 307):
[378] Քսենոփոն, Անաբասիս, էջ 197:
[379] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 355:

[380] Արիանոս, էջ 28: Ըստ Արիանոսի՝ Հերմոս գետը սկիզբ է առնում Մայր Դինդիմենա լեռից՝ Զմյուռնիա քաղաքի մոտ, և թափվում Էոլական ծովը, Կաիստրոս հարթավայրը գտնվել է Լյուդիայում, Կաիկոս դաշտավայրը՝ Մյուսիայում, Կարիայում մինչև հոնիական Միլետ քաղաքը ձգվում է Մեանդրոս գետի դաշտավայրը (անդ, 178):
[381] Արիանոս, էջ 33:
[382] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 80-81; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 47, p. 51; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 496:
[383] Հերոդոտոս, III, 127:
[384] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 110-111:
[385] Страбон, с. 270.
[386] Հոմերոսը լյուդիացիներին չգիտի և հիշատակում է մեոններին, ինչպես նաև լյուկիացիներին, փռյուգիացիներին և մյուսիացիներին (տե՛ս Հոմերոս, Իլիական, II, 355; III, 400; IV, 140; X, 430; The Cambridge Ancient History, Vol. II, pp. 10-11):
[387] Страбон, с. 516.
[388] Անդ, էջ 529:
[389] Անդ:
[390] Ксенофонт, Греческая история, с. 257, 501; Հերոդոտոս, V, 122:

նակ Տրովադայի հյուսիսային և արևելյան սահմանն էր[391]: Ստրաբոնը հաղորդում է, որ տարբեր ժամանակներում Տրոյային իշխել են փռյուգիացիները, մյուսիացիները, ավելի ուշ լյուդիացիները, էոլյանները, հոնիացիները, պարսիկները և այլն[392]:

Մյուսիան համարվել է Տրոյայի գավառներից[393], ինչը վաղ ժամանակներից մնացած հիշողություն պետք է լիներ: Ստրաբոնը, մեջբերելով հին հեղինակների տեղեկությունները, հայտնում է, որ Բյութանիայում՝ Ասկանիաս լճի շուրջ, բնակվել են նաև մյուսիացիները, և թրակիական Բոսփոր նեղուցը նախկինում կոչվել է մյուսիական Բոսփոր, այսինքն՝ ըստ հեղինակի՝ մյուսիացիները եղել են թրակացիներ[394]: Աշխարհագետը նաև գրում է, որ բյութանիացիներից հարավ՝ Օլիմպոս լեռան շուրջ, բնակվել են մյուսիացիները, որոնց անվանում են նաև օլիմպիաններ կամ հելլեսպոնտացիներ, և փռյուգիացիները[395]: Բյութանիացիներից հարավ գտնվել է Մյուսիան, և հնում բյութանիացիներին համարել են մյուսիացիներ[396]: Օլիմպոսի շուրջ ապրող մյուսիացիները փռյուգիացիների[397] ճնշման տակ շարժվում են դեպի Կայիկոս գետի ակունքների շրջանը և Պերգամոն (այժմ՝ Բերգամա) մինչև Տևթրանիա[398] ու ավելի հարավ՝ Թիատիրա քաղաքը, Լյուդիային մոտ, ընդ որում՝ Ստրաբոնը հայտնում է, որ մյուսիացիներին համարել են նաև լյուդիացիներ[399]: Մյուսիան գտնվել է Իդա լեռան և Կատակեկավմենեի (բառացի՝ «խանձված, այրված»[400])՝ Հերմոս գետի միջին հոսանքի միջև, որը ոմանք համարում են մյուսիական, իսկ մյուսները՝ մեոնական կամ լյուդիական տարածք[401]: Մյուսիայի մի հատվածը, ըստ Ստրաբոնի, կոչվել է աբրետտենյան Մյուսիա, որտեղից հոսող գետերը Մակեստոս գետի (այժմ՝ Սիմավ) հետ թափվել են Ռինդակոս գետը[402]: Մյուսիայի գավառներից էր նաև Մորենան[403] Մակեստոսի վերնագավառում: Ստրաբոնի մի տեղեկությունը թույլ է տալիս ենթադրել, որ մյուսիացիները հնում բնակվել են նաև Մեոնիայում, ընդ որում՝ մեոնները կոչվել են լյուդիացիներ, որոնք հյուսիսում հասել էին մինչև Թեբեի դաշտավայրը՝ Իդա լեռից հարավ[404]: Թեբեի դաշտը, Կայիկոսի հովիտը (Հերոդոտոսի հիշատակած Մյուսիայի Կայկոս դաշտը[405]) և Պերգամոնը Մյուսիայում հիշատակում է Քսենոփոնը, ընդ որում՝ Պարթենիոն, Ապոլլոնիա քաղաքներն արդեն Լյուդիայում են[406]: Սկիլաքս Կարիանդացին հաղորդում է, որ Մյուսիան հին ժամանակներում

---

[391] Страбон, с. 529.
[392] Անդ, էջ 530:
[393] Անդ, էջ 16:
[394] Անդ, էջ 530, 635:
[395] Անդ, էջ 530:
[396] Անդ, էջ 509, 528: Ըստ Ստրաբոնի՝ Պրուսա քաղաքը՝ ներկայիս Բրուսան (տե՛ս Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, London, 1890, p. 180), գտնվել է Մյուսիական Օլիմպոսում և սահմանակցել է արևելքում փռյուգիացիներին, հարավում՝ մյուսիացիներին (անդ, էջ 528): Ըստ Պոլիբիոսի՝ Մյուսիան հասնում էր մինչև Բյուզանդիոն, որի մոտ գտնվող հողերը գրավում են բյութանիացիները (տե՛ս Polybius, The Histories, Vol. II, IV, 52, p. 426):
[397] Ի. Դյակոնովի կարծիքով՝ արևմտյան մուշկերի կամ մուսերի անունը կապված է մյուսերի հետ (տե՛ս История древнего мира. т. II, под ред. И. М. Дьяконова, В. Д. Нероновой, И. С. Свенцицкой, Москва, 1989, с. 48): Մյուսիացիների երկիրը, թերևս, կապված է Սուպպիլուլիումաս Բ-ի արձանագրությունում հիշատակված Մասա երկրին (տե՛ս Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը..., էջ 37, 38; RGTC, VI, SS. 264-265): Ըստ լյուդիացի պատմիչ Քսանթոսի (մ. թ. ա. V դար)՝ փռյուգական տեղաշարժը եղել է Տրոյական պատերազմից հետո՝ մյուսիացիների հետ միասին (անդ, էջ 100): Բալկանյան ժողովուրդների շարժումը Փոքր Ասիա, ամենայն հավանականությամբ, պիտի ընդգրկեր Տրոադան, Սանգարիոսի հովիտը և դեպի արևելք ընկած որոշ այլ շրջաններ, բայց ոչ խեթերի մայրաքաղաք Խաթթուսասը և կենտրոնական Փոքր Ասիայի մեծ մասը: Այս միգրացիան առավելապես ընդգրկել է մինչև Հալյուսի արևմտյան, հարավարևմտյան հոսանքի շրջանը (անդ, էջ 106, 174):

[398] Տևթրանիայի դաշտավայրը և Դեմարատոսին հիշատակում է Հերոդոտոսը (II, 10; VI, 65), Տևթրանիայի և Հալիսառնեի տիրակալ Պրոկլեսին՝ Դեմարատոսի սերնդից՝ Քսենոփոնը (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 37, 196; Ксенофонт, Греческая история, с. 305): Տևթրանիան՝ ներկայիս Բայլար-Թեփեն, Մյուսիայի մաս է համարում նաև Պլինիոս Ավագը (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 125, p. 314):
[399] Страбон, с. 535-536, 586. Ստրաբոնը Կայիկոսի դաշտավայրը համարում է լավագույնը Մյուսիայում (անդ, էջ 585):
[400] Payne A., Wintjes J., Lords of Asia Minor, p. 16.
[401] Страбон, с. 540, 542, 588: Մյուսիական երկիր Կատակեկավմենեում որոշ հին հեղինակներ տեղադրում են արիմների ցեղը (անդ, էջ 587):
[402] Անդ, էջ 538, 540: Տե՛ս նաև Pliny, Natural History, Vol. II, V, 142, p. 326: Մակեստոս գետը սկիզբ է առնում Սիմավ լճից և վերին հոսանքի շրջանն էլ կոչվում է Աբբաեիտիս (տե՛ս Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 147):
[403] Страбон, с. 538.
[404] Անդ, էջ 549, 586: Լյուդիացիներին մեյոններ անվանում է նաև Պլինիոս Ավագը և տեղադրում Կոգամուս գետի հովտում՝ Տմոլուս լեռան հյուսիսային ստորոտին (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 110, p. 302): Կոգամուս գետը Հերմուս գետի վերին հոսանքի անվանումն է ձախակողմյան և աջակողմյան վտակներով:
[405] Հերոդոտոս, VI, 28: Կայիկոսի հովիտն աչքի էր ընկնում բացառիկ բերրիությամբ (տե՛ս Briant P., From Cyrus to Alexander, p. 500): Կայիկոսի հովտում էր գտնվում խեթական արձանագրություններում հիշատակվող Սեխա (գետի) երկիրը (տե՛ս Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը..., էջ 25, 43; Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, էջ 92-93; RGTC, VI, SS. 547-548):
[406] Քսենոփոն, Անաբասիս, էջ 195-197: Մեկ այլ տեղում Քսենոփոնը Թեբեական դաշտը հիշատակում է Մյուսիայից դուրս (տե՛ս Ксенофонт, Греческая история, с. 499):

տարածվել է Իդա լեռից հարավ գտնվող ծովափնյա Անտանդրոսից (ներկայիս Իլիջայի մոտ) մինչև Տևտրանիա (ներկայիս Բայլար-Թեփե), և այդ տարածքը նրա ժամանակ Լյուդիայի մեջ էր, իսկ մյուսիացիները շարժվել էին մայրցամաքի խորքը[407]: Հերմուս գետը, ըստ Ստրաբոնի, հոսում է Մյուսիայից[408], այսինքն՝ Մեոնիան հեղինակը համարում է մյուսիական տարածք: Ստրաբոնը հայտնում է, որ լյուդիացիներից հետո մյուսիացիներն են և Փիլադելփիա քաղաքը[409] ներկայիս Ալաշեհիրը: Փիլադելփիա քաղաքը, անկասկած, պետք է տեղադրել Լյուդիայի մեջ, քանի որ Ստրաբոնը տվյալ հատվածում լյուդիացիներին նեղ առումով տեղորոշում է միայն Սարդեսի շրջանում: Ստրաբոնը Տմոլուս լեռն ամբողջությամբ տեղադրում է Լյուդիայում, իսկ Մեսոգիս լեռը տարածվում է Կելեններից մինչև Միկալե: Համաձայն հեղինակի՝ Կելենեի և Ապամեայի մոտ լեռը զբաղեցրել են փռյուգիացիները, իսկ մյուս մասը՝ լյուդիացիները և մյուսիացիները, մնացած մասերը՝ կարիացիները և հոնիացիները[410]: Փաստորեն, լեռնաշղթայից հյուսիս ընկած լեռնաճյուղերը գտնվել են Լյուդիայի կազմում, իսկ մյուսիացիների մասին խոսք լինել չի կարող, քանի որ Մեսոգիս լեռից՝ ներկայիս Այդին լեռնաշղթայից կամ Քեստանեի Դաղից[411] հյուսիս ընկած էր Տմոլուս լեռը՝ ներկայիս Բոզդաղը, որը բաժանում էր մյուսիացի կոչվող մեոններին Մեսոգիս լեռից: Մեսոգիս լեռան և Տմոլուսի միջև գտնվել է Կաիստրա դաշտավայրը[412], որը Քսենոփոնի հիշատակած Կայստրու դաշտն է[413] ներկայիս Փոքր Մենդերեսի հովիտը: Լյուդիացիները հարավում հասել են մինչև Մեանդրոս գետը[414]:

Ինչ վերաբերում է II սատրապության մյուս ցեղերին, ապա Ստրաբոնը հիշատակում է կաբալներին, որոնց գավառը կոչվել է Կաբալիդա, պիսիդիացիներից արևմուտք, միլիացիներից հյուսիս, որտեղ գտնվում էր Կիբիրա քաղաքը, որի բնակիչները լյուդիացիների սե-

[407] Скилак Кариандский, с. 261. Հեղինակը հիշատակում է նաև բազմաթիվ բնակավայրեր, որոնց մասին տե՛ս անդ, էջ 261-262:
[408] Страбон, с. 586.
[409] Անդ, էջ 588:
[410] Անդ, էջ 589:
[411] DGRG, Vol. II, p. 332.
[412] Страбон, с. 586, 589. Կաիստրոս գետը կոչվում է Փոքր Մեանդրոս (տե՛ս Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 114):
[413] Կյուրոպեդիա, էջ 60:
[414] Страбон, с. 607.

րունդներն էին[415]: Ստրաբոնի տեղեկություններից պարզվում է, որ կաբալների բնակության բուն վայրը՝ Կիբիրա քաղաքի շրջանը, մտել է լյուդիական սատրապության մեջ: Կաբալների մասին Հերոդոտոսի տեղեկությունները[416] թույլ են տալիս ենթադրել, որ Քսերքսեսի ժամանակ կաբալները վարչական առումով միացվել են միլիացիներին, լյուկիացիներին, պիսիդիացիներին, այսինքն՝ մտել են I սատրապության մեջ: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ նույնպես կաբալների երկիրը լյուդիական սատրապության մեջ էր, իսկ պիսիդիացիները, որոնք հայտնի էին նաև սելգեր կամ սոլիմներ անուններով, և Տելմեսոս, Սագալաս քաղաքներով[417], թերևս առանձին վարչական միավորի մեջ էին[418], որը տվյալ ժամանակաշրջանում կենտրոնական իշխանությանը չէր ենթարկվում: Դատելով Արիանոսի տեղեկություններից՝ կաբալների երկրի արևելյան մասը նույնանում է Մեծ Փռյուգիայի Միլիաս կոչվող մարզին, որը հետագայում միացվել էր Լյուկիային[419]: Նկատենք, որ Դարեհ Ա-ի վարչական վերափոխումների հետևանքով լյուկիացիները և միլյուացիները ընդգրկվում են առաջին սատրապության մեջ[420]: Հերոդոտոսը հայտնում է, որ Լյուկիան հնում կոչվել է Միլյուաս, իսկ միլյուացիներն էլ հայտնի էին սոլյումներ անունով[421]: Վերջինս կապվում է պիսիդիացիներին տրվող սոլիմ անվանը, որը յուրացվել էր նվաճող պիսիդիացիների կողմից: Ալեքսանդրի մահից հետո Անտիպատրոսը Մեծ Փռյուգիան Լյուկիայի և Պամփ-

[415] Անդ, էջ 590-591: Կաբալների և Կիբիրայի մասին հիշատակում է նաև Հեկատեոս Միլեթացին (տե՛ս Müller C., FHG, Vol. I, fr. 223, p. 15): Կաբալների հետ, թերևս, կապված է Լաոդիկեայից արևելք ընկած Կաբալլուկոմե-Կաբալլան (տե՛ս Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 359):
[416] Հերոդոտոս, VII, 77:
[417] Արիանոս, էջ 49-50; Pliny, Natural History, Vol. II, V, 94, p. 292.
[418] Плутарх, Александр, XVIII, Избранные жизнеописания, т. II, с. 378; Արիանոս, էջ 49-50; Ռուփոս, էջ 411: Դիոդորոս Սիկիլիացին նույնպես Պիսիդիան համարում է առանձին երկիր (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 57, 75, 112):
[419] Արիանոս, էջ 45; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 500. Միլիասը Լյուկաոնիայում հիշատակում է Պլինիոս Ավագը (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 95, p. 292), որը պետք է ուղղել Լյուկիա: Բացառված չէ, որ Միլիասը կապված է Հերոդոտոսի Մյուլասայի հետ (տե՛ս Հերոդոտոս, I, 171; V, 121; Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 417), որն ավելի ուշ Մավսոլոսի մայրաքաղաքն էր մինչև Հալիկառնաս տեղափոխվելը (տե՛ս Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 426): Պոլիբիոսը Միլյուադան հիշատակում է Պամփյուլիայից արևմուտք (տե՛ս Polybius, The Histories, Vol. III, V, 77, p. 190):
[420] Հերոդոտոս, III, 90:
[421] Անդ, I, 173:

յուլիայի հետ տալիս է Անտիգոնոսին[422], այսինքն՝ կաբալների երկիրը նույնպես հայտնվում է նոր վարչաքաղաքական միավորի մեջ:

Կյուրոս Կրտսերը Լյուդիայի սատրապն էր և մերձծովյան շրջանների զորքերի ստրատեգոսը[423]: Վերջին պաշտոնը հիշատակում է նաև Հերոդոտոսը՝ Հյուդառնեսին համարելով Ասիայի առափնյա զորքերի զորավար[424]: Ստրատեգոս-զորավարի պաշտոնը համապատասխանում է հին պարսկական կարան եզրույթին (kāra-ից «զորք, ժողովուրդ»): Մասնագիտական գրականության մեջ պարսկական կարանի գործառույթների վերաբերյալ կա երկու տեսակետ: Համաձայն առաջինի՝ կարան համարված պարսից զորավարի ենթակայության տակ եղել են սատրապներ, այսինքն՝ կարանն ունեցել է վարչական ավելի բարձր նշանակություն: Մյուս տեսակետի համաձայն՝ կարան է համարվել ցանկացած պարսիկ զորավար, որը նշանակվել է արքայի կողմից ռազմական այս կամ այն արշավանքը գլխավորելու համար[425]: Հետաքրքիր է նաև, որ որոշ ուսումնասիրողներ Հյուդառնեսի պաշտոնն ընդունում են «Ասիայի առափնյա ժողովուրդների ստրատեգոս» թարգմանությամբ, ընդ որում՝ «առափնյա ժողովուրդներ» արտահայտությունը համապատասխան համարելով հին պարսկական *tayaiy drayahyā*-ին: «Առափնյա ժողովուրդների զորավարի» պաշտոնը կարող էր վերաբերել ինչպես Դասկիլեայի, այնպես էլ Լյուդիայի սատրապին[426]: Սակայն աշխարհագրական նման նույնացումը որևէ սատրապության հետ հիմնավորված չէ, քանի որ խոսքը վերաբերում է մերձծովյան շրջանների զորքերի հրամանատարին:

Ստրատեգոսի պաշտոնը Կյուրոս Կրտսերից առաջ և հետո կատարում էր Տիսսափեռնեսը՝ Լյուդիայի և Կարիայի սատրապը[427]: Ընդհանրապես սկզբնաղբյուրների տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել, որ Լյուդիայի սատրապը գոնե տարբեր ժամանակներում վերահսկողություն է ունեցել Էոլիայի և Հոնիայի հույների նկատմամբ[428]: Պլուտարքոսը Սարդեսը համարում է պարսիկների մերձասիածովյան տիրույթների գլխավոր հենակետը[429]: Արիանոսը հիշատակում է Լյուդիայի սատրապ Սպիթրիդատեսին[430]: Ալեքսանդր Մակեդոնացին ավելի ուշ Սարդեսը հանձնում է առանձին կառավարչի, իսկ Լյուդիայի մնացած մարզերի սատրապ է նշանակում Ասանդրոսին[431], չնայած Լյուդիան համարվում էր մեկ սատրապություն[432]:

Կոռնելիոս Նեպոսը Դաթամեսի ապստամբության մասին խոսելիս նշում է, որ Հոնիայի, Լյուդիայի և ամբողջ Փոյուգիայի, այսինքն՝ Մեծ և Փոքր, սատրապ Արիոբարզանեսը մ. թ. ա. 367 թվականին միանում է Դաթամեսին[433], որին հաջողվում է գրավել Կապադովկիան, Պափլագոնիան և Պիսիդիայի մի մասը[434]:

Սկիլաքս Կարիանդացու տեղեկությունները ցույց են տալիս, որ Մյուսիան սկզբնապես տարածվել է մինչև թրակիական Բոսփոր՝ ընդգրկելով նաև ամբողջ Ասկանիա՝ ներկայիս Իզնիկ լճի շրջանը[435]:

Դիոդորոս Սիկիլիացին Աքեմենյաններից առաջ և հետո նույնպես բազմիցս հիշատակում է Լյուդիան[436], ընդ որում՝ Լյուդիան գրեթե միշտ նշվում է Փոյուգիայի հետ: Դիոդորոսը հիշատակում է Մյուսիայի սատրապ Օրոնտեսին[437], որին մասնագիտական գրականության մեջ նույնացնում են Արմենիայի նույնանուն սատրապին[438]: Հետաքրքիր է, որ տվյալ տեղեկության մեջ Մյուսիան և Լյուդիան հիշատակվում են

[422] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110, 113:
[423] Plutarch's Lives, Vol. XI, Artaxerxes, II, 3, p. 130; Рунг Э. В., Греция и Ахеменидская держава, с. 277; Tuplin Ch., A Foreigner's Perspective: Xenophon in Anatolia, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (6th-4th Centuries B.C.), Istanbul, 2007, p. 12.
[424] Հերոդոտոս, VII, 135:
[425] Рунг Э. В., Тиссаферн и Гидарниды..., с. 19-21.
[426] Անդ, էջ 22-23:
[427] Քսենոփոն, Անաբասիս, էջ 8, 182; Ксенофонт, Греческая история, с. 304, 323; Xenophon, Scripta Minora, Agesilaus, I, 15, p. 66; Плутарх, Агесилай, IX, X, Избранные жизнеописания, т. II, с. 245-246; Thucydides, History of the Peloponnesian war, Vol. IV, Books VII-VIII, VIII, 5, 5, p. 198; Cornelius Nepos, by T. K. Arnold, E. A. Johnson, New-York, 1850, Agesilaus, 17, 2, 3; 3, 4, pp. 68-69; Cornelius Nepos (Loeb), Agesilaus, XVII, II, 3; III, 5; Polyaenus's Stratagems of War, by R. Shepherd, London, 1793, Agesilaus, II, I, 9, p. 53.

[428] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 242: Դիոդորոս Սիկիլիացին Կյուրոս Կրտսերին համարում է Լյուդիայի ու Փոյուգիայի սատրապ, որը Հոնիայի, Էոլիսի և հարակից շրջանների կառավարիչ էր նշանակել ընկերոջը՝ Թամոսին (Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, XIV, 19, p. 826):
[429] Плутарх, Александр, XVII, с. 377.
[430] Արիանոս, էջ 33:
[431] Անդ, էջ 34:
[432] Անդ, էջ 200: Ռուֆոս, էջ 315, 327, 411, 596:
[433] Cornelius Nepos, Datames, 14, 2, 5, p. 54; Cornelius Nepos (Loeb), Datames, XIV, II, 2, p. 512.
[434] Максимова М. И., Античные города юго-восточного Причерноморья, М.-Л., 1956, с. 105.
[435] Скилак Кариандский, с. 261.
[436] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17, 47, 57, 60, 75, 110, 112, 113:
[437] Briant P., From Cyrus to Alexander, pp. 642-643, 656, 658.
[438] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 75, 180; Weiskopf M., The so-called "great Satrap's revolt", pp. 11, 13, 18, 70-71.

առանձին սատրապներով, ինչը խոսում է վարչական փոփոխությունների մասին:

Աքեմենյան թագավորների հին պարսկական սեպագիր արձանագրություններում II սատրապության ցեղերից ու ժողովուրդներից հիշատակվում են լյուդիացիները, որոնք էլ ներկայացնում են նշված սատրապությունը: Ոսկով հարուստ Լյուդիան հին պարսկական արձանագրություններում հիշատակվում է մայրաքաղաք Սարդեսի անունով՝ հին պարսկերեն Սպարդա (լյուդիական արձանագրություններում śfard- կամ śvard-[439]) ձևով, և գրեթե միշտ Կապադովկիայի և Հոնիայի միջև կամ վերջինիս կողքին, կամ էլ առանց աշխարհագրական հաջորդականության[440]: Սատրապությունը հայտնի էր նաև սատրապական կենտրոն Սարդեսի անունով[441]:

Այսպիսով, Աքեմենյան Պարսկաստանի II սատրապությունը կամ Լյուդիան տերության հարուստ նահանգներից մեկն էր և պարսից արքունիքի համար ուներ բացառիկ նշանակություն, ինչը կապված էր Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության հետ: Այս իրավիճակով էլ պայմանավորված՝ լյուդիական սատրապության տարածքը պարբերաբար ենթարկվում էր վարչական վերաձևումների. որոշ ենթաշրջաններ դառնում էին առանձին սատրապություններ կամ միացվում էին հարևան սատրապություններին:

1.6. Մեծ ու Փոքր Փռյուգիաների տարածքը

Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգում Փոքր Ասիան, հատկապես վերջինիս արևմտյան և կենտրոնական շրջանները, ուներ առանձնահատուկ նշանակություն, քանի որ Աքեմենյանների հարաբերություններն Աթենքի կամ Սպարտայի հետ գրեթե միշտ լարված էին, և պատերազմական գործողությունների թատերաբեմ դառնում էին նաև Աքեմենյանների փոքրասիական տիրույթները, որոնց մեջ կարևոր նշանակություն ուներ III սատրապությունը:

Հույն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի III սատրապությանը, գրում է. «Դեպի ներս նավարկելիս աջակողմյան հելլեսպոնտոսցիներից, փռյուգիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիններից և սիրիացիներից (ստացվող) հարկը երեք հարյուր վաթսուն տաղանդ (էր). այս նահանգը երրորդն էր»[442]: Պատմիչի տեղեկությունից պարզվում է, որ III սատրապությունը տարածվել է Փոքր Ասիայի հյուսիսային և կենտրոնական հատվածների մեծ մասի վրա, ընդ որում՝ Փռյուգիան և սիրիացիների երկիրը՝ Կապադովկիան[443], ընդգրկել են հսկայական շրջաններ: Ստորև կքննենք Հերոդոտոսի և մյուս հեղինակների տեղեկություններն Աքեմենյան դարաշրջանի Փռյուգիայի և III սատրապության կազմում հիշատակված մնացած երկրների վարչական ու պատմաաշխարհագրական իրողությունների վերաբերյալ:

Ասկանիայից (հավանաբար ներկայիս Իզնիկ լճի շրջանը) եկած փռյուգիացիները մասնակցել են Տրոյական պատերազմին[444]: Հերոդոտոսի հաջորդ տեղեկությունը վերաբերում է Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի էթնիկական կազմի նկարագրությանը: Պատմիչը փռյուգիացիների մասին հաղորդում է հետևյալը. «Փռյուգիացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր դրանից: Մակեդոնացիներն ասում են, թե փռյուգները, քանի դեռ բնակվում էին Եվրոպայում՝ մակեդոնացիների հարևանությամբ, կոչվում էին բրիգներ. բայց Ասիա տեղափոխվելուց հետո իրենց երկրի հետ փոխեցին նաև իրենց անունը՝ (կոչվելով) փռյուգներ: Արմենները ևս, լինելով փռյուգիական վերաբնակիչներ, զինված էին փռյուգների նման: Այս երկուսին առաջնորդում էր Արտոքմեսը, որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ»[445]: Արմենների հիշատակությանն արդեն անդրադարձել ենք[446], և դատելով Պլատեայի ճակատամարտին փռյուգիացիների առանձին հիշատակությունից[447], առավել հավանական է ենթադրել, որ փռյուգիացիներն արշավանքին մասնակցել են առանձին հրամանատարության տակ՝ միավորված չլինելով այլ ժողովրդի կամ ժողովուրդների հետ: Հերոդոտոսը փռյուգիացիներին հիշատակում է Կրեսոսին հպատակ ժողովուրդների թվում, որոնք բնակվել են

[439] Herzfeld E., The Persian Empire, pp. 100, 311.
[440] Kent R., Նշվ. աշխ., էջ 117, 136, 141, 143, 145, 151, 156:
[441] Thucydides, History of the Peloponnesian war, Vol. I, Books I-II, I, 115, 4, p. 190.

[442] Հերոդոտոս, III, 90:
[443] Տե՛ս Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները Աքեմենյան Պարսկաստանի կազմում, ԼՀԳ, 2010, թիվ 1-2, էջ 107-118:
[444] Հոմերոս, Իլիական, II, 360; Vassileva M., Phrygia and the southern Black Sea littoral, in: The Danubian Lands between the Black, Aegean and Adriatic Seas (7th Century BC-10th Century AD), ed. G. R. Tsetskhladze, A. Avram and J. Hargrave, Oxford, 2015, p. 91.
[445] Հերոդոտոս, VII, 73:
[446] Տե՛ս Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 2005, թիվ 3, էջ 181:
[447] Հերոդոտոս, IX, 32:

Հալյուս գետից արևմուտք[448]: Պատմիչի հաջորդ տեղեկություններից ևս պարզվում է, որ լյուդիացիներից արևմուտք գտնվող փռյուգիացիներն արևելքում հասել են մինչև սահմանային Հալյուս գետը[449]:

Փռյուգիայի տարածքով էր անցնում նաև պարսից «արքայական ճանապարհի» մի հատվածը. «Լյուդիայի և Փռյուգիայի միջով անցնող հատվածում կա քսան կայան, իսկ (ճանապարհի այդ հատվածի) երկարությունը իննսունչորս և կես փարսախ է: Փռյուգիայից հետո (ճանապարհը) տանում է դեպի Հալյուս գետը, որտեղ (լեռնային) դարպասներն են, որոնցով անցնելուց հետո կտրում-անցնում ես գետը: Անցարանում կա ուժեղ ամրացված պահակակետ: Այնուհետև, Կապադովկիա մտնելով, ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ»[450]: Այս տեղեկությունից պարզվում է, որ Հերոդոտոսի ժամանակ Փռյուգիայի որոշակի մի հատվածից, որը կարող է լինել ներկայիս Անկարայի շրջանը, «արքայական ճանապարհի» երթուղու մի հատվածը մինչև Հալյուս գետը, չի մտել Փռյուգիայի մեջ, ուրեմն՝ Հալյուսից արևմուտք Աննկյուրայի ուղղությամբ ընկած հատվածը գտնվել է Կապադովկիայի կազմում[451]:

Մինչև Դարեհ Ա-ի ձեռնարկած վարչական վերափոխումները Փռյուգիան Լյուդիայի և Հոնիայի հետ կազմել է մեկ սատրապություն[452]: Այս սատրապությունը կառավարում էր Օրոյտեսը, որը սպանվում է Դարեհ Ա-ի հրամանով[453]: Փռյուգիայում բնակվել են վերաբնակեցված պայոնները[454]:

Հերոդոտոսի հաջորդ հաղորդման մեջ կան պատմաաշխարհագրական կարևոր բնույթի տեղեկություններ, որոնց պարզաբանումը թույլ է տալիս կատարելու տեղագրական ճշգրտումներ և նույնացումներ: Հերոդոտոսը գրում է, որ Կրիտալլայից շարժվող «պարսիկները (նկատի ունի Քսերքսեսի պարսկական բանակը-Խ. Հ.), անցնելով Հալյուս գետը, մտան Փռյուգիա և, այդ երկրի միջով ընթանալով, հասան Կելայնե, որտեղ գտնվում են Մեանդրոս գետի և Մեանդրոսից ոչ

[448] Անդ, I, 28:
[449] Անդ, I, 72; V, 49; VII, 26:
[450] Անդ, V, 52:
[451] Այս մասին տե՛ս Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները..., էջ 114-115:
[452] Հերոդոտոս, III, 127:
[453] Անդ, III, 128: Դիոդորոսը և Աթենիոսը նույնպես խոսում են Դարեհ Ա-ի կողմից Հոնիայի, Դասկիլեայի և Սարդեսի հետ վերադարձնելու մասին (տե՛ս Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 110-111):
[454] Հերոդոտոս, V, 98:

պակաս խոշոր Կատարրակտես կոչված գետի ակունքները: Կատարրակտեսը բխում է Կելայնեի վաճառատեղից և թափվում Մեանդրոս գետը»[455]: Հերոդոտոսի տեղեկությունից ակնհայտ է, որ Հալյուս գետը բաժանում էր Կապադովկիան Փռյուգիայից: Մեր կարծիքով, Քսերքսեսը Հալյուս գետն անցնում է ներկայիս Քըրըքկալեի հատվածում, որն «արքայական ճանապարհի» կարևոր անցումներից էր[456], իսկ Կապադովկիայի Կրիտալլան էլ տեղադրվում է ներկայիս Յոզղադի շրջանում[457]: Հերոդոտոսի՝ Կելայնե քաղաքի տեղադրությունը որոշակի դժվարություն է ներկայացնում այն առումով, որ հույն պատմիչը չի նշում Քսերքսեսի անցած ճանապարհն ըստ փարսախների, հետևաբար տեղագրական նույնացումները պետք է առավել հստակեցվեն այլ աղբյուրների համեմատությամբ: Մեանդրոս գետը բազմիցս հիշատակվում է հին հեղինակների կողմից, իսկ Կատարրակտես անունը նշանակում է ջրվեժ: Կելայնեի տեղադրության համար պետք է նկատի ունենալ, որ Հերոդոտոսը Մեանդրոսի և Կատարրակտեսի ակունքները դնում է նույն քաղաքի շրջանում, ընդ որում՝ հաջորդ տեղեկության մեջ արդեն Կատարրակտեսի ակունքներն է դնում Կելայնե քաղաքում, իսկ գետն էլ թափվում է Մեանդրոս գետը: Վերջինս նույնանում է ներկայիս Մեծ Մենդերես գետին[458], հետևաբար Կելայնե քաղաքն էլ տեղադրվում է ներկայիս Դինար քաղաքի շրջանում[459]՝ Կատարրակտեսի ակունքներում: Այսպիսի տեղադրությամբ Կելայնեն համապատասխանում է հին Ապամեային[460]: Այնուհետև Քսերքսեսը, «անցնելով Անավա կոչված փռյուգիական քաղաքը և լիճը, որտեղից աղ էին ստանում, հասնում է Փռյուգիայի Կոլոսսայ կոչված խոշոր քաղաքը: Այստեղ Լյուկոս գետը թափվում է երկրի բացվածքի մեջ և անհետանում. բայց մոտավորապես հինգ ասպարեզ անցնելուց հետո, նորից հայտնվելով, թափվում է Մեանդրոսի մեջ: Կոլոսսայից զորքը շարժ-

[455] Անդ, VII, 26:
[456] Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները..., էջ 113:
[457] Կրիտալլայի նույնացումը Տիանային ընդունելի չէ (տե՛ս DGRG, Vol. I, pp. 579-580; Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 41):
[458] Հմմտ. DGRG, Vol. II, p. 243.
[459] Иванчик А. И., Адиего И., Новая лидийская надпись из Келен и проблема лидийского присутствия во Фригии в эпоху Ахеменидов, ВДИ, 2015, 1, с. 15. Հնարավոր է, որ Դարեհ Ա-ի օրոք Կելայնեն մտել է Լյուդիայի կազմի մեջ (անդ, էջ 22-23):
[460] Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 41. Տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 106, p. 300; French D., Pre- and Early-Roman Roads of Asia Minor. The Persian Royal Road, Iran, Vol. 36, 1998, pp. 17.

վեց դեպի Փռյուգիայի և Լյուդիայի սահմանը և հասավ Կյուդրարա քաղաքը, որտեղ կա հողի մեջ խրված կոթող. այն կանգնեցրել է Կրեսոսը. դրա վրա կա արձանագրություն, որը նշագծում է այդ սահմանը:

Փռյուգիայից նա մտավ Լյուդիա, որտեղ ճանապարհը բաժանվում է: Դեպի ձախ այն տանում է Կարիա, իսկ դեպի աջ՝ Սարդես: Այս ճանապարհով գնալիս պետք է անցնել Մեանդրոս գետը և գնալ Կալլատեբոս քաղաքի մոտով, որտեղ արհեստագործ մարդիկ մոշենուց և այլուրից մեղր են պատրաստում: Այս ճանապարհով գնալիս Քսերքսեսը պատահեց սոսու, որին, նրա գեղեցկության պատճառով, նա ընծայեց ոսկե զարդ և նրա պահպանումը հանձնարարեց անմահներից մեկին: Հաջորդ օրը նա հասավ Լյուդիայի մայրաքաղաք»[461]:

Կելայնեից արևմուտք ընկած Անավա քաղաքը համանուն լճով նույնանում են ներկայիս Չարդակին և Աղիգյոլ լճին: Կոլոսսայ քաղաքն էլ գտնվել է Չարդակից արևմուտք և համապատասխանում է Լյուկոսի Լաոդիկեային[462] ներկայիս Դենիզլիի կամ Հոնազի մոտ, որից հյուսիս Կյուդրարա քաղաքն էր՝ հավանաբար Հիերապոլիսը: Ինչպես տեսնում ենք, Քսերքսեսը շարժվել է Մեանդրոսի ձախափնյակով և Հիերապոլիսից հյուսիս անցել է գետը, որը բաժանում էր Փռյուգիան Լյուդիայից: Կալլատեբոս քաղաքը գտնվում էր Մեանդրոս գետից հյուսիս՝ Կոգամոս գետի ձախափնյակում, և տեղադրվում է, հավանաբար, հետագայի Փիլադելփիա քաղաքի շրջանում՝ Սարդես տանող ճանապարհին:

Հերոդոտոսի տեղեկությունների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեն նաև Քսենոփոնի տեղեկությունները Կյուրոս Կրտսերի բանակի անցած երթուղու վերաբերյալ: Ըստ «Անաբասիս»-ի՝ Կյուրոսը «ճանապարհ ընկավ Սարդեսից և անցավ Լյուդիայի վրայով 3 կայան՝ 22 փարսախ, մինչև Մեանդրոս գետը: Սրա լայնքը երկու պլեթրոն է, և այնտեղ կամուրջ կար՝ յոթ նավի վրա կապած: Անցնելով գետը՝ նա արշավեց Փռյուգիայի միջով մի կայան՝ ութ փարսախ ճանապարհ, մինչև Կոլոսսոս, որը բազմամարդ, հարուստ ու խոշոր քաղաք էր... Այստեղից առաջ ընթացավ երեք կայան՝ 20 փարսախ, մինչև Կելենե՝ Փռյուգիայի բազմամարդ, խոշոր և հարուստ քաղաքը: Այստեղ Կյուրոսն ապարանք ուներ և ընդարձակ պարտեզ... Պարտեզի միջով հոսում է Մեանդրոս գետը, իսկ նրա ակունքները ապարան-

[461] Հերոդոտոս, VII, 30-31:

[462] Կոլոսսայը նույնացվել է բյուզանդական ժամանակաշրջանի Խոնային (տե՛ս Ramsay W. M., The Cities and Bishoprics of Phrygia, Vol. I, Oxford, 1895, pp. 208, 213): Լյուկոսի Լաոդիկեան հիշատակում է Պլինիոս Ավագը (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 105, p. 298):

քի ներսում էին: Գետը հոսում է նաև Կելենե քաղաքի միջով: Կելենեում գտնվում է նաև մեծ արքայի ամրացված ապարանքը՝ միջնաբերդից ներքև՝ Մարսիաս գետի ակունքների մոտ: Սա ևս անցնում է քաղաքի միջով ու թափվում Մեանդրոս գետը: Մարսիասի լայնքը 25 ոտք է...

Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչև Պելտե բազմամարդ քաղաքը: Այստեղից առաջ ընթացավ երկու կայան՝ 12 փարսախ, մինչև Կերամոն-ագորա (բառացի՝ խեցեղենի շուկա-խ. Հ.) կոչված մարդաշատ քաղաքը, որը գտնվում է Մյուսիայի ծայր սահմանում: Այստեղից առաջ է ընթանում երեք կայան՝ 30 փարսախ, մինչև Կավստրուպեդիոն մարդաշատ քաղաքը...

Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչև Թյումբրիոն մարդաշատ քաղաքը: Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչև Տյուրիայոն մարդաշատ քաղաքը:

Այստեղից առաջ ընթացավ երեք կայան՝ 20 փարսախ, մինչև Իկոնիոն՝ Փռյուգիայի վերջին սահմանային քաղաքը: Այստեղ երեք օր մնաց: Այստեղից առաջ ընթացավ Լիկաոնիայի միջով հինգ կայան՝ 30 փարսախ»[463]:

Քսենոփոնի վկայությունների համեմատությունը Հերոդոտոսի տեղեկությունների հետ թույլ է տալիս ոչ միայն տեսնել որոշ տեղանունների և գետանունների նույնացումը, այլև էլ ավելի մանրամասն ուսումնասիրել և ներկայացնել Փռյուգիայով անցնող ճանապարհահատվածը՝ կատարելով տեղագրական պարզաբանումներ: Քսենոփոնի ժամանակ նույնպես Մեանդրոս գետը Լյուդիան բաժանում էր Փռյուգիայից, որտեղ առաջինը հիշատակված Կոլոսսոս քաղաքը նույնանում է Հերոդոտոսի Կոլոսսային, որտեղից անցնելով մոտ 120 կմ՝ հասնում է Կելենե՝ Հերոդոտոսի Կելայնե քաղաքին: Մարսիաս գետն էլ նույնանում է Հերոդոտոսի Կատարրակտեսին: Կելենեից Կյուրոս Կրտսերի բանակը շարժվում է Պելտե քաղաքը, որը գտնվում էր 50-60 կմ հեռու: Պելտեից 60-70 կմ հեռու գտնվում էր Կերամոն-ագորա քաղաքը, որը, ըստ Քսենոփոնի, գտնվել է Մյուսիայի ծայր սահմանում կամ, ավելի ճիշտ, Մյուսիայի ուղղությամբ[464]: Կերամոն-ագորայից անցնելով 160-180 կմ՝ Կյուրոս Կրտսերի բանակը հասնում է Կավստրուպեդիոն քաղաքը: Պելտեից մինչև Կավստրուպեդիոն Կյուրոս Կրտսերի անցած երթուղին որոշ հակասությունների տեղիք է տալիս, և պատա-

[463] Քսենոփոն, Անաբասիս, էջ 10-12:

[464] Xenophon, Anabasis, Vol. III, Books I-VII, p. 14.

հական չէ, որ ուսումնասիրողները երթուղին Կելենեից տարել են հյուսիս՝ դեպի Պելտե, այնուհետև Մեանդրոսից հյուսիս տեղադրել են Կերամոն-ագորան, որը գտնվել է Մյուսիային մոտ կամ վերջինիս ուղղությամբ: Կերամոն-ագորայից պարսկական բանակի երթուղին կրկին թեքվել է դեպի արևելք և հասել մինչև Կավստրուպեդիոն քաղաքը[465]: Անկասկած, նման երթուղին տարակարծությունների տեղիք է տալիս, քանի որ հարց է ծագում, թե ինչու՞ Կյուրոս Կրտսերի բանակը պետք է իր ճանապարհը շեղեր հյուսիս, ապա կրկին շարժվեր դեպի արևելք, այն դեպքում, երբ Աքեմենյան արքայորդու նպատակն ի սկզբանե դեպի արևելք շարժվելն էր: Հարկավ, եթե Կյուրոսը մոտենում էր Մյուսիայի սահմանին, ապա դրա համար լուրջ պատճառներ պետք է ունենար, ինչը Քսենոփոնի պատմածից չի երևում: Հաջորդ կարևոր հարցն այն է, որ Քսենոփոնը չի նշում Մեանդրոսը կրկին գետանցելու մասին, հետևաբար Կերամոն-ագորայի տեղադրությունը գետից հյուսիս արդեն կասկածելի է: Կերամոն-ագորան մասնագիտական գրականության մեջ տեղադրվել է Ուշակից հյուսիս-արևելք[466]: Մեր կարծիքով, Մյուսիայի հիշատակությունը Քսենոփոնի հիշյալ տեղեկության մեջ ուշ շրջանի ընդմիջարկություն է, և հավանաբար, Կերամոն-ագորան շփոթվել է մեկ այլ քաղաքի հետ, որտեղ խեցեղենի առևտուրը և արտադրությունը նույնպես զարգացած է եղել՝ պատճառ դառնալով օտարների համար քաղաքանվան փոփոխությանը: Պելտեի նույնացումը ներկայիս Սանդըկլըին, որը Պևտինգերյան քարտեզի Պելլան է[467], հավանական է: Այսպիսի նույնացման պարագայում Կերամոն-ագորան համապատասխանում է Սանդըկլըից հյուսիս ընկած Աֆյոնին, որը կարևոր ճանապարհային հանգույց է և վարչական կենտրոն: Կերամոն-ագորայից հետո ճանապարհը հասել է մինչև Կավստրուպեդիոն, ընդ որում՝ ճանապարհի երկարությունը, ըստ Քսենոփոնի, կազմել է 30 փարսախ կամ մոտ 180 կմ, ինչը մեր տեղագրական նույնացումների դեպքում շատ է:

Կավստրուպեդիոնը տեղադրվում է Աֆյոնից հարավ-արևելք և համապատասխանում է ներկայիս Ակշեհիրի շրջանին, որից հետո գտնվող Իլղինը նույնանում է Թյումբրիոնին, իսկ Սաիթելին՝ Տյուրիա-

[465] Տե՛ս, օրինակ, Xenophon, Anabasis, գրքին կից քարտեզը:
[466] DGRG, Vol. I, p. 590.
[467] DGRG, Vol. II, p. 572.

յոնին[468]: Փռյուգիայում Կյուրոս Կրտսերի վերջին հանգրվանը՝ Իկոնիոնը՝ ներկայիս Կոնիան, սահմանային քաղաք էր, որից հետո պարսից արքայազնը մտնում է Լիկաոնիա:

Համաձայն Քսենոփոնի՝ Կյուրոս Կրտսերը Լյուդիայի, Մեծ Փռյուգիայի և Կապադովկիայի սատրապն էր և Կաստոլոսի դաշտում հավաքվող պարսկական զորքերի ստրատեգոսը[469]: Քսենոփոնի տեղեկությունից պարզվում է, որ Կյուրոս Կրտսերին էր հանձնված Աքեմենյան Պարսկաստանի II և III սատրապությունների կառավարումը, ընդ որում՝ հետաքրքիր է, որ հույն հեղինակը խոսում է Մեծ Փռյուգիայի՝ որպես առանձին վարչական միավորի մասին: Քսենոփոնը տարբեր առիթներով ևս հիշատակում է Փռյուգիան՝ որպես առանձին սատրապություն, որը գտնվել է բյութանացիներից՝ Ասիայի թրակացիներից հարավ[470]: «Կյուրոպեդիա»-ում ևս Քսենոփոնը բազմիցս խոսում է զույգ՝ Մեծ և Հելլեսպոնտոսյան Փռյուգիաների մասին[471], ինչը վկայում է այն մասին, որ երկու Փռյուգիաները Կյուրոս Մեծի ժամանակ եղել են առանձին վարչական միավորներ[472], որոնք Դարեհ Ա-ի օրոք միավորված են եղել նույն սատրապության մեջ:

Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ Կյուրոս Կրտսերը Լյուդիայի և Փռյուգիայի կառավարիչներ է նշանակում իր ազգականներին[473]: Հեղինակը նաև հիշատակում է Փռյուգիայի Կոլոսսոս քաղաքը[474]: Հեղինակը տարբեր առիթներով Աքեմենյանների տիրապետությունից և՛ առաջ, և՛ հետո առանձին-առանձին հիշատակում է Մեծ և Հելլեսպոնտոսյան Փռյուգիաները[475]: Ալեքսանդրի մահից հետո Պերդիկկասը,

[468] Մասնագիտական գրականության մեջ Թյումբրիոնը նույնացվել է Հադրիանոպոլիսին, իսկ Տյուրիայոնը գտնվել է Կյոլի-թոլուի մոտ (տե՛ս Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 40):
[469] Քսենոփոն, Անաբասիս, էջ 7, 31: Պելտան, Թյումբրիոնը, Տյուրիայոնը Լյուկաոնիայի կազմում հիշատակում է Պլինիոս Ավագը (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 95, p. 292):
[470] Քսենոփոն, Անաբասիս, էջ 127, 150, 197:
[471] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 35, 60, 146, 241, 285-287, 355:
[472] Հերոդոտոսը հայտնում է, որ Կյուրոս Մեծի ժամանակ Օրոյտեսը Սարդեսի հյուպարքոսն էր, իսկ Միտրոբատեսը՝ Դասկիլեյա նահանգի կառավարիչը (տե՛ս Հերոդոտոս, III, 120): Համմտ. Shourkaei H. B., La satrapie de Phrygie hellespontique (Daskyleion): des origines à la chute de l'Empire perse achéménide, DABIR, 2018, № 5, p. 2.
[473] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 57:
[474] Անդ, էջ 70:
[475] Անդ, էջ 17, 75, 80, 82, 110-113: Տե՛ս նաև Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 17, 18, pp. 121-122.

ըստ Դիոդորոսի մի տեղեկության, Անտիգոնոսին է տալիս Պամփյուլիան, Լյուկիան և Մեծ Փռյուգիան, իսկ համաձայն մյուսի՝ Լյուկիան և Մեծ Փռյուգիան[476]: Կյուրոս Կրտսերի մահից հետո Արտաքսերքսես Բ-ն Տիսսափեռնեսին է հանձնում ծովափնյա սատրապությունների կառավարումը[477]:

Փռյուգիայի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Արիանոսը և Ռուփոսը: Արիանոսը գրում է, որ Ալեքսանդրը ներխուժում է Մեծ Փռյուգիայի Միլիաս մարզը, որը պարսից թագավորի հրամանով միացվել էր Լյուկիային[478]: Փռյուգիան, ըստ պատմիչի, եղել է առանձին սատրապություն[479]: Հելլեսպոնտոսի մոտի Փռյուգիան, որը հեղինակն անվանում է նաև Փռյուգիա, նույնպես եղել է առանձին սատրապություն՝ Արսիտոսի ղեկավարությամբ[480]: Արիանոսը երկու Փռյուգիաները հիշատակում է որպես Ալեքսանդրի նվաճած երկրներ[481]: Արիանոսի հիշատակած Ասկանիա աղի լիճը համապատասխանում է Հերոդոտոսի Անավային, իսկ Փռյուգիայի սատրապի նստավայր Կելենեն՝ Կելայնեին[482]: Վերջինս Մեծ Փռյուգիայի կենտրոնն էր[483]: Պատմիչը Գորդիոնը տեղադրում է Փռյուգիայում՝ Սանգարիոս գետի հովտում, որի ակունքները գտնվել են Փռյուգիայում[484]: Պոմպեոս Տրոգոսը Գորդիոնը տեղադրում է Մեծ ու Փոքր Փռյուգիաների միջև[485]՝ վերջինիս, այսինքն՝ Հելեսպոնտոսյան Փռյուգիայի հարավային սահմանը հասցնելով մինչև Գորդիոն: Արիանոսն Անկյուրան համարում է Գալատիայի քաղաքներից մեկը[486], ինչն ուշ շրջանի պատմաաշխարհագրական իրողությունների հետ է կապված, և հենց պատմիչի խոսքից էլ ակնհայտ է, որ նշված տարածքը մտել է Փռյուգիայի կազմի մեջ՝ Փռյուգիայի սատրապի ղեկավարությամբ: Հետաքրքիր են նաև Ռուփոսի

[476] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110, 113:
[477] Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, XIV, 35, p. 844.
[478] Արիանոս, էջ 45: Միլիաս մարզի հետ, հավանաբար, կապված է Հեկատեոս Միլեթացու՝ Փռյուգիայում հիշատակած մյուլիսիններ ժողովուրդը (տե՛ս Müller C., FHG, Vol. I, fr. 206, p. 14):
[479] Արիանոս, էջ 46:
[480] Անդ, էջ 28, 33, 117:
[481] Անդ, էջ 200, 251:
[482] Անդ, էջ 51:
[483] Plutarch's Lives, Vol. VIII, Eumenes, 8.5, p. 103; Briant P., From Cyrus to Alexander, p. 705.
[484] Արիանոս, էջ 51:
[485] Pompei Trogi Fragmenta, collegit O. Seel, Lipsiae, 1961, 11, 7, 3, p. 86.
[486] Արիանոս, էջ 57:

տեղեկությունները: Ռուփոսը հիշատակում է Կելենե քաղաքը և Մարսիուս գետը[487]: Պատմիչը գրում է, որ Փռյուգիայում ավելի շատ գյուղեր կային, քան քաղաքներ, որոնցից ամենանշանավորը Սանգարիոսի հովտում գտնվող Գորդիոնն էր[488]: Ռուփոսը ևս հիշատակում է Անկյուրան, այն տարբերությամբ, որ Ալեքսանդրը մտնում է նախ Պափլագոնիա, հետո Կապադովկիա[489]: Հեղինակը Փռյուգիան նշում է որպես Ալեքսանդրի նվաճած երկրներից մեկը[490]: Ալեքսանդրի մահից հետո Լյուկիան Պամփյուլիայի և Մեծ Փռյուգիայի հետ բաժին է հասնում Անտիգոնոսին, իսկ Հելլեսպոնտոսին սահմանակից Փոքր Փռյուգիան՝ Լեոնատոսին[491]: Պոլիբիոսը նույնպես խոսում է զույգ Փռյուգիաների մասին[492]: Փաստորեն Մեծ և Փոքր Փռյուգիաների վարչական առանձին միավորներ լինելու հանգամանքը վկայված է նաև Աքեմենյան Պարսկաստանի մայրամուտին, հետևաբար ստորև կփորձենք հստակեցնել Փոքր Փռյուգիայի ընդգրկած տարածքը:

Աշխարհագրական առումով Փոքր Փռյուգիան համապատասխանում է III սատրապության կազմում հիշատակված աջակողմյան հելլեսպոնտոսցիներին, որոնց հաջորդում են փռյուգիացիները:

Հերոդոտոսը մի առիթով հիշատակում է Հելլեսպոնտական երկրի տիրաններ Դափնիս Աբյուդոսցուն, Հիպոկլոս Լամպսակոսցուն, Հերոփանտոս Պարիոնցուն, Մետրոդորոս Պրոկոնեսցուն, Արիստագորաս Կյուզիկոսցուն, Արիստոն Բյուզանդիոնցուն, նաև Հելլեսպոնտոսյան քերսոնեսոսցիների զորապետին[493]: Նշված քաղաքների տեղադրությունը ցույց է տալիս, որ Հերոդոտոսը Հելլեսպոնտական երկրին աշխարհագրական առումով տալիս է ընդարձակ տարածք՝ Բյուզանդիոնից մինչև Դարդանել, այն դեպքում, երբ այլ տեղեկության մեջ Հելլեսպոնտոսը միայն Դարդանելի նեղուցն է[494]: Հերոդոտոսը հելլեսպոնտոսցիներին ընդարձակ իմաստով է հիշատակում նաև Քսերքսեսի բանակի կազմում[495]: Եթե մի կողմ թողնենք Բյուզանդիոնի և մեկ

[487] Ռուփոս, էջ 279:
[488] Անդ, էջ 280:
[489] Անդ, էջ 281:
[490] Անդ, էջ 411: Փռյուգիացիների մասնակցությունը Գավգամելայի ճակատամարտին բացառվում է (անդ, էջ 351):
[491] Անդ, էջ 596:
[492] Polibii Historiae, Vol. IV, X, 49, p. 87.
[493] Հերոդոտոս, IV, 137-138:
[494] Անդ, IV, 85:
[495] Անդ, VII, 95: Աբյուդոսցիներն առանձին են հիշատակվում, բայց նույն հելլեսպոնտոսցիներն են:

այլ տեղում հիշատակված հելլեսպոնտոսյան Սեստոսի[496] տեղադրությունները, որոնք վերաբերում են ձախակողմյան Հելլեսպոնտոսին, ապա Հերոդոտոսի հիշատակած հելլեսպոնտական քաղաքների տեղադրությունը արևելքում կեզրագծվի Կյուզիկոս քաղաքով: Այս առումով հետաքրքիր է Արիանոսի այն տեղեկությունը, որ Փոքր Փոյուգիայի սատրապ Արսիտոսն իր սատրապությունն է փախչում Գրանիկոս գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտից անմիջապես հետո, ընդ որում՝ պատմիչի հիշատակած Զելեա քաղաքը[497] գտնվում է Գրանիկոսից արևելք, Կյուզիկոսից հարավ[498]: Ստացվում է, որ Դարդանելից մինչև Կյուզիկոս ընկած տարածքը չի մտել Աքեմենյան Պարսկաստանի III սատրապության մեջ և տվյալ ժամանակաշրջանում ներառվել է Լյուդիական սատրապության մեջ: Նշված տարածքի վերաբերյալ հին աղբյուրների տեղեկությունները բացահայտում են կարևոր վարչաքաղաքական իրողություններ:

Այսպես, ըստ Հերոդոտոսի՝ Անտանդրոսը և Լամպոնիոնը գտնվել են Տրոյական երկրում, իսկ Դարդանոսը, Աբյուդոսը, Պերկոտեն, Լամպսակոսը, Պայսոսը, Պարիոնը համարում է Հելլեսպոնտոսի քաղաքներ[499]: Հույն պատմիչի մեկ այլ տեղեկությունից էլ պարզվում է, որ Տրովադայում բնակվել են նաև էոլիացիներ[500]: Քսենոփոնն առանձին-առանձին հիշատակում է Էոլիսը, Փոյուգիան, Տրովադան և Փառնաբազոսի երկիրը[501]: Տվյալ տեղեկության մեջ Փոյուգիան նույնանում է Մեծ Փոյուգիային, իսկ Փառնաբազոսի Փոյուգիան Հելեսպոնտոսյան Փոյուգիան է, հետևաբար՝ տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Տրովադան չի ենթարկվել Փառնաբազոսին և վարչական առումով գտնվել է Լյուդիական սատրապության մեջ: Քսենոփոնի տեղեկություններից մեկում էլ Տրովադան տեղադրվում է Լամփսակոսից հարավ և ձգվել է մինչև Իդե կամ Իդա լեռը ու Անտանդրոս քաղաքը, որոնցից հետո Մյուսիան էր[502]: Ստրաբոնը գրում է, որ Տրովադան հնում կոչվել է փոյուգիական, քանի որ Տրոյայի կործանումից հետո

[496] Անդ, VII, 33; 78, IX, 114:
[497] Արիանոս, էջ 28, 33:
[498] Sekunda N. V., Persian Settlement in Hellespontine Phrygia, AH III, Method and Theory, ed. by A. Kuhrt, H. Sancisi-Weerdenburg, Leiden, 1988, p. 180.
[499] Հերոդոտոս, V, 26, 117: Սկիլաքս Կարիանդացին Դարդանոսը տեղադրում է Տրովադայում, իսկ Աբյուդոսը և մյուս քաղաքները՝ Փոյուգիայում (տե՛ս Скилак Кариандский, с. 261):
[500] Հերոդոտոս, V, 122:
[501] Քսենոփոն, Անաբասիս, էջ 127:
[502] Անդ, էջ 195:

վերջինիս տիրեցին փոյուգիացիները, և նշում, որ Հոմերոսը Տրովադայի սահմանը հյուսիսում և արևելքում հասցնում էր մինչև Էսեպուս՝ ներկայիս Գյոնենչայ գետը[503]: Ընդ որում, Էսեպուսից արևմուտք ընկած որոշ տարածքներ հետագայում պատկանել են կյուզիկոսցիներին[504]: Պլինիոս Ավագն էլ գրում է, որ Տրովադան տարածվել է Հելլեսպոնտոսի ափին[505]:

Քսենոփոնը հայտնում է, որ Փոյուգիայի սատրապ Փառնաբազոսը փորձում է փակել հելլենների մուտքը դեպի իր սատրապություն՝ օգնության գալով բյութանացիներին[506]: Փառնաբազոսը (մ. թ. ա. 414-388 թթ.[507]) Փոքր կամ Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի կառավարիչն էր, որը նույնանում է բյութանիացիների սատրապ Փառնաբազոսին[508], այսինքն՝ Դարեհ Ա-ի ժամանակ ձևավորված III սատրապության մեջ ներառված աջակողմյան հելլեսպոնտոսցիները և Ասիայի թրակացիները կամ բյութանիացիները մ. թ. ա. V դարի վերջին հանդես են գալիս որպես առանձին սատրապություն, իսկ Քսենոփոնի հիշատակած Արտակամասը[509] Մեծ Փոյուգիայի սատրապն էր:

Հերոդոտոսը գրում է, որ Օրոյտեսի սատրապության կազմում էին Փոյուգիան, Լյուդիան և Հոնիան[510]: Պատմիչը նաև հայտնում է, որ Օրոյտեսը սպանում է Դասկիլեյոնի կամ Դասկիլեայի կառավարիչ Միտրոբատեսին[511]: Դասկիլեա սատրապությունը գտնվել է Կյուզիկոս քաղաքից արևելք[512]: Դասկիլեյոն քաղաքը, հավանաբար, հիմնադրել են լյուդիացիները. մայրաքաղաքի անունը կապված է Գյուգեսի հոր՝ Դասկյուլոսի անվան հետ[513]:

[503] Страбон, с. 450, 529.
[504] Անդ, էջ 539, 544-545, 548-549, 554:
[505] Pliny, Natural History, Vol. II, V, 121, p. 310.
[506] Քսենոփոն, Անաբասիս, էջ 150, 155, 161; Xenophon, Scripta Minora, Agesilaus, I, 23, p. 70.
[507] Փառնաբազոսի և Դասկիլեայի սատրապների մասին մանրամասն տե՛ս Рунг Э. В., О сатрапских династиях в Ахеменидской державе: Фарнакиды в Даскилии, Ученые записки Казанского университета, т. 153, кн. 3, 2011, с. 87-94; Shourkaei H. B., La satrapie de Phrygie hellespontique..., pp. 8-9.
[508] Քսենոփոն, Անաբասիս, էջ 197:
[509] Անդ: Պլուտարքոսի հիշատակած Վերին Փոյուգիան պարսիկ սատրապի գլխավորությամբ նույնանում է Մեծ Փոյուգիային (տե՛ս Плутарх, Фемистокл, XXX, Избранные жизнеописания, т. I, с. 241):
[510] Հերոդոտոս, III, 127:
[511] Անդ, III, 120; 126:
[512] Անդ, VI, 33:
[513] Անդ, I, 8: Տե՛ս նաև Свенцицкая И. С., Ионийские города в составе Лидийского царства, с. 255.

Քսենոփոնը «Հունական պատմություն» գրքում նշում է, որ Ագեսիլայոսը ներխուժում է Փառնաբազոսի Փոյուգիա և սկսում այն ավերել[514]: Փառնաբազոսը «Անաբասիս»-ում հիշատակված Փոքր Փոյուգիայի և Բյութանիայի սատրապն է, որի երկրից Ագեսիլայոսը մտնում է Պափլագոնիա[515]: Փառնաբազոսի նստավայրն էր Դասկիլիոնը[516]: Կարելի է ենթադրել նաև, որ Փառնաբազոսի իշխանության մեջ էր նաև Մեծ Փոյուգիան, որի Գորդիոն քաղաքը Փառնաբազոսի ձմեռային նստավայրն էր, իսկ Կելենը Մեծ Փոյուգիայի ամենամեծ քաղաքն էր, որի մոտ գտնվում էին Մեանդրոս գետի ակունքները[517]: Քսենոփոնի տեղեկությունից կարելի է ենթադրել, որ Կյուզիկոսը Փառնաբազոսի սատրապության մեջ էր մտնում, իսկ հոնիացիներից, էոլիացիներից հետո հիշատակվող Հելլեսպոնտոսի բնակիչները մտել են Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի մեջ[518]: Փառնաբազոսի իշխանության մեջ էին նաև Քաղկեդոնը և Աբյուդոսը[519]: Փառնաբազոսին ենթակա սատրապություններից էր նաև Էոլիսը[520]: Դասկիլեյոն սատրապությունը Քսերքսեսի ժամանակ հիշատակում է Թուկիդիդեսը[521]: Դասկիլիոնը նվաճում է Պարմենիոնը Գրանիկոսի ճակատամարտից հետո[522]: Դասկիլեյոնը գտնվում էր Պրոպոնտիսի հարավային ափին՝ Կյուզիկոսից արևելք՝ Ռինդակուս գետի մոտ[523]: Ի. Դյակոնովը Փոքր Փոյուգիան տեղադրում է Սանգարիոս գետի և Մարմարա ծովի միջև[524]:

Ստրաբոնը Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի մեջ ներառում էր նաև Տրովադան[525]: Ըստ Ստրաբոնի՝ Փոյուգիան բաժանված էր երկու մա-

[514] Ксенофонт, Греческая история, с. 334; Плутарх, Агесилай, X, XI, Избранные жизнеописания, т. II, с. 246-247.
[515] Ксенофонт, Греческая история, с. 334. Плутарх, Алкивиад, XXXVII, XXXIX, Избранные жизнеописания, т. I, с. 386-387.
[516] Ксенофонт, Греческая история, с. 310, 324, 336, 502. Դասկիլիոնը Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի սատրապի նստավայրն էր (տե՛ս Briant P., From Cyrus to Alexander, p. 697): Հավանաբար գտնվել է ներկայիս Էրգիլի շրջանում (տե՛ս Petit Th., Satrapes et satrapies..., p. 181):
[517] Ксенофонт, Греческая история, с. 256, 491, 501.
[518] Անդ, էջ 248, 255, 337, 346; Плутарх, Алкивиад, XXVIII, с. 377-378.
[519] Ксенофонт, Греческая история, с. 249, 250, 254-255, 306, 364.
[520] Անդ, էջ 306, 313, 371: Տե՛ս նաև Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 195; Рунг Э. В., Греция и Ахеменидская держава, с. 287, 293.
[521] Thucydides, History of the Peloponnesian war, Vol. I, I, 129, 1, p. 216.
[522] Արիանոս, էջ 34:
[523] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 347; Ксенофонт, Греческая история, с. 501.
[524] Дьяконов И., Предыстория армянского народа, с. 193.
[525] Страбон, с. 129.

սի՝ Մեծ Փոյուգիա, որին տիրել էր Միդասը, և Փոքր Փոյուգիա, որը գտնվում էր Հելլեսպոնտոսի և Օլիմպոսի մոտ ու հայտնի էր նաև Փոյուգիա Էպիկտետ անունով, որին առաջ տիրում էին բյութանիացիները[526]: Փոյուգիա Էպիկտետը, որը բառացի նշանակում է «վերամիավորված», արևելքում հասել է մինչև Ասկանիաս լիճը՝ ներկայիս Իզնիկը, իսկ արմուտքում ձգվել է Տրոյայից հեռու[527]: Դատելով Ստրաբոնի տեղեկություններից՝ Փոյուգիա Էպիկտետի մեջ չէր մտնում Պրոպոնտիսի հարավային մերձափնյա շրջանը, այն դեպքում, երբ Աքեմենյան Պարսկաստանի գոյության ժամանակաշրջանում Դասկիլեյոնը մտնում էր Փոքր Փոյուգիայի մեջ: Անկասկած, այս բոլոր փոփոխությունները տեղի են ունեցել ավելի ուշ, և Ստրաբոնը հիմնականում արտացոլում է իր դարաշրջանի պատմաաշխարհագրական իրողությունները: Այսպես, կյուզիկոսցիներին պատկանում էին Զելան և Դասկիլիտիս լիճը[528], որը, մեր կարծիքով, նույնանում է ներկայիս Ապոլյոնտ լճին: Դասկիլեյոն քաղաքը[529] տեղադրվում է ներկայիս Յենիքյոյի տեղում[530]՝ Սիմավ գետի գետաբերանում: Փոքր կամ Հելլեսպոնտոսյան Փոյուգիան տարածվում էր ներկայիս Սիմավ գետի և Իզնիկ լճի միջև ընկած տարածքում՝ հարավում ձգվելով մինչև ներկայիս Քյոթահյա:

Հետաքրքիր են Փոյուգիայի մասին Սկիլաքս Կարիանդացու տեղեկությունները: Պատմիչի տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Փոյուգիան ընդգրկել է ոչ միայն Ռինդակոս գետի ավազանը՝ ներկայիս Կոջաչայ, Կիրմաստի, Սիմավ գետերի հոսանքները, այլև Սիմավ գետի գետաբերանից արևմուտք՝ մինչև Դարդանելի նեղուց և արևելք՝ մինչև Ասկանիաս լիճն ընկած ծովափնյա շրջաններ[531]: Սկիլաքսի Փոյուգիան ընդգրկում է Մեծ և Փոքր Փոյուգիաները՝ վերջինիս մեջ արևմտյան ուղղությամբ ընդգրկելով նաև ընդարձակ տարածքներ: Կարծում ենք, որ Սկիլաքսի տեղեկությունները վերաբերում են ոչ միայն նրա ապրած ժամանակաշրջանին՝ մ. թ. ա. VI դա-

[526] Անդ, էջ 510, 535:
[527] Անդ, էջ 529: Եթե նկատի ունենանք, որ Կերամոն-ագորան Քսենոփոնը տեղադրում է Մյուսիայում, ապա Անկյուրայի շրջանը մտել է Մյուսիայի, ոչ թե Փոյուգիա Էպիկտետի մեջ (անդ, էջ 540): Պլինիոս Ավագը Փոյուգիան՝ Կելայնե, Կոլոսսայե և այլ քաղաքներով, տեղադրում էր Տրովադայի հետևում (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, 145, p. 328):
[528] Страбон, с. 539.
[529] Հմմտ. Страбон, с. 545.
[530] Herzfeld E., The Persian Empire, p. 312.
[531] Скилак Кариандский, с. 261.

րին, այլև հետագա շրջանի գրիչներին, որոնք արտացոլել են տարբեր դարաշրջանների պատմաաշխարհագրական իրողությունները: Օրինակ, երբ արևմուտքում Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի մեջ Սկիլաքսը հիշատակում է Կյուզիկոս քաղաքը, ապա վերջինս Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի մեջ գտնվել է մ. թ. ա. V դարի վերջին-մ. թ. ա. IV դարի սկզբին, հետևաբար այս հանգամանքը չէր կարող վերաբերել ավելի վաղ ժամանակներին: Մյուս կողմից էլ նկատենք, որ Սկիլաքսը ընդհանրական ձևով է խոսում Փոյուգիայի մասին՝ առանց վարչական տարբերակման, և ըստ էության, հետագա գրիչները, նկատի ունենալով Փոքր կամ Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի գոյությունը, վերջինիս մեջ են ներառում նաև Հելլեսպոնտոսի հարավի ընդարձակ մերձափնյա տարածքները, այսինքն՝ նրանց աշխարհագրական պատկերացումները պայմանավորված են եղել այն մոտեցմամբ, որ Փոքր Փոյուգիայի Հելլեսպոնտոսյան անվանումը պետք է ընդգրկեր ծովափնյա ընդարձակ շրջանները, ինչը չի հաստատվում մյուս աղբյուրների քննությամբ: Մյուս կողմից էլ Հերոդոտոսի հիշատակած աջակողմյան հելլեսպոնտոսցիները՝ որպես III սատրապության վարչական ենթաշրջան, Դարեհ Ա-ից հետո միավորվում են նույն սատրապության մեկ այլ ընդարձակ վարչական ենթաշրջանի՝ Փոյուգիայի հետ, ինչից հետո աջակողմյան հելլեսպոնտոսցիների երկիրը կոչվում է Փոքր Փոյուգիա: Անշուշտ, կարելի է ենթադրել, որ աշխարհագրական առումով աջակողմյան հելլեսպոնտոսցիները տարածվել են Դարդանելի նեղուցից մինչև Ասկանիաս՝ ներկայիս Իզնիկ լիճը, սակայն սկզբնաղբյուրների քննությունը վերևում այլ պատկեր ներկայացրեց: Ասվածին ավելացնենք, որ աջակողմյան հելլեսպոնտոսցիների ընդգրկած տարածքի արևմտյան մասը, ամենայն հավանականությամբ, անցնում է II սատրապությանը, և ըստ այդմ էլ՝ Ստրաբոնը փոյուգիական տարածքները հասցնում էր Տրոյայից այն կողմ, կամ էլ Տրովադայի մի մասը Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի մեջ էր[532]:

Ինչ վերաբերում է Աքեմենյան սեպագիր արձանագրություններում աջակողմյան հելլեսպոնտոսցիների կամ լայն առումով Դասկիլեա սատրապության հիշատակությանը, ապա այս հարցի կապակցությամբ մեր դատողությունները հետևյալն են: Ռ. Շմիտտը, գտնելով Թեմիստոկլեսի, այսպես կոչված, 16-րդ նամակում մի արտահայտություն[533], որը համապատասխանում է հին պարսկական «նրանք (այն երկրները), որոնք ծովի մոտ են», ինչպես նաև «ծովի մոտ ապրող ժողովուրդների թագավորի սատրապ» արտահայտություններին, ցույց է տվել, որ «հոնիացիներին, որոնք ծովի մոտ են» պետք է տեղադրել Պրոպոնտիսում, այսինքն՝ Դասկիլեա սատրապությունում[534]:

Հին պարսկական սեպագիր արձանագրություններում հանդիպող աշխարհագրական բառակապակցություններին անդրադարձել ենք մեկ այլ ուսումնասիրության մեջ[535] և ստորև կատարենք մի քանի դիտարկումներ՝ կապված Ռ. Շմիտտի ենթադրության հետ:

Հին պարսկական սեպագիր արձանագրություններում փոքրասիական և էգեյան ծովի հույները հիշատակվում են Հոնիա կամ հոնիացիներ, իսկ էգեյան ծովի հյուսիսային ափերին բնակվող հույները՝ վահանակիր կամ սաղավարտակիր հույներ անվանումներով[536]: Մեր կարծիքով, Դասկիլեա սատրապության տարածքը արտացոլված չէ հին պարսկական ոչ մի սեպագիր արձանագրությունում: Այսպես, DPe արձանագրությունում Հոնիան առանձին հիշատակված չէ, և փոխարենը Կապադովկիայից, Լյուդիայից հետո հիշատակվում են «ցամաքային հույները և նրանք, որոնք ծովի մոտ են, և երկրները, որոնք ծովի մյուս կողմում են» (Katpatuka : Sparda : Yaunā : tyaiy : uškahyā : utā : tyaiy : drayahyā : utā : dahyāva : tyā : para : draya :)[537]: Ցամաքային հույները համապատասխանում են փոքրասիական կամ I սատրապության հույներին, «նրանք, որոնք ծովի մոտ են»՝ վահանակիր հույներին, իսկ «անդրծովյան երկրները», որոնք հիշատակվում են նաև DSaa-ում[538], տեղադրվում են Մակեդոնիայում, Թրակիայում և Դանուբի գետաբերանի շրջանում:

Մնացած արձանագրություններում տեղ գտած աշխարհագրական հասկացությունները սոսկ հիմնավորում են մեր դատողությունները և թույլ տալիս մեկ անգամ ևս նշել, որ Դասկիլեա սատրապությունն ուղղակիորեն հիշատակված չէ հին պարսկական սեպագիր այս կամ այն

[532] Страбон, с. 129, 529.

[533] Themistoclis Epistolae, XVI, p. 755, in: Epistolographi Graeci, ed. R. Hercher, Parisiis, 1873.

[534] Schmitt R., Die achaimenidische Satrapie tayaiy drayahyā, Historia, Vol. 21, 1972, SS. 522-527.

[535] Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Եր., 2010, էջ 35-39:

[536] Անդ, էջ 37:

[537] Kent R., Նշվ. աշխ., էջ 136; Lecoq, p. 228.

[538] Lecoq, p. 246.

արձանագրության որևէ աշխարհագրական հասկացության մեջ: Ամենայն հավանականությամբ, Դասկիլեա սատրապության և ընդհանրապես III սատրապության տարածքը հին պարսկական սեպագիր արձանագրություններում արտահայտված է Կապադովկիա երկրի անվան տակ:

1.7. III սատրապության մյուս ժողովուրդները

Ասիայի թրակացիներ: Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի կազմում ասիական թրակացիները հետևյալ կերպ են նկարագրվում. «Թրակացիներն արշավում էին՝ գլուխներին աղվեսի մորթուց գլխարկով. մարմնի վրա նրանք հագել էին խիտոններ, իսկ դրա վրայից՝ խայտաբղետ թիկնոցներ. ոտներին ու ծնկներին նրանք կապել էին եղնիկի մորթուց պատրաստած մույկեր: Բացի այդ, նրանք կրում էին տեգեր, թեթև վահաններ և փոքր դաշույններ: Ասիա անցնելուց հետո նրանք կոչվել են բիթյուններ, մինչդեռ հնում, ինչպես իրենք են պատմում, կոչվել են ստրիմոնյաններ, որպես Ստրիմոն գետի մոտ բնակվողներ: Ինչպես պատմում են, իրենք իրենց երկրից քշվել են տևկրերի և մյուսիացիների կողմից: Ասիական թրակացիներին առաջնորդում էր Արտաբանոսի որդի Բասսակեսը»[539]: Ինչպես տեսնում ենք, ասիական թրակացիների մյուս անվանումն էր բիթյուններ:

Հերոդոտոսը թրակացիներին և բիթյուններին հիշատակում է Կրեսոսին ենթակա ժողովուրդների շարքում[540], այսինքն՝ թրակացիների մի մասը հիշատակվում է նաև բիթյուններ անվանումով: Իսկ միևնույն տեղեկության մեջ թրակացիների և բիթյունների միջև հիշատակվող թյունները, հավանաբար, բյութանիացիներին ցեղակից թրակական ցեղեր էին, որոնց եվրոպական հատվածին բազմիցս հիշատակում է Քսենոփոնը[541]:

Թյունները զբաղեցրել են Կալպեից արևմուտք ընկած ծովափնյա շրջանները մինչև Բոսփորի նեղուց, իսկ բյութանիացիները՝ ավելի ներս ընկած շրջանները[542]: Ստրաբոնը նույնպես բիթյուններին և թյուններին համարում է թրակիական ցեղեր[543]:Քսենոփոնը գրում է, որ հույն վարձկաններն անցնում են նաև թրակացիների կամ բյութանիացիների երկրով, որոնց տարածքում էր գտնվում Կալպե նավահանգիստը[544]: Ըստ հույն պատմիչի՝ «ասիական Թրակիան սկսվում է մուտքից և տարածվում մինչև Հերակլեյա, ներս՝ դեպի Պոնտոս նավղի աջ կողմում: Իսկ Կալպե ծովախորշը գտնվում է Հերակլեյայի և Բյուզանդիոնի միջև ընկած տարածության մեջտեղում»[545], այսինքն՝ Քսենոփոնը ասիական Թրակիայի արևմտյան սահմանը սկսում է Բոսփորի նեղուցից կամ ավելի կոնկրետ Ասիայի կամ Քաղկեդոնիայի Քրյուսոպոլիս քաղաքից[546]՝ հասցնելով մինչև Հերակլեյա: Դատելով Քսենոփոնի տեղեկություններից՝ Բյութանիան Փռյուգիայի հետ կազմել է առանձին սատրապություն[547]: Քաղկեդոնցիներին հարևան էին բյութանիական թրակացիները կամ Բյութանիան[548], ինչը կապված էր աթենացիների, լակեդեմոնացիների և պարսիկների միջև տեղի ունեցող ռազմական գործողություններով, և պատահական չէ, որ Քաղկեդոնի կարգավիճակի հետ կապված հարցերը քննարկվում են Փառնաբազոսի հետ[549]:

Բյութանիա-Բիթյունիան տարբեր առիթներով հիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին[550]: Համաձայն Արիանոսի՝ Սանգարիոս գետը հոսում է բյութանիական թրակացիների երկրով և թափվում Եվքսինյան ծովը[551]: Ստրաբոնը Բյութանիայի սահմանը հասցնում է մինչև Սանգարիոս գետը, իսկ Ասկանիաս լիճը տեղադրում է Բյութանիայում[552]:

Պափլագոնացիներ: Պափլագոնացիները մասնակցել են Տրոյական պատերազմին[553]: Խոսելով հայուսյան մատիենների մասին՝ Հեկատեոսը գրում է, որ «Հիոպեն մատիենների քաղաքն է, Գորդիոնի

---

[539] Հերոդոտոս, VII, 75:
[540] Անդ, I, 28:
[541] Քսենոփոն, Անաբասիս, էջ 169-170, 177-179:
[542] Հմմտ. Pliny, Natural History, Vol. II, V, 150, p. 334.
[543] Страбон, с. 509.

[544] Քսենոփոն, Անաբասիս, էջ 144:
[545] Անդ, էջ 147:
[546] Անդ, էջ 160-161; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 70: Այս նույն սահմաններն է նշում նաև Սկիլաքս Կարիանդացին (տե՛ս Скилак Кариандский, с. 261): Տե՛ս նաև Pliny, Natural History, Vol. II, V, 150, p. 332.
[547] Քսենոփոն, Անաբասիս, էջ 150, 155, 197; Michels Ch., The Persian Impact on Bithynia, Commagene, Pontus, and Cappadocia, CO, Band 19, 2017, p. 42.
[548] Ксенофонт, Греческая история, с. 254, 310.
[549] Плутарх, Алкивиад, XXXI, с. 379-380.
[550] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17, 70:
[551] Արիանոս, էջ 52:
[552] Страбон, с. 510, 530.
[553] Հոմերոս, Իլիական, II, 350: Տե՛ս նաև Manoledakis M., The Southern Black Sea in the Homeric *Iliad*: Some Geographical, Philological and Historical Remarks, in: Exploring the Hospitable Sea. Proceedings of the International Workshop on the Black Sea in Antiquity (Thessaloniki, 21-23 September 2012), ed. by M. Manoledakis, British Archaeological Reports Series, Oxford, 2013, pp. 19-20.

հարևանությամբ», և որ «Հիոպե քաղաքում բնակիչները հագնվում էին պափլագոնացիների նման»[554]:

«Կյուրոպեդիա»-ի տեղեկություններից պարզվում է, որ Կյուրոս Մեծը Պափլագոնիայում սատրապ չի նշանակում, քանի որ երկիրը կամավոր էր ենթարկվել պարսից իշխանությանը[555]: Համաձայն Հերոդոտոսի՝ Կրեսոսին հպատակվել են նաև պափլագոնացիները, որոնք կապադովկյան սիրիացիներից հյուսիսում բաժանվել են Հալյուս գետով[556]: Պափլագոնացիները նույնպես մասնակցում են հունական արշավանքին. «Պափլագոնացիներն արշավում էին գլուխներին հյուսկեն սաղավարտ դրած, փոքր վահաններով և ոչ մեծ նիզակներով, ինչպես նաև տեգերով ու դաշույններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կոշիկներ, որոնք հասնում էին մինչև սրունքի կեսը: Լիգիացիների, մատիենների, մարիանդինների և սիրիացիների հանդերձանքը նույնական էր պափլագոնականի հետ: Պափլագոնացիներին և մատիեններին առաջնորդում էր Դոտոսը՝ Մեգասիդրոսի որդին, իսկ մարիանդիններին, լիգիացիներին և սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի և Արտյուստոնեի որդի Գոբրյուեսը»[557]:

Մ. թ. ա. V դարի վերջին Պափլագոնիան, որի առաջնորդն էր Կորյուլասը, տարածվում է Հալյուսից արևելք՝ հասնելով մինչև Կոտյուորա քաղաքը[558]: Համաձայն Քսենոփոնի՝ Սինոպ քաղաքը գտնվում էր պափլագոնացիների երկրում[559]: Պափլագոնիայի թագավոր Կոտիսը ընդդեմ Փառնաբազոսի դաշնակցում է Ագեսիլայոսի հետ՝ տալով նրան ռազմական ուժեր[560]: Պափլագոնիան արևմուտքում՝ Հալյուս գետից այն կողմ, հասել է մինչև Պարթենիոս գետը[561]՝ ներկայիս Բարտին-սուն կամ, ավելի ճիշտ, Ենիջեն, որի ակունքները, ըստ Ստրաբոնի, գտնվել են Պափլագոնիայում[562], այսինքն՝ խոսքը վերաբերում է Պարթենիոսի աջակողմյան վտակներին:

Ավելի ուշ, արշավելով Անկյուրայից, Ալեքսանդր Մակեդոնացին

[554] Müller C., FHG, Vol. I, p. 13.
[555] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 355:
[556] Հերոդոտոս, I, 6; 72:
[557] Անդ, VII, 72:
[558] Քսենոփոն, Անաբասիս, էջ 121-122, 124, 137, 197; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 69:
[559] Քսենոփոն, Անաբասիս, էջ 139; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 69:
[560] Плутарх, Агесилай, XI, с. 247; Xenophon, Scripta Minora, Agesilaus, III, 4, p. 100; Debord P., L'Asie Mineure au IVe siècle (412-323 a. C.), Bordeaux, 1999, pp. 112-113.
[561] Քսենոփոն, Անաբասիս, էջ 142; Manoledakis M., The Southern Black Sea in the Homeric *Iliad*, p. 23.
[562] Страбон, с. 510.

նվաճում է Պափլագոնիան[563]: Ալեքսանդրի մահից հետո Պափլագոնիան Կապադովկիայի հետ անցնում է Եվմենոսին[564]: Արիանոսը հաղորդում է, որ Ալեքսանդրը չի արշավում Պափլագոնիա, քանի որ վերջինս կամավոր ընդունում է մակեդոնացիների իշխանությունը. Պափլագոնիան հանձնվում է Փռյուգիայի սատրապ Կալատոսի կառավարմանը[565]:

Մարիանդիններ: Հեկատեոս Միլեթացին հիշատակում է մարիանդինների Ստեփանիս քաղաքը[566], որը նույնանում է Սկիլաքս Կարիանդացու Ստեփանային[567]՝ ներկայիս Իստիֆանին: Սրանք հիշատակվում են Կրեսոսին հպատակ ժողովուրդների շարքում[568]:

Համաձայն «Անաբասիս»-ում պահպանված տեղեկությունների՝ մեգարացիների գաղութ Հերակլեյան՝ Կարադենիզ Էրեղլին, գտնվել է մարիանդինների երկրում, որից արևմուտք ասիական թրակացիների երկիրն էր[569]: Մարիանդինների երկրում Հերակլեյա քաղաքը, Լյուկոս և Հիպիաս գետերը հիշատակում է Սկիլաքս Կարիանդացին[570]: Լյուկոս գետը՝ ներկայիս Գյույունդըշ-սուն, հիշատակում է նաև Քսենոփոնը[571], իսկ Հիպիասը ներկայիս Բոյուկ-Մելան-չայ գետն է[572]: Ստրաբոնը մարիանդիններին, որոնց ոմանք անվանում են կավկոններ, համարում է թրակիական ժողովուրդ կամ պափլագոնացիներ[573], սակայն, ըստ էության, մարիանդինները եղել են Փոքր Ասիայի հնագույն բնակչությունը: Կավկոններին Ստրաբոնը հիշատակում է մարիանդիններից արևելք՝ մինչև Պարթենիոս գետը[574]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ III սատրա-

[563] Արիանոս, էջ 200; Ռուփոս, էջ 281, 328, 411; Плутарх, Александр, XVIII, Избранные жизнеописания, т. II, с. 378.
[564] Ռուփոս, էջ 596; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 15:
[565] Արիանոս, էջ 57:
[566] Müller C., FHG, Vol. I, fr. 201, p. 14.
[567] Скилак Кариандский, с. 261.
[568] Հերոդոտոս, I, 28:
[569] Քսենոփոն, Անաբասիս, էջ 142, 147: Տե՛ս նաև Pliny, Natural History, Vol. II, VI, 4, p. 340; Manoledakis M., The Local Peoples of the Southern Black Sea Coast, in: CA 18, Essays on the Archaeology and Ancient History of the Black Sea Littoral, ed. by M. Manoledakis, G. R. Tsetskhladze and I. Xydopoulos, 2018, p. 149.
[570] Скилак Кариандский, с. 261.
[571] Քսենոփոն, Անաբասիս, էջ 142:
[572] Скилак Кариандский, с. 267.
[573] Страбон, с. 270, 327, 508.
[574] Անդ, էջ 509; Manoledakis M., The Local Peoples of the Southern Black Sea Coast, p. 152.

պությունն ունեցել է ընդարձակ տարածք, որի սահմաններն Աքեմենյան տիրապետության ընթացքում փոփոխվում էին, և նույն սատրապության նախկին ենթաշրջաններ որոշ դեպքերում վերակազմավորվում են առանձին սատրապությունների:

1.8. Կապադովկիայի տարածքը և սահմանները

Պատմահայր Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի III սատրապության էթնիկական կազմին, գրում է. «Դեպի ներս նավարկելիս աջակողմյան հելլեսպոնտոսցիներից, փոյուգիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդինների և սիրիացիներից (ստացվող) հարկը երեք հարյուր վաթսուն տաղանդ էր. այս նահանգը երրորդն էր»[575]:

Պատմահայրը տարբեր առիթներով մի քանի անգամ ևս հիշատակում է նշված ցեղերին ու ժողովուրդներին, որոնցից կքննենք սիրիացիներին վերաբերող հին տեղեկությունները:

Հերոդոտոսը հաղորդում է, որ կապադովկիացիներին հելլեններն անվանում են սիրիացիներ, որոնք նախքան պարսկական տիրապետությունը հպատակ էին մեդացիներին, և երկու տերությունների միջև սահմանը Հալյուս գետն էր, որը, ըստ պատմիչի, հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով, այնուհետև շարունակում է հոսել՝ աջից մատիեններին և ձախից փոյուգիացիներին ունենալով: Շարունակելով իր տեղեկությունները՝ Հերոդոտոսը գրում է, որ անցնելով մատիենների և փոյուգիացիների երկրները՝ գետը հոսում է հյուսիս՝ բաժանելով կապադովկյան սիրիացիներին՝ աջում, պափլագոնացիներից՝ ձախում՝ թափվելով Եվքսինյան Պոնտոսը[576]: Բերված տեղեկությունից հստակ երևում է, որ կապադովկյան սիրիացիները և մատիենները տեղորոշվում են Հալյուսի աջ ափին, արևմուտքում՝ ձախ ափին՝ սահմանակցելով փոյուգիացիներին և պափլագոնացիներին, ընդ որում, դատելով տեղեկությունից, կապադովկիացիները գտնվել են Հալյուսի

[575] Հերոդոտոս, III, 90: Տե՛ս նաև Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. II, Cambridge-Massachusetts-London, 1957, Loeb Classical Library, III, 90, p. 119; Геродот, История в девяти книгах, перевод и примичания Г. Стратановского, Л., 1972, III, 90.

[576] Հերոդոտոս, I, 72: Տե՛ս նաև Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. I, Cambridge-Massachusetts-London, 1960, Loeb Classical Library, I, 72, pp. 87-88. Աքեմենյան արքաների արձանագրություններում Կապադովկիան հիմնականում հիշատակվում է Հայաստանի և Լյուդիայի միջև (տե՛ս, օրինակ, Kent R. G., Old Persian. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953), սակայն այդ հիշատակությունները մեր քննության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:

ոլորանի շրջանում բնակվող մատիեններից հյուսիս[577]: Եթե մատիենները գետի հակառակ ափին սահմանակցել են փոյուգիացիներին, ապա կապադովկիացիներն էլ՝ պափլագոնացիներին: Մեկ այլ տեղեկությունում ևս Հերոդոտոսը նշում է սիրիացիների (կապադովկիացիների) և պափլագոնացիների հարևանության մասին՝ գրելով, որ Հալյուսը հոսում է նրանց երկրների միջով և դուրս գալիս Եվքսինոս կոչված Պոնտոսը[578]: Միաժամանակ Պատմահայրը հաղորդում է, որ Կրեսոսը տիրում էր Հալյուսից արևմուտք բնակվող ազգերի վրա, և իրոք, Հերոդոտոսի՝ Կրեսոսին հպատակ ժողովուրդների հիշատակումը[579] բոլորին կապում է Հալյուսից արևմուտք ընկած երկրների հետ, և պատահական չէ, որ Կրեսոսն իր արշավանքն ուղղում է Կապադովկիայի դեմ՝ ձգտելով այդ երկիրը միացնել իր տիրույթներին: Անցնելով Հալյուսը՝ Կրեսոսը հասնում է Կապադովկիայի Պտերիա վայրը և սկսում ամայացնել սիրիացիների դաշտերը: Պտերիայում՝ Կապադովկիայի ամենաամրացված մասում, որը գտնվում էր Եվքսինյան Պոնտոսի Սինոպեին շատ մոտ, բախվելով Կյուրոսի զորքին, Կրեսոսը նահանջում է Սարդես[580]: Հալյուսի աջափնյակում գտնվող Պտերիան պատմագիտական գրականության մեջ նույնացվել է Բողազ-քյոյին[581], սակայն այս նույնացումը, մեր կարծիքով, կասկածելի է: Կրեսոսի կողմից Հալյուսն անցնելու կապակցությամբ Հերոդոտոսը գրում է. «Երբ Կրեսոսը հասավ Հալյուս գետը, իր զորքերը, ինչպես ենթադրում եմ (իմա՛ Հերոդոտոսը-Խ. Հ.), մյուս ափն անցկացրեց այնտեղ գտնվող կամուրջներով, մինչդեռ հելլենները, ընդհանրապես, պատմում են, թե (զորքը) անցկացրեց Թալես Միլեթացին: Քանզի Կրեսոսը,-ինչպես պատմում են հելլենները,- մտահոգված էր, թե ինչպես զորքերը պետք է անցկացնի գետից, քանի որ ***այդ ժամանակ չկային այժմյան կամուրջները*** (ընդգծումը մերն է -Խ. Հ.)»[582]: Պատմելով, թե ինչպես Թալեսը կազմակերպեց բանակի անցումը գետի մյուս ափը, ի վերջո, Հերոդոտոսը կասկածում է այս պատմության ճշմարտացիությանը,

[577] Մատիենների տեղադրության մասին տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ, ՄՄԱԵԺ, XXVI, 2007, էջ 25-35:

[578] Հերոդոտոս, I, 6:

[579] Անդ, I, 28: Հերոդոտոսը հայտնում է նաև, որ Կրեսոսին չէին ենթարկվում կիլիկեցիները և լյուկիացիները:

[580] Անդ, I, 76:

[581] Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, p. 33.

[582] Հերոդոտոս, I, 75:

իսկ կամուրջների մասին հիշատակությունը խոսում է այդ շրջանում «արքայական ճանապարհի» երթուղու մի հատվածի մասին: Սակայն, դատելով որոշ փաստերի համադրությունից, հենց Հերոդոտոսի ենթադրությունն է կասկածելի: Նախ այն հանգամանքը, որ Պտերիան գտնվել է Սինոպեին մոտ, արդեն որոշակի տեղագրական ճշգրտումների տեղիք կարող է տալ: Ուրեմն, Կրեսոսի արշավանքն ուղղված է եղել Սև ծովի հարավային ափամերձ հատվածի վրա, ինչը պայմանավորված էր ոչ միայն ընդհանուր արտաքին քաղաքական լարվածությամբ՝ կապված Կյուրոսի հետ սպասվող պատերազմի հետ, այլ նաև այն իրավիճակով, որ ստեղծվել էր Հալյուսի ստորին հոսանքի շրջանում (տե՛ս ստորև): Այսպես, համաձայն Հերոդոտոսի, Սինոպեն գտնվել է Պափլագոնիայի կազմում, իսկ Ստրաբոնի հաղորդմամբ Ամիսոսը պատկանում էր լևկո-սիրիացիներին, որոնց Պափլագոնիայից բաժանում էր Հալյուսը[583]: Դատելով Ստրաբոնի տեղեկություններից՝ սիրիացիները միաժամանակ բնակվել են Սինոպեում և նրա շրջակայքում[584]: Իսկ Պլուտարքոսն էլ գրում է, որ Սինոպեն պատկանել է սիրիացիներին[585]: Սկիլաքս Կարիանդացին նույնպես Սինոպեն համարում է Ասորեստանի (իմա՛ Կապադովկիայի) մասը[586]: Սկզբնաղբյուրների տարաբնույթ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Հալյուսը Պափլագոնիայի և Կապադովկիայի համար հանդիսացել է վարչական և ոչ թե էթնիկական սահման, և երկու կողմերից էլ հնարավոր էին էթնիկական փոխներթափանցումներ՝ Հալյուսից արևելք և արևմուտք: Պատահական չէ, որ հենց Հերոդոտոսը ևս կապադովկիացիների, որոնք, ըստ հույների, սիրիացիներն են, սահմանը արևմուտքում հասցնում է բավական հեռու՝ գրելով, որ Թերմոդոնտ և Պարթենիոս գետերի մոտ ապրող սիրիացիները և նրանց հարևան մակրոնները ասում են, թե իրենք թլպատումը միայն վերջերս են սովորել կոլխերից[587]: Սիրիացիների հարևանությամբ մակրոնների հի-

[583] Страбон, с. 511, 513, 519.

[584] Անդ, էջ 509:

[585] Плутарх, Лукулл, XXIII, с. 133, Избранные жизнеописания, т. II; Manoledakis M., The Local Peoples of the Southern Black Sea Coast, p. 154.

[586] Скилак Кариандский, с. 261. Պոմպոնիոս Մելասը հայտնում է, որ Սինոպեն և Ամիսոսը պատկանել են խալյուբներին (տե՛ս ИДПСК, ВДИ, 1949, 1, с. 273): Սա պարզապես նշանակում է, որ նշված շրջաններում մետաղագործությունը տարածված է եղել (խալյուբների մասին տե՛ս Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, ԲԵՀ, 2006, թիվ 2. էջ 116-120):

[587] Հերոդոտոս, II, 104:

շատակումը չի համապատասխանում պատմական իրականությանը, քանի որ, Քսենոփոնի հավաստմամբ, վերջիններս գտնվել են Տրապիզոնից հարավ և հարավ-արևելք[588]: Ինչ վերաբերում է սիրիացիներին, եթե հյուսիս-արևելքում նրանց սահմանն իրոք Թերմոդոնտն էր[589], ապա արևմուտքում նրանց սահմանը Հերոդոտոսի կողմից Պարթենիոսը (ներկայիս՝ Բարթին-սուն) համարելը չի հաստատվում ոչ միայն հեղինակի, այլ նաև ուրիշ աղբյուրների տեղեկություններով: Հալյուսից արևմուտք սիրիացիների առկայությունը հաստատում են բազմաթիվ աղբյուրներ, և այս առումով հետաքրքիր են հին աղբյուրների որոշ տեղեկություններ, որոնք կապված են Սինոպեի հետ: Այսպես, Պլուտարքոսը գրում է. «Ավտոլիկոսը (Սինոպեի հիմնադիր հերոսը-Խ. Հ.), ինչպես հաղորդում են, Թեսսալիայից Հերակլեսի հետ արշավել է ամազոնների դեմ, իսկ նրա հայրը եղել է Դեիմաքոսը: Երբ նա Դեմոլեոնի և Փլոգիոսի հետ նավով ետ էր վերադառնում, նրա նավը խորտակվեց թերակղզու վրա գտնվող Պեդալիայի (իմա՛ լեռնային հրվանդանը պարանոցի հետ-Խ. Հ.) մոտ, սակայն ինքն իր զենքերով և ընկերներով փրկվեց և Սինոպեն նվաճեց սիրիացիներից. մինչ այդ քաղաքին տիրում էին սիրիացիները, որոնք, ավանդության համաձայն, իրենց համարում էին ծագած նախահայր Սիրոսից՝ Ապոլլոնի որդուց, և նախամայր Սինոպեից՝ Ասոպոսի դուստրից»[590]: Կեղծ-Սկյումենեսը ևս հայտնում է, որ Սինոպեի հնագույն բնակիչները մինչև Ավտոլիկոսի գալը եղել են սիրերը[591]: Ըստ նրա, Սինոպեի անունը առաջացել է ամազոնուհի Սինոպեի՝ անունից, ընդ որում՝ ամազոնուհիները բնակվում էին Սինոպեի հարևանությամբ՝ Թերմոդոնտի հովտում: Ամազոնուհի Սինոպեի և Ապոլլոնի որդին Սիրոսն էր, որի անունով էլ տեղի բնակչությունը կոչվել է սիրեր: Անկասկած, հունական նմանաբնույթ առասպելներ ստեղծվում էին բազմաթիվ ժողովուրդների մասին (օրինակ, թեսսալացի Արմենոսի առասպելը հայեր-արմենների մասին), սակայն սիրերի մասին հիշատակությունը, թերևս, արտացոլում է մինչ հունական գաղութացման ժամանակաշրջանը և, հավանաբար, կապված է պատմական իրականության հետ[592]: Հետաքրքիր է, որ Կեղծ-Սկ-

[588] Մակրոնների տեղադրության մասին տե՛ս Խորիկյան Հ. Գ., նշվ. հոդվ., էջ 114-116:

[589] Տե՛ս Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 176-177:

[590] Պլուտարքոս, Կենսագրություններ, էջ 59:

[591] Ps.-Skymn., Peripl., 941-952. Տե՛ս Geographi Graeci Minores, recognovit C. Müllerus, Parisiis, I, 1855.

[592] Максимова М., Նշվ. աշխ., էջ 40:

յումենեսը նշում է ոչ միայն տեղաբնիկ սիրերին, այլ նաև նրանց հաջորդած թեսսալացիներին, միլետացիներին, կիմմերներին ու կրկին միլեթացիներին: Սինոպեից արևելք՝ Թերմոդոնտի հովտից եկած ամազոնուհիների (իմա՛ հարավմերձսևծովյան ինչ-որ ցեղ կամ ցեղեր) կողմից նվաճելու մասին, թերևս, վկայում է Պինդարոսի հիշատակությունը, թե ամազոնուհիները իշխում էին սիրիացիներին[593], տվյալ պարագայում՝ սիրերին: Ուշադրություն է գրավում նաև այն հանգամանքը, որ այն թերակղզին, որտեղ գտնվում է Սինոպեն, աղբյուրներում հայտնի է Սիրիադա անունով[594], ինչը խոսում է սիրերի երբեմնի գոյության մասին, որոնց անունը պահպանվել էր ներկայումս Ինջեբուրուն կոչվող թերակղզու հնագույն անվանումների մեջ: Անշուշտ սիրերը բնակվել են ոչ միայն Սինոպեի շրջանում, այլ նաև նրա սահմաններից դուրս, հիմնականում արևելյան ուղղությամբ, Հալյուսից այն կողմ, եթե, իհարկե, այս ուղղությամբ սիրերի առկայությունը պայմանավորված չէր օտարների ճնշման ներքո նրանց հարկադրված տեղաշարժմամբ: Հայտնվելով նոր տարածքում կամ էլ վերջնականապես ամրապնդվելով Հալյուսի արևելյան ափին՝ սիրերն արդեն հույների կողմից սկսում են կոչվել սիրիացիներ, լևկո-սիրիացիներ, ասորեստանցիներ, այսինքն՝ որպես բնիկ ժողովուրդ[595], և ինչպես վկայում են հին աղբյուրները, այդ թվում և Հերոդոտոսը, այդ անուններով հայտնի են դառնում կապադովկիացիները, իսկ հույների կողմից սիրերին տրված լևկո-սպիտակ բնորոշումը՝ բնութագրելով նրանց էթնիկական առանձնահատկությունը՝ սպիտակամաշկ լինելը՝ ի տարբերություն Տավրոսից հարավ բնակվող թխամաշկ սիրիացիների՝ մելանոսիրոսների, միաժամանակ նաև ընդգծում է սիրեր-սպիտակ ասորիների էթնիկական այլաձագումը[596]:

Վերևում ցույց տվեցինք, որ կապադովկիացիները, համաձայն Հերոդոտոսի, գտնվել են Հալիսի ոլորանի շրջանում տեղադրվող մա-

[593] Страбон, с. 511.

[594] Marcian, Epitome, 9; Anon., Peripl., 20. Տե՛ս Robinson D., Ancient Sinope, AJP, Vol. XXVII, № 2, 1906, p. 126.

[595] Michels Ch., The Persian Impact on Bithynia, Commagene, Pontus, and Cappadocia, p. 44.

[596] Страбон, с. 511. Հալյուսի աջ ափին հայտնի սիրիացիները, լևկո-սիրիացիները, ասորեստանցիները ոչ մի առնչություն չունեն Քյուլ-Թեփեի արխիվներից հայտնի ասորեստանցի գաղութաբնակների հետ: Կոստանդին Ծիրանածինն Ամասիայի և Դազիմոնի շրջաններում հիշատակում է լևկոսիրոսներին (տե՛ս Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1970, էջ 168):

տիեններից հյուսիս: Այս տեղադրությունը ամրապնդվում է նաև Հերոդոտոսի այլ տեղեկություններով ևս: Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանների ուսումնասիրությանը նվիրված մեր աշխատությունում[597] ցույց ենք տվել, որ XIII սատրապության կազմում հիշատակված Պակտյուիկե երկիրը, որն աշխարհագրորեն տեղադրվում է Կեսարիա-Մաժակի շրջանում, մ. թ. ա. V դարում դուրս է գալիս սատրապության կազմից և միացվում III սատրապությանը, այն դեպքում, երբ մինչ այդ վարչական վերաձևումը Կապադովկիայի հարավային սահմանը չէր անցնում Հալյուս գետը: Ժամանակին կարծիք էինք հայտնել, որ Աքեմենյան արքաների սեպագիր արձանագրություններում հիշատակված Կատպատուկա (Կապադովկիա) անունը, հնարավոր է, առաջացել է հենց պարսկական տիրապետության ժամանակ, երբ ձևավորվում է III սատրապությունը, և սերտորեն առնչվում է Պատուկա-Պակտյուիկե երկրանվան հետ: Կամ էլ Պատուկա երկրի անունը մ. թ. ա. VI դարի սկզբին արևելքից արևմուտք շարժվող մարերը պետք է տարածեին Հալյուսի ոլորանի շրջանում ընկած հողերի վրա, և արդյունքում Պատուկա-Պակտյուիկե երկրի անունն ավելի ուշ հիմնավորապես դառնում է այլ երկրի անունը՝ Կատպատուկա-Կապադովկիա: Թերևս ճիշտ է Ի. Դյակոնովը, որ Հալյուսի ոլորանի ներսում ընկած հողերը համարում է հայկական կախյալ շրջաններ, որոնցից պարսկական տիրապետության ժամանակաշրջանում կազմավորվում է Կապադովկիան (III սատրապությունը) և միացվում Փոքր Ասիայի կենտրոնական այլ շրջանների հետ[598]: Չի բացառվում նաև, որ Կատպատուկա անունը առաջացած լինի դեռևս Արամի (իմա՛ Արամանի[599]) կողմից Պատուկան նվաճելուց հետո, որից հյուսիս գտնվող հողերը կոչվեցին Կապադովկիա և մ. թ. ա. 585 թվականի Հալյուսի ճակատամարտից հետո մարերը հանձնեցին Հայաստանին: Տարածքային նոր ընդլայնմամբ Կապադովկիան դուրս է գալիս Հալյուսի հարավային ափը՝ սահմանակցելով Կիլիկյան սատրապությանը: Փաստորեն Կապադովկիա երկրանունն ի սկզբանե չու-

[597] Տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2014, էջ 31:

[598] Дьяконов И., История Мидии, с. 356 и с. 337 карта.

[599] Արամ-Արամանիի մասին տե՛ս Հարությունյան Բ. Հ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դ.դ.), Եր., 1998; Քոսյան Ա., Արամ Նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), ՊԲՀ, 1999, թիվ 1, էջ 237-259:

ներ էթնիկական ծագման որոշակի նախահիմք և կապված էր կոնկրետ վարչաքաղաքական իրողությունների հետ, որոնց արդյունքում էլ առաջացավ վարչական մի կազմավորում, որի դերն ու նշանակությունն անչափ կարևոր էին Աքեմենյան պետության համար: Ասվածի լույսի ներքո՝ մինչ տեղի էր ունենում Կապադովկիայի վարչաքաղաքական ձևավորումը և տարածքային ծավալումը հյուսիսային և հարավային ուղղություններով, շատ ավելի վաղ Սև ծովի հարավային ափին առաջացած հունական գաղութները՝ հատկապես Սինոպեն (մ. թ. ա. VIII-VII դարեր) և Ամիսոսը (մ. թ. ա. VII դարի վերջ)[600], վաղուց իրենց հարևանությամբ կամ իրենց բնակության շրջաններում ապրող ցեղերին ճանաչում էին սիրիացիներ անունով, որը հնագույն սիրերի էթնանվան հունական ձևափոխությունն էր: Այս առումով հետաքրքիր է Ստրաբոնի այն տեղեկությունը, որ, ըստ Թեոպոմպոսի, Ամիսոսի առաջին հիմնադիրները եղել են միլեթացիները, որից հետո տեքստում բաց թողնված տեղ է, և շարունակության մեջ խոսվում է. այնուհետև կապադովկիացիների կառավարիչը և հետո աթենացիներն ուղարկեցին իրենց գաղութը[601]: Ստրաբոնի մոտ Ամիսոսը գտնվում է լևկո-սիրիացիների հողում[602]: Միաժամանակ աշխարհագետը տեղեկացնում է, որ սիրիացիներ կոչվող կապադովկիացիներին այժմ էլ անվանում են լևկո կամ սպիտակ ասորիներ, այսինքն՝ լևկո-սիրիացիներ անունն առաջացել է ավելի ուշ, և չնայած Ստրաբոնը անունը կապում է մաշկի սպիտակության հետ, այդուհանդերձ, այս իրողությունն ավելի շատ կապված է էթնիկական տարբերակման հետ, որով հների հիշողության մեջ սիրեր-սիրիացիները պահպանում էին իրենց այլածագումը կապադովկիացիներից: Եվ պատահական չէ, որ վերևում բերված տեղեկության մեջ, չնայած բացթողմանը, հասկանալի է, որ Ամիսոսը նվաճվել է կապադովկիացիների կողմից, այն դեպքում, երբ Ամիսոսը գտնվել է լևկո-սիրիացիների հողում: Հետևաբար կապադովկիացիների ուղղակի նույնացումը սպիտակ ասորիների հետ սխալ է, քանի որ միայն կապադովկիացիների կողմից նվաճվելուց հետո վերջիններս նույնացան սիրիացիներին: Պատահական չէ, որ, համաձայն Մեանդրոսի, Հալյուսից արևելք բնակվող էնետները մասնակցել են Տրոյական պատերազմին՝ դուրս գալով լևկո-սիրիացիների երկրից[603]:

[600] Максимова М., Նշվ. աշխ., էջ 43, 64-65:
[601] Страбон, с. 513-514.
[602] Անդ, էջ 511, 519:
[603] Անդ, էջ 519:

Այստեղ կարևոր է ոչ այնքան էնետների տեղադրության հարցը լևկո-սիրիացիների երկրում[604], որքան այն մատնանշումը հեղինակի կողմից, որ արշավանքին չմասնակցած էնետները դարձան կապադովկիացիներ, այսինքն՝ ձուլվեցին կամ նույնացան վերջիններիս: Չնայած այն հանգամանքին, որ լևկո-սիրիացիները նույնպես նվաճվեցին կապադովկիացիների կողմից, այդուհանդերձ, նրանց անունն այնքան էր ամրապնդվել հույների մեջ, որ կապադովկիացիները նույնացվեցին սիրիացիներին կամ լևկո-սիրիացիներին, ինչպես որ հնուց անդին Հալյուսից արևելք հաստատված սիրերին հույները, անշուշտ, Տավրոսից հարավ բնակվող սիրիացիների անվան ազդեցությամբ կոչեցին սիրիացիներ: Սակայն Կապադովկիայի ազդեցությունը ժամանակի ընթացքում վերանում է հյուսիսում և ամրապնդվում հարավում: Սև ծովի՝ Սինոպեի և Ամիսոսի միջև ընկած ափամերձ տարածքը կարևորագույն նշանակություն ուներ առևտրական հաղորդակցության համար, քանի որ, եթե Սինոպեն կապված էր ծովային, ապա Ամիսոսն էլ՝ ցամաքային առևտրի հետ: Հետևաբար, Ամիսոսին տիրողը կարևոր առևտրական առավելություններ կստանար Կապադովկիայի (Կապադովկիայով էլ Կիլիկիայի և Հայաստանի) հետ առևտրական հարաբերություններում: Իսկ Կրեսոսի տիրապետության տակ գտնվող Սինոպեի համար Ամիսոսը վտանգավոր մրցակից էր: Մեր կարծիքով, Պտերիան[605] գտնվել է Հալիսի ստորին հոսանքի շրջանում և, թերևս, նույնանում է Ամիսոսին, որի մասին Հերոդոտոսը տեղեկություն չի տալիս: Իսկ Կրեսոսի կողմից գրավված քաղաքամերձ վայրերից մեկն էլ կարող է լինել, օրինակ, Ամիսոսից 18 կմ հարավ-արևմուտք ընկած թուրքական Աք-Ալան վայրը, որտեղ XX դարի սկզբին կատարվում էին

[604] Եթե, իրոք, էնետները գտնվել են լևկո-սիրիացիների երկրում, ապա եղել են սիրերին ազգակից ցեղ և ժամանակին մտել են սիրերի կողմից ստեղծված ցեղամիության մեջ: Էնետները, թերևս, Ռուփոսի մոտ հիշատակվող գենետներն են՝ Պափլագոնիայի հարևանությամբ (տե՛ս Rufus, Vol. I, III, I, 22, p. 70) և նույնանում են «Իլիական»-ում հիշատակվող ենետներին (տե՛ս Հոմերոս, Իլիական, II, 840-850; Vassileva M., Phrygia and the southern Black Sea littoral, p. 91; Manoledakis M., The Southern Black Sea in the Homeric *Iliad*, p. 21):
[605] Պտերիայի նույնացումը Կերկենես Դաղին (տե՛ս Summers G. D., Summers F., The Kerkenes Dağı Project, in: Ancient Anatolia: Fifty Years' Work by the British Institute at Ankara, ed. by R. Matthews, London, 1998, pp. 177–94) հիմնավորապես մերժվել է (տե՛ս Rollinger R., Kerkenes Dağ and the Median "Empire", in: Continuity of Empire (?): Assyria, Media, Persia, ed. by G. B. Lanfranchi, M. Roaf and R. Rollinger, History of the Ancient Near East, Monograph series 5, Padova, 2003, pp. 321-326):

հնագիտական պեղումներ[606]: Հնարավոր է, որ Բողազ-քոյի շրջանում գտնվել է Կապադովկիայի Կրիտալլա քաղաքը, որտեղ հավաքվում է Քսերքսեսի բանակը՝ շարժվելով դեպի Սարդես[607]: Անկասկած, դեպի Սարդես շարժվող պարսկական բանակը կգնար «արքայական ճանապարհով», որի կարևոր հանգույցներից մեկն էլ անցնում էր ներկայիս Յոզղադի շրջանով: Այստեղ գումարված բանակն էլ, անցնելով Հալյուսի ամենահարմար գետանցումը՝ ներկայիս Քըրըքկալեի հատվածում, մտնում էր Փռյուգիա[608]: Հերոդոտոսի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Պտերիան վարչական առումով գտնվել է Կապադովկիայի կազմում, իսկ աշխարհագրական տեսանկյունից՝ սիրիացիների երկրում: Միաժամանակ չենք կասկածում, որ Կապադովկիայի ծավալումը դեպի հյուսիս պայմանավորված էր արևելքում Հայաստանի հզոր սատրապության առկայությամբ, և միայն, ինչպես արդեն նշել ենք, մ. թ. ա. V դարում տեղի ունեցան որոշ վարչական փոփոխություններ, որոնց արդյունքում Կապադովկիան ունեցավ զգալի տարածքային ձեռքբերումներ: Կապադովկիային անցան ոչ միայն Պակտյուիկեն, այլ նաև այլ տարածքներ: Այսպես, Հերոդոտոսը գրում է. «Պափլագոնացիներն արշավում էին գլուխներին հյուսկեն սաղավարտ դրած, փոքր վահաններով և ոչ մեծ նիզակներով, ինչպես նաև տեգերով ու դաշույններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կոշիկներ, որոնք հասնում էին մինչև սրունքի կեսը: Լիգիացիների, մատիենների, մարիանդինների և սիրիացիների հանդերձանքը նույնական էր պափլագոնականի հետ: Այս սիրիացիներին պարսիկներն անվանում են կապադովկիացիներ: Պափլագոնացիներին և մատիեններին, առաջնորդում էր Դոտոսը՝ Մեգասիդրոսի որդին, իսկ մարիանդիններին, լիգիացիներին և սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի և Արտյուստոնեի որդի Գոբրյուեսը: Փռյուգացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր դրանից... Արմենները ևս, լինելով փռյուգիական վերաբնակիչներ, զինված էին փռյուգների նման: Այս երկուսին առաջնորդում էր Արտոքմեսը, որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ»[609]: Արմեններին չանդրադառնալով՝ նշենք, որ սույն հատվածում կան հետաքրքիր իրողություններ[610]:

[606] Максимова М., Նշվ. աշխ., էջ 56-64:
[607] Հերոդոտոս, VII, 26:
[608] Անդ:
[609] Անդ, VII, 72-73:
[610] Արմենների մասին տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 33-34:

Մատիենները, որոնք չեն հիշատակվում IV սատրապության կազմում, այժմ մասնակցում են արշավանքին, իսկ լիգիացիներն էլ, թերևս, հենց նույն լիկաոնիացիներն են, և հավանաբար պարսից արքունիքն այն անջատել էր Կիլիկյան սատրապությունից: Իսկ այն հաղորդումը, թե սիրիացիներին պարսիկներն անվանում են կապադովկիացիներ, ապա այս հանգամանքը պայմանավորված է ոչ թե էթնիկական, այլ քաղաքական նույնացմամբ, այն դեպքում, երբ հելլենները սիրիացիների (իմա՛ սիրերի) էթնանունն աստիճանաբար տարածեցին հարավից հյուսիս ծավալվող կապադովկիացիների վրա: Լիգիացիների նույնացումը լիկաոնիացիներին հավանական է նաև այն առումով, որ Քսենոփոնը Լիկաոնիան և Կապադովկիան համարում է մեկ սատրապություն[611]: Սա նշանակում է, որ Կապադովկիան ընդարձակվել էր Հալյուսից հարավ՝ ի հաշիվ Պակտյուիկեի և Լիկաոնիայի: Ընդ որում, Քսենոփոնը Դանան (Տիանա) համարում է Կապադովկիայի բաղկացուցիչ մասը, իսկ Փռյուգիայի սահմանային քաղաք Իկոնիոնը հեղինակի մոտ սահմանակցում է Լիկաոնիային[612]: Ավելի ուշ Ալեքսանդր Մակեդոնացին Անկյուրայից շարժվում է դեպի Կապադովկիա. «...գրավեց Հալյուս գետի այս կողմը գտնվող հողերն ու ավելի շատ տարածություններ գետի այն կողմում»[613]: Ալեքսանդրը, փաստորեն, գրավում է հիմնականում այս ընդարձակ սատրապության արևմտյան և հարավային շրջանները ու չի մտնում Հյուսիսային Կապադովկիա[614]: Հետևաբար, Հալյուս գետի այս կողմն ընկած հողերը պետք է տեղադրվեն Տատտա լճի հարևանությամբ, իսկ այսպիսի տեղադրությունը ցույց է տալիս, որ Հալյուսից արևմուտք կապադովկիական հողերը տարածվում էին ոչ միայն Լիկաոնիայում, այլև Փռյուգիայի արևելյան շրջաններում: Կապադովկիայի ընդարձակումը Հալյուսից արևմուտք արտացոլված է, թերևս, նաև Հերոդոտոսի հետևյալ տեղեկություններում: Այսպես, փռյուգների և կիլիկեցիների միջև հիշատակվող Կապադովկիայով անցնում էր պարսից «արքայական ճանապարհի» երթուղու մի հատվածը. «Փռյուգիայից հետո (ճանապարհը) տանում է դեպի Հալյուս գետը, որտեղ (լեռնային) դարպասներն են, որոնցով անցնելուց հետո կտրում-անցնում ես գետը: Անցարանում կա ուժեղ

[611] Քսենոփոն, Անաբասիս, էջ 197:
[612] Անդ, էջ 12:
[613] Arrian, Vol. I, II, 4, 1-2, p. 134.
[614] Michels Ch., The Persian Impact on Bithynia, Commagene, Pontus, and Cappadocia, p. 43.

ամրացված պահակակետ: Այնուհետև, Կապադովկիա մտնելով, ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք և կողանցել երկու պահակակետ: Դրանք անցնելուց հետո Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ»[615]: Այս տեղեկությունն արտացոլում է Հերոդոտոսի ապրած ժամանակաշրջանի իրողությունը (հմմտ. I, 75), և մեր կարծիքով, Կապադովկիայում՝ Կապադովկիային անցած Պակտյուիկեի տարածքով, ճանապարհն անցել է հետևյալ երթուղով. ներկայիս Քըրըքկալե-Յոզղադ-Կեսարիա-Ոսկե Կոմանա-Կոկիսոն մինչև Մարաշ՝ վերջինս արդեն Կիլիկիայի կազմում[616]: Մեջբերված տեղեկության մեջ կա հետաքրքիր մատնանշում, որը հետևյալն է: Հերոդոտոսը նշում է, որ Հալյուսն անցնելով՝ ճանապարհը մտնում է Կապադովկիա, այն դեպքում, երբ գրում է. «***Փռյուգիայից հետո*** (ընդգծումը մերն է-Խ. Հ.) (ճանապարհը) տանում է դեպի Հալյուս գետը, որտեղ (լեռնային) դարպասներն են, որոնցով անցնելուց հետո կտրում-անցնում ես գետը: Անցարանում կա ուժեղ ամրացված պահակակետ»[617]: Կարծում ենք, որ «Փռյուգիայից հետո» մատնանշումը բացահայտում է մի կարևոր իրողություն, այն է՝ Փռյուգիայի որոշակի մի հատվածից, որը կարող է լինել ներկայիս Անկարայի շրջանը, «արքայական ճանապարհի» երթուղու մի հատվածը՝ մինչև Հալյուս գետը, չի մտել Փռյուգիայի մեջ, այսինքն՝ ուղղակիորեն Հալյուսը չի նշվում որպես սահմանագիծ Փռյուգիայի և Կապադովկիայի միջև, ինչպես, ասենք, Եփրատը՝ Կիլիկիայի և Հայաստանի համար: Հետևաբար, Հալյուսից արևմուտք՝ Անկյուրայի ուղղությամբ ընկած հատվածը գտնվել է Կապադովկիայի կազմում, ինչը տեսանք Ալեքսանդրի արշավանքի քննության կապակցությամբ: Ուրեմն, Հերոդոտոսի ուղղակի մատնանշումը վերաբերում է բուն Կապադովկիային՝ Հալյուսից արևելք, այն դեպքում, երբ պատմիչի հաղորդումից պարզվում է, որ Կապադովկիան տարածվում էր նաև Հալյուսի ձախափնյակում, իսկ գետն անցնելու համար անհրաժեշտ էր անցնել պարսիկների կողմից կառուցված ամրությունները: Ինչպես

[615] Հերոդոտոս, V, 49; 53:
[616] Կեսարիա-Ոսկե Կոմանա-Կոկիսոն երթուղու քննությունը տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 28-34:
[617] «ἐκδέκεται δε ἐκ τῆς Φρυγίες ο Ἅλυς ποταμος...». Հմմտ. Herodotus, V, 52 (Next after Phrygia it comes to the river Halys); Геродот, V, 52 (Из Фригии путь ведет непосредственно к реке Галису).

Քսենոփոնի, այնպես էլ Արիանոսի և Ռուփոսի մոտ Կապադովկիայից Կիլիկիա կարելի էր մտնել Կիլիկյան դարպասներով (Գուգլակի լեռնանցք)[618]: Բերված տեղեկությունները հաստատում են, որ սկսած մ. թ. ա. V դարից (Քսերքսեսի թագավորության ժամանակահատվածից) Կապադովկիայի ընդարձակումը հարավային ուղղությամբ ոչ միայն արդեն վկայված էր աղբյուրներում, այլև, հենց նույն աղբյուրների հավաստմամբ, հասել էր բավականին մեծ չափերի: Պակտյուիկեն ամբողջովին անցել էր Կապադովկիային, որոնց բնակչությունն էթնիկապես մոտ էր միմյանց[619]: Պակտյուիկեի և Լիկաոնիայի հաշվին Կապադովկիայի ընդարձակումը պայմանավորված էր Պափլագոնիայի կիսանկախ վիճակով, որը գրավել էր Կապադովկիայի սևծովյան տիրույթները: Բնականաբար, Աքեմենյան արքունիքի կողմից Կապադովկիայի ուժեղացմամբ հակակշիռ էր ստեղծվում Պափլագոնիային[620]: Մենք արդեն նշեցինք, որ Կապադովկիան ենթարկվեց Ալեքսանդրին, սակայն, զարմանալիորեն, կապադովկիացիները մի դեպքում հայերի, մյուս դեպքում Մեծ Հայքի հայերի, կադուսիների, սիրիացիների ու մարերի հետ մասնակցում են Գավգամելայի ճակատամարտին (մանրամասն տե՛ս ստորև)[621]:

Ինչ վերաբերում է Կապադովկիայի սևծովյան տիրույթներին, ապա այս ուղղությամբ Կապադովկիան ունեցել էր տարածքային կորուստներ: Եթե Դարեհ Ա-ի վարչական վերափոխումների ժամանակ Աքեմենյան Պարսկաստանի III և XIII սատրապությունները հյուսիսում սահմանակցում էին Թերմոդոնտ գետի շրջանում, ապա մ. թ. ա. V դարի վերջին Պափլագոնիան հասել էր մինչև Կոտիորա[622], ինչը պայ-

[618] Arrian, Vol. I, II, 4, 3-4, p. 134; Rufus, Vol. I, III, IV, 1-2, p. 88.
[619] Այդ մասին տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 31-32:
[620] Աքեմենյանների տոհմից սերող Օտանեսը Կապադովկիայում Դարեհի կողմից ստանում է ընդարձակ կալվածքներ՝ ի վարձատրություն իր ծառայությունների, և բնականաբար, Օտանեսն ու նրա ժառանգներն այնտեղ պաշտպանելու էին պարսից արքունիքի շահերը, իսկ Կապադովկիայի սատրապ Արիարամնեսը սևծովյան սկյութների դեմ Դարեհի արշավանքից առաջ նավատորմով անցնում է Թրակիա՝ գերիներ ձեռք բերելու համար (տե՛ս Ctesias' History of Persia: Tales of the Orient, by L. Llewellyn-Jones and J. Robson, London and New York, 2010, p. 181): Մ. թ. ա. 378 թվականին Դատամեսին հաջողվում է դառնալ Կապադովկիայի որոշ շրջանների կառավարիչը և ճնշել պափլագոնական իշխան Օտիսի ապստամբությունը (տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 78, 109, 245):
[621] Арриан, с. 110, 113. Արիանոս, էջ 97, 101; Руф, с. 115. Ռուփոս, էջ 333: Կապադովկիացիներն ավելի վաղ մասնակցել էին Գրանիկոսի ճակատամարտին (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 82; Ռուփոս, էջ 33):
[622] Քսենոփոն, Անաբասիս, էջ 121, 139; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 69:

մանավորված էր կենտրոնական իշխանության թուլացմամբ:

Կապադովկիա անունը, առաջանալով Պակտյուիկեից հյուսիս և նշանակելով Ստորին կամ Ներքին Պակտյուիկե, ժամանակի ընթացքում վերանում է հյուսիսում և ամրապնդվում հարավում, և ավելի ուշ արդեն Պակտյուիկեի տարածքը[623] մատնանշելու համար գործածվում է Կապադովկիա անունը: Պատճառն այն էր, որ III սատրապությունը, մինչև Պակտյուիկեի միացումը Կապադովկիային, Աքեմենյան սեպագիր արձանագրություններում ի սկզբանե հայտնի էր Կատպատուկա-Կապադովկիա անունով, և XIII սատրապության կազմում մինչ այդ իր անունը պահպանած Պակտյուիկեն, միացվելով Կապադովկիային, բնականաբար, այլևս չէր կարող պահպանել իր անվանումը և կոչվելու էր Կապադովկիա, մանավանդ, որ Պակտյուիկե-Կատպատուկա անունները ծագումնաբանորեն կապված էին միմյանց: Աքեմենյան կայսրության կործանումից հետո (Աքեմենյան ժամանակաշրջանում էլ Կապադովկիայի վարչական տիրապետությունը սևծովյան ափամերձ հատվածում կայուն չէր) արդեն քաղաքական իրադարձությունների արդյունքում (հյուսիսից Պոնտոսի թագավորության, արևմուտքից գաղատների ճնշման ներքո) նախկին Աքեմենյան Կապադովկիա երկրի անունն ավելի ու ավելի պետք է կապվեր հարավային շրջանների հետ, որտեղ էլ առաջանում և ամրապնդվում է Կապադովկիա թագավորությունը:

Այսպիսով, ելնելով վերը կատարված քննությունից, կարելի է անել հետևյալ եզրակացությունները: Հյուսիս-արևմուտքում՝ Հալյուսի գետաբերանի և հյուսիս-արևելքում՝ Թերմոդոնտի գետաբերանի միջև ընկած տարածքում Կապադովկիան դուրս էր գալիս Սև ծով, սակայն մ. թ. ա. V դարի վերջին Կապադովկիան կորցնում է իր սևծովյան տիրույթները, որոնք գրավել էր Պափլագոնիան: Արևմուտքում և հարավում, եթե Դարեհից մինչև Քսերքսեսի գահակալումը Կապադովկիայի սահմանը Հալյուս գետն էր, Քսերքսեսի հունական արշավանքի ժամանակ արդեն առկա են որոշակի վարչական վերակազմություններ, քանի որ պարսից արքունիքը Կապադովկիային էր միավորել Լիկաոնիան, որի հետ Կապադովկիան հանդես է գալիս մեկ վարչական ամբողջություն, և Պակտյուիկեն, իսկ արդեն, թերևս, մ. թ. ա. V դարում

[623]Մասնագետները XIII սատրապության կազմում հիշատակվող Պակտյուիկեի տեղադրությունը Հալաստանի արևմտյան հարևանությամբ փորձել են տեսնել նաև ավելի վաղ, սակայն այս ճիշտ մոտեցումը չի խորացվել (տե՛ս Laird A. G., The Persian Army and Tribute Lists in Herodotus, CPh, Vol. XVI, № 4, 1921, pp. 308, 324; Debord P., L'Asie Mineure au IVe siècle, p. 87):

Փռյուգիայի արևելյան հատվածի՝ Տատտա լճից հյուսիս ընկած շրջանը ևս անցնում է Կապադովկիային: Հարավում Կապադովկիայի կազմում էր հայտնվել Դանա քաղաքը, իսկ Պակտյուիկեի՝ Կապադովկիային միավորվելուց հետո Դանայից արևելք «արքայական ճանապարհի» Կեսարիա-Ոսկե Կոմանա-Կոկիսոն երթուղին մինչև Կիլիկիայի կազմում գտնվող Մարաշ, եզերում էր Կապադովկիայի հարավային սահմանագիծը: Արևելքում Կապադովկիան Պակտյուիկեն ներառելուց հետո Հայաստանի սատրապությունից բաժանված էր Կոռոմանդոնի (Որոմանդոն), Զիգոնի լեռներով, Անտիտավրոսի հյուսիսարևմտյան ճյուղավորումներով և ներկայիս Եշիլ-Իրմակ կոչվող լեռնաշղթայով:

1.9. Կիլիկյան սատրապության տարածքը և սահմանները

Աքեմենյան Պարսկաստանի Կիլիկյան սատրապության վարչաքաղաքական կացության ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն այդ տերության պատմության, այլև Սատրապական Հայաստանի տարածքի և հարավարևմտյան սահմանի հստակեցման առումով, որոնք մասնագիտական գրականության մեջ, գրեթե առանց բացառության սխալ են մեկնաբանվել: Ուստի սկզբնաղբյուրների ամբողջական և համակողմանի քննությամբ կփորձենք ճշգրտել և հստակեցնել Կիլիկյան սատրապության տարածքը և սահմանները, որոնց վերաբերյալ հին աղբյուրների տեղեկությունները երբեմն խիստ հակասական են:

Պատմահայր Հերոդոտոսը, սատրապությունների ցանկում անդրադառնալով կիլիկեցիներին, գրում է. «Կիլիկեցիները տալիս էին երեք հարյուր վաթսուն սպիտակ ձի, տարվա յուրաքանչյուր օրվա համար մեկ ձի, և հինգ հարյուր արծաթ տաղանդ, որից հարյուր քառասունը ծախսվում էր Կիլիկյան երկիրը պահպանող հեծելազորի վրա, իսկ երեք հարյուր վաթսունը հասնում էր Դարեհին: Սա չորրորդ նահանգն էր»[624]: Պատմիչի տեղեկությունից պարզվում է, որ Կիլիկյան կամ IV սատրապությունը, չնայած իր փոքր տարածքին, տարեկան տալիս էր բավականին մեծ հարկ, ինչը գերազանցում էր տարածքով շատ ավելի խոշոր սատրապությունների տված հարկը:

Կիլիկեցիները և լյուկիացիները չեն ենթարկվել Կրեսոսին, ընդորում, կիլիկեցիներն ունեցել են անկախ թագավորություն, որի թագավորը հայտնի է եղել Սյուեննեսիս անունով և գործուն մասնակցություն է ունեցել Առաջավոր Ասիայի քաղաքական իրադարձություննե-

[624]Հերոդոտոս, III, 90:

րում[625]: Սյուեննեսիս անունը, հավանաբար, եղել է Կիլիկիայի թագավորների տիտղոսը[626]: Հետագայում կիլիկեցիները կամավոր ենթարկվում են Կյուրոս Մեծին, և վերջինս Կիլիկիայում սատրապ չի նշանակում՝ պահելով տեղաբնիկ արքաների իշխանությունը և կարգադրելով նրանց հարկ վճարել[627]: Սակայն, ըստ էության, Դարեհ Ա-ից հետո Կիլիկիայում եղել են պարսիկ սատրապներ, որոնցից մեկն էր Քսերքսեսի կողմից սատրապ նշանակված Քսենագորասը[628]:

Հերոդոտոսը Կիլիկիայի և կիլիկեցիների մասին ունի նաև այլ տեղեկություններ, որոնց քննությունը կարևոր է IV սատրապության վարչական կացության և սահմանների պարզաբանման ու հստակեցման համար:

IV կամ Կիլիկյան սատրապության արևմտյան սահմանը ճշգրտվում է բավական հեշտությամբ, քանի որ վերջինս այդ ուղղությամբ սահմանակից էր I սատրապությանը[629], և նրանց միջև ընդհանուր սահմանը եղել է Կիլիկյան Տավրոսի ծայրարևմտյան հատվածը: Կիլիկիան արևմուտքում Պամփյուլիայից բաժանվել է Տավրոսով[630]: Ըստ Սկիլաքս Կարիանդացու՝ Կիլիկիայի սահմանը արևմուտքում հասել է Պամփյուլիա, իսկ արևելքում՝ Թափսակոս[631]՝ Օրոնտես գետը: Կիլիկյան սատրապության բնական սահմանը հյուսիսում Կիլիկյան Տավրոսն էր և Անտիտավրոսի հարավային լեռնաճյուղերը: Ինչպես նշում է Հերոդոտոսը, հարավում Կիլիկիայի և Սիրիայի սահմանը Պոսիդեյոն քաղաքն էր[632], որը Լաոդիկեայից հյուսիս գտնվող Պոսիդիումն է՝ ներկայիս Բասիթը[633]՝ Կասիոս լեռից (Ջեբել Աքրա) հարավ:

Հերոդոտոսը պարսից «արքայական ճանապարհի» երթուղին նկարագրելիս հաղորդում է հետևյալ տեղեկությունները: Պատմահոր վկայությամբ՝ Փռյուգիայից հետո «Կապադովկիա մտնելով, ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը քսանութ կայան՝ հարյուր չորս

[625] Անդ, I, 28; 74; V, 118: Տե՛ս Aeschylus, Persians and Other Plays, translated by Ch. Collard, Oxford University Press, New York, 2008, 326, p. 12. Սյուեննեսիս անունը Կիլիկիայի թագավորների համար ժառանգական տիտղոս էր (տե՛ս Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 243):
[626] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 135.
[627] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 284, 355:
[628] Հերոդոտոս, IX, 107:
[629] Անդ, III, 90:
[630] Արիանոս, էջ 124, 176; Ռուփոս, էջ 456:
[631] Скилак Кариандский, с. 262.
[632] Հերոդոտոս, III, 91:
[633] Rainey A. F., The Satrapy "Beyond the River", AJBA, 1969, № 1/2, p. 59.

փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք և կողանցել երկու պահակակետ: Դրանք անցնելուց հետո Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ: Կիլիկիայի և Արմենիայի սահմանը **նավարկելի գետն է** (ընդգծումը մերն է - Խ. Հ.)՝ անունը Եփրատ»[634]:

Կիլիկեցիները հիշատակվում են նաև մեկ այլ հաղորդման մեջ, երբ Միլետի տիրան Արիստագորասը ցույց է տալիս պղնձե տախտակի վրա փորագրված երկրի ուրվագիծը և հերթով մատնանշում այն ժողովուրդներին, որոնք բնակվել են իրար հարևանությամբ: Հոնիացիներից հետո նշվում են լյուդիացիները, որոնցից հետո «դեպի արևելք բնակվում են փռյուգները, որոնք ինձ (Արիստագորասին - Խ. Հ.) հայտնի բոլոր մարդկանցից առավել հարուստ են իրենց հոտերով և բարեբեր հողերով: Նրանց հաջորդում են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք արքային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ: Այստեղ կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր ունեն»[635]:

Մեջբերված տեղեկությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները: Կապադովկիան և Կիլիկիան եղել են սահմանակից երկրներ կամ սատրապություններ, իսկ «արքայական ճանապարհը» IV սատրապության տարածքում ունեցել է 15,5 փարսախ երկարություն, ինչը հավասար է շուրջ 90 կմ երկարության: Ինչպես Կապադովկիայի և Կիլիկիայի, այնպես էլ Կիլիկիայի և Հայաստանի սահմանի հարցը մասնագիտական գրականության մեջ պահանջում է լուրջ քննություն և նախկին տեսակետների վերանայում:

Խնդրո առարկա հարցերին անդրադարձել ենք մեր ուսումնասիրություններից մեկում և ցույց տվել, որ առանց խորը վերլուծության Կիլիկյան սատրապության սահմանը հյուսիս-արևելքում հասցվել է մինչև Մելիտինե[636]՝ արհեստականորեն ընդարձակելով նրա տարածքը[637]: Հարցի պարզաբանման համար ներկայացնենք Հերոդոտոսի

[634] Հերոդոտոս, V, 52:
[635] Անդ, V, 49:
[636] Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Եր., 1977, էջ 63-64; Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, in: The Cambridge History of Iran, Vol. 2, Cambridge University Press, 1985, p. 263.
[637] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 178-181:

հետևյալ տեղեկությունը. «Մեդական տերության և լյուդիական տերության միջև սահմանը Հալյուս գետն էր, որը **հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով** (ընդգծումը մերն է - Խ. Հ.), այնուհետև (հոսում է) աջից մատիեններին, և [ձախից] ահյակից փռյուգիացիներին ունենալով: Անցնելով այս երկրները և հոսելով վեր՝ դեպի հյուսիս՝ այն բաժանում է կապադովկյան սիրիացիներին՝ աջում, պափլագոնացիներից՝ ձախում: Այսպիսով, Հալյուս գետը կտրում է Ասիայի ամբողջ ստորին մասը՝ Կիպրոսին հանդիպակաց ծովից դեպի Եվքսինյան Պոնտոսը: Սա այդ ամբողջ երկրի (ամենանեղ) պարանոցն է, և լավ քայլող մարդուց այդ ճանապարհը հինգ օր կխլի»[638]:

Պատմագիտական գրականության մեջ իշխում է նաև այն տեսակետը, թե կիլիկեցիները բնակվել են Կեսարիա-Մաժակի շրջանում[639]: Սակայն մեջբերված հատվածում խոսվում է ոչ թե կիլիկեցիների, այլ Կիլիկիայի մասին, որն աշխարհագրորեն լիովին տարբերվում է Կիլիկիա սատրապությունից: Հերոդոտոսի տվյալ վկայությունում Կիլիկիան աշխարհագրական և վարչական առանձին միավոր է, որը տարածվել է Կեսարիա-Մաժակի շրջանում[640]:

Հերոդոտոսի արդեն մեջ բերված վկայությունում (I, 72) Կիլիկիան տեղադրվում է Կեսարիա-Մաժակի շրջանում և աշխարհագրական առումով նույնանում է Պատուկա-Պակտյուիկե երկրին: Հերոդոտոսի՝ «արքայական ճանապարհի» մասին տեղեկությունն արտացոլում է շուրջ մ. թ. ա. V դարի կեսերի իրողությունը, այսինքն՝ Հայաստանի սատրապությունը կորցրել էր Պատուկա-Պակտյուիկեն, և իրոք, Կեսարիա-Մաժակն «արքայական ճանապարհի» գլխավոր հանգուցակետերից մեկն էր, սակայն արդեն III սատրապության մեջ[641]:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ մուշք-փռյուգացիների մի խումբը հաստատվել է Կեսարիա-Մաժակի շրջանում: Այս առումով հետաքրքիր է[642] Հովսեպոս Փլավիոսի հետևյալ տեղեկությունը. «Եվ մեսքենները, որոնք հաստատվել են Մեսքեսի կողմից և այժմ կոչվում են կապադովկիացիներ. սակայն նրանց հնագույն անվանման ապացույցը

[638] Հերոդոտոս, I, 72:
[639] Хазарадзе Н., Гекатеевы матиены, Вопросы древней истории (Кавказско-ближневосточный сборник, IV), Тбилиси, 1973, с. 113.
[640] Հարցի քննությունը մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 28-30:
[641] Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները..., էջ 107-118:
[642] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, ՀԱ, 1999, թիվ 1-12, էջ 74-75:

բացահայտ է, որովհետև նրանց մոտ կա մի քաղաք, որը մինչև հիմա էլ կոչվում է Մազակա, և հասկացողներին թելադրում է ենթադրելու, որ այդպես է կոչվել ամբողջ ազգը»[643]:

Մեսքեններ-կապադովկիացիների նախահայրը համարվել է Մոսոքը[644]: Մազակեններ ցեղի մայրաքաղաքը կոչվել է Մազակա[645]:

Մուշք-փռյուգիացիների մի խմբի տեղադրությունը Կեսարիա-Մաժակի շրջանում այլ բացատրություն է տալիս Հերոդոտոսի՝ հայերին փռյուգիական վերաբնակիչներ համարելու տեղեկությանը: Կեսարիա-Մաժակի շրջանում հաստատված մուշքերը Հերոդոտոսի մատնանշած արմեններն են, իսկ Արտոքմեսը Կեսարիա-Մաժակի շրջանում հաստատված մուշք-փռյուգիացիների և հայերի հրամանատարն էր[646]: Հավանաբար, Պատուկա-Պակտյուիկեն, որ տեղադրվում է Կեսարիա-Մաժակի շրջանում և Հերոդոտոսի մոտ (I, 72) հիշատակված է որպես Կիլիկիա, հենց նույն Կիլիկիա անունով էլ հանդես է գալիս Ստրաբոնի կամ Պտղոմեոսի մոտ՝ որպես Կապադովկիայի ստրատեգիաներից մեկը[647]: Սակայն Պակտյուիկեն՝ որպես երկիր, ավելի մեծ էր, քան Կիլիկիա ստրատեգիան:

Ասսուրական աղբյուրների Խիլակկուն տերմինաբանորեն նույնանում է անտիկ հեղինակների Կիլիկիային: Խիլակկուն անտիկ Մազական է՝ ուշ Կապադովկիական Կեսարիան, ներկայիս Կայսերին, այլ կարծիքով՝ անտիկ հեղինակների Տրաքեյան Կիլիկիան է[648]: Սկզբնապես նեղ իմաստով Կիլիկիա է կոչվել ներկայիս Կեսարիա քաղաքի շրջանը[649]: Աքեմենյան դարաշրջանի Կիլիկիան ընդգրկել է Լեռնային և Դաշտային (Քուե[650]) Կիլիկիան միասին: Հերոդոտոսի համար Կիլիկիան էթնիկական առումով միատարր վարչամիավոր է՝ բացառու-

[643] Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Եր., 1976, էջ 55-56: Տե՛ս նաև Josephus, Jewish Antiquities, with an English translation by H. St. J. Thackeray, Vol. IV, Books I-IV, Cambridge-Massachusetts-London, 1961, p. 61.
[644] ИДПСК, ВДИ, 1948, 3, Եվստաթիոս, էջ 237; Թեոդորիտ, էջ 293; Կոստանդին Ծիրանածին, Բանակաթեմների մասին, էջ 168:
[645] Страбон, с. 505-507.
[646] Մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 181:
[647] Страбон, с. 503, 506; Claudii Ptolemaei Geographia, 1901, II, V, 6, 14, p. 879.
[648] Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, 2, 46, с. 318, 320, прим. 44.
[649] Еремян С., Проблема этногенеза армян в свете учения И. В. Сталина о языке, Տեղեկագիր, 1951, 6, էջ 41:
[650] Bryce T., The Routledge..., pp. 583-584.

թյամբ հյուպաքայացիներ կոչված վերաբնակիչների:

Մեր կարծիքով, պարսից «արքայական ճանապարհը» Կապադովկիայի մի որոշակի հատվածում (իմա՛ Պատուկա-Պակտյուիկե) ունեցել է հետևյալ երթուղին. Կեսարիա-Ոսկե Կոմանա-Կոկիսոն մինչև Մարաշ: Մարաշն արդեն Կիլիկիայի մեջ էր մտնում, որտեղից, նկատի ունենալով ճանապարհի տվյալ հատվածի շուրջ 90 կմ երկարությունը, կհասնենք Զևգմա, որտեղ Եփրատը նավարկելի է, և այդպիսով, իրոք, Եփրատը կլինի սահման Հայաստանի և Կիլիկիայի միջև[651]: «Արքայական ճանապարհը» ներկայիս Մալաթիայի շրջանով չէր կարող անցնել[652], հետևաբար նշված ճանապարհի երթուղին պետք է ձգվեր շատ ավելի հարավ: Նկատենք նաև, որ Կոմագենեն Հայաստանի սատրապության անբաժանելի մասն էր[653]:

Համաձայն Հերոդոտոսի՝ կիլիկեցիները մասնակցում են նաև Քսերքսեսի հելլենական արշավանքին. «Կիլիկեցիները տրամադրել էին հարյուր նավ. սրանք իրենց գլխին դրել էին տեղական սաղավարտ. վահանի փոխարեն նրանք կրում էին եզան հում կաշուց պատրաստած ասպար և հագել էին բրդե խիտոն: Յուրաքանչյուրն ուներ երկու նիզակ և թուր, եգիպտական դաշույններին շատ նման: Սրանք հնում կոչվել են հյուպաքայացիներ[654], իսկ իրենց այժմյան անունը ստացել են փյունիկեցի Կիլիկսից՝ Ագենորի որդուց»[655]: Կիլիկեցիների նավատորմը առաջնորդում էր թագավոր Սյուեննեսիսը[656]:

Կիլիկիայի մասին կարևոր և ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Քսենոփոնը: Ըստ վերջինիս՝ Սյուեննեսիս թագավորի կինը՝ Եպիաքսան, շատ դրամ է տալիս Կյուրոս Կրտսերին[657]: Եպիաքսան ուներ թիկնապահներ՝ բաղկացած կիլիկեցիներից և ասպենդացիներից[658]: Ասպենդացիները Ասպենդոս քաղաքի բնակիչներն են, իսկ քաղաքը գտնվել է Պամփյուլիայում՝ ներկայիս Անթալիայից 30 կմ արևելք՝ Եվրյումեդոն՝ ներկայիս Քյոփրյուչայ գետի վրա[659]:

Կարելի է ենթադրել, որ մ. թ. ա. V դարի վերջերին Կիլիկիայի սահմանն արևմուտքում հասել է մինչև Ասպենդոս քաղաքը, կամ էլ ասպենդացիները՝ որպես վարձկաններ[660], կազմել են թագուհու թիկնազորի մի մասը: Կյուրոս Կրտսերը Կապադովկիայի Դանա (Տիանա) քաղաքից հարավ անցնում է Կիլիկյան դարպասները (Գուգլակի լեռնանցք) և շարժվում «մինչև Տարսոն՝ Կիլիկիայի խոշոր ու բարգավաճ քաղաքը, որտեղ գտնվում էր Կիլիկիայի թագավոր Սյուեննեսիսի ապարանքը»[661]: Քաղաքի միջով հոսում էր Կյուդնոս գետը[662]: Քսենոփոնը հիշատակում է նաև Կիլիկիայի Սոլի և Իսսոս ծովափնյա քաղաքները[663]: Տարսոնից արևելք Կյուրոս Կրտսերն անցնում է Փսարոս, Պյուրամոս գետերը և հասնում Իսսոս՝ Կիլիկիայի ամենաճայրամասային քաղաքը, որը մարդաշատ էր, խոշոր և բարգավաճ[664]: Իսսոսից հարավ պարսից արքայազնի բանակը հասնում է Կիլիկիայի և Սիրիայի միջև գտնվող դարպասը, որի ներքին պարիսպը գտնվում էր Սյուեննեսիսի ձեռքին, իսկ արտաքինը Սիրիայի կողմում պաշտպանում էր պարսից արքայի կայազորը. երկու պարիսպների միջով հոսում էր Կարսոս[665]՝ հետագայի Մերքեզ գետը: Նշված դարպասը նույնանում է հետագայում հայտնի Դրունք Ասորվոցին կամ Պլատանա լեռնանցքին, որից հարավ արդեն Սիրիան էր, այն դեպքում, երբ Հերոդոտոսը Կիլիկյան սատրապության սահմանը հարավում հասցնում էր նշված լեռնանցքից հարավ մինչև Պոսիդեյոն, այսինքն՝ Քսենոփո-

---

[651] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 181:
[652] French D., Pre- and Early-Roman Roads of Asia Minor, pp. 18, 24.
[653] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 178; Michels Ch., The Persian Impact on Bithynia, Commagene, Pontus, and Cappadocia, pp. 43, 48. Կիլիկիան Հայաստանի սատրապության մեջ տեսնում է նաև Արտակ Մովսիսյանը (տե՛ս Մովսիսյան Ա., Հայաստանի հարավարևմտյան սահմանն ըստ Հերոդոտոսի տեղեկությունների, ՊՄ, 2019, թիվ 1, էջ 10):
[654] Հյուպաքայացիները համարվել են աքայացիների՝ Ախխիյավայի հետնորդները (տե՛ս Kopanias K., Cilicia and Pamphylia during the Early Iron Age: Hiyawa, Mopsos and the Foundation of the Greek Cities, AURA, Vol. 1, 2018, pp. 69-70):
[655] Հերոդոտոս, VII, 91:
[656] Անդ, VII, 98: Համմմ. VI, 6:
[657] Քսենոփոն, Անաբասիս, էջ 11: «Անաբասիս»-ի վերջում Սյուեննեսիսը հիշատակվում է Կիլիկիայի տիրակալ (անդ, էջ 197):

[658] Անդ:
[659] Страбон, с. 534, 624; Pliny, Natural History, Vol. II, V, 96, p. 292; Bryce T., The Routledge..., p. 81.
[660] Cornelius Nepos (Loeb), Datames, XIV, VI, 8.
[661] Քսենոփոն, Անաբասիս, էջ 13:
[662] Անդ:
[663] Անդ: Կիլիկիայի Սոլի, Նագիդոս քաղաքները, Քարադրոս նավահանգիստը հիշատակում է Հեկատեոս Միլեթացին (տե՛ս Müller C., FHG, Vol. I, fr. 251, 252, 253, p. 17): Սոլին տեղադրվում է հետագայի Մեզեթլու (տե՛ս DGRG, Vol. II, p. 1019), Քարադրոսը՝ Քարադրան վայրերում (տե՛ս DGRG, Vol. I, p. 603), իսկ Նագիդոսը, որը, ըստ Պոմպոնիոս Մելասի, հիմնադրել են Սամոսից եկած գաղութաբնակները, գտնվել է Լեռնային Կիլիկիայի արևմուտքում (տե՛ս Bryce T., The Routledge..., p. 493):
[664] Քսենոփոն, Անաբասիս, էջ 17:
[665] Անդ:

նի ժամանակ Կիլիկյան սատրապության սահմանը հարավում կրճատվել էր: Ամենայն հավանականությամբ, նշված լեռնանցքի հարավային պարիսպը նույնպես մտնում էր Կիլիկյան սատրապության մեջ, և զուտ ռազմավարական նպատակներով վերջինիս պահպանությունը հանձնված էր պարսկական կայազորին, որի մասին հիշատակում է Հերոդոտոսը Կիլիկյան սատրապության նկարագրության մեջ:

Կիլիկիայի մասին կարևոր են նաև Արիանոսի տեղեկությունները: Ըստ պատմիչի՝ Ալեքսանդրը Կիլիկիա է ներխուժում Կիլիկյան Դարպասներից՝ հետագայի Գուգլակի լեռնանցքից, և հասնում Տարսոն քաղաքը[666]: Արիանոսը հիշատակում է նաև Կիլիկիայի և Սիրիայի սահմանին գտնվող լեռնանցքը, Տարսոնից հարավ ընկած Անքիալոս, Սոլեմ, Մալոս, Իսոս քաղաքները, Պյուրամոս գետի ստորին աջափնյակում ընկած Ալեյա դաշտավայրը[667], որը հիշատակում է նաև Հերոդոտոսը[668]: Կիլիկիայում Ալեքսանդրը նշանակում է սատրապ, մյուս կողմից էլ Ասորիքը, Փյունիկիան և Կիլիկիան ավելի ուշ հանձնում է հյուպարքոս Մենետոսին[669]: Ասորիքի, Փյունիկիայի և Կիլիկիայի մեկ վարչական միավոր կազմելու վերաբերյալ տեղեկությունը ուշագրավ է այն հետաքրքիր հանգամանքով, որ Աքեմենյան արքունիքը Ալեքսանդրից առաջ մ. թ. ա. IV դարում Կիլիկիան ներառել էր Էբիր-նարի՝ Անդրգետք (գետից այն կողմ) սատրապության մեջ: Այս մասին վկայում են Էբիր-նարիի և Կիլիկիայի սատրապ Մազ(դ)այի դրամները[670]. վերջինս մինչ այդ Կիլիկիայի սատրապն էր[671] և ավելի ուշ մասնակցում է Գավգամելայի ճակատամարտին՝ գլխավորելով պարսկական հեծյալ զորամասերից մեկը[672]: Հետագայում Ալեքսանդրը Մազային է

[666] Արիանոս, էջ 57:
[667] Անդ, էջ 58-59:
[668] Հերոդոտոս, VI, 95: Տե՛ս նաև Страбон, с. 630; Pliny, Natural History, Vol. II, V, 91, p. 290.
[669] Արիանոս, էջ 69, 108:
[670] Cooke G. A., A Text Book of North-Semitic Inscriptions, pp. 346-347; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 437; Herzfeld E., The Persian Empire, p. 309; Bodzek J., Achaemenid Asia Minor: Coins of the Satraps and of the Great King, p. 66; Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 111, 114, 205-206: Կիլիկիայում սեփական դրամներ հատվել են նաև մոտ մ. թ. ա. V դարի երրորդ քառորդում (տե՛ս Bodzek J., Remarks on the Origins of Achaemenid Satrapic Coinages, p. 6):
[671] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 42, p. 46; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 250-251.
[672] Արիանոս, էջ 96; Ռուփոս, էջ 349-351, 365:

տալիս Բաբելոնիայի սատրապությունը[673]:

Ըստ Դիոդորոս Սիկիլիացու՝ Կիլիկիայի Սյուեննեսիս թագավորը վարում էր երկդիմի քաղաքականություն. որդիներից մեկին զորամասով ուղարկել էր Արտաքսերքսեսին օգնության, իսկ մյուսին՝ Կյուրոս Կրտսերի մոտ: Այսպիսի քաղաքականության համար Սյուեննեսիսը զրկվում է արքայական գահից, և նրա երկիրը վերածվում է շարքային սատրապության[674]: Կոռնելիոս Նեպոսն էլ հաղորդում է, որ Կիլիկիայի հյուսիսային մասը, լևկոսիրիացիների հարևանությամբ, պարսից արքունիքը հանձնել էր Դաթամեսի հոր՝ Կամիսարեսի կառավարմանը, որի մահից հետո իշխանությունն անցնում է Դաթամեսին[675]: Վերջինս ավելի ուշ նաև Կապադովկիայի սատրապն էր[676]:

Ռուփոսը նույնպես կարևոր տեղեկություններ է հաղորդում Կիլիկիայի մասին: Պատմիչը հիշատակում է Կիլիկիայի մուտքը՝ Կիլիկյան դարպասները, Պյուրամոս, Կյուդնոս գետերը, Տարսոն, Սոլե, Մալոս, Կաստաբոլոս, Իսոս քաղաքները, Կիլիկիայի և Սիրիայի սահմանին գտնվող Ամանյան լեռնանցքը[677]: Ալեքսանդրի արշավանքի ժամանակ Կիլիկիան ունեցել է առանձին կառավարիչ, որի անունն էր Արսամ[678]: Վերջինս, ըստ էության, Կիլիկիայի հյուպարքոսն էր՝ Էբիր-նարիի և Կիլիկիայի սատրապ Մազայի ենթական: Ավելի ուշ Կիլիկիայում նշանակվում են ուրիշ կառավարիչներ[679]:

Դիոդորոս Սիկիլիացին Կիլիկիան հիշատակում է Նինոսի գրաված երկրների թվում[680]: Հույն պատմիչը հիշատակում է Կիլիկյան դարպասները, Տարսոն քաղաքը և Կիլիկիայի վերջին քաղաքը՝ Իսսոսը՝

[673] Արիանոս, էջ 107, 262; Ռուփոս, էջ 375:
[674] Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, XIV, 20, pp. 827-828. Քսենոփոնը հաղորդում է, որ Կյուրոս Կրտսերը ծովի կողմից փակել էր Կիլիկիայի Սյուեննեսիս թագավորի գործողությունները (տե՛ս Ксенофонт, Греческая история, с. 304. Տե՛ս նաև Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 376):
[675] Cornelius Nepos (Loeb), Datames, XIV, I, 1; Bing J. D., Datames and Mazaeus: The Iconography of Revolt and Restoration in Cilicia, Historia, Bd. 47, H. 1, 1998, pp. 42, 49. Դաթամեսի նույնացումը որոշ դրամների վրա մակագրված TRKMW անվանը հավանական չէ (տե՛ս Shannahan J. Satrapal Coins in the Collection of the Australian Centre..., pp. 47-49), քանի որ վերջին անվանումը կապված է տեղական դինաստ Tarkumuwa-ի հետ:
[676] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XV, 91, pp. 500-501; Cornelius Nepos (Loeb), Datames, XIV, IV, 3-5.
[677] Ռուփոս, էջ 287-288, 293, 295:
[678] Անդ, էջ 287:
[679] Անդ, էջ 328, 596:
[680] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17:

Սիրիայի սահմանին[681]: Կիպրոսի թագավոր Եվագորասի դեմ պատերազմում Կիլիկիան պարսից զորքերի հավաքատեղին էր[682]: Մ. թ. ա. 362/361 թվականներին կիլիկեցիները նույնպես ապստամբում են պարսից իշխանության դեմ[683]: Սիրիական դարպասները պատմիչն անվանում է Պյուլայ[684], որը բառացի նշանակում է «դռներ, դարպասներ»: Պերդիկկասը Կիլիկիան տալիս է Փիլոտասին[685]:

Ամասիացի աշխարհագետ Ստրաբոնը գրում է, որ, ըստ Հոմերոսի, կիլիկեցիները հնում բնակվել են Տրովադայում[686]:

Կիլիկյան սատրապությունն Աքեմենյան սեպագիր արձանագրություններում, հավանաբար, համապատասխանում է «tyaiy drayahyā»՝ «այն երկրները, որոնք ծովի մոտ են» արտահայտությանը: Կարծում ենք, որ ***DPe*** «այն երկրները, որոնք ծովի մոտ են (ափին են)»-ն («tyaiy drayahyā»)[687] նույնպես տեղորոշվում են Կիլիկիայի և թերևս Կիպրոսի տարածքներում, ընդ որում, նման եզրակացության մեզ մղում է այն հանգամանքը, որ երկու արձանագրություններում Կարիայի բացակայությունը[688] թույլ է տալիս Կարիան և նրանից արևելք ընկած Լյուկիան ու Պամփյուլիան ևս ընդգրկել աշխարհագրական այդ ընկալման մեջ: Բնականաբար, Կիլիկիայի և Կիպրոսի ներգրավումը Կարիայի, Լյուկիայի, Պամփյուլիայի հետ միասին աշխարհագրական նման սահմանների մեջ, ցույց է տալիս, որ այս հիշատակությունը նախորդել է Դարեհի վարչական վերափոխումներին, քանի որ I սատրապության մի մասի և IV-ի ներառումն աշխարհագրական միևնույն սահմանման մեջ չի համապատասխանում Դարեհի վարչական համակարգի մասին պահպանված տեղեկություններին:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Կիլիկյան սատրապությունը վարչական կայուն միավոր չէր, և նրա տարածքն Աքեմենյան արքունիքի կողմից ենթարկվում էր վարչական վերաձևումների: Չնայած իր փոքր տարածքին՝ Կիլիկյան սատրապությունը Աքեմենյանների համար ուներ կարևոր ռազմավարական նշանակություն, ինչը պահպանվեց Աքեմենյան Պարսկաստանի գոյության ողջ ժամանակաշրջանում: Սկզբնաղբյուրների բազմակողմանի քննությունը ցույց է տալիս, որ Կիլիկյան սատրապությունը հյուսիս-արևելքում երբեք չի հասել Մելիտինե, քանի որ հետագա Կոմագենե կոչված երկրի տարածքը մտել է Սատրապական Հայաստանի կազմի մեջ:

---

[681] Անդ, էջ 57-58:
[682] Անդ, էջ 71:
[683] Անդ, էջ 75:
[684] Անդ, էջ 83:
[685] Անդ, էջ 110:
[686] Страбон, с. 631.
[687] Kent R., Նշվ. աշխ., էջ 136:
[688] ***DNa***-ում կարիացիներն արդեն հիշատակվում են (տե՛ս Kent R., Նշվ. աշխ., էջ 138): Հ. Կարագյոզյանը Կարկա երկիրը նույնացնում է ոչ թե Կարիայի, այլ Կիլիկիայի հետ (տե՛ս Կարագյոզյան Հ., Սեպագիր տեղանուններ Այրարատում և հարակից նահանգներում), Եր., 1998, էջ 236), ինչը կասկածելի է:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՅՈՒՍԻՍԱՖՐԻԿՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Եգիպտոսի սատրապական բաժանումը

Պարսից սատրապությունների ցանկում եգիպտականն այն բացառիկ վարչական միավորներից մեկն է, որի մասին հույն պատմիչ Հերոդոտոսը և մյուս անտիկ հեղինակները պահպանել են առավել մեծաքանակ տեղեկություններ: Ստորև կքննենք եգիպտական սատրապության վերաբերյալ հին աղբյուրների այն պատմաաշխարհագրական տեղեկությունները, որոնց լույսով հնարավոր կդառնա վերականգնել Աքեմենյան տերության այդ կարևոր և ընդարձակ սատրապության վարչական կացության և տարածքի պատկերը:

Չնայած Քսենոփոնը Եգիպտոսի գրավումը վերագրում է Կյուրոս Մեծին[689], սակայն պարսկական զորքերը միայն մ. թ. ա. 525 թվականի ամռանն են գրավում Եգիպտոսը՝ Մուդրայան, և օգոստոսին Կամբյուսեսը պաշտոնապես հռչակվում է Եգիպտոսի թագավոր՝ հիմք դնելով փարավոնների XXVII հարստությանը. այդուհետ Կամբյուսեսը և հաջորդող պարսից արքաները Եգիպտոսում իրենց սկսեցին հորջորջել «Արքա Եգիպտոսի, արքա երկրների» տիտղոսով[690]: Եգիպտոսից հետո Կամբյուսեսը գրավում է Ամոնի օազիսը և Նուբիայի՝ եթովպացիների երկրի՝ Եգիպտոսին սահմանակից հատվածը՝ հասնելով մինչև Նեղոսի Երկրորդ ջրվեժներ[691]: Այդուհանդերձ, Քուշը՝ Նուբիան, Բեհիսթունի արձանագրությունում դեռևս չի հիշատակվում և ավելի ուշ

[689] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 358-359, 366-367:
[690] Atkinson K. M. T., The Legitimacy of Cambyses and Darius as Kings of Egypt, JAOS, Vol. 76, No. 3, 1956, p. 167.
[691] Фрай Р., Նշվ. աշխ., էջ 126; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 59, 61-62; Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, p. 214; Bresciani E., The Persian Occupation of Egypt, in: The Cambridge History of Iran, Vol. 2, Cambridge University Press, 1985, p. 502; The Oxford History of Ancient Egypt, ed. by I. Shaw, Oxford University Press, 2000, p. 374; Briant P., From Cyrus to Alexander, pp. 53-55; Ray J . D., Egypt 525-404 B. C., The Cambridge Ancient History, Vol. IV, p. 260. Դարեհ Ա-ն Եգիպտոս է գալիս մ. թ. ա. մոտ 518 թվականին (տե՛ս Kaper O. E., Petubastis IV in the Dakhla Oasis: New Evidence about an Early Rebellion against Persian Rule and Its Suppression in Political Memory, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Society of Biblical Literature Press, Atlanta, 2015, p. 139)), այսինքն՝ համապետական վարչական վերափոխումները դեռևս չէին ավարտվել:

միայն Դարեհ Ա-ի Պերսեպոլիսի արձանագրություններում այն նշվում է, այսինքն՝ վարչական առումով այն Եգիպտոսին միացվում է ավելի ուշ: Լիբիայի՝ Փուտի նվաճումը նույնպես վերագրվել է Դարեհ Ա-ին, սակայն կարծում ենք, որ մինչ այդ Կամբյուսեսը կարողացել էր գրավել այն[692]: Եգիպտոսի նվաճումից հետո եգիպտացիներն իրենց էթնիկական անվանումով *Mišrāja* հաճախ են հիշատակվում Միջագետքի բնակավայրերում[693]:

Հույն հեղինակ Հերոդոտոսն Աքեմենյան տերության VI սատրապության մասին գրում է. «Եգիպտոսից և Լիբիայի, Կյուրենեի ու Բարկայի՝ Եգիպտոսին հարած մասերից, որոնք ընդգրկված էին Եգիպտական նահանգի կազմում, ստացվում էր յոթ հարյուր տաղանդ, չհաշված Մոյրիս լճի ձկնորսությունից ստացվող արծաթը: Ահա այդ արծաթից և իբրև հարկ վերցվող ցորենից բացի (այդ երկրից) ստացվում էր յոթ հարյուր տաղանդ: Քանզի Մեմփիսի Սպիտակ բերդում հաստատված պարսիկների և նրանց վարձկանների համար վերցվում էր տասներկու բյուր մեդիմնոս (1 մեդիմնոսը=52,53 լիտր-Հ. Խ.) ցորեն: Սա վեցերորդ նահանգն էր»[694]:

Առաջին ենթադրությունն այն է, որ եգիպտական սատրապությունը՝ Մեմփիս կենտրոնով[695], եղել է ընդարձակ և հարուստ սատրապություն՝ ընդգրկելով Եգիպտոսին հարակից տարածքներ, որը հարկատվության չափով զիջել է միայն բաբելոնական և հնդկական սատրապություններին: Ընդ որում, առանձին աղբյուրներից պարզվում է, որ այս սատրապությունը պարսից արքունիքի և բանակի համար կատարում էր բազմաթիվ այլ պարտավորություններ, օրինակ՝ աղ և ջուր էր տրամադրում պարսից թագավորի սեղանի համար[696]:

Սուզայի (Սուսայի, Շոշի) արձանագրություններից մեկում (DSf) Դարեհ Ա-ն հայտնում է, որ Սուզայի պալատի կառուցման համար արծաթը և էբենոսափայտը բերվել են Եգիպտոսից, իսկ փղոսկրը՝ Եթովպիայից: Եգիպտացիները նաև հայտնի էին որպես ոսկերիչներ, փայտագործներ, որմնազարդարներ[697]: Մեծ թվով եգիպտացիներ, ներկա-

[692] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 62; Cameron G. G., Darius, Egypt, and the "Lands beyond the Sea", JNES, Vol. II, 1943, pp. 309-310.
[693] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 333, 361.
[694] Հերոդոտոս, III, 91:
[695] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 89; Bresciani E., The Persian Occupation of Egypt, p. 518.
[696] Дандамаев М. А., Ахеменидская империя, с. 145-146.
[697] Kent R., Նշվ. աշխ., էջ 143:

յացնելով հասարակական տարբեր շերտեր, ապրում էին Աքեմենյան տերության սրտում՝ Միջագետքում[698]:

Բացի Եգիպտոսից, VI սատրապության մեջ հիշատակվում են Լիբիան, Կյուրենեն և Բարկան, որոնք տարածքով միասին վերցրած զիջում էին Եգիպտոսին: Վերջին երկուսը ներկայացնում էին համանուն քաղաքներ՝ շրջակա տարածքներով[699]: Հերոդոտոսը հայտնում է, որ լիբիացիները, կյուրենացիներն ու բարկայցիները առանց կռվի հանձնվում են Կամբյուսեսին[700]: Ընդհանուր առմամբ, Կյուրենեն և Բարկան[701] նույնպես Լիբիայի մասերն են եղել[702]:

Կյուրենեի մեջ էին մտնում Պլատեա կղզին (Բոմբա ծովածոցի կղզիներից մեկը[703]), Մենելաոսի նավահանգիստը (թերևս Մարսա Գաբեսը կամ Մարսա էլ-Աորան[704]) և Ազիրիսը (Վադի էլ-Խալիգի գետաբերանում[705]), այսինքն՝ ծովափնյա շրջանները, իսկ Բարկայի մեջ՝ Տաուքեյրա քաղաքը (ներկայիս Թոքրան[706])[707]: Համաձայն Ստրաբոնի՝ Կյուրենեի կամ Կյուրենաիկայի (Հինգ քաղաքների երկիր[708]) սահմանն արևելքում սկսվել է Կատաբափմայից, որտեղ վերջանում էր Եգիպտոսի սահմանը[709]: Բարկայի սահմանն արևմուտքում հասել է մինչև եվհեսպերիտների երկիրը[710], ներկայիս Բենգազի[711]: Դարեհ Ա-ն գերեվարված բարկացիներին վերաբնակեցնում է Բակտրիայի գյուղերից մեկում, որը հայտնի էր Բարկա անունով[712]: Բարկան՝ հելլենիստական Պտղոմայիսը[713], որի ավերակները գտնվում են Մեդիմետ էլ-Մարջի մոտ[714], հիմնադրել էին կյուրենացիները մ. թ. ա. VI դարի կեսին:

698 Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 333-337, 361.
699 Հերոդոտոս, II, 181-182:
700 Անդ, III, 13; IV, 165:
701 Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, I, 68, p. 93.
702 Հերոդոտոս, IV, 156; 159-160; 199; Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, III, 49, pp. 271-272.
703 "A Commentary on Herodotus Books I-IV", p. 678.
704 Անդ, էջ 696:
705 Անդ, էջ 686:
706 Անդ, էջ 698:
707 Հերոդոտոս, IV, 169; 171; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 20, p. 247.
708 Pliny, Natural History, Vol. II, V, 31, p. 240.
709 Страбон, с. 737.
710 Հերոդոտոս, IV, 171; 204; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 20, p. 247.
711 Cameron G. G., Darius, Egypt, and the "Lands beyond the Sea", p. 312; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 149:
712 Հերոդոտոս, IV, 204:
713 Страбон, с. 769; Pliny, Natural History, Vol. II, V, 31, p. 240.
714 Скилак Кариандский, с. 269.

Քսերքսեսի Հելլադա արշավող բանակին եգիպտացիները տրամադրել էին երկու հարյուր նավ՝ զիջելով միայն փյունիկեցիների և պաղեստինյան սիրիացիների՝ երեք հարյուր նավից կազմված նավատորմին: Ընդ որում, եգիպտական նավատորմի հրամանատարը Քսերքսեսի հարազատ եղբայր Աքեմենեսն էր[715], ինչը, թերևս, վկայում է այն մասին, որ վերջինս նաև Եգիպտոսի սատրապն էր: VI սատրապության ժողովուրդներից միայն լիբիացիներն էին առանձին հրամանատարությամբ տրամադրել հետևազոր և հեծելազոր[716]:

Հերոդոտոսի հաջորդ տեղեկություններն արդեն հնարավորություն են տալիս հստակեցնել եգիպտական սատրապության սահմանները: Պատմիչը տարբեր առիթներով հիշատակում է եգիպտական նշանավոր քաղաքներ Թեբեն և Հելիուպոլիսը[717], Թելլ Հիսնը՝ Կահիրեից 12 կմ հյուսիս-արևելք[718]:

Հերոդոտոսը հաճախ է հիշատակում Թեբեի մարզը[719], Վերին Եգիպտոսի IV նոմոսը, որը, կապված լինելով նույնանուն քաղաքի հետ, երբեմն ընկալվում էր ավելի մեծ տարածքով՝ Ելեփանտինեից մինչև Ֆայում[720], որտեղ էլ գտնվել է Հերոդոտոսի և անտիկ մյուս հեղինակների մոտ[721] հիշատակվող Մոյրիս լիճը[722], որը Ֆայումի մոտ գտնվող Բիրկետ Կարուն փոքր լիճն է[723]: Թեբեական երկրում հիշատակվում են Նեապոլիս և Քեմմիս քաղաքները[724], որոնցից առաջինը համապատասխանում է հետագա Պտղոմայիսի տարածքին՝ ներկայիս Էլ-Մանշահին, երկրորդը Պանոպոլիսն է[725], ներկայիս Ախմիմը[726]: Քեմմիս անունով կղզի Հերոդոտոսը հիշատակում է Դելտայում[727]: Իսկ Մոյրիս

715 Հերոդոտոս, VII, 89; 97:
716 Անդ, VII, 71; 86:
717 Անդ, II, 3; 7:
718 "A Commentary on Herodotus Books I-IV", p. 243.
719 Հերոդոտոս, II, 4; 42; 69; 91; Diodori Bibliotheca Historica, Vol. I, I, 18, p. 22; Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, pp. 123-124.
720 "A Commentary on Herodotus Books I-IV", p. 245. Հմմտ. Հերոդոտոս, II, 15:
721 Страбон, с. 729, 746-747; Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, I, 51-52, pp. 71-73; Pliny, Natural History, Vol. II, V, 50, p. 256.
722 Հերոդոտոս, II, 69:
723 "A Commentary on Herodotus Books I-IV", p. 350.
724 Հերոդոտոս, II, 91:
725 Страбон, с. 749; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, IV, V, 72.
726 Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, Oxford University Press, 1947, p. 40; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 303.
727 Հերոդոտոս, II, 156:

լճից հարավ-արևելք հայտնի էր Կոկորդիլոսների քաղաքը[728]՝ եգիպտական *Šdyt*-ը՝ հելլենիստական և հռոմեական դարաշրջանի Արսինոյտոն պոլիսը կամ Արսինոյան, ներկայիս Մեդինետ էլ-Ֆայումը[729]:

Հերոդոտոսը Եգիպտոսի ծովափի երկարությունը արևելքից արևմուտք հաշվում է վաթսուն պարան երկարություն (շուրջ 429,60 կմ)՝ Պլինթինետես ծովախորշից՝ հետագա Ալեքսանդրիա քաղաքի շրջանից մինչև Սերբոնիս լիճը՝ Սաբխետ էլ-Բարդավիլը[730] Կասիոն լեռան մոտ[731]: Նույն Հերոդոտոսը, նկատի ունենալով Ստորին Եգիպտոսը, հայտնում է, որ Եգիպտոսը տարածվել է արևելքում Արաբական լեռների և արևմուտքում՝ Լիբիայի կողմից, ավազաբլուրների[732], այսինքն՝ Լիբիական անապատի հյուսիսարևելյան հատվածի միջև: Հույն հեղինակը նաև հայտնում է, որ հոնիացիների համար Եգիպտոսը միայն Դելտան էր, իսկ ծովափը ձգվել է Պերսևսի աշտարակ կոչված վայրից մինչև Տարիքեյա՝ «ձկների աղման արհեստանոցները» Պելուսիայում[733]: Ստրաբոնը Պերսևսի աշտարակը հիշատակում է Նեղոսի Բոլբիտինյան[734] գետաբերանից արևելք, Ագնու-Կերասից հետո[735], իսկ Պելուսիան նույնանում է էլ-Ֆարամին, Պորտ Սայիդից 40 կմ դեպի հարավ-արևելք[736]: Հերոդոտոսը Դելտան, սկսած ծովափից, հարավում հասցնում է մինչև Կերկասորոս քաղաքը[737]՝ ներկայիս էլ-Վարաքը՝ Կահիրեից հյուսիս-արևմուտք[738], որտեղից Նեղոսը երկատվելով մի հոսանքով ուղղվում է դեպի Պելուսիոն, իսկ մյուսով՝ դեպի Կանոբոս[739]՝ Աբուքիրից արևմուտք:

Պատմիչը հիշատակում է նաև Նեղոսի Սեբեննյուտյան, Սաիսյան կամ Տանիսյան[740], Մենդեսյան և Բուկոլիկյան գետաբերանները[741]: Նկատենք նաև, որ Հերոդոտոսն անձամբ եղել էր Դելտայում, և դա

[728] Անդ, II, 148-149:
[729] Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, p. 116.
[730] "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 246-247.
[731] Հերոդոտոս, II, 6:
[732] Անդ, II, 8:
[733] Անդ, II, 15, 113:
[734] Muller C., FHG, Vol. I, p. 20, fr. 285.
[735] Страбон, с. 739.
[736] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 252.
[737] Հերոդոտոս, II, 97:
[738] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 252.
[739] Հերոդոտոս, II, 15; 17:
[740] Manetho, with an English translation by W. G. Waddel, Cambridge-Massachusetts-London, 1948, Loeb Classical Library, p. 22.
[741] Հերոդոտոս, II, 17; Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, I, 33, pp. 44-45.

երևում է նրա բազմաթիվ տեղեկություններից, օրինակ, երբ խոսում է Սաիս նշանավոր քաղաքի մասին[742], որը նույնանում է ժամանակակից Սա էլ-Հագարին[743], կամ էլ հիշատակում է Մենդեսյան մարզը[744]: Կոնոբոսյան[745] և Սեբեննյուտյան գետաբերանների միջև Հերոդոտոսը հիշատակում է Պրոսոպիտիս կղզին[746], որի մասին հիշատակում են նաև այլ հեղինակներ[747]: Այս կղզու վրա էր Արտեմիսի՝ Ատոր-Իսիսի տաճարով հայտնի Ատարբեքիս քաղաքը[748]՝ ներկայիս Կոմ Աբու Բիլլուն, որը Ստրաբոնի կողմից հիշատակված Ափրոդիտեի քաղաքն է[749]: Հիմնականում պատմիչը Դելտայում հիշատակում է Բուբաստիս[750] (ներկայիս Թել Բաստան), Բուսիրիս (ներկայիս Աբու Սիրի մոտ), Բուտո (ներկայիս Թել էլ-Ֆարայինի մոտ), Պապրեմիս (հյուսիսարևմտյան Դելտայում), Անյուսիս (հյուսիսարևելյան Դելտայում, Հերակլեոպոլիսը՞), Նավկրատիս (հյուսիսարևմտյան Դելտայում, Կանոբոսյան գետաբերանի արևելյան շրջանում), Մոմեմփիս (Կոմ էլ-Հիսնը արևմտյան Դելտայում[751]), Անթյուլլա (Գյունեկոպոլիսը՞) և Արքանդրոս (տեղադրությունն անհայտ է)[752], Հերմոպոլիս (ներկայիս Աշմունեն Կահիրեից հարավ) քաղաքները, որոնք պաշտամունքային կամ այլ հայտնի վայրեր էին[753]: Այս վայրերի թվարկության մեջ պարզվում է, որ Բուտոն գտնվել է Արաբիայում[754], այսինքն՝ հյուսիսարևելյան Դելտայում, ինչը, թերևս, խոսում է այն մասին, որ Հերոդոտոսի ժամանակ Բուտոն եգիպտական սատրապության մեջ չէր: Հետաքրքիր է նաև, որ Հերոդոտոսն ամոնացիներին՝ Սիվա օազիսի կամ «Ամոնի կղզու»[755]

[742] Հերոդոտոս, II, 28; 59:
[743] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 257.
[744] Հերոդոտոս, II, 42:
[745] Muller C., FHG, Vol. I, p. 20, fr. 282.
[746] Հերոդոտոս, II, 41:
[747] Фукидид, История, с. 55-56; Страбон, с. 740; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, IV, VI, 49.
[748] Հերոդոտոս, II, 41:
[749] Страбон, с. 740, 749, 752.
[750] Manetho, pp. 20, 34, 81.
[751] Ball J., Egypt in the Classical Geographers, Cairo, 1942, p. 18.
[752] Հերոդոտոս, II, 97:
[753] Հերոդոտոս, II, 59-63; 67, 97, 137, 163, 169; "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 277, 284, 309, 339, 373. Տե՛ս նաև Скилак Кариандский, с. 263.
[754] Հերոդոտոս, II, 75:
[755] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 427.

բնակիչներին[756], որտեղ գտնվում էր Ամոն-Զևսի պատգամախոսական տաճարը, համարում է եգիպտացի և եթովպացի գաղթականների խառնուրդ[757], ինչը նշանակում է, որ այստեղ եղել են նաև եթովպացիներ, որոնց հավար նույնպես տաճարը եղել է սրբազան: Ավելի ուշ Արիանոսն Ամոնի օազիսը հիշատակում է Լիբիայի կազմում[758], ինչը ցույց է տալիս, որ վերջինս համարվել է լիբիական տարածք:

Հերոդոտոսի համար Վերին Եգիպտոսը սկսվել է Մեմփիսից հարավ, այն դեպքում երբ Դելտայի շրջանը և Մոյրիս լճից հարավ ընկած տարածքը համարվել է Ստորին Եգիպտոս[759]: Ավելի կոնկրետ՝ Ստորին Եգիպտոսը Հելիուպոլիսից հասել է մինչև Թեբե՝ Դիոսպոլիս[760], որից հետո հիշատակված Ելեփանտինե քաղաքն արդեն Վերին Եգիպտոսում էր[761]: Վերին Եգիպտոսում են հիշատակվում Թեբաիս երկրի Սյուենե քաղաքը[762]՝ ժամանակակից Ասուանը[763], և Ելեփանտինեն՝ «Փղոսկրե քաղաքը»[764], որոնց միջև գտնվել են Կրոփի և Մոփի լեռները[765]: Ելեփանտինեն գտնվել է Նեղոսի Առաջին ջրվեժի մոտ, որի շրջանում Հերոդոտոսը հիշատակում է նաև Տաքոմպսո[766]՝ ներկայիս Ջերար կղզին[767], որը չի նույնանում Ստրաբոնի Փիլե կղզուն[768]: Ելեփանտինեից հարավ ապրել են եթովպացիներ, որոնց մայրաքաղաքը Մերոեն էր[769]՝ Բակարավիայի շրջանում:

Հերոդոտոսը Եգիպտոսի սահմանը արևմուտքում հասցնում է մինչև

[756] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 268; Colburn H. P., Memories of the Second Persian Period in Egypt, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, p. 171.
[757] Հերոդոտոս, II, 42:
[758] Արիանոս, էջ 91-92:
[759] Հերոդոտոս, II, 13:
[760] Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, I, 15; 45, pp. 21, 64; Manetho, pp. 20, 34, 72, 124.
[761] Հերոդոտոս, II, 9:
[762] Այստեղ կար ռազմական կայազոր (տե՛ս Sprengling M., The Aramaic Papyri of Elephantine in English, AJT, Vol. XXI, № 3, 1917, p. 414):
[763] Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, p. 5.
[764] Անդ, էջ 2:
[765] Հերոդոտոս, II, 28:
[766] Անդ, II, 29:
[767] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 259.
[768] Страбон, с. 47, 741, 753, 755.
[769] Հերոդոտոս, II, 29; Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, I, 33, p. 43; Africa W. T., Herodotus and Diodorus on Egypt, JNES, Vol. 22, No. 4, 1963, p. 255.

Մարեա[770] և Ապիս քաղաքները[771], որոնցից առաջինը գտնվել է Մարեոտիս լճից հարավ, իսկ երկրորդը նույնանում է Թապոսիրիսին՝ ժամանակակից Աբուսիրին[772]: Հյուսիս-արևելքում՝ արաբների և ասորեստանցիների ուղղությամբ (ինչը գալիս էր դեռևս նախաաքեմենյան ժամանակաշրջանից), պարսիկները կայազոր ունեին Դափնեում՝ ժամանակակից Դաֆնան[773] Պելուսիայում[774]:

Համաձայն Հերոդոտոսի՝ ամբողջ Եգիպտոսը բաժանված էր մարզերի իրենց կառավարիչներով: Մարզերի առաջին խումբը՝ Բուսիրիսյան, Սաիսյան, Քեմմիսյան, Պապրեմիսյան, Պրոսոպոտիս կոչված կղզին, Նաթոյի կեսը (Ստորին Եգիպտոսի XI նոմոսի կազմում[775]), տեղադրվում է Դելտայի արևմտյան և կենտրոնական մասում: Երկրորդ խումբը՝ Թեբեյան, Բուբաստիսյան, Ափթիսյան (Ստորին Եգիպտոսի XIV նոմոսի կազմում), Տանիսյան, Մենդեսյան, Սեբեննոսյան, Աթրիբիսյան (Ստորին Եգիպտոսի X նոմոսի կազմում), Փարբաիսյան (Ստորին Եգիպտոսի XI նոմոսի կազմում), Թմուիսյան (այստեղ սխալմամբ է ներկայացված, քանի որ նույնանում է Մենդեսյանին), Օնուփիսյան[776] (Տանթայից հյուսիս, Մեհալլաթ Մենուֆի շուրջ), Անյուսյան (Դելտայի արևելյան հատվածում, Մենզալաի լճի հարավարևելյան անկյունում), Մյուեկփորիսյան (Ստորին Եգիպտոսի XX նոմոսի կազմում), տեղադրվում է Դելտայի հարավային և արևելյան մասում[777]:

Հերոդոտոսը հայտնում է, որ Կամբյուսեսը Եգիպտոսի հյուպարքոս էր նշանակել Արյուանդեսին[778], այսինքն, եթե նկատի ունենանք, որ VI

[770] Фукидид, История, с. 53; Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars I, I, 68, p. 94; Ray J. D., Egypt 525-404 B. C., p. 259.
[771] Հերոդոտոս, II, 18; 30:
[772] Ball J., Egypt in the Classical Geographers, p. 17.
[773] Worp K. A., Observations on Some Military Camps and Place Names in Lower Egypt, ZPE, 87, 1991, p. 293.
[774] Հերոդոտոս, II, 30:
[775] Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, p. 146.
[776] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, IV, V, 51; Pliny, Natural History, Vol. II, V, 49, p. 254.
[777] Հերոդոտոս, II, 165-166; III, 6; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 365.
[778] Herodotus, Vol. II, IV, 166, p. 370; Ray J . D., Egypt 525-404 B. C., p. 266. Եգիպտական տեքստերում սատրապը կոչվում էր «Եգիպտոսի տեր» (տե՛ս Agut-Labordère D., Administrating Egypt under the First Persian Period. The Empire as visible in the Demotic sources, in: Die Verwaltung im Achämenidenreich. Imperiale Muster und Strukturen/Administration in the Achaemenid Empire. Tracing the Imperial Signature, Herausgegeben von/Edited by B. Jacobs, W. F. M. Henkelman, M. W. Stolper, CO, Band 17, 2017, p. 685):

սատրապությունը լայն առումով հայտնի էր որպես եգիպտական սատրապություն, ապա Արյուանդեսը Եգիպտոսի սատրապն էր: Վերջինիս փոխարինել է Փերենդատեսը[779], իսկ նրան՝ մ. թ. ա. 484 թվականին[780] Քսերքսեսի եղբայր Աքեմենեսը, որին Հերոդոտոսը հորջորջում է փոխարքա տիտղոսով[781], այսինքն՝ Աքեմենյան արքայատոհմի գլխավոր ներկայացուցիչներից մեկին է վստահվել այս կարևոր սատրապության կառավարումը: Մ. թ. ա. 454-403 թվականներին Եգիպտոսի սատրապն էր Արշամեսը[782], իսկ մ. թ. ա. 342 թվականին՝ Եգիպտոսի վերանվաճումից հետո, Արտաքսերքսես Գ-ն Եգիպտոսի սատրապ է նշանակում Փերենդատեսին[783]:

Ըստ Արիանոսի՝ մ. թ. ա. 334 թվականին Գրանիկոսի ճակատամարտում սպանվում է Եգիպտոսի սատրապ Սավակը[784], որն, ըստ էության, եղել է պարսկական բանակի հեծելազորի հրամանատարներից մեկը: Եգիպտոսի սատրապ Մազակը[785] Ալեքսանդր Մակեդոնացուն ենթարկվում է առանց դիմադրության. եգիպտական քաղաքները՝ Պելուզիումը, Հելիոպոլիսը, Մեմփիսը, մակեդոնացի նվաճողին ենթարկվում են կամավոր: Ալեքսանդր Մակեդոնացին կարճ ժամանակ անց հիմնադրում է հին աշխարհի ամենահայտնի քաղաքներից մեկը՝ Ալեքսանդրիան[786]: Արիանոսը հայտնում է նաև, որ Ալեքսանդրը Լիբիայի կառավարումը հանձնում է Ապոլլոնիդոսին[787]: Սովորաբար Լիբիայի տարածքը արևմուտքում հասցվել է մինչև Ջիբրալթար[788], սակայն Մակեդոնիայի թագավորն, ըստ երևույթին, միայն Սիվայի օազիսը[789] հարակից շրջաններով դարձնում է առանձին վարչական միավոր: Արիանոսը մի տեղում կողք կողքի հիշատակում է Եգիպտոսը և Կիրենան[790], այսինքն՝ Եգիպտոսին սահմանակից աֆրիկյան շրջանները[791]: Մեր կարծիքով, Կիրենա-Կյուրենեի տակ պետք է հասկանանք Լիբիայի ծովափնյա մասը՝ Սիվայից հյուսիս՝ Ալեքսանդրիայից և Մարեոտիս լճից արևմուտք[792], այն դեպքում, երբ Հերոդոտոսը Լիբիան և Կյուրենեն տարբերակում էր:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո Եգիպտոսի և աֆրիկյան ժողովուրդների սատրապ է դառնում Պտղոմեոսը[793]:

Եգիպտոսը՝ որպես պարսիկներին հպատակ երկիր, հիշատակվում է Բեհիսթունի արձանագրությունից սկսած[794]: Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություններից մեկում՝ DPh-ում, Քուշը հիշատակվում է որպես տերության հարավարևմտյան ծայրամաս[795]: Նույն թագավորի՝ Նաղշե Ռոստամի արձանագրությունում (DNa) Եգիպտոսը, Լիբիան, Եթովպիան արդեն հիշատակվում են միասին. Եգիպտոսն առանձին, իսկ Լիբիան և Եթովպիան՝ կողք կողքի[796]: Աքեմենյան թագավորի հրամանով կառուցվում է նաև Սուեզի ջրանցքը[797]: Դարեհ Ա-ն իրեն հայտարարում էր Վերին և Ստորին Եգիպտոսի տիրակալ, որի տիրա-

[779] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 51, p. 56; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 105; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 312:

[780] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 150.

[781] Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. III, Cambridge-Massachusetts-London, 1938, Loeb Classical Library, VII, 7, p. 308. Հմմտ. Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 164.

[782] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 182; "Aramaic Documents of the Fifth Century B. C.", pp. 10-12, 92.

[783] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 253; Bresciani E., The Persian Occupation of Egypt, p. 526.

[784] Արիանոս, էջ 68: Հմմտ. Ռուփոս, էջ 314; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 34, p. 137.

[785] Պահպանվել է Մազակի արծաթե դրամը (տե՛ս Bodzek J., A Note on a Satrapal Coin, pp. 17-19), ինչը հաստատում է վերջինիս լայն լիազորությունների մասին:

[786] Արիանոս, էջ 89-90; Ռուփոս, էջ 314, 333-334; Плутарх, Александр, XXV, Избранные жизнеописания, т. II, с. 387-388.

[787] Արիանոս, էջ 93; Ռուփոս, էջ 337; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 168; Burstein S. M., Alexander in Egypt: Continuity or Change?, in: AHistory VIII, Continuity and Change, ed. by Heleen Sancisi-Weerdenburg, Amelie Kuhrt & Margaret Cool Root, Leiden, 1994, p. 385.

[788] Արիանոս, էջ 201:

[789] Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 173. Սիվայի կրոնաքաղաքական նշանակության մասին տե՛ս Bowden B., Alexander in Egypt: Considering the Egyptian Evidence, in: Alexander in Africa, ed. Ph. Bosman, Acta Classica Supplementum V, Pretoria, 2014, pp. 38-55.

[790] Արիանոս, էջ 251:

[791] Ռուփոս, էջ 337:

[792] Հմմտ. Ռուփոս, էջ 334:

[793] Անդ, էջ 596; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, p. 228; The Oxford History of Ancient Egypt, p. 389; Curtius Rufus, Histories of Alexander the Great, Book 10, transl. by J. C. Yardley, with Introduction and Historical Commentary by J. E. Atkinson, Oxford University Press, 2009, p. 220.

[794] Kent R., Նշվ. աշխ., էջ 117:

[795] Անդ, էջ 136:

[796] Անդ, էջ 137:

[797] Անդ, էջ 147: Տե՛ս նաև Kent R. G., The Darius Suez c Inscription, JNES, Vol. I, 1942, pp. 415-421; Lloyd A. B., Darius I in Egypt: Suez and Hibis, in: Persian Responses: Political and Cultural Interactions with (in) the Achaemenid Empire, ed. C. Tuplin, Swansea, 2007, pp. 99-115.

պետության տակ էին տափաստանների և լեռների երկրները[798], այսինքն՝ եզակի դեպք, երբ չեն թվարկվում հպատակ ժողովուրդները կամ երկրները: Դարեհ Ա-ի եգիպտական հիերոգլիֆ արձանագրությունում Եգիպտոսը, Լիբիան և Նուբիան հիշատակվում են կողք կողքի, աշխարհագրական հերթականությամբ[799]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Եգիպտոսն Աքեմենյան տերության հարուստ և ընդարձակ սատրապություններից մեկն էր, որտեղ Աքեմենյան թագավորները մշտապես ձգտում էին ռազմաքաղաքական-տնտեսական գործուն միջոցներով ամուր պահել իրենց իշխանությունը: Վարչական առումով VI սատրապությունը բաժանված էր չորս ենթաշրջանների՝ Եգիպտոս, Լիբիա, Կյուրենե և Բարկա:

2.2. Արաբիայի և Պաղեստինի վարչական բաժանումը

Հույն պատմիչ Հերոդոտոսը գրում է, որ V սատրապության մաս կազմող երկրներից մեկը Պաղեստինյան կոչված Սիրիան էր[800]: Պատմիչը Պաղեստինյան Սիրիայի մասին հայտնում է մի քանի տեղեկություններ ևս, սակայն, ընդհանուր առմամբ, անտիկ աղբյուրների հաղորդումները Պաղեստինի մասին քիչ են և կցկտուր: Պաղեստին անվանումը ծագում է եբրայերեն Plšth-ից, ինչը նշանակում է «փղշտացիների երկիր»[801]: Համաձայն Հերոդոտոսի՝ պաղեստինցիները Քսերքսեսի հելլենական արշավանքին փյունիկեցիների հետ տրամադրել էին երեք հարյուր տրիերաներ[802]: Պատմիչը նաև հայտնում է, որ Պաղեստինը գտնվել է Փյունիկիայից հարավ՝ հասնելով մինչև Եգիպտոս[803]:

Հերոդոտոսի հետևյալ տեղեկությունը բացահայտում է որոշ հետաքրքիր պատմաաշխարհագրական իրողություններ: Հալիկառնասցի հեղինակը գրում է, որ Սիրիայի առափնյա հատվածը արաբական երկրի մեջ է գտնվել[804], ինչը խոսում է այն մասին, որ Փյունիկիայից հարավ ընկած Պաղեստինյան Սիրիան կամ, ավելի ճիշտ, վերջինիս հարավային մասը համարվել է արաբական երկրի մաս: Շատ դեպքերում հույն հեղինակը Սիրիան համարում է Եգիպտոսին սահմանակից երկիր[805], ինչի տակ պետք է նկատի ունենանք Պաղեստինը:

Հերոդոտոսը, խոսելով Եգիպտոսի փարավոն Պսամմետիքոսի մասին, գրում է, որ վերջինս գրավել է Սիրիայի խոշոր քաղաք Ազոտոսը, իսկ Պսամմետիքոսի որդի Նեկոս Բ-ն (մ. թ. ա. 610-595 թթ.) կառուցել է Կարմիր ծով տանող ջրանցք՝ սկսելով այն Բուբաստիս քաղաքի մոտակայքից և շարունակելով Արաբիայի Պատումոս քաղաքի շրջանով մինչև Կարմիր ծով: Շարունակելով իր պատմությունը՝ պատմիչը Կարմիր ծովը՝ Պարսից ծոցը, նույնացնում է Հարավային ծովին, որի տակ պետք է հասկանալ Հնդկական օվկիանոսը: Մյուս կողմից էլ հեղինակը Արաբական ծոցը տեղադրում է Կարմիր ծովում[806], որը կարելի է բացատրել հետևյալ կերպ. կա՛մ Արաբական ծոցը նույնանում է Կարմիր ծով համարվող Պարսից ծոցին, այսինքն՝ լայն առումով Կարմիր ծովը Հնդկական օվկիանոսն է, կա՛մ էլ Արաբական ծոց[807] է համարվում Պարսից ծոցի հյուսիսային մասը, ինչն ավելի հավանական է: Նեկոսը նաև Մագդոլոսում հաղթել է սիրիացիներին և գրավել նրանց հայտնի քաղաք Կադյուտիսը[808]: Նկատենք նաև, որ, ըստ պատմիչի, Պաղեստինյան Սիրիայի և Եգիպտոսի սահմանը եղել է Կասիոն լեռը, որը տեղադրում է Սերբոնիս լճի մոտ, որտեղից սկսվել է Եգիպտոսը[809]:

Կասիոն լեռը՝ Կաթիբ էլ-Քալսը, և Սերբոնիս լիճը՝ Սաբխետ էլ-Բարդավիլը[810], Ստրաբոնը տեղադրում է Պելուսիայից արևելք՝ համարելով Եգիպտոսի մասեր[811]: Որոշ դեպքերում Ստրաբոնը Սերբոնիս լիճը շփոթում է Մեռյալ ծովի հետ[812], ինչը կապված է այն իրողության հետ, որ արաբական Պետրա քաղաքի մոտ գտնվել են Կասիոն անունով բլուրները, որոնք համապատասխանում են ներկայիս Էլ-Կասին[813]: Ընդհանուր առմամբ, Ստրաբոնը Կասիոն լեռը համարում է կա՛մ Փյունիկիայի մաս, կա՛մ էլ Փյունիկիային անմիջականորեն սահմանա-

---

[798] Roaf M., The Subject Peoples on the Base of the Statue of Darius, CahDAFI, 4, 1974, p. 75.
[799] Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte, JA, t. 260, Paris, 1972, f. 3-4 pp. 258-259.
[800] Հերոդոտոս, II, 104, 106; III, 91:
[801] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 154.
[802] Հերոդոտոս, VII, 89:
[803] Անդ, III, 91; IV, 39:
[804] Անդ, II, 12:
[805] Անդ, I, 105; II, 116:
[806] Անդ, II, 158-159:
[807] Հերոդոտոսը Արաբական ծոցը կոչում է նաև Պլինթինետես անունով (անդ, II, 6): Պլինթինե անունով քաղաքը գտնվել է հետագայի Ալեքսանդրիա քաղաքից արևմուտք (տե՛ս DGRG, Vol. I, p. 642):
[808] Հերոդոտոս, II, 159:
[809] Անդ, II, 6, 158; III, 5:
[810] "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 246-247.
[811] Страбон, с. 58, 65, 702.
[812] Անդ, էջ 703-704, 707:
[813] DGRG, Vol. I, p. 558.

կից[814], ինչը պայմանավորված է նրա կողմից վաղ շրջանից եկած աղբյուրների օգտագործմամբ: Աշխարհագետը միաժամանակ հայտնում է, որ Եգիպտոսին արևելքից սահմանակից են Փյունիկիան, Հուդան և նաբաթեական Արաբիան[815], սակայն Հուդան չէր կարող սահմանակցել Եգիպտոսին:

Եգիպտական քաղաք Բուբաստիսը ներկայիս Թել-Բուստակն է կամ Թելլ Բաստան արևելյան Դելտայում[816], իսկ Արաբիայում հիշատակված Պատումոս քաղաքը եգիպտական Pr-itm-ն է, ինչը նշանակում է «Աթոնի տուն» և նույնանում է Հին Կտակարանի Պիթոմին: Պատումոսը գտնվել է ներկայիս Թելլ էլ-Մասխուտահի մոտ[817]՝ Իսմայիլիա քաղաքից 16 կմ դեպի արևմուտք: Պատումոսի նման տեղադրությունը ցույց է տալիս, որ այն Հերոդոտոսից առաջ գտնվել է Եգիպտոսի տարածքում, սակայն նրա ժամանակ քաղաքն արդեն Արաբիայի մեջ է: Սա նշանակում է, որ վարչական կամ ավելի ճիշտ քաղաքական նկատառումներից ելնելով՝ Պատումոսը պարսիկները տվել էին արաբներին՝ որպես դաշնակիցներ: Փաստորեն մ. թ. ա. V դարում արաբներն արդեն դուրս էին եկել Սինայի թերակղզուց՝ անցնելով Եգիպտոսի աշխարհագրական սահմանները:

Ինչ վերաբերում է սիրիական քաղաքներ Ազոտոսին, Մագդոլոսին և Կադյուտիսին, ապա առաջինն Աշդոդն է, երկրորդը՝ անկասկած Պելուսիայի մոտ գտնվող Միգդոլը, իսկ երրորդը՝ Գազան[818]: Այս նույնացումներն, իրոք, վկայում են այն մասին, որ Սիրիայի կամ Պաղեստինյան Սիրիայի հարավային հատվածը մտել է արաբների երկրի մեջ, այսինքն՝ V սատրապության հարավային սահմանագիծն անցնում էր Սինայի թերակղզին՝ ձգվելով Պելուսիայից հարավ: Հերոդոտոսին հայտնի է նաև Սիրիայի Ասկալոն քաղաքը[819], որը գտնվել է Գազայից 16 կմ դեպի հյուսիս և նույնանում է եգիպտական աղբյուրների Աշկանուին՝ Հին Կտակարանի Աշկլոնին:

Հաջորդ տեղեկության մեջ Հերոդոտոսը Կադյուտիսը՝ Գազան, համարում է պաղեստինյան սիրիացիների սահմանն հարավային ուղղությամբ և ավելացնում, որ Կադյուտիս քաղաքից մինչև Յենյուսոս քաղաքն ընկած նավահանգիստները պատկանել են արաբներին:

[814] Страбон, с. 65, 703.
[815] Անդ, էջ 740:
[816] DGRG, Vol. I, p. 453; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 277.
[817] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 358.
[818] Անդ, էջ 357, 359:
[819] Հերոդոտոս, I, 105:

Պատմիչը շարունակում է՝ գրելով, որ «Յենյուսոսից սիրիական հողերը դարձյալ շարունակվում են մինչև Սերբոնիս լիճը, որի մոտով դեպի ծով ձգվում է Կասիոն լեռը: Իսկ Սերբոնիս լճից արդեն սկսվում է Եգիպտոսը: Արդ, Յենյուսոս քաղաքի, Կասիոն լեռան և Սերբոնիս լճի միջև ընկած ամբողջ երկիրը, որը երեք օրվա ճանապարհի երկարություն ունի, բոլորովին ջրազուրկ է»[820]: Վերջին տեղեկության մեջ պատմիչը հայտնում է, որ Փյունիկիայից մինչև Կադյուտիս քաղաքը տարածվում է պաղեստինյան կոչված սիրիացիների երկիրը, սակայն հստակ չէ, թե որտեղից է սկսվում Փյունիկիայի հարավային սահմանագիծը[821], քանի որ, դատելով տարբեր սկզբնաղբյուրներից, Պաղեստինյան Սիրիան աշխարհագրական առումով ևս համարվել է Փյունիկիա: Վերոբերյալ տեղեկության մեջ կարևոր է այն իրողությունը, որ Կադյուտիսից մինչև Յենյուսոս ընկած հողերը համարվել են Պաղեստինյան Սիրիայի մասը: Այս վերջին մատնանշումը կարևոր է այն տեսանկյունից, որ Հերոդոտոսը, ըստ էության, անձամբ էր անցել այդ տարածքով և նրա կողմից Պաղեստինյան Սիրիայի սահմանների նշումն առավել քան իրական է: Մյուս կողմից էլ պետք է նկատի ունենալ, որ ընդհանուր առմամբ Պաղեստինյան Սիրիա անունով նշված Միջերկրական ծովի արևելյան առափնյա շրջանն ունեցել է խառն էթնիկական կազմ՝ փյունիկեցիներ, արաբներ, փղշտացիներ, եգիպտացիներ և, հնարավոր է այլ ցեղեր, ինչն էլ աշխարհագրական տեսանկյունից հին աղբյուրներում արտացոլվել է ոչ միանշանակ: Յենյուսոսի նույնացումը Խան-Յունիսին կասկածելի է, և այն պետք նույնացնել Էլ-Արիշին՝ Ստրաբոնի Ռինոկոլուրային[822], որը տեղադրվում է Փյունիկիայում[823]: Ստրաբոնը նշում է Պետրայից Ռինոկոլուրա բեռների տեղափոխման մասին, ինչից կարելի է եզրակացնել, որ Յենյուսոս-Ռինոկոլուրա քաղաքը գտնվել է արաբների առևտրական վերահսկողության տակ: Հարց է ծագում, եթե Հերոդոտոսը Յենյուսոսից հետո ընկած հողերը համարում է սիրիական տարածքներ, ուրեմն կարելի է՞ ենթադրել, որ Յենյուսոսի և Սերբոնիսի միջև ընկած շրջանը դուրս է գտնվել արաբների վերահսկողությունից: Կարծում ենք, որ նշված տարածքը նույնպես գտնվել է արաբների վերահսկողության տակ, քանի որ, համաձայն Հերոդոտոսի, Հելիուպոլիսից՝ Կահիրեից 12 կմ հյուսիս-

[820] Անդ, III, 5:
[821] Փյունիկիայի մասին տե՛ս Խորհիյան Հ., Փյունիկիայի վարչական կացությունը Աքեմենյան Պարսկաստանի V սատրապության կազմում, ԱՀ, h. IX, 2015, էջ 475-490:
[822] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 403.
[823] Страбон, с. 688, 703, 723.

արևելք, Թել Հիսնի մոտ[824], արևելք և հարավ-արևելք գտնվել են Արաբական լեռները[825], այսինքն՝ եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ Պատումոսը պատկանել է արաբներին, ապա կարող ենք եզրակացնել, որ Սինայի թերակղզու հյուսիսային հատվածը ևս գտնվում էր արաբների՝ Աքեմենյանների դաշնակիցների ազդեցության գոտում[826]:

Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ պարսիկները արաբներ էին անվանում Պաղեստինից արևելք և հարավ ապրող քոչվոր ցեղերին[827]: «Արաբ» բառը «քոչվոր» նշանակությամբ կապում են եբրայերեն «arabah»-«անապատ» բառի հետ, ինչը սակայն վերջնական չէ[828]: Հետևաբար, արաբների էթնիկական նույնացումը դժվարություններ է ներկայացնում, եթե նկատի ունենանք նրանց հիշատակությունը Մերձավոր Արևելքի ընդարձակ տարածքներում: Կյուրոս Մեծի՝ մ. թ. ա. 539 թվականի արձանագրության մեջ նշվում է, որ «Արևմուտքի երկրների» բոլոր թագավորները, որոնք «ապրում են վրաններում» (նկատի ունի արաբ ցեղապետներին), հնազանդվում են իրեն[829]: Երբ Քսենոփոնը հայտնում է, որ Կյուրոս Մեծը նվաճել է արաբներին, որոնց սատրապ է նշանակում Մեգաբյուզոսին[830], հավանաբար, նկատի ունի Եփրատի միջին հոսանքում ապրող արաբներին: Նշենք նաև, որ Հելիուպոլիսում հայտնաբերված Դարեհ Ա-ի հիերոգլիֆ արձանագրության մեջ, որտեղ թվարկվում են հպատակ ժողովուրդները, արաբները ներկայանում են *hgr*–հագարացիներ անվան տակ, որոնք Պտղոմեոսյան դարաշրջանում տեղադրվում էին Արաբական թերակղզու հյուսիս-արևմուտքում, սակայն նրանց տեղադրությունը Պարսից ծոցի շրջանում առավել հավանական է[831]:

[824] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 243.
[825] Հերոդոտոս, II, 8, 124:
[826] Համմտ. David F. Graf, Arabia During Achaemenid Times, AH IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 138; Levin Y., The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, A time of change: Judah and its neighbours in the Persian and Early Hellenistic periods, London, New York, 2007, p. 248.
[827] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ. էջ 191:
[828] David F. Graf, Arabia During Achaemenid Times, p. 131. Մասնագիտական գրականության մեջ Արաբիան փորձել են տեղադրել նաև միայն Եփրատի միջին հոսանքի շրջանում, ինչը բազմաթիվ հարցադրումների տեղիք է տվել (անդ, էջ 138):
[829] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 343.
[830] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 287, 355:
[831] David F. Graf, Arabia During Achaemenid Times, pp. 143-144.

Սկիլաքս Կարիանդացին Կարմել լեռից հարավ ընկած քաղաքները համարում է սիդոնցիների կամ տյուրոսցիների գաղութներ: Օրինակ, Ասկալոնը համարում է տյուրոսցիների քաղաքը, որտեղ ավարտվում է Կելեսիրիայի սահմանը[832]: Անտիկ հեղինակը գրում է, որ Սիրիայից հետո քոչվոր արաբների երկիրն է մինչև եգիպտական Պելուսիոն քաղաքը[833]: Սկիլաքս Կարիանդացու տեղեկություններից պարզվում է, որ Սիրիայի տակ հեղինակը հասկանում է մինչև Ասկալոն ընկած հողերը, որից հետո արդեն արաբների երկիրն է մինչև Պելուսիոն: Փաստորեն, պատմիչը Գազան չի հիշատակում, սակայն այն մտել է արաբների երկրի մեջ:

Ալեքսանդր Մակեդոնացու պատմիչներից Արիանոսը գրում է, որ Գազան Պաղեստինյան Սիրիայի քաղաքն է, որը Փյունիկիայից Եգիպտոս տանող ճանապարհի վերջին քաղաքն է անապատի սկզբին: Քաղաքը, ըստ էության, գտնվել է արաբների ձեռքում և համառ դիմադրություն է ցույց տվել Ալեքսանդրին[834]: Արիանոսի տեղեկությունից միաժամանակ երևում է, որ Պաղեստինյան Սիրիան՝ հատկապես առափնյա շրջանները[835], աշխարհագրական առումով նույնացվել է Փյունիկիայի հետ, ընդ որում՝ Գազայից հետո այլ քաղաքներ պատմիչը չի հիշատակում[836]: Գազայից մինչև եգիպտական Պելուզիում քաղաքն ընկած տարածքը պետք է համարել Պաղեստինյան Սիրիայի սահմաններից դուրս, որը, դատելով այլ աղբյուրներից, մտել է արաբների երկրի մեջ[837]: Վերջիններիս երկիրը, ըստ Արիանոսի, տարածվում էր Հերոոպոլիսի մոտ[838], և այդ տարածքում Ալեքսանդր Մակեդոնացին նշանակում է առանձին կառավարիչ՝ Կլեոմենեսին[839]: Այս վերջին տեղեկությունը համապատասխանում է Հերոդոտոսի վերը բերված տեղեկություններին, և Հերոոպոլիսը կարելի է նույնացնել Պատումոսի հետ:

Ստրաբոնը Սիրիայի մեջ է համարում Փյունիկիան և Հուդան՝ երկ-

[832] Müller C., Geographi Graeci Minores, Vol. I, Parisiis, 1855, fr. 104, p. 79; Скилак Кариандский, с. 262.
[833] Скилак Кариандский, с. 263.
[834] Arrian, Vol. I, II, 25, 4; II, 26, 1, pp. 214, 216. Գազայի մասին տե՛ս նաև Ռուփոս, էջ 328, 330:
[835] Ռուփոս, էջ 328:
[836] Տե՛ս նաև Ռուփոս, էջ 333:
[837] Պելուսիան ընկած էր Եգիպտոսի և Արաբիայի սահմանին (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, V, XII, p. 268):
[838] Համմտ. Ռուփոս, էջ 335:
[839] Arrian, Vol. I, III, 5, 4, p. 236.

րի՝ այսինքն՝ Սիրիայի ներսում՝ հուդայացիների, իդումեացիների, գազայացիների և ազոտցիների հետ[840]: Ստրաբոնի վկայությամբ Հիոպպեն հուդայացիների համար նավահանգիստ է ծառայել[841], սակայն այս տեղեկությունը չի վերաբերում Աքեմենյան դարաշրջանին, և կարելի է ենթադրել, որ հուդայացիները միայն առևտուր կարող էին անել Հիոպպեում: Ամասիացի աշխարհագետը հայտնում է, որ նախկինում հուդայացիները տիրել են նաև Կարմել լեռան շրջանին[842], ինչը նույնպես վերաբերում է ուշ ժամանակներին: Ընդհանրապես Ստրաբոնի մոտ Հուդայի նկարագրությունը վերաբերում է իր ժամանակներին: Աշխարհագետը Էլեվթերուս գետից մինչև Պելուսիա համարում է Փյունիկիա, որից արևելք՝ մինչև արաբների հողերը, Գազայի և Անտիլիբանանյան լեռների միջև տարածվել է Հուդան[843]:

Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ մ. թ. ա. 312 թվականին Պտղոմեոսը գրավում է Ական փյունիկյան Սիրիայում, Հիոպպեն, Գազան և Սամարիան Սիրիայում[844]: Վերջին երեք քաղաքների հիշատակությունը խոսում է այն մասին, որ դրանք գտնվել են Պաղեստինում, երբ Հիոպպեն այլ աղբյուրներում վաղ ժամանակներում Սիդոնի գաղութ էր: Դիոդորոս Սիկիլիացին նաև հայտնում է, որ Ասկալոնը և Գազան Սիրիայի քաղաքներն են[845]՝ նկատի ունենալով Պաղեստինյան Սիրիան:

Պաղեստինյան Սիրիայի ներքին շրջանները պարսկական տիրապետության շրջանում հայտնի էին տարբեր անուններով, որոնց վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում հին հրեական աղբյուրները: Օրինակ, ըստ Եզրասի, Անդրգետքի առաջին սատրապը Թատնայն էր՝ Թատտանուն[846], որը վարչական առումով ենթարկվում էր Բաբելոնի սատրապին[847]: Եզրասի տեղեկություններից երևում է, որ Անդրգետքը տուրք էր վճարում Գետի՝ Եփրատի այն կողմի իշխանին՝ սատրապին, և հարկատվությունը կազմակերպում էին գանձապետները[848]: Վարչական առումով Անդրգետքը բաժանվում էր ավելի մանր վարչական միավորների, որոնք տարբերվում էին իրենց քաղաքական ինքնավարության կարգավիճակով: Այս առումով պարսկական Պաղեստինը բաժանվում էր երեք վարչաքաղաքական մասերի՝ էթնիկական շրջաններ (Հուդա, Սամարիա և այլն), փյունիկյան քաղաքներ, արաբական ցեղամիություններ[849]: Անդրգետք սատրապության մեջ որպես էթնիկական ենթաշրջաններ կարող էին մտնել նաև Ամմոնը, Դորան, Մեգիդդոն, Հավրանը[850]: Ամմոնը (աքքադ. Bīt Ammān), Մովաբը (աքքադ. Mā'ab)[851] և ընդհանրապես Անդրհորդանանը եգեկիելի մոտ մտնում են այսպես կոչված «Արևելքի ժողովուրդ» բառակապակցության մեջ[852]: Այսպես, Նեեմիան հիշատակում է Սանբալատին, ամմոնացի Տուբիային և արաբ Գեսամին[853]: Սանբալատը Սամարիայի կառավարիչն էր, Գեսամը կամ Գեշամը տիրում էր Իդումեային, հետևաբար՝ Նեեմիայի մոտ թվարկումը սկսվում է արևմուտք-արևելք-հարավ հերթականությամբ՝ Սամարիա-Ամմոն-Իդումեա-Էվդեմոն: Ամմոնի տակ կարելի է հասկանալ, թերևս, ամբողջ Անդրհորդանանը, որի հյուպար-

[840] Страбон, с. 694.
[841] Անդ, էջ 702:
[842] Անդ, էջ 703:
[843] Անդ, էջ 700:
[844] Diodori Bibliotheca Historica, Vol. IV, XIX, 93, p. 123.
[845] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 18, 149: Պլուտարքոսը Գազան համարում է Սիրիայի ամենախոշոր քաղաքը (տե՛ս Плутарх, Александр, XXV, Избранные жизнеописания, т. II, с. 386):
[846] Եզրաս, Ե, 3; Զ, 6, 13; Olmstead A. T., Tattenai, Governor of "Across the River", JNES, vol. 3, №1, 1944, p. 46; Dandamayev M. A., Neo-Babylonian and Achaemenid State Administration in Mesopotamia, in: Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2006, p. 377.
[847] Olmstead A. T., Tattenai, governor of "Across the River", p. 46.
[848] Եզրաս, Զ, 8; Է, 21:
[849] Stern E., Between Persia and Greece: Trade, Administration and Warfare in the Persian and Hellenistic Periods, The Archaeology of Society in the Holy Land, ed. by T. E. Levy, London, 1995, p. 432.
[850] The Cambridge History of Judaism, Vol. I, pp. 88-89; Stern E., New Evidence on the Administrative Division of Palestine in the Persian Period, AH IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 222.
[851] Lipschits O., Achaemenid Imperial Policy, Settlement Processes in Palestine, and the Status of Jerusalem in the Middle of the Fifth Century B. C. E., in: Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2006, p. 20.
[852] Եզեկիել, Իե: Մովաբը Եզրասի մոտ առանձին նահանգ է (տե՛ս Եզրաս, Բ, 6; Ը, 4; Ժ, 30):
[853] Նեեմիա, Բ, 10, 19; Զ, 1; Fried L. S., The Artaxerxes Correspondence of Ezra 4, Nehemiah's Wall, and Persian Provincial Administration, "Go Out and Study the Land" (Judges 18:2), Archaeological, Historical and Textual Studies in Honor of Hanan Eshel, ed. by A. M. Maeir, J.Magness, L.H. Schiffman, Leiden, Boston, Brill, 2012, p. 47. Այս կառավարիչները բավականին մեծ արտոնություններ ունեին և կարող էին, օրինակ, իրենց տրամադրության տակ գտնվող զորքի օգնությամբ հավաքել հարկերը՝ չունենալով առանձին հարկահավաք՝ «hammarakara» (տե՛ս Fried L. S., The Role of the Governor in Persian Imperial Administration, In the shadow of Bezalel: Aramaic, Biblical, and Ancient Near Eastern Studies in Honor of Bezalel Porten, ed. by Alejandro F. Botta, Leiden, Boston, 2013, pp. 328-329): Սանբալատի, Տուբիայի, նաև Գեշամի մասին մանրամասն տե՛ս Mittmann S., Tobia, Sanballat und die Persische Provinz Juda, JNWSL, Vol. 26/2, 2000, SS. 1-50.

քոսն էլ հենց Տուբիան էր՝ նշանավոր տոհմից[854]:

Անդրգետքի մեջ մտնող շրջաններն ունեին ավելի պակաս ինքնավարություն և կառավարվում էին տեղական ազնվականության և նույնիսկ դինաստների կողմից: Պարսկական տիրապետության ժամանակ մոաբիտների և էդոմիտների հողերը գրավել էին քոչվոր արաբները, որոնցից նաբաթեացի կոչվածները մ. թ. ա. VI դարի առաջին կեսին նվաճում են էդոմական քաղաք Պետրան և հիմնում իրենց թագավորությունը[855]: Սակայն խոսքը վերաբերում է քեդարիտ արաբներին[856], որոնց Աքեմենյան պետության կործանումից հետո փոխարինում են նաբաթեացիները[857]: Հարկ է նշել, որ որոշ ուսումնասիրողներ Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվող Արաբիան լայն առումով նույնացրել են Սիրիայի հետ[858], սակայն Սիրիա անունը հին պարսկական Աթուրիա անվան կրճատ ձևն է, որն աքքադերենում համապատասխանում է Էբիր-նարիին: Սիրիայի հետ Արաբիայի նույնացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հին աղբյուրներում Արաբիան ընդգրկում է Եգիպտոսի և Եփրատի միջև ընկած տարածքներում բնակվող քոչվորների բնակության շրջանները[859] և շատ դեպքերում արամեացիները ևս նույնացվել են արաբներին, սակայն պարսիկներն Արաբիայի անվան տակ սկզբնապես հասկացել են Արաբական թերակղզու հյուսիսային որոշ մասեր, և հետագայում հույն հեղինակներն անվանումը տարածել են ամբողջ թերակղզու վրա[860]:

Արաբներից ճնշված էդոմիտները (եդովմացիներ) գրավում են նախկին հուդայական հողերը, որոնք նրանց անունով կոչվում են Էդոմ, որից էլ Իդումեա: Իդումեան ուշ պարսկական շրջանում էթնիկական առումով խիստ խայտաբղետ էր՝ արաբներ, իդումեացիներ, արամեացի նաբաթեացիներ, հուդայացիներ, փյունիկեցիներ և այլն[861]:

Ինչ վերաբերում է Սամարիային, որը, որպես վարչական միավոր, ստեղծվել էր դեռևս Սարգոն Բ-ի կողմից[862], ապա այն կառավարում էին տեղական ազնվական տոհմի ներկայացուցիչները, որոնք ժառանգաբար կրում էին տոհմի հիմնադիր Սանբալլատի (Սանբալլատ I, II, III) անունը կամ էլ նույն տոհմից էին (Delaiah, Shelemiah, Yeshua/Yeshaiah, Hananiah)[863]: Սամարիան (Շոմրոն) և Ամմոնը՝ որպես վարչական ենթաշրջաններ, հիշատակվում են «Աստվածաշնչում» և այլ վկայություններում[864]: Սամարիան աչքի էր ընկնում պաշտպանական ամուր համակարգով[865]:

Ռուփոսը հայտնում է, որ սամարացիները սպանում են Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Սիրիայի սատրապ նշանակված Անդրոմաքոսին, որի մահվան համար Ալեքսանդրը դաժանաբար վրեժխնդիր է լինում[866]: Հավանաբար, Ալեքսանդր Մակեդոնացու օրոք Սամարիան Սիրիայի կազմում շարունակում էր մնալ որպես առանձին վարչական ենթաշրջան:

Դատելով Հովսեփոս Փլավիոսի տեղեկություններից՝ վարչական առումով Հուդան ենթարկվում էր Սամարիայի հյուպարքոսին և հարկերը մուծելու էր վերջինիս[867]: Մ. թ. ա. V դարի երկրորդ կեսին Հուդան Երուսաղեմ մայրաքաղաքով՝ pehā-ի՝ կառավարչի գլխավորությամբ դառնում է առանձին ենթաշրջան (bîrâ-նահանգ)՝ կազմված մի

[854] Rainey A. F., The Satrapy "Beyond the River", p. 65. Fried L. S., The Political Struggle of Fifth Century Judah, Transeuphratène 24, 2002, pp. 15-16.
[855] Dussaud R., La pènètration des Arabes en Syrie avant l'Islam, Paris, 1955, p. 23.
[856] Քեդարիտ արաբները նույնացվել են Հերոդոտոսի ինքնավար արաբներին, որոնց ազդեցությունը տարածվում էր Եգիպտոսի արևելյան, Պաղեստինի հարավային և Արաբական թերակղզու հյուսիսարևմտյան տարածքների վրա (տե՛ս David F. Graf, Arabia During Achaemenid Times, p. 139; Tuell S. S., The Southern and Eastern Borders of Abar-Nahara, BASOR, No. 284, 1991, p. 52-57):
[857] Levin Y., The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, p. 252.
[858] Herzfeld E., The Persian Empire, pp. 293, 306; Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 191:
[859] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 343.
[860] Dougherty R. P., The Sealand of Ancient Arabia, Yale Oriental Series, Researches, Vol. XIX, 1932, p. 121.

[861] Kloner A., Stern I., Idumea in the Late Persian Period (Fourth Century B. C. E.), in: Judah and the Judeans in the Fourth Century B.C.E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Indiana, Eisenbrauns, 2007, p. 142.
[862] Rainey A. F., The Satrapy "Beyond the River", p. 64.
[863] The Cambridge Ancient History, Vol. IV, p. 151; Дандамаев М., Ахеменидская империя, с. 62; Eshel H., The Governors of Samaria in the Fifth and Fourth Centuries B.C.E., in: Judah and the Judeans in the Fourth Century B.C.E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Indiana, Eisenbrauns, 2007, pp. 225-227.
[864] Նէեմիա, Բ, 10, 19; Դ, 1; Josephus, Jewish Antiquities, with an English translation by R. Marcus, Vol. VI, Books IX-XI, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library, XI, 7, 2, p. 460; Stern E., New Evidence on the Administrative Division of Palestine in the Persian Period, p. 223.
[865] Fried L. S., The Political Struggle of Fifth Century Judah, p. 10.
[866] Ռուփոս, էջ 338:
[867] Եզրաս, Դ, 8-23; Josephus, Jewish Antiquities, Vol. VI, XI, 1, 3, p. 322; Olmstead A. T., History of the Persian Empire, p. 343; Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 115-116:

քանի գավառներից (pelekh) և գավառակներից (ḥasi pelekh)[868]: Հնարավոր է, որ այս փոփոխությունը տեղի է ունեցել հենց Նեեմիայի ժամանակ[869], որը մեծ ջանքեր է գործադրում Երուսաղեմն ամրացնելու ուղղությամբ[870]: Աքեմենյան պետության վերջին շրջանում արդեն Երուսաղեմի քահանայապետն էր իրականացնում ենթաշրջանի կառավարումը:

Հուդայի աշխարհագրական սահմանների վերաբերյալ «Աստվածաշնչի» տեղեկություններին պետք է զգուշությամբ մոտենալ, քանի որ դրանք շատ դեպքերում ներկայացնում են ոչ թե Հուդայի իրական, այլ ցանկալի սահմանները[871]: Օրինակ, Նեեմիան (մ. թ. ա. V դարի երկրորդ կես)՝ որպես հրեական բնակավայր, հիշատակում է Բերսաբեեան[872], ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այն Երուսաղեմի անկումից հետո գրավել էին էդոմիտները: Հուդայի սահմանների ճշգրտման համար առավել կարևոր են yhwḏ (Յեհուդ) դրոշմով կնիքները և դրամները, համաձայն որոնց՝ Հուդայի սահմանները հարավում ձգվում էին Բեթ-Ծուրայից հյուսիսում մինչև Թել էն-Նասբե: Միաժամանակ Պաղեստինում՝ արևմուտքում Յարմուտից և Ազեկայից դեպի արևելք մինչև Խիրբետ էլ-Քատ և Խիրբետ էլ-Զեվիյե, կառուցվում է փոքր ամրությունների գիծ[873]: Հնարավոր է, որ ամրությունների այս գիծն ուղղված էր էդոմիտների դեմ: Բեթ-Ծուրայից հարավ սկսվում էր Իդումեան՝ Էվդեմոն կոչված Արաբիայի հարևանությամբ: Դիոդորոս Սիկիլիացու պատմությունից երևում է, որ մ. թ. ա. 310-ական թվականներին Իդումեան արևելքում հասնում էր մինչև Մեռյալ ծով և վարչական առումով համարվում էր սատրապություն՝ սահմանակցելով Արաբիային և Պաղեստինին. վերջինիս տակ Պլինիոս Ավագը նկատի ունի առափնյա շրջանները[874]: Այս տեղեկությունը հետաքրքիր է այն առումով, որ Իդումեայի՝ որպես առանձին վարչական միավորի կարևորությունն առավել խորը ընկալվել է մ. թ. ա. 404-400 թվականներին եգիպտական ապստամբությունից հետո, երբ Եգիպտոսը մինչև մ. թ. ա. 343/342 թվականը մնաց անկախ: Եգիպտոսի անկախացումը նշանակում էր, որ Աքեմենյան Պարսկաստանի V սատրապության հարավային սահմանը դառնում էր միաժամանակ տերության հարավային սահմանագիծը, որի ռազմավարական նշանակության ամրապնդումը պարսիկների համար դառնում է խիստ հրատապ: Հետագայում Եգիպտոսը վերանվաճելու և տերության հարավային սահմանները վերջինիս հարձակումներից պաշտպանելու համար հարավային Պաղեստինում՝ Իդումեայում, կառուցվում է պաշտպանական ամրությունների հզոր համակարգ[875]: Նշենք նաև, որ Կիպրոսի թագավոր Եվագորասի ապստամբության ժամանակ արաբների թագավորը նույնպես օգնական ուժեր է տրամադրում Եվագորասին[876]: Ուսումնասիրողներից Մ. Ավի-Յոնահը, որի կարծիքը կիսում են շատերը, գտնում է, որ Հուդայից հարավ ընկած Իդումեան նվաճում են էդոմիտյան արաբները հավանաբար մ. թ. ա. 586 թվականին՝ Երուսաղեմի անկումից հետո: Իդումեան ընդգրկում էր ամբողջ հարավային Հուդան՝ Բեթ-Ծուրայից մինչև Բերսաբեեա-Բերշեբա՝ բացի առափնյա հատվածից: Իդումեայի մայրաքաղաքը կարող էր լինել Լախիշը, Մարեշան կամ էլ նույնիսկ Հեբրոնը[877]: Վերջին տասնամյակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էդոմիտների լեզուն արաբական բառաֆոնդին չի պատկանում և կապ-

[868] Նեեմիա, Գ, 9, 12, 14-17; The Cambridge History of Judaism, p. 74; Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, pp. 123, 147; Lipschits O., Achaemenid Imperial Policy, Settlement Processes in Palestine, and the Status of Jerusalem in the Middle of the Fifth Century B. C. E., p. 34; Machinist P.,The First Coins of Judah and Samaria: Numismatics and History in the Achaemenid and Early Hellenistic Periods, AH VIII, Continuity and Change, Leiden, 1994, p. 373.

[869] The Cambridge Ancient History, Vol. VI, p. 278; Carter E. Ch., The Emergence of Yehud in the Persian Period: A Social and Demographic Study, Sheffield Academic Press, 1999, p. 50. Եզրասը և Նեեմիան Երուսաղեմ են գալիս մ. թ. ա. 458 և 445 թվականներին (տե՛ս Yigal B., Judeans in Sippar and Susa during the First Century of the Babylonian Exile: Assimilation and Perseverance under Neo-Babylonian and Achaemenid Rule, JANEH, 2014, 1(2), p. 125):

[870] Fried L. S., The Political Struggle of Fifth Century Judah, p. 12.

[871] The Cambridge History of Judaism, Vol. I, pp. 84-85; Carter Ch., The Province of Yehud in the Post-Exilic Period: Soundings in Site Distribution and Demography, "Second Temple Sdudies", 2: Temple Community in the Persian Period, ed. by Tamara C. Eskenazi and Kent H. Richards, Sheffield Academic Press, 1994, pp. 114-120.

[872] Նեեմիա, ԺԱ, 27:

[873] Hoglund K., The Achaemenid Context, "Second Temple Sdudies", 1: Persian Period, ed. by Ph. R. Davies, Sheffield Academic Press, 1991, pp. 63-64; The Cambridge History of Judaism, Vol. I, p. 86.

[874] Diodori Bibliotheca Historica, Vol. IV, XIX, 94-95, 98, pp. 124-125, 129; Pliny, Natural History, Vol. II, V, XIV, p. 270.

[875] Մանրամասն տե՛ս Fantalkin A., Tal O., Judah and its neighbors in the Fourth century BCE: A Time of Major Transformations, "From Judah to Judaea", Socio-Economic Structures and Processes in the Persian Period, ed. by J. Unsok Ro, Sheffield Phoenix Press, 2012, pp. 133-196.

[876] Diodori Bibliotheca Historica, Vol. IV, XV, 2, p. 415.

[877] Avi-Yonah M., The Holy Land from the Persian to the Arab Conquests (536 B.C. to A.D. 640): A Historical Geography, Grand Rapids, Michigan, 1977, pp. 25-26.

վում է հյուսիսարևմտյան սեմական բարբառի հետ՝ մտնելով քանաանական լեզվախմբի մեջ[878]:

Մ. թ. ա. V դարի կեսերին, Նեեմիայի կողմից Յեհուդի կառավարման տարիներին Իդումեան չի գտնվել նրա իրավասության ոլորտում, և Իդումեան գտնվել է, հավանաբար, արաբալեզու քեդարիտների տիրապետության տակ[879]: Նեեմիայի թշնամին էր Գեշեմ Արաբացին, որի անունը որդու անվան հետ պահպանվել է դրամների վրա՝ «Քեդարի թագավոր» գրությամբ[880]: Իդումեան՝ Մակեդահ կենտրոնով՝ որպես պարսկական նահանգ, այսինքն՝ ենթաշրջան, արդեն հատակ հիշատակվում է մ. թ. ա. IV դարի առաջին կեսից թվագրվող խեցեղենի բեկորի վրա[881]:

Հին աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հուդայում կառավարող դինաստիա չի եղել, սակայն պահպանված մի քանի կառավարիչների անունները եղել են հրեական (Nehemiah, Yehizkiyah)[882]: Ինչպես Աքեմենյան տերության շատ նահանգներում, Հուդայի կառավարիչները նույնպես հատում էին արծաթե և պղնձե դրամներ[883]: Հովսեփոս Փլավիոսը հայտնում է, որ Նեեմիայից հետո Հուդայի կառավարիչ է եղել Բագոսեսը (Bagôhî)[884], որն իրանական անուն է, սակայն իրանական անուններ կրել են նաև հրեաները[885]:

Մ. թ. ա. 349-344 թվականներին փյունիկյան քաղաքներն ապստամբում են պարսկական տիրապետության դեմ: Ապստամբությանը միանում է նաև Հուդան, որտեղ ապստամբությունը ճնշելուց հետո հրեաների մի մասը աքսորվում է Վրկան՝ Կասպից ծովի ափին[886]:

Հուդայացիները (Iaudaia) Բաբելոնի առավել կարևոր օտարածագում էթնոսներից մեկն էին, որոնք այստեղ էին հայտնվել դեռևս Նաբուգոդոնոսոր Բ-ի կողմից տասը հազար հրեաների բռնի գաղթեցման ժամանակ: Բաբելոնական տեքստերում հանդիպում է նաև Āl-Jahûdu, այսինքն՝ «Հուդայացիների քաղաք» տեղանունը՝ Երուսաղեմ անվանումով[887]: Հրեական բազմաթիվ բնակավայրեր հիշատակվում են Հարավային Միջագետքում՝ Բաբելոնի մոտ, Սիպպարում, Նիպպուրում, Սուզայում և այլն[888]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ պարսիկներին հայտնի Արաբիա երկրանունը հետագայում տարածվում է ամբողջ Արաբական թերակղզու վրա, այն դեպքում, երբ հին աղբյուրներում արաբների տեղադրությունն աչքի է ընկնում աշխարհագրական լայն ընդգրկմամբ: Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա, ելնելով վերջինիս տարածքը զբաղեցնող ժողովուրդների էթնոկրոնական տեղական առանձնահատկություններից՝ պարսից արքունիքը վարչական

[878] Vanderhooft D. S., The Edomite Dialect and Script: A Review of the Evidence, in: D. Edelman (ed.), You Shall Not Abhor an Edomite For He is Your Brother: Edom and Seir in History and Tradition, Atlanta: Scholars Press, 1995, pp. 137–157.

[879] Levin Y., The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, p. 245; Stern E., New Evidence on the Administrative Division of Palestine in the Persian Period, p. 223; David F. Graf, Arabia During Achaemenid Times, p. 139.

[880] Dumbrell W. J., The Tell el-Maskhuta Bowls and the "Kingdom" of Qedar in the Persian Period, "Bulletin of the American Schools of Oriental Research", 1971, № 203, pp. 33–44; «The Cambridge Ancient History», Vol. IV, p. 148; Fried L. S., The Political Struggle of Fifth Century Judah, p. 16. Սաուդյան Արաբիայի հարավ-արևմուտքում Հեգրայում հայտնաբերված արձանագրություններից մեկում, Գեշեմի անունը նույնպես հիշատակվում է Դեդանի (ներկայումս էլ-Ուլա) թագավոր Աբդայի անվան հետ: Դեդանի տարածքն անցնում է հին արաբական Լիհիան թագավորությանը (տե՛ս Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 295): Գեշեմի անվան առաջինը հիշատակվելը, հավանաբար, ցույց է տալիս նրա գերակա դիրքը Աբդայի նկատմամբ, որը կախման մեջ է եղել Գեշեմից: Արձանագրություններից մեկում, բացի Լիհիանի թագավորից, հիշատակվում է նաև Թայմայի կառավարիչը, որը, հավանաբար, կախման մեջ է եղել Լիհիանից: Ասվածից երևում է, որ Հիջազը գտնվել է պարսկական տիրապետության տակ՝ մտնելով քեդարիտների համադաշնության մեջ (տե՛ս David F. Graf, Arabia During Achaemenid Times, pp. 140, 142):

[881] Levin Y., The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, p. 250.

[882] Aharoni Y., Excavations at Ramat Rahel, BA, Vol. 24, № 4, 1961, p. 105; Betlyon J. W., The Provincial Government of Persian Period Judea and the Yehud Coins, JBL, 1986, Vol. 105, № 4, p. 634; The Cambridge Ancient History, Vol. IV, p. 152.

[883] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 205:

[884] Josephus, Jewish Antiquities, XI, 7, 1, p. 456; Lisbeth S. Fried, The Artaxerxes Correspondence of Ezra 4, p. 42. Bagôhî = Bigvai, Bagoas (տե՛ս Sprengling M., The Aramaic Papyri of Elephantine in English, pp. 434-435; Ackroyd P. R., The Written Evidence for Palestine, AH IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 213).

[885] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 188; Lemaire A., Administration in Fourth-Century B.C.E. Judah in Light of Epigraphy and Numismatics, in: Judah and the Judeans in the Fourth Century B. C. E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Indiana, 2007, p. 54.

[886] «The Cambridge History of Judaism», p. 77. Անդրգետքն, ընդհանուր առմամբ, Աքեմենյան տերության ամենախաղաղ սատրապություններից մեկն էր, և այստեղ ապստամբություններ շատ քիչ են եղել և արագ են ճնշվել: Օրինակ, մ. թ. ա. 448 թվականի Անդրգետքի սատրապ Մեգաբյուզոսի ապստամբությունը, որը, չնայած որոշ հաջողություններին, լայն թափ չստացավ (տե՛ս Ctesias' History of Persia, pp. 189-190; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 313; Олмстед А., Նշվ. աշխ., էջ 342; Համմ. Եզրաս, Դ, 7-23):

[887] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 364.

[888] Pearce L., «Judean»: A Special Status in Neo-Babylonian and Achemenid Babylonia?, in: Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, G. Knoppers, M. Oeming, Winona Lake, Indiana, 2011, pp. 267-277; Yigal B., Judeans in Sippar and Susa..., pp. 119–172.

առումով այն բաժանում է մի քանի ենթաշրջանների, որոնք ընդհանրական առումով հունա-հռոմեական աղբյուրներում հայտնի են Պաղեստին կամ Պաղեստինյան Սիրիա անվանումով:

2.3. Սիրիայի վարչական բաժանումը

Անտիկ աղբյուրներում Սիրիայի նվաճումը վերագրվում է Կյուրոս Մեծին, ընդ որում՝ սիրիացիները և ասորեստանցիները հիշատակվում են կողք կողքի[889]: Բաբելոնը նվաճելուց հետո՝ մ. թ. ա. 535 թվականին, Կյուրոս Մեծը Միջագետքից և Եփրատից արևմուտք ընկած տարածքներից՝ Սիրիայից, Փյունիկիայից, Անդրհորդանանից, Կիպրոսից և Պաղեստինից, ստեղծում է մեկ նահանգ՝ Գուբարուի (հին պարսկերեն՝ Gaubaruva, անտիկ աղբյուրներում՝ Գոբրիաս) կառավարությամբ, որն այդ պաշտոնում մնում է առնվազն մինչև մ. թ. ա. 525 թվականը: Վարչական այս նոր միավորը, որն ընդգրկում էր նախկին Նոր բաբելոնական թագավորության գրեթե ամբողջ տարածքը, կրում էր Բաբելոն և Անդրգետք անվանումը[890]: Մ. թ. ա. 520 թվականին վարչական այս միավորի կառավարիչ է նշանակվում պարսիկ Ուշտանուն, սակայն մ. թ. ա. մոտ 516 թվականին Դարեհ Ա-ն այս սատրապությունը բաժանում է երկու մասի. Բաբելոնի կառավարիչ է նշանակվում Ուշտանուն, իսկ Անդրգետքի՝ Թատնայը, որը վարչական առումով ենթարկվում էր Ուշտանուին[891]:

Սատրապությունների հերոդոտյան ցուցակում Միջագետքը և Եփրատից արևմուտք ընկած երկրները հիշատակվում են առանձին սատրապություններում. առաջինը՝ Բաբելոնը և մնացյալ Ասորեստանը, մտնում էին IX սատրապության, իսկ Եփրատից արևմուտք ընկած երկրները՝ V սատրապության կազմի մեջ[892]: Վերջինս Գադատասի նամակում համապատասխանում է πέραν Εὐφράτου «Եփրատի մյուս կողմում» արտահայտությանը[893]:

Եթե հունական աղբյուրներում հիմնականում Ասորեստանը և Բաբելոնը հավասարազոր հասկացություններ են[894], ապա հին պարսկական աղբյուրներում դրանք հստակորեն տարբերակվում են: Ասորեստանի անկումից հետո նրա անունով սկսում է կոչվել Սիրիան: Այսպես, Դարեհ Ա-ի Սուզայի արձանագրություններից մեկի բաբելոներեն տարբերակում Eber-nāri-ն («Անդրգետք», այսինքն՝ Սիրիա, Փյունիկիա, Պաղեստին) համապատասխանում է հին պարսկական և էլամական Athurā-ին, այսինքն՝ Ասորեստանին: Հետևաբար վերջինս սեպագիր արձանագրություններում հիշատակվող Անդրգետքի մի երկրամասն է, իսկ դա նշանակում է, որ պարսկական արձանագրություններում Ասորեստանը նույնանում է Սիրիայի[895]:

Ինչպես Աքեմենյան տերության վերաբնակեցված շատ ժողովուրդներ, սիրիացիները ևս Բաբելոնում և նրա շրջակայքում ունեին բնակավայրեր, որոնցից մեկը Սիպպարի մոտ կոչվում էր Hallab և սիրիական Հալեպի կրկնանունն էր[896]:

Սիրիայի վերաբերյալ կարևոր են Քսենոփոնի տեղեկությունները[897], համաձայն որոնց՝ Կիլիկիայի և Սիրիայի սահմանը հետագայում հայտնի Դրունք Ասորվոց կամ Պլատանա լեռնանցքն է, ինչը Հերոդոտոսի տեղեկությունների[898] համեմատությամբ ցույց է տալիս, որ Սիրիայի սահմանը, նախկինի համեմատությամբ անցնելով Պոսիդեոն (ներկայիս Բասիտը[899]) քաղաքը, հյուսիսում ընդարձակվել էր ի հաշիվ Կիլիկիայի հողերի[900]:

Քսենոփոնի պատմությունից պարզվում է, որ Փյունիկիայից վերա-

---

[889] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5:

[890] Stolper M. W., The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C., JNES, Vol. 48, № 4, 1989, p. 286; Heltzer M., Some Aspects of Achaemenid Taxation in the V Satrapy (Phoenicia), in: M. Molina et al. (edd.), Arbor scientiae. Estudios del Proximo Antiguo dedicados a Gregorio del Olmo Lete, Aula Orientalis, 17-18, 1999-2000, p. 349; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 52; նույնի՝ Месопотамия и Иран..., с. 54, 72; նույնի՝ Ахеменидская империя, с. 56. Bryce T., Ancient Syria, Oxford University Press, 2014, p. 149. Մասնագիտական գրականության մեջ այն կարծիքը, թե Գուբարուն նույնանում է Կուտիումի Ուգբարուի հետ, որը ղեկավարել է Կյուրոս Մեծի ժամանակ Բաբելոնի գրավումը, պետք է մերժել, քանի որ Ուգբարուն վախճանվել է Բաբելոնի գրավման տարում՝ մ. թ. ա. 539 թվականին (Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 72): Որոշ ուսումնասիրողներ նույնիսկ հակված են Ուգբարուին, Գոբրիասին և Դարեհ Ա-ի նույնանուն նիզակակրին նույն անձնավորությունը համարել (տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 45):

[891] Stolper M. W., The Governor of Babylon and Across-the-River..., p. 289; Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 54. Ուշտանուի և Թատնայի նույնացումը չի հաստատվում (տե՛ս Rainey A. F., The Satrapy "Beyond the River", p. 53):

[892] Հերոդոտոս, III, 91-92:

[893] Olmstead A. T., A Persian Letter in Thucydides, AJSL, Vol. 49, № 2, 1933, p. 158.

[894] Տե՛ս, օրինակ, Հերոդոտոս, I, 188, 192:

[895] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 66.

[896] Անդ, էջ 364:

[897] Քսենոփոն, Անաբասիս, էջ 17:

[898] Հերոդոտոս, III, 91:

[899] Tuell S. S., The Southern and Eastern Borders of Abar-Nahara, BASOR, No. 284, 1991, p. 51.

[900] Մանրամասն տե՛ս Խորհիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի Կիլիկյան սատրապության տարածքը և սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, ՎԷմ, 2013, թիվ 2, էջ 192:

դարձած Աբրոկոմասը դիմադրություն ցույց չի տալիս Կյուրոս Կրտսերին և վիթխարի բանակով՝ 30 բյուր զորքով մեկնում է արքայի մոտ[901]: Ըստ էության, Աբրոկոմասը եղել է ամբողջ V սատրապության կառավարիչը, քանի որ Աբրոկոմասը գալիս է Եփրատի կողմից[902], այն դեպքում, երբ Դեռնեսը և Բելեսյուսը եղել են հյուպարքոսներ, որոնցից առաջինը կառավարում էր Փյունիկիան ու Արաբիան, իսկ երկրորդը՝ Սիրիան և Ասսյուրիան[903]: Կյուրոս Կրտսերը Դրունք Ասորվոցից՝ Սիրիայի դարպասներից[904], շարժվում է դեպի փյունիկեցիներով բնակեցված Մյուրիանդոս ծովափնյա քաղաքը, որտեղից անցնելով 20 փարսախ՝ 110-120 կմ, հասնում է Խալոս՝Քովեյկ կամ Բալուկ-սու (ըստ ացի՝ «Ձկան գետ»)[905] գետը, որը հայտնի էր խոշոր և ընտիր ձկներով, որոնք սիրիացիների համար սրբազան էին համարվում[906]:

Կյուրոս Կրտսերը, Խալոս գետի հովտից անցնելով 165-180 կմ, հասնում է Դարդաս՝ Ֆար գետի[907] ակունքները, որի մոտ գտնվում էր Սիրիայի տիրակալ Բելեսյուսի պալատը և պարտեզը[908]: Քսենոփոնի հիշատակած Սիրիայի տիրակալ Բելեսյուսը նույնանում է սեպագիր տեքստերում հիշատակված Բելշունու սատրապին, որը մ. թ. ա. 429-414 թվականների միջև ընկած հատվածում եղել է Բաբելոնի կառավարիչը, իսկ ավելի ուշ՝ մ. թ. ա. 407-401 թվականներին, նշանակվել է Անդրգետքի սատրապ[909]: Բելեսյուս անունով Սիրիայի մեկ այլ սատրապ հիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին Արտաքսերքսես Գ-ի (մ. թ. ա. 358-338 թվականներ) ենթակայության տակ[910]:

[901] Քսենոփոն, Անաբասիս, էջ 17:
[902] Անդ, էջ 16, 17, 26:
[903] Անդ, էջ 197: Աբրոկոմասը հիշատակվում է մ. թ. ա. 385-383 թվականներին Եգիպտոսի վերանվաճման ժամանակ (տե՛ս Rainey A. F., The Satrapy "Beyond the River", p. 67; Weiskopf M., The so-called "great Satrap's revolt", p. 39):
[904] Страбон, с. 626, 631.
[905] DGRG, Vol. I, p. 602:
[906] Քսենոփոն, Անաբասիս, էջ 18:
[907] DGRG, Vol. I p. 752.
[908] Xenophon, Anabasis, Vol. III, p. 40: Պարսից թագավորներին Սիրիայում պատկանում էին անտառներ (Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Նէեմի, Բ, 8):
[909] Stolper M. W., The Babylonian Enterprise of Belesys, Dan les pas des Dix-Mille, Pallas, 43, 1995, p. 217; Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 88.
[910] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 42, p. 46. Բաբելոնի և Անդրգետքի առանձին-առանձին Բաբելոնի (Ակկադի երկրի կառավարիչ), Անդրգետքի սատրապների ցանկը բաբելոնական տեքստերում տե՛ս Stolper M. W., The Governor of Babylon and Across-the-River..., pp. 290, 298.

Դատելով Քսենոփոնի տեղեկություններից՝ մինչև Եփրատի աջ ափին գտնվող Թափսակոս քաղաքն ընկած տարածքները հույները համարել են Սիրիա[911]: «Անաբասիս»-ի հետագա տեղեկություններից պարզվում է, որ Եփրատի գետանցումից մինչև Արաքսես՝ Խաբուր գետը, հույները շարունակում են համարել Սիրիա և միայն Խաբուրից արևելք նրանք անցնում են Արաբիայով[912]: Այսպիսով, Կյուրոս Կրտսերի երթուղու քննությունը սկսած Դրունք Ասորվոցից մինչև Արաքսես-Խաբուր գետը, ցույց է տալիս, որ հույն հեղինակի համար Սիրիան տարածվել է նշված լեռնանցքից մինչև Եփրատ գետը, որից հետո մինչև Խաբուր գետը հույներն անցել են Ասսյուրիա-Ասորեստանի տարածքով:

Աղբյուրագիտական առումով պարսիկների համար Աթուրան գոնե Հյուսիսային Միջագետքն է, քանի որ Բեհիստունի արձանագրությունում Հյուսիսարևմտյան Միջագետքում տեղադրվող Իզալան, որը քաղաքական առումով գտնվել է Հայաստանի կազմում[913], հիշատակվում է հենց Աթուրայի կազմում[914]: Հերոդոտոսը նույնպես Ասորեստանը հիշատակում է Հայաստանից դեպի հարավ[915]: Նկատենք նաև, որ համաձայն Հերոդոտոսի, ասորեստանցիներին հելլեններն անվանել են ասորիներ՝ սիրիացիներ, ընդ որում՝ պատմիչի տեղեկությունից պարզվում է, որ Բաբելոնը ևս համարվել է Ասորեստանի մասը[916], այսինքն՝ գոնե ամբողջ Միջագետքը, Եփրատից արևելք ընկած Սիրիան նույնացվել են Ասորեստանին:

Քսենոփոնի մեկ այլ աշխատության մեջ՝ «Կյուրոպեդիա»-ում, կան բազմաթիվ տեղեկություններ, որոնցում Սիրիան և Ասորեստանը նույնացվում են: Քսենոփոնը Սիրիան, այսինքն՝ Ասորեստանը և Մեդիան, համարում է սահմանակից երկրներ[917]: Պատմիչի առանձին տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Սիրիան աշխարհագրական առումով փոխարինում է և՛ Ասորեստանին, և՛ Սիրիային[918], ինչը համապատասխանում է հին պարսկական սեպագիր արձանագրությունների տեղեկություններին: Քսենոփոնի որոշ տեղեկություններում Սի-

[911] Xenophon, Anabasis, Vol. III, p. 40.
[912] Անդ, էջ 44, 46:
[913] Խորհկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 37:
[914] Kent R., Old Persian, p. 122. Հմմտ. Herzfeld E., The Persian Empire, p. 305.
[915] Հերոդոտոս, I, 194:
[916] Անդ, VII, 63:
[917] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 214:
[918] Անդ, էջ 232:

րիան հենց Ասորեստանն է[919]: Քսենոփոնը մի ոչ այնքան հստակ տեղեկության մեջ հիշատակում է Ստորին Սիրիան[920], որի անվան տակ թերևս կարելի է հասկանալ Միջագետքն ամենալայն առումով՝ ներառյալ Բաբելոնը[921]:

Հերոդոտոսից ավելի վաղ Սիրիան՝ երկու քաղաքներով՝ Կանյուտիս և Կարդյուտոս, հիշատակում է Հեկատեոս Միլեթացին[922]:

Սիրիայի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Արիանոսը և Ռուփոսը: Արիանոսը նույնպես հիշատակում է Կիլիկիայի և Ասյուրիայի՝ Ասորեստանի սահմանագլխին գտնվող հայտնի դարպասները[923]՝ Դրունք Ասորվոցը: Վերջինիս մոտ՝ Ասորեստանում երկու օրվա հեռավորության վրա, գտնվել է Սոքոս վայրը[924], որը թերևս Ռուփոսի Օնքին է[925]:

Ասորեստանի դարպասների մոտ՝ Ասյուրիայում է գտնվել նաև Մյուրիանդրոսը[926]՝ Քսենոփոնի Մյուրիանդոսը, որը, հավանաբար, գտնվել է Հռոսուսից հյուսիս: Անշուշտ, աշխարհագրական առումով Հռոսուսը նույնպես կապված էր Կիլիկայի հետ, որի սահմանը հարավում եզրագծվում էր Ամանոսյան լեռներով, սակայն վարչական և ռազմական նկատառումներից ելնելով պարսիկները Սիրիայի սահմանը հյուսիսում հասցրել էին մինչև Ամանոսյան լեռները, հետևաբար Սիրիան հյուսիս-արևմուտքում շրջափակվում էր Ամանոսյան լեռներով:

Իսոսի ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո՝ Ալեքսանդր Մակեդոնացին Կեյլեսիրիայի կամ Կոյլեսիրիայի, այսինքն՝ Փյունիկիայից հյուսիս ընկած մարզի կառավարիչ է նշանակում Մենոնին[927], որին շուտով փոխարինում է Ասկլեպիդորոսը[928]: Սակայն Արիանոսի տեղեկություններից միաժամանակ երևում է, որ Կեյլեսիրիայի և Միջագետքի ասորիների (երկու գետերի՝ Եփրատի և Տիգրիսի միջև ընկած Սիրիայի[929]) սատրապ էր համարվում Դարեհ Գ-ի մերձավորներից մեկը՝ Մազեյը, որը մասնակցում է Գավգամելայի ճակատամար-

[919] Անդ, էջ 244:
[920] Անդ, էջ 241:
[921] Համմ. անդ, էջ 358:
[922] Müller C., FHG, Vol. I, fr. 261, 262, p. 17.
[923] Arrian, Vol. I, II, 5, 1, p. 138.
[924] Անդ, II, 6, 1, էջ 142:
[925] Ռուփոս, էջ 310:
[926] Arrian, Vol. I, II, 6, 1, p. 142:
[927] Արիանոս, էջ 71:
[928] Անդ, էջ 95:
[929] Herzfeld E., The Persian Empire, p. 305.

տին[930]: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ Աքեմենյան տերության կործանման ժամանակ V սատրապությունը դեռևս շարունակում էր ընդգրկել Եփրատից արևմուտք և արևելք ընկած հողերը: Ընդ որում, եթե նկատի ունենանք, որ ճակատամարտին բաբելոնացիների հետ մասնակցել են նաև սիտակենները, ապա Եփրատի և Տիգրիսի միջև ընկած Սիրիայի՝ Ասորեստանի սահմանը հարավում հասել է մինչև Սիտակենե, այն դեպքում, երբ Հերոդոտոսն ամբողջ Միջագետքը համարում էր Սիրիա[931]: Կեյլեսիրիան Արիանոսի համար Եփրատից արևմուտք ընկած Սիրիան է՝ եգիպտոսի և Փյունիկիայի հարևանությամբ[932]: Դեպի Թափսակոս և Եփրատ շարժվող Ալեքսանդրի համար Փյունիկիան գտնվում էր նրա երթուղուց հարավ[933], ինչը համապատասխանում է Քսենոփոնի՝ վերևում բերված տեղեկություններին:

Ռուփոսը ևս Դրունք Ասորվոցը համարում է Սիրիա տանող ճանապարհի մուտքը[934]: Ռուփոսի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Դամասկոսը Սիրիայի գլխավոր վարչական կենտրոնն[935] էր, որտեղ պահվում էին Դարեհ Գ-ի գանձերը, որոնք գրավում է Պարմենիոնը՝ նշանակվելով Սիրիայի կառավարիչ[936]: Մեկ այլ տեղում պատմիչը Սիրիայի կառավարիչ է նշում Անդրոմաքոսին, որին սպանում են ապստամբ սամարացիները[937]: Հավանաբար, կարելի է ենթադրել, որ Արիանոսի և Ռուփոսի կողմից միաժամանակ հիշատակվող Սիրիայի սատրապները եղել են ընդարձակ Սիրիայի առանձին շրջանների կառավարիչները, որոնք բոլորն ընդհանուր անունով կոչվել են Սիրիայի սատրապներ: Օրինակ, Պարմենիոնը՝ որպես Սիրիայի սատրապ, կառավարել է Դամասկոսի շրջանը, իսկ Անդրոմաքոսի մասին հիշատակությունը ցույց է տալիս, որ վերջինս թերևս Դամասկոսում փոխարինել է Պարմենիոնին. Անդրոմաքոսի ենթակայության տակ են գտնվել նաև սամարացիները, այսինքն՝ նկատի ունենանք գոնե եթե ոչ ամբողջ Պաղեստինը, ապա նրա մի մասը:

Ռուփոսը նշում է, որ Ալեքսանդրը Կոյլեսիրիան հանձնում է Անդրո-

[930] Արիանոս, էջ 97, 101: Տե՛ս Arrian, Vol. I, III, 8, 6, p. 246.
[931] Հերոդոտոս, IV, 39:
[932] Արիանոս, էջ 99:
[933] Անդ, էջ 94:
[934] Ռուփոս, էջ 295:
[935] Страбон, с. 700. Համմ. նաև Плутарх, Александр, XXIV, Избранные жизнеописания, т. II, с. 358; "Aramaic Documents of the Fifth Century B. C.", p. 28; The Cambridge Ancient History, Vol. IV, pp. 154-155; Bryce T., Ancient Syria, p. 149.
[936] Ռուփոս, էջ 295, 310:
[937] Անդ, էջ 338:

մաքոս Պարմենիոնին[938], այսինքն՝ վերջինս եղել է Դամասկոսի շրջակայքի և Պաղեստինյան Սիրիայի կառավարիչը, որին փոխարինում է Մեմնոնը[939]: Հավանաբար, Անդրոմաքոսը շփոթվել է Ալեքսանդրի հայտնի զորավար Պարմենիոնի հետ, որը կարճ ժամանակով եղել է Դամասկոսի կառավարիչը: Ալեքսանդրի մահից հետո Սիրիան Փյունիկիայի հետ միասին բաժին է հասնում Լաոմեդոնտոսին[940], ինչը ցույց է տալիս, որ մակեդոնացիների համար այս երկու աշխարհագրական հասկացությունները վարչական առումով շարունակում էին մեկ ամբողջություն ընկալվել:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը նկարագրող պատմիչների երկերում Սիրիան հիմնականում համապատասխանում է Կեյլեսիրիային, որը, ըստ Սկիլաքս Կարիանդացու, ձգվում էր Թափսակոս գետից մինչև Ասկալոն քաղաքը[941]:

Թափսակոս գետը համապատասխանում է Օրոնտեսին՝ ներկայիս Նար-էլ-Ասիին, հետևաբար Կոյլեսիրիան տեղադրվում է Լիբանանյան լեռներից արևելք ընկած տարածքներից մինչև Ասկալոն քաղաքը՝ ներառելով նաև Պաղեստինը[942]: Փաստորեն Սկիլաքս Կարիանդացու տեղեկությունից ստացվում է, որ Կոյլեսիրիան ընդգրկել է Օրոնտես գետի ավազանը և Պաղեստինը, այն դեպքում, երբ իրականում Կոյլեսիրիան (բառացի՝ «դատարկ, սնամեջ, խորին» Սիրիա, սակայն *koile* բառը սեմական *kulla*, եբրայերեն *kol* «ամբողջ, բոլոր» բառի հունարեն համարժեքն է[943]) ընդգրկում էր Օրոնտեսի վերին հոսանքի շրջանը և Լեոնտես՝ Էլ-Լիտանի գետի ավազանը՝ Լիբանանյան և Անտիլիբանանյան լեռների միջև, իսկ այսպես կոչված բուն Սիրիան տարածվում էր Օրոնտեսի ավազանից արևելք մինչև Եփրատ գետը[944] և վերջինիս ձախափնյակը:

Ստրաբոնի «Աշխարհագրություն»-ում բազմիցս Սիրիան և Ասորեստանը՝ Ատուրիան, նույնացվում են, և Նինվեն համարվում է Սիրիայի մայրաքաղաքը[945]: Ատուրիան Ստրաբոնը համարում է Նինվեի շրջանը[946], և ընդհանուր առմամբ Ատուրիան համապատասխանում է Ադիաբենե երկրին: Բուն Սիրիան Ստրաբոնը տեղադրում է հյուսիսում՝ Կիլիկիայի և Ամանոսյան լեռների, արևելքում՝ Եփրատ գետի և հարավում՝ Եգիպտոսի միջև ընկած տարածքում[947]:

Ստրաբոնի տեղեկություններից մեկում հարավից դեպի հյուսիս, հյուսիս-արևելք ուղղությամբ հիշատակվում են Եգիպտոսը, Կեյլեսիրիան, Վերին Սիրիան, Բաբելոնը և այլն[948], ինչը ցույց է տալիս, որ Վերին Սիրիան աշխարհագրորեն նույնանում է Ասորեստանին: Ի տարբերություն Քսենոփոնի՝ Միջագետքի հետ նույնացվող Ստորին Սիրիայի՝ Ստրաբոնի Ստորին Սիրիան[949] հենց բուն Սիրիան է, չնայած սպասելի էր, որ Ստրաբոնի համար արևմուտքում գտնվող բուն Սիրիան պետք է լիներ Վերին Սիրիան:

Պոլիբիոսը Կոյլեսիրիայի սահմանը հարավում հասցնում էր էլ ավելի հեռու՝ Գազայից դեպի հարավ՝ Ռափիա[950], այսինքն՝ Պաղեստինը մտնում էր Կոյլեսիրայի կազմի մեջ:

Համաձայն Դիոդորոս Սիկիլիացու՝ Կյուրոս Մեծի հետ նույնացվող առասպելական Նինոսը գրավում է նաև Կոյլեսիրիան, որը հիշատակվում է Փյունիկիայի և Կիլիկիայի միջև[951], ինչը նշանակում է, որ Կոյլեսիրիան լայն առումով փոխարինում է ամբողջ Սիրիային: Անտիկ հեղինակի մոտ նույնպես որոշ դեպքերում Սիրիան փոխարինում է Ասորեստանին[952]: Դիոդորոս Սիկիլիացին հայտնում է, որ Կյուրոս Կրտսերն իր զինվորներին համոզում է, թե բանակը տանում է ոչ թե թագավորի, այլ Սիրիայի մի քանի սատրապների դեմ, ինչից հետո զինվորները խաղաղ-

[938] Անդ, էջ 328:
[939] Անդ, էջ 338:
[940] Անդ, էջ 596:
[941] Скилак Кариандский, с. 262.
[942] Հմմտ. Bosworth A. B., The Government of Syria under Alexander the Great, The Classical Quarterly, New Series, Vol. 24, No. 1, May, 1974, pp. 48-50.
[943] Ընդ որում, «ամբողջ Արամ» (’rm klh) աշխարհագրական հասկացությունը հյուսիսում ընդգրկում էր Վերին Արամը՝ ներառյալ Արպադ քաղաքը, և Ստորին Արամը հարավային Սիրիայում (kl ’ly ’rm wtḥth), այսինքն՝ Սիրիայի բոլոր արամեական տարածքները (տե՛ս Mazar B., The Aramean Empire and its Relations with Israel, BA, Vol. 25, № 4, 1962, pp. 117-120): Արամեացիներով բնակեցված Իզալան (տե՛ս Zadok R., Notes on the Historical Geography of Mesopotamia and Northern Syria, Abr-Nahrain, Vol. XXVII, Leiden, New York, København, Köln, 1989, pp. 163-165) հարակից շրջաններով գտնվում էր Սատրապական Հայաստանի կազմում:
[944] Страбон, с. 695, 700; Pliny, Natural History, Vol. II, V, XVIII, p. 283; XXI, p. 287.

[945] Страбон, с. 88, 684. Համաձայն Ստրաբոնի՝ սիրիացիներն իրենց անվանում են արամեացիներ (անդ, էջ 49), ինչը տվյալ հատվածում, թերևս, կապված է Միջագետքի սիրիացիների հետ:
[946] Անդ, էջ 685:
[947] Անդ, էջ 694:
[948] Անդ, էջ 132:
[949] Անդ, էջ 645, 689:
[950] Polybius, Vol. III, V, 40, 1; 80, 3, pp. 96, 196.
[951] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17: Տե՛ս նաև Ctesias' History of Persia, p. 115. Կան նաև տեղեկություններ, որտեղ Փյունիկիան, Սիրիան և Կիպրոսը հիշատակվում են կողք կողքի (անդ, էջ 126):
[952] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 26:

վում են[953]: Այս տեղեկության վերլուծությունը ցույց է տալիս, որ Սիրիան լայն առումով համապատասխանում է V սատրապության և Ասորեստանի տարածքին, որոնք կառավարվում էին մի քանի սատրապների՝ տվյալ դեպքում նկատի ունենանք սատրապի և հյուպարքոսների կողմից:

Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ Ալեքսանդրի մահից հետո Սիրիան բաժին է հասնում Լաոմեդոն Միտիլենացուն[954]: Այս տեղեկության համեմատությունը Ռուփոսի համապատասխան տեղեկության հետ ցույց է տալիս, որ Լաոմեդոնի իշխանության տակ Սիրիայի հետ անցել է նաև Փյունիկիան:

Սկզբնաղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ «Անդրգետքը» սկզբում եղել է աշխարհագրական հասկացություն, որն աստիճանաբար ձեռք է բերել վարչաքաղաքական նշանակություն: Սողոմոնի տերության նկարագրության մեջ այն ունի հստակ աշխարհագրական բովանդակություն, քանի որ Սողոմոնը տիրում էր Գետից՝ Եփրատից արևմուտք ընկած բոլոր թագավորներին՝ Թափսայից (Թափսակոս) մինչև Գազա[955]: Հայոց V դարի աշխարհագրական երկում՝ «Աշխարհացոյց»-ում նույնպես Սիրիա-Ասորիքի սահմանն արևելքում Թափսակոս քաղաքն է, իսկ Դամասկոսը հիշատակվում է Կոյլեսիրիայի կազմում. ընդ որում, սկզբնաղբյուրում Ասորիքը՝ Սիրիան, աշխարհագրորեն լրիվ տարբեր է Ասորեստան-Ասսյուրիայից և Միջագետքից[956]:

Աշխարհագրական առումով պարսիկների համար Անդրգետք կոչվածը հրեաների համար Այսրգետք էր՝ Գետից այս կողմ, որտեղ կային արքայի կողմից նշանակված գանձապետներ (հին պարսկերեն՝ **patifrasa-* «վերակացու»)[957]: Եփրատից արևմուտք ընկած տարածքներն ակկադերենում սկսում են արտացոլվել *eber nāri* արտահայտության տակ: Պարսկական արձանագրություններում Աթուրա երկիրն ընդգրկում էր Ասորեստանը և Եփրատից արևմուտք ընկած երկրները[958]: Էլամերենում, ակկադերենում ևս «Անդրգետքը» կոչվում է Ասորեստան՝ Ասսյուրիա[959]: Եգիպտական հիերոգլիֆ արձանագրություններում Սիրիան

[953] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XIV, 20, p. 315.
[954] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110, 112:
[955] Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Գ Թագաւորաց, Դ, 21, 24:
[956] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», էջ 35-36:
[957] Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Եզրաս, Դ, 9-10, 17, 21; Է, 21: Տե՛ս նաև Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, pp. 116, 118.
[958] Rainey A. F., The Satrapy "Beyond the River", p. 51.
[959] Kent R., Նշվ. աշխ., էջ 166:

հայտնի է *Eshur* ձևով[960]: Անտիկ աղբյուրներում «Անդրգետքի» համար որպես համարժեք հասկացություն գործածվել է Սիրիան՝ վերջինիս տակ հաճախ հասկանալով նաև Ասորեստանը[961]: Դարեհ Ա-ի Սուզայի արձանագրություններից մեկում գրված է, որ մայրու փայտը Լիբանան լեռից Բաբելոն է բերում ասորական ժողովուրդը[962]: Ընդ որում՝ պարսկերեն «ասորական ժողովուրդ» արտահայտությունը ակկադերենում թարգմանված է «Անդրգետքի (Գետի այն կողմի) ժողովուրդը»:

Հետաքրքիր է, որ Նեեմին հիշատակում է արքունի անտառի՝ Ասափ անունով ոմն պահապանի[963], ինչը թերևս խոսում է այն մասին, որ տվյալ սատրապության մեջ Աքեմենյան արքան սատրապին զուգահեռ ուներ իր կառավարիչը, որը հսկում էր արքունի տիրույթները: Հնարավոր է, որ Ասորեստանի պետության գոյության վերջին տարիներին, երբ պետության կենտրոնը Նինվեից տեղափոխվեց Խառան, այնուհետև՝ Կարքեմիշ, պատճառ դարձավ, որ պարսիկները որպես Անդրգետքի հոմանիշ գործածեն Ասսյուրիան[964]:

Մասնագիտական գրականության մեջ, սովորաբար, Հերոդոտոսի V սատրապության ստեղծումը կապում են Քսերքսեսի կողմից մ. թ. ա. 482 թվականին Բաբելոնի ապստամբությունը ճնշելու ժամանակի հետ[965], ինչը հնարավոր է:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ հին պարսկական սեպագիր արձանագրությունների Աթուրան ընդգրկում էր Անդրգետքը և Ասորեստանը, ընդ որում՝ անտիկ աղբյուրների Սիրիան նույնպես համապատասխանում էր Անդրգետքին և առանձին դեպքերում նաև Ասորեստանին: Այս ընդարձակ ու հարուստ սատրապությունն Աքեմենյան տերության համար ուներ չափազանց կարևոր ռազմաքաղաքական և տնտեսական նշանակություն:

[960] Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques, p. 258.
[961] Frye R., Assyria and Syria: Synonyms, JNES, Vol. 51, № 4, 1992, p. 282. Չինեքյոյի արձանագրության հիման վրա Ռ. Ռոլինգերը նույնպես Սիրիան և Ասսյուրիան համարում է միևնույն անվան տարբերակները (տե՛ս Rollinger R., The Terms "Assyria" and "Syria" again, JNES, Vol. 65, № 4, 2006, pp. 283-287):
[962] Kent R., Նշվ. աշխ., էջ 144:
[963] Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Նէեմի, 2, 7-8: Համմ. Ackroyd P. R., The Written Evidence for Palestine, AH IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 215.
[964] Rainey A. F., The Satrapy "Beyond the River", p. 55; Дандамаев М. А., Ахеменидская империя, с. 148.
[965] Olmstead A. T., History of the Persian Empire, p. 237; Rainey A. F., The Satrapy "Beyond the River", p. 57; Dandamaev M., Achaemenid Mesopotamia: Traditions and Innovations, AH VIII, Continuity and Change, Leiden, 1994, p. 229.

2.4. Փյունիկիայի վարչական կացությունը

Հոյն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների թվարկմանը, գրում է, որ Փյունիկիան Սիրիայի, Պաղեստինյան կոչված Սիրիայի և Կիպրոսի հետ մտնում էր V սատրապության կազմի մեջ[966]: Հերոդոտոսի և անտիկ այլ աղբյուրների տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ չնայած իր փոքր տարածքին՝ Փյունիկիան ռազմական և տնտեսական առումով կարևոր նշանակություն ուներ պարսից արքունիքի համար[967]: Ստորև կքննենք Փյունիկիային և փյունիկեցիներին վերաբերող այն տեղեկությունները, որոնք կապված են վարչաքաղաքական իրողությունների հետ:

Փյունիկիան և Սիդոնը հիշատակվում են դեռևս Հոմերոսի «Իլիական»-ում և «Ոդիսական»-ում[968], ինչը, թերևս, խոսում է այն մասին, որ Հոմերոսն աշխարհագրական առումով Սիդոնը, այսինքն՝ Հարավային Փյունիկիան, տարբերակում է Հյուսիսային Փյունիկիայից, որի բնակիչները փյունիկեցիներն են: Հնարավոր է, որ Փյունիկիայի անունը հետագայում աստիճանաբար տարածվում է նաև Սիդոնի և վերջինիցս հարավ ընկած մերձափնյա տարածքների վրա:

Փյունիկյան քաղաքներ Գաբալան, Սիդոնը, Գինգյումոտան հիշատակվում են Հեկատեոս Միլեթացու կողմից[969]:

Փյունիկեցիները որպես դաշնակից հիշատակվում են Կրեսոսի բանակի կազմում, սակայն մ. թ. ա. 539 թվականին փյունիկեցիները նվաճվում են Կյուրոս Մեծի՝ առասպելական Նինոսի կողմից[970]: Մ. թ. ա. 535 թվականին Փյունիկիան Միջագետքի, Սիրիայի ու Պաղեստինի հետ մտնում է մեկ սատրապության մեջ, որը հայտնի էր Բաբելոնիա և Անդրգետք (բաբելոներեն Էբեր-նարի) անվանումով[971]: Դարեհ Ա-ի վարչական վերափոխություններից հետո Անդրգետք կոչված սատրապության մեջ մտնում էին տասը կամ ավելի ենթաշրջաններ՝ Աշդոդ, Ամմոն, Դամասկոս, Մոաբ, Սիդոն և այլն[972]:

Քսերքսեսի՝ Հունաստան արշավող բանակի կազմում փյունիկեցիները Պաղեստինի սիրիացիների հետ միասին տրամադրել էին երեք հարյուր նավ և զինված էին հետևյալ կերպ. «Իրենց գլխին դրել էին սաղավարտ, պատրաստված գրեթե ըստ հելլենական ձևի. նրանք կրում էին վուշյա լանջապանակներ, առանց շրջանակի վահաններ և տեգեր»[973]: Ընդ որում, Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ փյունիկյան նավերը թվով ամենաշատն էին ու ամենալավը, իսկ փյունիկեցիների մեջ լավագույն նավերը տրամադրել էին սիդոնցիները[974]: Պարզվում է նաև, որ պարսից նավատորմում փյունիկեցիներն ունեին իրենց զորավարները, և Հերոդոտոսը հիշատակում է սիդոնցի Տետրամնեստոսին, տյուրոսցի Մատտենին, արադոսցի Մերբալոսին[975], այսինքն՝ հոյն պատմիչը Սիդոնը, Տյուրոսը և Արադոսը[976] համարում է փյունիկյան ամենահայտնի և առաջնակարգ քաղաքները, որոնք, ինչպես նաև այլ աղբյուրներում հայտնի փյունիկյան քաղաքները, ինքնավար էին հունական պոլիսների նման և կառավարվում էին ժառանգական թագավորների կողմից[977]: Սիդոնի, Տյուրոսի և Արադոսի հիշատակումը թույլ է տալիս ենթադրել, որ Փյունիկիան աշխարհագրական առումով բաժանված էր այս երեք քաղաքների միջև՝ Արադոսը համարելով Հյուսիսային Փյունիկիայի, Սիդոնը՝ Կենտրոնական Փյունիկիայի, Տյուրոսը[978]՝ Հարավային Փյունիկիայի կենտրոնները:

Համաձայն Հերոդոտոսի՝ փյունիկեցիները գաղթել են Կարմիր ծովի[979]՝ Պարսից ծոցի ափերից: Հերոդոտոսի այս տեղեկությունը կարելի

---

[966] Հերոդոտոս, III, 91:

[967] Katzenstein J., Tyre in the Early Persian Period (539-486 B. C. E.), BA, Vol. 42, № 1, 1979, p. 31.

[968] Hom., Iliad., XXIII, 743-744; Od., IV, 84.

[969] Müller C., FHG, Vol. I, fr. 255, 256, 258, 259, p. 17.

[970] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 241; Ctesias' History of Persia, p. 115; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17; Katzenstein J., Tyre in the Early Persian Period, p. 26; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 48-49. Հերոդոտոսը հայտնում է, որ փյունիկեցիները հոժարակամ են ենթարկվել պարսիկներին (Հերոդոտոս, III, 19):

[971] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 54, 65.

[972] Carter Ch. E., Syria-Palestine in the Persian Period, NEA, ed. by Richard S., Winona Lake, Indiana, 2003, p. 400.

[973] Հերոդոտոս, VII, 89:

[974] Անդ, VII, 96:

[975] Անդ, VII, 98:

[976] Սիդոնը գտնվել է Բեյրութից 43 կմ դեպի հարավ, Տյուրոսը՝ Սիդոնից 40 կմ դեպի հարավ (տե՛ս Bryce T., The Routledge..., pp. 649, 727): Արադոսը, ըստ Ստրաբոնի, կառուցել են սիդոնցի աքսորյալները (տե՛ս Страбон, с. 698):

[977] Katzenstein J., Tyre in the Early Persian Period, p. 32; Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, JANES, Vol. 12, 1980, pp. 16, 19. Տյուրոսը մ. թ. ա. մոտ 820 թվականին Կիտիոնում հիմնադրում է իր գաղութը՝ կղզու առևտուրը վերահսկելու համար (տե՛ս Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods? Trade between Judea and Phoenicia during the Achaemenid Period, JBL, 130, № 2, 2011, p. 284):

[978] Մինչև պարսից տիրապետության հաստատումը Տյուրոսն առևտրական հարաբերություններ ուներ նաև Հայկական լեռնաշխարհի հետ (տե՛ս Гельцер М. Л., Финикия на рубеже VII-VI вв. до н. э., КСИНА, 1962, вып. 46, с. 194, 197):

[979] Հերոդոտոս, I, 1; VII, 89:

է համեմատել Դիոնիսիոս Միթիլենացու այն հաղորդման հետ, որ Կարմիր ծովի շրջաններից մեկը հայտնի է եղել Փյունիկե անունով, իսկ Տյուրոս և Արադոս քաղաքները, ըստ Անդրոսթենես Թասոսցու, Պարսից ծովի ափին գտնվող նույնանուն քաղաքների գաղութներն են[980]:

Պատմական Փյունիկիան տեղական լեզվում հայտնի է եղել Քանաան անունով[981], ինչի մասին (Xvā) հիշատակում է նաև Հեկատեոս Միլեթացին[982]՝ տալով անվան աստվածաշնչյան ձևը: Վերջինս տարածվում էր հյուսիսում Արադոսի (Արվադ) և հարավում Դորայի (Կարմել լեռան հետևում) միջև[983]: Փյունիկիա անվանումը, ըստ էության, ունի հունական ծագում. անվան հիմքում Phoenix «մուգ կարմիր», «կարմրավուն», «ծիրանագույն» բառն է[984], ինչը նշանակել է «ծիրանի ներկի երկիր», քանի որ Փյունիկիան հռչակված էր ծիրանի գործվածքներով[985]: Թուկիդիդեսը նույնանուն նավահանգիստ հիշատակում է Էրյութրեում[986]: Հին հրեաները քանաանցիներ էին անվանում փյունիկեցիներին և Պաղեստինի նախահրեական բնակչությանը: Քանաանցիներն իրենց անվանում էին այս կամ այն համայնքի անունով (սիդոնցի, տյուրոսցի և այլն), սակայն «քանաանցի» եզրը նույնպես տարածված էր նրանց մեջ որպես ինքնանուն: Հրեաները բոլոր փյունիկեցիներին անվանում էին սիդոնցիներ[987]:

Հերոդոտոսը գրում է, որ փյունիկեցիները և սիրիացիները ապրում են Պաղեստինում[988], ինչը խոսում է այն մասին, որ Փյունիկիան ևս աշխարհագրական առումով ընդգրկել է Պաղեստինը կամ գոնե վերջինիս ծովամերձ շրջանները: Այս առումով կարելի է թերևս համեմատել Պլուտարքոսի այն տեղեկությունը, որ Ալեքսանդրը Եգիպտոսից

[980] A Commentary on Herodotus Books I-IV, p. 75.
[981] Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, p. 14.
[982] Müller C., FHG, Vol. I, fr. 254, p. 17.
[983] A Commentary on Herodotus Books I-IV, p. 75. Կարմել լեռը հայտնի էր Բաալի պաշտամունքով (տե՛ս Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, JNES, Vol. 41, 1982, p. 97): Համմ. Զևսի սրբազան լեռ Կարմելը (տե՛ս Скилак Кариандский, с. 262):
[984] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 75; Bryce T., The Routledge..., p. 555.
[985] Дьяконов И. М., Языки древней Передней Азии, М., 1967, с. 329, 361; Шифман И. Ш., Финикийский язык, Москва, 2010, с. 7.
[986] Фукидид, История, с. 415.
[987] Дьяконов И. М., Նշվ. աշխ., էջ 361:
[988] Հերոդոտոս, II, 104: Ընդհանրապես, նկատենք նաև, որ Փյունիկիան առևտրական սերտ կապեր ուներ Ներքին Սիրիայի քաղաքների, օրինակ՝ Երուսաղեմի հետ (տե՛ս Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods?, pp. 281-298):

վերադառնում է Փյունիկիա[989], երբ, անկասկած, մակեդոնական թագավորի երթուղին անցել էր Պաղեստինով մինչև Փյունիկիա հասնելը: Հավանաբար Արիանոսը նույնպես նկատի ունի այս հանգամանքը, երբ Գազան համարում է Փյունիկիայից Եգիպտոս տանող ճանապարհի վերջին քաղաքը և հետո գրում, որ Ալեքսանդրը Մեմփիսից գնում է Փյունիկիա[990]: Ստրաբոնը Փյունիկիայի սահմանը հյուսիսում համարում է Օրթոզիա քաղաքը՝ Էլեվթերուս գետից հարավ, իսկ հարավում՝ Պելուսիան[991], փաստորեն Գազայից էլ ավելի դեպի հարավ:

Հերոդոտոսը նաև հայտնում է, որ, ըստ Հոմերոսի, Ալեքսանդրը Հելիների հետ հասել է Փյունիկիայի Սիդոն քաղաքը: Հույն պատմիչը հաղորդում է, որ Սիրիան սահմանակից է Եգիպտոսին, իսկ փյունիկեցիները, որոնց պատկանում է Սիդոնը, բնակվում են Սիրիայում[992]: Վերջին տեղեկության մեջ Սիրիան նույնանում է Պաղեստինյան կոչված Սիրիային, իսկ Սիդոնի տեղադրությունը Սիրիայում կրկին խոսում է այն մասին, որ տվյալ դեպքում Սիրիան կրկին Պաղեստինյան կոչված Սիրիան է, որի ծովամերձ շրջանն էլ կոչվել է Փյունիկիա: Սկիլաքս Կարիանդացին գրում է, որ Սիրիայի ծովամերձ շրջաններում բնակվում են փյունիկեցիները[993]:

Հերոդոտոսի տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ մ. թ. ա. V դարում Սիդոնը փյունիկյան քաղաքների մեջ գլխավոր և առավել հայտնի քաղաքն է եղել: Սիդոնը պատմիչի կողմից հիշատակվում է բազմիցս[994]: Դատելով պատմիչի տեղեկություններից՝ նշանակությամբ երկրորդ փյունիկյան քաղաքը Տյուրոսն էր, որի մասին անտիկ հեղինակը բազմաթիվ մանրամասներ է հաղորդում[995]: Տյուրոսցիները բնակություն էին հաստատել Մեմփիսի մոտ[996], և նրանց անունով այդ վայրը կոչվել է տյուրոսցիների բանակատեղի: Ընդհանրապես փյունիկեցիները Աֆրիկայի հյուսիսային ափամերձ շրջաններում՝ Լիբիայում, հույների հետ համարվում էին եկվորներ[997]: Մյուս կողմից էլ պարսիկները կատարում էին տարբեր ժողովուրդների ու ցեղերի վերաբնակե-

[989] Плутарх, Александр, XXIX, Избранные жизнеописания, т. II, с. 390.
[990] Արիանոս, էջ 86, 94: Համմ. Страбон, с. 694.
[991] Страбон, с. 700, 703.
[992] Հերոդոտոս, II, 116:
[993] Müller C., Geographi Graeci Minores, Vol. I, fr. 104, p. 78; Скилак Кариандский, с. 262.
[994] Հերոդոտոս, II, 161; III, 136; VII, 44:
[995] Անդ, I, 2; II, 44:
[996] Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods?, p. 285.
[997] Հերոդոտոս, II, 112; IV, 197:

ցումներ, և փյունիկեցիները, ըստ հոնիացիների մոտ տարածված լուրերի, պետք է հաստատվեին Հոնիայում, իսկ հոնիացիները՝ Փյունիկայում. այսպես է արդարացնում Միլետի տիրան Արիստագորասը իր հակապարսկական ապստամբությունը[998]: Փյունիկեցիները, հիմնականում ռազմիկներ, վերաբնակեցվել էին, օրինակ, Նիպպուրի մոտ, և նրանց բնակավայրերը կրում էին հայտնի փյունիկյան քաղաքների անունները՝ Իշկալլունու (Ասկալոն), Քադեշ, Տյուրոս, Սիդոն[999]: Սիդոնի և Տյուրոսի կարևորությունը պարսից արքունիքի համար երևում է Հերոդոտոսի այն տեղեկությունից, որ Քսերքսեսի կողքին, ըստ շնորհված կարգի, բազմաթիվ նավերի հրամանատարների հետ առաջինը նստում է Սիդոնի, հետո՝ Տյուրոսի թագավորը[1000]: Այս տեղեկությունից ակնհայտ է, որ Աքեմենյան պետության համար փյունիկյան նավատորմն ունեցել է առաջնային նշանակություն, իսկ վերջինիս կազմում էլ Սիդոնը և Տյուրոսը եղել են փյունիկյան այն քաղաքները, որոնց նավերն առանձնացել են այդ նավատորմում: Հերոդոտոսը նույնիսկ Քսերքսեսի գահակալումից շատ առաջ հայտնում է, որ Կամբյուսեսի նավատորմն ամբողջապես կազմված էր փյունիկեցիներից[1001]:

Հայտնի է, որ Սիդոնի թագավոր Էշմունազար Բ-ն (մ. թ. ա. 465-451՞[1002]), համաձայն իր արձանագրության, սեփական ծառայությունների համար պարսից արքայից որպես պարգև ստացել էր Դորը և Յաֆֆան՝ Պլինիոս Ավագի հիշատակած փյունիկյան Հիոպպեն[1003]:

Սկիլաքս Կարիանդացին բավականին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Փյունիկայի մասին: Սկիլաքսի տեղեկությունների քարտեզագրումը ցույց է տալիս, որ Փյունիկիայի հյուսիսային սահմանը սկսվել է Արադոս կզզուց և նավահանգստից, որից հետո արդեն Տրիպոլիսն էր: Պատմիչը հիշատակում է նաև Սիդոնը, Տյուրոսը, «Աստծո Դեմք» լեռը Տրիպոլիսի և Բիբլոսի միջև, Բերիթոս, Բորինոս, Պորփյուրեոն քաղաքները, սիդոնցիների քաղաք Օրնիտոնը, Լեոնտոնը, տյուրոսցիների քաղաք Սարեպտան, Պալայտյուրոսը, Էկդիպպոն քաղաքը, տյուրոսցիների քաղաք Ական, Կարմել լեռը, սիդոնցիների քաղաք Դո-

[998] Անդ, VI, 3:
[999] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 365; նույնի՝ Ахеменидская империя, с. 269.
[1000] Հերոդոտոս, VIII, 67:
[1001] Անդ, III, 19:
[1002] The Cambridge Ancient History, Vol. VI, p. 323.
[1003] The Cambridge Ancient History, Vol. IV, p. 144; Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods?, pp. 286-287.

րը[1004], Հիոպպե քաղաքը (սա նույնպես պատկանել է Սիդոնին[1005]), տյուրոսցիների քաղաք Ասկալոնը[1006], որտեղ Կելեսիրիայի սահմանն է[1007]: Սկիլաքս Կարիանդացին, Ասկալոնը նշելով Տյուրոսի քաղաքը, փաստորեն Փյունիկիան համարում է Կելեսիրիա այն առումով, որ ծովամերձ շրջանները նրա համար ամբողջությամբ Փյունիկիայի մեջ են՝ Պաղեստինյան Սիրիան ևս նույնացնելով Կելեսիրիայի հետ:

Պլինիոս Ավագը Փյունիկիայի հարավային սահմանը համարում է Կրոկոդիլոն քաղաքը, Նահր Զերքան Պաղեստինյան Կեսարիայի և Պտղոմայիսի միջև, իսկ հյուսիսայինը՝ Արադոս քաղաքը[1008]: Նույն սահմանները նշում է նաև Պտղոմեոսը. հարավում Քորսեուս գետը՝ Դորայի և Կեսարիայի միջև, հյուսիսում՝ Էլեվթերուս գետը[1009], Արադոսից հարավ, որի մասին Պտղոմեոսը չի հիշատակում:

Անտիկ աղբյուրներում հիշատակված Սուկաս, Գաբալա (ներկայիս Ջեբելեհի մոտ), Սիգոն քաղաքները Արադոսից հյուսիս համարվել են Փյունիկիայի ազդեցության սահմաններում[1010]: Մասնագիտական

[1004] Դորի, Ասկալոնի Սիդոնին և Տյուրոսին պատկանելու մասին տե՛ս Elayi J., An Updated Chronology of the Reigns of Phoenician Kings during the Persian Period (539-333 BCE), Transeuphratène, 32, 2006, pp. 11-43.
[1005] Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 102.
[1006] Հերոդոտոսի տեղեկությունը նույնպես թույլ է տալիս ենթադրել, որ պաղեստինյան քաղաք Ասկալոնը պատկանել է փյունիկեցիներին, այսինքն՝ Փյունիկիայի մեջ է եղել (I, 105):
[1007] Müller C., Geographi Graeci Minores, Vol. I, fr. 104, pp. 78-79; Скилак Кариандский, с. 262. Տրիպոլիսը՝աքքադական աղբյուրների Վախլիա-Մախալլատան (տե՛ս Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 91), որը բաժանված էր Տյուրոսի, Արադոսի և Սիդոնի միջև (տե՛ս Страбон, с. 699), տեղադրվում է Բեյրութից 65 կմ դեպի հյուսիս, Սարապտան՝ Սարաֆանդը՝ Բեյրութից 50 կմ դեպի հարավ, Դորան՝ Հայֆայից 21 կմ դեպի հարավ, Հիոպպեն Յաֆֆան է, Ասկալոնը՝ Թել-Ավիվից 63 կմ դեպի հարավ (տե՛ս Bryce T., Նշվ. աշխ., էջ 76, 200, 349, 621, 713), Պորփյուրեոնը նույնանում է Խան-Ների Յունասին (տե՛ս DGRG, Vol. II, Boston, 1857, p. 660), Օրնիտոնը՝ աքքադական աղբյուրների Բիթ-Ծուփուրին (տե՛ս Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 95), թերևս գտնվել է Կեսարիայից հյուսիս և նույնացվել է Թել-էլ-Բուրաքին, Թարնեգոլային կամ էլ Ադլանին, Լեոնտեոնը՝ Լենտինիին (տե՛ս DGRG, Vol. II, pp. 158, 494), Էկդիպպոնը՝ Էվ-Զիբին (տե՛ս DGRG, Vol. I, p. 802), Ական՝ Պտղոմայիսին (տե՛ս Страбон, с. 701), Պալայտյուրոսը, հավանաբար, պատկանել է Տյուրոսին և նույնանում է Ուշուին (տե՛ս Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 96):
[1008] Pliny, Natural History, Vol. II, V, XVII, pp. 278, 280; DGRG, Vol. I, p. 708.
[1009] Claudii Ptolemaei Geographia, ed. C. F. A. Noebbe, t. II, V, 15, 4, p. 58; DGRG, Vol. I, p. 613. Էլեվթերուս գետը նույնանում է Նահր Քիբերին (տե՛ս DGRG, Vol. II, p. 497):
[1010] Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, pp. 105-108. Որոշ ուսումնասիրողներ Տարսուսը համարում են Արադոսի գաղութը (անդ, էջ 107):

գրականության մեջ Քսենոփոնի հիշատակած Մյուրիանդոս քաղաքը, որը բնակեցված էր փյունիկեցիներով[1011], համարվել է Փյունիկիայի ծայր հյուսիսային քաղաքը[1012]: Նկատենք, որ ըստ Սկիլաքս Կարիանդացու և Հերոդոտոսի՝ Մյուրիանդոսը մ. թ. ա. VI դարում գտնվել է Կիլիկիայի կազմում[1013], և Քսենոփոնի ժամանակ քաղաքն արդեն Սիրիայի կազմում է հիշատակվում: Ելնելով այն իրողությունից, որ ամբողջ Փյունիկիան և Պաղեստինը համարվել են Սիրիայի մասերը, կարող ենք եզրակացնել, որ համաձայն Քսենոփոնի՝ Մյուրիանդոսը գտնվել է Փյունիկիայում՝ աշխարհագրական առումով նույնացնելով Փյունիկիան և Սիրիան: Ընդ որում, նշենք, որ Սկիլաքս Կարիանդացին Սիրիայի ծովամերձ ափերն ամբողջությամբ համարում է Փյունիկիա[1014]: Մյուրիանդոս քաղաքի անունը, անկասկած, կապվում է Հերոդոտոսի հիշատակած Մյուրիանդինյան ծոցի հետ[1015], որը նույնանում է Իսսոսի ծոցին: Հավանական է մտածել, որ նշված ծոցը անունը ստացել է հենց Մյուրիանդոս քաղաքի անունից: Հերոդոտոսը Մյուրիանդինյան ծոցը չի կապում Փյունիկիայի հետ, և ըստ Հերոդոտոսի՝ Փյունիկիան սկսվել է Մյուրիանդինյան ծոցից հարավ, ինչը Քսենոփոնի ժամանակ արդեն հասնում էր մինչև Մյուրիանդոս:

Փյունիկիայի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Արիանոսը և Ռուփոսը: Արիանոսը հիշատակում է փյունիկյան Տրիպոլիս, Արադոս, Մարաթոս[1016], Բիբլոս[1017], Սիդոն, Տյուրոս քաղաքները, որոնցից վերջինը համառ դիմադրություն է ցույց տալիս Ալեքսանդրին[1018]: Դատելով Արիանոսի տեղեկություններից՝ կարելի է եզրակացնել, որ Փյունիկիան հյուսիսում սկսվել է Արադոս քաղաքից: Հետաքրքիր է, որ անտիկ հեղինակն Արադոսի ենթակայության տակ է համարում Մարաթոսը (ներկայումս՝ Ամրիթ), Սիգոնը (ներկայումս՝ Քալաթ Սահիյուն), Մա-

[1011] Քսենոփոն, Անաբասիս, էջ 18:
[1012] Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 107.
[1013] Скилак Кариандский, с. 262; Հերոդոտոս, III, 91:
[1014] Скилак Кариандский, с. 262.
[1015] Հերոդոտոս, IV, 38:
[1016] Ներկայումս Ամրիտ (տե՛ս Elayi J., The Phoenician Cities in the Achaemenid Period: Remarks on the Present State and Prospects of Research, AH IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 228):
[1017] Բիբլոսը գտնվել է Բերիթոսից՝ ներկայիս Բեյրութից 60 կմ դեպի հյուսիս (տե՛ս Bryce T., Նշվ. աշխ., էջ 137):
[1018] Արիանոս, էջ 70, 71, 74, 79, 85:

րիամմեն (ներկայումս՝ Մարիամին)[1019] և այլ անանուն վայրեր[1020]: Գրեթե նույնը հաղորդում է Ռուփոսը, որ Արադոսի թագավոր Ստրատոնեսն իշխում էր կղզու և մերձծովյան տարածքների վրա[1021]: Տյուրոսից հարավ Արիանոսը փյունիկյան այլ քաղաքներ չի հիշատակում և անմիջապես խոսում է Պաղեստինյան Սիրիայում գտնվող Գազա նշանավոր քաղաքի մասին[1022]՝ առանց Փյունիկիայի և Պաղեստինյան Սիրիայի սահմանները նշելու: Հնագիտական նյութը ցույց է տալիս, որ փյունիկեցիները հաստատվել են նաև Գազայում, որտեղ հայտնաբերված մ. թ. ա. V-IV դարերի դրամները գրված են փյունիկերեն[1023]:

Ռուփոսը ևս, նկարագրելով Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը, հիշատակում է Արադոսը, Մարաթոսը, Բիբլոսը, Սիդոնը, Տրիպոլիսը, Տյուրոսը[1024]: Վերջին քաղաքը Ռուփոսը համարում է Փյունիկիայի ամենահայտնի քաղաքը, ինչը խոսում է այն մասին, որ Սիդոնն իր առաջնայնությունը զիջել էր Տյուրոսին: Տյուրոս քաղաքը շրջակայքով՝ որպես առանձին վարչական միավոր, Ալեքսանդրը հանձնում է Փիլոտեսի կառավարմանը[1025]: Կարծում ենք, որ այս վերջին տեղեկությունը թույլ է տալիս ենթադրել, որ Տյուրոսի կառավարումը հավասարազոր էր ամբողջ Փյունիկիան վարչական առումով ղեկավարելուն: Ալեքսանդրի մահից հետո Սիրիան և Փյունիկիան բաժին են ընկնում Լաոմեդոնտոսին[1026]:

Համաձայն Դիոդորոս Սիկիլիացու՝ Տյուրոսը Արտաքսերքսես Օքոսի ժամանակ Փյունիկիայի ամենանշանավոր քաղաքն էր, չնայած Սիդոնը մնում էր սատրապական նստավայր, որտեղ կար նաև արքայական պարտեզ (paradeisos)[1027]: Պատմիչը գրում է, որ Կիպրոսի ապստամբ թագավոր Եվագորասը Փյունիկիայում տիրում էր Տյուրոսին և մի շարք այլ

[1019] Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, pp. 88-89. Այս հոդվածում տե՛ս նաև Ստրաբոնի և այլ հեղինակների համապատասխան տեղեկությունների քննությունը, որոնք վերաբերում են հետաքեմենյան ժամանակաշրջանին:
[1020] Arrian, Anabasis, Vol. I, II, 13, 7, p. 174.
[1021] Ռուփոս, էջ 310:
[1022] Արիանոս, էջ 86:
[1023] Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 104.
[1024] Ռուփոս, էջ 312-313, 315, 339:
[1025] Անդ, էջ 328:
[1026] Անդ, էջ 596:
[1027] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 42, 43, 45, pp. 45-49.

քաղաքների[1028]: Դիոդորոս Սիկիլիացին նույնպես հայտնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին Տյուրոսը գրավում է մեծ ջանքերի շնորհիվ[1029]:

Փյունիկյան քաղաքների մեջ առանձնահատուկ նշանակություն է ունեցել Տրիպոլիսը, որտեղ փյունիկյան քաղաքները գումարում էին ժողովներ կարևորագույն հարցերը քննարկելու և համատեղ որոշումներ ընդունելու համար[1030]: Մ. թ. ա. 349 թվականին Տրիպոլիսում սկսվում է հակապարսկական ապստամբությունը, որը շուտով ընդգրկում է ամբողջ Փյունիկիան և դուրս գալիս վերջինիս սահմաններից[1031]: Մ. թ. ա. 344 թվականին ապստամբության ճնշումից հետո Փյունիկիան Կիլիկիայի հետ միավորվում է մեկ սատրապության մեջ՝ Մազայի գլխավորությամբ, իսկ Սիդոնում նշանակվում է պարսիկ կառավարիչ[1032]: Մազայը Սիդոնում ուներ իր սեփական դրամահատարանը[1033], իսկ նրա դրամի վրա գրված է.«Մազայ, Աբար Նահարայի և Հիլիկի կառավարիչ»[1034]:

Մ. թ. ա. V դարի վերջին Փյունիկիան ղեկավարում էր պարսիկ սատրապ Աբրոկոմասը[1035], որը հետագայում՝ մ. թ. ա. 380 թվականին, Փյունիկիան և Պաղեստինը մաքրում է եգիպտացիներից և կիպրոսցիներից[1036]: Սակայն Քսենոփոնն իր գրքի վերջում գրում է, որ Փյունիկիայի ու Արաբիայի սատրապն էր Դեռնեսը, Սիրիայինը և Ասսյուրիայինը՝ Բելեսյուսը[1037]: Դեռնեսը և Բելեսյուսն ավելի ճիշտ հյուպարքոսներ էին: Քսենոփոնի այն նշումը, թե Աբրոկոմասը գալիս է Եփրատի կողմից[1038], թերևս ցույց է տալիս, որ վերջինս ամբողջ V սատրապության կառավարիչն էր: Հովսեփոս Փլավիոսը նույնպես

[1028] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 71: Կիպրոսում նույնպես կային փյունիկյան քաղաքներ, օրինակ՝ Կիտիոնը, Լափետոսը (տե՛ս Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, p. 16; նույնի՝Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 86; Bryce T., Ancient Syria, Oxford University Press, 2014, p. 149):
[1029] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 40-46, pp. 142-150. Տե՛ս նաև Плутарх, Александр, XXIV-XXV, Избранные жизнеописания, т. II, с. 385-386.
[1030] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 250.
[1031] Անդ:
[1032] Անդ, էջ 251; Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 117; Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, p. 27.
[1033] Elayi J., An Updated Chronology of the Reigns of Phoenician Kings during the Persian Period (539-333 BCE), pp. 11-43.
[1034] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 437:
[1035] Քսենոփոն, Անաբասիս, էջ 17, 26:
[1036] The Cambridge History of Judaism, Vol. I, p. 76.
[1037] Անդ, էջ 197:
[1038] Անդ, էջ 16:

տեղյակ է Անդրգետք սատրապության մասին[1039]:

Եգիպտոսի փարավոն Տաքոսին (մ. թ. ա. 361-359 թթ.) հաջողվում է գրավել գրեթե ամբողջ Պաղեստինը և Փյունիկիան, սակայն նրա հաջողությունը կարճ է տևում[1040]: Աքեմենյան պետության կործանումից հետո Ալեքսանդր Մակեդոնացին Փյունիկիան, Սիրիան և Կիլիկիան՝ որպես մեկ վարչական միավոր, հանձնում է Մենետոսին[1041], փաստորեն հիմնականում պահպանելով Աքեմենյանների օրոք գոյություն ունեցած վարչական բաժանումը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ փյունիկյան քաղաքներն իրական դաշնություն չեն կազմել, քանի որ պատերազմների ժամանակ փյունիկյան նավերը ղեկավարում էր ոչ թե գլխավոր հրամանատարը, այլ յուրաքանչյուր քաղաքի թագավորը[1042], չնայած փյունիկյան մյուս թագավորների նկատմամբ Քսերքսեսի արշավանքի ժամանակ Սիդոնի թագավորն ուներ գերակա դիրք: Փյունիկիայի նկատմամբ պարսից արքունիքի քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես «կառավարվող ինքնավարություն»[1043]:

[1039] Josephus, The Jewish Antiquities, Vol. VI, XI, 89, p. 356.
[1040] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 419; The Cambridge History of Judaism, p. 76. Ավելի վաղ՝ մ. թ. ա. 386 թվականին, եգիպտա-արաբական դաշինքն օգնել էր Աքեմենյանների դեմ ապստամբած Կիպրոսի թագավոր Եվագորասին (տե՛ս David F. G., Arabia During Achaemenid Times, Achaemenid History IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 142):
[1041] Արիանոս, էջ 108; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 64, p. 167.
[1042] Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, pp. 24-25.
[1043] Jigoulov V. S., The Social History of Achaemenid Phoenicia, London, 2010, p. 170.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

3.1. Հին Հայաստանի տարածքը մ. թ. ա. VI-IV դարերում՝ ըստ Մովսես Խորենացու և այլ հայկական աղբյուրների

Հայագիտության մեջ վերջերս առաջ քաշվեց մի տեսակետ, համաձայն որի Հայաստանը բաժանված չի եղել XIII և XVIII սատրապությունների, և որ վերջինս տարածվել է Կուր գետի և Կովկասյան լեռների միջև[1044]: Իր ընդարձակ տարածքով XIII սատրապությունն Աքեմենյան Պարսկաստանի խոշոր և հարուստ նահանգներից էր, որի երկհարյուրամյա գոյությունը կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կազմավորման գործընթացում: Հետևաբար, այն տեսակետը, թե մակեդոնական-սելևկյան ժամանակաշրջանում անգամ այսրեփրատյան Արմենիան ընդգրկել է միայն Ծոփքը, Աղձնիքը, Տուրուբերանը, Վանա լճի ավազանը և Այրարատի մի մասը[1045], միանգամայն սխալ է և անընդունելի, քանի որ, դատելով աղբյուրներից, Աքեմենյաններից առաջ Հայաստանն իր տարածքով արդեն դուրս էր եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից: Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Հայաստանի և Այսրկովկասի վարչական բաժանման մասին հունահռոմեական և սեպագիր աղբյուրների տեղեկությունները քննել ենք առանձին ուսումնասիրություններում: Ստորև, այլևս չանդրադառնալով այդ աղբյուրներին, տեսնենք, թե որքանով են այդ տեղեկությունները համապատասխանում Խորենացու հաղորդումներին:

Դատելով Խորենացու տեղեկություններից՝ Աքեմենյան տիրապետության նախօրեին Հայկական պետության ձևավորումը նախընթաց դարաշրջանում արդեն ավարտված էր, և Հայկազյան Տիգրանի ժամանակ Հայկական պետությունն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի գրեթե ամբողջ տարածքը: Հայկական պետության և հայ ժողովրդի կազմավորումը Խորենացու մոտ ներկայանում է Հայկյանների «հերոսական դարաշրջանի»[1046] պատմության շարադրմամբ: Հենց Հայկյանների՝ Հայկական լեռնաշխարհում տարածվելու պատմությունն է[1047], որ Խորենացու մոտ հանդես է գալիս որպես հայկական էթնոսի համախմբման և կենտրոնացման դարաշրջան: Եվ պատահական չէ, որ Պատմահայրը, Հայաստանի աշխարհագրական անվանումները կապելով հայ ժողովրդի այս կամ այն նախնու հետ, միաժամանակ բացահայտում է պատմական անցյալի շերտեր, որոնք հնարավորություն են տալիս կատարելու պատմական և պատմաաշխարհագրական բնույթի որոշակի եզրակացություններ: Օրինակ, բացի Խորենացուց, Հայկական պետության գոյության մասին վկայում է նաև հույն պատմիչ Քսենոփոնը[1048], որի տեղեկությունները Հայաստանի մասին ունեն բացառիկ արժեք, քանի որ զորավար-պատմիչն անձամբ էր եղել Հայաստանում: Հայաստանի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Հերոդոտոսը, համաձայն որի «Պակտյուիկեից, արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյանը ստացվում էր չորս հարյուր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր»[1049]: XIII սատրապությունն ուներ մեծ տարածք և որոշ չափով դուրս էր գալիս Հայկական լեռնաշխարհի սահմաններից[1050], և ինչպես կտեսնենք ստորև, այդպիսի վարչական միավորի ձևավորումը ոչ միայն Աքեմենյան արքունիքի քաղաքականության հետևանքն էր, այլև պայմանավորված էր Աքեմենյան տիրապետությանը նախորդած ժամանակաշրջանի Հայաստանի պատմաքաղաքական իրողություններով:

Այժմ տեսնենք, թե ինչ սահմաններ ուներ Հայաստանը մ. թ. ա. VI-IV դարերում: Բնականաբար, քննությունը պետք է սկսենք Հայկյան Հայաստանի սահմանների հստակեցումից: Հայկը, ապստամբելով Բելի դեմ, հեռանում է հյուսիսային կողմերում գտնվող Արարադի երկիրը «հան-

[1044] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 45-114; Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը...

[1045] Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 107-108; Հյուբշման Հ., Հին Հայոց տեղոյ անունները, թարգմ. Հ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907, էջ 16; Marquart J., Ērānšahr, S. 108; Hewsen R., The boundaries of Achaemenid «Armina», RÉA, t. XVII, 1983, pp. 123-143; "The Armenian People from Ancient to Modern Times", Vol. I, edited by R. G. Hovhannisian, New York, 1997, p. 39 և այլն:

[1046] Քոսյան Ա., Արամ Նահապետը Կապադովկիայում, էջ 256:

[1047] Հայկյանների տարածումը Հայկական լեռնաշխարհում բազմիցս է ուսումնասիրվել մասնագիտական գրականության մեջ (տե՛ս, օրինակ, Սարգսյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, Պատմագիտական հետազոտություններ, Եր., 2006, էջ 46-72: Համմտ. Քոսյան Ա., Աստվածաշունչը և հայոց ազգածագման խնդիրը Խորենացու «Հայոց Պատմության» մեջ, Աստվածաշնչական Հայաստան, Եր., 2005, էջ 146-150), սակայն այս ուղղությամբ կատարվող հետազոտությունները պահանջում են շարունակական զարգացումներ:

[1048] Xenophon, Cyropaedia, Vol. I, III, I, 1-2, p. 216.

[1049] Հերոդոտոս, III, 93.

[1050] XIII սատրապության սահմանների մասին տե՛ս Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 68-69; նույնի՝ Սատրապական Հայաստանի..., էջ 173-192:

դերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ»[1051]: Արարադի երկիրը տեղադրվում է Կորդվաց աշխարհում[1052], իսկ դաշտավայր տերմում հաստատվելը ըստ էության վերաբերում է հետագայի Կորդվաց թագավորության արևմտյան մասին, ուրեմն Կադմոսի տուն անվան տակ՝ ասուրական աղբյուրների Կադմուխի երկիրը[1053], պետք է հասկանանք ավելի մեծ տարածք, որը տարածվում էր նաև Տիգրիսի աջափնյակում: Թողնելով Կադմոսին՝ Հայկը բնակություն է հաստատում մի վայրում, որն անվանում է Հարք «այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ»[1054]: Հայկի Հարքում հայտնվելը նշանակում է, որ Կադմոսի տան և Հարքի միջև ընկած տարածքը Խորենացու կամ նրա աղբյուրի (Մար Աբաս, գուսանական երգեր) համար Հայաստան է, և Հարքի առանձնացումը նշանակում է, որ Հարք տեղանունը այս, ինչպես և մյուս դեպքերում, հնարավորություն է տվել Պատմահորը դիմելու տեղանունների բացատրության ժողովրդական կամ կեղծ ստուգաբանական սկզբունքին: Վերջին տեղեկության մեջ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Խորենացու այն բացատրությանը, թե Հարք նշանակում է, որ այստեղ բնակվողները հայրեր են Թորգոմի տան սերնդի:

«Տուն Թորգոմայ» երկիրը (եբրայերեն՝ Բեթ Թոգարմա) ուսումնասիրողները նույնացրել են խեթական աղբյուրների Թեգարամայի, ասուրական աղբյուրների Թիլգարիմմուի հետ և տեղադրել ներկայիս Մալաթիայից հյուսիս կամ էլ նույնացրել արևելափոքրասիական Մելիդ-Թաբալի պետության հետ, որը եղել է թաբալյան Ատունայի անմիջական ժառան-

[1051] Մովսէս Խորենացի, էջ 33:

[1052] «Սարարադայ ՚ի սահմանս Այրարատեան տէրութեան ՚ի գաւառն Կորդուաց» (տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 36): Նաև Թովմայի այն տեղեկությունը, որ Նոյի տապանը «հանգեաւ ի լերինս Կորդուաց» (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան, Եր., 1985, էջ 32):

[1053] Арутюнян Н. В., Топонимика Урарту, Ер., 1985, с. 98-99.

[1054] Մովսէս Խորենացի, էջ 33:

գորդը[1055]: Պատմագիտական գրականության մեջ ուշադրություն է դարձվել այն իրողությանը, որ Հայկյանների կողմից Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի իրացման և բնակեցման մասին Պատմահայրը քար լռություն է պահպանում, և Պատմահոր՝ Հայկյանների մասին տեղեկությունների վերլուծությունը որոշ ուսումնասիրողների բերել է այն եզրակացության, որ Հայկ նահապետի մեկնակետը ոչ թե Միջագետքից է եղել, այլ «Տուն Թորգոմայ» երկրից[1056]: Եթե նկատի ունենանք, որ Պատմահայրը Հարքի մասին խոսելիս ավելացնում է, որ Հարքում բնակվողները հայրեր են Թորգոմի տան սերնդի, ապա պատմիչը, իր բացատրությամբ Հայկին և նրա զավակներին ծագումնաբանորեն կապելով Թորգոմի տան հետ, դրանով իսկ անուղղակիորեն Հայկի և նրա ընտանիքի երթուղու մեկնակետը սկսում է Հայկի «նախնական հայրենիքից»՝ «Տուն Թորգոմայ» երկրից:

Հայկյանների մասին Խորենացու հաջորդ տեղեկությունը ևս ունի հետաքրքիր բացատրություն: Խորենացին գրում է, որ Տիտանյան Բելը զորքով հասնում է Արարադի երկիրը, Կադմոսի տան մոտ[1057]: Հեղինակն Արարադի երկիրը առանձնացնում է Կադմոսի տնից, այսինքն՝ Արարադի երկիրը դեռևս չէր մտնում Հայկյանների տիրույթների մեջ, և այս առումով հետաքրքիր է Սեբեոսյան տարբերակում պահպանված այն տեղեկությունը, թե Հայկն իր մահվանից առաջ «Արարադի երկիրը» նվիրում է իր թոռ Կադմոսին[1058], այսինքն՝ Հայկյանների տիրույթների մեջ էր նաև Կորդուք գավառը: Կադմոսի տիրույթների ընդարձակման մասին հավանաբար վկայում է նաև Խորենացու այն հաղորդումը, որ Հայկն իր մահվանից առաջ իր թոռ Կադմոսին հրամայում է բնակություն հաստատել իր առաջին տանը[1059]: Փաստորեն երկրորդ անգամ Կադմոսի՝ իր երկրում բնակություն հաստատելը խոսում է այն մասին, որ Կադմոսի տունը՝ երկիրը, տարածվում էր Տիգրիսի աջ և ձախ ափերին:

[1055] Քոսյան Ա., Արամ Նահապետը Կապադովկիայում, էջ 256; նույնի՝ Տուն Թորգոմայ, Եր., 1998, էջ 18-32: Բ. Հարությունյանը կարծում է, որ տարածքային առումով Թեգարամա և Թորգոմա տուն երկրները չեն նույնանում, քանի որ Թոգարմա կամ Թորգոմա տունը նույնանում է Հայոց թագավորությանը, իսկ Հայկյաններին էլ համեմատում է հունական ավանդության Արմենոսականների հետ (տե՛ս Հարությունյան Բ., Թոգարմա երկիրը և Հայկյանները, «Աստվածաշնչական Հայաստան», Եր., 2005, էջ 128-145):

[1056] Սարգսյան Գ., նշվ. հոդվ., էջ 46-72; Հմմտ. Քոսյան Ա., նշվ. հոդվ., էջ 256-257; նույնի՝ Տուն Թորգոմայ, էջ 46-65:

[1057] Մովսէս Խորենացի, էջ 34:

[1058] Պատմութիւն Սեբէոսի, էջ 50:

[1059] Մովսէս Խորենացի, էջ 37:

Խորենացու հետագա շարադրանքից պարզվում է, որ Արամանյակն իր եղբայրներ Խոռին, Մանավազին և վերջինիս որդի Բազին թողնում է Հարքում, որոնցից էլ առաջանում են Խոռխոռունիների, Բզնունիների, Մանավազյանների նախարարությունները[1060]: Այս տեղեկությունը նշանակում է, որ Հարքը սկզբնապես ունեցել է ընդարձակ տարածք, որը հետագայում բաժանվել է նախարարական առանձին տիրույթների, հետևաբար Ն. Ադոնցը ճիշտ է նկատել, երբ Հարքին սահմանակից Ապահունիք, Խորխոռունիք, Բզնունիք գավառները համարել է Հարքի մեջ մտած շրջաններ[1061]: Ապահունյաց նախարարության՝ Հարքի մեջ նախապես մտած լինելու մասին հաստատում է հենց Խորենացին, երբ գրում է, որ այդ նախարարությունը, ինչպես և Մանավազյանը ու Բզնունականը, սերում էր Հայկի սերունդներից[1062]: Վանա լճի ավազանի իրացումը սկսվել էր Հայկի կողմից Հայք դաստակերտի հիմնադրմամբ, որի անունով էլ գավառը կոչվեց Հայոց ձոր[1063]: Որդուներին էլ կապելով Հայկյանների հետ՝ Խորենացին նրանց տեղադրում է Բասենի մեծ հովտում[1064]: Պատմահայրը գրում է նաև, որ Արամանյակն իր անունով անվանում է Արագածը լեռը, իսկ բնակության վայրն էլ՝ ոտն Արագածո, այսինքն՝ Արագածոտն գավառը: Արամանյակի որդու՝ Արամայիսի անվան հետ Խորենացին կապում է Արմավիրը, Արամանյակի թոռի՝ Երաստի հետ՝ Երասխ գետի անունը, Արամանյակի որդու՝ Շարայի հետ՝ Շիրակ գավառանունը: Հաջորդ Հայկյաններին արդեն Խորենացին[1065] հասցնում է Մասիս՝ Երասխից հարավ, Մասյացոտն գավառը[1066] և Գեղարքունիք՝ նկատի ունենալով Գեղարքունյաց ծովի ավազանը, Գառնին: Հետաքրքիր է, որ Սյունիքի իրացումը տեղի է ունեցել Գեղարքունիքից, ուրեմն կարելի է մտածել, որ Գեղարքունիքը հին ժամանակներում վարչական առումով չի մտել Սյունիքի մեջ[1067], որի մեջ էր նաև, ըստ Պատմահոր, Գողթն գավա-

[1060] Անդ, էջ 38:
[1061] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 346:
[1062] Մովսէս Խորենացի, էջ 115-116:
[1063] Անդ, էջ 37:
[1064] Անդ, էջ 114:
[1065] Անդ, էջ 39-41:
[1066] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի, Եր., 1996, էջ 18:
[1067] Ուշ ժամանակների մասին խոսելիս Խորենացին Գեղարքունիքը համարում է արդեն Սյունիքի գավառ. «ի Գեղարքունի, ի գաւառին Սիւնեաց» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 120):

ոը[1068]: Չնայած Խորենացին Վարաժնունյաց տան առաջացումը կապում է ուշ ժամանակների հետ, սակայն սրանց ծագումնաբանական աղերսը Գեղամի հետ[1069] թույլ է տալիս ենթադրել, որ Հրազդան գետի ափերին գտնվող Վարաժնունիք գավառն ի սկզբանե Խորենացին համարել է Գեղամի տիրույթների մասը, որոնց մի հատվածը ուշ ժամանակներում հայտնի է դառնում Վարաժնունիք անունով: Ընդ որում, Գեղամի անունով կառուցված դաստակերտի վերանվանումը Գառնիկի անունով և վերջինիս սերունդներից մեկի՝ Վարաժի հետ Վարաժնունիք գավառի առաջացումը կապելը թույլ է տալիս ենթադրել, որ այս հաղորդումների մեջ արտացոլվել են Մեծ Հայքի աշխարհաբաժանման հերթական իրողությունները, այսինքն՝ Վարաժնունիք և Մազազ գավառներն ավելի ուշ արդեն աշխարհացույցյան Այրարատ աշխարհի մեջ էին՝ բաժանվելով Գեղարքունի գավառից[1070]: Խորենացու վկայությամբ Վարաժնունիքի հարևանությամբ ապրում էին Գնթունի իշխանները, որոնք սերում էին քանանացիներից[1071]: Գնթունի նախարարների տոհմական կալվածքը համարվում է Ապարանը՝ հնում Նիգը[1072], որը որպես գավառ՝ ընդգրկում էր մեծ տարածք՝ արևելքում հասնելով Գեղարքունյաց ծով, ներառելով Վարաժնունիքը («և ծովեզերեայսն մանկունս, որք ի Գեղամայ և ի Քանանացւոց»)[1073]: Անկախ վարչաքաղաքական փոփոխություններից՝ նշված գավառները և իշխանական տիրույթները մինչև Աքեմենյան պետության առաջացումը Հայաստանի անբաժանելի մասն էին:

Պատմահայրը «Հայոց պատմության» հաջորդ հատվածներում ևս Վաղարշակի գործունեության կապակցությամբ ներկայացնում է Հայկյանների կողմից Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և արևելյան մասերի իրացումը: Այսպես, Սիսակից սերված Առանի մեծ ցեղը հաստատվում է Կուր և Երասխ գետերի միջև ընկած տարածքում՝ Աղ-

[1068] «Իսկ զՌըշտունիս և զԳողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարև հատուած» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 117):
[1069] Մովսէս Խորենացի, էջ 39-42, 121:
[1070] «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում Սյունիքի գավառների թվարկման մեջ Գեղարքունիի մասին գրված է. «զԳեղարքունի՝ հոմանուն ծովով» (Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 33):
[1071] Մովսէս Խորենացի, էջ 59, 106, 110:
[1072] Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 336-337:
[1073] Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Եր., 2004, էջ 43:

վանքում[1074], այսինքն՝ Մեծ Հայքի հետագա Ուտիք և Արցախ նահանգների տարածքում: Շարայի զավակներից Գուշարի տիրույթները ընդգրկում են հետագա աշխարհացույցյան Գուգարք աշխարհի արևելյան հատվածը, իսկ Գուշարի զավակներն էլ ժառանգում են Աշոցքը և Տաշրաց սեպհականությունը: Հայկի թոռ Պասքամից սերված Տորքի տիրույթն էլ՝ Անգեղտունը[1075], որը որպես կուսակալություն, անշուշտ, ուներ ավելի մեծ տարածք, ընդգրկում էր մինչև Եփրատ գետն ընկած տարածքները[1076]:

Հայաստանի տարածքի մասին կարևոր տեղեկություններ կան Խորենացու՝ Վաղարշակի գործունեության մասին պատմող հետևյալ տեղեկություններում: Պատմահայրը գրում է, որ Վաղարշակը, կարգավորելով Մաժաքի կողմերը, պոնտացիներին և եգերացիներին, Պարխար լեռների ստորոտով, Տայքի միջով դառնում է դեպի հյուսիս[1077]: Այսպիսի աշխարհագրական լայն գործունեությունը, անշուշտ, չի կարող վերագրվել Վաղարշակ թագավորի հետ ավանդաբար նույնացվող Տրդատ Ա-ին կամ Վաղարշ Բ-ին, հետևաբար պետք է մտածել, որ Խորենացու տեղեկությունը կապված է հին ժամանակների հետ: Այսպես, հիշատակությունը եգերացիների մասին, որոնց, իհարկե, պետք է փնտրել Տայքից հյուսիս, թույլ է տալիս Վաղարշակի գործունեության մի հատվածը կապել Արտաշես Ա-ի հետ, որի ժամանակ Մեծ Հայքը Ճորոխի գետաբերանում փոքր հատվածով դուրս է գալիս Սև Ծով[1078]: Ինչ վերաբերում է Մաժաքին, ապա Հայաստանի սահմաններն այս ուղղությամբ մա-

[1074] «Ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 113): Աղվանքի սահմանը «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ» նշում է նաև Կաղանկատվացին (տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Եր., 1983, էջ 8): Նկատենք նաև, որ Մովսես Խորենացու հիշատակած Տուհաց գավառը կապվում է Ուտիքի Տուս-Քուստակ գավառի հետ (տե՛ս Մուրադյան Պ., Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը, պրակ Ա, Եր., 2008, էջ 141-147):

[1075] Մովսէս Խորենացի, էջ 113-114: Անգեղտան՝ Հայկի թոռ ոմն Պասքամից սերված լինելու մասին Խորենացին հաղորդում է Առաջին գրքում (անդ, էջ 71):

[1076] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), Եր., 2001, էջ 157:

[1077] Մովսէս Խորենացի, էջ 108:

[1078] Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՀ, 1977, թիվ 2, էջ 179; Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, ՊԲՀ, 2008, թիվ 2, էջ 228: Նշենք նաև, որ հայագիտության մեջ ուշադրության արժանի փաստարկներով Վաղարշակը համարվել է Հայաստանում Արշակունիների թագավորության հիմնադիրը, և նրա գործունեությունը կապվել է մ. թ. ա. II դարի երկրորդ կեսի հետ (տե՛ս, օրինակ, Շահինյան Լ., Հայաստանը և առաջին Արշակունիները, Եր., 1993, էջ 12, 78 և այլն):

սամբ հասել են Արամ նահապետի, Տիգրան Երվանդյանի ժամանակ, իսկ Մաժաքը և պոնտացիները, այսինքն՝ Սև ծովի ափամերձ մի հատվածը, միասին Հայաստանի մեջ են եղել Աքեմենյան պետության ժամանակաշրջանում, երբ Հայաստանը մտավ XIII սատրապության մեջ[1079]: Ուրեմն Խորենացու տվյալ տեղեկության մեջ կարևոր է արդեն այն իրողությունը, որ Վաղարշակի համար Տայքն իր բուն երկրի մի հատվածն է, որի մի գավառը՝ Կողը, հիշատակվում է պատմիչի կողմից: Հայաստանի մեջ էր նաև Վանանդ վերանվանված Անփայտ կամ Վերին Բասեան գավառը[1080]: Իսկ Տայքի և Բասեանի՝ Հայաստանի մեջ լինելու իրողությունը հաստատվում է նաև Քսենոփոնի տեղեկությամբ: Այսպես, հույները ապաստանում են, հավանաբար, աշխարհացույցյան Բագրևանդ գավառի գյուղերում, որտեղ էլ Խեյրիսոփոսի և Քսենոփոնի՝ թե այդ ի՞նչ երկիր է հարցին, գեղջավագը պատասխանում է, թե Արմենիան է, և հարևան երկիրը խալյուբների երկիրն է, և ցույց տալիս այնտեղ տանող ճանապարհը[1081]: Պատմագիտության մեջ արդեն նշվել է, որ չնայած այն իրողությանը, որ հույներն այնուհետև անցել են փասիանների և տաոխների երկրներով և մտել խալյուբների երկիրը[1082], այդուհանդերձ փասիանները և տաոխները, այսինքն՝ Բասեանի և Տայքի բնակչությունը, գյուղապետի համար սոսկ հայեր էին, և միայն խալյուբներն էին, որ համարվում էին այլազգիներ[1083]:

Համաձայն Մովսես Խորենացու՝ Հարմայի որդի Արամի ժամանակ Հայաստանի սահմաններն ընդարձակվում են: Արամ Նահապետը Նյուքար Մադեսին սպանելուց հետո նրա երկիրը մինչև Զարասպ լեռը, իրեն ծառայեցնելով, հարկատու դարձրեց «մինչև գթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի»[1084]: Հարավային ուղղությամբ Հայաստանի տարածքային ընդարձակման մասին խոսում է նաև հետևյալ տեղեկությունը. «Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայս՝ խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբք Ասո-

[1079] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 173-192:

[1080] Մովսէս Խորենացի, էջ 109:

[1081] Քսենոփոն, Անաբասիս, էջ 98:

[1082] Խալյուբների երկրի մասին տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, էջ 114-126:

[1083] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 96:

[1084] Մովսէս Խորենացի, էջ 44: Այս տեղեկության առաջին հատվածը վերաբերում է մ. թ. ա. VII դարի 50-40-ական թվականներին, իսկ Նինոսի մասին հիշատակությունը՝ մ. թ. ա. IX դարի իրողություններին (տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 25-26):

րեստանի. գտանէ և անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ, չորիւք բիւրովք վառելովք հետևակօք և հինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն, յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյնս նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր: Սմա Ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումս ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի զինակրաց նորա պատահեալ՝ մեռանի...»[1085]:

Տեղեկությունից երևում է, որ Կորդուքը Հայաստանի մեջ է եղել, քանի որ Արամը շարժվում է դեպի Ասորեստանի դաշտը Կորդուքի միջով: Միաժամանակ, քանի որ Արամը Ասորեստանի կողմերը հանձնում է Կադմոսի տան հաջորդներին, նշանակում է, որ Հայաստանի քաղաքական տիրապետության սահմանների մեջ են ներառվում նաև Ասորեստանի կամ Միջագետքի հյուսիսարևմտյան կողմերը[1086], որտեղ, դատելով աղբյուրներից, հայկական էթնիկական տարրը զգալի է եղել:

Խորենացու հաջորդ տեղեկության մեջ Արամի գործունեությունը կապվում է Կապադովկիայի արևելյան սահմանների հետ, որտեղ Արամը թողնում է Մշակ անունով մեկին իր ցեղից և տեղի բնակիչներին հրամայում է սովորել և խոսել հայերեն, իսկ ինքը վերադառնում է Հայաստան: Մշակն էլ իր անունով կառուցում է մի դաստակերտ, որ կոչվեց Մաժաք, որն ավելի ուշ հայտնի էր Կեսարիա անունով, և երկրամասն էլ հոյները անվանեցին Պոռտին Արմենիան, որ թարգմանվում է Առաջին Հայք[1087]: Կապադովկիայի արևելյան շրջանները նույնանում են Հերոդոտոսի Պակտյուիկե երկրին[1088], ուրեմն Խորենացու տեղեկությունները հաստատվում են նաև օտար պատմիչի տեղեկությունների լույսով:

Համաձայն Խորենացու՝ հայոց Արամ Նահապետն իր արշավանքներն արևմտյան, հարավային և հարավարևելյան ուղղություններով

[1085] Մովսէս Խորենացի, էջ 45:

[1086] Արծրունյաց տան պատմիչը նույնպես գրում է, որ Տիգրան Երվանդյանի ժամանակ Հայաստանի հարավային սահմանը ընդարձակվել էր (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 66): Բեհիսթունի արձանագրությունում հայ ապստամբները պարսիկների դեմ ճակատամարտերից մեկը տալիս են Ասորեստանի Իզալա վայրում (տե՛ս Kent R., Նշվ. աշխ., էջ 124): Արձանագրության աքքադերեն տարբերակի տվյալներով Իզալան հիշատակվում է Ուրաշտուի (իմա՝ Հայաստանի) կազմում՝ առանց Ասորեստանի հետ կապելու (տե՛ս Malbran-Labat F., La version akkadienne..., pp. 98, 114): Սա նշանակում է, որ Իզալան Հայաստանի վայրերից մեկն էր, և ապստամբները կռվել են հենց Հայաստանի սահմաններում:

[1087] Մովսէս Խորենացի, էջ 46-47:

[1088] Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 78-79; Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 173-181:

սկսում է Արմավիրից[1089], ինչը ցույց է տալիս, որ Հայաստանը մինչև Աքեմենյան տիրապետության հաստատումն արմատապես իր մեջ ներառել է նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևելյան եզերական շրջանները, քանի որ հյուսիսային և հյուսիսարևելյան ուղղություններով ոչ մի արշավանքի մասին Պատմահայրը չի նշում: Ընդ որում, նկատի ունենանք, որ Արամի արշավանքներն էլ ուղղված էին Հայաստանից դուրս՝ հարևան շրջանների վրա:

Հայաստանի տարածքի մասին Խորենացին տեղեկություններ է տալիս նաև Սկայորդու ժամանակաշրջանի կապակցությամբ՝ գրելով, թե Ասորեստանի Սենեքերիմ (Սինախերիբ) թագավորի որդիներից Սանասարին Սկայորդին բնակեցնում է Ասորեստանի սահմանների մոտ, որի ժառանգները, ըստ էության, ուշ ժամանակներում ստանում են Աղձնյաց բդեշխությունը: Մյուս որդին՝ Արգամոզանը (Ադրամելեք), բնակվում է նույն կողմի արևելյան հարավում, որից սերում են Արծրունիները և Գնունիները[1090]: Մեր կարծիքով, Արգամոզանը բնակություն է հաստատում Մոկքում, որի տարածքը, հավանաբար, սկզբնապես մտել է Աղձնիքի մեջ, և Մոկքի՝ որպես աշխարհի և նախարարության առաջացումն ավելի ուշ է տեղի ունեցել[1091]: Գնունիների և Արծրունիների մասին հիշատակությունն էլ ցույց է տալիս, որ նախքան այդ նախարարությունների առաջացումը, դրանց տարածքը Հայաստանի մեջ էր:

Հայաստանի արևելյան և հարավարևելյան սահմանների մասին Խորենացու տեղեկությունները կարելի է համեմատել Թովմա Արծրունու հաղորդումների հետ: Խորենացու և Արծրունյաց տան պատմիչի հաղորդումներից պարզվում է, որ Տիգրան Երվանդյանին էին են-

[1089] Մովսէս Խորենացի, էջ 44:

[1090] Անդ, էջ 70-71: Թովմա Արծրունին Արծրունիներին կապում է մարաց Աժդահակ թագավորի զավակների հետ և սրանց նախարարության առաջացումն էլ կապում Տիգրան Երվանդյանի ժամանակաշրջանի հետ՝ նրանց բնակության վայրեր նշելով Աղբակը, Ջողախել-Ջուղան, Վրնջունիսը և Հախրամ-Խրամը Նախճավանի գավառում (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 64): Ըստ Խորենացու՝ Տիգրան Երվանդյանը մարաց գերիներին «բնակեցուցանէ յարևելեայ ուսոյ մեծի լերինն մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք, և որ այլք առ եզերք գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախճաւանու. և զերիս աւանսն, զԽրամ և զՋուղայ և զխորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն. զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 83):

[1091] «Իսկ զմոկացին ի նոյն գաւառէ գտեալ (Հայոց Վաղարշակ թագավորը-Խ. Հ.) այթ, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւն հաստատէ» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 116):

թարկվում կապադովկիացիները[1092], այն է՝ Պակտյուիկե երկիրը: Մովսես Խորենացու հաղորդմամբ մ. թ. ա. III դարի վերջերին նույնպես Ուտիքը Հայաստանի կազմում էր. «Լուր հասանէ առ Երուանդ յՈւտէացւոց գաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր»[1093]: Ըստ Խորենացու՝ «Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ աճապարէր հասանել ի սահմանս Ուտէացւոց: Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող Երուանդ»[1094]:

Պետք է նշել, որ Խորենացու այս տեղեկությունները, որոնք ծագում են Ողյումպ քրմից (մ. թ. II դար), պատմականորեն հավաստի են և համընկնում են Ստրաբոնի տեղեկությունների հետ[1095]:

Թովմա Արծրունին հաղորդում է, որ մեծն Տիգրան Հայկազնը Մարաստանի Աժդահակ թագավորի դեմ ճակատամարտ տալու համար զորք է ժողովում «եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մակաւնայ, բանակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց»[1096]: Արծրունյաց տան պատմիչը, որն օգտվել է մեզ անհայտ ինչ-ինչ աղբյուրներից, Արաքսը համարում է Հայաստանի և Մարաստանի սահմանը և Մուղանի դաշտը (հմմտ. Խորենացու մոտ Մեդացոց կողմերը) մտցնում Մարաստանի մեջ: Թովմայի մի կարևոր վկայությունից պարզվում է, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի թագավորության սահմանը Պարսկահայքի շրջանում անցել է Անձախիձոր գավառի արևելակողմով[1097], այսինքն՝ Հեր և Ջարևանդ գավառները դեռևս հայոց պետության մեջ չէին մտնում[1098]: Թովման նշում է նաև, որ Ջարավանդը Ատրպատականի գավառն էր[1099]: Մեր կարծիքով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել

[1092] Մովսէս Խորենացի, էջ 81:
[1093] Անդ, էջ 169:
[1094] Անդ, էջ 170: Այն հանգամանքը, որ Ստրաբոնը չի նշում աղվաններից երկրամասեր գրավելու մասին, ցույց է տալիս, որ հայ էթնոսի համար Կուր գետը եղել է էթնիկական և քաղաքական սահման, այսինքն՝ Կուրի և Երասխի միջագետքն ունեցել է հայկական բնակչություն:
[1095] Տիրացյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. III-II-րդ դարերի պատմության մասին, ԲՄ, 1962, թիվ 6, էջ 7-24:
[1096] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 62:
[1097] Անդ, էջ 84:
[1098] Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 260:
[1099] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 82:

այն հանգամանքի վրա, որ Թովման նշված տարածքները համարում է Ատրպատականի և ոչ թե Մարաստանի մաս: Բնականաբար, տարբերությունն ակներև է: Պարզապես Ատրպատականը, որը հզորացել էր մ. թ. ա. IV դարի վերջին տասնամյակներին, կարողացել էր նվաճել Ուրմիո լճի ավազանը, այդ թվում և հետագա Պարսկահայք աշխարհի ամբողջ տարածքը: Սատրապական Հայաստանի հարավային սահմանն անցել է Ուրմիո լիճը թափվող Արասխ գետով: Հայաստանի և X սատրապության սահմանը տարածվել է, ամենայն հավանականությամբ, Ուրմիո լիճը թափվող Սաղամաս գետից հյուսիս մինչև Կարմիր կամ Կոտոր գետի հոսանքը, վերջինիս Արաքսի հետ միախառնվելու հատվածը: Որ Կարմիր գետը սահման էր X սատրապության և Սատրապական Հայաստանի միջև, կարելի է հիմնավորել նաև հետևյալ տեղեկություններով: Մովսես Խորենացու տեղեկությունից պարզվում է, որ Վաղարշակ արքան «ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել. և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցՃուաշ և ցՆախճաւան, և նահապետեան ազգին սա մեծարոյ»[1100]: Քանի որ Արտաշես Ա-ի նվաճած Փավնիտիսը[1101] նույնանում է Մարդպետականին[1102], ապա Պատմահոր այս կարևոր տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Կարմիր գետը և Երասխը եղել են սահմանային գետեր նախ X սատրապության, ապա Ատրպատականի և Հայաստանի միջև: Հետաքրքիր է նաև Թովմա Արծրունու տեղեկությունն այն մասին, որ Երվանդը «երթայ զետեղի ի Նախճաւանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին»[1103]: Վասպուրականի և վերջինիս մեջ Նախճավանի լինելու մասին Արծրունյաց տան պատմիչի տեղեկությունը վերաբերում է շատ ավելի ուշ ժամանակներին, իսկ Նախճավանը Երվանդ Վերջինի ժամանակ Հայաստանի մեջ էր և կարող էր նույնիսկ թագավորական ոստան լինել: Ըստ պատմիչի՝ Երվանդը Ատրպատականի սահմաններով է վերադառնում Անձահի ձոր և հետո գնում Նախճավան[1104]: Պատմիչի այս տեղեկությունից երևում է, որ Հայաստանի մեջ մտնող Անձահի ձորը սահմանակցել է Ատրպատականին և Երվանդը Նախճավան գնալու համար պետք է անցներ Ճուաշ գավառով, որը մտնում էր Հայաստանի մեջ: Թովմա Արծրունու տեղեկություններից ևս կարելի է եզրակացնել, որ Կարմիր գետը սահմանա-

[1100] Մովսէս Խորենացի, էջ 112:
[1101] The Geography of Strabo, Vol V, XI, 14, 4-5, pp. 320, 322.
[1102] Հարությունյան Բ., նշվ. հոդվ., էջ 259-265; Խորիկյան Հ., Անտոնիոսի պարթևական արշավանքի հետ կապված մի հարցի շուրջ, ՄՄԱԵԺ, հ. XXVII, 2009, էջ 28-29:
[1103] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 84:
[1104] Անդ:

յին գետ էր ինչպես Հայաստանի և Ատրպատականի, այնպես էլ Աքեմենյան ժամանակաշրջանում XIII և X սատրապությունների համար:

Այսպիսով, ի մի բերելով կատարված քննության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ համաձայն Մովսես Խորենացու՝ մինչև մ. թ. ա. VI դարի կեսերը Հայաստանն ուներ ընդարձակ տարածք և հիմնականում այդ տարածքով էլ, ըստ հին աղբյուրների, մտավ Աքեմենյան Պարսկաստանի XIII սատրապության կազմի մեջ:

3.2. XIII սատրապության վարչական կացության մի հարցի շուրջ

Մեր նախորդ ուսումնասիրություններում XIII սատրապության վարչական բաժանման խնդիրն արդեն քննել ենք: Ստորև կանդրադառնանք մի քանի հացրադրումների, որոնք ժամանակագրորեն կապված են և՛ Աքեմենյան, և՛ հետաքեմենյան դարաշրջանի հետ: Այսպես, համաձայն Դարեհ II-ի ժամանակաշրջանին (մ. թ. ա. 423-404 թթ.) վերաբերող բաբելոնական փաստաթղթերից մեկի՝ Եփրատյան Նիպպուրի ափին, Շամաշ-բարաքքուի ղեկավարությամբ գտնվել է «ուրաշտացիների և միլիդուացիների» ռազմական գաղութը[1105]: Անդրադառնալով այս տեղեկությանը՝ Ի. Դյակոնովը, ելնելով հայ ժողովրդի կազմավորման գործընթացի վերաբերյալ սեփական վարկածից, ժամանակին այն կարծիքն է հայտնել, թե Հայաստան (Արմինա) երկրի անվանը փոխարինել է Մելիդ քաղաքի անունը, որն իբր եղել է Արմինայի՝ XIII սատրապության մայրաքաղաքը[1106]: Սակայն սկզբնաղբյուրների բազմակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աքեմենյան տիրապետության դարաշրջանում Հայաստանի տարածքը բաժանված չի եղել երկու վարչական միավորների՝ XIII և XVIII սատրապությունների միջև. մ.թ.ա. VI-IV դարերում Հայաստանը գտնվել է XIII սատրապության կազմում, իսկ ահա XVIII-ը իրականում եղել է Կուր գետի և Կովկասյան լեռների միջև[1107]: Հետևաբար, վերը բերված բաբելոնական փաստաթուղթը պետք է քննել այլ տեսանկյունից:

Աքեմենյան ժամանակաշրջանի բաբելոնական տեքստերում Ուրաշտուի կամ ուրաշտացիների անվան տակ, անշուշտ, պետք է նկատի ունենալ Հայաստանը և հայ ժողովուրդը: Ինչ վերաբերում է միլիդուացիներին, ապա սրանք համապատասխանում են Եփրատից արևմուտք գտնվող մելիտինեցիներին: Ասսուրական Մելիդու, ուրարտական Մելիտեա քաղաքը (ներկայումս՝ Մալաթիա), որի շրջանում հարակից տարածքներով տեղադրվում է «Տուն Թորգոմայ» երկիրը[1108], Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ողջ ժամանակաշրջանում մտնում էր Սատրապական Հայաստանի կազմի մեջ: Այս իրողությունը հաստատվում է Հերոդոտոսի և՛ XIII սատրապության սահմանների, և՛ պարսից «արքայական ճանապարհի» երթուղու քննությամբ[1109]: XIII սատրապության մաս կազմող Պակտյուիկեն (Կեսարիա-Մաժաքի շրջանը[1110]) մ.թ.ա. V դարի կեսերին անցնում է Կապադովկիային[1111]: Արևմտյան սահմանում մ.թ.ա. V դարի կեսերին Հայաստանի սատրապությունը կորցրել էր նաև իր սևծովյան տիրույթները՝ Թերմոդոնտ գետի և Յասոնի հրվանդանի միջև: Այդուհանդերձ Հայաստանի սատրապության մեջ արևմուտքում մտնում էին Գայլ և Հալիս գետերի վերին հոսանքների շրջանը, Եփրատի վտակ Կավկավա գետի հոսանքը, Կոմագենեն մինչև Մարաշ և Զևգմա: Հետևաբար, բաբելոնական տեքստի միլիդուացիների մասին հիշատակությունը գալիս է կրկին հաստատելու Մելիտինեի՝ Սատրապական Հայաստանի կազմում գտնվելու իրողությունը: Սակայն միլիդուացիների հիշատակությունը հայերի հետ թույլ է տալիս ենթադրել, որ Միլիդուին կամ միլիդուացիներին աշխարհագրական առումով հատկացված է ավելի ընդարձակ տարածք, քան միայն Մելիտինեի շրջանը: Մեր կարծիքով, Միլիդուն լայն առումով համապատասխանում է Պակտյուիկեին և վերջինիս բաբելոնական համարժեքն է: Ամենայն հավանականությամբ, Եփրատից արևմուտք ընկած տարածքները, ի մեջ առյալ հետագա Փոքր Հայքը, մտել են XIII սատրապության մասը կազմող Արևմտյան Հայաստան հյուպարքիայի մեջ, որի գոյության մասին գրե-

[1105] Clay A. T., Business documents of Murashû Sons..., pp. 62, 107: 3, 6, Lo E; Unger E., Urartu. Reallexikon der Vorgeschichte, ed. M. Ebert, XIV, Berlin, 1928, S. 32. Հմմտ. Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 294; Дандамаев М. А., Клинописные данные об армянах, Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей (Сборник докладов), Ер., 1990, с. 105; Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 341, 362.

[1106] Дьяконов И. М., Предыстория армянского народа, с. 238.

[1107] Տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 45-114; Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 81-114; Մովսիսյան Ա., Դիտարկումներ Հայաստանի Ք. ա. V-III դարերի պատմության շուրջ, ՄՄԱԵԺ, հ. XXIX, 2014, էջ 82; Հակոբյան Ա., Հայ ժողովրդի էթնոհամախմբման գործընթացի պատմա-մշակութային առանձնահատկությունները, ՎԷմ, 2013, թիվ 1, էջ 68:

[1108] Քոսյան Ա., Տուն Թորգոմայ, Եր., 1998; Ցականյան Ռ., «Տուն Թորգոմա»-ն սկզբնաղբյուրներում, Արևելագիտությունը Հայաստանում, հտ. 3, Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները, Եր., 2017, էջ 167, 172-173:

[1109] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 173-192:

[1110] Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 78-79; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 489.

[1111] Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները..., էջ 115:

թե նույն ժամանակաշրջանում հիշատակում է հույն պատմիչ Քսենոփոնը[1112]: Ուրեմն, կարող ենք եզրակացնել, որ Միլիդուն Արևմտյան Հայաստանի հյուպարքոսի նստավայրն էր: Շամաշ-բարաքքուն էլ պարզապես հայերից և միլիդուացիներից կազմված Նիպպուրի մոտ գտնվող ռազմական գաղութի կառավարիչն էր: Հետևաբար, ռազմական գաղութներում զինվորական կազմակերպությունը նույնպես ձևավորվում էր միևնույն սատրապության մեջ մտնող հարևան ժողովուրդների միավորումից: Հնարավոր է, որ «Ուրաշտուի և Միլիդուի (լայն առումով՝ Պակտյուիկեի) մարդկանց կառավարիչ[1113]» հորջորջումը եղել է ռազմական բնույթի տիտղոս:

Եփրատից արևմուտք ընկած տարածքները Հայաստանի մեջ էին նաև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ժամանակ: Հայտնի է, որ Կապադովկիան ենթարկվեց Ալեքսանդրին, սակայն կապադովկիացիները զարմանալիորեն մի դեպքում հայերի, մյուս դեպքում՝ Մեծ Հայքի հայերի, կադուսիների, սիրիացիների ու մարերի հետ մասնակցում էին Գավգամելայի ճակատամարտին[1114]: Այս տեղեկությունն ունի երկու բացատրություն. Գավգամելայի ճակատամարտին մասնակցել են կամ հյուսիսային կապադովկիացիները, որոնց երկիր Ալեքսանդրը չարշավեց[1115], կամ էլ հայերի հետ նույն թևում կապադովկիացիների առկայությունը խոսում է այն մասին, որ Պակտյուիկեն կամ նրա արևելյան հատվածը կրկին միավորվել էր Հայաստանի սատրապությանը, և էթնիկական առումով կապադովկիացիներին ազգակից պակտյուացիները ճակատամարտում հանդես են գալիս կապադովկիացիներ անունով:

Կոռնելիոս Նեպոսի տեղեկություններից պարզվում է, որ մ.թ.ա. IV դարի 60-ական թվականներին Կատաոնիան չէր ենթարկվում պարսից թագավորին: Կատաոնիայի կառավարիչ Ասպիսը հարձակումներ էր գործում հարևան երկրների վրա և թալանում արքայական գումարնե-

[1112] Xenophon, Anabasis, Vol. III, IV, 4, p. 292.

[1113] Šaknu եզրը (նշանակության մասին տե՛ս The Assyrian Dictionary, Vol. 17, Š, Part. I, Chicago, Illinois, 1989, p. 180) տվյալ տեղեկության մեջ ունի ռազմական բնույթի նշանակություն (հմմտ. Dandamaev M., Achaemenid Mesopotamia, p. 230): Հազիվ թե ուրարտացիները (իմա՛ հայերը) և միլիդուացիները, ըստ այս արձանագրության, բռնագաղթվածներ լինեին (տե՛ս Van der Spek R. J., Cyrus the Great, Exiles, and Foreign Gods: A Comparison of Assyrian and Persian Policies on Subject Nations, in: Extraction & Control: Studies in Honor of Matthew W. Stolper, ed. by Michael Kozuh, Wouter F. M. Henkelman, Charles E. Jones and Christopher Woods, SAOC, N 68, 2014, pp. 256, 259):

[1114] Արիանոս, էջ 97, 101; Ռուփոս, էջ 351:

[1115] Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները..., էջ 114: Հմմտ. Anson E. M., Antigonus, the Satrap of Phrygia, Historia, Bd. 37, H. 4, 1988, p. 473.

րը[1116]: Այս դեպքերից առաջ Կատաոնիան չի եղել առանձին վարչական միավոր և, ամենայն հավանականությամբ, դատելով այլ աղբյուրների տեղեկությունների համադրումից՝ անջատվել էր հայկական սատրապությունից՝ լինելով վերջինիս ենթաշրջաններից մեկը: Պակտյուիկեի արևելյան հատվածը մ.թ.ա. IV դարից աղբյուրներում սկսում է հիշատակվել Կատաոնիա անվանումով, և արդեն մ.թ.ա. II դարի սկզբին տեսնում ենք, որ կատաոնները գրավել էին Հայաստանի արևմտյան շրջանները[1117], որոնք ազատագրվում են Զարեհի և Արտաշես Ա-ի կողմից: Դատամեսը գերեվարում է Ասպիսին, սակայն Կատաոնիայի հետագա վարչական կացության մասին Նեպոսը տեղեկություններ չի տալիս[1118]: Հնարավոր է, որ Աքեմենյան արքունիքի համար խառնակ այդ ժամանակաշրջանում Կատաոնիան Դատամեսի ենթակայության տակ էր: Արտաքսերքսես Բ-ն Դատամեսի դեմ ուղարկում է Ավտոփրադատեսին, որի բանակում հիշատակվում է նաև տասհազարանոց հայկական զորագունդը[1119]: Կատաոնները Ավտոփրադատեսի բանակի կազմում չեն հիշատակվում, հետևաբար կարելի է ենթադրել, որ կատաոնները կրկին Սատրապական Հայաստանի կազմի մեջ էին:

Հետաքրքիր է, որ համաձայն Ռուփոսի, Գավգամելայի ճակատամարտին մասնակցում են նաև կատաոնները՝ Պակտյուիկեի արևելյան հատվածը բնակեցրած ժողովուրդը, ինչն, անշուշտ, կրկին վկայում է այն մասին, որ կատաոնները, լինելով Կապադովկիայի էթնոսներից մեկը, կամ հյուսիսային կապադովկիացիների հետ, կամ էլ թերևս արդեն Հայաստանի սատրապության կազմում մասնակցում են ճակատամարտին: Կատաոնների մասին հիշատակությունը թույլ է տալիս մտածել, որ Եփրատից արևմուտք ընկած տարածքները մինչև Կոռմանդոն (Որոմանդոն) և Ջիգոն-Բասիթեոն (Բազեի թևք) լեռներն Աքեմենյան Պարսկաստանի մայրամուտին շարունակում էին մնալ Հայաստանի կազմի մեջ:

3.3. Սատրապական Հայաստանի կենտրոնի հարցի շուրջ

Աքեմենյան տիրապետության դարաշրջանում Սատրապական Հայաստանի կենտրոնի հարցը շարունակում է առ այսօր վիճահարույց

[1116] Cornelius Nepos (Loeb), Datames, XIV, III, 4, p. 514; Bing J. D., Datames and Mazaeus: The Iconography of Revolt and Restoration in Cilicia, Historia, Bd. 47, H. 1, 1998, p. 48.

[1117] Страбон, с. 498.

[1118] Cornelius Nepos (Loeb), Datames, XIV, III, 4, p. 516. Հմմտ. Debord P., L'Asie Mineure au IVe siècle, p. 107.

[1119] Cornelius Nepos (Loeb), Datames, XIV, VI, 8, p. 524.

մնալ, հատկապես, եթե նկատի ունենանք, որ մինչև XX դարի վերջը, ըստ առավել ընդունված տեսակետի, Հայաստանը մ. թ. ա. VI-IV դարերում բաժանված է եղել երկու՝ XIII և XVIII սատրապությունների[1120]. Ըստ այդմ էլ XIII սատրապության կենտրոն էր համարվում Վանը, իսկ XVIII-ինը՝ Էրեբունի-Արին-բերդը[1121]: Հայաստանի վարչական բաժանման հարցը մենք արդեն քննության առել ենք՝ ցույց տալով, որ XIII սատրապությունը համապատասխանել է Հայաստանին, իսկ XVIII սատրապությունը տարածվել է Կուր գետի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի միջև[1122]: Հետևաբար, մեր տեսակետը ելակետային կլինի XIII սատրապության կենտրոնի խնդիրը քննելիս:

Հայաստանի տարածքում հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված հուշարձանները թույլ են տալիս համեմատություններ անցկացնել Աքեմենյան ճարտարապետական նմանատիպ հուշարձանների հետ: Այսպես, Աքեմենյան դարաշրջանով է թվագրվում Գյումրի քաղաքից հարավ-արևմուտք՝ Բենիամին գյուղի մոտ գտնվող Դրասխանակերտ ճարտարապետական համալիրը (մ. թ. ա. V դարի

[1120]Տիրացյան Գ. Ա., Արին-բերդի սյունազարդ դահլիճը և սատրապային կենտրոնների հարցը Հայկական լեռնաշխարհում, Տեղեկագիր, 1960, թիվ 7-8, էջ 109; նույնի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ–մ. թ. ա. III դ. վերջ), ՊԲՀ, 1981, թիվ 2, էջ 68-84; նույնի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), ՊԲՀ, 1980, թիվ 4, էջ 84-95; Գրեկյան Ե., Էրեբունի ամրոցը, ՊԲՀ, 2018, թիվ 3, էջ 65; Kesecker N. T., The Elamite Version of the Inscription of Xerxes I at Van (XV), ՎԷմ, 2018, թիվ 1, էջ 31:

[1121] Տիրացյան Գ. Ա., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ – մ. թ. ա. III դ. վերջ), էջ 71; նույնի՝ Города Армении эллинистического времени в свете археологических исследований (Вопросы генезиса, топографии, градостроительной структуры, архитектурного облика), ВДИ, 1979, 2, с. 161; Тер-Мартиросов Ф., Армения в составе империи Ахеменидов, Армения-Иран: История. Культура. Современные перспективы взаимодействий, Сборник статей, М., 2013, с. 109, 112; Beikzadeh S., Ghadim F. I., Achaemenid Architecture in South Caucasus and the Black Sea Cultural Basin, Tüba-Ar, Vol. 20, Ankara, 2017, p. 139; Tarhan T. M., Median and Achaemenid Periods at Tušpa, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-Fourth Centuries B.C.), ed. by İnci Delemen, Istanbul, 2007, p. 120; Dan R., From the Armenian Highland to Iran. A Study on the Relations between the Kingdom of Urartu and the Achaemenid Empire, Serie Orientale Roma, Nuova Serie 4, Roma, 2015, pp. 11, 13..

[1122] Մանրամասն տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 45-114; Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., Գլ. Բ:

2-րդ կես)[1123], որը զուգահեռներ ունի Սարի-թեփեի և Գումբաթիի համանման պալատների հետ[1124]:

Արգիշտիխինիլին (ներկայիս Արմավիրը) Աքեմենյան ժամանակաշրջանում կորցրել էր իր նախկին կարևոր նշանակությունը, սակայն այստեղ ևս հայտնաբերվել են նյութական մշակույթի որոշ իրեր (օրինակ՝ թասեր, անոթների կափարիչներ)[1125], որոնք թվագրվում են Աքեմենյան կամ էլ հելլենիստական դարաշրջանով: Հայտնաբերվել են նաև էլամերենով սեպագիր արձանագրություններ, որոնք թվագրվում են մ. թ. ա. VI դարի առաջին կեսով կամ V դարով[1126] և Գիլգամեշի էպոսի հետ ոչ մի կապ չունեն[1127], ինչպես կարծում էին նախկինում[1128]: Այդուհանդերձ, դատելով էլամերեն տեքստերի՝ տարակարծությունների տեղիք տվող ընթերցումներից, կարելի է ենթադրել, որ Արմավիրում եղել են պարսիկ կառավարիչներ, իսկ էլամերենը եղել է վարչական գրագրության լեզու[1129]: Ըստ էության, Արմավիրում հավաքվում էր շրջակա տարածքներից հավաքվող հարկը, իսկ Արմավիրի կառավարիչը համապատասխանում էր պարսկական **frataraka*-ին[1130], որը սատրապից ավելի ցածր աստիճանի վրա էր գտնվում: Այս հանգամանքը, թերևս, ցույց է տալիս, որ Արմավիրը չէր կարող սատրապական կենտրոն[1131] լինել և, հավանաբար, իր նշանակությամբ համապատասխանում է Հայաստանում Քսենոփոնի հիշատակած սատրապական պալատին[1132]: Առ այսօր վիճելի է նաև Ար-

[1123] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. I, էջ 337, 341; Тер-Мартиросов Ф., Армения в составе империи Ахеменидов, с. 107-108; Вергазов Р. Р., Официальный стиль Ахеменидов и его отражение в искусстве северных сатрапий на материале архитектуры, с. 301.

[1124] Knauss F., Ancient Persia and the Caucasus, p. 100.

[1125]Аракелян Б. Н., О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ПДИ, 1969, թիվ 4, էջ 157-174; Тирацян Г. А., Золотая пектораль из Армавира (Армения), СА, 1968, № 4, с. 197; նույնի՝ Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 1969, թիվ 4, էջ 148; Կարապետյան Ի. Ա., Արմավիրի խեցեգործության մի նոր տարատեսակ, ԼՀԳ, 1973, թիվ 11, էջ 68-73; նույնի՝ Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI-IV դդ., Եր., 2003, էջ 11:

[1126] Knauss F., Ancient Persia and the Caucasus, pp. 100, 102:

[1127] Vallat F., La lettre élamite d'Arménie, ZA 87, 1997, pp. 258–270.

[1128] Дьяконов И. М., Янковская Н. Б., Эламский диалог Гильгамеша и Сидури и другие эламские тексты из Аргиштихинеле (Армавир), ПДИ, 1989, թիվ 2, էջ 55-62:

[1129] Koch H., Elamisches Gilgameš-Epos oder doch Verwaltungstäfelchen?, ZA 83, 1993, SS. 219-236.

[1130] Անդ, էջ 230:

[1131] Beikzadeh S., Ghadim F. I., Achaemenid Architecture in South Caucasus..., p. 138.

[1132] Քսենոփոն, Անաբասիս, էջ 93:

մավիրում սյունազարդ դահլիճն ուշ ուրարտական կամ Աքեմենյան ժամանակաշրջանով թվագրելը[1133]: Սակայն առավել հավանական է դահլիճն Աքեմենյան դարաշրջանով թվագրելը[1134]:

Հավելենք նաև, որ Աքեմենյան ժամանակաշրջանում Արմավիրում եղել է տաճարային կենտրոն, և պատահական չէ, որ Արմավիրի պաշտամունքային նշանակությունը պահպանվում էր նաև հետաքեմենյան շրջանում[1135]: Ըստ ընդունված տեսակետի՝ Արմավիրը մ. թ. ա. 331 թվականի Գավգամելայի ճակատամարտից հետո հռչակվում է Երվանդունիների նորաստեղծ թագավորության մայրաքաղաք[1136]:

Ինչ վերաբերում է Էրեբունի ամրոցին, ապա Աքեմենյան շրջանով է թվագրվում Խալդի աստծո տաճարին կից 12-սյունանի սրահի ընդարձակումն ու վերածումը 30-սյունանի խոշոր դահլիճի՝ «ապադանա»-ի. վերջինս կառուցվել է Պերսեպոլիսի պալատական ճարտարապետության ոճով՝ համեմատության որոշակի եզրեր ունենալով նաև Կյուրոս Բ-ի Պասարգադայի պալատի հետ[1137]: Էրեբունիի միջնաբերդում երկու նոր, այսպես կոչված, «Հրո մեծ և փոքր» տաճարների կառուցումը ևս

[1133] Herles M., Achaemenids and the Southern Caucasus, in: Bridging Times and Spaces, Festschrift in Honour of Gregory E. Areshian on the Occasion of His Sixty-Fifth Birthday, ed. by P. S. Avetisyan and Y. H. Grekyan, Oxford, 2017, p. 138. Տեղին է նշել, որ այս ուսումնասիրողը լավ չի պատկերացնում Աքեմենյան դարաշրջանի Հայաստանի պատմությունն ու պատմական աշխարհագրությունը՝ Հայաստանի սատրապության տարածքից դուրս թողնելով Վանա լճի ավազանը, այսինքն՝ տուրք է տալիս հայ ժողովրդի կազմավորման դարն ապրած տեսություններին: Նույնիսկ սկզբնաղբյուրներին վերագրում է տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Օրինակ, իբր Քսենոփոնը Օրոնտասին համարել է Արևելյան Հայաստանի սատրապության կառավարիչ, երբ Քսենոփոնը բառացիորեն Օրոնտասին հիշատակում է որպես ամբողջ Հայաստանի տիրակալ (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 81):

[1134] Тер-Мартиросов Ф., К стратиграфии Армавирского холма, ԼՀԳ, 1974, թիվ 1, էջ 62, 65; նույնի՝ Типология колонных сооружений Армении Ахеменидского периода, Գիտական աշխատություններ, III, Գյումրի, 2001, էջ 16; Вергазов Р. Р., Официальный стиль в искусстве Ахеменидского Ирана и художественная жизнь северных провинций империи, Диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения, на правах рукописи, М., 2018, с. 278-279.

[1135] Կրկյաշարյան Ս., Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, Տեղեկագիր, 1963, թիվ 9, էջ 55; Тирацян Г. А., Города Армении эллинистического времени..., с. 161.

[1136] Тирацян Г. А., Города Армении эллинистического времени..., с. 164.

[1137] Տիրացյան Գ. Ա., Արին-բերդի սյունազարդ դահլիճը..., էջ 106-108; նույնի՝ Ուրարտական քաղաքակրթությունը և աքեմենյան Իրանը, ՊԲՀ, 1964, թիվ 2, էջ 150; Вергазов Р. Р., Типология дворца-ападаны в классической архитектуре ахеменидского Ирана: проблема происхождения и развития, Актуальные проблемы теории и истории искусства, Санкт-Петербургский государственный университет, 2016, 6, с. 28; նույնի՝ Официальный стиль Ахеменидов..., с. 299.

Աքեմենյան շրջանով է թվագրվում և, հավանաբար, կապված է Քսերքսեսի կրոնական բարեփոխման հետ[1138]: Ըստ էության, ամրոցի վերնախավը փոխշփումների մեջ է եղել Աքեմենյաններին հպատակ այլ երկրների հետ, ինչի մասին վկայում են հայտնաբերված մ. թ.ա. V դարի միլեթյան երկու դրամները, մ. թ.ա. V–IV դարերով թվագրվող արծաթյա պտյակները[1139]: Ուշագրավ է, որ Էրեբունու ապադանայի հետ մարական սյունազարդ դահլիճների հետ ունեցած զուգահեռները, շինարարական տեխնիկան, ինչպես նաև Աքեմենյան ճարտարապետությանը բնորոշ սյունախարիսխների բացակայությունը հուշում են, որ սյունասրահը կառուցվել է ուրարտական տերության անկումից հետո՝ մինչև Հայաստանում Աքեմենյան գերիշխանության հաստատումը՝ մ. թ. ա. մոտ 600 թվականին, այսինքն՝ մարական (օրինակ, Գոդինթեփե II-ի 30 սյուներից կազմված դահլիճի հետ զուգահեռները[1140]) կամ, այսպես կոչված, «վաղ հետուրարտական» շրջանում[1141]: Չնայած այս մոտեցումը լրացուցիչ հիմնավորումների կարիք ունի, այդուհանդերձ նոր տեսակետը հետաքրքիր է, քանի որ Էրեբունիի նշանակությունը Հայաստանի համար կարևոր է եղել նաև մարական դարաշրջանում:

Հայաստանում սատրապական կենտրոնի կամ կենտրոնների[1142] հարցը քննարկելիս չպետք է մոռանալ, որ Աքեմենյան արքաների

[1138] Տիրացյան Գ. Ա., Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI-IV դարերում, էջ 151:

[1139] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. I, էջ 340; Գրեկյան Ե., Էրեբունի ամրոցը, էջ 63, 65; Ստրոնախ Դ., Էրեբունու արծաթյա ալավանները նոր լույսի ներքո, ՊԲՀ, 2010, թիվ 3, էջ 180-197: Տե՛ս նաև Տիրացյան Գ. Ա., Արին-բերդի սյունազարդ դահլիճը..., էջ 103; Կարապետյան Ի. Ա., Հայաստանի նյութական մշակույթը..., էջ 10-11: Трейстер М. Ю., Клад серебряных ритонов ахеменидского круга из Эребуни, SA, Том 3, 2013, с. 343-424.

[1140] Вергазов Р. Р., Официальный стиль в искусстве Ахеменидского Ирана и художественная жизнь северных провинций империи, с. 277.

[1141] Գրեկյան Ե., Էրեբունի ամրոցը, էջ 64:

[1142] Աքեմենյան դարաշրջանում մասնակիորեն վերակառուցված մյուս հուշարձաններին՝ Օշական, Օղլանկալա (մանրամասն տե՛ս Вергазов Р. Р., Официальный стиль в искусстве Ахеменидского Ирана и художественная жизнь северных провинций империи, с. 275, 279-280), չենք անդրադառնում, որովհետև դրանք համասատրապական կենտրոններ չէին կարող լինել և, ըստ էության, տեղական ազնվականության ներկայացուցիչների համար էին կառուցվում: Օրինակ՝ նաև Լոռի Բերդի դամբարանադաշտի դամբարաններում 2008 թվականին հայտնաբերված իրերը հաստատում են հուշարձանի մ. թ. ա. VI-V դարերով թվագրումը: Դամբարանները պատկանել են բարձր հասարակության խավի ներկայացուցիչներին, որոնք շրջապատել են իրենց նոր, Աքեմենյան ոճի և արտադրության իրերով, միաժամանակ պահպանելով հինը՝ ավանդականը, ուրարտականը (մանրամասն տե՛ս Devedjyan S., Hobosyan S., Davtyan R., Post-Urartian tombs of Lori Berd, Aramazd, Vol. XII, Issue 1, 2018, pp. 109-123):

նստավայրերից երկուսը՝ Սուզան և Էկբատանան, համապատասխանաբար հին թագավորություններ Էլամի և Մարաստանի մայրաքաղաքներն էին, հետևաբար Սատրապական Հայաստանի կենտրոնն Աքեմենյանների համար կարող էր լինել Ուրարտուի հին մայրաքաղաք Տուշպա-Վանը: Այս վերջին հանգամանքը հավանական է այն առումով, որ Դարեհ Ա-ի որդի Քսերքսեսն է հոր թողած քարին գրել տալիս եռալեզու սեպագիր արձանագրությունը: Դարեհ Ա-ն հենց այնպես չէր կարող անհայտ վայրում արձանագրության քար թողնել, որի բովանդակությունն անկասկած այլ կլիներ, եթե Դարեհ Ա-ն հասցներ ավարտել արձանագրության տեքստը: Բացառված չէ, որ արձանագրությունը պետք է խորհրդանշեր Դարեհ Ա-ի հաղթանակը գահի համար մղված պայքարում, իսկ Հայաստանում պարսից արքայի բանակները հինգ ճակատամարտեր էին տվել ապստամբների դեմ: Ամեն դեպքում, Դարեհ Ա-ի արձանագրությունը, ինչպես որ հայտարարվում է Բեհիսթունի արձանագրությունում[1143], պետք է խորհրդանշեր վերջինիս կողմից իր թագավորության պահպանումը և ստի վերացումը:

Անդրադառնանք նաև մի հարցի, որը վերջին տարիներին իր վրա է սևեռել բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը: Խոսքը վերաբերում է Կուրի աջափնյակին գտնվող Կարաչամիրլիի՝ մ. թ. ա. V-IV դարերով թվագրվող ապադանային[1144], որը կրկնում է Սուզայի և Պերսեպոլիսի պալատական համալիրները[1145]: Վերջինս համարվել է արքայից արքայի ճանապարհային նստավայրերից մեկը, որն օգտագործել են նաև հայոց արքաները: Եթե նման տեսակետը քիչ թե շատ հավանական է, ապա Կարաչամիրլիի՝ Կասպիանեի սատրապի նստավայր լինելու կարծիքը բացարձակապես քննություն չի բռնում[1146]: Նշենք, որ Կարաչամիրլիից հյուսիս-արևմուտք՝ ներկայիս Ղազախի մոտ՝ Սարի-թեփե վայրում, գտնվել է Աքեմենյանների պաշտպանա-

[1143] Kent R., Old Persian, pp. 129-130.

[1144] Կարաչամիրլիի պալատական համալիրի և հնագիտական նյութի քննությունը մանրամասն տե՛ս Knauss F., Ludwig N., Mehnert G., Sens U., Wicke D., Ein Perserbau auf dem Ideal Tepe bei Karačamirli (Aserbaidschan), pp. 1-51; Knauss F., Ancient Persia and the Caucasus, pp. 97-99; Dan R., From the Armenian Highland to Iran, p. 13.

[1145] Вергазов Р. Р., Официальный стиль Ахеменидов..., с. 301.

[1146] Մանրամասն տե՛ս Тер-Мартиросов Ф., Маршрут похода Арташеса к Ервандашату, ՊՄ, հտ. Գ, 2014, էջ 56: XI և XV սատրապությունների տեղադրության մասին տե՛ս Khorikyan H., On Location of XI and XV Satrapies of Achaemenid Persia, Historia i Świat, Siedlce, nr 5, 2016, pp. 23-29. Հմմտ. Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, ԼՀԳ, 1983, թիվ 1, էջ 87-99:

կան կառույցներից մեկը[1147], որը պաշտպանում էր XIII սատրապության հյուսիսարևելյան սահմանը, այսինքն՝ Աքեմենյանների համար Կուր գետի բնական հզոր ամրագիծն էլ ավելի էր ամրապնդվում գետի աջափնյակի ամրություններով:

Մեր կարծիքով, Կարաչամիրլիի պալատական համալիրը Հայաստանի սատրապի նստավայրն էր սատրապության արևելյան մասում, այնպես, ինչպես Ալթընթեփեն՝ սատրապության արևմտյան մասում, այսինքն՝ և՛ Կարաչամիրլին, և՛ Ալթընթեփեն աշխարհագրական առումով գտնվել են ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր վայրերում: Ընդ որում, Կարաչամիրլիի պալատական համալիրը հենց սատրապի, ոչ թե հյուպարքոսի նստավայրերից մեկն էր: Հետևաբար, Կարաչամիրլիի պալատական համալիրը չէր կարող լինել նաև Կուր գետից հյուսիս գտնվող XVIII սատրապության կենտրոններից մեկը. վերջինիս կենտրոններից մեկը հյուսիսային հատվածում, հնարավոր է, գտնվել է ներկայիս Գումբատի գյուղի տարածքում, որտեղ հայտնաբերվել է Աքեմենյան դարաշրջանով թվագրվող հսկայական շինություն, ուր նստում էր պարսից պաշտոնյան[1148]: Գումբատիի և Կարաչամիրլիի հնավայրերն ունեն բազմաթիվ շինարարական զուգահեռներ[1149] և, ըստ էության, ուղղված էին տերության պաշտպանական համակարգի ամրապնդմանը և հարկահավաքման կենտրոնացմանը:

Ինչ վերաբերում է Ալթընթեփեին, ապա Աքեմենյան դարաշրջանով թվագրվող Ալթընթեփե հնավայրի շինարարական երկրորդ փուլը թույլ է տվել ենթադրել, որ այստեղ գտնվել է XIX սատրապության սատրապի նստավայրը[1150], ինչը չի կարող հավանական լինել: Հավանական է, որ այն եղել է Արևմտյան Հայաստան վարչական միավորի հյուպարքոսի

[1147] Knauss F., Ancient Persia and the Caucasus, pp. 96-97. Ըստ Ա. Հակոբյանի բանավոր կարծիքի՝ Սարի-թեփեի բնակավայրը համադրելի է վաղ միջնադարի հայկական աղբյուրների Հնարակերտի հետ:

[1148] Вергазов Р. Р., Официальный стиль Ахеменидов..., с. 303; Knauss F., Ancient Persia and the Caucasus, pp. 89-91.

[1149] Gagoshidze I., South Caucasus and Achaemenids, «Արագածի թիկունքում»: Հնագիտական հետազոտություններ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, Եր., 2018, էջ 226-227; Beikzadeh S., Ghadim F. I., Achaemenid Architecture in South Caucasus..., pp. 132-136, 139-142; L'archéologie de l'empire achéménide, pp. 205, 208.

[1150] Քոսյան Ա., Ուրարտական տերության ծայրագավառը (Ալթընթեփեի օրինակով), Խալդյան զորությամբ..., Հոդվածների ժողովածու նվիրված Բ. Պիոտրովսկու 100-ամյակին, Եր., 2010, էջ 24; Summers G. D., Archaeological Evidence for the Achaemenid Period in Eastern Turkey, p. 96. Ալթընթեփե հնավայրի և հատկապես ապադանայի Աքեմենյան աիի զուգահեռների մասին տե՛ս Dan R., From the Armenian Highland to Iran, 2015, pp. 14-15.

նստավայրը կամ էլ սատրապական նստավայրերից մեկը[1151], որտեղից պարսիկները փորձելու էին իրենց տիրապետությունը վերահաստատել էթնիկապես խայտաբղետ ու կիսանկախ XIX սատրապություններում: Նշենք, որ Արգիշտիխինիլիի սյունազարդ դահլիճի հատակագծումը ակնհայտ նմանություն ունի Ալթընթեփեի բազմասյուն դահլիճի՝ հիպոստիլի հետ[1152]: Նշենք նաև, որ Ալթընթեփե II հուշարձանի հիպոստիլը հիմնականում արտացոլում է տեղական ճարտարապետության ազդեցությունը՝ հիմնված ուրարտական և մարական ժառանգության վրա՝ զուգահեռներ ունենալով նաև Պասարգադայի «նախաապադանայի» սյունազարդ դահլիճների փոխդասավորության հետ[1153]:

Աքեմենյան Պարսկաստանի պատմությունն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, որ հպատակ երկրներն իրենցից ներկայացնում էին պարսից տերության առանձին «միկրոկոսմոսներ», որոնց վարչական կառավարման համակարգը կրկնում էր կենտրոնական արքունիքի գործառույթները: Հետևաբար, սատրապներն իրենց ենթակայության տակ գտնվող նահանգներում ներկայանում էին իբրև արքայիկներ, որոնք նմանվում էին արքայից արքային և վերջինիս նմանությամբ ունեին սատրապական մի քանի կենտրոններ: Օրինակ, Հայաստանի սատրապն ուներ մի քանի նստավայր, որոնցից էին Ալթընթեփեն, Արին-բերդը, Կարաչամիրլին, Վանը և այլն: Այս առումով, հարկ է նշել, որ անտիկ աղբյուրներում կան տեղեկություններ, ըստ որոնց արքայից արքան տարվա տարբեր ժամանակահատվածներում լինում էր տարբեր նստավայրերում՝ Սուզայում (Սուսա, Շոշ), Բաբելոնում, Էկբատանայում, Պերսեպոլիսում կամ էլ ժամանակ առ ժամանակ Բակտրայում[1154]: Վերջին նստավայրի հիշատակությունը ցույց է տալիս, որ Բակտրան կարող էր լինել նաև շրջիկ նստավայրերից մեկը: Հետաքրքիրն այն է, որ բոլոր հիշատակված նստավայրերը հին թագավորությունների կենտրոններ են, հետևաբար Հայաստանի պարագայում կարող ենք եզրակացնել, որ Վանը նույնպես, գոնե սկսած

[1151] Вергазов Р. Р., Официальный стиль Ахеменидов..., с. 300.
[1152] Անդ:
[1153] Вергазов Р. Р., Официальный стиль в искусстве Ахеменидского Ирана и художественная жизнь северных провинций империи, с. 273-274.
[1154] Dio Chrysostom, with an english translation by J. W. Cohoon, Vol. I, London-Cambridge-Massachusetts, 1949, Loeb Classical Library, The Sixth Discourse: Diogenes, or on Tyranny, 6.1, p. 251. Պարսից արքաների նստավայրերի մասին մյուս սկզբնաղբյուրների տեղեկությունները մանրամասն տե՛ս Tuplin C., The Seasonal Migration of Achaemenid King: A Report on Old and New Evidence, in: AH XI, Leiden, 1998, pp. 64-66.

Կյուրոս Բ-ից մինչև Դարեհ Ա, համարվել է սատրապական նստավայր, որտեղ էլ մնացել էր Դարեհ Ա-ի արձանագրության համար պատրաստած քարը: Մյուս կողմից էլ Քսերքսեսի կողմից երեք լեզուներով՝ հին պարսկերեն, էլամերեն և բաբելոներեն, արձանագրության տեքստի պատրաստումը ցույց է տալիս, որ Վանը շարունակում էր Աքեմենյանների համար համարվել արքայական/սատրապական նստավայր: Կարծում ենք, որ Վանի հոգևոր-մշակութային նշանակությունը պահպանվում էր նաև հայոց սատրապների կողմից, որոնք հիմնականում միաժամանակ թագավորներ էին[1155]: Պատահական չէ, որ Երվանդունիներ-Օրոնտասների անունը կրող աշխարհացույցյան Երուանդունիք գավառը գտնվում էր Վան քաղաքն ընդգրկող Տոսպ գավառից հարավ-արևելք:

Ստորև մեր թարգմանությամբ մեջբերենք Վանի արձանագրությունը հին պարսկերենից և պատասխանենք որոշ հարցադրումների. *«Ահուրամազդան մեծ աստված է, աստվածներից մեծագույնը, երկրի արարիչը, երկնքի արարիչը, մարդու արարիչը, երջանկության արարողը մարդու համար, ով Քսերքսեսին դարձրեց թագավոր, բոլորի միակ թագավորը, բոլորի միակ տիրակալը:*

Ես Քսերքսեսն եմ, մեծ արքան, արքայից արքան, բոլոր տեսակի [ծագման] բազում մարդիկ (ունեցող) երկրների արքան, այս հեռավոր և ընդարձակ մեծ երկրի թագավորը, Դարեհ արքայի որդին, Աքեմենյան:

Քսերքսես արքան ասում է. «Դարեհ արքան, իմ հայրը, Ահուրամազդայի ողորմածությամբ շատ լավ (շինություններ) կառուցեց, և այս որմնախորշը հրամայեց փորել, բայց քանի որ չգրեց արձանագրություն, ես հրամայեցի փորագրել այս արձանագրությունը»:

Թող Ահուրամազդան մյուս աստվածների հետ պաշտպանի ինձ, և իմ թագավորությունը, և ինչ կառուցել եմ»[1156]:

Նշենք, որ Վանի արձանագրությունը բովանդակային կառուցվածքով և կաղապարային ձևով համապատասխանում է Դարեհ Ա-ի և

[1155] Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 75, 81; Խորհկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 58-59:
[1156] Kent R., Նշվ. աշխ., էջ 152-153; Lecoq, pp. 263-264; Corpus des Inscriptions Royales en Elamite Achemenide, par François Vallat, Thèse présentée pour l'obtention du Doctorat de IIIe cycle, Paris, 1977, pp. 218-220. Հմմտ. նաև Սանտալճեան Յ. Վ., Աւորեստանեայ եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնք, Վիեննա, 1901, էջ 224-226; Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Եր., 2003, էջ 188-189:

Քսերքսեսի այլ արձանագրություններին, օրինակ, Դարեհ Ա-ի Նաղշե-Ռոստամի (=DNa, տող 1-4, 11-3), Էլվենդի (=DE, տող 12-9), Քսերքսեսի Պերսեպոլիսի (=XPa, տող 1-6, 6-11; XPb, տող 27-30) արձանագրություններին[1157] և այլն: Անկասկած, Վանի արձանագրությունը պետք է դիտարկվի Քսերքսեսի կրոնական բարեփոխման համատեքստում, հետևաբար Ուրարտուի հին մայրաքաղաքն Աքեմենյան շրջանում մնում էր սատրապական կենտրոն, որտեղ իր արձանագրությամբ Քսերքսեսն Ահուրամազդայի պաշտամունքը պարտադրում էր նաև Հայաստանին[1158], հատկապես, եթե նկատենք, որ իրանական ազդեցությունը Հայաստանի տարածքում զգալի էր[1159]: Վանի մշակութային-կրոնական նշանակությունն անկասկած պահպանվում էր նաև մ. թ. ա. V դարի առաջին կեսին, և հնարավոր է, որ Հայաստանի սատրապ-թագավորները թաղվում էին Վանում, ինչի մասին վկայում են Աքեմենյան ժամանակաշրջանով թվագրվող որոշ ժայռափոր դամբարաններ[1160] (այսպես կոչված «Փոքր Խոռխոռը», որը նմանություններ ունի Դարեհ Ա-ի Նաղշե-Ռոստամի ժայռափոր դամբարանի հետ)[1161], ինչպես որ հետագայում Պերսեպոլիսը դարձավ թագավորների թաղման վայր: Այս արձանագրության հետևանքը Էրեբունիի միջնաբերդում «Հրո մեծ և փոքր» տաճարների կառուցումն էր, ինչը խորհրդանշում էր դևերի, այսինքն՝ հին աստվածների դեմ պայքարը:

Վանի արձանագրությամբ Քսերքսեսը կրկին հաստատում էր իր գերակայությունը տերության հյուսիսային շրջանների՝ տոպարքիայի նկատմամբ, որի կենտրոնը Վանն էր, ինչպես Սարդեսն էր տերության արևմտյան կողմի կենտրոնը: Անկախ նրանից, որ Վանում առկա է Աքեմենյանների ժամանակաշրջանի հնագիտական նյութի պակասություն[1162], այդուհանդերձ արձանագրության առկայությունը խոսում է Վանի սատրապական կենտրոն լինելու մասին: Վանի եռալեզու ժայռափոր արձանագրությունը բուն Իրանի սահմաններից դուրս անկասկած վկայում է Հայաստանի կարևոր նշանակության մասին[1163]:

Որպես Աքեմենյան տերության մանրակերտ՝ Սատրապական Հայաստանը կրկնելու էր Աքեմենյանների կենտրոնական կառավարման վարչակարգը, հետևաբար բազմաթիվ նստավայր-մայրաքաղաքներ ունեցող պարսից արքաների նման Հայաստանի սատրապները (թագավորները) ևս ունեին տարբեր նստավայրեր, սակայն ինչպես Պերսեպոլիսն էր պարսից արքայի գլխավոր մայրաքաղաքը, այնպես էլ Վանն էր Հայաստանի սատրապի նստավայրը: Միաժամանակ հարկ է ուշադրություն դարձնել այն հետաքրքիր հանգամանքին, որ Աքեմենյան արքայատոհմի նստավայրերի՝ Սուսայի, Բաբելոնի, Էկբատանայի, Պերսեպոլիսի կամ էլ Բակտրայի շարքում գայթակղիչ և հավանական է Վանը ևս համարել Աքեմենյանների (գոնե մինչև Քսերքսես) նստավայրերից, քանի որ Վանը նշված քաղաքների հետ միասին հնագույն քաղաքակրթություններից մեկի կենտրոնն էր, իսկ Աքեմենյան դարաշրջանի իրանական մշակույթն ուրարտական քաղաքակրթությունից շատ բան ժառանգեց:

Սատրապական Հայաստանն Աքեմենյանների համար կարևոր էր նաև տերության մայրամուտին, երբ Հայաստանի սատրապ էր նշանակվել ապագա թագավոր Դարեհ Գ Կոդոմանոսը: Չնայած փաստերի բացակայությանը՝ հնարավոր է մտածել, որ Աքեմենյան սատրապի նստավայրը կարող էր լինել միայն Վանը, որտեղ նրա նախնին արձանագրություն էր թողել: Բացառված չէ, որ Դարեհ Ա-ի արձանագրությունը խորհրդանշում է Հայաստանի ենթարկումը պարսիկներին, և արձանագրության վայրն ինքնին կապվում է երկրի վարչական կենտրոնը Արմավիրից Վան տեղափոխելու և հայոց թագավոր-սատրապի փոփոխության հետ:

Հետաքրքիր է նաև, որ Դարեհ Գ-ն, Գավգամելայի ճակատամարտում պարտվելով, փախչում է դեպի հյուսիս՝ ճանապարհն ուղղելով հայկական լեռներով (իմա՛ Դասն և Նպատական լեռներով) դեպի Մարաստան[1164]: Խնդիրն այն է, թե ինչու Դարեհ Գ-ն պետք է փախչեր Մարաստան Հայաստանի հարավային սահմաններով: Հավանաբար, խու-

[1157] Kent R., Նշվ. աշխ., էջ 137, 147, 148:
[1158] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 341:
[1159] Քսենոփոն, Անաբասիս, էջ 98: Հազիվ թե պարսիկների մոտ երկարատև զինվորական ծառայության մեջ գտնվող հույն վարձկանները պարսկերենը շփոթեին հայերենի հետ:
[1160] Ժայռափոր դամբարաններում թաղվելն ինքնին նշանակում էր, որ գործ ունենք արդեն զրադաշտական հավատալիքների հետ (տե՛ս Бойс М., Зороастрийцы: Верования и обычаи, пер. с англ. и прим. И. М. Стеблин-Каменского, Санкт-Петербург, 1994, с. 69, 76), հետևաբար, բացառված չէ, որ Վան քաղաքում՝ որպես վարչական կենտրոն, զրադաշտականության ազդեցությունն ուժեղ էր:
[1161] Tarhan T. M., Median and Achaemenid Periods at Tušpa, pp. 122-123; Вергазов Р. Р., Официальный стиль в искусстве Ахеменидского Ирана и художественная жизнь северных провинций империи, с. 274-275.
[1162] Dan R., From the Armenian Highland to Iran, p. 13.
[1163] Համմ. Herles M., Achaemenids and the Southern Caucasus, p. 137.
[1164] Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 46:

ճապի մատնված Հայաստանի նախկին սատրապը փրկության առաջին ապաստանը տեսել է Հայաստանում, սակայն ինչ-ինչ պատճառներով փախուստի երթուղին ուղղել է դեպի Մարաստան: Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ Դարեհն Արբելայի ճակատամարտում պարտվելուց հետո փախչելով դիմեց վերին սատրապությունները[1165], որոնցից մեկը Հայաստանն էր: Պատմիչի հետագա տեղեկությունները թույլ են տալիս որոշ եզրակացություններ կատարել: Էկբատանայում Դարեհը հավաքում է պատերազմից փրկվածներին և գինում անգեններին: Միաժամանակ «մոտակայքում բնակվող ցեղերից նա զինվորներ պահանջեց և Բակտրիայի և վերին սատրապությունների սատրապների և զորավարների մոտ հրեշտակներ ուղարկեց, կոչ անելով նրանց հավատարիմ մնալ իրեն»[1166]: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները[1167], վերին սատրապություններից մեկը՝ Հայաստանը, մերժեց Դարեհին օգնության հարցում:

Նշենք, որ, մեր կարծիքով, Աքեմենյան տերության մայրամուտին Սատրապական Հայաստանի տնտեսական, կրոնական, մշակութային կենտրոնն Արմավիրն էր, որը մ. թ. ա. 331 թվականից հետո կրկին դառնում է նորանկախ Հայկական պետության ռազմա-քաղաքական կենտրոնը[1168]: Անկասկած, Արմավիրի նշանակությունը պետք է կարևոր լիներ նաև Աքեմենյանների օրոք, ինչի մասին վերևում նշել ենք: Արմավիրի մայրաքաղաք դառնալու ակտն ինքնին նշանակելու էր, որ Արմավիրից առաջ Աքեմենյան սատրապություն հանդիսացող Հայաստանի վարչական կենտրոնը պետք է այլ վայրում եղած լիներ: Խոսքը վերաբերում է Վանին: Մյուս կողմից էլ Երվանդունիները, Արմավիրը կրկին մայրաքաղաք դարձնելով, վերականգնում էին Հայաստանի՝ մինչաքեմենյանները գոյություն ունեցող քաղաքական կարգավիճակը, այսինքն՝ անկախ պետականությունը: Համեմատության համար նշենք, որ պայմանականորեն Արմավիրը Սատրապական Հայաստանի համար ունեցել է տնտեսական այն նույն նշանակությունը, ինչ Աքեմենյանների համար եղել է Սուզան: Ըստ էության, մ. թ. ա. 522-521 թվականների հայերի հակապարսկական ապստամբությունից հետո մինչև մ. թ. ա. 330-ական թվականներն Արմավիրն այլևս Հայաստանի մայրաքաղաքը չէր:

Այսպիսով, կատարված քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ Սատրապական Հայաստանի վարչական կենտրոնը (մայրաքաղաքը) Վան քաղաքն էր, որը, հավանաբար, նաև Աքեմենյան արքայից արքաների նստավայրերից մեկն էր:

3.4. Ալեքսանդր Մեծը և Հայաստանը

Մասնագիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել այն հարցը, թե Ալեքսանդր Մակեդոնացին ի վերջո նվաճե՞ց, թե՞ չնվաճեց Հայաստանը: Անկասկած, հարցադրումը պատմագիտական առումով մեծ հետաքրքրություն չի ներկայացնում աշխարհակալ նվաճողի արշավանքների պատմության համատեքստում, սակայն հայոց հին պատմության տեսանկյունից խնդիրը կարևոր է նրանով, որ Աքեմենյան երկհարյուրամյա տիրապետության անկումով հնարավորություն էր ստեղծվում լիարժեքորեն վերականգնել հայոց պետականությունն ու ինքնիշխանությունը: Ընդհանուր առմամբ խնդրո առարկայի վերաբերյալ հին գրավոր աղբյուրների հայտնած տեղեկությունները խիստ սակավ են և կցկտուր, սակայն ուշադիր քննությունը կարող է համոզիչ եզրակացության հանգեցնել:

Համաձայն Արիանոսի՝ հայկական զորագնդերը մասնակցել են Գավգամելայի ճակատամարտին և համառ դիմադրություն ցույց տվել մակեդոնացիներին[1169]: Գավգամելայի ճակատամարտից կարճ ժամանակ անց Բաբելոնում Ալեքսանդրը Միթրենեսին՝ որպես սատրապ ուղարկում է Հայաստան[1170]: Սա նշանակում էր, որ Հայաստանը պետք է նվաճված լիներ, որ Միթրենեսը նշանակվեր Հայաստանի սատրապ: Իհարկե, այլ տեղեկություններ, որ Ալեքսանդրն անձամբ արշավեց և գրավեց Հայաստանը, մենք չունենք, սակայն Գավգամելայի ճակատամարտից հետո հավանական է, որ Հայաստանն ինքնակամ ընդունել էր մակեդոնացի նվաճողի տիրապետությունը: Մյուս կողմից էլ

[1165] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 97:
[1166] Անդ:
[1167] Տե՛ս մեր աշխատանքում՝ Խորիկյան Հ., Ալեքսանդր Մակեդոնացին և Հայաստանը, Հայագիտության հարցեր հանդես, 2017, թիվ 3, էջ 154-160:
[1168] Հայ ժողովրդի պատմություն, հտ. I, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 514, 518:

[1169] Արիանոս, 101, 105:
[1170] Ռուփոս, էջ 375; Arrian, Vol. I, III, 16, 5, p. 274; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 64, p. 167. Որոշ ուսումնասիրողներ Միթրենեսին համարել են սոսկ Փոքր Հայքի սատրապ (տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 96), ինչը տրամաբանական չէ, քանի որ նման սատրապություն Աքեմենյան դարաշրջանում չէր եղել, և Ալեքսանդր Մակեդոնացին հիմնականում պահպանում էր նախկին վարչական միավորները: Իրականում Փոքր Հայք կոչվածը Պակտյուիկե երկրի մի մասն էր (տե՛ս Khorikyan H., The Western and Southern Boundaries of Satrapic Armenia in the VI-IV Centuries B.C., ԲՀ, 2015, թիվ 2, էջ 48-49), որն Ալեքսանդրի նվաճումների շրջանում հիմնականում մտնում էր Կապադովկիայի մեջ:

չմոռանանք, որ Գավգամելայի ճակատամարտի դաշտից փախուստի դիմած Դարեհ Գ-ն Մարաստան է սլանում հայկական լեռներով (իմա՛ Դասն և Նպատական լեռները[1171]), և հավանական է, որ Դարեհին հետապնդող մակեդոնական զորամասերից մեկն անցել էր Հայաստանի հարավային շրջաններով՝ ստիպելով հայերին անձնատուր լինել մակեդոնացի աշխարհակալին[1172]: Հիմա փորձենք մեր տեսակետը հիմնավորել աղբյուրների քննությամբ:

Ռուփոսը գրում է, որ Պարթևստանի մայրաքաղաք Հեկատոմպյուլոսում Ալեքսանդրը բազմաթիվ նվաճած երկրների շարքում հիշատակում է նաև Հայաստանը[1173]: Արդեն նշեցինք, որ Ալեքսանդրն անձամբ Հայաստան չէր արշավել, սակայն Հայաստանի նվաճված լինելը տրամաբանական է թեկուզ հենց Ռուփոսի կողմից, եթե մտածենք, որ Ալեքսանդրը նման բան չէր էլ ասել: Ընդ որում, տրամաբանական է նաև աշխարհագրական այն միջավայրը, որտեղ հիշատակվում է Հայաստանը. Կիլիկիա, Ասորիք, Փյունիկիա, հետո Հայաստան, Պարսք ու Մարաստան: Սա նշանակում էր, որ Հայաստանն աշխարհագրական այս միջավայրում չէր կարող չնվաճված երկիր համարվել: Ռուփոսի այս տեղեկությունը համարվել է անվստահելի[1174], սակայն անվստահելի համարվելու հիմքեր չկան: Նշենք նաև, որ Հուստինոսը Կապադովկիան, Պափլագոնիան, Պոնտոսը, Բյութանիան, Հայաստանը (Մեծ ու Փոքր Հայքերը) համարում է երկրներ, որոնք չնվաճեցին ո՛չ Ալեքսանդրը, ո՛չ էլ նրա հաջորդները[1175]: Սակայն, հարկ է ուշադրություն դարձնել այն իրողության վրա, որ Աքեմենյան վարչական բաժանման համակարգի տեսանկյունից այս կամ այն երկրի նվաճումը նշանակում էր տիրել նաև նույն սատրապության մեջ մտնող մնացած երկրներին ու ժողովուրդներին: Օրինակ, Փռյուգիան նվաճելով՝ Ալեքսանդրը կարող էր ամեն դեպքում նվաճած համարել նաև Պափլագոնիան և այլն, երբ նկատի ենք ունենում նախկին III սատրապության վարչական կառուցվածքը[1176]՝ անկախ տվյալ ժամանակաշրջանի պատմաաշխարհագրական և վարչաքաղաքական իրողություններից:

[1171] Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 46:
[1172] Ինչպես, ասենք, պափլագոնացիները ինքնակամ ենթարկվեցին Ալեքսանդրին (տե՛ս Արիանոս, էջ 57):
[1173] Ռուփոս, էջ 411; Rufus, Vol. II, VI, III, 3-4, p. 24.
[1174] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 97:
[1175] Pompei Trogi Fragmenta, Lib. 38, Frg. 152, p. 170.
[1176] Հերոդոտոս, III, 90: Հմմտ. Шахермайр Ф., Александр Македонский, М., 1986, с. 120.

Հարցն այն է, որ Ալեքսանդրի ռազմական ծրագրերում երբեք էլ նպատակ չի եղել անձամբ արշավելու այդ երկրներ, որտեղ Աքեմենյան տիրապետությունը շատ թույլ էր: Մյուս կողմից էլ չմոռանանք, որ Գավգամելայի ճակատամարտից հետո բոլոր այդ երկրները պետք է կամավոր ենթարկված լինեին Ալեքսանդրին, ինչը տրամաբանական էր: Սակայն Հայաստանի պարագայում, եթե Ալեքսանդրը սատրապ էր նշանակում Միթրենեսին, ապա ստացվում էր, որ Ալեքսանդրը Օրոնտեսին կա՛մ սատրապ չի համարել, կա՛մ էլ Հայաստանն, իրոք, սատրապ չի ունեցել, իսկ Օրոնտեսը եղել է պարզապես զորահրամանատար[1177]: Բացառված չէ նաև այն հանգամանքը, որ Հայաստանի սատրապ Օրոնտեսը չի ընդունել մակեդոնացի աշխարհակալի տիրապետությունը: Ժամանակին Ի. Դրոյզենը նույնպես այն կարծիքն էր հայտնել, որ Գավգամելայի ճակատամարտից հետո պարսիկ մեծատոհմիկներն անցնում են Ալեքսանդրի կողմը, և նրանցից մեկը՝ Միթրենեսը, ստանում է միշտ կարևոր համարվող Հայաստանի սատրապությունը[1178]: Չնայած աղբյուրագիտական տվյալների բացակայությանը՝ հակված ենք ենթադրելու, որ Գավգամելայի ճակատամարտից հետո Օրոնտեսը չճանաչեց Ալեքսանդր Մակեդոնացու իշխանությունը, և հավանաբար, Միթրենեսը Հայաստան ուղարկվեց Օրոնտեսին ընդդիմադիր ավագանու հրավերով:

Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Հայաստանի նվաճման վերաբերյալ հետաքրքիր են նաև հույն աշխարհագետ Ստրաբոնի տեղեկությունները: Վերջինս հայտնում է, որ Հայաստանին տիրել են պարսիկներն ու մակեդոնացիները[1179], այսինքն՝ Ստրաբոնը չի էլ կասկածում, որ Հայաստանը ենթարկվել է մակեդոնացիներին, այսինքն՝ Ալեքսանդր Մակեդոնացուն, և ոչ թե մակեդոնացիների անվան տակ պետք է նկատի ունենանք Սելևկյաններին[1180]: Սակայն չենք էլ կարծում, որ հիմք կա մակեդոնական տիրապետությունը թվագրել մ. թ. ա. 312 թվականից: Մակեդոնական տիրապետությունը պետք է թվագրել մ. թ. ա. 331 թվականից՝ Գավգամելայի ճակատամարտում պարսկական բանակի պարտությունից հետո:

[1177] Հմմտ. Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI-մ. թ. IV դդ.), Եր., 2005, էջ 74: Նկատի ունենանք, որ Աքեմենյան տիրապետության ընթացքում սատրապներն աստիճանաբար կենտրոնացրին իրենց ձեռքում նաև ռազմական իշխանությունը:
[1178] Дройзен И., История эллинизма, т. I, Ростов-на-Дону, 1995, с. 265.
[1179] Страбон, с. 500.
[1180] Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, էջ 501:

Ստրաբոնի մեկ այլ կարևոր տեղեկությունից հայտնի է, որ Ալեքսանդր Մակեդոնացին իր զորավարներից Մենոնին ուղարկում է Սյուսպիրիտիս՝ ոսկու հանքերը գրավելու, սակայն վերջինս սպանվում է հայերի կողմից[1181]: Ենթադրել այս տեղեկությունից, թե Ալեքսանդր Մակեդոնացուն չի հաջողվել նվաճել Հայաստանը, կարծում ենք՝ ճիշտ չէ: Ստրաբոնի տվյալ տեղեկությունում Սյուսպիրիտիսն առաջարկել են չշփոթել Սպերի հետ, քանի որ գտնվել է Միջագետքի հարևանությամբ: Սյուսպիրիտիսն առանց հստակ տեղորոշման տեղադրվել է Հայաստանի հարավ-արևելքում[1182] կամ էլ նույնացվել սեպագիր արձանագրությունների Շուպրիային՝ Սասնա լեռներում [1183]: Սակայն, մեր կարծիքով, Սյուսպիրիտիսը հենց Սպերն է[1184], քանի որ Սասնա լեռներում տեղորոշելու դեպքում, հազիվ թե, Միջագետքը նվաճած մակեդոնացիները չփորձեին նոր փորձեր կատարել արշավելու համար:

Ալեքսանդրի մահից հետո Հայաստանում, կարծես թե, փորձում էր ամրապնդվել Նեոպտոլեմոսը[1185], ինչը խոսում է այն մասին, որ Հայաստանը Ալեքսանդրի ժամանակ նրա տերության մասն է եղել: Ռուփոսը Ալեքսանդրի մահից հետո տերության բաժանման հատվածում չի խոսում Հայաստանի մասին[1186], ինչը, թերևս, վկայում է այն մասին, որ Հայաստանն անկախ էր այդ ժամանակ: Այս մասին գրում է նաև Դիոդորոս Սիկիլիացին, որը նույնպես չի հիշատակում, թե Հայաստանն ում էր բաժին հասել, սակայն նա թողել է մի շատ կարևոր հավելում: Այսպես, Պերդիկկասը Եվմենեսին տալիս է Պափլագոնիան, Կապադովկիան և սրանց սահմանակից բոլոր այն երկրները (ըստ Պլուտարքոսի՝ Սև ծովի հարավային ափերը մինչև Տրապիզոն[1187]), որտեղ Ալեքսանդրը շտապ գործերի պատճառով հնարավորություն չունեցավ ներխուժել՝ ձգտելով արագ ավարտել Դարեհի հետ պատերազմը[1188]: Ամենայն հավանականությամբ, Հայաստանը, և ոչ թե միայն հետագա Փոքր Հայքի տարածքը, պետք է, որ լիներ այն սահմանակից երկրներից մեկը, որն Ալեքսանդրն անձամբ չնվաճեց: Ստացվում է այնպես, որ Նեոպտոլեմո-

[1181] Страбон, с. 499.
[1182] Hammond N. G. L., Alexander and Armenia, Phoenix, Vol. 50, No. 2, 1996, p. 134.
[1183] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 75:
[1184] Ադոնց Ն., Հայաստանը Ք. ա. IV-I դարերում, Երկեր, հ. Դ, եր., 2009, էջ 435:
[1185] Plutarch's Lives, Vol. VIII, Eumenes, IV, 1, p. 88.
[1186] Ռուփոս, էջ 596:
[1187] Plutarch's Lives. Eumenes, III, 2, p. 84.
[1188] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, p. 228. Հմմտ. Ռուփոս, էջ 596:

սը Հայաստանը փորձում էր անջատել Եվմենեսի իշխանությունից, որը Պերդիկկասի կողմից նշանակվել էր «Հայաստանի և Կապադովկիայի զորքերի հրամանատար»[1189], իսկ մակեդոնացիների տիրապետությունն այս տարածքներում այնքան էլ ամուր չի եղել[1190]: Նշենք, որ Աքեմենյանների տիրապետությունը Հայաստանի զգալի մասում և XIX սատրապության տարածքում թույլ էր կամ ընդհանրապես չկար մ. թ. ա. 401-400 թվականներին, երբ հունական բյուրն անցնում էր այս տարածքներով[1191]: Ուսումնասիրողները Նեոպտոլեմոսին համարել են Փոքր Հայքի կառավարիչ-սատրապ[1192], սակայն հնարավոր է, որ նա փորձում էր գրավել հենց Մեծ Հայքը՝ անհաջողության մատնվելով:

Համաձայն ուսումնասիրողների՝ Գավգամելայի ճակատամարտում հայկական զորքի հրամանատարներից Օրոնտեսը[1193] կարողանում է պահպանել Հայաստանի անկախությունն Ալեքսանդր Մակեդոնացու օրոք և նրանից հետո[1194]: Դիոդորոս Սիկիլիացին Օրոնտեսին հիշատակում է որպես Հայաստանի սատրապ[1195], սակայն այստեղ կասկածելի է ոչ միայն պատմիչի նշած Օրոնտեսի նամակի հարցը[1196], այլև այն հանգամանքը, որ վերջինս անկախ է եղել. սատրապի[1197] կարգավիճակը չի խոսում անկախության մասին: Ընդ որում, Դիոդորոս Սիկիլիացու մեկ այլ տեղեկությունը նույնպես վկայում է Հայաստանի՝

[1189] Plutarch's Lives. Eumenes, V, 1-2, p. 90.
[1190] Անդ, III, 2, էջ 84: Նկատենք, որ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճել էր հարավային Կապադովկիան, իսկ հյուսիսայինը մնաց աննվաճ (Шахермайр Ф., Նշվ. աշխ., էջ 120; «The Cambridge Ancient History», Vol. VI, pp. 805, 861):
[1191] Այդ մասին մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Նշվ. աշխ., Գլուխ Ա, Գ:
[1192] Կրկյաշարյան Ս., նշվ. աշխ., էջ 68:
[1193] Արիանոս, էջ 97:
[1194] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. I, էջ 455; Մովսիսյան Ա., Դիտարկումներ Հայաստանի Ք. ա. V-III դարերի պատմության շուրջ, էջ 87; Toumanoff C., The Orontids of Armenia, Studies in Christian Caucasian History, Washington, 1963, pp. 288-289; Hammond N. G. L., Alexander and Armenia, p. 132.
[1195] Diodori Bibliotheca Historica, Vol. IV, XIX, 23, p. 35; Polyaenus's Stratagems of War, by R. Shepherd, London, 1793, Eumenes, IV, 8, 3, p.169.
[1196] Հմմտ. Ադոնց Ա., Հայաստանը Ք. ա. IV-I դարերում, էջ 439:
[1197] Հետաքրքիր է, որ հայերեն նախարարն (տե՛ս «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ, 1842, էջ 52) անգլերեն տեքստում թարգմանված է սատրապ (տե՛ս The Romance of Alexander the Great by Pseudo-Callisthenes, Transl. from the Armenian Version with an Introduction by A. M. Wolohojian, Columbia University Press, New York, London, 1969, p. 60), ինչը միանգամայն ընդունելի է և համապատասխանում է հունարեն բնագրին (տե՛ս Der griechische Alexanderroman von Adolf Ausfeld, Leipzig, 1907, S. 70):

սատրապություն լինելու մասին[1198]:

Հետաքրքիր է, որ մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ այս Երվանդ-Օրոնտես սատրապը[1199] Դարեհ Գ-ի պարտությունից հետո հռչակվում է թագավոր[1200], սակայն անտիկ աղբյուրները նրան շարունակում են անվանել սատրապ մ. թ. ա. 317 թվականին:

Պլինիոս Ավագը ևս հայտնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին անցել է Հայաստանով[1201] Կովկասը շփոթելով Պարոպամիսի հետ: Իհարկե, Ալեքսանդրն անձամբ Հայաստան չէր մտել, սակայն բացառված չէ, որ Պլինիոս Ավագի նման հավաստի հեղինակը նկատի է ունեցել մակեդոնացի թագավորի կողմից Հայաստանը նվաճած լինելու հանգամանքը:

Ցանկացած պարագայում մակեդոնացիների իշխանությունը Հայաստանում երբեք էլ ամուր չեղավ, իսկ Հայաստանի թագավորները միշտ էլ ակտիվորեն միջամտում էին Առաջավոր Ասիայի քաղաքական անցուդարձերին: Օրինակ, մ. թ. ա. III դարի 70-ական թվականներին հայերի թագավոր Արդոատես-Օրոնտեսի զորքերի օգնությամբ Կապադովկիայի թագավոր Արիարաթես Բ-ն վերականգնում է իր իշխանությունը[1202]: Ամփոփելով կատարված քննությունը՝ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանն անձամբ չնվաճվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, այսինքն՝ վերջինս չէր կարող Հայաստանը համարել «նիզակով նվաճված երկիր»: Սակայն Հայաստանը ենթարկվել է մակեդոնացի աշխարհակալին, որի իշխանությունը Հայաստանում երբեք էլ ամուր

[1198]Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 5, p. 231.

[1199] Հնդիրանական էթնիկական տարրը Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան և հարավային որոշ շրջաններում հաստատվել էր առնվազն մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսից, որից էլ ծագում էր, թերևս, Օրոնտեսի նախնի Հյուդարնեսը (տե՛ս Քոսյան Ա., Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ, ԲՀ, 2014, թիվ 1, էջ 5-25):

[1200] Կրկյաշարյան Ս., նշվ. աշխ., էջ 43, 46: Ըստ Լ. Շահինյանի՝ Խորենացու հիշատակած Վահեն (Մովսէս Խորենացի, էջ 86), որին սպանում է Ալեքսանդր Մակեդոնացին, նույնանում է Արիանոսի նշած Միթրաուստեսին (Arrian, Vol. I, III, 8, 5, p. 246), Միհրվահիշտին՝ Մեծ Հայքի թագավորին, որի մահից հետո Օրոնտեսը հավանաբար Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվում է ամբողջ Հայաստանի սատրապ (տե՛ս Շահինյան Լ., Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Վահեի մասին, ՊԲՀ, 1973, թիվ 4, էջ 172-178; Մովսիսյան Ա., Դիտարկումներ..., էջ 85-87):

[1201] Pliny, Natural History, Vol. II, IV, 39, p. 146.

[1202] Diodori Bibliotheca Historica, Vol. II, Pars II, III, XXXI, 19-20, p. 39. Հավանաբար այս նույն Արդոատեսն էր, որ մ. թ. ա. մոտավորապես 260 թվականին ապաստան է տալիս Բյութանիայի մահացած թագավոր Նիկոմեդեսի որդիներից Զիաելասին (տե՛ս Կրկյաշարյան Ս., նշվ. աշխ., էջ 71):

չէր և սահմանափակվում էր Հայաստանի հարավային հատվածով:

Ստորև անդրադառնանք կարևոր մեկ հարցի ևս: Մ. թ. II դարի հույն պատմիչ Արիանոսի տեղեկություններից մեկը՝ մ. թ. ա. 331 թվականին Գավգամելայի ճակատամարտում հայերի մասնակցության մասին, հայագիտության մեջ բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տվել[1203]: Այսպես, պատմիչը գրում է, որ Գավգամելայի ճակատամարտում «հայերին ղեկավարում էին Օրոնտեսը և Միթրաուստեսը»[1204]: Արիանոսի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Գավգամելայի ճակատամարտում պարսկական բանակին օգնության եկած այլ ցեղերի և ժողովուրդների զորամասերը[1205] հիմնականում ղեկավարել են համապատասխան սատրապները, ընդ որում՝ բացառությամբ մեկ իրողության, մնացած բոլոր դեպքերում այս կամ այն զորամասը գլխավորել է մեկ հոգի, այսինքն՝ տվյալ երկրի կամ ժողովրդի սատրապը. հնդիկների, բակտրիացիների և սոգդերի առաջնորդն էր Բակտրիայի սատրապ Բեսը, սակերի առաջնորդն էր Մավակը, արաքոսիացիների և այսպես կոչված լեռնային հնդիկների առաջնորդն էր Արաքոսիայի սատրապ Բարսաենթեսը, արիացիների առաջնորդն էր Արիայի սատրապ Սատիբարզանեսը, պարթևների, վրկանների և տապուրների առաջնորդն էր Թրատաթերնեսը, մարերի հրամանատարն էր Ատրոպատեսը. մարերի հետ էին կադուսիները, աղվանները և սակեսինները, Կարմիր ծովին սահմանակից ցեղերին առաջնորդում էին Օկոնտոբատեսը, Արիոբարզանեսը և Օրքսինեսը, սուսիանների և ուքսերի հրամանատարն էր Օքսաթրը, Բուպարեսն առաջնորդում էր բաբելոնացիներին, որոնց հետ էին «արտաքսվածները»՝ կարիացիները և սիտակենները, կապադովկիացիներին առաջնորդում էր Արիակեսը[1206], Կելեսիրիայի և Միջագետքի ասորիներին

[1203] Տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, էջ 506; Մանանդյան Հ., Քննական տեսություն..., էջ 95; Կրկյաշարյան Ս., նշվ. աշխ., էջ 73; Շահինյան Լ., Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Վահեի մասին, էջ 172-178; Մովսիսյան Ա., Դիտարկումներ Հայաստանի Ք. ա. V-III դարերի պատմության շուրջ, էջ 85-87:

[1204] Arrian, Vol. I, III, 8, 5, p. 246.

[1205]Տե՛ս նաև Դիոդորոս Սիկիլիացի, էջ 94:

[1206]Կարծիք կա, որ սա նույնանում է Աղջակաւեի արձանագրությունում հիշատակվող Արիաուկա-Արիակեսին, և խոսքն էլ վերաբերում է Փոքր Հայքի սատրապին (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք. Հ. 298 թ., կազմողներ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան, Եր., 2007, էջ 266), սակայն, մեր կարծիքով, Փոքր Հայքի մասին խոսք կարող էր լինել միայն Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո, այսինքն՝ Միթրաուստեսից հետո Եփրատից արևմուտք ընկած Պակտյուիկեի տարածքն արդեն կոչվում էր Հայաստան, որի սատրապը, հնարավոր է, Օրոմանեսն էր:

առաջնորդում էր Մազայոսը[1207]: Ինչպես տեսնում ենք, պարսկական բանակի զորամասերի հրամանատարները, ըստ ցեղային բաժանման սկզբունքի, եղել են սատրապները, իսկ բանակի ցեղային բաժանումն իր հերթին համապատասխանում էր Աքեմենյան տերության վարչական բաժանմանը: Պարսկական բանակի կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարմանալիորեն միայն հայերն են ունեցել երկու առաջնորդ. ինչպե՞ս է բացատրվում այս հանգամանքը: Մեկ այլ դեպքում էլ նշեցինք, որ Կարմիր ծովին սահմանակից ցեղերին առաջնորդում էին Օկոնտոբատեսը, Արիոբարզանեսը և Օրքսինեսը, ինչը նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրը եղել է իր ցեղի կամ երկրի սատրապը, սակայն պատմիչն անվանապես չի հիշատակում նրանց ենթակայության տակ գտնվող ցեղերին ու ժողովուրդներին:

Արիանոսը մեկ այլ տեղում նշում է, որ Գավգամելայի ճակատամարտին հայկական և կապադովկիական զորամասերը գտնվել են կողք կողքի՝ պարսկական բանակի աջ թևում, որն էլ շատ ուժեղ դիմադրություն է ցույց տալիս մակեդոնական բանակին, և միայն Ալեքսանդրի միջամտության շնորհիվ հաջողվում է պարտության մատնել աջ թևին[1208]:

Մ. թ. I դարի պատմիչ Ռուփոսը Գավգամելայի ճակատամարտում հիշատակում է Փոքր Հայքի ու Մեծ Հայքի հայերին՝ 40000-անոց հետևազորով և 7000-անոց հեծելազորով[1209], չնշելով վերջիններիս առաջնորդներին[1210]: Փաստորեն Ռուփոսը չի հիշատակում Օրոնտեսին և Միթրաուստեսին (Միհրվահիշտ), սակայն Արիանոսի հիշատակած ամբողջական, այսինքն՝ չտարբերակված հայերին Ռուփոսը բաժանել է երկու մասի՝ Փոքր ու Մեծ Հայքի հայերի: Ստացվել է այնպես, որ Օրոնտես-Երվանդ Գ-ն համարվել է Մեծ Հայքի կառավարիչը, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքի[1211]: Ժամանակին Ս. Կրկյաշարյանն այն միտքն էր հայտնել, որ նշված զորահրամանատարներից մեկն առաջնորդում էր հայկական յոթհազարանոց հեծելազորը, իսկ մյուսը՝ 40 հազարանոց հետևակը[1212]: Իհարկե, նման կարծիքը հնարավոր է, սակայն Օրոնտեսը և Միթրաուստեսը միայն զորավարներ չէին և վերևում, համեմատելով մյուս զորավարների կարգավիճակը, նրանք ևս պետք է սատրապներ լինեին:

Արիանոսի՝ «հայերին ղեկավարում էին Օրոնտեսը և Միթրաուստեսը» արտահայտությանը մոտ է նաև Քսենոփոնի այն տեղեկությունը, երբ վերջինս հայտնում է, որ հունական զորքի մուտքը Հայաստան փորձում են արգելել Օրոնտասի ու Արտուխասի արմենները և մարդերն ու խալդայները վարձկան[1213]: Մարդերի ու խալդայների հարցն արդեն քննարկել ենք մեր մի այլ աշխատությունում[1214], ուստի մեզ համար անհրաժեշտ է պարզել, թե ով էր Արտուխասը: Օրոնտասը Հայաստանի սատրապն էր, իսկ Արևմտյան Հայաստան վարչական միավորի հյուպարքոսը Տիրիբազոսն էր[1215]: Հայաստանի սատրապ և միաժամանակ թագավոր[1216] Օրոնտաս-Երվանդի կողքին հիշատակվող Արտուխասը, անկասկած, նշանավոր մեկը պետք է լիներ: Մեր կարծիքով, Արևմտյան Հայաստան հյուպարքիայի հիշատակությունն ինքնըստինքյան ենթադրում է Արևելյան Հայաստան հյուպարքիայի գոյությունը, որի հյուպարքոսն էլ Արտուխասն էր: Հետևաբար, Արիանոսի՝ «հայերին ղեկավարում էին Օրոնտեսը և Միթրաուստեսը» և Քսենոփոնի՝ «Օրոնտասի և Արտուխասի արմենները» ձևով նման տեղեկությունները ցույց են տալիս, որ երկու դեպքում էլ գործ ունենք վարչական կառավարման առկայությամբ պայմանավորված իրողության հետ, երբ հայկական զորամասերն առաջնորդում են սատրապն ու վերջինիս ենթակա հյուպարքոսը:

Ռուփոսի կողմից Փոքր Հայքի հիշատակությունը կարևոր է այն առումով, անկախ այն հանգամանքից, որ Եփրատից արևմուտք ընկած տարածքը մ. թ. I դարի պատմիչին հայտնի էր Փոքր Հայք անվանումով, որ նշված տարածքն ավելի լայն ընդգրկմամբ՝ Պակտյուիկե անվան տակ, Դարեհ Ա-ի ժամանակներից մտնում էր XIII սատրապության կազմի մեջ[1217]: Եփրատից արևմուտք ընկած տարածքը՝ միլիդուացիներ-մելիտինեցիների անվան տակ մ. թ. ա. V դարի վերջին, ըստ բաբելոնական փաստաթղթերից մեկի, գտնվում էր Հայաստանի

[1207] Arrian, Vol. I, III, 8, 3-6, pp. 244, 246.
[1208] Արիանոս, էջ 101, 105-106:
[1209] Հնարավոր է, որ հայկական բանակի թիվը վերաբերում է Իսոսի ճակատամարտին (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ. 1, էջ 262):
[1210] Rufus, Vol. I, III, II, 6, p. 72; IV, XII, 10; 12, p. 272.
[1211] Կրկյաշարյան Ս., նշվ. աշխ., էջ 73; Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, էջ 506:
[1212] Կրկյաշարյան Ս., նշվ. աշխ., էջ 74: Համմ. Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, էջ 504:

[1213] Քսենոփոն, Անաբասիս, էջ 89; Մանանդյան Հ., Քննական տեսություն..., էջ 374: Ս. Կրկյաշարյանի թարգմանությունն ավելի ճիշտ է արտահայտում հունարեն բնագրի իմաստը, քան թե ռուսերեն և անգլերեն թարգմանությունները (տե՛ս Ксенофонт, Анабасис, IV, III, 4, с. 90; Xenophon, Anabasis, Vol. III, IV, III, 4, p. 278):
[1214] Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 54-55:
[1215] Քսենոփոն, Անաբասիս, էջ 81, 93, 197:
[1216] Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 58-59:
[1217] Հերոդոտոս, III, 93:

սատրապության կազմում[1218]:

Արիանոսի՝ վերը մեջբերված հատվածը հետաքրքիր է նաև այն առումով, որ պատմիչի երկու՝ հայերին և Կարմիր ծովին սահմանակից ցեղերին վերաբերող տեղեկությունների համեմատությունը, իրոք, ցույց է տալիս, որ միաժամանակ հիշատակվող սատրապները եղել են տարբեր ժողովուրդների կամ վարչական միավորների սատրապներ: Արդեն նշեցինք, որ Կարմիր ծովին սահմանակից ցեղերի սատրապները եղել են Օկոնտոբատեսը, Արիոբարզանեսը և Օրքսինեսը, այսինքն՝ այս իրողությունը, որ վերջիններս առանց որոշակի անվանական նշման եղել են սատրապներ, համադրելի է Օրոնտեսի և Միթրաուստեսի հայերի սատրապներ լինելու հիշատակությանը: Ընդ որում, նկատենք նաև, որ Օկոնտոբատեսի և Օրոնտեսի առաջինը հիշատակվելը խոսում է հենց նրանց սատրապներ լինելու մասին, իսկ Արիոբարզանեսը, Օրքսինեսը և Միթրաուստեսը սատրապների ենթականերն էին՝ հյուպարքոսները:

Համեմատության համար նշենք, որ Հերոդոտոսը ևս XIII սատրապության կազմում արմեններ-հայերին հիշատակում է ընդհանրական ձևով[1219]: Ընդ որում, հունարեն բնագրի Ἀρμενίων-ը թարգմանվում է նաև Արմենիա[1220], ավելի ճիշտ Արմենիաներ, ինչը հնարավոր է, եթե նկատի ենք ունենում հետագայում Մեծ ու Փոքր Հայքերի հիշատակությունը, սակայն, մեր կարծիքով, մ. թ. ա. VI դարի վերջին Փոքր Հայքի գաղափարը դեռևս չկար: Հերոդոտոսի տվյալ կոնտեքստում արմեններ-հայեր թարգմանությունն ավելի ճիշտ է այն առումով, որ հույն պատմիչը կամ նրա աղբյուրը սատրապությունների ցանկը հիշատակում է հիմնականում ըստ ցեղերի և ժողովուրդների կազմի: Ամեն դեպքում Հայաստանը Հերոդոտոսի համար մեկ ընդհանուր երկիր է[1221], ինչը երևում է նաև «Անաբասիս»-ի[1222] և «Կյուրոպեդիա»-ի տեղեկություններից[1223]:

Այսպիսով, Արիանոսի և այլ անտիկ հեղինակների տեղեկությունների

[1218] Մանրամասն տե՛ս Khorikyan H., The Administrative Division of the 13th Satrapy of Achaemenid Persia in the Reign of Darius II, МИ, вып. 10, 2017, pp. 174-180. Հմմտ. Մովսիսյան Ա., Դիտարկումներ Հայաստանի Ք. ա. V-III դարերի պատմության շուրջ, էջ 84-85:

[1219] Հերոդոտոս, III, 93:

[1220] Геродот, III, 93, с. 168; Herodotus, Vol. II, III, 93, p. 120.

[1221] Հերոդոտոս, I, 180; 194, V, 52:

[1222] Քսենոփոն, Անաբասիս, էջ 81:

[1223] Xenophon, Cyropaedia, Vol. I, III, II, 18; 24, pp. 258, 262.

համեմատությունը ցույց է տալիս, որ Գավգամելայի ճակատամարտում հիշատակված Օրոնտեսը Հայաստանի սատրապն էր, իսկ Միթրաուստեսը՝ Եփրատից արևմուտք ընկած Պակտյուիկեի հյուպարքոսը:

3.5. Սասպեյրների տեղորոշումը

XVIII սատրապության տեղադրության խնդիրը մենք քննարկել ենք տարիներ առաջ և ստորև կրկին կանդրադառնանք միայն սասպեյրների տեղադրությանը, քանի որ մասնագիտական գրականության մեջ վերջին տարիներին կրկին առաջ է մղվում մի տեսակետ, որը պայմանավորված է միայն ազգայնական-քաղաքական դրդապատճառներով՝ անտեսելով հայ պատմագիտության ներկա ձեռքբերումները: Խոսքը վերաբերում է Ա. Սալմինի՝ չուվաշների ծագմանը վերաբերող աշխատություններին, որտեղ փորձ է արվել սավիրներին կապել սասպեյրների հետ[1224]: Ընդ որում, իբր սավիրներն հայկական միջավայրում կոչվել են սևորդիք[1225]: Հարկավ, Ա. Սալմինի եզրակացությունները քննություն չեն բռնում:

Ներկայիս վրացական պատմագիտական միտքը նույնպես բացառում է XVIII սատրապության տեղադրությունն Արևելյան Վրաստանի և Արևելյան Այսրկովկասի տարածքում՝ տուրք տալով տասնամյակներ շարունակվող հին տեսակետներին[1226]: Ստորև ներկայացնենք սկզբնաղբյուրների մանրակրկիտ վերլուծությունը:

Պատմահայր Հերոդոտոսը գրում է. «Մատիենների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»[1227]: Հերոդոտոսը սասպեյրներին հիշատակում է ևս մի քանի անգամ: Նա գրում է. «Պարսիկներից, մեդացիներից, սասպեյրներից և կոլխերից վերև, դեպի արևելք, գտնվում է Կարմիր ծովը (իմա՛ Պարսից ծոցը–Խ. Հ.): Դեպի հյուսիս՝ Կասպից ծովը և Արաքս գետը (հավանաբար, հայկական Արաքսն է-Խ. Հ.), որը հոսում է դեպի արևելք»[1228]: Ինչպես տեսնում ենք, սասպեյրները հիշատակվում են կոլխերի և մեդացիների միջև: Այս տեղեկությանը

[1224] Салмин А. К., История чувашского народа: савирская гипотеза, Чебоксары, 2016, с. 9-10, 27 և այլն; նույնի՝ ΣΑΣΠΕΙΡΕΣ/ΣΑΥΑΡΟΙ/ΣΑΒΕΙΡΟΙ in the 5th century BC to the 8th century AD, JSEES, Vol. 37, 2016, pp. 17-34.

[1225] Салмин А. К., История чувашского народа: савирская гипотеза, с. 12-13, 23; նույնի՝ История чувашского народа: анализ основных версий,. Санкт-Петербург, 2017, с. 95.

[1226] Տե՛ս, օրինակ, Gagoshidze I., South Caucasus and Achaemenids, էջ 225-229:

[1227] Հերոդոտոս, 1986, III, 94:

[1228] Անդ, IV, 40:

գործնականում համապատասխանում են Հերոդոտոսի հաջորդ մի քանի տեղեկությունները: Այսպես, Հերոդոտոսը հայտնում է. «Պարսիկները բնակվում են մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր (իմա՛ Պարսից ծոցը–Խ. Հ.): Նրանցից վերև դեպի հյուսիս բնակվում են մեդացիները, մեդացիներից (վերև)՝ սասպեյրները, սասպեյրներից (վերև)՝ կոլխերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը (իմա՛ Սև ծովը–Խ. Հ.), որտեղ թափվում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսն (ընկած երկրում)»[1229]: Պատմահայրը նաև հաղորդում է. «Մեյոտիս լճից մինչև Փասիս գետը և կոլխերի երկիրը երեսուն օրվա ճանապարհ է անխոնջ ուղևորի համար: Կոլխիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև բնակվում է մի ազգ, սասպեյրները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա»[1230]: Բերված տեղեկություններից ակնհայտ է, որ կոլխերի և մեդացիների միջև գտնվող սասպեյրները եղել են խոշոր էթնիկական միավորում, որը հանդես է գալիս որպես հավաքական ամբողջություն՝ ազգ՝ հյուսիսում անմիջականորեն սահմանակցելով կոլխերին, իսկ հարավում՝ մեդացիներին: Հերոդոտոսը հաղորդում է, որ Քսերքսեսի հունական արշավանքին ալարոդները և սասպեյրներն արշավում էին կոլխերի նման զինված, որոնց առաջնորդում էր Սիրոմիտրեսի որդի Մասիստիոսը[1231]: Այս տեղեկությունը ևս ցույց է տալիս, որ սասպեյրները և ալարոդները մտել են XVIII սատրապության մեջ, և ալարոդների առաջինը հիշատակվելը թույլ է տալիս սասպեյրներին տեղադրել նրանցից հյուսիս:

Գ. Ա. Մելիքիշվիլին սասպեյրներին համարում է քարթական ցեղեր, որոնք վերահսկում էին Ուրարտուի հյուսիսային գավառները և գլխավորում արևելավրացական ցեղերի հարավային միավորումը: Այս ենթադրությունը հիմնվում է հայկական Սպեր գավառի հետ սասպեյրների անվանական նմանության վրա՝ միաժամանակ սասպեյրների բնակության շրջանը Կողքիսից հասցնելով մինչև պատմական Մեդիա ընկած տարածությունը[1232]: Ի. Մ. Դյակոնովը կիսում է Շպիգելի կարծիքը, համաձայն որի, Հերոդոտոսի վկայության մեջ (I, 104) խոսքը վերաբերում է մարական տերության սահմաններին և ոչ թե պատմական

[1229] Անդ, IV, 37:
[1230] Անդ, I, 104:
[1231] Անդ, VII, 79:
[1232] Меликишвили Г. А., Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 415; նույնի՝ К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 116, 232.

Մեդիայի շրջանին[1233]: Սակայն սասպեյրները չեն կարող տեղադրվել Սպերի փոքրիկ շրջանում, քանի որ ընդգրկել են մեծ տարածություն՝ սահմանակցելով մարերին: Անտրամաբանական է նաև, որ հայերը չհիշատակվեին մարերի և սասպեյրների միջև, եթե ընդունենք վերջիններիս տեղադրությունը Սպերի շրջանում: Հարկ է նշել, որ եթե սասպեյրները տեղորոշվեին Սպերի տարածքում, ապա նրանք վարչականորեն կմտնեին Հայաստանի մեջ, իսկ վերջինս էլ մարական տիրապետության ժամանակ Մարաստանի կազմում էր, հետևաբար մարական տերության սահմանների մասին խոսք լինել չի կարող, քանի որ սասպեյրներն ընդգրկված կլինեին մարական տերության սահմանների մեջ: Սա նշանակում է, որ սասպեյրները պետք է լինեին անկախ էթնիկական միավորում և գտնվեին մարերից հյուսիս-արևմուտք և կոլխերից արևելք: Այս ամենը նշանակում է, որ սասպեյրներին պետք է փնտրել այլ տարածաշրջանում: Մենք կիսում ենք այն տեսակետը, որ սասպեյրները զբաղեցրել են Արևելյան Վրաստանի տարածքը ու նաև հետագա Աղվանքի կամ Կուրի ձախափնյակի շրջանը[1234]: Այս ենթադրությունը հաստատում են հին աղբյուրները:

Մ. թ. ա. III դարի հեղինակ Ապոլլոնիոս Հռոդոսցին «Արգոնավորդների արշավը» երկում նշում է, որ մակրոններից այն կողմ բեխիրների բազմամարդ ցեղն է, որոնցից անմիջապես այն կողմ ապրում են սասպեյրները և նրանցից հետո արդեն ռազմաշունչ կոլխերը[1235]: Ապոլլոնիոսի այս տեղեկության մեջ սպեյրները նույնանում են սասպեյրներին, որոնք գտնվել են բեխիրներից և կոլխերից արևելք: Ապոլլոնիոսն իր երկի մեկ այլ հատվածում ևս հիշում է մակրոններին, բեխիրներին, հպարտ սպեյրներին և նրանցից այն կողմ բիզերներին[1236]: Ապոլլոնիոսի երկրորդ տեղեկության մեջ սպեյրները գտնվել են բեխիրների և բիզերների միջև, երբ, ըստ Սկիլաքս Կարիանդացու, նրանց միջև գտնվել են էկեխեյրիները[1237], իսկ ըստ Հեկատեոսի՝ խոյերը[1238]: Այս դեպքում սպեյրները կարող են նույնանալ Սպերի բնակիչների՝ աս-

[1233] Д. К. Ш., с. 178, прим. 24.
[1234] Հարությունյան Բ. Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 81: Սասպեյրները տեղորոշվել են մոսքերից արևելք տեղադրվող ալարոդների հարևանությամբ (տե՛ս Laird A. G., The Persian Army and Tribute Lists in Herodotus, p. 323), սակայն սահմանների հստակ նշում չկա:
[1235] ИДПСК, ВДИ, 1947, 3, с. 280.
[1236] Անդ, էջ 282:
[1237] Скилак Кариандский, с. 261.
[1238] ИДПСК, ВДИ, 1947, 1, с. 301; 1948, 3, с. 329.

պեյրների հետ: Բեխիրները գտնվել են մակրոնների հարևանությամբ, իսկ բիզերները՝ Մոսքական լեռների հարավարևմտյան լանջերին[1239]: Հետևաբար, սապեյրների նույնացումը Սպերի բնակիչների հետ նրանց կտեղորոշի շատ ավելի հարավ: Սակայն, եթե Ապոլլոնիոսի առաջին տեղեկության մեջ սապեյրներին հաջորդում են կոլխերը, իսկ երկրորդ դեպքում՝ բիզերները, ապա նշանակում է, որ բիզերները կոլխական ցեղերից մեկն են: Ուրեմն, սապեյրները գտնվել են կոլխերից արևելք: Այս տեղեկությունը հաստատվում է Ամիանոս Մարկելինոսի տեղեկությամբ, որը մի առիթով հիշատակում է սապեյրներին, ընդ որում, նրանց նախորդում են բիզարները (=բիզերներ), խալյուբները, դահերը և հաջորդում են տիբարենները, մոսսինոյկները, մակրոնները և փիլիրները[1240]: Դահերը շփոթված են տաոխների հետ, որոնցից հյուսիս խալյուբներն (=մոսքեր) են, և վերջիններիցս էլ ավելի հյուսիս բիզերները, որոնցից արդեն արևելք բնակվել են սապեյրները՝ Հերոդոտոսի սասպեյրները:

Ապոլլոնիոսի երկի սքոլիայում ասվում է, թե բեխիրները սկյութական ժողովուրդ են, և նրանցից հետո սապեյրներն են՝ մի սկյութական ժողովուրդ, որն, իբր, իր անունը ստացել է նրանց մոտ առատությամբ հանդիպող «սապեյրին» քարի անվանումից[1241]: Այս տեղեկության մեջ կարևոր է, որ սապեյրները համարվում են սկյութական ժողովուրդ: Կեղծ Օրփեոսը արգոնավորդների արշավի հետ կապված զրույցում հիշատակում է սապեյրների խիտ բնակեցված քաղաքները, որոնցից այն կողմ (իմա՛ արևմուտք) բիզերներն են[1242]: Ստեփանոս Բյուզանդացին սապեյրներին կամ սաբեյրներին համարում է Պոնտական տարածաշրջանի ժողովուրդ[1243]: Սապեյր կամ սասպեյր անունը պարզապես հիշատակում է նաև մ. թ. II դարի հեղինակ Հերոդիանոսը[1244]: Փաստորեն, բերված տեղեկությունների հիմքում ընկած են Ապոլլոնիոս Հռոդոսցու տվյալները: Սապեյրների անվան կապումը «սապեյրին» քարի անվանման հետ պատահական նմանության արդյունք է: Թերևս, սապեյրների անունից է առաջացել քարի անվանումը և ոչ թե հակառակը: Սասպեյրները սկյութական ժողովուրդ են կամ ցեղախումբ, որի անունը ծագում է սկյութա-ալանական աշխարհին պատկանող «աս»

[1239] Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության..., էջ 126:
[1240] ИДПСК, ВДИ, 1949, 3, с. 286.
[1241] Անդ, ВДИ, 1947, 3, с. 288.
[1242] Անդ, ВДИ, 1948, 3, с. 268.
[1243] Անդ, էջ 325:
[1244] Անդ, ВДИ, 1948, 2, с. 258.

ցեղախմբի անվանումից, որի մի մասն անհայտ պատճառներով կրել է ասպեյր անունը[1245]: «Աս» ցեղի մի հատվածը հաստատվում է Ասեաց փոր կամ Արսեաց փոր գավառում, իսկ Սպերը պահպանել է ասպեյրներ ցեղանունը[1246]: Ասպեյրներ էին նաև սասպեյրները, որոնք հերոդոտյան ժամանակներում հեռացել էին իրենց սպերյան ազգակիցներից և հաստատվել Վիրքում՝ բռնելով աստիճանական վրացականացման ուղին, երբ արդեն վրացերենին հատուկ սկզբունքով ասպեյրների հավաքականությունը ստանում էր սասպեյր կամ սասպեյր տեսքը[1247]: Այս տեսանկյունից հետաքրքիր է հետևյալ տեղեկությունը: Համաձայն Լեոնտի Մրովելու, հայերի և մի շարք ժողովուրդների նախահայր Թարգամոսն (Թորգոմը) իր ութ զավակների միջև է բաժանում իր տիրույթները, որոնցից Հաոսին (Հայկին) բաժին է ընկնում Հայաստանը, իսկ Քարթլոսին՝ Քարթլիի ծմակաշատ աշխարհը: Ավանդության հետագա շարադրանքից պարզվում է, որ բոլոր եղբայրներն էլ խոսում էին հայերեն (սոմխուրի), սակայն «մինչ այժմ (Երուսաղեմի գրավումը Նաբուքոդոնոսորի կողմից) Քարթլոսյանների լեզուն հայերենն (սոմխուրի) էր, որով և խոսում էին: Իսկ երբ անհամար ժողովուրդներ ժողովեցան Քարթլիում, այն ժամանակ վրացիք թողին հայերեն (սոմխուրի) լեզուն, և այս բոլոր ժողովուրդներից գոյացավ վրացերեն (քարթուլի) լեզուն»[1248]: Այս ավանդությունը Բ. Հարությունյանը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Սպերում և նրա շրջակայքում՝ այլ խոսքով, Ճորոխ գետի ավազանի արևմտյան մասում հաստատված հնդեվրոպական սկյութական ցեղախմբերը, որոնք ներգրավվել էին հայագոյացման ոլորտը և հայացել էին, մի մասով դեպի հյուսիս շարժվելով, հաստատվում են Վիրքի տարածքում և, գերազանցելով ռազմական ու տնտեսական առումով տեղաբնիկ քարթական ցեղերին, իրենց գերիշխանության տակ են գցում վերջիններիս... Այն իրողությունը, երբ քարթական ցեղերի վրա իշխանություն հաստատածների լեզուն հայերենն էր կամ հայերենի բարբառներից մեկը, հետագայում եկվորներին ուծացրած քարթական ցեղերի շրջանում պետք է այն միտքը ծներ, որ իրենք՝ վրաց ժողովուրդը մի ինչ-որ ժամանակ հայա-

[1245] Հարությունյան Բ. Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 82:
[1246] Անդ, էջ 83:
[1247] Անդ:
[1248] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 143-149: Տե՛ս նաև Картлис Цховреба, с. 19.

խոս է եղել»[1249]: Այս տեսակետը կարելի է հաստատել նաև Ստրաբոնի տեղեկությամբ: Հույն աշխարհագետը հայտնում է. «Վրաց դաշտում բնակվող ժողովուրդը լավ երկրագործ է և խաղաղասեր. հագնվում է հայ և մարական ձևով. իսկ լեռնաբնակները, որոնք ավելի բազմաթիվ և պատերազմասեր են, ապրում են սկյութացոց և սարմատացոց կարգերով, ինչպես որ նրանց սահմանակից և ցեղակից են»[1250]: Ստրաբոնի հաղորդումից հստակ երևում է, որ հնդեվրոպական տարրի հայկական ազդեցությունը պահպանվել էր իբերների ազգագրության բնագավառում (հագուստի նմանությունը):

Սասպեյրներ անվանումը կարելի է կապել իբերների հետ, սակայն այն տարբերությամբ, որ սասպեյրները բնակվել են միայն Արևելյան Վրաստանի տարածքում, և այդ միավորումը գլխավորել են հնդեվրոպական ցեղերը, բայց այդ միավորման մեջ մտած ցեղերը եղել են հիմնականում քարթական[1251]: Ընդ որում, այն հանգամանքը, որ ասպեյր անունը Սպերում գործնականում փոփոխություն չի կրում, հավաստում է, որ նշված գործընթացներն ընթացել են Արևելյան Վրաստանի տարածքում, և ինչպես վրացիների համար հայերը սոմեխի էին մոսքերի հետ կապված, այնպես էլ հայերի համար վրացիներն իբեր-իվեր-վիր էին, քանի որ սասպեյրական ցեղերը բնակվում էին նրանց սահմանակցությամբ[1252]: Փաստորեն, սասպեյր անունը հավաքական անվանում էր, և այդ ցեղախմբի մեջ բազմաթիվ ցեղեր և անգամ ցեղային փոքր խմբեր էին գտնվում: Ամեն ինչից դատելով՝ դրանց թվում էին մատիենները և ալարոդները: Անհրաժեշտ է նշել, որ «Անաբասիս»-ում հիշատակվող հեսպերիտները[1253] ոչ մի դեպքում չեն կարող նույնանալ սասպեյրների հետ, քանի որ տեղադրվում են Սպերում, և ասպեյրների անունն այդպես է արտացոլվել հույների մոտ:

Սասպեյրների երկիրը լայն առումով ծածկում է Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության ամբողջ տարածքը, և այս առումով կարևոր է նաև Հերոդոտոսի հետևյալ տեղեկությունը. «Արոտավայրերը, որտեղ այս խաշնարածը (իմա՛ Միտրադատեսը–Խ. Հ.) արածեց-

[1249] Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 77:
[1250] Ստրաբոն, էջ 29:
[1251] Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 80:
[1252] Հարությունյան Բ. Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 83:
[1253] Քսենոփոն, Անաբասիս, էջ 197:

նում էր նախիրը, գտնվում էին Ագբատանայից հյուսիս՝ դեպի Եվքսինյան Պոնտոս ընկած (իմա՛ նայող–Խ. Հ.) լեռների ստորոտներին: Քանզի մեդական երկիրը միայն դեպի սասպեյրներն ընկած մասում բարձրադիր է, լեռնային և անտառաշատ. իսկ մնացյալ երկիրն ամբողջապես դաշտային է»[1254]: Հերոդոտոսը Եվքսինյան Պոնտոս նայող լեռների տակ նկատի ունի Երասխից հարավ ընկած Հայկական, Կասպիական լեռները մինչև Կասպից ծով, այսինքն՝ ուշ ժամանակների Վասպուրական աշխարհի արևելյան մասը՝ Մարդպետականը, մարական սատրապության մեջ էր: Մյուս կողմից էլ պատմիչի տեղեկությունը ցույց է տալիս, որ մարերը և սասպեյրները եղել են անմիջական հարևաններ, ինչը հնարավոր էր միայն Կուր գետի ստորին հոսանքի շրջանում:

Սասպեյրների անվան մեջ սա-ն վրացական նախածանց է երկրանուններ կազմելիս, և Հերոդոտոսի «Սասպեյր»-ը ոչ թե ցեղանուն է, այլ երկրանուն[1255]: Սասպեյրների հետ կապված նշենք, որ վերջիններս մարերի հետ սահմանակցել են Կուր գետի ստորին հոսանքի շրջանում, և Կողքիսից դեպի Մեդիա ճանապարհն անցել է Կասպից ծովի արևմտյան շրջաններով և Կուրի հովտով: Այս ճանապարհի կարևորությունն է նշում Պլինիոս Ավագը, երբ գրում է, որ հնդկական ապրանքները Կասպից ծովով և Կուր գետով հասնում են Փասիս[1256]: Ընդորում, ընդգծենք, որ Հերոդոտոսի մոտ կոլխերը տեղադրվում են Փասիսից՝ ներկայիս Ռիոն գետից և՛ հարավ, և՛ հյուսիս՝ գետի երկու ափերին[1257]: Սասպեյրները չեն կարող տեղադրվել կոլխերից հարավ, քանի որ կնույնանան մոսքերի (արևելյան խալյուբների) հետ, որը սկզբնաղբյուրներով բացառվում է: Հետևաբար, սասպեյրները գտնվել են կոլխերից արևելք և տեղադրվել են արևմուտքում՝ մատիենների, հարավում՝ ալարոդների միջև՝ XIII սատրապությունից բաժանվելով Կուր գետով և Թռեղքի լեռներով:

[1254] Հերոդոտոս, I, 104, 110: Հմմտ. Օհանյան Մ., Աքեմենյան XVIII սատրապության սահմանները, Իրան-Նամէ, 1999, թիվ 32-34, էջ 97:
[1255] Ասպեյրների անվան ստուգաբանության հետ կապված առաջարկում ենք մի վարկած, որի վրա հրավիրում ենք իրանագետ-լեզվաբանների ուշադրությունը: Ասպեյրների անունը, մեր կարծիքով, կապված է իրան. aspabāra-, հին պարսկ. asabāra- «հեծյալ» բառի հետ (տե՛ս Brandenstein W., Mayrhofer M., Handbuch des Altpersischen, Wiesbaden, 1964, S. 106), ինչը լրիվ համադրելի է սկյութ-հեծյալների հետ: Եթե ենթադրությունը հավանական է, ապա Սասպեյր երկրանունը կնշանակի «հեծյալների երկիր»:
[1256] Pliny, Natural History, Vol. II, VI, 52, p. 376.
[1257] Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության..., էջ 124:

Այսպիսով, հին աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ հերոդոտյան սասպեյրները բնակվել են Վիրքում և ծագումով եղել են, թերևս, սկյութական ցեղ: Սասպեյրների տեղադրության ցանկացած փորձ Հայկական լեռնաշխարհում մատնված է անհաջողության, քանի որ այդ ցեղը գտնվել է XVIII սատրապության կազմում, իսկ վերջինս էլ տեղադրվում է Կուր գետի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի միջև:

3.6. Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ

Այս ենթագլխում քննարկվող հարցերը ժամանակագրորեն կապված են հետաքեմենյան ժամանակաշրջանի հետ, սակայն այդ հարցերը պատմագիտական և քաղաքական առումով խիստ կարևոր նշանակություն ունեն, քանի որ պատմաաշխարհագրական բազմաթիվ իրողություններ կապված են Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանի հետ: Այսպես, մ. թ. ա. II դարի հեղինակ Ապոլոդորոսի՝ Ստրաբոնի միջոցով մեզ հասած մի տեղեկությունը հիմք է տվել ուսումնասիրողներին կատարելու որոշ եզրակացություններ, որոնք հանգեցրել են պատմաաշխարհագրական արհեստական վերաձևումների:

Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ գրված է. «Օրինակ, արևմտյան իբերները գաղթել են Պոնտոսից և Կողքիսից այն կողմ գտնվող երկրները (երկրներ, որոնք, ըստ Ապոլոդորոսի, Հայաստանից բաժանված են Արաքսով, բայց ավելի ճիշտ՝ Կյուրոս գետով և Մոսքիկյան լեռներով)...»[1258]: Ստրաբոնի I գրքում պահպանված այս տեղեկությունը որոշ ուսումնասիրողների կողմից անհարկի համատեղվել է «Աշխարհագրության» բոլորովին այլ ենթատեքստ ունեցող հատվածի բովանդակության հետ և ստացվել է հետևյալ իրողությունը: Ստրաբոնն իր աշխատության XI գրքում գրում է. «...իբերներից (գրավեցին) Պարիադրեսի ստորոտի գավառները, Խորձեննեն, Գոգարեննեն, որ ընկած է Կուր գետի մյուս կողմում»[1259]: Ստացվել է այնպես, որ Ապոլոդորոսի հիշատակած Արաքսը նույնացվել է հայկական Երասխին, կամայականորեն համադրվել Ստրաբոնի այս տեղեկության հետ, և Իբերիայի սահմանները հասցվել են մինչև Արաքս-Երասխ գետը: Այսպես, Գ. Մելիքիշվիլին համաձայնվում է Ն. Ադոնցի հետ[1260], որ Պարիադրեսը նույնանում է Պարխարյան լեռներին, որոնք ձգվում են Սատաղից ու Բաբերդից հյուսիս և ծովափին զուգահեռ տարածվում Շաբին-Կարահիսարից մինչև Ճորոխի գետաբերան[1261]: Գ. Մելիքիշվիլին մեջբերում է նաև Ն. Ադոնցի այն կարծիքը, որ Պարիադրեսի լեռնալանջերի տակ պետք է նկատի ունենալ նաև Տայքը և Սպերը[1262]: Կ. Թումանովը և Ռ. Հյուսընը կարծում են, որ Պարիադրեսի ստորոտի երկիրը Տայքն է, իսկ Խորձենե-Խորձեանը գտնվել է Տայքից հյուսիս[1263]:Ս. Ջանաշիան «Պարիադրեսի լեռնալանջերի» և Խորձենեի սահմանները հասցնում էր էլ ավելի հարավ՝ վերջինս մեջ ընդգրկելով, օրինակ, Գյումուշխանեի և Բաբերդի շրջանները[1264]: Գ. Մելիքիշվիլին տեղագրական այս կարծիքներն ավելի «հստակեցնելու» համար բերում է մ. թ. ա. II դարի հեղինակ Ապոլոդորոսի տեղեկությունը և ենթադրում, որ Արաքսի տակ, հավանաբար, պետք է հասկանալ գետի վերին հոսանքը, չբացառելով միևնույն ժամանակ նաև միջին հոսանքը, երբ արևելավրացական կազմավորումների քաղաքական իշխանությունը (այսինքն՝ ոչ էթնիկական սահմանները) ձգվում էր այդքան հարավ[1265]: Միաժամանակ, ուսումնասիրողը ճիշտ է համարում Ս. Ջանաշիայի նկատառումը (Ստրաբոնը ուղղում է Ապոլոդորոսին), որ Ապոլոդորոսի տեղեկությունը վերաբերում է ավելի վաղ, իսկ Ստրաբոնինը՝ ավելի ուշ ժամանակներին[1266]:

Արտառոց է հատկապես Դ. Մուսխելիշվիլու հիմնազուրկ կարծիքը, թե Ապոլոդորոսի տեղեկությունը վերաբերում է մ. թ. ա. II դարի կեսին, երբ Գուգարքը կրկին անցնում է Իբերիայի թագավորությանը, սակայն Ստրաբոնի ժամանակ Գուգարքը Հայաստանի գավառներից է[1267]: Գ. Տիրացյանը, նկատի ունենալով, որ մ. թ. ա. III դարում վրացական պետության հզորացման դարաշրջանում վրացիներին էին անցել Պարիադրեսի լեռնալանջերը (այսինքն՝ Սպերը և Տայքը), Խորձեան գավառը և Գուգարքը, ըստ էության, համակարծիք է Գ. Մելիքիշվիլուն, որ Ապոլոդորոսը նկատի ունի այս իրավիճակը, երբ ասում

[1258] Страбон, с. 68.
[1259] The Geography of Strabo, Vol. V, XI, 14, 5, p. 324.
[1260] Меликишвили Г. А., К истории древней Грузии, с. 291.

[1261] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 76:
[1262] Меликишвили Г. А., Նշվ. աշխ., էջ 291; Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 439:
[1263] Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 452; Hewsen R. H., Introduction to Armenian Historical Geography III: The Boundaries of Orontid Armenia, RÉA, t. XVIII, 1984, p. 353.
[1264] Джанашиа С. Н., Труды, Т. II, Тбилиси,1952, с. 98 и др. (на груз. яз.).
[1265] Меликишвили Г. А., Նշվ. աշխ., էջ 291: Տե՛ս նաև Очерки истории Грузии, Т. I. Грузия с древнейших времен до IV в. н. э., под ред. Г. А. Меликишвили, О. Д. Лордкипанидзе, Тбилиси, 1989, с. 262-263.
[1266] Джанашиа С. Н., Նշվ. աշխ., էջ 254; Меликишвили Г. А., Նշվ. աշխ., էջ 137:
[1267] Мусхелишвили Д. Л., Из исторической географии Восточной Грузии (Шаки и Гогарена), Тбилиси, 1982, с. 10.

է, որ վրացիներին հայերից բաժանում է Արաքսը, որն իր վերին հոսանքում կարող էր ժամանակավոր սահման կազմել երկու պետությունների միջև[1268]:

Ապոլոդորոսի տեղեկությունը քննելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Ստրաբոնը ճիշտ չի համարում նրա տեղեկության ճշմարտացիությունը և, անշուշտ, սխալ է Ապոլոդորոսի ու Ստրաբոնի արդեն մեջբերված հաղորդումները դնել միևնույն հարթության մեջ և կատարել հեռուն գնացող եզրակացություններ: Ճիշտ է, Ստրաբոնն, ընդգծելով, որ Մեծ Հայքի, Կողքիսի ու Իբերիայի սահմանը Մոսքիկյան լեռներն են և Կուր գետը (նկատի ունի իր ապրած ժամանակաշրջանը), այդուհանդերձ, եթե Ապոլոդորոսի տեղեկությունը համապատասխաներ պատմական իրականությանն ավելի վաղ ժամանակների առումով, ապա ամասիացի աշխարհագետը, կարծում ենք, կշեշտեր այդ հանգամանքը, սակայն, ինչպես երևում է, նա ընդհանրապես կասկածի տակ է առնում Ապոլոդորոսի տեղեկության հավաստիությունը: Խնդիրն այն է, որ Ստրաբոնն Ապոլոդորոսի Արաքսը նույնացրել է հայկական Երասխ-Արաքսին, և ըստ այդմ էլ, Ապոլոդորոսի տեղեկությունը համարել է սխալ: Բայց այսքանը բավարար չէ Ապոլոդորոսին սխալ տեղեկատվության մեջ մեղադրելու համար և ինչպես կտեսնենք քննության ընթացքում՝ ոչ Ապոլոդորոսի, ոչ էլ Ստրաբոնի տեղեկությունները չեն հակասում մեկմեկու և խնդիրը պետք է քննել բոլորովին այլ լույսի ներքո:

Անշուշտ, եթե Ապոլոդորոսի Արաքսը պատմագիտական գրականության մեջ նույնացվել է հայկական Երասխին, ապա Ստրաբոնի աշխատության XI, 14, 5 հատվածում հիշատակվող երկրներն էլ արհեստականորեն պետք է հասցվեին մինչև Արաքսի վերին ու միջին հոսանքները: Արդեն նշել ենք, որ լիովին հիմնազուրկ է Ապոլոդորոսի և Ստրաբոնի վերոհիշյալ տեղեկությունները դիտարկել միևնույն հարթության մեջ, ուստիև, ելնելով անհրաժեշտությունից, նախ քննենք Ստրաբոնի տեղեկությունը (XI, 14, 5):

Բերված տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Պարիադրեսի լեռնալանջերը և Խորձենեն գտնվել են Կուր գետից դեպի արևմուտք, իսկ Գոգարենեն՝ դեպի արևելք: Աշխարհագրական այսպիսի մոտեց-

[1268] Տիրացյան Գ. Ա., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ – մ. թ. ա. III դ. վերջ), էջ 83: Նշենք նաև, որ Ապոլոդորոսի տեղեկությունն առանց քննելու համարվել է սխալ (տե՛ս Болтунова А. И., Описание Иберии в «Географии» Страбона, ВДИ, 1947, 4, с. 148.

ման դեպքում Պարիադրեսը, կարծես թե, նույնանում է Պոնտական լեռնաշղթայի արևելյան մասի՝ Պարխարյան լեռների հետ, սակայն Ստրաբոնի մոտ Պարիադրեսի մասին եղած մյուս տեղեկությունները չեն հաստատում այդ նույնացումը:

Ստրաբոնի մոտ Պարիադրեսը, ինչպես և Մոսքիկյան լեռները, Տավրոսի ճյուղերից են[1269]:Մեկ այլ տեղեկության մեջ Ստրաբոնը նշում է, որ Կովկասի հարավային ճյուղերը միանում են Հայկական (իմա՛ Թռեղքի լեռներ) և Մոսքիկյան լեռներին, ինչպես նաև Սկյուդիսեսին ու Պարիադրեսին[1270]: Այստեղ կարևոր է նշված լեռների ըստ հերթականության հիշատակվելը՝ Հայկական (Թռեղքի լեռներ), Մոսքիկյան (վերջինս նաև անվանվել է Հայկական, տե՛ս ստորև), Սկյուդիսես, Պարիադրես: Ստրաբոնն իր հաղորդումներից մեկում նշում է, որ Սկյուդիսեսը միանում է Մոսքիկյան լեռներին, որոնք գտնվում են Կողքիսի վերևում, իսկ Պարիադրեսը ձգվում է Սիդենեի շրջանից և Թեմիսկյուրեից մինչև Փոքր Հայք՝ կազմելով Պոնտոսի արևելյան կողը[1271]: Թեմիսկյուրեի դաշտը գտնվել է Թերմոդոնտ և Իռիս գետերի միջև, իսկ դրանից արևելք՝ Սիդենեն (Պոլեմոնիոն), որն էլ իր հերթին հասել է մինչև Փառնակիա[1272]: Եթե Փոքր Հայքի մեջ ներառենք նաև Տրապիզոնը և Փառնակիան, ինչպես նշում է Ստրաբոնը[1273], ապա Պարիադրեսի սահմանը կհասնի մինչև տվյալ շրջանը: Ինչպես պարզվում է Ստրաբոնի մի տեղեկությունից, Պարիադրեսը ծայր արևմուտքում ձգվել է մինչև Փանարեա՝ Գայլ և Իռիս գետերի ստորին հոսանքի շրջանում, արևելքից եզերելով Պոնտոսի այս բերրի դաշտը[1274]: Ինչպես տեղեկացնում է Ստրաբոնը, Միհրդատը կառուցում է 75 ամրոց, որոնցում և պահպանում է իր գանձերի մեծագույն մասը: Այդ ամրոցներից ամենահայտնիներն էին Հյուդարան, Բասգոյդարիզան, Սյունորիան, որոնք, ինչպես երևում է հեղինակի հետագա շարադրանքից, գտնվել են Պարիադրեսի լեռնաշղթայի տարբեր հատվածներում[1275]: Ելնելով այս հաղորդումից՝ կարելի է եզրակացնել, որ Պարիադրեսը համապատասխանում է նաև

[1269] Страбон, с. 492.
[1270] Անդ, էջ 472:
[1271] Անդ, էջ 515:
[1272] Անդ, էջ 514: Տե՛ս նաև Խորհկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 176:
[1273] «Իրենց (Փոքր Հայքի թագավորներին – Խ. Հ.) հնազանդ էին Խաղտիք և Տիբարենները, այնպես, որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա» (տե՛ս Ստրաբոն, էջ 75):
[1274] Страбон, с. 522.
[1275] Անդ, էջ 521:

ներկայիս Գյումուշխանեի լեռներին, քանի որ Սյունորիան գտնվել է Փոսադուռն լեռնանցքի մերձակայքում ու պահպանվել է Սինոռ անվամբ[1276]: Բերված տեղեկություններից հստակ երևում է, որ Ստրաբոնի Պարիադրեսը համապատասխանում է Արևելապոնտական լեռնաշղթայի արևմտյան կեսին՝ Իռիս գետից մինչև ներկայիս Տրապիզոնի ու Գյումուշխանեի լեռները: Հետևաբար, այս նույնացումից հետո Արտաշեսի՝ իբերներից գրաված հողերը՝ Պարիադրեսի լեռնալանջերը, փնտրել աշխարհագրական այս տարածքում բացարձակապես անմտություն կլինի: Այսպիսով, Պարիադրեսի տեղադրությունը Ստրաբոնի մոտ որոշակի է և, ելնելով վերոհիշյալ քննությունից, կարելի է պնդել, որ Պարիադրեսի նույնացումը Պարխարյան լեռների հետ սխալ է ու չի համապատասխանում իրականությանը:

Ստրաբոնի համապատասխան տեղեկություններից երևում է, որ Պարխարյան լեռները նրա մոտ հանդես են գալիս Սկյուդիսես անվամբ: Վերևում արդեն բերված մի տեղեկության մեջ տեսանք, որ Հայկական, Մոսքիկյան լեռներին հաջորդել են Սկյուդիսեսը, ապա Պարիադրեսը: Մեկ այլ հաղորդման մեջ նույնպես Սկյուդիսեսը միանում է Մոսքիկյան լեռներին[1277]: Ստրաբոնի հաջորդ տեղեկության մեջ կա հետաքրքրություն այն առումով, որ, ըստ աշխարհագետի, Հայաստանը հյուսիսում սահմանակցում է Մոսքիկյան և Կոլխական լեռներին մինչև, այսպես կոչված, տիբարանները. ընդ որում, արևմուտքում հիշատակվում է նախ Պարիադրեսը, ապա Սկյուդիսեսը[1278]: Այս տեղեկությունից այնքան էլ պարզ չէ, թե հեղինակը Կոլխական լեռները տարածո՞ւմ է մինչև ներկայիս Գիրեսունի լեռները, թե ոչ, քանի որ Ստրաբոնը տիբարեններին, խալդայներին, ճաներին և Փոքր Հայքը տեղադրում է Տրապեզունտի ու Փառնակիայի (նախկին Կեռասունտ) միջև[1279]: Եթե այո, ապա Պարիադրեսի մի խոշոր մասը նրա մոտ կոչվում է նաև «Կոլխական լեռներ» անունով: Սակայն Ստրաբոնը Կողքիսը տեղադրում է Տրապեզունտից արևելք[1280], հետևաբար, «Կոլխական լեռներ» անունը չէր կարող հեղինակի կողմից տարածվել Պարիադրեսի վրա: Ինչպես երևում է բերված տեղեկությունների համեմատությունից, կարելի է Կոլխական լեռները նույնացնել Սկյուդիսեսի հետ, ընդ

[1276] Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 81:
[1277] Страбон, с. 515.
[1278] Անդ, էջ 496:
[1279] Անդ, էջ 515:
[1280] Անդ, էջ 283, 471, 514:

որում ենթադրում ենք, որ Արևելապոնտական լեռների մի հատվածը, ներկայիս Լազիստանի լեռները հյուսիսից կոչվել են Կոլխական, իսկ հարավից՝ Սկյուդիսես անուններով: Եվ, եթե առաջին անունը կապված է կոլխերի հետ, ապա երկրորդը՝ սկյութների հետ[1281], չնայած նկատենք, որ կոլխերը նույնպես սկյութներ են: Մեկ այլ հաղորդման մեջ էլ Ստրաբոնը հենիոխներից հետո տեղադրում է Կողքիսը, որը փռված է Կովկասյան և Մոսքիկյան լեռների լանջերին[1282]: Քանի որ մյուս տեղեկություններում Կողքիսը տեղադրված է Տրապեզունտից արևելք, ապա Կովկասյան լեռները համարժեք են և՛ բուն Կովկասյան մեծ լեռնաշղթային, և՛ Սկյուդիսեսին, որն այս դեպքում համարվել է Կովկասի ճյուղերից մեկը, չնայած մեկ այլ հաղորդման մեջ Սկյուդիսեսը Տավրոսի ճյուղերից է[1283]:

Պարիադրեսի տեղադրությունը, անկասկած, անհավանական է դարձնում այն հանգամանքը, թե, իբր, իբերները կարողացել էին հարավարևմտյան ուղղությամբ այդքան ծավալվել, ընդ որում, Պարիադրեսի շրջանից՝ կտրված լինելով Սկյուդիսեսով: Պարիադրեսի և Սկյուդիսեսի տեղադրությունը պարզելուց հետո այլ բացատրություն է ստանում նաև Ստրաբոնի այն տեղեկությունը, թե Արտաշես Ա-ն խալյուբներից և մոսինոյկներից գրավում (իմա՛ վերամիավորում) է Կարենիտիսը և Դերքսենեն, որը սահմանակից է Փոքր Հայքին կամ էլ նրա մասն է կազմում[1284]: Պատմագիտական գրականության մեջ իրավացիորեն նշվել է, որ եթե խոսքը վերաբերում է «Անաբասիս»-ում հիշատակվող արևմտյան խալյուբներին և մոսինոյկներին, ապա սրանք ոչ մի կերպ չէին կարող գրավել Կարենիտիս-Կարինը և Դերքսենե-Երջանը[1285]: Մեր կարծիքով, ելնելով այն հանգամանքից, որ հենց Ստրաբոնն է նույնացնում խալյուբներին խալդայների հետ[1286] (իմա՛ սկյութներ), ապա Արտաշես Ա-ն նշված հայկական երկրամասերը հետ էր նվաճել խալդայներից, որոնք հին ժամանակներից սկսած հաստատվել էին Ճորոխի վերին ու միջին հոսանքների արևմտյան ավազանում և Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում մտնում էին Սատրապական Հայաստանի կազմի մեջ[1287]: Միաժամանակ նկա-

[1281] Հարությունյան Բ. Հ., նշվ. աշխ., էջ 99; Меликишвили Г. А., Նշվ. աշխ., էջ 81:
[1282] Страбон, с. 468.
[1283] Անդ, էջ 472:
[1284] The Geography of Strabo, Vol. V, XI, 14, 5, p. 324.
[1285] Հարությունյան Բ. Հ., նշվ. աշխ., էջ 102-103:
[1286] Страбон, с. 515-516.
[1287] Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության..., էջ 118:

տենք, որ Դերջանը, Կարինը և դրանցից հյուսիս գտնվող հողերը սահմանակցում էին խալդայների հողերին և Դերջանի ու Կարինի սահմանագլխին գտնվող Խաղտոյառիճ գյուղը, որը, թերևս, նույնանում է ուրարտական արձանագրությունների Խալդիրիուվխի տեղանվանը, վկայում է այն մասին, որ խալդայները շարժվել էին դեպի հարավ և հաստատվել էթնիկական այլ միջավայրում[1288]: Իսկ ինչ վերաբերում է մոսինոյկներին, ապա Ստրաբոնը, ազդվելով Քսենոփոնի տեղեկություններից, որ արևմտյան խալյուբներից արևելք գտնվել են մոսինոյկները, որոնց տիրապետության տակ էին խալյուբները, և տառխներից հյուսիս գտնվել են արևելյան խալյուբները, որոնք նույնանում են մոսքերին[1289], ինքն էլ իր հերթին խալյուբներին նույնացնելով խալդայների հետ, որոնք զբաղվել են նաև մետաղագործությամբ, վերջիններիս հարևանությամբ ավելացրել է մոսինոյկների անունը: Մոսինոյկները չեն կարող նույնանալ մոսքերի հետ նաև այն պատճառով, որ վերջիններիս երկիրն Արտաշես Ա-ն գրավել էր իբերներից:

Այսպիսով, քննարկելով Պարիադրեսի խնդիրը, տեսանք, որ այն ոչ մի կերպ չի կարող նույնանալ Պարխարյան լեռների հետ, որոնք Ստրաբոնի մոտ անվանված են Սկյուդիսես: Հետևաբար՝ ելնելով կատարված քննությունից և նկատի ունենալով, որ Ստրաբոնի մոտ Պարիադրեսի ստորոտները, Խորձենեն և Գոգարենեն նշված են որոշակի հերթականությամբ ու վերջին երկու երկրամասերի տեղադրությունը բավականին որոշակի է՝ Գոգարենե-Գուգարքը Կուր գետից արևելք, իսկ Խորձենեն գետից արևմուտք, ուրեմն նշված աշխարհագրական շրջանները բերված են արևմուտք-արևելք հերթականությամբ:

Խորձենեն (ուրարտական արձանագրությունների Խուշանի-Խուշալիին) տեղադրվում է Արտահանի շրջակայքում[1290]: Սակայն, ելնելով Ստրաբոնի այն հաղորդումից, որ «Խորձենեն և Կամբյուսենեն՝ Հայաստանի ամենահյուսիսային գավառներն են և շատ ձյունառատ. սահմանակից են Կովկասյան լեռներին, Իբերիային և Կողքիսին»[1291], կարելի է եզրակացնել, որ Խորձենեն ունի աշխարհագրական ավելի

[1288] Անդ, էջ 120:

[1289] Հարությունյան Բ. Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 78: Նույնի՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 95; Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապությանն..., էջ 120–122:

[1290] Манандян Я., Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду, Труды, т. V., Ер., 1984, с. 252-254.

[1291] The Geography of Strabo, Vol. V, XI, 14, 4, p. 322.

լայն ընդգրկում՝ ներառելով ամբողջ արևմտյան Գուգարքը և դրանից հյուսիս ընկած շրջանները մինչև Մոսքական լեռներ[1292]: Հակառակ դեպքում՝ նկատի ունենալ միայն Արտահանի շրջակայքը ճիշտ չի լինի, քանի որ Խորձենեն սահմանակցել է Կողքիսին և Իբերիային: Մեր կարծիքով, Պարիադրեսի լեռնալանջերը (իմա՛ Սկյուդիսեսի) գտնվել են Ճորոխի ստորին հոսանքի ձախափնյակում, խալդայական (իմա՛ սկյութական) երկրամաս Արսեաց փորից[1293] հյուսիս և աշխարհագրորեն համապատասխանում են հետագա Մրուղ ու Նիգալ գավառների տարածքներին և, ըստ էության, կազմել են Կատարզա-Կղարջքի արևմտյան հատվածը: Այս առումով, հետաքրքիր է «Քարթլիս ցխովրեբայում» պահպանված այն տեղեկությունը, որ Փառնավազ թագավորն (մ. թ. ա. 270-ական թվականներ) իր յոթերորդ կողմնակալին «...առաքեաց ի Կլարճէթ, տալով նմա յԱրսիանոյ մինչև ցծովն...»[1294]: Այսինքն՝ Կղարջքը վարչականորեն տարածվել է մինչև Սև ծովի ափը: Այսպիսով՝ Արտաշես Ա-ի օրոք Հայաստանը փոքր հատվածով Ճորոխի գետաբերանում դուրս է եկել Սև ծով[1295]: Ինչպես երևում է, Արտաշես Ա-ն իբերներից գրավում է այն հողերը՝ Պարիադրեսի լեռնալանջերը, որոնք հանդիսացել են նախկինում կոլխական տարածքներ՝ նվաճված մոսքերից: Կարելի է ենթադրել, որ ինչպես Ստրաբոնն է նշում, որ Գոգարենեն գտնվել է Կուր գետի մյուս կողմում, այնպես էլ Պարիադրեսի լեռնալանջերը պետք է մեր տեղադրության դեպքում աշխարհագետը տեղորոշեր Ճորոխից արևմուտք, սակայն զարմանա-

[1292] Ս. Երեմյանի կարծիքով, Պարիադրես (Պարխար) լեռների ստորոտը համապատասխանում է Գոդերձական գավառին, և երեք հիշյալ երկրամասերը, այսինքն՝ նաև Գոգարենեն և Խորձենեն (Կղարջքը և Արտահանը), լինելով Հայաստանը ներառող Աքեմենյան սատրապության մասեր, ողջ III դարի ընթացքում ընդգրկված են եղել Երվանդունիների պետության մեջ ու միայն դարավերջին են անցել Վրաստանին: Այս դատողությամբ, Արտաշեսի կողմից դրանց նվաճումը պետք է դիտել որպես վերամիավորում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 532): Ա. Ղարագյոզյանը Խորձենեին հատկացնում է ընդարձակ տարածք, օրինակ՝ հարավ-արևելքում մինչև Բասեն, իսկ Պարիադրեսը նույնացնում է Ծաղկավետին, ներկայումս՝ Դումլուդաղ (տե՛ս Ղարագյոզյան Ա., Անտիկ աղբյուրների Պարիադրես լեռը, ՊԲՀ, 1999, թիվ 2-3, էջ 290):

[1293] Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 77, 97–99, 109; Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության..., էջ 119:

[1294] Քարթլիս ցխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, էջ 35:

[1295] Որ Հայաստանը Արտաշես Ա-ի ժամանակ ելք է ունեցել դեպի Սև ծով, ցույց է տվել դեռևս Բ. Հարությունյանը (տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 179):

լիորեն Ճորոխ գետը Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ արտացոլված չէ. ըստ այդմ, ո՛չ Լյուկոս գետը (իմա՛ Գայլ), ո՛չ էլ Փասիսը (իմա՛ Ռիոն) չեն կարող նույնանալ Ճորոխին[1296]: Նկատենք նաև, որ, համաձայն «Քարթլիս ցխովրեբայի», հայոց Երվանդ Մեծ թագավորը, որն իրավացիորեն նույնացվել է մ. թ. ա. IV դարի վերջին տապանամյակներին գահակալած հայոց թագավորի հետ[1297], նվաճում է Ծունդա քաղաքը և Արտահանը մինչև Կուր գետը[1298]: Նշանակում է, որ մինչև Արտաշես Ա-ն Խորձենիքի մի հատվածը՝ Արտահանի շրջակայքը, մտել է Հայաստանի կազմի մեջ, և մ. թ. ա. III դարի I կեսին հզորացած վրացական թագավորությունը ժամանակավորապես այն խլել էր Հայաստանից:

Անշուշտ, հարց է ծագում, եթե Պարիադրեսի և Սկյուդիսեսի տեղադրությունները Ստրաբոնի մոտ հստակ են, ապա ինչո՞ւ տվյալ հաղորդման մեջ (XI, 14, 5) Պարիադրեսը պետք է նույնացնենք Սկյուդիսեսի հետ: Մեր կարծիքով՝ նման մոտեցման հնարավորություն տալիս է, ըստ երևույթին, Ստրաբոնի օգտագործած աղբյուրը, որտեղ Պարիադրեսը նույնացվել է Սկյուդիսեսին: Եվ պատահական չէ, որ հին հեղինակների (Գայոս Պլինիոս Ավագ, Կլավդիոս Պտղոմեոս) մոտ Պարիադրես անունով լեռներ հիշատակվում են Հայաստանի տարբեր շրջաններում (օրինակ՝ Թռեղքի լեռները)[1299], սակայն Պարիադրեսի վերաբերյալ Ստրաբոնի տեղեկությունները տարբերվում են մյուս հեղինակների հաղորդումներից, ուստիև մեզ հետաքրքրող խնդիրը քննարկել ենք միայն ամասիացի աշխարհագետի աշխատության շրջանակներում:

Ստրաբոնի XI, 14, 5 տեղեկության քննությունը և աշխարհագրական տեղորոշումները ցույց տվեցին, որ հյուսիսում Մեծ Հայքի թագավորությանը միացված տարածքները ոչ մի դեպքում չեն կարող հասցվել մինչև Երասխի վերին ու միջին հոսանքների շրջանները և որ տվյալ տեղեկությունն ու Ապոլոդորոսի հաղորդումը հարմարեցնել մեկմեկու՝ սխալ է և անընդունելի: Իսկ ինչ վերաբերում է Ապոլոդորոսի մոտ Արաքսի հիշատակությանը, ապա վերջինս նույնանում է ներկայիս Ռիոնի գետի հետ, ինչը կհիմնավորենք ստորև:

[1296] Страбон, с. 472, 498 և այլն: Փասիսի տարբեր նույնացումների մասին տե՛ս նաև Dan A., The Rivers called Phasis, AWE, Vol. 15, 2016, pp. 245-277.
[1297] Տիրացյան Գ. Ա., նշվ. հոդվ., էջ 82:
[1298] Картлис цховреба, с. 31.
[1299] Ղարագյոզյան Ա., նշվ. հոդվ., էջ 291, 293; Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 97; նույնի՝ Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1995, թիվ 1, էջ 205-206:

Արաքսը հին ժամանակներում նույնացվել է տարբեր գետերի հետ, օրինակ Ամարդոսի (ներկայիս Սեֆիդ-ռուդը)[1300], Օքսոսի (ներկայիս Ամու-Դարյան)[1301]: Արաքս անունով գետ կա Պերսեպոլիսի մոտ[1302], Թեսալիայում[1303], Սկյութիայում[1304], իսկ Մետրոդորոս Սկեպսիացին Արաքս անվանում է Թերմոդոնտը[1305], Փասիսը, Տանաիսը (ներկայիս Դոնը) համարված են Արաքսի վտակներ[1306], որը, անշուշտ, ենթակա չէ ոչ մի տեղագրական նույնացման: Քսենոփոնի մոտ Եփրատի ձախ վտակներից մեկը Միջագետքում կոչվում է Արաքսես[1307]: Մ. թ. III դարի հեղինակ Սոլինը հայտնում է, որ Հենիոխական լեռները ողողում է Արաքսը[1308]: Եթե հեղինակը նկատի ունի Պոնտոսի հյուսիսարևելյան ծովափնյա շրջանում հաստատված հենիոխներին, ապա Արաքսը նույնանում է այդ տարածաշրջանի գետերից մեկին, իսկ եթե Ճորոխի ստորին հոսանքի մոտ հաստատված հենիոխներին, ապա Արաքսը նույնանում է Ճորոխին:

Կան նաև տեղեկություններ, որոնցում Փասիս անունով հանդես են գալիս տարբեր գետեր: Այսպես, Քսենոփոնի մոտ Փասիս անունով հանդես է գալիս Երասխ գետը, ընդ որում, գետն այդպես է կոչվում, ըստ էության, փասիանների անունով, որոնց մի հատվածը բնակվում էր ներկայիս արևմտյան Վրաստանի Փոթի (իմա՛ Փասիս) քաղաքի շրջակայքում[1309]: Մ. թ. IV դարի լատին հեղինակ Կլավդիոս Կլավդիանոսի մոտ կա մի տեղեկություն, որում հաղորդվում է. «...Փասիսի շուրջ ապրող արմենները»[1310]: Փասիսը, անկասկած, հայկական Երասխն է, ընդ որում, հետաքրքիր է, որ հեղինակի մոտ կան հաղորդումներ Արաքսի մասին ևս, սակայն, ինչպես երևում է, հեղինակը Արաքսը համարում է սկյութական գետ[1311]:

[1300] Հերոդոտոս, I, 202:
[1301] Անդ: Նույնացումների քննությունը տե՛ս Խորիկյան Հ. Գ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 84:
[1302] Ռուփոս, էջ 327, 381, 385, 392
[1303] ИДПСК, ВДИ, 1948, 3, с. 315.
[1304] ИДПСК, ВДИ, 1947, 3, с. 293.
[1305] Անդ:
[1306] ИДПСК, ВДИ, 1948, 3, с. 268
[1307] Քսենոփոն, Անաբասիս, էջ 20:
[1308] ИДПСК, ВДИ, 1949, 3, с. 243.
[1309] Քսենոփոն, Անաբասիս, էջ 99, 129; Խորիկյան Հ. Գ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 62:
[1310] ИДПСК, ВДИ, 1949, 4, с. 255.
[1311] Անդ, էջ 253:

Ապոլոնիոս Հռոդոսցու սքոլիաներից մեկում հաղորդվում է, որ Լյուկոս գետը՝ հոսելով Արաքսից, միանում է Փասիսին և, կորցնելով անունը, թափվում է ծովը[1312]: Համաձայն այս տեղեկության, կարելի է նաև մտածել, որ Լյուկոսը նույնանում է Ճորոխին, սակայն այն հանգամանքը, որ Լյուկոսը թափվում է ծովը Փասիսին միանալուց հետո, ենթադրել է տալիս, որ Լյուկոսը նույնանում է Գայլ գետին, որը սխալմամբ համարված է Արաքսի վտակ, իսկ Փասիսը՝ Իռիս գետին, որը թափվում է Սև ծովը: Մ. թ. III դարի հույն հեղինակ Դեքսիպոսի հաղորդման համաձայն, Փասիսը տեղադրվում է Մեոտիս լճի մոտ[1313], որը թույլ է տալիս ենթադրելու, որ Փասիսը նույնանում է Տանաիս-Դոն գետին, ինչը գալիս էր արգոնավորդների առասպելի հնագույն տարբերակից[1314]: Բերված տեղեկությունների աշխարհագրական զանազան նույնացումները թույլ են տալիս պնդելու, որ Ապոլոդորոսի մոտ Արաքսը նույնանում է Փասիսին, ավելի ճիշտ նրա վտակ Ղվիրիլային: Հին հեղինակների մոտ Փասիսը սկիզբ է առնում Մոսքական լեռներից կամ մոսխերի տիրույթներից[1315], կամ էլ Հայաստանից ու Հայկական լեռներից[1316]: Այս տեղեկությունները թույլ են տալիս նույնացնելու Մոսքական և Հայկական լեռները, որտեղից, ըստ սկզբնաղբյուրների մի խմբի, սկիզբ էր առնում Փասիսը (իմա՛ Ղվիրիլան)[1317]: Փասիսը, ըստ Ստրաբոնի, նավարկելի է մինչև կոլխական ամրոց Սարապանան[1318], որից արևելք Իբերիան է:

Ամփոփենք: Ի մի բերելով վերը կատարված քննության արդյունքները, գալիս ենք այն հիմնավոր եզրակացության, որ և՛ Ապոլոդորոսի տեղեկությունը, և՛ այդ տեղեկության վերաբերյալ Ստրաբոնի ճշգրտումն էությամբ չեն հակասում միմյանց, քանի որ Արտաշես Ա-ից սկսած Մոսքական լեռներն ու Կուր գետը կազմել են Հայաստանի հյուսիսային և հյուսիսարևելյան սահմանները: Իսկ Ապոլոդորոսի Արաքսն էլ նույնանում է Փասիսին (ներկայիս Ռիոն գետը), որի ակունքները, ըստ սկզբնաղբյուրների մի խմբի, բխել են Մոսքական կամ Հայկական լեռներից՝ նկատի ունենալով Փասիսի վտակ Ղվիրիլան: Նման մոտեցման դեպքում, իրոք, Ղվիրիլան կարող էր մ. թ. ա. II–I դարերում հանդես գալ որպես սահմանագիծ, որից արևմուտք Կողքիսն էր, արևելք՝ Իբերիան, իսկ հարավում՝ ակունքները սնուցող Մեծ Հայքը: Հետևաբար, Արաքսի նույնացումը հայկական Երասխին սխալ է, և երբեք էլ Իբերիայի քաղաքական սահմանները չեն հասել մինչև Երասխի վերին ու միջին հոսանքների շրջանները:

[1312] ИДПСК, ВДИ, 1947, 3, с. 293.
[1313] ИДПСК, ВДИ, 1952, 2, с. 298.
[1314] ИДПСК, ВДИ, 1948, 2, с. 313, прим. 1.
[1315] ИДПСК, ВДИ, 1949, 2, с. 289; 1949, 3, с. 243.
[1316] ИДПСК, ВДИ, 1947, 4, с. 246; 1948, 1, с. 240, 253; 2006, 2, с. 239; Страбон, с. 472.
[1317] Փասիս-Ղվիրիլա նույնացման մասին տե՛ս Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության..., էջ 122–123:
[1318] Страбон, с. 472, 474.

3.7. XIX սատրապության տեղադրությունը

XIX սատրապության սահմանների և այն բնակեցնող ցեղերի տեղադրության հարցերը մենք արդեն քննել ենք մեկ այլ աշխատությունում[1319]: Այստեղ միայն նշենք, որ դատելով հին աղբյուրների տեղեկություններից՝ կարելի է եզրակացնել, որ աշխարհագրական առումով XIX սատրապությունը, թերևս, պետք է տարանջատել երկու շրջանների՝ մեկը տիբարենների, մոսինոյկների, մակրոնների, մյուսը՝ մոսքերի, մարերի և այլ կոլխական ցեղերի բնակության տարածքը: XIX սատրապության սահմանն արևմուտքում հասել է մինչև Յասոնի հրվանդան, հարավում բնական սահման է հանդիսացել Պոնտական լեռնաշղթան, արևելքից, իր մեջ ընդգրկելով Կատարզա-Կղարջքը, հասել է մինչև Արգվեթի լեռներ, իսկ հյուսիսում բնական սահմանն էին Կովկասյան լեռները, որն ավելի ուշ հասնում է մինչև Փասիս-Ռիոն գետը:

3.8. Ութերորդ սատրապության տեղադրությունը

Հույն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան տերության VIII սատրապությանը, գրում է. «Սուսայից և կիսսիեցիների երկրի մնացած մասից վերցվում էր երեք հարյուր տաղանդ: Սա ութերորդ նահանգն էր»[1320]: Այս տեղեկությունից հարց է ծագում, թե կիսիեցիներ-կիսսիացիների երկրի մնացած մասը ո՞ր սատրապության մեջ է եղել կամ էլ արդյո՞ք հենց Սուսան է համարվել կիսսիեցիների երկրի մի մասը:

Պատմիչի մյուս տեղեկությունները Սուսայի և կիսսիեցիների վերաբերյալ բացահայտում են կարևոր իրողություններ: Այսպես, Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմում պարսիկներից, մեդացիներից հետո հիշատակվում են կիսսիացիները[1321], ինչը վկայում է տերության մեջ նրանց ունեցած բարձր դիրքի մասին: Էլամացիները կամ սուսիանացիները իրենց ռազմական ուժով շատ հնուց էին հայտնի[1322]:

[1319] Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., տե՛ս գլուխ երրորդ:
[1320] Հերոդոտոս, III, 91:
[1321] Անդ, VII, 62, 210: Տե՛ս, օրինակ, Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques, p. 258. Կիսսիացիներին նույնացրել են կաշիտ-կասիտների հետ, որոնք Հերոդոտոսի մոտ փոխարինում են էլամացիներին (տե՛ս Olmstead A. T., History of the Persian Empire, pp. 161, 212, 239; Дьяконов И. М., Языки древней Передней Азии, с. 87):
[1322] Ctesias' History of Persia, p. 132.

Ըստ էության, Սուսայում պարսիկները միշտ էլ մեծաթիվ զորք են պահել[1323], քանի որ այն տերության վարչական կենտրոնն էր[1324]: Էլամերենը նույնպես Աքեմենյան տերության պաշտոնական լեզուներից մեկն էր, որը հիմնականում վարչարարության մեջ էր գործածվում[1325]:

Պերսեպոլիսի բարձրաքանդակներում էլամացի հարկատուները պատկերված են երկրորդ տեղում[1326]:

Հերոդոտոսի հաջորդ տեղեկությունից պարզվում է, որ Սուսան գտնվել է Քոասպես գետի ափին՝ Կիսսիա երկրում[1327]: Քոասպես գետը, որի ջուրն էին խմում միայն Աքեմենյան արքաները[1328], նույնանում է Դանիելի մարգարեության մեջ հիշատակվող Ու(բ)լաղ գետին, որի ափին գտնվել է Էլամի Շոշ ապարանքը[1329], այսինքն՝ Էլամի անվան տակ հասկացվել է նաև Սուզան: Ուլաղ գետը նույնանում է հունական աղբյուրներում հայտնի Εὔλαιος-ին, որը ժամանակակից Քարխեհը[1330] կամ Քարունն է:

Սուզայի սեպագիր արձանագրություններից մեկում Սուսան՝ Էլամի թագավորության հին մայրաքաղաքը, հայտնի է Çušā անունով, էլամերեն և բաբելոներեն Šu-ša-an, եբրայերեն Šu-šn ձևերով[1331]: Սուսա անունը նշանակում է «շուշան», և քաղաքը տեղադրվում է ժամանակակից Շոշի մոտ՝ Քոասպես գետի վտակ Շահուրի ափին[1332]: Հերոդոտոսի տեղեկություններից հայտնի է, որ պատմիչը և ոչ միայն նա[1333], Սուսան համարում էր Աքեմենյանների գլխավոր և արքայանիստ քաղաքը, որը հիմնադրել

[1323] Քսենոփոն, Անաբասիս, էջ 49:
[1324] Dandamayev M. A., Achaemenid Imperial Policies and Provincial Governments, IA, Vol. 34, 1999, p. 271.
[1325] Ctesias' History of Persia, p. 56.
[1326] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 193:
[1327] Հերոդոտոս, V, 49, 52:
[1328] Անդ, I, 188: Տե՛ս նաև Ctesias' History of Persia, p. 217; Ռուփոս, էջ 376:
[1329] Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Դանիէլ, 8, 2:
[1330] Cameron G. G., History of Early Iran, Chicago, Illinois, 1936, p. 189.
[1331] Kent R., Նշվ. աշխ., էջ 143, 188:
[1332] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 487. Šušan անունով մի քաղաք հիշատակվում է նաև Բորսիպպայի մոտ՝ որպես տնտեսական և վարչական կարևոր կենտրոն (տե՛ս Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 332, 362): Համմ. Waerzeggers C., Babylonians in Susa. The Travels of Babylonian Businessmen to Susa Reconsidered, in: Der Achämenidenhof, Herausgegeben von B. Jacobs und R. Rollinger, Wiesbaden, 2010, p. 778.
[1333] Տե՛ս նաև Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 173: Քսենոփոնը հիշատակում է Սուսայի թագավոր Աբրադատասին (անդ, էջ 257), իսկ Էլամի գրավումը Կյուրոսի կողմից թվագրվում է առավել հավանականությամբ մ. թ. ա. 549 թվականին (տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 19):

էր ասորեստանցիների առասպելական թագավոր Մեմնոնը[1334]: Պերսեպոլիսի հիմնադրումից հետո Սուսան շարունակում է մնալ տերության մայրաքաղաքներից մեկը, որտեղ Աքեմենյան արքաները անցկացնում էին ձմեռը կամ գարունը[1335]: Դարեհ Ա-ն վերականգնում է քաղաքի պարիսպները և կառուցում մեծ ու շքեղ պալատ[1336]: Բաբելոն քաղաքի դարպասներից մեկը կոչվել է կիսսիացիների անունով[1337]:

Ստրաբոնը հայտնում է, որ Սուզայում յուրաքանչյուր պարսից թագավոր իր պալատն էր կառուցում[1338]: Սուսայում և նրա շրջակայքում էին բնակեցվում գերեվարված ժողովուրդները՝ կապադովկիացիներ, թերմիլներ (լյուկիացիներ), եգիպտացիներ[1339], որոնց մի մասին հետագայում տեղափոխում էին այլ վայրեր: Գերեվարված միլետացիներին Դարեհ Ա-ն Սուսայից տեղափոխում է Կարմիր ծովի մոտ՝ Ամպե քաղաք[1340], իսկ էրիտրեացիները բնակեցվում են Կիսսիայի Արդերիկա գյուղում[1341]:

Ինչ վերաբերում է կիսսիացիներին, ապա սրանք համապատասխանում են պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվող Ūvja կամ Ūja-ին, իսկ hal-tam-ti-ին էլամական տեղական անվանաձևն է: Հունարենում անունը հանդիպում է Σούσον, Σουσίς, Σουσιανή տարբերակներով:

Այսպես, անդրադառնալով բաբելոնացիներին, հույն պատմիչ Ստրաբոնը գրում է, որ նրանց հետ հյուսիսում սահմանակցում են հայերը և մարերը մինչև Զագրոսի գետը և սրա շուրջ ապրող ցեղերը[1342]: Նկատի ունենալով Ստրաբոնի այլ հաղորդումները[1343] կարող ենք եզրակացնել, որ ամասիացի աշխարհագետի համար Բաբելոնն ընդարձակ երկիր էր՝ ընդգրկելով գրեթե ամբողջ Միջագետքը, որը սահմա-

[1334] Հերոդոտոս, V, 53, 54; VII, 151: Սուսան Կյուրոս Բ-ի և Գաումատայի ժամանակ նույնպես տերության մայրաքաղաքն էր (տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 19, 73): Պլինիոս Ավագը Սուսայի հիմնադրումը կապում էր հենց Դարեհ Ա-ի հետ (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 133, p. 438):
[1335] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 359:
[1336] Kent R., Նշվ. աշխ., էջ 143:
[1337] Հերոդոտոս, III, 155, 158:
[1338] Страбон, с. 682.
[1339] Ctesias' History of Persia, p. 178; Diodori Bibliotheca Historica, Vol. I, I, 46, p. 59.
[1340] Հերոդոտոս, VI, 20; Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 170:
[1341] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 128.
[1342] Страбон, с. 686.
[1343] Ստրաբոնը գրում է, որ հնում Ասորեստանի մայրաքաղաքը Բաբելոնն էր, և Ադիաբենը Բաբելոնի մի մասն էր (տե՛ս Страбон, с. 690-691):

նակից է եղել և՛ Հայաստանին, և՛ Մարաստանին՝ վերջինիցս բաժանված լինելով Զագրոսով[1344]: Ինչ վերաբերում է հնում Սիտակենե կոչված Ապոլլոնիատիսին, ապա Ստրաբոնի հաղորդումներից մեկը Սիտակենեի մասին ունի հետևյալ բովանդակությունը. «Սիտակենեն ընդարձակ և բերրի վայր է՝ Բաբելոնի և Սուսիանայի միջև, այնպես որ ամբողջ ճանապարհը Բաբելոնից Սուսա մեկնողների համար անցնում է դեպի արևելք Սիտակենեի միջով»[1345]: Մեկ այլ տեղեկության մեջ հեղինակը հայտնում է, որ Սուսիանային հարևան երկիրը Բաբելոնի մի մասն է, որը նախկինում կոչվել է Սիտակենե, իսկ հետո Ապոլլոնիատիս, և երկու երկրներից վերև՝ հյուսիսից արևելք, ապրում են էլյումացիները և պարետակենները: Ընդ որում, պատմիչը հավելում է, որ պարետակեններն ապրում են ավելի մոտ ապոլլոնիատիսներին, էլյումացիները պատերազմում են այս երկու ժողովուրդների և սուսիացիների հետ, իսկ ուքսիացիները՝ էլյումացիների հետ[1346]:

Ստրաբոնի կողմից Սիտակենեի նույնացումը Ապոլլոնիատիսին թույլ է տալիս ավելի հստակեցնել այդ երկրի տեղորոշումը, և այս հարցում կարևոր են Իսիդոր Քարակացու տեղեկությունները: Համաձայն նրա «Պարթևական կայանների»՝ Սելևկիայից հետո դեպի հյուսիս Ապոլլոնիատիս երկիրն է՝ հունական Արտեմիտա քաղաքով, որի միջով հոսում է Սիլլա՝ ներկայումս Դիալա գետը: Շարունակելով իր տեղեկություններ՝ Իսիդորը գրում է, որ Ապոլլոնիատիսից հետո Խալոնիտիս երկիրն է՝ Խալա հունական քաղաքով, ընդ որում, Զագրոս լեռը բաժանում է Խալոնիտիս երկիրը Մեդերի երկրից[1347]: Հեղինակը նաև ցույց է տալիս, որ հարավ-արևմուտքում Մարաստանի սահմանը Կարինա երկիրն է, որի անունը պահպանվել է այժմյան Կերենդ բնակավայրի անվան մեջ[1348]: Հաղորդումը ցույց է տալիս, որ Սիտակենե-Ապոլլոնիատիսը և Խալոնիտիսը գտնվել են Դիալա գետի ավազանում, սակայն Ստրաբոնի և Իսիդորի տեղեկությունների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջինս Ապոլլոնիատիսը տեղադրում է Ստրաբոնի Սիտակենեից հյուսիս, հետևաբար Ապոլլոնիատիսը, նույնանալով հանդերձ Սիտակենեին, տարածվել է վերջինիս հյուսիսային հատվածում[1349]: Ըստ էության, Սիտակենեն հնում ունեցել է ընդարձակ տարածություն, և պատահական չէ, որ Սիտակենեն՝ որպես սատրապություն, հիշատակվում է Ռուփոսի կողմից, ընդ որում, դատելով պատմիչի տեղեկությունից՝ Սիտակենեն գտնվել է Բաբելոնի և Սուսայի միջև[1350]: Սիտակենեի ընդարձակ տարածքը նկատի ունի Պտղոմեոսը, երբ նշում է, որ Սիտակենեն գտնվում էր Սուսիանայի հարևանությամբ, իսկ Ապոլլոնիատիսն էլ հիշատակում է Սիտակենեից հյուսիս[1351]: Ի վերջո, Քսենոփոնի Սիտակե քաղաքը գտնվում էր Տիգրիսի աջափնյակում[1352], և հնարավոր է, որ ուշ ժամանակներում քաղաքի բնակչության տեղաշարժի հետևանքով քաղաքի անունն աստիճանաբար տարածվում է Տիգրիսից արևելք ընկած տարածքների վրա, որոնք սկսում են կոչվել Սիտակենե: Այդուհանդերձ ապոլլոնիատիսների հարևանությամբ պարետակենների տեղադրությունը չի հաստատվում:

Ստրաբոնը գրում է, որ Պարսքին սահմանակից է Պարետակենան և Կոսսեյան մինչև Կասպիական դռներ, իսկ Սուսիանային էլ սահմանակից է Էլյումայիսը, վերջինիս էլ Զագրոսի շրջանը և Մարաստա-

[1344] Անդ, էջ 492:

[1345] Անդ, էջ 690: Մեկ այլ տեղում ևս Սուսան և Սիտակենեն հիշատակվում են միասին: Հեղինակը հիշատակում է նաև մեոտական սիտակեններ ցեղը (տե՛ս անդ, էջ 470, 686):

[1346] Անդ, էջ 679:

[1347] Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», ՊԲՀ, 1971, թիվ 4, էջ 173: Տե՛ս նաև Muller C., Geographi Graeci Minores, Vol. I, pp. 249-250. Խալոնիտիս երկիրը Զագրոսի լանջերին, Ապոլլոնիան էլ Խալոնիտիսից արևմուտք՝ Տիգրիսի արևելյան ափին, հիշատակում է Պոլիբիոսը (տե՛ս The General History of Polybius, Vol. II, by Mr. J. Hampton, London, 1809, pp. 231, 235): Խալոնիտիսը նույնանում է Անանուն Ռավեննացու Խալոնիտոնին (տե՛ս Ravennatis Anonymi Cosmographia, ed. M. Pinder et Parthey, Berolini, 1860, II, 5, p. 51):

[1348] Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 173:

[1349] Անդ, էջ 178, ծնթ. 35: Սիտակենեն՝ Սուսիանեի և Քալոնիտիսը՝ Զագրոսի հարևանությամբ հիշատակում է նաև Պլինիոս Ավագը (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 114; 122; 131-132, pp. 424, 430, 436, 438):

[1350] Rufus, Vol. I, V, II, 1-8, pp. 342, 344, 346. Սիտակենները մասնակցում են նաև Գավգամելայի ճակատամարտին (տե՛ս Arrian, Vol. I, III, 8, 5, p. 246; 11, 5, p. 256): Սիտակենեն Բաբելոնի և Սուսիանեի միջև հիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 98; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 65, 110, pp. 167, 212): Քալոնիտիս երկրի կենտրոնը հավանաբար Դիոդորոս Սիկիլիացու հիշատակած Կոլոնոս քաղաքն է, որտեղով անցնում էր Մեդիա տանող երկու ճանապարհներից մեկը (անդ, էջ 127):

[1351] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 28-29. Պտղոմեոսը հիշատակում է նաև Ապոլլոնիատիսի և Սիտակենեի կենտրոնները՝ Ապոլլոնիա և Սիտակե քաղաքները (անդ, էջ 32-33):

[1352] Քսենոփոն, Անաբասիս, էջ 48: Հեկատեոսի հիշատակած Պարսքի Սիտակե քաղաքը վերագրվում է կամ Բաբելոնիային, կամ Մարաստանին (տե՛ս Müller C., FHG, Vol. I, p. 12, fr. 184; Herzfeld E., The Persian Empire, p. 10): Դատելով Արիանոսի տեղեկությունից՝ սիտակենները համարվել են բաբելոնացիների մի մասը (տե՛ս Արիանոս, էջ 97):

նը[1353]: Պարետակեններին՝ որպես մարական ցեղերից մեկը, հիշատակում է Հերոդոտոսը[1354], սակայն այս տեղեկությունը թույլ չի տալիս տեղորոշել նրանց: Արիանոսը, խոսելով Դարեհին հետապնդող Ալեքսանդրի մասին, գրում է, որ վերջինս Մարաստան է շարժվում Պարսքից և մինչև Մարաստան ներխուժելը գրավում է պարետակենների երկիրը՝ դարձնելով առանձին սատրապություն[1355]: Ռուֆոսի տեղեկությունից նույնպես երևում է, որ Պարետակենեն Մարաստանին սահմանակից շրջան էր, որտեղ հիշատակում է Թաբաս քաղաքը[1356], Պոլիբիոսի Թաբայը[1357]: Ստրաբոնն իր տեղեկություններից մեկում գրում է, որ Զագրոսից հետո՝ Բաբելոնից վերև, էլյումացիների և պարետակենների լեռնային երկիրն է, իսկ Մարաստանից վերև՝ կոսսեյների երկիրը[1358]: Ստրաբոնը միաժամանակ հայտնում է, որ պարետակների երկրից է հոսում Արաքս գետը, որը գետանցում է Ալեքսանդրը Պերսեպոլսի մոտ[1359]: Պարետակները հիշատակվում են նաև էլյումացիներից հետո, իսկ նրանց երկիրը՝ Կարմանիայի և Պարթևստանի, նաև Մարաստանի հարևանությամբ[1360]: Պտղոմեոսը գրում է, որ Պարսքի՝ Մարաստանին միացող հատվածը կոչվում է Պարայտակենե[1361]: Պլինիոս Ավագը պարետակեններին հիշատակում է Պարթևքի և Արիանայի միջև, ինչը պետք է ուղղել նշված երկրներից արևմուտք, քանի որ մեկ այլ հաղորդման մեջ Պարետակենեն հիշատակվում է Պարսքի հարևանությամբ[1362], այսինքն՝ դեպի հյուսիս: Ելնելով այս բոլոր տեղեկություններից՝ կարելի է պարետակեններին տեղադ-

[1353] Страбон, с. 690.
[1354] Հերոդոտոս, I, 101:
[1355] Arrian, Vol. I, III, 18, 10-11, p. 284; 19, 1-3, pp. 286, 288.
[1356] Rufus, Vol. I, V, XIII, 1-2, p. 416.
[1357] Ճիշտ անվանումն է Gabai (տե՛ս Дьяконов И., История Мидии, с. 146).
[1358] Страбон, с. 492.
[1359] Անդ, էջ 677:
[1360] Անդ, էջ 85, 675, 684:
[1361] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, p. 66-67. Այս Պարետակենեն նկատի ունի նաև Դիոդորոս Սիկիլիացին (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 27, 133, 139), որի քաղաքն էր Գաբենեն՝ Ռուֆոսի Թաբասը: Հավանաբար Սպահանն է (տե՛ս Frye R., The History of Ancient Iran, p. 149): Gabae/Kabaš-ի մասին տե՛ս Henkelman W. F. M., Imperial Signature and Imperial Paradigm: Achaemenid administrative structure and system across and beyond the Iranian plateau, in: Die Verwaltung im Achämenidenreich. Imperiale Muster und Strukturen/Administration in the Achaemenid Empire. Tracing the Imperial Signature, Herausgegeben von/Edited by B. Jacobs, W. F. M. Henkelman, M. W. Stolper, CO, Band 17, 2017, p. 144.
[1362] Pliny, Natural History, Vol. II, VI, 116; 131, pp. 426, 436, 438.

րել Էլյումայիսից արևելք, Պարսքից հյուսիս, Մարաստանից հարավ, Կարմանիայից արևմուտք՝ ներկայիս Սպահանի շրջանում՝ ընդգրկելով ժամանակակից Զայենդեռուդ գետի ավազանը[1363], ընդ որում, Սպահանը համապատասխանում է Պտղոմեոսի կողմից Պարսքի կազմում հիշատակվող Ասպադանային[1364]:

Հարավային ուղղությամբ Մարաստանը սահմանակից էր Էլյումայիսին, որը աղբյուրներում հիշատակվում է նաև Սուսիանա, Կիսիա կամ Կոսսեյա, Ուքսիա անուններով: Վերջին անունով երկիրը Ստրաբոնը հիշատակում է Սուսայի և Պարսքի միջև՝ նշելով նաև, որ Խոասպես գետը սկիզբ է առնում ուքսերի շրջանից, իսկ ուքսերը և էլյումացիները սահմանակից են մարդերին ու սուսիացիներին, կոսսեյները՝ մարերին[1365]: Արիանոսը քոսայներին, որոնց հետ դաժան հաշվեհարդար է տեսնում Ալեքսանդրը[1366], համարում է ուքսերի հարևանները, որոնք հիմնականում ներկայացնում են Էլամի արևելյան շրջանները, Պարսքի հարևանությամբ. ուքսերի երկրով հոսում էր Պասիտիգրիսը[1367], Դիոդորոս Սիկիլիացու Տիգրիսը[1368]: Արիանոսը քոսեյներին և տապյուրներին համարում է Պարսքին սահմանակից ցեղեր[1369], ինչը տապյուրների դեպքում ճիշտ չէ, իսկ քոսեյների պարագայում պետք է նկատի ունենալ ամբողջ Էլամը, ոչ թե նրա մի մասը: Ռուֆոսը Քոսեյան լեռնե-

[1363] Հմմտ. Herzfeld E., The Persian Empire, p. 301; Дьяконов И., История Мидии, с. 84, 91.
[1364] Herzfeld E., Medisch und Parthisch, AMI, Bd. VII, Ht. I, Berlin, 1934, SS. 9, 11; Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 68-69; Eilers W., Geographische Namengebung in und um Iran. Ein Überblick in Beispielen, Philosophisch-Historische Klasse Sitzungsberichte, Jg. 1982, Heft 5, München, 1982, SS. 5, 12.
[1365] Страбон, с. 494, 676-677, 690. Աքեմենյան թագավորները Սուզայից Պերսեպոլիս անցնելու համար հատուկ նույնիսկ ուքսերին հարկ էին վճարում (Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 118): Խոասպես կամ Քոասպես գետը հոսել է ոչ թե ուքսերի, այլ կոսսեյների երկրից և մի տեղում Ստրաբոնն իրավացիորեն նշում է, որ ուքսերի երկրից հոսել է Պասիտիգրիսը (Страбон, с. 677):
[1366] Плутарх, Александр, LXXII, Избранные жизнеописания, т. II, с. 431.
[1367] Arrian, Vol. I, III, 17, 1, p. 278; Arrian, Vol. II, VII, 10, 6, p. 234; 15, 1-2, p. 254. Համաձայն Ստրաբոնի՝ Պասիտիգրիս գետը հոսում է ուքսերի երկրից (տե՛ս Страбон, с. 688): Մեր կարծիքով, Պասիտիգրիս գետը ներկայիս Ջաարահի գետն է: Դիոդորոս Սիկիլիացին նույնպես գրում է, որ Պասիտիգրիսը հոսում է Ուքսիանեի՝ ուքսերի երկրից (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 99-100, 125-126): Նշենք, որ Պասիտիգրիսը նույնացվել է Քարուն գետին (տե՛ս Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, p. 242; Potts D. T., The Archaeology of Elam: Formation and Transformation of an Ancient Iranian State, Cambridge University Press, 1999, p. 16):
[1368] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 67, p. 169.
[1369] Arrian, Vol. II, VII, 23, 1, p. 282.

րի բնակիչներին հիշատակում է Գավգամելայի ճակատամարտում, բաբելոնացիներից հետո[1370]: Միաժամանակ հայտնում է, որ Պասիտիգրիսը սկիզբ է առնում ուքսերի լեռներից, որոնց մարզը սահմանակից է Շոշին և ենթարկվում էր Շոշի սատրապին[1371]: Ըստ Պտղոմեոսի՝ Սուսիանեի ծովի (նկատի ունի Պարսից ծոցը) ուղղությամբ ընկած շրջանները բնակեցնում են էլյումացիները, իսկ Ասորեստանին հաջորդող տարածքները՝ էլյումացիներից վերև՝ կոսսայները[1372]: Պլինիոս Ավագը ավազակ ուքսերին տեղադրում է Սուսիանայից արևելք[1373]: Բերված տեղեկություններն աներկբա ցույց են տալիս, որ կիսսիացիները, ուքսերը, Քոսեյան լեռների բնակիչները նույնանում են, եթե ոչ էթնիկական, ապա աշխարհագրական առումով, ընդ որում, Էլյումայիս և Սուսիանա անունները կապված են նույն երկրի հետ, որի տարբեր անվանումները գալիս են այս կամ այն ժողովրդի լեզվից, ինչն էլ պատճառ է դարձել, որ հին հեղինակները միևնույն երկրի կամ ժողովրդի տարբեր անվանումները շատ դեպքերում օգտագործել են կողք կողքի և ստացվել է այնպես, որ գործ են ունեցել տարբեր ժողովուրդների հետ:.Օրինակ, Սուսիանա տեղանվան տակ պետք է նկատի ունենալ Սուսա քաղաքը հարակից տարածքով, հին պարսկերեն Huvaža, Hūža, hūžiya, արամեերեն hūzāyē հետ կապված է հունարեն ուքսեր ժողովուրդը և Ուքսիա քաղաքը, ժամանակակից Ահվազը, Էլյումայիս-Էլամը կապվում է էլամերեն Haltamti, Hatamti («Էլամացիների երկիր»[1374]), ակկադերեն Elamtu(m) (ժողովրդական ստուգաբանությամբ կամ շումերերենից թարգմանաբար «Լեռնային կամ Վերին եր-

[1370] Rufus, Vol. I, IV, XII, 10, p. 272. Կոսսեյան լեռները հիշատակում է նաև Ստրաբոնը (տե՛ս Страбон, с. 688): Կիսսիացիների երկիրը՝ Cossion-ը, հիշատակում է Անանուն Ռավեննացին (տե՛ս Ravennatis Anonymi Cosmographia, II, 5, p. 51): Համաձայն Դիոդորոս Սիկիլիացու՝ Մարաստան տանող ճանապարհներից երկրորդն անցնում էր կոսսայների ցեղի միջով, որոնք մասնակցում են Գավգամելայի ճակատամարտին (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 95, 127): Հեղինակը նաև հայտնում է, որ Ալեքսանդրը հնազանդեցնում է Սուզիանան, ուքսերին, կոսսայներին (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 65; 67; 111, pp. 168, 169, 214): Վերջիններիս հեղինակը հիշատակում է Մարաստանի լեռնային շրջաններում, այսինքն՝ հարավում: Հնարավոր է, որ կոսսայները վարչական առումով են մտել Մարաստանի մեջ, թեև նրանց բնակության շրջանը կարող էր տարածվել նաև Սուզիանեից հյուսիս, արդեն Մարաստանի հարավային լեռնային շրջաններում:

[1371] Ռուփոս, էջ 378-379:

[1372] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 58-59, 60-61.

[1373] Pliny, Natural History, Vol. I, VI, 133, p. 438.

[1374] Poebel A., The Name of Elam in Sumerian, Akkadian, and Hebrew, AJSLL, Vol. 48, № 1, p. 21.

կիր»[1375]), արամեերեն Elumāyē հետ[1376]: Կիսսիացի-կոսսեյները, որոնց անվան տակ հույները նկատի են ունեցել իրանական Hūža երկիրը, մասնագիտական գրականության մեջ նույնացրել են կասսիտների հետ, որոնք ապրել են Էլամում և կամ էլ Էլամից հյուսիս՝ Զագրոսի լեռներում՝ հիմնականում Լուրիստանում[1377]: Սուսիանան իր էթնիկական կազմով երբեք էլ ամբողջությամբ իրանալեզու չդարձավ, և եկվոր իրանական ցեղերը ապրում էին տեղի բնակչության հետ կողք կողքի: Չնայած Էլամի էթնիկական խայտաբղետ կազմին, այն քաղաքական առումով ամբողջական էր: Նույն Ստրաբոնի մի քանի հաղորդումներից նույնպես երևում է, որ աշխարհագետը Կոսսեյա երկրի անվան տակ նկատի ունի հին Էլամի տարածքը, ընդ որում, կոսսեյներն օգնել են բաբելոնացիների և սուսիացիների դեմ կռվող Էլյումացիներին[1378]: Կոսսեյների, սուսիացիների, էլյումացիների համատեղ հիշատակությունը կրկին ցույց է տալիս նույն երկրի՝ Էլամ-Էլյումայիսի էթնիկական տարասեռությունը:

Դատելով Ստրաբոնի տեղեկություններից՝ Մեծ Մարաստանին հարավում սահմանակից է եղել Էլյումայիսը, որն աշխարհագետը հիշատակում է Ապոլլոնիատիս-Սիտակենայից արևելք: Էլյումայիսը և Մարաստանը սահմանակցել են Մասսաբատիկայի շրջանում, որը Ստրաբոնը վերագրում է Մարաստանին՝ միաժամանակ նշելով, որ ուրիշների կարծիքով պատկանել է Էլյումայիսին[1379]: Աշխարհագետը հաղորդում է,

[1375] Дьяконов И. М., Языки древней Передней Азии, с. 85; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 5; Poebel A., The Name of Elam in Sumerian, Akkadian, and Hebrew, pp. 22, 24.

[1376] Herzfeld E., The Persian Empire, p. 303. Հմմտ. Potts D. T., The Archaeology of Elam, pp. 309, 350-351, 354, 374-375; Briant P., From Cyrus to Alexander, pp. 726-733. Xūži նշանակում է «կախարդուհի, գուշակուհի»: Էլամը նույնանում է Սուսիանային հունական Էլյումայիսի միջոցով՝ ընդգրկելով ավելի լայն աշխարհագրություն (տե՛ս Basello G. P., Elam between Assyriology and Iranian Studies, in: A. Panaino and A. Piras (eds.). Schools of Oriental Studies and the Development of Modern Historiography. Melammu Symposia 4. Milan: Università di Bologna & Islao, 2004, pp. 8, 10):

[1377] Алиев И., История Мидии, Баку, 1960, с. 79; Дьяконов И. М., Языки древней Передней Азии, с. 87; Herzfeld E., The Persian Empire, pp. 188-190, 303; Меликов Р., Этническая картина Азербайджана в период Ахеменидского владычества (VI-IVвв. до. н. э.), Баку, 2003, с. 74; Языки мира. Древние реликтовые языки Передней Азии, М., 2010, с. 184-187.

[1378] Հեղինակը գրում է, որ Կոսսեյան սահմանակից է Պարսքին (տե՛ս Страбон, с. 494, 690):

[1379] Страбон, с. 494, Մասսաբատիկային նույնանում է Անանուն Ռավեննացու Մասսաբատոնը (տե՛ս Ravennatis Anonymi Cosmographia, II, 5, p. 51):

որ Սուսա քաղաքի բնակիչները կոչվում էին նաև կիսսիացիներ[1380]: Մեկ այլ տեղեկության մեջ Ստրաբոնը գրում է, որ Էլյումայիս տանող ճանապարհներից մեկն անցնում էր Մարաստանից և Զագրոսի շրջանից Մասսաբատիկայի միջով, մյուսը՝ Սուսիանայից Գաբիանայի միջով (Գաբիանան և Մասսաբատիկան Էլյումայիսի նահանգներն են)[1381]: Ըստ էության, Ստրաբոնի ժամանակ Մասսաբատիկան Էլյումայիսի մեջ էր և համապատասխանում է հայկական «Աշխարհացոյց»-ի Մասպտանին[1382]: Պլինիոս Ավագը կոսսիեններից հյուսիս հիշատակում է Մասսաբատեններ՝ գրելով, որ Սուսայի տարածքն Էլյումայիսից բաժանվում է Էվլեոս գետով, որը, սկիզբ առնելով Մեդիայում, հոսում է Մասսաբատենայի միջով[1383]: Էվլեոս գետը համապատասխանում է ներկայիս Դիզ գետին, որը սկիզբ է առնում Մարաստանից և թափվում Քարուն գետը: Մասսաբատիկան՝ Μεσσαβάται ձևով, կիսսիացիների և Քալոնիտիսի միջև հիշատակում է Դիոնիսիոսը[1384]: Մասսաբատիկան հիշատակվում

[1380] Страбон, с. 676.

[1381] Անդ, էջ 691: Պոլիբիոսը գրում է, որ հարավային ուղղությամբ Մարաստանը սահմանակցում է Միջագետքին և Ապոլլոնիայի շրջանին, նաև Պարսքին, ընդ որում, Սուսիանայի շրջանը նկատի ունի, երբ հաղորդում է, որ այս կողմից պաշտպանված է Զագրոսի լեռներով, որտեղ էլ հիշատակում է կոսսայներին, կորբրեններին, կարխերին (տե՛ս The General History of Polybius, pp. 218-219; Polybius, The Histories, Vol. III, V, 44, 7, p. 106): Կոսսայներին Պոլիբիոսը հիշատակում է նաև կիսիացիներ ձևով (տե՛ս The General History of Polybius, pp. 274, 278): Պոլիբիոսը նաև գրում է, որ Սուզիանան Սելևկյանների ժամանակ առանձին վարչական միավոր էր (տե՛ս Polybius, The Histories, Vol. III, V, 46, 7; 54, 12, pp. 112, 134): Նկատենք նաև, որ Մեդիան էլյումացիներին կարող էր սահմանակցել ոչ թե հյուսիսում, ինչպես սխալմամբ գրում է Պոլիբիոսը (անդ, V, 44, 9, p. 108), այլև հարավում:

[1382] Հակոբյան Ա., «Աշխարհացոյց» է դարի Անանունի. գիտա-քննական բնագիր, ՀԱ, 2013, թիվ 1-12, էջ 163: Տե՛ս նաև «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», էջ 40; Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2157; Патканов К. П., Армянская География VII века, с. 64. Հավելված՝ «Աշխարհացոյց է դարու», էջ 22; Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 352:

[1383] Pliny, Natural History, Vol. II, VI, 134-135, pp. 438, 440. Արիանոսի կողմից հիշատակված Էվլեյոս գետը նույնանում է Քարունին (Արիանոս, էջ 247-248): .

[1384] Muller C., Geographi Graeci Minores, Vol. II, Parisiis, 1861, p. 166. Այս տեղեկությունը կրկնում են Ռուփոս Փեստոս Ավիենոսը, Պրիսկիանոսը (անդ, էջ 188, 198): Μεσσαβάται– Μασσαβάται-ը հիշատակում է Պտղոմեոսը (տե՛ս Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, p. 66):

է արևելասասորական եպիսկոպոսությունների թվում[1385]. մայրաքաղաքն էր Սիրավանը[1386]: Մասսաբատիկան՝ Մասաբադան, հիշատակում են նաև արաբական աղբյուրները[1387]: Մյուս կողմից էլ Պլինիոս Ավագը Էլյումայիսը համարում է ծովամերձ շրջան[1388]:

Ստրաբոնի տեղեկությունների[1389] տեղորոշումը ցույց է տալիս, որ Էլյումայիսը գտնվել է Սուսիանայից արևմուտք, կոսսեյները՝ հյուսիս, ուքսերը՝ արևելք՝ ներկայիս Շուշտարից մինչև Իզե և Գաչսարան[1390]: Անկասկած, Սուսիանան Աքեմենյան դարաշրջանում կապված էր մայրաքաղաք Սուսայի հետ, որի շուրջ ընկած տարածքները վարչական առումով կազմում են առանձին միավոր, ինչը հետագայում դառնում է աշխարհագրական հասկացություն: Էլյումացիները հիշատակվում են ոչ միայն Բաբելոնիայի հարևանությամբ, այլև ուքսերի հարևանությամբ[1391]: Այս վերջին հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ Էլամ անունը շարունակում էր պահպանվել նախկին էլամական թագավորության ծայրամասերի՝ հիմնականում բարձրալեռնային տարածքների վրա: Իսկ Սուսիանան հարավում տարածվում էր մինչև Պարսից ծոց[1392]:

Գավգամելայի ճակատամարտին Արիանոսը սուսիաններին և ուքսերին հիշատակում է միասին՝ Աբուլիտի որդի Օքսաթրի հրամանատարությամբ[1393]: Ռազմադաշտում սուսիանները և ուքսերը գտնվում էին արդեն պարսից բանակի տարբեր թևերում[1394]: Արիանոսի տեղեկություններից հստակ է, որ այսպես կոչված դաշտային ուքսերը գտնվել են Սուսայի սատրապի՝ Աբուլիտի ենթակայության տակ, իսկ լեռնային ուքսերն անկախ էին[1395]: Աբուլիտին ավելի ուշ փոխարինում

[1385] Guidi I., Ostsyrische Bischofe und Bischofssitze im V, VI und VII Jahrhundert, ZDMG, Bd. 43, Leipzig, 1889, S. 412; Chabot J. B., Synodicon Orientale, Paris, 1902, pp. 366, 368.

[1386] Marquart J., Ērānšahr, S. 20; Колесников А., Иран в начале VII века, ПС, Л., 1970, с. 103.

[1387] Патканов К. П., Армянская География VII века; Marquart J., Ērānšahr, S. 20; Колесников А., Завоевание Ирана арабами (Иран при «праведных халифах»), М., 1982, с. 112, 190.

[1388] Pliny, Natural History, Vol. II, VI, 136, p. 440.

[1389] Страбон, с. 494, 686, 690.

[1390] Bahadori A., Achaemenid Empire, Tribal Confederations of Southwestern Persia and Seven Families, IS, Vol. 50, № 2, p. 9.

[1391] Страбон, с. 679.

[1392] Անդ, էջ 676:

[1393] Արիանոս, էջ 97:

[1394] Անդ, էջ 101:

[1395] Անդ, էջ 108-109:

է Օքսաթրը, որին ենթարկվում էին նաև պարետակենները[1396]: Արիաննոսը նաև ուքսերի և քոսեներին հարևաններ է համարում[1397]:

Ռուփոսը Գավգամելայի ճակատամարտում ուքսերի փոխարեն հիշատակում է բելիտներին՝ Քոսեյան լեռների բնակիչներին, որոնք և սուսացիները գտնվում էին բանակի տարբեր թևերում[1398]: Ռուփոսը նույնպես Աբուլիտին հիշատակում է որպես Սուզայի սատրապ[1399]: Ըստ Ռուփոսի՝ Ալեքսանդր Մակեդոնացին ուքսերի մարզը մտնում է Պասիտիգրիսն անցնելուց հետո. ընդ որում, պատմիչը ուքսերի մարզը հիշատակում է Պարսքի և Սուզայի միջև՝ չմտցնելով Սուզայի սատրապության մեջ: Ուքսերն ունեին առանձին սատրապ, և նրանց հպատակեցնելուց հետո Ալեքսանդրը ուքսերին դնում է Սուզայի սատրապի ենթակայության տակ[1400]:

Ամփոփենք: Կատարված քննությունը ցույց է տալիս, որ հին Էլամի տարածքն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության դարաշրջանում համապատասխանում էր Էյումայիս, Սուսիանա, Կիսիա կամ Քոսսեյա, Ուքսիա անուններով երկրներին, որոնցից յուրաքանչյուրն աշխարհագրական առումով ամբողջությամբ կամ մասամբ նույնանում էր Էլամին կամ վերջինիս այս կամ այն մասին:

3.9. Բաբելոնական սատրապության վարչական բաժանումը

Համաձայն Քսենոփոնի՝ մ. թ. ա. 539 թվականին ասորեստանցիներին և բաբելոնացիներին նվաճել էր Կյուրոս Բ-ն[1401], Դիոդորոս Սիկիլիացու Նինոսը[1402]: Ընդ որում, «Կյուրոպեդիա»-ում Կյուրոսի կողմից Ասորեստանի նվաճումը որոշակիորեն համապատասխանում է Հերոդոտոսի «Բաբելոնիայի լոգոսին»[1403]: Սեպագիր և անտիկ աղբյուրները Բաբելոնի նվաճման վերաբերյալ հիմնականում տալիս են միանման տեղեկություններ: Այսպես, «Նաբոնիդի ժամանակագրության» մեջ

[1396] Անդ, էջ 112:
[1397] Անդ, էջ 259:
[1398] Ռուփոս, էջ 350:
[1399] Անդ, էջ 376-377:
[1400] Անդ, էջ 378-379: Ուքսերի ցեղից էր Դարեհ Գ-ի մայրը՝ Սիսյուգամբիսը (տե՛ս Bahadori A., Achaemenid Empire, Tribal Confederations..., p. 10):
[1401] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5:
[1402] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 16:
[1403] Henkelman W. F. M., Kuhrt A., Rollinger R., Wiesehöfer J., Herodotus and Babylon Reconsidered, CO, Band 3, Herausgegeben von R. Bichler, B. Jacobs, G. B. Lanfranchi, R. Rollinger, K. Ruffing und J. Wiesehöfer, Wiesbaden, 2011, pp. 449-470.

խոսվում է այն մասին, որ Գուտիումի կառավարիչ[1404] Ուգբարուն պարսիկների հետ միասին բաբելոնացիներին ջախջախում է Օպիսի մոտ, այնուհետև գրավում Սիպպարը: Կյուրոս Բ-ն մ. թ. ա. 539 թվականի հոկտեմբերի 29-ին առանց կռվի, մեծ հանդիսավորությամբ, Մարդուկ աստծու կարգադրությամբ[1405] մտնում է Բաբելոն՝ իր իշխանությանը տալով անձնական ունիայի բնույթ[1406]: Միայն մ. թ. ա. 481 թվականին, դաժանորեն ճնշելով Բաբելոնի ապստամբությունը, Քսերքսեսը ոչնչացնում է նաև ձևականորեն գոյություն ունեցող Բաբելոնի թագավորությունը՝ այն վերածելով սովորական սատրապության[1407]: Այս ընդարձակ սատրապության բաժանումը երկու սատրապությունների սովորաբար թվագրում են ապստամբության ճնշումից հետո[1408], սակայն Անդրգետքի՝ Eber-nāri-ի առանձնացումը տեղի էր ունեցել Դարեհ Ա-ի ժամանակ:

Բաբելոնի գրավումն անկասկած նշանակում էր նաև Միջերկրածովքի արևելյան ափի հարուստ քաղաքների նկատմամբ գերիշխանության հաստատում, քանի որ դրանք գտնվում էին Բաբելոնի տնտեսական տիրույթում[1409]: Բաբելոնի և ամբողջ Միջագետքի կառավարիչ է նշանակ-

[1404] Գուտիումը նույնացվել է Մեդիա-Մարաստանի հետ (տե՛ս Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 51): Մեր կարծիքով, դատելով «Անաբասիս»-ի այն տեղեկություններից, որ բուն ասորեստանյան տարածքները՝ Լարիսսան և Մասպիլան, ժողովրդի հիշողության մեջ մնացել էին մեդական տարածքներ (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 74-75; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 150), ուրեմն Գուտիումը կարելի է տեղադրել այս շրջանում կամ էլ, նկատի ունենալով Օպիսի ճակատամարտը, կարելի է եզրակացնել, որ Գուտիումը գտնվում էր Օպիսից արևելք (հմմտ. Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 311; Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, p. 212; Briant P., From Cyrus to Alexander, p. 42): Ա. Օլմսթեդը գտնում էր, որ բաբելոնացիները Գուտիում էին անվանում Էլամը (տե՛ս Olmstead A. T., History of the Persian Empire, p. 45), Պ. Լեկոքը Գուտիումը լայն առումով տարածում է, այսպես կոչված, Իրանական Քրդստան կոչվող ժամանակակից տարածքի վրա (տե՛ս Lecoq, p. 182):
[1405] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 51-52; Van der Spek R. J., Cyrus the Great, Exiles, and Foreign Gods, pp. 235, 261-263.
[1406] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 38, 44; Фрай Р., Наследие Ирана, с. 119; "Mesopotamian Chronicles", pp. 236, 238; Briant P., From Cyrus to Alexander, pp. 41-42; Mallowan M., Cyrus the Great (558-529 B. C.), Iran, Vol. X, 1972, p. 10; Kuhrt A., The Cyrus Cylinder and Achaemenid Imperial Policy, JSOT, 1983, Vol. 8, № 25, pp. 83-97.
[1407] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 137-138; Kuhrt A., Achaemenid Babylonia: Sources and Problems, in: AH IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 183; Dandamaev M., Achaemenid Mesopotamia, p. 230.
[1408] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 293; Stolper M. W., Bēlšunu the Satrap, in: Language, Literature, and History: Philological and Historical Studies Presented to Erica Reiner, ed. by F. Rochberg-Halton, American Oriental Society, New Haven, Connecticut, 1987, p. 396.
[1409] Mallowan M., Cyrus the Great (558-529 B. C.), p. 9.

վում Ուգբարուն, որը երեք շաբաթ անց մահանում է: Ուգբարուից հետո արքայազն Կամբյուսեսը նշանակվում է Բաբելոնիայի թագավոր, սակայն նրա ձեռքում միայն Բաբելոն քաղաքն էր՝ երկրի հյուսիսային մասի հետ: Անհայտ պատճառներով Կամբյուսեսը թագավորում է ընդամենը ինն ամիս և մ. թ. ա. 537 թվականին հեռացվում է Բաբելոնի գահից:

Մ. թ. ա. 535 թվականին Կյուրոսը ստեղծում է Միջագետքի և Եփրատից արևմուտք ընկած երկրների միացյալ սատրապությունը նիզակակիր Գաուբարուվա-Գուբարու-Գոբրյուասի[1410] ղեկավարությամբ[1411]: Մ. թ. ա. 520 թվականին այս ընդարձակ նահանգի սատրապ է նշանակվում պարսիկ Ուշտանուն[1412], սակայն շուտով Դարեհ Ա-ն սատրապությունը բաժանում է երկու մասի. Բաբելոնիայի սատրապ՝ *bēl pehāti* է նշանակվում Ուշտանուն[1413], իսկ Անդրգետքի սատրապ՝ Թաթնայը, որը վարչական առումով ենթարկվում էր Ուշտանուին[1414]: Միջագետքի գրավումից հետո Աքեմենյան թագավորական ընտանիքը և պարսից ազնվականությունը տիրանում են ընդարձակ կալվածքների՝ ստանալով վիթխարի եկամուտներ: Միջագետքում ընդարձակ կալվածքներ ուներ, օրինակ, Եգիպտոսի սատրապ Արշամեսը[1415]:

Հույն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով բաբելոնական սատրապությանը, գրում է. «Բաբելոնից և մնացյալ Ասորեստանից ստացվում էին հազար տաղանդ (հարկ-Հ. Խ.) և հինգ հարյուր ներքինիացված տղաներ. սա իններորդ նահանգն էր»[1416]: Այս գերհարուստ սատրապությունը[1417] Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակին տրամադրել էր զորամասեր. «Արշավին մասնակցող ասորեստանցիները իրենց գլխին կրում էին պղնձե սաղավարտներ, անհասկանալի և անբացատրելի կերպով հյուսված: Նրանց վահանները, նիզակները և դաշույնները նման էին եգիպտականներին: Բացի այդ, նրանք ուներն երկաթե ելունդներով փայտե դագանակներ: Սրանց հելլենները կոչում էին սյուրիացիներ, իսկ բարբարոսները՝ ասորեստանցիներ: Սրանց մեջ էին նաև խալդայները: Սրանց առաջնորդում էր Օտասպեսը՝ Արտաքայեսի որդին»[1418]: Առաջին տեղեկությունից պարզվում է, որ IX սատրապությունը կազմված էր վարչական երկու ենթաշրջաններից՝ Բաբելոն քաղաքն իր շրջակայքով և դեպի հյուսիս ընկած Ասորեստանի մի մասով: Այլ կերպ ասած՝ Աքեմենյան Պարսկաստանի այս նահանգը հիմնականում ընդգրկում էր Ստորին Միջագետքը՝ Բաբելոնիայի մարզը[1419], և հին Աշշուրի տարածքը: Ընդ որում, Ասորեստանի հյուսիսարևմտյան ընդարձակ մի հատվածը մտնում էր հայկական սատրապության կազմի մեջ[1420]:

Հերոդոտոսի երկրորդ տեղեկության մեջ բաբելոնացիներն անվանական չեն հիշատակվում, սակայն ասորեստանցիների և խալդայների կամ քաղդեացիների հիշատակումը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է IX սատրապությունից հավաքագրված զորամասերին: Հերոդոտոսն իր մյուս տեղեկություններում Եփրատի ափին գտնվող Բաբելոնը համարում է Ասորեստանի, այսինքն՝ Նոր Բաբելոնական թագավորության[1421] ամենահայտնի քաղաքը՝ գունեղ ներկայացնելով քաղաքի ամրությունները և հիշատակելով քաղաքի՝ Շամիրամի, Նինոսյան, Քաղդեական, Բելյան, Կիսսիյան դարպասները[1422]: Հերոդոտոսը Բաբելոնը համարում է չափազանց հարուստ քաղաք և պատմիչի տեղեկություններից պարզվում է, որ բացի IX սատրապության համար ամրագրված հազար տաղանդ՝ 30 տոննա արծաթ հարկից և հինգ հարյուր ներքինիացված տղաներից, այս սատրապությունը պարտավորվում էր տարվա չորս ամիսներին պահել արքային և նրա զորքերը, իսկ Բաբելոնի

[1410] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 170, 172, 179, 181-194 և այլն: Տե՛ս նաև Petit Th., Satrapes et satrapies..., pp. 51-52, 186; Vogelsang W., Medes, Scythians and Persians: The Rise of Darius in a North-South Perspective, IA, 1998, Vol. 33, p. 206.
[1411] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 54, 72, 77; Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 111; Kent R., Նշվ. աշխ., էջ 130; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 56; Dandamayev M., Iranians in Achaemenid Babylonia, p. 3.
[1412] Rainey A. F., The Satrapy "Beyond the River", pp. 53, 56; Stolper M. W., The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C., p. 289. Այս միացյալ սատրապության կամ Բաբելոնի և Անդրգետքի սատրապների ցանկը տե՛ս Stolper M. W., The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C., pp. 290-303; Oppenheim A., The Babylonian Evidence of Achaemenian Rule in Mesopotamia, in: The Cambridge History of Iran, Vol. 2, Cambridge University Press, 1985, pp. 563-565.
[1413] Dandamaev M., Achaemenid Mesopotamia..., p. 230.
[1414] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 54; նույնի՝ Политическая история Ахеменидской державы, с. 138; նույնի՝ Iranians in Achaemenid Babylonia, p. 4; Petit Th., Satrapes et satrapies..., pp. 188-189.
[1415] Kuhrt A., Achaemenid Babylonia, p. 185.
[1416] Հերոդոտոս, III, 92:
[1417] Jursa M., Taxation and Service Obligations in Babylonia from Nebuchadnezzar to Darius and the Evidence for Darius' Tax Reform, CO, Band 3, Herausgegeben von R. Bichler, B. Jacobs, G. B. Lanfranchi, R. Rollinger, K. Ruffing und J. Wiesehöfer, 2011, pp. 431-448.
[1418] Հերոդոտոս, VII, 63; Herodotus, Vol. III, VII, 63, p. 378.
[1419] Հերոդոտոս, I, 106:
[1420] Խորհկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 37 և հաջ.:
[1421] Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 148.
[1422] Հերոդոտոս, I, 178-181; III, 155, 158:

սատրապը համարվում էր ամենահարուստը և հզորը[1423]:

Հերոդոտոսի տեղեկությունները թույլ են տալիս որոշակիորեն հստակեցնել նաև IX սատրապության սահմանները: Այսպես, պատմիչի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Նինվեն կամ Նինոսն այս սատրապության հյուսիսային մասում էր գտնվում, Իս քաղաքը՝ «հում բիտում. ասֆալտ» նշանակությամբ, նույնանում է շումերական Իդին կամ Իդուին, աքքադերեն Իտտուին, արաբական Հիթին և գտնվում էր Բաբելոնից հյուսիս-արևմուտք՝ ութ օրվա ճանապարհի կամ 180 կմ[1424] հեռավորության վրա, իսկ Օպիս քաղաքը՝ սատրապության արևելյան մասում[1425]:

IX սատրապության տարածքի հստակեցման համար կարևոր նշանակություն ունեն Քսենոփոնի «Անաբասիս»-ում հիշատակվող տեղեկությունները: Համաձայն պատմիչի՝ Սիրիան արևելքում տարածվել է մինչև Արաքսես-Խաբուր գետը[1426]: Անցնելով Խաբուրը՝ Կյուրոս Կրտսերի բանակն անցնում է Արաբիայի անապատներով[1427]՝ հասնելով Մասկաս գետի ափին գտնվող Կորստե քաղաքը[1428]: Այստեղից բանակը հասնում է, ըստ էության, Բաբելոնիայի սահմանը՝ Պյուլե (բառացի «դարպաս») վայրը[1429]: Եփրատի աջ ափին Քսենոփոնը հիշատակում է Քարմանդե՝ ներկայիս Հիթ խոշոր քաղաքը[1430], այսինքն՝ Կյուրոս Կրտսերի բանակն արդեն Բաբելոնիայում էր: Քսենեփոնի հետագա շարադրանքից պարզվում է, որ Սիտակե[1431] և Օպիս քաղաքները մտնում էին Բաբելոնիայի մեջ, որի սատրապն էր Հռոպարասը[1432], վերջինիս այս պաշտոնում նախորդել էր Սիրիայի և Ասսյուրիայի

[1423] Անդ, I, 192; Dandamaev M., Achaemenid Mesopotamia..., p. 229. Բաբելոն քաղաքի ավերակները գտնվում են Բաղդադից 85 կմ դեպի հարավ (տե՛ս "A Commentary on Herodotus Books I-IV", p. 198): Բաբելոն քաղաքի նկարագրության վերլուծությունը մանրամասն տե՛ս MacGinnis J., Herodotus' Description of Babylon, BICS, 1986, № 33, pp. 67-86.

[1424] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 199.

[1425] Հերոդոտոս, I, 178-179, 189, 193; Արիանոս, էջ 248-249:

[1426] Այս մասին տե՛ս Խորիկյան Հ., Սիրիան Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգում, ՀԱ, 2015, թիվ 1-12, էջ 9-24:

[1427] Հմմտ. Herzfeld E., The Persian Empire, p. 306.

[1428] Xenophon, Anabasis, Vol. III, I, V, 1-4, p. 46.

[1429] Անդ, I, V, 5, էջ 48:

[1430] Անդ, I, V, 10, էջ 50:

[1431] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 28, 32.

[1432] Քսենոփոն, Անաբասիս, էջ 48-49, 197:

սատրապ Բելեսյուսը[1433]: Օպիսից հյուսիս ընկած տարածքները Քսենոփոնը համարում է Մեդիա[1434], ինչը, սակայն, աշխարհագրական բովանդակություն ունի, քանի որ վարչական առումով հույները գտնվում էին IX սատրապության տարածքում[1435]: Հունական զորաբանակն անցնում է Կայնայ քաղաքով, հասնում է Մեծ Զաբ գետին՝ շարժվելով Տիգրիս գետի հոսանքն ի վեր: Մասպիլայից հյուսիս մինչև կարդուխների երկիրն ընկած տարածքը նույնպես կարելի է համարել այս սատրապության մասը: Մեջբերված տեղեկություններից կարելի է նաև ենթադրել, որ մ. թ. ա. V դարի վերջին նախկին IX սատրապության ենթաշրջան կազմող Ասորեստանը միացել էր Սիրիային կամ V սատրապությանը, իսկ Բաբելոնիան դարձել էր առանձին սատրապություն: Սակայն կարծում ենք, որ առավել հավանական է ենթադրել, որ Ասորեստանը շարունակում էր Բաբելոնիայի հետ մնալ մեկ սատրապություն: Ամենայն հավանականությամբ Հերոդոտոսի «մնացյալ Ասորեստան» կոչված մարզը հետագայում վերանվանվում է Արբելիտիս[1436] (=Սագարտիա[1437])՝ դառնալով առանձին սատրապություն[1438]:

[1433] Stolper M. W., Bēlšunu the Satrap, pp. 391-392, 395; հմմտ. Ctesias' History of Persia, pp. 133-135, 146. Մ. Ստոլպերը միաժամանակ ընդգծում է, որ Բաբելոնի կառավարչի պաշտոնը նույնական չէր Բաբելոնիայի սատրապի պաշտոնին (Stolper M. W., Bēlšunu the Satrap, pp. 396-397; հմմտ. Parpola S., Sacas, India, Gobryas, and the Median Royal Court: Xenophon's *Cyropaedia* through the Eyes of an Assyriologist, in: Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. by G. B. Lanfranchi, M. Roaf and R. Rollinger, History of the Ancient Near East, Monograph series 5, Padova, 2003, pp. 345-349): Նշենք, որ Բելշունու-Բելեսյուս անունով Բաբելոնի մի քանի կառավարիչներ են եղել, որոնցից մեկը հիշատակվում է Արտաքսերքսես Ա-ի ժամանակ (մ. թ. ա. 465-424): Վերջինիս օրոք Կտեսիասը որպես Բաբելոնիայի սատրապ հիշատակում է արքայի եղբայր Արտարիոսին (տե՛ս Ctesias' History of Persia, p. 189):

[1434] Քսենոփոն, Անաբասիս, էջ 50; Kuhrt A., The Assyrian Heartland in the Achaemenid Period, Dans les pas des Dix-Mille, éd. P. Briant, Pallas, 43, 1995, pp. 242-243; Tuplin Ch., Xenophon in Media, in: Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. by G. B. Lanfranchi, M. Roaf and R. Rollinger, History of the Ancient Near East, Monograph series 5, Padova, 2003, pp. 358-361.

[1435] Հմմտ. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի մարական սատրապության տարածքը և սահմանները, ՄՄԱԵԺ, h. XXX, 2016, էջ 60: Միաժամանակ նշենք, որ «մնացյալ Ասորեստան» մարզը զուտ աշխարհագրական պատկերացումներով կարող էր համարվել մարական սատրապության ենթաշրջաններից մեկը, որի կառավարիչն էր Արբակասը:

[1436] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 28, 32; Pliny, Natural History, Vol. II, VI, 41, p. 368.

[1437] Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, SS. 149, 151.

[1438] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 39, p. 266; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, SS. 151-152.

Գավգամելայի ճակատամարտին բաբելոնացիներն «արտաքսված»՝ վերաբնակեցված կարիացիների և սիտակենների հետ Բուպարի, իսկ Կոյլեսիրիայի և Միջագետքի սիրիացիները, այսինքն՝ ասորեստանցիները, Մազեյի հրամանատարության տակ էին[1439], որը քիչ ավելի ուշ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվեց Բաբելոնի սատրապ[1440]: Ռուփոսը նույն ճակատամարտին բաբելոնացիներին և սիրիացիներին, հավանաբար ասորեստանցիներին, հիշատակում է առանձին-առանձին[1441], ինչը կրկին խոսում է այն մասին, որ նախկին IX սատրապությունն արդեն բաժանվել էր երկու սատրապությունների՝ Ասորեստանը միացվել էր Սիրիային, իսկ Բաբելոնիան առանձին սատրապություն էր: Վերջինիցս Ալեքսանդր Մակեդոնացին բաժանում է Սիտակենեն՝ դարձնելով սատրապություն[1442]:

Հարկ է նշել նաև, որ հին հեղինակների համար որոշ տեղեկություններում Միջագետքը հենց Ասորեստանն է, իսկ Բաբելոնիան գտնվում էր Ասորեստանից հարավ[1443]: Ստրաբոնն Աթուրիան՝ Ասորեստանը, սահմանակից է համարում Արբելայի շրջանին, այն դեպքում, երբ վերջինս նույնպես Ասորեստանի բուն տարածքն է եղել: Մյուս կողմից Արբելան համարում է Բաբելոնիայի մասը[1444]: Նման աշխարհագրական պատկերացումով Ստրաբոնը, կարծես թե, նկարագրում է Աքեմենյան Պարսկաստանի IX սատրապության տարածքը:

Բաբելոնիայի և հարևան երկրների սահմանների ճշգրտման համար կարևոր են Ստրաբոնի տեղեկությունները: Այսպես, անդրադառնալով բաբելոնացիներին՝ հույն պատմիչը գրում է, որ նրանց հետ հյուսիսում սահմանակցում են հայերը և մարերը մինչև Զագրոսի գետը և սրա շուրջ ապրող ցեղերը[1445]: Նկատի ունենալով Ստրաբոնի այլ հաղորդումները[1446] կարող ենք եզրակացնել, որ ամասիացի աշխարհագետի համար Բաբելոնն ընդարձակ երկիր էր՝ ընդգրկելով գրեթե ամբողջ Միջագետքը, որը սահմանակից է եղել և՛ Հայաստանին, և՛

[1439] Arrian, Vol. I, III, 8, 5-6; 11, 4-5, pp. 246, 256.
[1440] Արիանոս, էջ 107, 262, 267; Ռուփոս, էջ 371, 375: Պլուտարքոսի մոտ սատրապի անունն է Հարպալոս (տե՛ս Plutarch's Lives, Vol. VII, Alexander, XXXV, p. 332), որը, հավանաբար, այլ պաշտոն է ունեցել:
[1441] Ռուփոս, էջ 350-351:
[1442] Անդ, էջ 375:
[1443] Արիանոս, էջ 96, 267:
[1444] Страбон, с. 684-685.
[1445] Անդ, էջ 686:
[1446] Ստրաբոնը գրում է, որ հնում Ասորեստանի մայրաքաղաքը Բաբելոնն էր, և Ադիաբենը Բաբելոնի մի մասն էր (անդ, էջ 690-691):

Մարաստանին՝ վերջինիցս բաժանված լինելով Զագրոսով[1447]:

Համաձայն Ստրաբոնի՝ Սիտակենեն ընդարձակ և բերրի գավառ է Բաբելոնի և Սուսիանայի միջև[1448]: Հեղինակը հայտնում է, որ Սուսիանային հարևանությամբ գտնվող Բաբելոնի մի մասը հայտնի է եղել Սիտակենե և Ապոլլոնիատիս անվանումներով[1449]: Մեկ այլ տեղեկությունում էլ գրում է, որ Զագրոսից հետո Բաբելոնից վերև էլյումացիների և պարետակենների լեռնային երկիրն է, իսկ Մարաստանից վերև՝ կոսսեյների երկիրը[1450]:

Բաբելոնիան և Ասորեստան-Աթուրիան բազմիցս հիշատակվում են պարսկական սեպագիր արձանագրություններում: Նշված երկրները կողք կողքի կամ առանձին-առանձին հիշատակվում են Բեհիսթունի և այլ արձանագրություններում[1451]: Բաբելոնիան երկու անգամ մ. թ. ա. 522-521 թվականներին ապստամբում է Դարեհ Ա-ի դեմ՝ փորձելով անկախանալ[1452]: Դարեհ Ա-ի դեմ ապստամբում է նաև Ասորեստանը[1453]: Բեհիսթունի արձանագրության տեղեկություններից երևում է, որ Դարեհի Ա-ի դեմ ապստամբել էր գրեթե ամբողջ Միջագետքը:

Այսպիսով, բաբելոնական կամ IX սատրապությունն Աքեմենյան կայսրության ամենահարուստ նահանգն էր և տնտեսական կենտրոնը: IX սատրապությունը կազմված էր վարչական երկու ենթաշրջաններից՝ Բաբելոն քաղաքից և դեպի հյուսիս ընկած «մնացյալ Ասորեստանից»: Հին աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Աքեմենյան Պարսկաստանի այս նահանգը հիմնականում ընդգրկում էր Ստորին Միջագետքը՝ Բաբելոնիայի մարզը, և հին Աշշուրի տարածքը: Ընդ որում, Ասորեստանի հյուսիսարևմտյան ընդարձակ մի հատվածը մտնում էր հայկական սատրապության կազմի մեջ:

3.10. Մարական սատրապության տարածքը

Դարեհ Ա Վշտասպորդին, սպանելով Գաումատային և ճնշելով հպատակ ժողովուրդների ապստամբությունները, կատարում է վարչական վերակազմություններ՝ պետության տարածքը բաժանելով 20 սատրապությունների, որոնցից X-ն ընդգրկում է բուն մարական տարածքները:

[1447] Անդ, էջ 492:
[1448] Անդ, էջ 690:
[1449] Անդ, էջ 679:
[1450] Անդ, էջ 492:
[1451] Kent R., Նշվ. աշխ., էջ 117, 136-137, 140-141, 143, 145, 151, 156:
[1452] Անդ, էջ 118, 126:
[1453] Անդ, էջ 121-122:

Հերոդոտոսը մարական սատրապության մասին գրում է. «Ագբատանան, Մեդիայի մնացյալ մասը, պարիկանիները և օրթոկորյուբանտիները վճարում էին չորս հարյուր հիսուն տաղանդ. սա տասներորդ նահանգն էր»[1454]: Տեղեկությունը ցույց է տալիս, որ մարական սատրապության տարածքը վարչական առումով կազմված էր չորս ենթաշրջաններից՝ Ագբատանա-Էկբատանա, Մեդիայի մնացյալ մաս, պարիկանիների և օրթոկորյուբանտիների[1455] բնակության տարածքներ:

Բեհիսթունի արձանագրությունում Մարաստանը հիշատակվում է Դարեհ Ա-ին հպատակ երկրների շարքում: Ընդ որում, Մարաստանը Դարեհի դեմ ապստամբած երկրներից մեկն էր[1456]: Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվում են բազմաթիվ տեղանուններ, որոնց գոնե մոտավոր կամ հավանական տեղորոշումը թույլ է տալիս պատկերացնել Մարաստանի տարածքային ընդգրկման սահմանները: Այսպես, Նիսայա գավառում հիշատակվում է Սիկայավատիշ ամրոցը[1457], որի տեղադրությունն անորոշ է: Սակայն Նիսայա գավառը նույնանում է անտիկ աղբյուրներում հիշատակվող Նիսեային՝ Ղազվինի շրջանում[1458]: Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվում են նաև մարական Մարուշ, Կամպանդա, Կունդուրուշ, Ռագա, Հագմաթանա տեղավայրերը[1459]: Վերջին երկու քաղաքներից առաջինը համապատասխանում է ներկայիս Ռեյին, որի անունով՝ Մարաստանի մի հատվածը, կոչվում էր Ռագիական Մեդիա, իսկ երկրորդը՝ սկզբնաղբյուրներում հիշատակվող Էկբատանա-Համադանն է՝ Վերին Մեդիայի գլխավոր քաղաքը և հին Մարաստանի մայրաքաղաքը[1460]: Մարուշը տեղադրվել է ներկայիս Հարունաբադի մոտ, Կունդուրուշը՝ Ղազվինի մոտ, իսկ Կամպանդան անտիկ աղբյուրների Կամբադենեն է Փոքր Մեդիայում՝

[1454] Հերոդոտոս, III, 92:

[1455] Պարիկանիների և օրթոկորյուբանտիների մասին տե՛ս Хорикян О. Г., Об этническом составе X сатрапии ахеменидской Персии, МИ, вып. 6, 2015, с. 128-132.

[1456] Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, էջ 8, 12; Schmitt R., Die altpersischen Inschriften der Achaimeniden, SS. 39, 51.

[1457] Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, էջ 10:

[1458] Diakonoff I. M., Media, in: The Cambridge History of Iran, Vol. 2: The Median and Achaemenian Periods, Cambridge, 1985, pp. 36-148.

[1459] Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, էջ 13-14, 16:

[1460] Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 173-174: Կամբադենեում գտնվում էր Բապտանա քաղաքը Բեհիսթունի մոտ, իսկ Վերին Մեդիան սկսվում էր Կոնկոբար՝ ներկայիս Կենգավեր քաղաքով (անդ, էջ 173, 179):

ներկայիս Քերմանշահի շրջանում[1461]:

Ըստ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկի՝ Մարաստանի միացումը Պարսքին տեղի է ունեցել խաղաղ ճանապարհով[1462], ինչն այլ աղբյուրներով չի հաստատվում: Մարաստանի պատմության վերաբերյալ կարևոր են հույն պատմիչ Հերոդոտոսի տեղեկությունները: Համաձայն վերջինիս՝ Քսերքսեսի հելլենական արշավանքի ժամանակ մարեր-մեդացիները հիշատակվում են պարսիկներից հետո՝ Աքեմենյան Տիգրանեսի հրամանատարությամբ[1463]: Մեդացիները տրամադրել էին նաև հեծելազոր[1464]: Հույն պատմիչի այս տեղեկությունները խոսում են մարերի՝ Աքեմենյանների պետության մեջ զբաղեցրած բարձր դիրքի մասին[1465]: Պատմիչը նաև հաղորդում է, որ Կյուրոս Մեծը կրտսեր որդուն՝ Տանաոքսարեսին, կարգում է մեդացիների, հայերի և կադուսիների սատրապ[1466]: Այս տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Տանաոքսարեսի՝ Բարդիայի տիրույթները գտնվել են Միջին Ասիայում[1467], և Քսենոփոնը փոխել է Կտեսիասի մոտ հիշատակվող երկրների անունները[1468]:

Հետաքրքիր են նաև Քսենոփոնի «Անաբասիս» երկի տեղեկությունները Մարաստանի մասին: Եկբատանան նշվում է որպես Աքեմենյան արքաների ամառային նստավայր[1469]: Քսենոփոնը հիշատակում է Մեդական պարիսպը Բաբելոնից հյուսիս՝ Սիպպարից մինչև Օպիս[1470]: Վերջի-

[1461] Алиев И., История Мидии, с. 312; Tuplin Ch., Darius' Accession in (the) Media. Writing and Ancient Near Eastern Society: Papers in honour of Alan R. Millard, New York, 2005, p. 221; Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 173: Ըստ Յ. Մարկվարտի՝ Փոքր Մեդիան համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի Քուստի Խորվարան վարչական շրջանի Մայ աշխարհին (տե՛ս Marquart J., Ērānšahr, S. 18):

[1462] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 351:

[1463] Հերոդոտոս, VII, 62: Հմմտ. IX, 31:

[1464] Անդ, VII, 86:

[1465] Հմմտ. Brown S., Media in the Achaemenid Period: the Late Iron Age in Central West Iran, in: AH IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 74.

[1466] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 362; Xenophon, Cyropaedia, Vol. II, VIII, VII, 11, pp. 428-429; Vogelsang W., Medes, Scythians and Persians, p. 210.

[1467] Կտեսիասը Բարդիայի տիրույթներն է համարում Բակտրիան, Խորեզմը, Պարթևքը, Կարմանիան (տե՛ս Пьянков И. В., Средняя Азия в известиях античного историка Ктесия (текст, перевод, примечания), Душанбе, 1975, с. 93):

[1468] Пьянков И. В., Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана, ВДИ, 1961, 4, с. 98-103.

[1469] Քսենոփոն, Անաբասիս, էջ 81:

[1470] Անդ, էջ 27, 48:

նիցս հյուսիս ընկած տարածքը հիշատակվում է որպես Մարաստան[1471]: Համաձայն Քսենոփոնի՝ Լարիսսա (Նիմրուտ) և Մասպիլա (Նինվե) քաղաքները հնում բնակեցրել են մեդացիները[1472]: Ընդ որում, Հայաստանից հարավ ընկած տարածքները Քսենոփոնը հիշատակում է որպես Մարաստան[1473]: Մեր կարծիքով, մ. թ. ա. V դարի վերջին Աքեմենյան տերության սատրապական համակարգը ենթարկվել էր վարչական վերակազմության: Եթե Դարեհ Ա-ի ժամանակ Հյուսիսային Միջագետքի մի մասը «մնացյալ Ասորեստան» վարչական հասկացության տակ Բաբելոնի հետ կազմել էր IX սատրապությունը, ապա Քսենոփոնի ժամանակ այդ «մնացյալ Ասորեստանը» միացվել էր Մարաստանի սատրապությանը և դարձել վերջինիս ենթաշրջաններից մեկը, որի հյուպարքոսն էլ, թերևս, «Անաբասիս»-ի վերջում հիշատակված Մարաստանի սատրապ Արբակասն էր[1474], որի մասին Քսենոփոնն այլ տեղեկություն չի հաղորդում: Նկատենք նաև, որ նշված տարածքը քաղաքական առումով նախկինում մտնում էր Մարական տերության կազմի մեջ: Ընդ որում, ըստ Բեհիսթունի արձանագրության տեղեկությունների, մարերը տիրել են Արբելային[1475], ինչը վկայում է նշված տարածքում մարերի կամ ավելի ճիշտ իրանախոս սագարտիների առկայության մասին:

Քսենեոփոնը մեկ այլ աշխատության մեջ հիշատակում է Մեդիայի Թամներիա վայրը՝ Կադուսիայի մոտ[1476], որը գտնվում էր Կասպից ծովի հարավարևմտյան ափամերձ տարածքներում:

Դիոդորոս Սիկիլիացին Սեմիրամիսի արշավանքի մասին պատմելիս հիշատակում է Մեդիայի Բագիստանոն (նաև երկիրը), Զարկայոս, Օրոնտես լեռները, Քավոն քաղաքը[1477]: Բագիստանոնը նույնանում է Բեհիսթունին, Զարկայոսը՝ Զագրոսյան լեռնաշղթային, իսկ Օրոնտեսը՝ Ալվանդի լեռնաշղթային[1478]:

Դատելով Հերոդոտոսի տեղեկություններից՝ մարերը զբաղեցրել են ընդարձակ տարածքներ: Այսպես, Հերոդոտոսը գրում է. «Պարսիկները բնակվում են մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր (իմա՛ Պարսից ծոցը - Խ. Հ.): Նրանցից վերև դեպի հյուսիս բնակվում են մեդացիները, մեդացիներից (վերև)՝ սասպեյրները, սասպեյրներից (վերև)՝ կոլխերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը» (իմա՛ Սև ծովը - Խ. Հ.), որտեղ թափվում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսն (ընկած երկրում)»[1479]: Պատմահայրը նաև հաղորդում է. «Մեյոտիս լճից մինչև Փասիս գետը և կոլխերի երկիրը երեսուն օրվա ճանապարհ է անխոնջ ուղևորի համար: Կոլխիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև բնակվում է մի ազգ, սասպեյրները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա[1480]»: Մեջբերված տեղեկություններում հիշատակված սասպեյրները լայն առումով զբաղեցրել են Արևելյան Վրաստանի տարածքն ու նաև հետագա Աղվանքի կամ Կուրի ձախափնյակի շրջանը, այսինքն՝ Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տարածքը[1481]:

Սասպեյրները և մարերը սահմանակցել են Կուր գետի ստորին հոսանքի շրջանում, և Կողքիսից դեպի Մեդիա ճանապարհն անցել է Կասպից ծովի արևմտյան շրջաններով և Կուրի հովտով: Այս ճանապարհի կարևորությունն է նշում Պլինիոս Ավագը, երբ գրում է, որ հնդկական ապրանքները Կասպից ծովով և Կուր գետով հասնում են Փասիս[1482]՝ ներկայիս Ռիոն գետը:

Հերոդոտոսի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ սկյութները՝ կիմմերներին հետապնդելիս, Կուրի ստորին հոսանքի ձախափնյակից են մտնում Մեդական երկիր[1483]: Այս առումով հետաքրքիր է Պատմահոր այն հաղորդումը, որ սկյութները, դաշինք կնքելով

[1471] Անդ, էջ 50: Հմմտ. Tuplin Ch., Xenophon in Media, pp. 351-389.
[1472] Քսենոփոն, Անաբասիս, էջ 74:
[1473] Անդ, էջ 81:
[1474] Անդ, էջ 197: Արբակասը թերևս «Անաբասիս»-ի I, 7, 12 հատվածում և Պլուտարքոսի «Արտաքսերքսես»-ում (տե՛ս Plutarch's Lives, Vol. XI, Artaxerxes, XIV, 2, p. 157) հիշատակված Արբակեսն է (տե՛ս Tuplin Ch., Xenophon in Media, p. 359):
[1475] Տե՛ս Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, էջ 17:
[1476] Ксенофонт, Греческая история, с. 276.
[1477] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 28-29; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 110, p. 213; Տե՛ս Ctesias' History of Persia, p. 140. Ստեփանոս Բյուզանդացու հիշատակած Բարենե քաղաքը (տե՛ս Ctesias' History of Persia, p. 175) Էկբատանայի մոտ, թերևս, Իսիդոր Քարակացու Բազիգրաբան է կամ Ադրապանան (Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 173):

[1478] Զագրոսը և Օրոնտեսը հիշատակում է Պտղոմեոսը (տե՛ս Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, p. 41): Տե՛ս նաև Polybii Historiae, Vol. III, Libri IX-XIX, X, 27, p. 92.
[1479] Հերոդոտոս, IV, 37:
[1480] Անդ, I, 104:
[1481] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 81: Տե՛ս նաև Խորիկյան Հ., Հերոդոտյան սասպեյրների տեղորոշման հարցի շուրջ, Հանրապետական գիտական նստաշրջան: Նյութերի ժողովածու, Գյումրի, 2008, էջ 138-142; նույնի՝ Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության սասպեյրների տեղադրության շուրջ, ՄՄ, 2014, IX-X, էջ 165-173:
[1482] Pliny, Natural History, Vol. II, VI, 52, p. 376.
[1483] Հերոդոտոս, I, 104; IV, 12:

լակեդեմոնացիների հետ, պայմանավորվում են, որ կներխուժեն Մեդիա Փասիս գետի հոսանքով[1484]: Այս տեղեկության մեջ հիշատակված Փասիսն, անկասկած, հայկական Երասխն է, որը հին հեղինակներին հայտնի էր նաև Փասիս անվանումով[1485] և հին ժամանակներում առանձին հոսանքով էր թափվում Կասպից ծովը: Պատմիչը նաև հայտնում է. «Արոտավայրերը, որտեղ այս խաշնարածը (Միտրադատեսը - Խ. Հ.) արածեցնում էր նախիրը, գտնվում էին Ագբատանայից հյուսիս՝ դեպի Եվքսինյան Պոնտոս ընկած լեռների ստորոտներին: Քանզի մեդական երկիրը միայն դեպի սասպեյներն ընկած մասում բարձրադիր է, լեռնային և անտառաշատ. իսկ մնացյալ երկիրն ամբողջապես դաշտային է»[1486]: Նկատի ունենալով սասպեյրների հիշատակությունը՝ դեպի Սև ծով նայող լեռները կարելի է նույնացնել Հայկական կամ ավելի ճիշտ Կասպիական լեռների հետ:

Մեծ Մարաստանի տարածքի մասին նույնպես Ստրաբոնն ունի արժեքավոր տեղեկություններ: Աշխարհագետը գրում է, որ Մեծ Մարաստանն արևելքում սահմանակցում է Պարթևստանին, ավազակաբարո կոսսեացիների ցեղի լեռներին և պարսիկներին սահմանակից պարետակեններին, հյուսիսում՝ Վրկանից ծովից վերև ապրող կադուսիներին և այլ ցեղերի, հարավում՝ Ապոլլոնիատիսին, որին հներն անվանել են Սիտակենե, և Զագրոս լեռանը, որտեղ տարածվում է Մարաստանին (ուրիշների կարծիքով՝ Էլյումայիսին) պատկանող Մասսաբատիկան, արևմուտքում՝ ատրոպատեններին և հայերի մի մասին[1487]: Պատմիչը Մարաստանում թվարկում է նաև հունական քաղաքներ Լաոդիկեան, Ապամեան, Ռագայի մոտ գտնվող անանուն քաղաքը, որը, ելնելով Ստրաբոնի մեկ այլ տեղեկությունից[1488], կարելի է նույնացնել Հերակլեայի հետ, և հենց Սելևկոս Նիկատորի հիմնադրած Ռագան, որը Նիկատորն անվանում էր Եվրոպոս, իսկ պարթևները՝ Արսակիա[1489], որը Ապոլլոդորոս Արտեմիդացին տեղադրում է Կասպիական դռներից հարավ[1490]: Հեղինակը նաև հայտնում է, որ Մարաստանը բարձրալեռնային և ցուրտ երկիր է, և նրա լեռներն Էկբատանայից, Ռագայից և Կասպիական դռներից ձգվում են մինչև Մատիանե և Հայաստան[1491]: Մենք բերեցինք Մեծ Մարաստանին վերաբերող բավականին ընդարձակ տեղեկություններ, ընդ որում՝ վերջին տեղեկությունից պարզվում է, որ Մատիանեն Մեծ Մարաստանի մեջ չէր, հետևաբար Մարաստանը չէր կարող սահմանակցել Հայաստանին, և Ստրաբոնը հին ժամանակներին վերաբերող տեղեկությունը համադրել է իր ժամանակների իրողությունների հետ: Այս նույն սխալ պատկերացումը պատմիչը արտացոլել է նաև Հայաստանին վերաբերող տեղեկության մեջ, երբ գրում է, որ Հայաստանն արևելքում սահմանակցում է Մեծ Մարաստանին և Ատրոպատենեին[1492], քանի որ Ատրպատականի թագավորության գոյությունը բացառում է Մեծ Մարաստանի հետ որևէ սահմանակցություն: Չնայած պետք է նկատենք, որ Մատիենեն՝ որպես Մարաստանի երկրամաս, Ստրաբոնը հիշատակում է երկու անգամ[1493]: Այդ տեղեկություններից երևում է, որ Ատրպատականի թագավորությանը նախորդող ժամանակաշրջանում Աքեմենյան պետության կազմում Մարաստանը՝ որպես սատրապութ-

[1484] Անդ, VI, 84:
[1485] Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, էջ 222-231:
[1486] Հերոդոտոս, I, 110:
[1487] Страбон, с. 494.
[1488] Անդ, էջ 486:
[1489] Պտղոմեոսը և Ամիանոսը Արսակիան ու Եվրոպոսը համարում են տարբեր քաղաքներ (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, VI, 2, 16-17; Ammianus Marcellinus, with an English translation by J. C. Rolfe, Vol. II, Cambridge-Massachusetts-London, 1972, Loeb Classical Library, XXIII, 6, 39, p. 370):

[1490] Страбон, с. 494-495. Պլինիոսը Մարաստանում թվարկում է հետևյալ քաղաքները՝ Փազակա, Ագանզագա, կամ էլ երկուսը միասին Փիզգանզագա (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 43, p. 368), Ապամեան՝ Ռագիանե անունով (տե՛ս The Natural History of Pliny, by J. Bostock and H. T. Riley, Vol. II, London, 1855, VI, 17, p. 28): Փազական (Փազաբա) և Ագանզանան (Ագանզովա, Ագանզաբա, Ագանզագաուա, Զազակա, Գաուզանիա) հիշատակում է նաև Պտղոմեոսը (Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, VI, 2, 10; Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 46-49; Minorsky V., Roman and Byzantine Campainges in Atropatene, Iranica, Twenty Articles, Tehran, 1964, p. 104): Տեսականորեն երկու տեղանուններն էլ կարող են նույնացվել Փրաասպայի և Գանձակի հետ, չնայած Պտղոմեոսի Փարասպա, Փանասպա տեղանունները նույնպես կարելի է նույնացնել Փրաասպայի հետ, հետևաբար այդ անունները միևնույն տեղանվան տարբեր ձևերն են, ինչը կապված է և՛ Պտղոմեոսի օգտագործած աղբյուրների, և՛ հետագա արտագրությունների հետ: Ագանզանան մասնագիտական գրականության մեջ նույնացրել են Զենջանի, իսկ Փանասպան՝ Կալե Զոհակի հետ՝ Մարաղայի և Միանեի միջև (տե՛ս, օրինակ, Алиев И., Очерк истории Атропатены, Баку, 1989, с. 68, 78, 106): Փիզգանզագայի մեջ Յ. Մարկվարտը փորձել է տեսնել Գանձակի և Շիզի համատեղ հիշատակությունը (Markwart J., Messina G., A Catalogue of the Provincial Capitals of Ērānshahr, p. 108), ինչը սխալ է, քանի որ դրանք տարբեր քաղաքներ են (Касумова С. Ю., Южный Азербайджан в III-VII вв., Баку, 1983, с. 21, 23):
[1491] Страбон, с. 495.
[1492] Անդ, էջ 496:
[1493] Ստրաբոն, էջ 13, 35:

յուն, սահմանակցել է XIII սատրապությանը կամ Սատրապական Հայաստանին՝ չխոսելով արդեն Մարական տերության ժամանակների մասին, երբ Հայաստանը մտնում էր այդ պետության կազմի մեջ (Ստրաբոնի XI, XIII, 6-7 տեղեկության մեջ նկարագրված Մեծ Մարաստանի սահմանների քննությունը տե՛ս վերը՝ ութերորդ սատրապության տեղադրությանը նվիրված ենթագլխում):

Արևելքում Մարաստանը, ելնելով Ստրաբոնի տեղեկություններից, որոնք հաստատվում են նաև այլ աղբյուրներով, հասել է մինչև Կասպիական դռներ, որոնցից այն կողմ Պարթևստանն էր՝ Կոմիսենե և Խորենե երկրներով[1494]: Օրինակ, պատմիչը գրում է, որ Պարթևստանը արևմուտքում հասնում է մինչև Կասպիական դռներ, Ռագա և տապուրների երկիրը, որը նախկինում պատկանում էր Մարաստանին[1495]: Ըստ էության, տապուրների երկրի՝ Տապարիստանի՝ Ռագայից հյուսիս ընկած արևմտյան մասը Ստրաբոնի ժամանակ նույնպես Մարաստանի մեջ էր: Մեկ այլ տեղեկության մեջ նույնպես Ստրաբոնը գրում

[1494] Խոարա երկիրը հիշատակում է Պլինիոս Ավագը (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 44, p. 370): Կոմիսենեն և Խոարենեն՝ Ապամեա քաղաքով, հիշատակում է Իսիդոր Քարակացին (տե՛ս Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 174): Դատելով Ապամեա քաղաքի հիշատակությունից՝ կարող ենք ենթադրել, որ Ստրաբոնի օգտագործած մի աղբյուրում Ապամեան Մարաստանի մեջ էր, իսկ մյուս դեպքում՝ Պարթևստանի, ինչը, հավանաբար, կապված է արդեն մ. թ. ա. I դարի երկրորդ կեսի հետ: Հին Խոարենեի տարածքում XIX դարի վերջերին դեռևս 5000 մարդ խոսում էր սեմնանի խոսվածքով, որը մարական լեզվի մնացորդներից էր: Խոարենեով (ներկայիս Սեմնան և Դամղան քաղաքներով) էր անցնում քարավանային ճանապարհը դեպի Միջին Ասիա (տե՛ս Дьяконов И., История Мидии, с. 91-92): Խոարենեն և Կոմիսենեն՝ որպես Պարթևստանի երկրամասեր, հիշատակում է Պտղոմեոսը (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 5, 1): Կոմիսենեն հիշատակվում է հայկական աղբյուրներում Կոշմ, Կոմշ ձևերով (տե՛ս Հակոբյան Ա., «Աշխարհացոյց» Է դարի Անանունի, էջ 164; Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 40; Патканов К. П., Армянская География VII века, с. 73. Հավելված՝ «Աշխարհացոյց Է դարու», էջ 23; Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 352; Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 98, 261, ծնթ. 285): Կոմիսենեն Կոմշ ձևով հիշատակում է պահլավական աշխարհագրական տրակտատը (տե՛ս Խուրշուդյան Է., «Շահրիստանիհա-յի Էրան» (պահլավական աշխարհագրական տրակտատ), Իրան-նամէ, 1993, թիվ 4, էջ 26; Хуршудян Э., «Города Ирана», Ираннамэ, 2010, 3, с. 134): Կոմիսենեն Կումիշ-Կոմիշ ձևով հիշատակում է նաև "Hudūd al-'Alam"-ը (տե՛ս Hudūd al-'Alam, The Regions of the World. A Persian Geography 372 A. H.-982 A. D., translated and explained by V. Minorsky, with the Preface by V. V. Barthold, London, 1982, p. 387):

[1495] Страбон, с. 486. Տե՛ս, օրինակ, The Natural History of Pliny, Vol. II, VI, 18, p. 30.

է, որ Կասպիական դռները Մարաստանի մեջ էին[1496]:

Մարաստանի արևելյան սահմանների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեն Պտղոմեոսի հաղորդումները: Հույն աշխարհագրագետը գրում է. «Զագրոս լեռից դեպի արևելք սագարտիացիներն են, սրանցից հետո՝ հասնելով մինչև Պարթիա, Քորոմիթրենե, որից դեպի հյուսիս Էլյումայիսն է. նրանից դեպի արևելք բնակվում են տապուրները: Քորոմիթրենեից դեպի հարավ սիդիկներն են և Սիգրիանիկեն և Ռագիանեն. նրանց մոտ՝ Յասոնիոն լեռան ստորոտում վադասներն են և Դարեյտիս գավառը և ամբողջ Պարսքի երկայնքով՝ Սյուրոմիդիան»[1497]: Տեղեկության մեջ աշխարհագրական առումով կա բավականին խառնաշփոթ: Օրինակ, Պտղոմեոսը Պարսքի երկայնքով տեղադրում է Սյուրոմիդիան, այն դեպքում, երբ Սյուրոմիդիան ընդգրկել է նախկին Ասորեստանի արևելյան այն շրջանները՝ Պարսուան, Զամուան և այլն, որոնք ավելի ուշ նվաճվում են Մարաստանի կողմից[1498]: Սագարտիների մասին հիշատակությունը թույլ է տալիս այս ժողովրդին կապել ոչ թե արևելյան, այլ արևմտյան սագարտիների՝ ասուրական աղբյուրների զիկերտցիների հետ: Սիդիկները նույնանում են Պլինիոս Ավագի սիլիկներին, որոնք հիշատակվում են Ադիաբենեում[1499]: Ըստ Ն. Ադոնցի, Քորոմիթրենեն, հավանաբար, Միհրանյան տոհմի բնակավայրն էր և գտնվել է Գանձակի մոտ[1500]: Քորոմիթրենեն նույնացվել է հայոց «Աշխարհացոյց»-ում Մասպտանի հետ հի-

[1496] Страбон, с. 491, 493. Հեկատեոսը կասպերի մարզը՝ համանուն դռներով կամ լեռնանցքներով, տեղադրում էր Մարաստանում (տե՛ս Müller C., FHG, Vol. I, p. 11, fr. 171): Կասպիական լեռներից վերև Ստրաբոնը հիշատակում է Յասոնիոն լեռը (Страбон, с. 496): Յասոնիոն լեռը Ռագա կամ Ռեյ քաղաքի մոտ հիշատակում են նաև Պտղոմեոսը, Ամիանոսը (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 2, 6; Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 39, p. 370): Յասոնիոն լեռը նույնանում է Դամավանդ լեռանը: Հույների կողմից տրված Յասոնիոն անունը նշանակում է Յասոնի սրբավայր և կապված է տեղական jazana-ի՝ զոհաբերության վայր, «տաճար» բառի հետ, որը համապատասխանում է սանսկրիտերեն yajana-ին (տե՛ս Markwart J., Südarmenien und die Tigrisquellen..., S. 535; Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երկեր, հտ. Դ, Եր., 2009, էջ 353), իսկ Դամավանդ լեռան պաշտամունքային նշանակությունը միանգամայն ընդունելի է:

[1497] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, p. 42-45.

[1498] Дьяконов И., История Мидии, с. 199; Фрай Р., Наследие Ирана, с. 108.

[1499] Pliny, Natural History, Vol. II, VI, 118, p. 426.

[1500] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 491:

շատակվող Միհրանքատակին[1501]: Այս դեպքում Քորոմիթրենեն, նույնանալով Միհրանքատակին, համապատասխանում է Ստրաբոնի Մասսաբատիկայի հարևանությամբ հիշատակված Գաբիանային: Միհրանքատակը՝ Բեյթ Միհրաքայեն, հիշատակվում է որպես նեստորական եպիսկոպոսություն 577 և 588 թվականներին[1502]: Շրջանի կենտրոնն էր Սայմարա քաղաքը[1503]: Միհրանքատակը Միհրագանքադակ անունով հիշատակում են արաբական աղբյուրները[1504]:

Պտղոմեոսի տվյալ տեղեկության մեջ արտացոլվել են Քորոմիթրենեի տարբեր տեղադրություններ: Այսպես, Քորոմիթրենեն, մեր կարծիքով, ընդգրկել է Փրաասպա-Հրատն մեծի շրջանը, որից հարավ Էյումայիսն էր, հյուսիս-արևելք՝ տապուրները, հարավ-արևելք՝ Ռագիանեն, արևմուտք՝ Սիգրիանիկեն: Նկատենք, որ Քորոմիթրենե-Միհրական գավառ անվան տակ կարող էին հասկացվել ինչպես Միհրի պաշտամունքի, այնպես էլ Միհրանյան հզոր տոհմի բնակության հետ կապված բազմաթիվ վայրեր, օրինակ՝ Միհրանքատակը: Պտղոմեոսի վերոբերյալ տեղեկության մեջ Պարթիա-Պարթևքի հարևանությամբ, Խոարենե և Կոմիսենե պարթևական նահանգների սահմանակցությամբ Քորոմիթրենեի հիշատակությունը թույլ է տալիս վերջինս տեղադրել Ռագայի շրջանում, որը Միհրանյան տոհմի օթևանն էր[1505]: Այսպիսի տեղադրության պարագայում Էյումայիսը գտնվում էր Քորոմիթրենեից հարավ, տապուրները՝ դեպի հյուսիս, սիդիկները, եթե նույնանում են Պլինիոս Ավագի սիլիկներին, և Սիգրիանիկեն՝ դեպի արևմուտք: Սիդիկների անունը, հավանաբար, պահպանել է Պլինիոս Ավագի Սիդերիս գետը Կասպից ծովի հարավային առափնյա շրջանում[1506]: Ինչ վերաբերում է Ռագիանեի առանձին հիշատակությանը, ապա Պտղոմեոսը,

[1501] Հակոբյան Ա., «Աշխարհացոյց» է դարի Անանունի, էջ 163; «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», էջ 40; Патканов К. П., Армянская География VII века, с. 65. Հավելված՝ «Աշխարհացոյց է դարու», էջ 22; Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 352: Միհրանքատակ-Միհրականքատակ բառացի նշանակում է "Haus der Mihraks" (տե՛ս Markwart J., Ērānšahr, S. 20):
[1502] Guidi I., Ostsyrische Bischofe..., S. 412; Chabot J. B., Synodicon Orientale, pp. 310-311, 316.
[1503] Колесников А., Иран в начале VII века, с. 104.
[1504] Патканов К. П., Армянская География VII века, с. 65; Marquart J., Ērānšahr, S. 20; Колесников А., Завоевание Ирана арабами, с. 97, 102, 112; Morony G. M., Continuity and Change in the Administrative Geography of Late Sasanian and Early Islamic Al-Irāq, Iran, Vol. 20, London, 1982, pp. 21-22.
[1505] Колесников А., Иран в начале VII века, с. 55, 101.
[1506] Pliny, Natural History, Vol. II, VI, 46, p. 370.

ըստ էության, օգտագործել է տարբեր աղբյուրներում հիշատակված երկու նույնական աշխարհագրական անվանումներ՝ առանց դրանք տարբերակելու: Բացառված չէ նաև, որ Ռագիանեի տակ Պտղոմեոսը նկատի է ունեցել Քորոմիթրենեի կենտրոն Ռագա քաղաքի տարածքը[1507]: Ռագայի շրջանում գտնվող Յասոնիոն լեռը ներկայիս Դամավանդն է, որի շրջանում էլ բնակվել են վադասները և դարեյտները՝ Հերոդոտոսի դարեյտները[1508]: Վադասներին առաջինը հիշատակելը թույլ է տալիս սրանց տեղադրել Դամավանդ լեռան հյուսիսային փեշերին, իսկ դարեյտներին՝ նույն լեռան հարավարևելյան լանջերին:

X սատրապության կազմում հիշատակվող օրթոկորյուբանտիների հունարեն անունը թարգմանաբար համապատասխանում է հին պարսկերեն սեպագիր արձանագրությունների տիգրախաուդա՝ «սրածայր գլխարկավորներ» սակերին, որոնք տեղադրվում են Միջին Ասիայում[1509]: Ըստ այդմ էլ մասնագիտական գրականության մեջ կարծիքներ կան, որ օրթոկորյուբանտիները և պարիկանիները սխալմամբ են ներառված X սատրապության մեջ, և օրթոկորյուբանտիներին տեղադրել են Կասպից ծովից արևելք՝ մինչև Ֆերգանայի սահմանները[1510]: Պարիկանիներին համարել են Ֆերգանայի մինչարիական երկրագործական բնակչությունը[1511], որը տարբեր է Հերոդոտոսի XVII սատրապության մեջ հիշատակվող պարիկանիներից[1512]: X սատրապության պարիկանիներին Ֆերգանայի բնակիչներ են համարել նաև այլ հետազոտողներ[1513]: Սակայն կարծիք կա, որ սողդիական փաստաթղթերում վկայված Ֆերգանայի անվան հին ձևը Far(a)gana կամ Fragana է, որը հունարենում չէր կարող տալ Պարիկանա[1514]:

Մարական սատրապությունից դուրս նշված երկու ցեղերի տեղադ-

[1507] Դիոդորոս Սիկիլիացին Մեդիայի կազմում հիշատակում է Ռագայ նահանգը, որի անունը "ραγάς" նշանակում է «ճեղք, ճաք» (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 146; Страбон, с. 67, 486): Համմ. Henkelman W. F. M., Imperial Signature and Imperial Paradigm, p. 132.
[1508] Հերոդոտոս, III, 92:
[1509] Անունը թարգմանել են նաև «բարձունքների բնակիչներ» և «ուղղաձիգ սաղավարտավորներ» (տե՛ս Պետրոսյան Ս., Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին, ՊԲՀ, թիվ 4, էջ 47; Д. К. Ш., с. 192):
[1510] Junge J., Orthokorybantioi, RE, Stuttgart, 1942, XXXVI, 1, col. 1484; նույնի՝ Parikanioi, RE, 1949, XXXVI, 3, col. 1482.
[1511] Herzfeld E., The Persian Empire, p. 329.
[1512] Հերոդոտոս, III, 94: Պարիկանիները նշված սատրապության մեջ են նաև Հերոդոտոսի մյուս տեղեկություններում (անդ, VII, 68; 86):
[1513] Տե՛ս Д. К. Ш., с. 193.
[1514] Лившиц В., Согдийский посол в Чаче, СА, 1962, вып. 2, с. 103.

րությունը քննություն չի բռնում: Ի. Դյակոնովն օրթոկորյուբանտիներին նույնացրել է այսրկովկասյան սկյութների, սակեսինների հետ, իսկ պարիկանիներին էլ համարել է Մանայի թագավորության բնակիչներ[1515]: Ի. Խլոպինը պարիկանիների հիշատակությունը XVII սատրապության մեջ համարել է սխալ՝ գտնելով, որ պարիկանիները շփոթվել են պարետակենների հետ[1516]: Ի. Պյանկովը մարական սատրապության օրթոկորյուբանտիների նույնացումն այսրկովկասյան սակեսինների հետ համարում է սխալ և օրթոկորյուբանտիներին նույնացնում է դերբիկների հետ, որոնք բնակվել են Կասպից ծովի և Արալյան լճի միջև, չնայած Մարաստանի հետ տարածքային առումով անմիջականորեն չեն սահմանակցել: Այս, ինչպես նաև պարիկանիների նույնացումը հյուրկան-վրկաններին քննություն չի բռնում[1517]:

Պարիկանիներ անունն ուսումնասիրողները կապում են Ավեստայի դիվային էակ պարիկայի հետ, որից ծագում է նոր պարսկերեն *փերին*[1518]: Հեկատեոս Միլետացու մոտ հիշատակվում է Պարիկանե քաղաքը Պարսքում[1519], որը հուշում է XVII սատրապության պարիկանիներին, որոնց պետք է փնտրել արևելյան Ֆարսում և հարավային Կրմանում, որտեղ հայտնի է Fārīγān վայրը[1520]: Մեր կարծիքով, հավանա-

[1515] Дьяконов И., История Мидии, с. 248, 338, 447; Алиев И., Племена и племенные группы в Атропатене, ВДИ, 1987, 3, с. 69.
[1516] Хлопин И., Этнография державы Ахеменидов по Геродоту, СНВ, 1969, вып. 8, с. 286.
[1517] Пьянков И., "История Персии" Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 43, 45, 49; Olmstead A., Նշվ. աշխ., էջ 241, 291 f.
[1518] Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, с. 281; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 129:
[1519] Müller C., FHG, Vol. I, p. 12, fr. 180.
[1520] Грантовский Э., Նշվ. աշխ., էջ 282: Է. Հերցֆելդը նշում է, որ Հեկատեոսը Պարսքը գործածում է ամբողջ Իրանի համար (տե'ս Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 329): Հավանաբար միջնադարյան Պարիհան արաբ աշխարհագետների Բարիզ քաղաքն է (տե'ս Բոյաջյան Վ., Շահնամեում բելուջների հիշատակության հարցի շուրջ, Իրանամէ, 1999, թիվ 32-34, էջ 112): Պարիկանիներին նույնացրել են բարիզների ցեղի հետ (տե'ս Книга деяний Ардашира сына Папака, транскрипция текста, пер. со среднеперс., введ., коммент. и глоссарий О. М. Чунаковой, М., 1987, с. 77, 100): Արամեերեն արձանագրություններում հիշատակվող *prkn* տեղանունը կապել են պարիկանիների հետ՝ տեղադրելով Արաքոսիայում կամ վերջինիս հարևանությամբ (տե'ս Vogelsang W., Early Historical Arachosia in South-East Afghanistan. Meeting Place between East and West, IA, 1985, Vol. 20, 1985, pp. 82-87; Henkelman W. F. M., Imperial Signature and Imperial Paradigm, pp. 106-108), այսինքն՝ XVII սատրապության պարիկանիների անվան տակ թաքնված են եղել արաքոսիացիները, ինչը, մեր կարծիքով, հիմնավորված չէ, քանի որ պարիկանիները գտնվել են արաքոսիացիներից շատ ավելի հարավ:

կան է այն ենթադրությունը, որ հին մարական պանթեոնի աստվածությունների անվանումները, որոնք համապատասխանում են Վիդևդատի դևերին, և կրոնական հատուկ հասկացությունները պահպանվում են բուդիների (Բուդի աստվածուհի), բուսերի ցեղերի և Կունդուրու (Կունդա աստված) քաղաքի անունների մեջ[1521]: Այս տեսանկյունից պարիկանիների անվան ծագումը ևս հնարավոր էր: Հետևաբար պարիկանիների տակ պետք է հասկանալ իրանական, այլ ոչ թե ոչ իրանական ցեղերին[1522]:

Ինչ վերաբերում է օրթոկորյուբանտիներին, ապա սրանք տեղադրվում են մարական սատրապության կազմում: Օրթոկորյուբանտիների անունը մասնագիտական գրականության մեջ ստուգաբանվել է «իսկական կորիբանտներ», որի կրողները ծագումնաբանորեն կապվում են փոքրասիական կորիբանտների հետ մասնավորապես և փռյուգացիների ու հին Հնդկաստանի բհրիգուների հետ ընդհանրապես: Կորիբանտներ էին կոչվում փոքրասիական Մայր դիցուհու՝ Կիբելե, Մա, քրմերը[1523]: Մեր կարծիքով, օրթոկորյուբանտիների նույնացումը սակերի հետ, օրինակ, Սակըզի շրջանում, անընդունելի է, և ելնելով օրթոկորյուբանտիների «իսկական կորիբանտներ» մեկնաբանությունից՝ մարական սատրապության այս ցեղին նույնացնում ենք մարական ցեղերից մեկի՝ մագերի հետ (միջնադարյան *mūg*)[1524], որոնց անունը հին պարսկերենում նշանակում է «մոգ, քուրմ»: Օրթոկորյուբանտիներ՝ «իսկական կորիբանտներ», բացատրական անվանումը մարական մագերի ցեղի՝ «ճշմարիտ քրմերի» հունական նույնականացումն էր իրենց հայտնի կրոնական իրողությունների հետ, հետևաբար օրթոկորյուբանտիների տակ չպետք է փնտրել այլ էթնիկական տարր: Համեմատության համար նշենք, որ Ստրաբոնը Կապադովկիայում հիշատակում է մագերին[1525], որոնց տակ պետք է հասկանալ ոչ թե մագերի մարական ցեղը, այլ քրմերի: Մագերը սկզբնապես ցեղի անվանում է եղել, ցեղային-կրոնական կազմակերպություն, այլ ոչ թե քրմական դասի անուն: Մագերը եղել են քրմական ֆունկցիաներ իրագործող

[1521] Nyberg H. S., Die Religionen des alten Iran, Leipzig, 1938, S. 339; Грантовский Э., Նշվ. աշխ., էջ 181, 267, 281:
[1522] Дьяконов И., Նշվ. աշխ., էջ 338:
[1523] Պետրոսյան Ս., Հին Մարաստանի տարածքի..., էջ 46-58: Փոքրասիական օրթոկորյուբանտիները հիշատակվում են նաև բյուզանդական հանրագիտարան Սուիդասում (տե'ս Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 327):
[1524] Հերոդոտոս, I, 101; 140:
[1525] Страбон, с. 680.

մարական ցեղ: Չնայած մագերը ծագումով մարական ցեղ էին, բայց այդ բառով հաճախ կոչվում էին պարզապես քրմերը՝ անկախ էթնիկական պատկանելությունից: Օրինակ, հայտնի է, որ մագերի մեջ կային նաև պարսիկներ[1526]:

Օրթոկորյուբանտիներ-մագերը, ամենայն հավանականությամբ, գտնվել են Փրաասպա-Հրատն մեծի շրջանում:

Մարական սատրապության պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար կարևոր են հետաքեմենյան ժամանակների անտիկ աղբյուրների տեղեկությունների պատմահամեմատական քննությունը: Խոսելով Ատրպատականի մասին՝ Ստրաբոնը գրում է, որ «այս երկիրը ուրիշներից ավելի փարթամ է, հյուսիսային մասը լեռնային, կոշտ և ցուրտ է, ուր բնակվում են լեռնական կադուսիները, ամարդները, տապյուրները, կյուրտիները և այլն, որոնք տարաբնակ են ու ավազակ: Արդարև Զագրոսը և Նպատը բռնված են այս ժողովուրդներով, և Պարսկաստանի կյուրտիները և մարդերը (սրանք կոչվում են նաև ամարդներ), ինչպես և Հայաստանինը, որոնք մինչև այժմ նույն անունով են կոչվում, նույն ցեղից են»[1527]: Եթե Զագրոսի մասին տեղեկությունը հասկանալի է, որի արևելյան և հարավային ճյուղավորումները բնակեցված էին մարդերով, որոնց անունով էր կոչվում Զագրոսից սկիզբ առնող Ամարդոսը, և կյուրտիներով, ապա Նպատ լեռան հիշատակումն այս տեղեկության մեջ կարծես թե չի տեղավորվում: Ստրաբոնը հաղորդում է. «Այսպես են կոչվում Տավրոսի հյուսիսային լեռները (իմա՛ Պարաքոաթրաս - Խ. Հ.). իսկ հարավայինը, Եփրատից այն կողմ, Կապադովկիայից և Կոմմագենեից արևելք է տարածվում, սկզբնական մասում կոչվում է Տավրոս, որ բաժանում է Ծոփքը և մնացյալ Հայաստանը Միջագետքից. ոմանք էլ կոչում են Գորդյան լեռներ: Սրանց մեջ է նաև Մասիոն լեռը, որ գտնվում է Մծբինի և Տիգրանակերտի վերևը: Այստեղից ավելի բարձրանալով՝ կոչվում է Նպատ. այստեղ, լեռան հարավային կողմերում գտնվում են Տիգրիսի ակունքները»[1528]: Մասիոնը և Գորդյան լեռները համարվել

[1526] Алиев И., Племена и племенные группы..., с. 72.

[1527] Ստրաբոն, էջ 49: Տե՛ս նաև Страбон, с. 494. Պարսքի կյուրտիները և մարդերը՝ որպես ավազակաբարո ցեղեր, հիշատակվում են նաև այլ տեղեկության մեջ (տե՛ս Страбон, с. 676): Կյուրտիացի պարսատիկավորներին հիշատակում է Պոլիբիոսը (տե՛ս The General History of Polybius, Vol. II, p. 231): Կյուրտիների և քրդերի կապի մասին մանրամասն տե՛ս Асатрян Г., Этногенез курдов и ранние армяно-курдские контакты, IC, Vol. 1, Tehran, 1997, p. 3.

[1528] Ստրաբոն, էջ 43-45:

են Տավրոսի ճյուղերը, իսկ Գորդիոնյան կամ Գորդյան լեռները (իմա՛ Կորդվաց լեռներ) տարածվել են Մասիոն լեռներից արևելք: Իրականում Մասիոն լեռները Կորդվաց լեռների շարունակությունն են: Արիանոսի մի տեղեկությունից պարզվում է, որ «Դարեհը ճակատամարտի դաշտից (Գավգամելայի - Խ. Հ.) անմիջապես սլացավ Մարաստան, ճանապարհ ընտրելով հայկական լեռներով»[1529]:

Իսկ Պլուտարքոսը գրում է. «Ամբողջ հարթավայրը (Գավգամելայի- Խ. Հ.) Նիփատեսի և Գորդիենյան լեռների միջև, լուսավորված էր բարբարոսական զորքի կրակներով...»[1530]: Նիփատեսի լեռները, իրոք, գտնվել են Հայաստանում՝ Նպատական լեռներ (Զողա) անունով[1531], որտեղ էլ, ըստ Ստրաբոնի, գտնվում էին Տիգրիսի ակունքները՝ հավանաբար նկատի ունենալով կա՛մ Արևելյան Խաբուրի, կա՛մ Մեծ Զաբի, կա՛մ էլ նույնիսկ Արևելյան Տիգրիսի ակունքները: Պլուտարքոսն աշխարհագրական առումով ավելի մեծ բովանդակություն է տալիս Գորդիենյան և Նպատական լեռներին՝ տարածելով դրանք ավելի հարավ, քանի որ Նպատական լեռներից հարավ գտնվել են Դասն լեռները: Ուրեմն Դարեհ Գ-ն փախել է Դասն և Նպատական լեռներով դեպի Մարաստան, որի հետ Հայաստանի սահմանը, ամենայն հավանականությամբ, կազմել են Կոհ-ի-Նիհորական լեռները, որոնք նույնպես ընկալվել են որպես Նպատի լեռներ: Նպատի լեռների տեղադրության հստակեցումը բացառում է Ստրաբոնի հիշատակած ցեղերից որևէ մեկի տեղորոշումն այս շրջանում: Ստրաբոնը Նպատի լեռներում բնակվող ցեղերին չի հիշատակում, քանի որ տվյալ տեղեկության մեջ թվարկելով կադուսիներին, ամարդներին, տապյուրներին, կյուրտիներին՝ գրում է «և այլն»: Կադուսիները և տապյուրները չէին կարող բնակվել ո՛չ Զագրոսի, ո՛չ Նպատի լեռներում: Հավանաբար, տվյալ տեղեկության մեջ Ստրաբոնը կամ նրա աղբյուրը Նպատ-Կոհ-ի-Նիհո-

[1529] Արիանոս, էջ 107; Арриан, с. 117.

[1530] Плутарх, Александр, XXXI, Избранные жизнеописания, т. II, с. 394.

[1531] Պտղոմեոսի մոտ Նիփատեսի լեռները եզերում են Հայաստանի հարավային սահմանը, ընդ որում՝ Նիփատես լեռները, ըստ աշխարհագրագետի, հասել են մինչև Կասպիոս լեռը, այսինքն՝ Կասպիական լեռները (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, V, 13, 4), հետևաբար Նիփատեսի լեռների շարունակությունն են կազմել Կոհ-ի-Նիհորական և Հայկական լեռները: Ամիանոս Մարկելինոսի հիշատակած Նիփատեսի լեռները համապատասխանում են Զողա լեռներին (տե՛ս Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 13, p. 356): Ս. Երեմյանը Նիփատեսի լեռները նույնացնում է այժմյան Ջելու լեռների հետ Զուլամերկի շրջանում (տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 72):

րական լեռների շարունակությունն է համարել Ուրմիո լճից հյուսիս-արևելք ընկած Ղարադաղի, Թալիշի, Գիլանի լեռները, որոնք կոչվել են նաև մարական լեռներ[1532], և ընդհանրապես էլբուրսն ամբողջությամբ, որը Ստրաբոնի այլ տեղեկություններում հիշատակվում է Պարաքոաթրես անունով, որի շրջանում էլ բնակվում էին կադուսիները, սրանց հարևան արիանիները[1533] և տապյուրները: Դատելով տեղեկություններից՝ նշված լեռնաշղթաներն (և ոչ միայն) ընդհանրապես հայտնի են Տավրոս անունով, որը, ըստ Սոլինի, տարբեր ժողովուրդներ անվանել են տարբեր անվանումներով՝ Քոաթրես, Նիփատես, Կովկաս և այլն[1534]:

Ստրաբոնի հաջորդ տեղեկությունը ևս որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն առումով, որ Ատրպատականի պետության գոյության ժամանակաշրջանում պատմաաշխարհագրական բազմաթիվ իրողություններ, որոնք առնչվում են Հայաստանի հետ, պահանջում են լուրջ քննություն, հատկապես եթե այդ իրողությունները կապվում են Աքեմենյան կամ նույնիսկ մարական դարաշրջանների հետ: Հեղինակը հաղորդում է, որ Արաքսը սկզբում հոսում է դեպի արևելք մինչև Ատրոպատենե, հետո թեքվում է դեպի արևմուտք և հյուսիս, հոսում է նախ Ազարայի, հետո Արտաքսատայի մոտով՝ երկուսն էլ Հայաստանի քաղաքներ, ու վերջապես Արաքսենեի դաշտով անցնելով՝ թափվում է Կասպից ծովը[1535]: Սակասենեի հետ հիշատակվող Արաքսենեի դաշտը[1536] տարածվել է Կուրի աջափնյակում՝ Կուր և Երասխ գետերի ջրկիցից մինչև Տրտու գետի և Կուրի ջրախառնուրդն ընկած շրջանում, և համապատասխանում է Պատմահոր հիշատակած Ուտիք աշխարհին[1537]: Միաժամանակ, Ստրաբոնի հիշատակած Արաքսենեի դաշտը տարածվել է ոչ միայն Երասխի կամ Արաքսի ձախ, այլև աջ ափին, հետևաբար՝ աջափնյա Արաքսենեն, որը հույն աշխարհագետի

[1532] Ստրաբոն, էջ 35: Նկատենք, որ Պտղոմեոսի (Էկբատանայից հավանաբար արևելք) հիշատակած Նիփավանդա բնակավայրի Նիփա- մասը մոտ է Նիփատես լեռնանվանը (տե՛ս Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 50-51): Նիփավանդան համապատասխանում է Նիհավենդին (տե՛ս Hoffmann G., Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig, 1880, S. 67):
[1533] Ստրաբոն, էջ 49:
[1534] ИДПСК, ВДИ, 1949, 3, с. 247.
[1535] Страбон, с. 497.
[1536] Ստրաբոն, էջ 13, 37, 55:
[1537] Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, էջ 260:

մոտ վարչական հատուկ անվանում չունի, իրականում Կասպիանե-Կասպքի մի մասն է[1538]: Ուրեմն, Արաքսենեի դաշտը ընդգրկել է Միլի տափաստանը և Մուղանի դաշտի մի մասը: Ստրաբոնի վերը բերված տեղեկությունից երևում է, որ սկզբում Ատրպատականի հիշատակությամբ Երասխ-Արաքսը հեղինակը նույնացրել է Կարմիր գետի հետ, հետո արդեն նկարագրել գետի հոսանքը հյուսիս-արևմուտքից նախ Ազարայի, որը հավանաբար Արմավիրն է, ապա Արտաշատի մոտով: Ստրաբոնը[1539] Ատրպատականի սահմանների մոտ՝ Արաքսի ձախ ափին՝ Նորաշենի և Նախիջևանի միջև, տեղադրում է Արքսատա-Արք(այա)շատ քաղաքը[1540]: Արտաշատի մասին հիշատակությունը բացառում է Հայաստանի սահմանակցությունն Ատրպատականին Արաքս գետի հարավային ափին, քանի որ Արտաշես Ա-ից սկսած Արաքսի աջափնյակը Մեծ Հայքի թագավորության մեջ էր: Տեղեկություններից մեկում նույնպես Ստրաբոնը, կապված Անտոնիոսի պարթևական արշավանքի հետ, Արաքս գետը համարում է սահմանագիծ Հայաստանի և Ատրոպատենեի միջև[1541]: Այս տեղեկությունը համադրելով Պլուտարքոսի նույն դեպքերին վերաբերող հաղորդումների հետ՝ ցույց ենք տվել, որ Արտաշես Ա-ի կողմից Մեծ Հայքի թագավորությանը միացված Փավենե[1542]-Փավնիտիս երկրամասը համապատասխանում էր արքունական տիրույթ Մարդպետականին (Արևելյան Վասպուրականին), որը հայկական աղբյուրներում հայտնի էր Մարաց ամուր աշխարհ անունով[1543]: Այս Մարաց ամուր աշխարհին էլ Ստրաբոնի մոտ կոչվում է Ատրոպատենե, որը հեղինակի համար Մա-

[1538] Անդ, էջ 264-265:
[1539] Страбон, с. 498.
[1540] Տեր-Մարտիրոսով Ֆ., Արենիի հունարեն արձանագրությունը, ՊԲՀ, 1989, թիվ 1, էջ 185; Կարագյոզյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 128-129; Հարությունյան Բ. Հ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Եր., 2001: Արքսատա տեղանունն Ա. Հակոբյանը վերականգնում է Մարաշատ՝ նույնացնելով Մարավան-Մարակերտին (տե՛ս Հակոբյան Ա., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական ուսումնասիրություններ (Արցախ և Ուտիք), Վիեննա-Եր., 2009, էջ 231-232, 414):
[1541] Ստրաբոն, էջ 47:
[1542] Փավենեն նույնացվել է Մեծ Հայքի Քուստ-ի Փառնես գավառի հետ: Վերջինիս հետ, թերևս, կապված է Օբարենեն, որը սովորաբար համարվում է Գոգարենե անվան.վրիպակ (տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 231-232, 414):
[1543] Խորիկյան Հ., Անտոնիոսի պարթևական արշավանքի հետ կապված մի հարցի շուրջ, էջ 28-35:

րաստանի մի մասն էր[1544]:

Ատրպատականի արևելյան սահմանների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեն Ստրաբոնի տեղեկությունները Կասպից ծովի հարավային և հարավարևելյան ափամերձ շրջանում բնակվող ցեղերի մասին: Աշխարհագետը գրում է. «Վրկանաց աշխարհից սկսած՝ Կասպից ծովը ընդարձակվում է՝ մինչև հասնում է Մարաստանի և Հայաստանի լեռները: Սրանք ներքևում ունեն մահկանձև կերպարանք և վերջավորվում են ծովի մոտ՝ ձևացնելով ծոցի խորքը: Լեռների երկարությամբ, ծովից սկսած մինչև բարձունքը բնակվում են քիչ քանակությամբ աղվաններ և հայեր. և ավելի շատ գելեր, կադուսիներ, ամարդներ, կյուրտիներ[1545], անարիակներ: Որոշ պարրասիներ, ինչպես ասում են, ապրում են անարիակների հետ, որոնց հիմա անվանում են պարսիներ. ենիանները ուիտիների երկրում կառուցեցին քաղաք, որը կոչվում է Ենիանա... այստեղ է գտնվում նաև Անարիակա քաղաքը... (Այստեղ ապրում են) և ուրիշ զանազան ցեղեր, որոնք ավելի ավազակ և պատերազմիկ են, քան երկրագործ. հողերի կոշտությունն է արել այդպես: Սակայն այս լեռնոտ ծովափի մեծագույն մասը բռնել են կադուսիները, համարյա 5000 ստադիոն, ինչպես ասում է Պատրոկլես, որ և այս ծովը Պոնտականին գրեթե հավասար է համարում: Ամբողջ այս երկիրը աղքատ է»[1546]: Տեղեկությունից երևում է, որ նշված ցեղերը բնակվել են Կասպից ծովի ափին և չեն մտել Մարաստանի մեջ, ընդ որում, նրանց սահմանը կազմել են Մարական լեռները, որոնց տակ պետք է նկատի ունենալ Ստրաբոնի Պարաքոաթրասը և ներկայիս Էլբուրսը: Ստրաբոնը, խոսելով Տավրոսի մասին, գրում է, որ այն ձգվում է Վրկանից ծովից արևելք, և «նրա հյուսիսային մասում բնակվում են նախ գելերը, կադուսիները և ամարդները, ինչպես ասացինք, և մի քանի վրկանյան ցեղեր, հետո պարթևաց ազգը և մարգիանացոց և արեաց: Այնուհետև անապատն է, որ Սարնիոս[1547] գետը բաժանում է Վրկանիայից՝ առաջանալով դեպի արևելք՝ Օքոսի ուղղությամբ: Նույն լեռնաշղթայի՝ Հայաստանից մինչև այստեղ ձգված մասը (փոքր մասը չհաշված) կոչվում է Պարաքոաթրաս»[1548]: Ինչպես

[1544] Ստրաբոն, էջ 43:
[1545] Կա նաև վիտիներ-ուիտիներ ընթերցումը (տե՛ս Страбон, с. 481; The Geography of Strabo, Vol. V, XI, VII, 1, p. 248):
[1546] Ստրաբոն, էջ 35: Страбон, с. 481.
[1547] Հավանաբար Պլինիոսի Սիդեր գետն է (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 46, p. 370):
[1548] Ստրաբոն, էջ 37:

տեսնում ենք, երկու տեղեկություններում հիշատակված Մարական և Պարաքոաթրասի լեռները նույնանում են, հետևաբար, այդ լեռները սահմանագիծ են եղել նշված ցեղերի և մարերի համար: Ստրաբոնը Կասպից ծովի նկարագրության մեջ նշում է, որ «համաձայն Էրատոսթենեսի՝ հույներին հայտնի ճանապարհը այդ ծովի շուրջը մինչև աղվանների և կադուսիների ափերը կազմում է 5400 ստադիոն, իսկ անարիակների, մարդերի և վրկանների ափերի երկայնքով մինչև Օքսոս գետի գետաբերանը՝ 4800 ստադիոն...»[1549]:

Ներկայացնելով Կասպից ծովի առափնյա շրջանում ապրող ցեղերի տեղադրությունը՝ Ստրաբոնը գրում է, որ վրկանների և արիանների միջև բնակվել են տապիրները կամ տապյուրները, իսկ վրկաններից այն կողմ՝ ամարդները, անարիակները, կադուսիները, աղվանները, կասպերը, ուիտիները և այլ ժողովուրդներ մինչև սկյութները[1550]: Ա. Հակոբյանը, մանրամասն քննելով հին աղբյուրների տեղեկությունները, հաստատում է, որ աղվանների և կադուսիների (հայկական աղբյուրների կատիշներ-քադուշները[1551]) սահմանն անցնում էր Կուր գետի ստորին հոսանքով, և Արտաշես Ա-ն գրավել է կադուսիների երկրի հյուսիսային մասը՝ Կասպիանե-Փայտակարանը[1552], իսկ Ի. Դյակոնովը կադուսիներին տեղադրում է Էլբուրսից հյուսիս՝ Կասպից ծովի ափին՝ Արաքսի ստորին հոսանքից հարավ-արևելք դեպի Ղըզըլ-Ուզենի գետաբերանի կողմը[1553]: Տապիրները կամ տապյուրները Տապուրստանի բնակիչներն են[1554], իսկ մարդերը կամ ամարդները բնակվել են Ամարդոս գետի[1555] միջին և ստորին հոսանքի շրջանում. նրանց հետ կապում են Ամոլը՝ «Աշխարհացոյց»-ի Ամլը[1556]: Անարիակները մասնագիտական գրականության մեջ համարվել են կա՛մ ոչ իրանական ժո-

[1549] Страбон, с. 480.
[1550] Անդ, էջ 485:
[1551] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 58, 67, 115:
[1552] Акопян А., Албания-Алуанк, с. 13.
[1553] Дьяконов И., История Мидии, с. 32, 85, 225, 339.
[1554] Marquart J., Ērānšahr, S. 108; Алиев И., История Мидии, с. 105.
[1555] Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 40, p. 372. Հեղինակը Մարաստանում հիշատակում է Ամարդոս գետը՝ ներկայիս Սեֆիդ-ռուդը:
[1556] Marquart J., Ērānšahr, S. 136; Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 463: Ջ. Ռաուլինսոնը մարդերին տեղադրում է Մազանդարանից և Աստերաբադից անմիջապես հարավ (տե՛ս Rawlinson G., The Sixth Great Oriental Monarchy (Parthia), New York, 1873, p. 63): Իսիդոր Քարակացու տեղեկություններից երևում է, որ մարդերը՝ որպես պահապան ջոկատ, Հրահատ Ա-ի կողմից հաստատվում են Կասպիական դռների շրջանում (տե՛ս Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 174, ծնթ. 52; Muller C., Geographi Graeci Minores, Vol. I, p. 251):

ղովուրդների հավաքական անվանում[1557], կա՛մ ուղղել են արանիակներ՝ կապելով «աղվանական ցեղերի նախահայր Առանի հետ»[1558], կա՛մ էլ կապել են Հերոդոտոսի էնարիների հետ, որոնք սկյութական քրմերի հատուկ դաս էին[1559]: Ստրաբոնի վերոբերյալ տեղեկությունից պարզվում է, որ ուիտիները գտնվել են ամարդների և անարիակների միջև՝ Կասպից ծովի հարավային ափին, իսկ անարիակների հետ հիշատակված պարասիներին և ուիտիների երկրում Ենիանա քաղաքը կառուցած ենիաններին համարել են արկադիական և թեսալական գաղութաբնակներ[1560]: Ստրաբոնի տեղեկությունից երևում է, որ հեղինակն անարիակներին և պարասիներին չի նույնացնում, իսկ Փավստոս Բուզանդի հիշատակությունը Պարսքի՝ պարսերի երկրի մասին[1561] ցույց է տալիս, որ պարսիներն իրականում գոյություն են ունե-

[1557] Дьяконов И., История Мидии, с. 448. Կարծիք է հայտնվել, որ անարիակ չի նշանակում «ոչ արիացիներ» և համապատասխանում է հայերենի *անրյակ «անրջական, անուրջի վերաբերյալ» բառին (տե՛ս Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, ՊԲՀ, 1961, թիվ 2, էջ 215; Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 196):

[1558] Тревер К., Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э.-VII в. н. э), М.-Л., 1959, с. 143.

[1559] Еремян С. Т., Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, 4, с. 52. Էնարների անունը բացատրվել է որպես «ոչ տղամարդկային» (տե՛ս Д., К., Ш., с. 305; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 167-168):

[1560] Акопян А., Նշվ. աշխ., էջ 78-79; Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1995, թիվ 1, էջ 198-199: Հայաստանից առանձին հիշատակված Ուիտիայի նույնացումը հայկական Ուտիքին անընդունելի է (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 320; Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, Երկեր, հ. Ե, Եր., 1984, էջ 263), քանի որ վերջինս Մեծ Հայքի թագավորության անբաժանելի մասն էր: Վիտիներ-ուիտիների հետ թերևս նույնանում են Պտղոմեոսի հիշատակած Ουάδασσοι-ը Կասպից ծովի հարավային ափին՝ Յասոնիոն-Դամավանդ լեռան ծովահայաց լանջերին (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 2, 6):

[1561] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 323: Բնագրում գրված է. «յերկրէն Պարսից և ի Փայտակարան քաղաքէ»: Ստ. Մալխասյանցը «Պարսից»-ը ուղղել է «Կասպից»: Սրբագրելու կարիք չկա, քանի որ խոսքը պարսիների ցեղի մասին է, որի մի հատվածը բնակվել է Փայտակարան աշխարհում կամ էլ հարևանությամբ: Պարսիների հետ, ամենայն հավանականությամբ, կապված են Պլինիոս Ավագի (պ)արսերը, որոնք հիշատակվում են գելերի հետ նույնացվող կադուսիների հարևանությամբ (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 48, p. 372): Ն. Ադոնցը պարսիների հետ է կապում Արցախի Պազկանք, Պարսականք գավառը և, հնարավոր է, Քուստի Փառնեսը (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 473): Ս. Պետրոսյանը Ռոտ-Պարսեան, Պարսականք, Պարսք (լատ. Paresaca), Պարսպատուհիք տեղանունների մեջ տեսնում է հին իրանական պարս՝ «կող, կողմ» բառը (տե՛ս Պետրոսյան Ս., Փայտակարանը և Պարսպատունիքը մ. թ. I դարի երրորդ քառորդում, ՊԲՀ, 1975, թիվ 2, էջ 181): Պարսիները, որոնք պարսկական ծագում ունեին (տե՛ս Гранտовский Э., Նշվ. աշխ., էջ 169-170, 373), ծուլեցին անարիակներին:

ցել: Հույն գաղութաբնակների հետ նշված ցեղանունների կապը վիճելի է, քանի որ հունահռոմեական աշխարհը բազմաթիվ օտար անուններ, հարմարեցնելով իր լեզվին, կապում էր իր էթնոաշխարհագրական իրողությունների հետ: Այդուհանդերձ, ենիանների՝ ուիտիների երկրում քաղաք կառուցելը նշանակում է, որ նրանք այդ երկրում օտարներ էին, և դատելով Ստրաբոնի տեղեկությունից, որ քաղաքում ցուցադրում էին հունական զենքեր, պղնձե ամաններ և գերեզմաններ, հենց ենիանների թեսալական ծագումը հավանական է: Ամասիացի աշխարհագետը գրում է նաև, որ «ենիանները հաստատվել են Ուիտիա (իմա՛ ուիտիների երկիրը - Խ. Հ.) և Հայաստանից վերև՝ Աբոսից և Նիբարոսից (սրանք Տավրոսի ճյուղերն են) այն կողմ. սրանցից Աբոսը մոտիկ է այն ճանապարհին՝ որ տանում է Եկբատան՝ Բարիսի տաճարի առաջով: Ասում են նաև, թե ինչ-որ թրակացիք (կոչված սարապարաս, այն է՝ գլուխ կտրող) բնակվել են Հայաստանից վերև՝ գուրանացոց և մարաց մոտ: Դրանք գազանաբարո լեռնական անհնազանդ մարդիկ էին՝ մորթ մաշկող և գլուխ կտրող (այս է նշանակում սարապարաս)»[1562]: Ս. Երեմյանը գուրանացիներին տեղադրում է ասուրական աղբյուրների Գուրիանա երկրում՝ Արթիկի շրջանում, և անդրադառնալով այս տեղեկությանը՝ ավելացնում է, որ սարապար բառը գլուխ հատողներ նշանակությամբ, իրանական Կամսար անվան իմաստավորումն է, որ հետագայում դարձավ Կամսարական տոհմի ժառանգական տիտղոսը, և ամենայն հավանականությամբ, Արշարունիքում ու Շիրակում (այսինքն՝ գուրանիացիներից արևմուտք) ապրող ցեղի առաջնորդն այն ժամանակ արդեն տոհմային այնպիսի տիտղոս էր կրում, որը իմաստով մոտենում էր պարթևական դարաշրջանի «Կամսար»-ին: Ավարտելով միտքը՝ ուսումնասիրողը եզրակացնում է, որ սարապարները՝ որպես թրակական ցեղ, պետք է կիմերներին ազգակից ցեղ համարվի[1563]:

[1562] Ստրաբոն, էջ 65: Պլինիոս Ավագը Միջին Ասիայում հիշատակում է սարապարներ անունով ցեղ, որն ավելի շուտ ցեղի բնորոշում է, քան թե էթնանուն (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 48, p. 372):

[1563] Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, ՊԲՀ, 1968, թիվ 2, էջ 91: Ուսումնասիրողը Ենիան քաղաքը նույնացնում է արաբական աղբյուրների Յունանին՝ Աղդամի շրջանում, իսկ Անարիակա քաղաքը տեղադրում Ամարասի շրջանում (տե՛ս Еремян С. Т., Страна «Махелония»..., с. 51): Տե՛ս նաև Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, էջ 260-261: Այսպիսի

Ստրաբոնի սարապարները նույնացվել են Պլինիոսի կեփալոտոմներին[1564]: Ըստ Գայոս Պլինիոսի՝ աքեյներից հետո մարդերն են, կերկետները, սերրերը և կեփալոտոմները[1565]: Սերրերը Հ. Մանանդյանը ուղղում է սերակի-սիրակի և կապում է Շիրակ գավառի հետ, իսկ կեփալոտոմները Ստրաբոնի սարապարներն են (=«գլուխ կտրողներ»)[1566]: Մեր կարծիքով, այս նույնացումն անընդունելի է, քանի որ կեփալոտոմը ինչ-որ ցեղի մակդիր է, և դատելով Քսենոփոնի տեղեկություններից՝ այս մակդիրը լիովին կարող է համապատասխանել խալյուբներին, որոնց հունաց բյուրը հանդիպում է Ճորոխի ստորին հոսանքի շրջանում և բնորոշում որպես գլուխ կտրողների[1567]:

տրամաբանությամբ այնիանների անվանը համահունչ է Իշպուինիի և Մենուայի Օձասարի արձանագրության մեջ հիշատակվող Այանիանի տեղանունը (տե՛ս Իգումնով Վ., Կարագյոզյան Հ., Հմայակյան Ս., Օձասարի սեպագիր արձանագրությունը, ՊԲՀ, 1997, թիվ 1, էջ 193-194; Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, с. 56; Salvini M., Corpus dei Testi Urartei, Vol. I, p. 137), որը տեղադրվել է Սյունիքի Քաջունիք գավառում (տե՛ս Կարագյոզյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 106-107), չնայած բնակավայրի հիշատակումը Պուլուադի երկրի կազմում հավանական է դարձնում այն փնտրել Երասխից հարավ: Նշենք նաև, որ Հ. Կարագյոզյանն ասորեստանյան աղբյուրների [KUR]Guriania երկիրը նույնացնում է ուրարտական աղբյուրների [KUR]Guria երկրին, որն էլ համապատասխանում է գուրանիացիների երկրին՝ հետագայ Սյունիքի արևելյան հատվածը (տե՛ս Կարագյոզյան Հ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, ԼՀԳ, 1978, թիվ 10, էջ 64-66): Գուրիանիա երկիրը տեղադրել են Սևանա լճի հարավային վերջավորությունից դեպի արևելք (տե՛ս Погребова М. Н., Закавказье и киммерийцы ассирийских текстов конца VIII в. до н. э., Древние цивилизации Евразии. История и культура, М., 2001, с. 330): Ամեն դեպքում Ստրաբոնի գուրանացիները պետք է տեղադրվեն Հայաստանից դուրս:

[1564] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 472, ծնթ. 1:

[1565] ИДПСК, ВДИ, 1949, 2, с. 291.

[1566] Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, էջ 277-278: Կ. Կրեչմերը նշում է, որ սերրեր անունով ցեղ կա Պոմպոնիոս Մելասի հին հրատարակություններում՝ մելանխլեններ, սերրեր, սիրակներ, կոլիկներ և այլն, այն դեպքում, երբ Ֆրիքի հրատարակության մեջ ցեղի անունը ընդհանրապես ոչնչացված է: Ըստ Մելասի երկի ծանոթագրողների՝ սերրերը գտնվել են Նովոռոսիյսկի շրջանում (տե՛ս ИДПСК, ВДИ, 1949, 2, с. 291, прим. 15): Մ. Պետրոսյանը սարապարների անունը կապում է ավանդական Շարայի հետ և բացատրում որպես «Շարայածին»-ներ կամ «Շարայի զարմ»-եր (տե՛ս Պետրոսյան Ս., Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI-V դդ.), ՊԲՀ, 1977, թիվ 1, էջ 211-212; նույնի՝ Հացազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 190):

[1567] Xenophon, Anabasis, Vol. III, IV, VII, 16, pp. 328.

Ենիանների կամ այնիանների հետ սովորաբար կապում են Փայտակարանի Հանի գավառը[1568]: Ն. Ադոնցը ենթադրում է, որ Ստրաբոնի Աբոսը և Նիբարոսը նույնանում են Արարատի գագաթներին, որոնցից վերև՝ հյուսիս գտնվող Բագրատունիների ապագա մայրաքաղաք Անին իր անվան համար պարտական է այնիանի ժողովրդին, որոնց հետ կապված է նաև Դարանաղիի Անին[1569]: Աբոսը և Նիբարոսը, մեր կարծիքով, չեն տեղորոշվում Հայաստանում, քանի որ գտնվել են Հայաստանից վերև, այսինքն՝ դուրս, դեպի հարավ, հետևաբար՝ Ս. Երեմյանի և Ն. Ադոնցի տեղադրությունները կասկածելի են[1570]: Ստրաբոնը գրում է, որ «Մասիոսից վերև գտնվում է Նպատը, շատ ավելի արևելք, Գորդիենեի երկարությամբ, և հետո Աբոսը, որից հոսում են թե՛ Եփրատը և թե՛ Արաքսը, առաջինը՝ դեպի արևմուտք, երկրորդը՝ դեպի արևելք. հետո էլ գտնվում է Նիբարոս լեռնաշղթան, որ ձգվում է մինչև Մարաստան»[1571]: Յ. Մարկվարտը, վերլուծության ենթարկելով այս խառնաշփոթ հատվածը, կատարում է որոշ ուղղումներ և տեղեկությունը վերականգնում հետևյալ կերպ. «Մասիոս լեռից (Նեխ Մասիքից, Սիփան-դաղից) վերև՝ դեպի արևելք գտնվում է Նպատը (Ալա-դաղը). սրանից հեռու <դեպի արևմուտք>՝ Աբոսը, որից հոսում են թե Եփրատը և թե Արաքսը, առաջինը դեպի արևմուտք, երկրորդը դեպի արևելք. <արևելյան կողմը Մեծ Մասիոս լեռն է (Մասիսը): Սրանից հարավ> ձգվում է Նիբարոսը մինչև Մարաստան»[1572]: Յ. Մարկվարտը, իրավացիորեն, Կոհ-ի-Նիհորական լեռները նույնացնում է պարսկաթուրքական սահմանային լեռնաշղթային[1573]:

[1568] Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, էջ 215: Այնիաններին կապել են Կասպից ծովից հարավ-արևմուտք ընկած Անդիա երկրի հետ (տե՛ս Алиев И., История Мидии, с. 103):

[1569] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 70, 467; Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության..., էջ 263:

[1570] Ս. Երեմյանը Նիբարոսը նույնացնում է ասուրա-բաբելական Նիբուրին՝ ներկայիս Ջուդի-դաղին՝ հայկական Արարադին (տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 39): Այն կարծիքը, թե «Արմենիայից վերև» ասելով՝ Ստրաբոնը հասկանալու էր XIII սատրապությունից «վերև», այսինքն՝ Հայկական Պար լեռնաշղթայից այս կողմ ընկած հողերը (տե՛ս Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 301), չենք կիսում, քանի որ Աքեմենյան պետության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը գրեթե ամբողջությամբ մտնում էր XIII սատարապության մեջ՝ էլ չխոսելով Ստրաբոնի ժամանակների մասին:

[1571] Ստրաբոն, էջ 55:

[1572] Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, էջ 214:

[1573] Անդ, էջ 212:

Մեր կարծիքով, Մասիոսը Մասիոն լեռներն են, որոնցից արևելք գտնվող Նպատի լեռները տվյալ տեղեկության մեջ ընդգրկում են և՛ Կորդվաց, և՛ Նպատական կամ Ջողա լեռները, որոնցից արևելք Նիբարոս-Կոհ-ի-Նիհորական լեռներն են: Ստրաբոնի Աբոսին և Նիբարոսին վերաբերող մյուս տեղեկության մեջ Աբոսը գտնվում է Մարաստանից ոչ հեռու, ինչը չենք կարող ասել Յ. Մարկվարտի նույնացումների պարագայում: Մեր կարծիքով, Աբոսը նույնանում է Վասպուրականի լեռների հարավային հատվածի հետ, որոնց մեջ մտնում են նաև, ըստ Ստրաբոնի, Աղբակի լեռները[1574], որոնցից արևմուտք Նորդուզի՝ Արևելյան Տիգրիսի վերին հոսանքի ակունքներն են: Հետևաբար՝ Արաքսը համապատասխանում է Կարմիր կամ Կոտոր գետին, իսկ Եփրատի տակ պետք է նկատի ունենալ Տիգրիսը՝ տվյալ դեպքում կա՛մ Ջերմ գետը՝ ներկայիս Բոհտան-սուն, կա՛մ էլ Աղբակի լեռներից սկիզբ առնող Մեծ Զաբը: Ընդ որում, իրանական հասկացությամբ Տիգրիսի (Երիշատի գետակը) և Արածանիի ակունքները սկիզբ են առել նույն լեռներից, որոնք Յ. Մարկվարտը համարում է Ալա-դաղը[1575], հետևաբար այս շփոթը առկա է նաև Ստրաբոնի կամ նրա աղբյուրի մոտ միայն այլ տեղորոշմամբ: Հավանաբար Ստրաբոնի այս տեղեկությունը վերաբերում է մ. թ. ա. II դարից առաջ վերաբերող ժամանակներին, երբ Վասպուրականի լեռներից արևելք ընկած Պարսկահայք աշխարհը դեռևս չէր վերամիավորվել Հայաստանին:

Ինչ վերաբերում է սարապարաս կոչված թրակացիներին, որոնք ապրել են գուրանացիների և մարերի հարևանությամբ, ապա սրանք, հավանաբար, Գյունդեսի, ներկայիս Դիալայի միջին և ստորին հո-

[1574] Աղբակի լեռնաշղթան մտնում է Վասպուրականի լեռնահամակարգի մեջ (տե՛ս Հակոբյան Թ. Խ. և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Եր., 1986, էջ 161): Պտղոմեոսի հիշատակած Աբոս լեռը ընդարձակ իմաստով ընդգրկում է արդեն Վասպուրականի ամբողջ լեռնաշղթան (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, V, 13, 5):

[1575] Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, էջ 213: Ն. Ադոնցը նեղ առումով Աբոսը և Նիբարոսը համարում է Մասիսի զույգ գագաթները, իսկ լայն առումով՝ Հայկական Պար լեռնաշղթան (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 320, ծնթ. 3): Ս. Պետրոսյանը Աբոսը նույնացնում է Մեծ Մասիսին, իսկ Նիբարոսը՝ Փոքր Մասիսին, ընդ որում, ուսումնասիրողը գտնում է, որ Աբոս//Մեծ Մասիսը իր անունը չէր կարող ստացած լինել հնդիրանական ջրային Ապամ-Նպատ աստվածության անունից: Ս. Պետրոսյանը Աբոսը բացատրում է «պապ», իսկ Նիբարոսն էլ՝ «նոր» նշանակությամբ (տե՛ս Պետրոսյան Ս., Արարատյան լեռների հին անունների և անվանադիրների մասին, ՊԲՀ, 2010, թիվ 3, էջ 220-227):

սանքների շրջանում տեղորոշվող Հերոդոտոսի դարդաններն են[1576], որոնք մասնագիտական գրականության մեջ համարվել են թրակա-փռյուգական ցեղ[1577], այնիանների սերունդները, Թեոփիլակտես Սիմոկատտայի նանիսեն-անի(ս)ենները[1578]:

Գուրանացիներն էլ համապատասխանում են Համադանի և Շահրիզորի լեռներում գտնվող գուրան քրդական ցեղին, որը քրդերից անջատված մի հատուկ գյուղացիական դաս է: Նրանց լեզուն հնչյունաբանական առումով պատմականորեն ամենասերտ կապի մեջ է այսպես կոչված զազայի հետ և այս լեզվի նման քերականորեն միանում է նոր պարսկական գրավոր լեզվին և, ընդհակառակը, խիստ բաժանված է քրդերենից[1579]: Թերևս քրդերը յուրացրել էին այս ցեղի անունը, ինչը բազմիցս առկա է քրդական ցեղերի անունների պարագայում: Մեր կարծիքով, գուրանացիների անունը պահպանել է Պտղոմեոսի աշխատությունը, որտեղ հիշատակվում է Գուրիաունա տեղանունը[1580]:

Ստրաբոնի տեղեկություններից մեկը Մարաստանի մասին վերաբերում է հին ժամանակներին, երբ Ատրպատականի պետությունը դեռևս չէր կազմավորվել. «Առավել լայնության Մարաստանը, ըստ երևույթին, հասնում է Զագրոսի լեռնանցքից (որը կոչվում է Մարական դռներ) Սիգրիանեի միջով մինչև Կասպիական դռները, այն կազմում է

[1576] Հերոդոտոս, I, 189: Հերոդոտոսը հիշատակում է Հելլեսպոնտոսի քաղաքներից Դարդանոսը (անդ, V, 117; VII, 43): Ստրաբոնը դարդաններին հիշատակում է Թրակիայում, Դարդանիա վայրը տեղադրում է Տրովադայում և այլն (տե՛ս Страбон, с. 286, 288, 310-311, 429, 529 և այլն):

[1577] Պետրոսյան Ս. Գ., Հին Մարաստանի տարածքի..., էջ 51-52:

[1578] Феофилакт Симокатта, История, перевод С. П. Кондратьева, М., 1957, с. 128. Չնայած որ, նանիսեն-անի(ս)ենները հիշատակվում են Մեծ ու Փոքր Զաբերի միջև:

[1579] Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, էջ 223-224; Potts D., Guriania, Γουράνιοι and the Gūrān, in: From Source to History: Studies on the Ancient Near Eastern worlds and beyond dedicated to Giovanni Battista Lanfranchi on the occasion of his 65th birthday on June 23, 2014, Münster, AOAT 412, 2014, pp. 561-571: Գ. Ասատրյանը գրում է, որ Ստրաբոնի գուրանները կասպյան շրջանի նախահիրանական հնագույն բնիկ էթնիկական տարրերից էին, որոնք ավելի ուշ իրանականացվեցին և հնարավոր է, որ նրանց ցեղանունը՝ որպես ենթաշերտային երևույթ, հաղորդվեր նրանց՝ արդեն իրանալեզու հետնորդներին կամ այդ տարածքներում հայտնված իրանական որևէ այլ ժողովրդի: Ուսումնասիրողը եզրակացնում է, որ գուրան (գորան) բառը, չնայած թվացյալ նմանությանը, այնուհանդերձ, դժվար է բխեցնել Ստրաբոնի գուրանների անվանումից (մանրամասն տե՛ս Ասատրյան Գ., Գուրաններ, Իրան-նամէ, 1995, թիվ 1, էջ 21-30):

[1580] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 2, 14; Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 50-51.

4100 ստադիոն»[1581]: Ինչպես կարելի է եզրակացնել այս տեղեկությունից, Սիգրիանեն մտել է Մարաստանի մեջ: Մենք հակված ենք կարծելու, որ Մարական դռները համապատասխանում են ներկայիս Շինակի լեռնանցքին, որն էլ իր հերթին նույնացնում ենք 298 թ. Մծբինի պայմանագրում հիշատակված Զինթա ամրոցին, որը Հայաստանի հարավային եզրն էր Մարաստանի սահմանում[1582]: Կասպիական դռները գտնվել են Ռագայի (ներկայիս Ռեյը) մոտ, ուրեմն, ըստ Ստրաբոնի, Շինակի լեռնանցքը նույնպես մտել է Սիգրիանեի մեջ[1583]:

Ստրաբոնի մեկ այլ վկայությունը մասնագիտական գրականության մեջ հակասական բացատրություններ է ստացել: Հույն հեղինակը գրում է. «Ատրոպատենեն ունի երկու զորավոր հարևան. սրանք են հայերն ու պարթևները, որոնք շատ անգամ խլել են նրա հողերը: Այնուամենայնիվ նա դիմադրում է նրանց և ետ առնում գրաված հողերը, ինչպես խլեց Սիմբակեն՝ հռովմայեցոց հպատակած հայերից, և դիմելով Կեսարի բարեկամության, պարթևների հետ էլ միաժամանակ հաշտ ապրեցին»[1584]: Ս. Երեմյանի կողմից Ստրաբոնի հիշատակած Սիմբակեի սրբագրումը Սիգրիակե կասկածելի է[1585]: Սիմբակե անունը հիշեցնում է Սիմբատ կամ Սմբատ անունը՝ համապատասխանելով Ջլմարի և Սրինգի միջև[1586] ընկած Սմբատաբերդին[1587]:

Ատրպատականի կամ Փոքր Մարաստանի՝ Հայաստանի հետ հյուսիսային սահմանագիծը հստակեցնելու համար կարևոր են Պտղոմեոսի հետևյալ տեղեկությունները: Հույն աշխարհագրագետը, նկարագրելով Մարաստանի և Մեծ Հայքի սահմանը, նշում է, որ սահմանն անցնում էր Կասպիոն և Խոաթրաս լեռներով[1588]: Ելնելով այս լեռների հիշատակությունից՝ կարող ենք եզրակացնել, որ Մարաստանը հյուսիս-արևմուտքում Մեծ Հայքի թագավորությունից բաժանված էր Հայկական լեռներ կոչվող լեռներով, հենց նույն Կասպիական լեռներով և Խոաթրաս-Գեղմանց լեռների ծայրհյուսիսային փոքր հատվածով: Մեծ Հայքի հարավարևելյան սահմանի նկարագրությունից պարզ երևում է, որ Կասպ-Փայտակարանը թագավորության անբաժանելի մասն էր, որը Մարաստանից բաժանված էր Կասպիոս լեռով[1589], այսինքն՝ Կասպիական լեռներով: Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ Պտղոմեոսի կոորդինատները կազմվել են զանազան ուղեցույցների տվյալների հիման վրա, և դրանք հիմնականում պայմանական են կամ ուղղակի սխալ, քանի որ աշխարհագրագետը փորձել է հարմարեցնել տարբեր դարաշրջանների նյութերը: Օրինակ, Մարաստանի նկարագրությունը գրեթե չի վերաբերում Պտղոմեոսի ապրած ժամանակաշրջանին և գալիս է Ատրպատականի մարական թագավորության գոյության ժամանակներից:

Ատրպատականի հյուսիսային սահմանի պարզաբանման համար կարևոր տեղեկություններ է հաղորդում Պոլիբիոսը: Պատմիչը, խոսելով մ. թ. ա. III դարի վերջին քառորդի դեպքերի մասին, գրում է, որ Ատրպատականի առաջնորդ Արտաբազանեսի երկիրը ընկած էր Մարաստանի հարևանությամբ, որից բաժանված էր լեռնաշղթաներով: Շարունակելով նկարագրությունը՝ պատմիչը ավելացնում է, որ «այն (Ատրպատականը-Խ. Հ.) ձգվում է դեպի Պոնտոսի այն մասերը, որոնք գտնվում են Փասիս գետից վերև ու մոտենում է նաև շատ մոտ Հյուրկանից ծովին»[1590]: Բերված տեղեկության մեջ հարցն այն է, որ որոշ ուսումնասիրողներ Փասիս գետը փորձել են նույնացնել ներկայիս Ռիոն գետի հետ, հետևաբար տեղեկությունն էլ կապել են Աքեմենյան կամ էլ նույնիսկ մարական դարաշրջանների հետ[1591]: Ատրպատա-

[1581] Страбон, с. 495.

[1582] Petrus Patricius, Fragm. 14 (տե՛ս Müller C., FHG, Vol. IV, Parisiis, 1868, p. 189). Զինթա անունը փոյուգերեն բացատրվել է «դարպաս, մուտք, անցք» նշանակությամբ (տե՛ս Պետրոսյան Ս. Գ., Հին Մարաստանի տարածքի..., էջ 53):

[1583] Սիգրիանե-Շիրականի մասին տե՛ս Խորիկյան Հ., Քուստի Խորուարանի Նոտարտա և Շիրական երկրների տեղադրության շուրջ, ՀԱ, 2011, թիվ 1-12, էջ 261-288:

[1584] Ստրաբոն, էջ 47:

[1585] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 67: Յ. Մարկվարտն ուղղում է Աղբակ (տե՛ս Marquart J., Ērānšahr, S. 109): Ն. Ադոնցն ասուրական աղբյուրների Սանգիբուտու-Սուբի-Սումբի անունները կապում է Սիմբակեի հետ (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երկեր, հտ. Դ, էջ 133, ծնթ. 2), սակայն այս նույնացումներն անընդունելի են, քանի որ ասուրական աղբյուրներում նշված երկրները ունեցել են տարբեր տեղադրություններ (տե՛ս Арутюнян Н., Топонимика Урарту, с. 165-166, 170, 172-173):

[1586] Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս, էջ 65: Սմբատաբերդը հիշատակում է Թովմա Արծրունին (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 228):

[1587] Այս կապակցությամբ հույն աշխարհագրագետ Պտղոմեոսի և մյուս հեղինակների համապատասխան տեղեկությունների քննությունը մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 88-91:

[1588] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 38-39. Վերևում նշեցինք, որ Մարաստանի նկարագրության մեջ Կասպը միաժամանակ Պտղոմեոսը սխալմամբ համարում է մարական երկրամաս (անդ, էջ 40-41):

[1589] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 13, 3.

[1590] The General History of Polybius, Vol. II, pp. 236-237; ИДПСК, ВДИ, 1947, 3, с. 301. Համեմատության համար նշենք, որ տվյալ հատվածի ռուսերեն թարգմանությունը նույնպես մոտ է բնագրին: (...[Область Артобазана] лежит рядом с Мидией, отделяясь от нее промежуточною горною цепью; некоторые части ее возвышаются над Понтом в местах выше Фасиса, а с другой стороны она доходит до Гирканского моря).

[1591] Տե՛ս, օրինակ, Алиев И., Очерк истории Атропатены, с. 53, 69.

կանի սահմանը հյուսիսում երբեք էլ չի հասել մինչև Սև ծովի հարավարևելյան ափերը, քանի որ տվյալ հաղորդումը պետք է հասկանալ այն իմաստով, որ Ատրպատականի հյուսիսային մասերը ձգվել, տարածվել, երկարել են Պոնտոսի ուղղությամբ, այսինքն՝ Ատրպատականը հյուսիսում նայել է դեպի Սև ծով: Հաղորդումը վերագրել մարական տերության, առավել ևս Աքեմենյան ժամանակներին, միանգամայն անընդունելի է: Պոլիբիոսը հստակ ներկայացնում է մ. թ. ա. III դարի վերջին քառորդի դեպքերը, ըստ այդմ էլ նույն տեղեկության մեջ Փասիս գետը նույնանում է հայկական Երասխ-Արաքս գետին, իսկ հին աղբյուրներում Արաքսի նույնացումը և՛ Փասիս-Ռիոն գետի, և՛ ուրիշ գետերի հետ բազմիցս է հանդիպում[1592], հետևաբար Ատրպատականը հյուսիսում, բացի Հայաստանից, սահմանակցել է Երասխի ստորին հոսանքից հյուսիս ընկած Աղվանքին, ինչը նշանակում է, որ Երասխից հյուսիս ընկած հետագա Աղվանքի տարածքը չի մտել Ատրպատականի մեջ: Ատրպատականի՝ Երասխ գետի աջափնյակին ընկած երկրներն էլ՝ Կասպիանե-Փայտակարանը, Փավնիտիս-Մարդպետականը, նաև Բասորոպեդա-Պարսկահայքը, ընդամենը երեք տասնամյակ անց միացվում են Մեծ Հայքի թագավորությանը[1593]: Այս պարզաբանումների համատեքստում Պոլիբիոսի տեղեկությունները միանգամայն հասկանալի են և արժանահավատ:

Դամավանդից արևմուտք ընկած առափնյա հողերը, որոնք օղակում են Կասպից ծովը հարավ-արևմուտքից, պետք է մաս կազմեին Մեդիա-Մարաստանի[1594]: Արիանոսը գրում է, որ Նիսայական դաշտում Ալեքսանդրը հանդիպում է Ատրոպատոսի հետ, որն իր հետ բերել էր «հարյուրի չափ կանանց. դրանք, ըստ նրա, եղել են ամազոնուհիներ»[1595]: Ամազոնուհիների մասին հիշատակությունը կասկածելի է, և հարկ չկա դրանց տակ տվյալ տեղեկության մեջ ինչ-որ սկյութական ցեղ տեսնել և կապել Ատրպատականի տարածքի հետ[1596], հատկապես, որ Ալեքսանդրը հրամայում է հաղորդել ամազոնուհիների թագուհուն, որ ինքը կգնա նրա մոտ, քանի որ ուզում է թագուհուց երեխաներ ունենալ[1597]: Վերջին տեղեկությունը ցույց է տալիս, որ Ալեքսանդրն ամազոնուհիներին չի համարում Ատրոպատոսի ենթակայության տակ գտնվող ցեղ, այլ պարզապես հիշատակում է Ատրոպատոսի հետ՝ նկատի ունենալով Ալեքսանդրի տերության հյուսիսում Ատրոպատոսի սատրապության գտնվելը, այսինքն՝ անուղղակիորեն ամազոնուհիների բնակության շրջանը դնելով Մարաստանից էլ ավելի հյուսիս, ինչը կապվում է արդեն Կովկասի հետ: Նշենք, որ ընդհանրապես ամազոնուհիների մասին տեղեկությանը չի վստահում հենց Արիանոսը[1598], իսկ Ռուփոսը ամազոնուհիների թագուհուն անվանում է Թալլեստրիս, որն իշխում էր Կովկասի ու Փասիս գետի միջև ընկած տարածության ողջ բնակչության վրա[1599]: Արիանոսի տեղեկությունը կարևոր է նրանով, որ Նիսայական դաշտը, կարծես թե, չի համարվում Ատրոպատոսի սատրապության մասը, չնայած Ատրոպատոսը Մարաստանի սատրապն էր[1600]: Ամենայն հավանականությամբ Ալեքսանդրը նախկին մարական սատրապությունից առանձնացրել էր մի քանի նոր սատրապություններ: Օրինակ, Մարաստանում գտնվող պարետակների մարզը վերածվել էր առանձին սատրապության, իսկ Էկբատանը, դատելով Արիանոսի տեղեկություններից, հանդիսանում էր մակեդոնացիների հենակետը և չէր մտնում, գոնե ուղղակիորեն,

[1592] Օրինակ, Քսենոփոնի մոտ Երասխը անվանված է Փասիս, ինչը կապված է հայկական Բասեան գավառի հետ, որի բնակչությանը հույն պատմիչը անվանում է փասիաններ (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 99, 129): Արաքսի նույնացումների մասին մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, էջ 222-231:

[1593] Տե՛ս Ստրաբոն, էջ 57:

[1594] Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր, ՎԷմ, 2011, 2, էջ 51:

[1595] Արիանոս, էջ 256:

[1596] Алиев И., Очерк истории Атропатены, с. 57.

[1597] Արիանոս, էջ 256:

[1598] Ամազոնուհիների գոյությանը չի վստահում նաև Պլուտարքոսը, որը հայտնում է, թե սկյութների թագավորն Ալեքսանդրին կնության է տվել դստերը (տե՛ս Плутарх, Александр, XLVI, Избранные жизнеописания, т. II, с. 407-408):

[1599] Ռուփոս, էջ 419: Պատմիչի կողմից Վրկանի հարևանությամբ ամազոնուհիների տեղադրությունը թույլ է տալիս Վրկանը նույնացնել Վիրքի հետ, իսկ Փասիս գետը նույնացվել է Իռիսին, Դոնին, Ռիոնին և այլն (տե՛ս Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, էջ 229-230): Թալլեստրիսին, որը թագավորում էր Փասիս և Թերմոդոնտ գետերի միջև ընկած երկրում, հիշատակում է նաև Դիոդորոս Սիկիլիացին: Ալեքսանդրն ամազոնուհիների թագուհուն հանդիպում է Հյուրկանիայում (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 108), այսինքն՝ ամազոնուհիների երկիրը Վրկանից հյուսիս էր, հետևաբար ամազոնուհիները սկյութներ էին: Մեր կարծիքով, Թալլեստրիսի մասին պատմությունը հորինվել է այն պատճառով, որ Ալեքսանդրը կանանց «նվաճում էր իր փառքով և խիզախությամբ», այն դեպքում, երբ Կյուրոսը սպանվեց մասսագետների թագուհի Տոմյուրիսի կողմից (տե՛ս Հերոդոտոս, I, 214):

[1600] Ալեքսանդրը Մարաստանի սատրապ սկզբում նշանակում է պարսիկ Օքսիդատին, հետո՝ Ատրոպատոսին (տե՛ս Արիանոս, էջ 114, 153, 238, 244; Ռուփոս, էջ 409): Ի. Ալիևը կարծում է, որ Ատրոպատոսը մինչև Օքսիդատը Մարաստանի սատրապն էր և երկրորդ անգամ սատրապ նշանակվում է Օքսիդատին հեռացնելուց հետո (տե՛ս Алиев И., Очерк истории Атропатены, с. 54):

Մարաստանի սատրապության մեջ[1601]: Ալեքսանդրի մահից հետո Մարաստանի սատրապությունը, այսինքն՝ Մեծ Մարաստանը՝ Էկբատանա կենտրոնով, տրվում է Պիթոնեսին, իսկ Ատրոպատեսին՝ Փոքր Մարաստանը[1602]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ X կամ մարական սատրապությունն Աքեմենյան Պարսկաստանի ընդարձակ և հարուստ սատրապություններից մեկն էր, որը կազմված էր չորս ենթաշրջաններից: Աքեմենյան տիրապետության վերջին շրջանում և հատկապես Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ այդ վարչական միավորները դարձել էին առանձին սատրապություններ, որոնք պատմական կարևոր դերակատարություն ունեցան նաև հետագա դարաշրջանում:

3.11. Կադուսիների տեղադրությունը

Կադուսիների մասին հիշատակություններ կան՝ սկսած հին ժամանակներից: Կադուսիները հայտնի չեն պատմահայր Հերոդոտոսին: Նրանց մասին ընդարձակ տեղեկություններ հաղորդում է Հերոդոտոսի կրտսեր ժամանակակից Քսենոփոնն իր «Կյուրոպեդիա» բարոյախոսական-քաղաքական երկում: Քսենոփոնի հիշյալ երկում կան հաղորդումներ, որոնք, համադրվելով այլ սկզբնաղբյուրների հետ, կարող են բերել մի շարք հետաքրքիր պատմաաշխարհագրական եզրահանգումների:

Կադուսիները «Կյուրոպեդիա»-ում հիշատակվում են բավականին հաճախ, ընդ որում, դատելով Քսենոփոնի տեղեկություններից, նրանք բուռն մասնակցություն են ունեցել Առաջավոր Ասիայի քաղաքական զարգացումներում: Այսպես, Քսենոփոնը կադուսիներին համարում է ասորեստանցիների ամենամեծ թշնամիները.«Զևսը վկա,-ասաց հյուրկանների թագավորը,-նրա (իմա՛ ասորեստանցու-Խ. Հ.) ամենամեծ թշնամիները կադուսիներն են. սրանք մեծաթիվ և քաջարի ցեղեր են. նաև մեզ սահմանակից սակերը, որոնք բազում չարիքներ են կրել ասորեստանցուց, քանզի նրանց ևս նա փորձել է նվաճել, ինչպես մեզ»[1603]: Մասնագիտական գրականության մեջ նշվել է, որ «Կյուրոպեդիա»-ի տեղեկությունները Կյուրոսի մասին վերաբերում են նույն ան-

[1601] Այս քաղաքականությունը պայմանավորված էր քաղաքական նկատառումներով, քանի որ Մարաստանը հանդիսանում էր պետականության և անկախության վերականգնման օջախ: Օրինակ, պատահական չէ, որ Ատրոպատոսը ճնշում է մարաստանցի ոմն Բարիաքսի ապստամբությունը, որն իրեն հռչակել էր պարսիկների և մարերի թագավոր (տե՛ս Արիանոս, էջ 238):
[1602] Արիանոս, էջ 113, 122, 257, 596; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110-111:
[1603] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 187:

վան տակ թաքնված երկու նույնանուն թագավորների. մեկը՝ Աստիագեսի հոր՝ Կիաքսար Բ-ի (մ. թ. ա. 625-585 թթ.) ժամանակակից Կյուրոս Ա-ն է (մ. թ. ա. 640-600 թթ.)[1604], որը ճնշեց հայերի հակամարական ապստամբությունը մ. թ. ա. 612-609 թվականների միջոցին, մյուսը՝ Կյուրոս Մեծը, որն էլ ճնշեց հայերի հակամարական ապստամբությունը, հավանաբար, մ. թ. ա. 570 կամ 569 թվականին[1605]: Ելնելով այն տեղեկությունից, որ Կյուրոսի գլխավորած դաշնակից զորքերը պաշարում են Բաբելոնը[1606]՝ ասորեստանցու անվան տակ, անշուշտ, պետք է նկատի ունենալ Նոր Բաբելոնական թագավորությունը[1607]: Ուրեմն տվյալ ժամանակաշրջանում կադուսիների, ինչպես նաև հյուրկանների և սրանց հարևան սակերի թշնամությունն այդ թագավորության հետ արդեն իսկ կասկածելի է: Հետևաբար անընդունելի է նաև կադուսիներին, ինչպես և հյուրկաններին ու սակերին, փնտրել ասորեստանցիների հարևանությամբ, որոնք իրր բաժանում էին նշված ցեղերին մեդացիներից և պարսիկներից[1608]: Չպետք է մոռանալ նաև, որ հենց ասորեստանցիներն էին արշավանքներ ձեռնարկել Ուրմիո լճից արևելք և հյուսիս-արևելք ուղղություններով և, բնականաբար, կարող էին բախվել կադուսիների հետ[1609]: Այդ արշավանքների արձագանքներն են հավանաբար պահպանվել Դիոդորոս Սիկիլիացու մոտ, որն օգտվել է Կտեսիաս Կնիդացու երկից: «Պատմական գրադարան»-ում գրված է, որ Ասորեստանի թագավոր Նինոսը տիրանում է կադուսների, տապյուրների, հյուրկանների, դրանգների, դերբիկների, կարմանների, քորոմնաների, բորկանների, պարթևների երկրներին, Պերսիսին, Սուսիանեին, Կասպիանեին, հասնելով Բակտրիա, որը նվաճում է հաջորդ արշավանքի ժամանակ[1610]: Անշուշտ, Ասորեստանի ոչ մի թագավոր աշխարհագրական այդպիսի լայն գործունեություն չի ծավալել, սակայն այն հանգամանքը, որ Նինոսն ամուսնանում է Սեմիրամիս-Շամիրամի հետ, որն իրական պատմական

[1604] Бикерман Э., Хронология древнего мира, М., 1975, с. 193.
[1605] Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 23, 51-52, 87:
[1606] Կյուրոպեդիա, էջ 192:
[1607] Ի. Դյակոնովը Քսենոփոնի այս տեղեկությունները կապում է պատմական Կիաքսարի (իմա՛ Բ-ի) և Ասորեստանի միջև տեղի ունեցած պատերազմների հետ (տե՛ս Дьяконов И., История Мидии, с. 296):
[1608] Անդ, էջ 187-188:
[1609] Այդ ուղղություններով արշավանքներ ձեռնարկել են Ադադներարի Գ-ն (մ. թ. ա. 811-781 թթ.), Թիգլաթպալասար Գ-ն (մ. թ. ա. 745-727 թթ.):
[1610] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17:

անձնավորություն է, թույլ է տալիս Նինոսին նույնացնել Շամշի-Ադադ Ե-ի (մ. թ. ա. 824-811 թթ.)՝ Ադադներարի Գ-ի հոր հետ, որի կամ էլ նրա հաջորդի օրոք ասորեստանցիները հայտնվում են Ուրմիո լճից արևելք[1611]:

Վերոբերյալ տեղեկության մեջ ընդունելի է հյուրկանների հարևանությամբ սակերի տեղադրությունը, քանի որ այդ մասին հավաստում են բազմաթիվ աղբյուրներ[1612]: Կադուսիների և մարերի միջև տեղի ունեցած պատերազմների մասին հաղորդում է Կտեսիաս Կնիդացին: Տեղեկությունից հայտնի է դառնում, որ կադուսիները հաղթել են մարերին և երբեք չեն ենթարկվել նրանց[1613]:

Քսենոփոնի մյուս տեղեկություններում ևս սակերը, հյուրկանները և կադուսիները գրեթե միշտ հիշատակվում են միասին, ընդ որում, կադուսիների ռազմական ուժն ավելին էր քան սակերինը և հյուրկաններինը. «Կյուրոսի զորքին միացած կադուսիների զորքը բաղկացած էր երկու բյուր պելտաստներից և չորս հազար հեծյալներից. սակերի զորքը՝ մեկ բյուր աղեղնավորներից և երկու հազար հեծյալ աղեղնավորներից. իսկ հյուրկանները ուղարկեցին ինչքան կարող էին հետևակ զորք և հեծյալների թիվն ավելացրին երկու հազարով»[1614]: Կադուսիները, ըստ Քսենոփոնի, ակտիվ մասնակցություն են ունեցել Կյուրոսի՝ Նոր Բաբելոնական թագավորության դեմ մղված պատերազմներում[1615]: «Կյուրոպեդիա»-ի հետագա շարադրանքից պարզվում է, որ հյուրկանները, սակերը և կադուսիները Կյուրոսի առաջնորդած բանակում ռազմական գործողություններին մասնակցում են որպես բարեկամներ՝ դաշնակիցներ[1616], ինչը ցույց է տալիս, որ կադուսիները չէին ենթարկվում մարերին կամ էլ, եթե խոսքը վերաբերում է հենց Կյուրոս Մեծին, կադուսիներն ապստամբել էին մարերի դեմ և անցել պարսիկների կողմը: Ընդհանրապես աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ կադուսիները հիմնականում եղել են անկախ կամ կիսանկախ ցեղ, որը հիմնականում հաջողությամբ կռվել է և՛ մարերի, և՛ Աքեմենյաննե-

[1611] История древнего мира, т. II, с. 31.
[1612] Կասպից ծովից արևելք հիշատակվում են մասսագետները, դաները, դերբիկները, որոնք աղբյուրներում համարվում են սակ-սկյութներ (մանրամասն տե՛ս Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, էջ 92-93; Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 26-33):
[1613] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 42: Մարերի Արտայոս թագավորի նույնացումը Դեյոկեսին կասկածելի է (տե՛ս Меликов Р., Նշվ. աշխ., էջ 146):
[1614] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 195-196, 199, 226:
[1615] Անդ, էջ 202, 206-208:
[1616] Անդ, էջ 297:

րի դեմ: Նիկողայոս Դամասկացին հայտնում է, որ Աստիագեսն ապստամբ մարերի մոտ է ուղարկում մարական արքունիքում գտնվող Կյուրոսին, որն էլ կարողանում է իր կողմը գրավել կադուսիներին, և կարճ ժամանակ անց Աստիագեսի դեմ Կյուրոսի պայքարում կադուսիներն անցնում են Կյուրոսի կողմը[1617]: Ուշադրություն է գրավում նաև այն իրողությունը, որ Քսենոփոնն «Անաբասիս»-ում ընդհանրապես չի հիշատակում կադուսիների մասին: Այս հանգամանքը թույլ է տալիս մտածել, որ Արտաքսերքսես Բ-ի (մ. թ. ա. 404-359 թթ.) ժամանակ կադուսիները չեն ենթարկվել թուլացած Աքեմենյաններին: Եվ իրոք, Արտաքսերքսես Բ-ն միայն հաշտություն է կնքում կադուսիների հետ[1618]: Սակայն Արտաքսերքսես Գ Օքոսը (մ. թ. ա. 359-338 թթ.), ըստ Պոմպեոս Տրոգոսի, վերականգնելով Աքեմենյանների երբեմնի հզորությունը, հնազանդեցնում է նաև կադուսիներին, որոնց հետ պատերազմում անձնական քաջությամբ աչքի է ընկնում ապագա թագավոր Դարեհ Գ Կոդոմանոսը (մ. թ. ա. 336-330 թթ.), որը նշանակվում է Հայաստանի սատրապ[1619]:

Հետաքրքիր է, որ Քսենոփոնի մի քանի տեղեկություններում հյուրկանների, կադուսիների, սակերի հետ համատեղ հիշատակվում են նաև հայերը (արմենները), որոնք ըստ հերթականության հաջորդում են պարսիկներից հետո նշված մեդացիներին[1620]: Այս հանգամանքը վկայում է և՛ Կյուրոսի բանակում, և՛ նրա ստեղծած տերության մեջ հայերի ունեցած բարձր դիրքի մասին: Պատահական չէ, որ Կյուրոսը կրտսեր որդուն՝ Տանաոքսարեսին, կարգում է մեդացիների, հայերի և կադուսիների սատրապ[1621]: Այս տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Տանաոքսարեսի՝ Բարդիայի տիրույթները գտնվել են Միջին Ասիայում[1622], և Քսենոփոնը փոխել է Կտեսիա-

[1617] Müller C., FHG, Vol. III, Parisiis, 1849, pp. 399-400, fr. 66.
[1618] Plutarch's Lives, translated from the original greek, by J. Langhorne and W. Langhorne, Cincinnati, 1850, pp. 644-645. Տե՛ս նաև Դիոդորոս Սիկիլիացի, էջ 73; Pompei Trogi Fragmenta, p. 83; Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of Their Empire, p. 256; Briant P., From Cyrus to Alexander, pp. 732-733; Piller K. C., The Cadusii in Archaeology? Remarks on the Achaemenid Period (Iron Age IV) in Gilan and Talesh, IC, Vol. 17, 2013, pp. 116-117.
[1619] ИДПСК, ВДИ, 1949, 1, с. 254. Տե՛ս նաև Դիոդորոս Սիկիլիացի, էջ 78:
[1620] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 206, 330:
[1621] Նույն տեղում, էջ 362: Տե՛ս նաև Ксенофонт, Киропедия, с. 211; Xenophon, Cyropaedia, Vol. II, VIII, VII, 11, pp. 428-429.
[1622] Կտեսիասը Բարդիայի տիրույթներն է համարում Բակտրիան, Խորեզմը, Պարթևքը, Կարմանիան (տե՛ս Пьянков И., Средняя Азия в изве́стиях античного историка Ктесия, с. 93):

սի մոտ հիշատակվող երկրների անունները[1623]: Տեղեկության մեջ կարևոր է այն հանգամանքը, որ կադուսիները սահմանակցել են հայերին և մեդացիներին, ինչը հաստատվում է այլ հեղինակների կողմից ևս: Ընդ որում, կադուսիների հիշատակությունը մարերից և հայերից հետո խոսում է վերջիններիս համեմատությամբ նրանց զբաղեցրած համեմատաբար ցածր դիրքի մասին:

Հին աղբյուրներում կադուսիների մասին կան բազմաթիվ հիշատակություններ: Այսպես, ըստ Պոլիբիոսի, Առաջավոր Ասիայում տեղի ունեցող պատերազմներում կադուսիները՝ անիարակների և մատիանների հարևանները, հիշատակվում են Սելևկյան բանակներում[1624]: Անիարակների և մատիանների մասին հիշատակությունը թույլ է տալիս կադուսիներին տեղադրել Ուրմիո լճի և Կասպից ծովի հարավարևմտյան շրջանից արևմուտք ընկած շրջանում: Ստեփանոս Բյուզանդացին կադուսիներին հիշատակում է արիանների հարևանությամբ[1625]: Այս տեղեկությունը համահունչ է Ստրաբոնի այն հաղորդմանը, թե կադուսիներն արիաններին զիջում են հետևակի քանակով[1626]: Դժվար է ասել՝ արդյոք արիանների տակ պետք է հասկանալ Արիանա երկրի բնակիչներին, թե՝ կադուսիների հարևանությամբ բնակվող ինչ-որ ցեղ, որ թերևս Պլինիոս Ավագի ատիակը[1627] արիակ-արիանն է: Հնարավոր է նաև, որ արիանների անվան տակ տվյալ տեղեկության մեջ արտացոլվել են պարսիները, որոնց պարսկական ծագումը հավանական է[1628]:

Մի քանի աղբյուրներում կադուսիների մասին հիշատակությունները թույլ են տալիս արդեն հստակեցնել այս ցեղի տեղադրությունը: Պլինիոս Ավագը Կադուսիան և Ալբանիան հիշատակում է հարևանությամբ՝ Կասպից ծովի հարավարևմտյան շրջանում[1629]: Պտղոմեոսը կադուսիներին տեղադրում է Ուրմիո լճի և Կասպից ծովի հարավարևմտյան շրջանի միջև[1630]: Դիոնիսիոսը Կասպից ծովի ափամերձ շրջանում բնակվող ցեղերի թվում կասպերից, աղվաններից հետո հիշատակում է լեռնային երկրում ապրող կադուսիներին, որոնց հարևանությամբ բնակվում էին մարդերը, հյուրկանները և տապյուրները[1631]: Տեղեկությունից պարզվում է, որ աղվաններին հաջորդող կադուսիները գտնվել են Կուր գետից հարավ և սահմանակցել են Կասպից ծովից հարավ տեղադրվող մարդերին, հետևաբար Մեծ Հայքի Փայտակարան աշխարհին Արտաշես Ա-ն նվաճել էր կադուսիներից: Դիոնիսիոսի մեկնաբանություններում Եվստաթիոսը նույնպես կասպերից, աղվաններից հետո հիշատակում է կադուսիներին, որոնց հարևան էին մարդերը, հյուրկանները և ապյուրներ-տապյուրները[1632]: Նիկեփորոս Բլեմմիդոսը ևս կասպերից, աղվաններից հետո, մարդերից և հյուրկաններից առաջ տեղադրում է կադուսիներին[1633]: Ռուփոս Փեստոս Ավիենուսը և Պրիսկիանոսը գրեթե նույնությամբ կասպերից, աղվաններից հետո հիշատակում են կադուսիներին, որոնցից հետո թվարկվում են մարդերը, հյուրկանները, ապյուրներ-տապյուրները, որոնց երկրով հոսում է Մարդոս գետը, որն անցնում է նաև դերկեբիներ-դերբիկների և բակտրերի հողերով և թափվում Կասպից ծովը[1634]: Դերբիկների և բակտրերի մասին հիշատակությունը ցույց է տալիս, որ Մարդոս կամ Ամարդոս գետը՝ ներկայիս Սեֆիդ-ռուդը շփոթվել է Մարգուշ գետի[1635], ներկայումս՝ Մուրղաբ, կամ էլ Օքսոսի հետ: Պոմպոնիոս Մելասը Կասպից ծովի շուրջ ապրող ցեղերի թվում, չպահպանելով աշխարհագրական հաջորդականությունը, մասսագետների և հյուրկանների միջև հիշատակում է կադուսիներին[1636], որոնց, ելնելով այլ աղբյուրների հաղորդումներից, կարելի է տեղորոշել Կասպից ծովի հարավարևմտյան շրջանում: Ամմիանոս Մարկելինոսը կադուսիներին հատկացնում է լայն աշխարհագրություն՝ հասցնելով մինչև Կասպիական դռներ[1637]՝ Ռագայի մոտ: Տիտոս Լիվիոսը տեղեկություններից մեկում կադուսիներին հիշատակում է Անտիոքոս Գ-ի (մ. թ. ա. 223-187 թթ.) զորքերի թվում, իսկ մյուսում էլ դահերին, մարերին, կադուսիներին և էլյումացիներին համարում է սիրիացիներ[1638]՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հռոմեացիների հետ պատերազմին նշված ժողովուրդները

[1623] Пьянков И., Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана, с. 98-103.
[1624] The General History of Polybius, Vol. II, pp. 219, 274.
[1625] ИДПСК, ВДИ, 1948, 3, с. 315.
[1626] Страбон, с. 494.
[1627] Pliny, Natural History, Vol. II, VI, 36, p. 364.
[1628] Տե՛ս, օրինակ, Алиев И., Племена и племенные группы в Атропатене, с. 69.
[1629] Pliny, Natural History, Vol. II, VI, 36, p. 364.
[1630] ИДПСК, ВДИ, 1948, 2, с. 255; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 2, 5; Humbach H., Ziegler S., Ptolemy Geography. book 6, p. 42.

[1631] Müller C., Geographi Graeci Minores, Vol. II, p. 149.
[1632] Անդ, էջ 345-346:
[1633] ИДПСК, ВДИ, 1948, 4, с. 241.
[1634] Müller C., Geographi Graeci Minores, Vol. II, pp. 185, 196.
[1635] Страбон, с. 487.
[1636] ИДПСК, ВДИ, 1949, 1, с. 272.
[1637] Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 13, p. 356.
[1638] ИДПСК, ВДИ, 1949, 1, с. 216. Տե՛ս նաև Бикерман Э., Государство Селевкидов, М., 1985, с. 57, 61, 69.

և ցեղերը մասնակցում էին սիրիացի Սելևկյանների կողմից:

Քննելով հին աղբյուրների տեղեկությունները՝ ուսումնասիրողները կադուսիներին տեղադրել են Գիլանում, որտեղ հայտնի է Կադուսերա անունով գյուղը, և Դեյլեմում[1639], Երասխի ստորին հոսանքից հարավ-արևելք դեպի Սեֆիդ-ռուդի գետաբերանի կողմը[1640], Երասխի հարավային վտակ Կարասու գետի վերնագավառում[1641], Կասպից ծովի հարավարևմտյան շրջանից մինչև «մատիենական և հայկական հողերը»[1642]:

Կադուսիների տեղադրության հարցում առաջնակարգ նշանակություն ունի Ստրաբոնի «Աշխարհագրություն»-ը: Ստրաբոնը կադուսիներին հիշատակում է բազմիցս: Այսպես, հեղինակը գրում է.«Վրկաններից հետո ծովի շրջագծով բնակվում են ամարդները, անարիակները, կադուսիները, ալբանները, կասպերը, ուիտիները և, հնարավոր է, ընդհուպ մինչև սկյութներ, այլ ժողովուրդներ: Վրկանների մյուս կողմում ապրում են դերբիկները, իսկ կադուսիները սահմանակցում են մեդացիներին և մատիաններին Պարաքոաթրես լեռան ստորոտին»[1643]: Կադուսիների և աղվանների սահմանակցության մասին հաստատում են նաև այլ հեղինակներ, հետևաբար Կուր գետի ստորին հոսանքից հարավ կադուսիների տեղադրությունը, կարծում ենք, տարակարծությունների տեղիք չի տալիս: Հարավային ուղղությամբ կադուսիները սահմանակցել են Կասպից ծովի հարավային ափերին բնակվող անարիակներ հավաքական անվան տակ հանդես եկող ցեղերին: Պարաքոաթրես լեռան տակ պետք է հասկանալ ոչ միայն Թալիշի և Գիլանի լեռները, այլ նաև Էլբուրսն ամբողջությամբ և, ընդհանրապես, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան լեռնաշղթաները[1644]: Պարաքոաթրես անունը որոշակիորեն պետք է տարածվեր նաև Զագրոսի հյուսիսարևելյան մասի վրա: Մատիենների տակ նեղ առումով պետք է նկատի ունենալ Մատիենե երկրի բնակիչներին, որոնք չէին կարող սահմանակցել կադուսիներին, սակայն մատիեններին

[1639] Дорн Б., Каспий. О походах древних русских в Табаристан, СПб., 1875, с. 60, 68. Հմմտ. Nöldeke Th., Geschichte der Perser und Araber aus der arabischen Chronik des Tabari, Leyden, 1879, S. 479.

[1640] Дьяконов И., Նշվ. աշխ., էջ 85, 225, 339; Syme R., The Cadusii in History and in Fiction, JHS, Vol. 108, 1988, p. 137.

[1641] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 58; Касумова С. Ю., Южный Азербайджан в III-VII вв., с. 41-42.

[1642] Алиев И., История Мидии, с. 104; նույնի՝ Племена и племенные группы в Атропатене, с. 70.

[1643] Страбон, с. 485-486.

[1644] Անդ, էջ 483:

լայն առումով պետք է համարել Ուրմիո լճի արևելյան ափամերձ շրջանների բնակիչներ[1645], որոնցից արևելք՝ դեպի Կարասու գետի վերնագավառը, բնակվում էին կադուսիները:

Մտրաբոնը գրում է, որ Մեծ Մարաստանը հյուսիսում սահմանակցում է Վրկանից ծովից վերև ապրող կադուսիներին և այլ ցեղերի[1646]: Այս տեղեկությունից երևում է, որ Վրկանից ծովից վերև ասելով՝ հեղինակը կադուսիներին տեղադրում է Կասպից ծովի հարավային ափամերձ շրջանից հյուսիս-արևմուտք, ընդ որում՝ կադուսիներին չտեղադրելով անմիջապես ափամերձ շրջանում:

Խոսելով Ատրպատականի մասին՝ Ստրաբոնը գրում է, որ այդ երկրի հյուսիսային լեռնային մասում բնակվում են տարաբնակ ու ավազակ լեռնական կադուսիները, ամարդները, տապյուրները, կյուրտինները և այլ ցեղեր: Շարունակելով տեղեկությունը՝ աշխարհագետը ավելացնում է. «Արդարև Զագրոսը և Նպատը բռնված են այս ժողովուրդներով, և Պարսկաստանի կյուրտիները և մարդերը (սրանք կոչվում են նաև ամարդներ), ինչպես և Հայաստանինը, որոնք մինչև այժմ նույն անունով են կոչվում, նույն ցեղից են»[1647]: Ինչպես տեսնում ենք, այս տեղեկության մեջ նույնպես կադուսիները տեղադրվում են Փոքր Մարաստանի հյուսիս-արևելքում՝ հարավում սահմանակցելով ամարդներին կամ մարդերին: Եթե տեղեկության շարունակության մեջ Զագրոսի մասին տեղեկությունը հասկանալի է, որի արևելյան և հարավային ճյուղավորումները բնակեցված էին մարդերով, որոնց անունով էր կոչվում Զագրոսից սկիզբ առնող Ամարդոսը, և կյուրտիներով[1648], ապա Նպատ լեռան հիշատակումն այս տեղեկության մեջ կարծես թե չի տեղավորվում: Ստրաբոնը հաղորդում է. «Այսպես են կոչվում Տավրոսի հյուսիսային լեռները (իմա՛ Պարաքոաթրաս-Խ. Հ.). իսկ հարավայինը, Եփրատից այն կողմ, Կապադովկիայից և Կոմմագենեից արևելք է տարածվում, սկզբնական մասում կոչվում է Տավրոս, որ բաժանում է Ծոփքը և մնացյալ Հայաստանը Միջագետքից. ոմանք էլ կոչում են Գորդյան լեռներ: Սրանց մեջ է նաև Մասիոն լեռը, որ գտնվում է Մծբինի և Տիգրանակերտի վերևը: Այստեղից ավելի բարձրանալով՝ կոչվում է Նպատ. այստեղ, լեռան հարավային կողմերում գտնվում են

[1645] Հմմտ. Syme R., The Cadusii..., p. 138.

[1646] Страбон, с. 494.

[1647] Ստրաբոն, էջ 49: Տե՛ս նաև Страбон, с. 494.

[1648] Կյուրտիների և քրդերի կապի մասին մանրամասն տե՛ս Асатрян Г., Этногенез курдов и ранние армяно-курдские контакты, p. 3.

Տիգրիսի ակունքները»[1649]: Մասիոնը և Գորդյան լեռները համարվել են Տավրոսի ճյուղերը, իսկ Գորդիոնյան կամ Գորդյան լեռները (իմա՛ Կորդվաց լեռներ) տարածվել են Մասիոն լեռներից արևելք: Իրականում Մասիոն լեռները Կորդվաց լեռների շարունակությունն են: Արիանոսի մի տեղեկությունից պարզվում է, որ «Դարեհը ճակատամարտի դաշտից (Գավգամելայի-Խ. Հ.) անմիջապես սլացավ Մարաստան, ճանապարհ ընտրելով հայկական լեռներով»[1650]: Իսկ Պլուտարքոսը գրում է. «Ամբողջ հարթավայրը (Գավգամելայի-Խ. Հ.) Նիփատեսի և Գորդիենյան լեռների միջև, լուսավորված էր բարբարոսական զորքի կրակներով...»[1651]: Նիփատեսի լեռները իրոք գտնվել են Հայաստանում՝ Նպատական լեռներ (Ջողա) անունով, որտեղ էլ, ըստ Ստրաբոնի, գտնվում էին Տիգրիսի ակունքները, հավանաբար նկատի ունենալով կա՛մ Արևելյան Խաբուրի, կա՛մ Մեծ Զաբի, կա՛մ էլ նույնիսկ Արևելյան Տիգրիսի ակունքները: Պլուտարքոսն աշխարհագրական առումով ավելի մեծ բովանդակություն է տալիս Գորդիենյան և Նպատական լեռներին, տարածելով դրանք ավելի հարավ, քանի որ Նպատական լեռներից հարավ գտնվել են Դասն լեռները: Ուրեմն Դարեհ Գ-ն փախել է Դասն և Նպատական լեռներով դեպի Մարաստան, որի հետ Հայաստանի սահմանը, ամենայն հավանականությամբ, կազմել են Կոհ-ի-Նիհորական լեռները, որոնք, ըստ իս, նույնպես ընկալվել են որպես Նպատի լեռներ: Նպատի լեռների տեղադրության հստակեցումը բացառում է Ստրաբոնի հիշտակած ցեղերից որևէ մեկի տեղորոշումն այս շրջանում: Ստրաբոնը Նպատի լեռներում բնակվող ցեղերին չի հիշատակում, քանի որ տվյալ տեղեկության մեջ թվարկելով կադուսիներին, ամարդներին, տապյուրներին, կյուրտիներին, գրում է «և այլն»: Կադուսիները և տապյուրները չէին կարող բնակվել ո՛չ Զագրոսի, ո՛չ Նպատի լեռներում: Հավանաբար, տվյալ տեղեկության մեջ Ստրաբոնը կամ նրա աղբյուրը Նպատ-Կոհ-ի-Նիհորական լեռների շարունակությունն է համարել Ուրմիո լճից հյուսիս-արևելք ընկած Ղարադաղի, Թալիշի, Գիլանի լեռները, որոնք կոչվել են նաև մարական լեռներ[1652], և ընդհանրապես Էլբուրսն ամբողջությամբ, որը Ստրաբոնի այլ տեղեկություններում հիշատակվում է Պարաքոաթրես անունով (տե՛ս վերևում), որի շրջանում էլ բնակվում էին կադուսիները և տապ-

[1649] Ստրաբոն, էջ 43-45:
[1650] Արիանոս, էջ 107; Арриан, с. 117.
[1651] Плутарх, Александр, XXXI, Избранные жизнеописания, т. II, с. 394.
[1652] Ստրաբոն, էջ 35:

յուրները: Դատելով տեղեկություններից՝ նշված լեռնաշղթաները (և ոչ միայն), ընդհանրապես հայտնի են Տավրոս անունով, որը, ըստ Սոլինի, տարբեր ժողովուրդներ անվանել են տարբեր անվանումներով՝ Քոաթրես, Նիփատես, Կովկաս և այլն[1653]:

Ամասիացի աշխարհագետը Կասպից ծովի ափերին հիշատակում է գելերին, կադուսիներին, ամարդներին, կյուրտիներին, անարիակներին: Միաժամանակ հայտնում է, որ «լեռնոտ ծովափի մեծագույն մասը բռնել են կադուսիները, համարյա 5000 ստադիոն, ինչպես ասում է Պատրոկլես, որ և այս ծովը Պոնտականին գրեթե հավասար է համարում: Ամբողջ այս երկիրը աղքատ է»[1654]: Տեղեկությունը հետաքրքիր է այն առումով, որ կադուսիների հարևանությամբ հիշատակվում են գելերը, այն դեպքում, երբ նույն Ստրաբոնի և այլ հեղինակների մոտ կադուսիները հյուսիսում սահմանակցել են աղվաններին: Մեր կարծիքով, գելերը մտել են կադուսիների ցեղային համադաշնության մեջ և գտնվել են Կարասու գետի վերին հոսանքից արևելք, որոնց անունով էլ հայտնի են Գեղմանց լեռները[1655]: Դատելով այլ տեղեկություններից՝ գելերի հարևանությամբ, և՛ արևելք, և՛ արևմուտք, բնակվել են նաև այլ ցեղեր, որոնց անունները չեն նշվում[1656]: Տեղեկությունից երևում է, որ նշված ցեղերը եղել են անկախ կամ կիսանկախ և չեն մտել Մարաստանի մեջ կամ էլ վերջինիս հետ կապված են եղել հատուկ հարաբերություններով, ընդ որում, նրանց սահմանը կազմել են Մարական լեռները (Մարաստանի լեռները), որոնց տակ պետք է նկատի ունենալ Ստրաբոնի Պարաքոաթրասը և ներկայիս Էլբուրսը: Ստրաբոնը հաջորդ տեղեկության մեջ Տավրոսի հյուսիսային մասում տեղադրում է գելերին, կադուսիներին և ամարդներին, գրելով նաև, որ նույն լեռնաշղթայի՝ Հայաստանից մինչև Վրկանից արևելք ձգված մասը (փոքր մասը չհաշված) կոչվում է Պարաքոաթրաս[1657]: Ինչպես տեսնում ենք, երկու տեղեկություններում հիշատակված Մարական և Պարաքոաթրասի լեռները նույնանում են, հետևաբար, այդ լեռները սահմանագիծ են եղել նշված ցեղերի և մարերի համար: Ստրաբոնը Կասպից ծովի նկարագրության մեջ նշում է, որ «համաձայն Էրատոսթենեսի՝ հույներին հայտնի ճանապարհը այդ ծովի շուրջը մինչև աղվանների և կադուսիների ափերը կազմում է 5400 ստադիոն, իսկ անարիակների,

[1653] ИДПСК, ВДИ, 1949, 3, с. 247.
[1654] Ստրաբոն, էջ 35: Страбон, с. 481.
[1655] Մովսէս Խորենացի, էջ 182:
[1656] Անդ:
[1657] Ստրաբոն, էջ 37:

մարդերի և վրկանների ափերի երկայնքով մինչև Օքսոս գետի գետաբերանը՝ 4800 ստադիոն...»[1658]: Այս վերջին տեղեկության մեջ գելերը չեն հիշատակվում, հետևաբար կադուսիներին հատկացված ծովափը խոսում է այն մասին, որ գելերը նույնացվել են կադռաիների հետ կամ էլ մտել են կադուսիների համադաշնության մեջ[1659]:

Պտղոմեոսի մոտ կադուսիները տեղադրված են Կասպից ծովի հարևանությամբ, իսկ կադուսիներից հետո գալիս են գելերը, դրիբյուկները, ամարիակները, մարդերը[1660]: Սույն տեղեկության մեջ, կարծես թե, իրենց տեղում չեն դրիբյուկները, որոնք պետք է տեղադրվեն վրկաններից արևելք, ամարիակներն էլ նույն անարիակներն են:

Կադուսիների մասին կարևոր հիշատակություն ունի Արիանոսը: Ըստ Արիանոսի, Գավգամելայի ճակատամարտին Ատրոպատեսի հետ էին կադուսիները, աղվանները և սակեսինները[1661]: Ճակատամարտին մարերը, կադուսիները, աղվաններն ու սակեսինները հանդես են գալիս առանձին դասավորությամբ. մարերն ու կադուսիներն առանձին-առանձին, իսկ աղվաններն ու սակեսինները միասին[1662]: Ռուփոսի մոտ Գավգամելայի ճակատամարտում աղվաններն ու սակեսինները չեն հիշատակվում[1663]: Արիանոսն աղվաններին հիշատակում է նաև Դարեհին շրջապատող ցեղերի մեջ[1664]: Կադուսիների հետ հիշատակվող սկյութներին, որոնք դաշնակցային հարաբերությունների մեջ էին Դարեհ Գ-ի հետ և օգնության էին շտապում նրան[1665], թերևս կարելի է նույնացնել սակեսինների հետ, սակայն դժվար է հաստատել: Ատրոպատեսի հետ, հավանաբար, կադուսիները, աղվանները և

[1658] Страбон, с. 480.

[1659] Ռ. Գաբրիելյանը գտնում է, որ կադուսիների անունը վերաբերում է առանձին ցեղի և այդ անվանումը չի տարածվել այլ ցեղերի վրա (տե՛ս Габриелян Р., Армения и Атропатена, Ер., 2002, с. 82):

[1660] Humbach H., Ziegler S. Ptolemy Geography, book 6, pp. 42-43.

[1661] Արիանոս, էջ 97; Арриан, с. 110; Arrian, Vol. I, III, 8, 4, pp. 246-247; Syme R., The Cadusii..., p. 140.

[1662] Արիանոս, էջ 101; Arrian, Vol. I, III, 11, 4, pp. 256-257; Арриан, с. 113.

[1663] Ռուփոս, էջ 350-351; Rufus, Vol. I, IV, XII, 6-13, pp. 270, 272, 274; Руф, с. 115.

[1664] Արիանոս, էջ 103; Arrian, Vol. I, III, 13, 1, pp. 262-263; Арриан, с. 114.

[1665] Արիանոս, էջ 112: Արիանոսը գրում է նաև, որ Պարմենիոնը կադուսիների երկրով պետք է անցներ Վրկան (անդ, էջ 113): Հավանաբար Պարմենիոնի առջև խնդիր էր դրվել նվաճել կադուսիներին, որոնց տակ թերևս նկատի են առնված նաև Կասպից ծովից հարավ ընկած ցեղերը, օրինակ գելերը, հակառակ դեպում կադուսիների երկիրը չէր կարող սահմանակից լինել Վրկանին: Դիոդորոս Սիկիլիացին Գավգամելայի ճակատամարտում կադուսիներին և սկյութներին հիշատակում է կողք կողքի (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 95):

սակեսիններն ունեցել են դաշնակցային հարաբերություններ և եղել են վարձկաններ, քանի որ «մարերի հետ էին»[1666] և ոչ թե հրամանատարության տակ[1667]: Սակեսիններին նույնացնելով հայկական Շակաշենի հետ՝ որոշ ուսումնասիրողներ փորձել են հայկական այդ երկրամասը տեսնել Աղվանքի մեջ, որն, ըստ Ա. Հակոբյանի հանգամանալից քննության, ճիշտ չէ, քանի որ սակեսինների և աղվանների՝ նույն շարքում հիշատակվելը բաժանում է աղվանների բնակեցման տարածքը Սակասեններից, և երկու տերմինների նույնացումը հիմնված է միայն հարաբերական համահնչունության վրա[1668]:

Սակեսիններին նույնացնելով սակասենների հետ՝ դժվար է նույնիսկ կարծել, որ սակ-սկյութները, որոնք Շակաշենում էին հաստատվել մ. թ. ա. VII դարում[1669], և համաձայն սկզբնաղբյուրների՝ Ուտիքը կազմել է Սատրապական Հայաստանի անքակտելի մասը, մ. թ. ա. 331 թվականին պետք է Գավգամելայի ճակատամարտին հանդես գային մնացած հայերից առանձին, քանի որ այդ ժամանակ նրանք նույնպես արդեն հայեր էին և վաղուց կորցրել էին իրենց էթնիկ դիմագիծը՝ հիշողությունը պահպանելով միայն գավառանվան մեջ[1670]:

Դատելով աղբյուրներից՝ կադուսիներն Աքեմենյան պետության ժամանակաշրջանում մտել են ոչ թե XI, այլ X՝ մարական սատրապության մեջ[1671]: Հայաստանի և X սատրապության սահմանը տարածվել է, ամենայն հավանականությամբ, Ուրմիո լիճը թափվող Սաղամաս գետից հյուսիս՝ մինչև Կարմիր կամ Կոտոր գետի հոսանքը, վերջինիս՝ Արաքսի հետ միախառնվելու հատվածը: Թովմա Արծրունու տեղեկությունների համեմատական վերլուծությունից[1672] ևս կարելի է եզրակացնել, որ Կարմիր գետը սահմանային գետ էր ինչպես Հայաստանի

[1666] Արիանոս, էջ 97:

[1667] Քանի որ Ռուփոսի մոտ ալբաններին փոխարինում են մասսագետները, Բ. Հարությունյանը կարծում է, որ Արիանոսը, ելնելով այն իրողությունից, որ Ալբանիա են ներխուժել մասսագետները կամ հայկական աղբյուրների մազքութները, մասսագետներին փոխարինել է ալբաններով (տե՛ս Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, Վէմ, 2010, թիվ 4, էջ 43):

[1668] Акопян А., Նշվ. աշխ., էջ 13:

[1669] Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 31:

[1670] Սակասաններ-Սակասենե-սակեսինների մասին մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 67-69:

[1671] Կադուսիներին մարական սատրապության մեջ են տեղադրում Ա. Հակոբյանը (տե՛ս Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, էջ 93) և Վ. Բայբուրդյանը (տե՛ս Վ. Բայբուրդյան, Իրանի պատմություն, էջ 57):

[1672] Խորիկյան Հ., Հին Հայաստանը մ. թ. ա. VI-IV դարերում՝ ըստ Մովսես Խորենացու, Վէմ, 2011, թիվ 2, էջ 161-162:

և Ատրպատականի միջև, այնպես էլ Աքեմենյան ժամանակաշրջանում XIII և X սատրապությունների համար[1673]:

Դատելով հին աղբյուրների որոշ տվյալներից[1674], Արտաշես Ա-ն Փայտակարանը գրավել է ոչ թե մարերից, այլ կադուսիներից: Վերջին հանգամանքը ցույց է տալիս, որ որոշ ուսումնասիրողների կողմից այն կարծիքը, թե «կասպերի երկիր» և «կադուսիների երկիր» հասկացությունները հավասարազոր են[1675], ճիշտ չէ:

Պլինիոս Ավագը հաղորդում է, որ Կուրի գետաբերանից սկսած ծովը կոչվում է Կասպից, որի ափին ապրում են կասպերը[1676]: Այս տեղեկությունից չի կարելի եզրակացնել, որ կասպերին պետք է տեղադրել հենց Կուրից հարավ: Կովկասյան և Կասպիական դռների մասին Պլինիոսի տեղեկություններից[1677] կարելի է եզրակացնել, որ բերված տեղեկության մեջ կասպերին պետք է տեղադրել Կուրից հյուսիս: Ընդ որում, Պլինիոսի հաջորդ տեղեկությունը ևս հիմք չի տալիս կասպերին փնտրել Կուրի ստորին հոսանքից հարավ կամ էլ կասպերի անվան տակ տեսնել կադուսիներին, մարդերին: Միայն այն հանգամանքը, որ հեղինակը կասպերից արևելք[1678] տեղադրում է Ապավորտենան[1679], կարելի է եզրակացնել, որ Պլինիոսը կասպերի տակ նկատի ունի Ռագայի մոտ գտնվող Կասպիական դռները: Այս տեղեկությունները ցույց են տալիս, որ Պլինիոս Ավագի տեղեկությունները հիմք չեն տալիս կասպերին տեղադրելու հենց միայն Փայտակարանում[1680], որի Կասպիանե անվանումը ծագում է ընդամենը Կասպից ծովի անունից՝ որպես աշխարհագրական հասկացություն: Ավելին, Պլինիոսը նույնպես հիշատակում է Էրատոսթենեսի տեղեկությունը՝ Կադուսիան և Ալբանիան՝ ափամերձ շրջաններով, նշելով կողք կողքի[1681]:

Կադուսիները կամ կատիշները հիշատակվում են նաև հայկական

[1673] Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., էջ 71-72:
[1674] Страбон, с.480, 485.
[1675] Дьяконов И., Նշվ. աշխ., էջ 444, 448; Алиев И., Племена и племенные группы в Атропатене, с. 70; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 148:
[1676] Pliny, Natural History, Vol. II, VI, 39, p. 366.
[1677] Նույն տեղում, VI, 30, էջ 358: Պլինիոսը մի տեղում շփոթում է Դարիալի և Դերբենդի լեռնանցքները:
[1678] ИДПСК, ВДИ, 1949, 2, с. 303. Այստեղ կասպերի փոխարեն գրված է Կասպիական դռներ: Տե՛ս նաև Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, էջ 89:
[1679] Pliny, Natural History, Vol. II, VI, 46, p. 371. Հմմտ. VI, 45, էջ 370:
[1680] Акопян А., Նշվ. աշխ., էջ 40:
[1681] Pliny, Natural History, Vol. II, VI, 36, p. 364.

աղբյուրներում: Մասնավորապես «Աշխարհացոյց»-ում, քաղելով Պտղոմեոսից և Պապպոսից, հիշատակվում են մարերի երկրամասեր Կասբը, Քադուշը, Գելքը, Դիլումքը[1682]: Քադուշը կադուսիների երկիրն է, իսկ կասպերի հիշատակությունը ցույց է տալիս, որ կադուսիները և կասպերը չեն կարող պարզունակորեն նույնացվել: Ընդ որում, «Աշխարհացոյց»-ի հեղինակը նշված ցեղերին թվարկում է՝ օգտվելով Պտղոմեոսից, որը կասպերին հիշատակում է Մարաստանի կազմում՝ Հայաստանի հարևանությամբ[1683]: Այս տեղեկությունը վերաբերում է մինչև Արտաշես Ա-ի գահակալման շրջանին, իսկ կասպերն էլ հույն հեղինակի համար պարզապես Կասպիանե երկրի՝ Փայտակարանի բնակչությունն են, որը ներկայանում է որպես աշխարհագրական հասկացություն: Մովսես Խորենացու մոտ «Կասբից երկրի» հիշատակությունը նույնպես կապված է աշխարհագրական ընկալումների հետ՝ «Կասբիական ծովի» անունից և, ըստ էության, «Կասբից երկիրը» համապատասխանում է Պատմահոր նշած ծովեզերքի բնակիչների երկրին, որի կենտրոն Փայտակարան քաղաքը մի քանի անգամ հիշատակում է Խորենացին[1684]:

Համաձայն Ագաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեությունը տարածում է «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց»[1685]: Այս տեղեկության մեջ Կասպից սահմանների տակ պետք է հասկանալ Մեծ Հայքի ծայր արևելյան սահմանը, որն անմիջապես հարում էր Կասպից ծովին, որի ափին՝ Երասխի գետաբերանի մոտ, գտնվում էր Փայտակարան քաղաքը[1686]: Քաղաքի անունով էլ երկրամասը կոչվեց Փայտակարան[1687]: Մեր կարծիքով, Ագաթանգեղոսի տեղեկության մեջ Փայտակարան քաղաքը համար-

[1682] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 41 (տեքստում՝ Քագագուշ): Տե՛ս նաև Մատենագիրք Հայոց, էջ 2157; Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 115:
[1683] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 40-41.
[1684] Մովսէս Խորենացի, էջ 182, 259-260, 263: Կասբիցը կամ Կագբիցը նույն նշանակությամբ հիշատակում է Փավստոս Բուզանդը (տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 248):
[1685] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1983, էջ 468:
[1686] Հարությունյան Բ. Հ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, ԼՀԳ, 1981, թիվ 12, էջ 75: Ըստ ուսումնասիրողի՝ Փայտակարան քաղաքը գտնվել է ներկայիս Սալյանի քաղաքից արևմուտք: Ըստ Ա. Հակոբյանի՝ այն գտնվել է Պուշկինո (Բիլիասուվար) քաղաքի հնավայրի տեղում (նշված է անձնական զրույցում):
[1687] Տե՛ս Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2153, 2172, 2188:

ժեք է Փայտակարան աշխարհին, հետևաբար Կասպից սահմանների տակ պետք է նկատի ունենալ ոչ թե Փայտակարան-Կասպք աշխարհը, այլ Կասպից ծովը, այսինքն՝ հեղինակը նկատի է ունեցել մինչև այդ ծովի սահմանները, եզրերը, որտեղ հասնում էր Մեծ Հայքի ծայր արևելյան սահմանը: Մեր եզրակացության օգտին է խոսում «Աշխարհացոյց»-ի այն տեղեկությունը, թե «Մետասաներորդ աշխարհ՝ Փայտակարան քաղաքով որ առ եզերբն Կասբից, 'ի մուտս Երասխայ»[1688]:

Կատիշների և գեղեր-գելերի գնդերը պարսկական բանակի կազմում հիշատակվում են Ավարայրի դաշտում[1689]: Կատշաց զորքը հայ ապստամբների հետ կռիվներում հիշատակում է Ղազար Փարպեցին[1690], ընդ որում, դատելով պատմիչի տեղեկությունից, կատիշները գտնվել են Ատրպատականում՝ Երասխից հարավ[1691], ինչը համապատասխանում է հին աղբյուրների հաղորդումներին:

Ինչ վերաբերում է կադուսիների էթնիկական ծագմանը, ապա ու-

[1688] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, էջ 29: Հ. Հյուբշմանը կռահել է, որ հետագայում այս հատվածից դուրս է մնացել Փայտակարան բառը և իրավացիորեն վերականգնում է «Մետասաներորդ աշխարհ՝ Փայտակարան [Փայտակարան] քաղաքով որ առ եզերբն Կասբից, ի մուտս Երասխայ» (տե՛ս Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 101): Համմտ. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 115:

[1689] Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, Եր., 1989, էջ 232:

[1690] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Եր., 1982, էջ 303, 315: «...Եւ Կադշաք, յորում Գաբառու-Բագինք, մինչեւ ի մուտս գետոյն որ կոչի Կամբիսեւս» (տե՛ս Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2141):

[1691] Անդ, էջ 295: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Սեբեոսի հետևյալ տեղեկությունը: Պատմիչը գրում է. «Արդ՝ իբրև ետես բազմութիւն զաւրացն Իսմայելի, եթէ ոչ յաջողի նոցա գործն ի կողմանէ ամուր լերանցն Մարաց. քանզի ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա (Կեթրուս և Սկիւթեայ), որ են Գեղք, Դելումք, հանդերձ ամենայն ամրաբնակ բազմութամբն» (տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, էջ 172-173): Յ. Մարկվարտը Կեթրուսի փոխարեն կարդում է Կադուս՝ նկատի ունենալով կադուսիներին, այն դեպքում, երբ Կեթրուսը նույնացվել է Գեդրոսիայի՝ Իրանի հարավարևելքում (տե՛ս Marquart J., Ērānšahr, S. 125; Աբգարյան Գ., «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Եր., 1965, էջ 198-202): Գ. Աբգարյանը «Կեթրուս և Սկիւթեայ»-ը համարում է լուսանցագրություն, որը կարող էր նույնիսկ լուսանցքում գրված լինել ոչ որպես «Գեղքի, Դելումք»-ի բացատրություն, այլ գրչի համար զուտ որպես ինչ-որ պայմանական հիշեցում, գիտելիք, նույնիսկ՝ գրչափորձ (Պատմութիւն Սեբէոսի, էջ 361-363, ծնթ. 656; 657): Այս կապակցությամբ պարզապես նշենք, որ կադուսիներից հյուսիս՝ Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում տեղադրվող XVIII սատրապությունում կար սկյութական հոծ զանգված, որն էլ կարող էր որպես Սկյութիա հիշատակվել Կադուսիայի կողքին:

սումնասիրողները կարծում են, որ կադուսիներին ի սկզբանե պետք է համարել իրանական ժողովուրդ[1692]՝ ներկայիս գիլյանցիների և թալիշների նախնիները[1693]:

Կադուսիների հետ նույնացվել են Հովհան Անտիոքացու կադիսենները, որոնց մոտ ապաստանում է Պերոզի որդի Կավատը: Կադիսենները տվյալ տեղեկության մեջ անվանված են հոներ[1694]: Հոների հետ կադիսենների նույնացումն արդեն իսկ բացառում է սրանց կապը կադուսիների հետ: Կադիսեններին հիշատակում է նաև Պրոկոպիոս Կեսարացին[1695], սակայն այս տեղեկությունը ևս հիմք չի տալիս կադուսիների հետ նույնացնելու համար:

Կադուսիների հետ փորձել են նույնացնել նաև Յոշվա Ստիլիտի հիշատակած քուդիշներին, որոնք ապրել են Նիսիբիսի՝ Մծբինի մոտ[1696]: Սակայն կադուսիների հետ սրանց նույնացումը կասկածելի է[1697], ինչքան էլ որ տեսականորեն հավանական համարենք կադուսիների, եթե ոչ մի մասի վերաբնակեցումը, գոնե կայազորի առկայությունը Մծբինի մոտ[1698]: Բացառված չէ, որ կադիսենների անվան տակ հանդես են գալիս «Աշխարհացոյց»-ում հիշատակված Կատաշան գավառի բնակիչները[1699]:

Ամփոփենք: Կադուսիները, որոնք ավելի քան մեկ հազարամյակ հիշատակվում են աղբյուրներում, եղել են բավականին ուժեղ և կենսու-

[1692] Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, с. 374.

[1693] Asatrian G., Borjian H., Talish and the Talishis, IC, Vol. 9.1, Leiden, 2005, pp. 46-47; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 154:

[1694] Müller C., Langlois V., FHG, Vol. V, Parisiis, 1870, p. 28. Կադիսենները պատկանել են «սպիտակ հոների»՝ հեփթաղների ցեղային խմբին: Համմտ. Пигулевская Н., Сирийские источники по истории народов СССР, М.-Л., 1941, с. 48; Колесников А., Иран в начале VII века, с. 96.

[1695] Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հ. Բարթիկյանի, Եր., 1967, էջ 117: Տե՛ս նաև Procopius, ex recensione G. Dindorfii, Vol. I, Bonnae, 1833, De Bello Persico, I, 14, pp. 71-72.

[1696] Пигулевская Н., Месопотамия на рубеже V-VI вв. н. э. Сирийская хроника Иешу Стилита как исторический источник, М.-Л., 1940, с. 135-136, 153.

[1697] Меликов Р., Նշվ. աշխ. էջ 153: Համմտ. Пигулевская Н., Сирийские источники..., с. 48.

[1698] Վալերիանուսի պատմության մեջ կադուսիները համարվում են անկախ և պարսիկներին թշնամի ժողովուրդ (տե՛ս Scriptores Historiae Augustae. recensuit Hermannus Peter, Vol. II, Lipsiae, 1865, p. 68):

[1699] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 40:

նակ էթնոս՝ տեղորոշվելով Կարասու գետի վերնագավառում: Հին հեղինակների տեղեկություններից հայտնի է, որ կադուսիները տարածվել են նաև Կասպից ծովի հարավարևմտյան ափամերձ տարածքներում: Սկզբնաղբյուրների տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ կադուսիները ազգակից ցեղերի համադաշնության մեջ իրենց ռազմական ուժի շնորհիվ ունեցել են առաջնակարգ նշանակություն և, ըստ այդմ էլ, ավելի հաճախ են հիշատակվում պատմիչների կողմից: Մարական, Աքեմենյան և հաջորդող ժամանակներում կադուսիները պահպանում են իրենց անկախ կամ կիսանկախ գոյությունը՝ դաշնակցային հարաբերություններով կապվելով իրանական այս կամ այն պետության հետ:

3.12. Մարական մյուս ցեղերի տեղադրությունը

Մարաստանի պատմության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նաև հին Հայաստանի պատմության համար, քանի որ երկու երկրների անցյալը պատմական տարբեր ժամանակաշրջաններում սերտորեն կապված էր միմյանց: Ստորև կքննենք գելերի, մարդերի, անարիակների, դերբիկների մասին հայկական և օտարալեզու սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները:

Գելեր: Այս ցեղն աղբյուրներում հիմնականում նույնացվել է կադուսիների, երբեմն էլ՝ լեզգիների նախնիներ լեգերի հետ: Այսպես, Ստրաբոնը գելերի և լեգերի սկյութական ցեղերին տեղադրում է ամազոնուհիների և աղվանների միջև[1700]: Համաձայն այս հաղորդման՝ գելերը և լեգերը գտնվել են արևելյան Այսրկովկասում՝ Կուր գետից հյուսիս, Աղվանքի տարածքում: Ամազոնուհիների և աղվանների միջև գելերին և լեգերին՝ Պոմպեոսի արշավանքի կապակցությամբ, տեղադրում է նաև Պլուտարքոսը[1701]: Բայց Ստրաբոնի մյուս տեղեկություններով՝ գելերը տեղադրվում են կադուսիներից առաջ, որոնցից հյուսիս արդեն աղվաններն էին[1702]: Վերջին տեղադրությունները գելերին տեղորոշում են կադուսիների հարևանությամբ:

Պլինիոս Ավագը գելերին նույնացնում է կադուսիների հետ[1703], ինչն ընդունելի է: Պտղոմեոսը գելերին հիշատակում է կադուսիների և

[1700] Страбон, с. 477.

[1701] Плутарх, Помпей, XXXV, Избранные жизнеописания, т. II, с. 312.

[1702] Страбон, с. 481, 483.

[1703] Pliny, Natural History, Vol. II, VI, 48, p. 372.

դրիբյուկների միջև[1704], որը թույլ է տալիս գելերին տեղադրել կադուսիներից արևելք: Գելերին ատրոպատենների և մարդերի միջև *գերեր* ձևով հիշատակում է Ռուփոս Փեստոսը[1705]:

Մովսես Խորենացին հիշատակում է Պատիժահար գավառը, որը Գեղումների լեռն է[1706], Ստրաբոնի Պարաքոաթրեսը: Գելերի տեղորոշումն այս տարածքում միանգամայն ընդունելի է: Քվադրատուսը գելերին համարում է մարական ցեղ[1707]: Գելերի մասին հիշատակություններ կան Սեբեոսի մոտ, որը գելերի երկիրն անվանում է «յամուր յերկիրն Գեղմայ»[1708]: Գեղերը և Գեղանը հիշատակվում են հայոց «Աշխարհացոյց»-ում[1709]: Անանուն Ռավեննացին գելերին հիշատակում է Մեծ Մարաստանում[1710]՝ չկապելով Ատրպատականի տարածքի հետ:

Գելերի անունը պահպանել է Իրանի ներկայիս Գիլյան նահանգը[1711]: Յակուտ ալ-Համավին հաղորդում է, որ Մուկանն ու Ջիլանը, այսինքն՝ Գիլանը՝ գելերի էթնիկոնը, Հաբեթի թոռներն են և Թաբարիստանի բնակիչները[1712]: 553 թվականին Գիլանը Ամոլի հետ կազմում է նեստո-

[1704] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 42-43. Պտղոմեոսի «Աշխարհագրության» հին հրատարակության մեջ գելերի փոխարեն գրված է նաև լեգեր (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 2, 5), որը պետք է ուղղել գելեր: Կասպից ծովի հարավարևմտյան ափերին գելերի հետ լեգերի հիշատակությունն անընդունելի է, քանի որ Աղվանքի տարածքում գելերի և լեգերի (հայկական և վրացական աղբյուրների լեկ-ղեկերը՝ լեզգիները) պատմականությունը հաստատվում է սկզբնաղբյուրների հիշատակություններով (տե՛ս Հակոբյան Ա., Գարգարացիները ըստ անտիկ և հայկական սկզբնաղբյուրների, ՊԲՀ, 1982, թիվ 4, էջ 119): Աղվանքում գելերի և լեգերի համատեղ հիշատակությունը պատճառ է դարձել, որ հին հեղինակները Կասպից ծովի հարավարևմտյան ափերի մոտ տեղադրվող գելերի հետ հիշատակեին լեգերին, որը դրափոխությամբ նույնպես հեշտորեն կարող էր առաջանալ գելից:

[1705] ИДПСК, ВДИ, 1949, 4, с. 242.

[1706] Մովսէս Խորենացի, էջ 182:

[1707] Müller C., FHG, Vol. III, p. 659, fr. 1.

[1708] Պատմութիւն Սեբէոսի, էջ 71, 95-96, 98, 105, 172: Գեղաց գունդը հիշատակում է Եղիշեն (տե՛ս Եղիշէ, էջ 232):

[1709] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 12, 40-41; Патканов К. П., Армянская География VII века, с. 59. Հավելված՝ «Աշխարհացոյց է դարու», էջ 22; Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 352; Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 115; Հակոբյան Ա., «Աշխարհացոյց» է դարի Անանունի, էջ 165, 167:

[1710] Ravennatis Anonymi Cosmographia, II, 9, p. 62.

[1711] Տե՛ս, օրինակ, Herzfeld E., The Persian Empire, p. 196.

[1712] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 111-112:

րական եպիսկոպոսություն[1713]:

Այսպիսով, կադուսիներին ազգակից գելերը հավանաբար մտել են միևնույն համադաշնության մեջ, և նրանց իրանական ծագումը նույնպես անվիճելի է[1714]:

Մարդեր: Մարդերի մասին տեղեկություններ կան բազմաթիվ հին հեղինակների մոտ: Մարդերի անվանումը, ի թիվս այլ քոչվորների՝ տուրա, դահեր, դերբիկներ, առաջին անգամ հիշատակում է Վիրգիլիոս մատը (մ. թ. ա. VII-VI դդ. շեմին): Նրանք՝ որպես «դևերին պաշտողներ», համարվում էին Ավեստայի հասարակության ուղղահավատ զրադաշտականների թշնամիներ[1715]: Մարդերին՝ որպես պարսկական վաչկատուն ցեղի, հիշատակում է Հերոդոտոսը[1716]: Հույն պատմիչը հիշատակում է նաև մարդ ցեղից Հյուրոյադեսին, որը մասնակցում է Սարդեսի գրավմանը[1717]:

Համաձայն Կտեսիասի՝ Կյուրոս Մեծը ծագում էր մարդերի քոչվոր ցեղից[1718], ինչն անշուշտ չի համապատասխանում իրականությանը և Արտաքսերքսես Բ-ի կողմից ուղղված էր Կյուրոսի վարկաբեկմանը՝ կապված Կյուրոս Կրտսերի հետ, որի անունն ատելի էր Արտաքսերքսես Բ-ի համար[1719]: Հավանական է, որ Կյուրոսի վարկաբեկումը կապված էր մարական ավանդույթի հետ[1720]:

Համաձայն Քսենոփոնի՝ Կենտրիտես գետի (ներկայիս Բոհտան-սուն) հակառակ ափին հույներին սպասում էին սպառազինված հեծյալներ և հետևակ զորքեր, որոնք «Օրոնտասի և Արտուխասի արմեններն էին և մարդերն ու խալդայները վարձկան», և փորձում են արգելել հելլեններին մտնել Հայաստան[1721]: Քսենոփոնի այս տեղեկության մեջ անհրաժեշտ է

[1713] Guidi I., Ostsyrische Bischofe und Bischofssitze im V, VI und VII Jahrhundert, S. 407.
[1714] Дьяконов И., История Мидии, с. 92, 381-382; Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, с. 374.
[1715] Дьяконов М., Очерк истории древнего Ирана, с. 62, Դանիելյան Է., Մարդերի ցեղը հին Հայաստանում (մ. թ. ա. V-մ. թ. I դդ.), ՊԲՀ, 1976, թիվ 1, էջ 203:
[1716] Հերոդոտոս, I, 125: Հերոդոտոսի այս տեղեկությունը կրկնում է Եվստաթիոսը (տե՛ս ИДПСК, ВДИ, 1948, 1, с. 246):
[1717] Հերոդոտոս, I, 84: Անտոնիոսի բանակի հետդարձի ճանապարհը Փրաասպայից ցույց է տալիս ծագումով մի մարդ (տե՛ս Պլուտարքոս, Կենսագրություններ, էջ 299), որի՝ հետդարձի ճանապարհին քաջածանոթ լինելը վկայում է Ատրպատականում գտնվող մարդերի կամ ամարդների ցեղից լինելը, որը գտնվում էր Փրաասպայից արևելք:
[1718] Müller C., FHG, Vol. III, pp. 399-400, fr. 66.
[1719] Kent R. G., The oldest Old Persian inscriptions, JAOS, Vol. 66, 1946, p. 211.
[1720] Schubert R., Herodots. Darstellung der Cyrussage, Breslau, 1890, S. 58.
[1721] Քսենոփոն, Անաբասիս, էջ 89:

պարզել, թե «վարձկանությունը» վերաբերում է բոլորին՝ արմեններին, մարդերին ու խալդայներին, թե վերջին երկու ցեղերին կամ էլ միայն խալդայներին: Մարդերի էպոնիմը, համաձայն սկզբնաղբյուրների, պահպանվել է պատմական Հայաստանի աշխարհագրական անուններում[1722]: Օրինակ, ըստ Ն. Ադոնցի, հնարավոր է, որ մարդաղյան մարդերը ծագում են այն մարդերից, որոնք խալդայների հետ միասին շարժվելեն դեպի հյուսիս և գրավել այն վայրերը, որոնք կոչվեցին Մարդաղի և Խաղտիք, իսկ մարդերը Մարդաստան եկան, հավանորեն, ավելի ուշ Իրանի կողմից[1723]: Նախ նշենք, որ խալդայները նույնանում են սկյութներին և չէին կարող շարժվել հարավից հյուսիս, քանի որ այդ ժամանակներում նրանք արդեն հաստատվել էին իրենց անունով կոչվող Խալիտու–Խաղտիք երկրում[1724]: Անշուշտ, դժվար է Քսենոփոնի՝ միայն մեկ անգամ մարդերի հիշատակումից ելնելով՝ ասել, թե մարդերը տվյալ ժամանակաշրջանում գտնվում էին Մարդաղիում, Մարդաստանում և այլուր: Բայց և այնպես, կարելի է ենթադրել, որ տվյալ տեղեկության մեջ Արտուխասի հիշատակումը մարդերին կապում է ավելի շուտ Արևելյան Հայաստանի հետ: Համենայն դեպս, կարևոր է ընդգծել մեջբերված տեղեկությանը հաջորդող նախադասությունը. «Ասում էին, թե խալդայներն ազատ են և խիզախ. նրանք զինված էին հյուսկեն երկայն վահաններով և նիզակներով»[1725]: Ինչպես տեսնում ենք, մարդերի ազատ լինելու մասին չի նշվում, իսկ խալդայների ազատ լինելը հաստատվում է Քսենոփոնի այլ տեղեկություններով ևս: Սա նշանակում է, որ մարդերը, ինչպես փասիանները, տաոխները, հեսպերիտները, մտել են Հայաստանի մեջ՝ որպես Մարդաղիի, բայց ավելի հավանական է՝ միայն Մարդաստանի կամ Մարդուցայքի բնակիչներ: Չի կարելի բացառել նաև, որ Հայաստանում գտնվող մարդերը սկզբում եղել են վարձկաններ և հետո աստիճանաբար հաստատվել են Հայաստանում:

Հայաստանի և Պարսկաստանի մարդերի մասին հիշատակում է նաև Ստրաբոնը[1726]: Մարդերը կամ ամարդները, համաձայն Ստրաբոնի, գտնվել են անարիակների, վրկանների, կադուսիների, վիտիների, տապյուրների, պարսիկների, ուքսերի, էլյումացիների հարևանութ-

[1722] Վարդանյան Վ., Մարդերը Վասպուրականում, ՊԲՀ, 1971, թիվ 3, էջ 51; Դանիելյան Է., Մարդերի ցեղը հին Հայաստանում, էջ 203-208:
[1723] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 464, ծանոթ.1:
[1724] Տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության..., էջ 117-120:.
[1725] Քսենոփոն, Անաբասիս, էջ 89:
[1726] Страбон, с. 494, 676.

յամբ[1727]: Հիշատակված ցեղերի մի մասը մարդերի կամ ամարդների (նախասկզբի ա-ն ժխտական մասնիկ չէ) հետ գտնվել են Կասպից ծովի հարավային ափերին:

Գավգամելայի ճակատամարտում նետաձիգ մարդերին պարսկական բանակի կենտրոնում հիշատակում է Արիանոսը[1728]: Ալեքսանդրը նվաճում է մարդերին, որոնց երկրում լեռները չափազանց բարձր էին և զառիվայր, և մարդերին ու ռազմատենչ տապյուրներին միավորում մեկ սատրապության մեջ[1729]: Ռուփոսի տեղեկություններից պարզվում է, որ մարդերը ոչ միայն մասնակցել են Գավգամելայի ճակատամարտին, այլև նրանց մի հատվածը բնակվում էր Պարսքում, իսկ մյուս մասը՝ Վրկանի հարևանությամբ[1730]: Նետաձիգ մարդերին Տիգրան Մեծի բանակում հիշատակում է նաև Պլուտարքոսը, ընդ որում՝ մարդերին և իբերներին պատմիչը համարում է օտարականներ[1731]: Այս տեղեկությունից երևում է, որ տվյալ մարդերը չեն կարող տեղադրվել Հայաստանում[1732] և, ըստ էության, գտնվել են Կասպից ծովի հարավային ափերին և Տիգրան Մեծի բանակի կազմում էին՝ որպես հայոց տերության մեջ մտնող հպատակ ժողովուրդ: Մարդերը հիշատակվում են Քարաքսում՝ Կասպիական դռների մոտ[1733]:

Պլինիոս Ավագը նույնպես վրկանների հարևանությամբ հիշատակում է մարդերին՝ ամարբներ ձևով[1734]: Ամարդոս կամ Մարդոս գետը, որն ուսումնասիրողների կողմից նույնացվել է Սեֆիդ-ռուդ կամ Ղզըլ-Ուզեն գետին, հիշատակում են Պտղոմեոսը[1735], Ամիանոսը[1736], Ռուփոս Փեստոսը, Պրիսկիանոսը[1737]: Պտղոմեոսը մարդերին տեղադրում է

[1727] Անդ, էջ 480-481, 485, 494:
[1728] Արիանոս, էջ 101:
[1729] Անդ, էջ 119, 152, 269; Ռուփոս, էջ 418:
[1730] Ռուփոս, էջ 350, 390, 417: Ռուփոսը մարդերին համարում է պարսկական ցեղ: Աքեմենյան տերության մեջ մարդերը՝ որպես կիսանկախ ցեղ, եղել են վարձկաններ (տե՛ս Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 235): Մարդերին Գավգամելայի ճակատամարտում և Կասպից ծովի հարավային ափերի մոտ հիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 95, 107):
[1731] Պլուտարքոս, Կենսագրություններ, էջ 74:
[1732] Տակիտոսի հիշատակած մարդերը (տե՛ս Корнелий Тацит, Анналы, т. I, Л., 1969, с. 263) նույնանում են Մարդաղիի կամ Մարդաստանի բնակիչներին:
[1733] Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 174:
[1734] Pliny, Natural History, Vol II, VI, 36, p. 364. Մարդերը ենթարկվել են պարթևներին (անդ, VI, 134, էջ 438):
[1735] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 36-37.
[1736] Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 40, p. 372.
[1737] Muller C., Geographi Graeci Minores, Vol. II, pp. 185, 196. Ամարդոս գետը երբեմն շփոթվել է Մարգուշ՝ ներկայիս Մարղուբ կամ էլ Օքսոս գետերի հետ (տե՛ս Страбон, с. 487):

Կասպից ծովի ափամերձ շրջանից դեպի ցամաքի խորքը[1738], իսկ Պոմպոնիոս Մելասը՝ պեստիկ-պեսիկների հարևանությամբ, որոնցից հետո նեղուցի մոտ դերբիկներն էին[1739]:

Մարդերի երկիրը համապատասխանում է հայոց «Աշխարհացոյց»-ի Ամին՝ Տաբարիստանի մայրաքաղաքին[1740]:

Որոշ ուսումնասիրողներ, նկատի ունենալով մարդերի՝ ավազակությամբ զբաղվելը, ցեղանունը բացատրել են իրանական «marəδa»՝ «մարդասպան» բառով[1741]: Մարդերի իրանական ծագումը[1742] նույնպես կասկածի ենթակա չի թվում:

Անարիակներ: Անարիակները, ըստ ուսումնասիրողների, մի քանի ոչ իրանական ցեղերի հավաքական անվանումն է: Եվ իրոք, ելնելով այն իրողությունից, որ անարիակներ բառացի նշանակում է «ոչ արիացիներ»՝ այս տեսակետն ընդունելի է: Սակայն չպետք է մոռանալ, որ այս կամ այն արիական ցեղերը ազգակից, սակայն թշնամի ցեղերին նույնպես անվանում էին «ոչ արիացիներ»[1743]: Անարիակների անունը մասնագիտական գրականության մեջ ուղղել են արանիակներ՝ կապելով «աղվանական ցեղերի նախահայր Առանի հետ»[1744] կամ էլ կապել են Հերոդոտոսի էևարիների հետ, որոնք սկյութական քրմերի հատուկ դաս էին[1745]: Ինչևէ, այս անվանումն արդեն ցույց է տալիս, որ անարիակների հարևանությամբ բնակվում էին իրանական ցեղեր:

[1738] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 42-43. Հմմտ. Piller K. C., The Cadusii in Archaeology, p. 117.
[1739] ИДПСК, ВДИ, 1949, 1, с. 284-285: Պեստիկ-պեսիկները Ստրաբոնի ապասիակներն են (տե՛ս Страбон с. 485), Պտղոմեոսի պասիկները (տե՛ս Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 168-169):
[1740] Տե՛ս Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2157, 2174, 2190: Տե՛ս Marquart J., Ērānšahr, S. 135; Хуршудян Э., «Города Ирана», с. 151.
[1741] Geiger W., Ostīrānische Kultur im Altertum, Erlangen, 1882, S. 66. Մարդերը համարվել են քրդերին ազգակից ցեղեր կամ էլ ուղղակի քրդական ցեղ: Այս մասին կարծիքները տե՛ս Վարդանյան Վ., Մարդերը Վասպուրականում, էջ 50:
[1742] Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, с. 374; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 160: Վերջինս մարդերին և ամարդներին դիտում է իրանական ծագմամբ ազգակից ցեղեր, սակայն այսպիսի տարբերակումը ճիշտ չէ: Հմմտ. Սագարտա-Ասագարտա, պարներ-ապարներ, մադայ-ամադայ և այլն:
[1743] Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, с. 373; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 166-167:
[1744] Тревер К., Очерки по истории и культуре Кавказской Албании, с. 143.
[1745] Еремян С. Т., Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, с. 52. Էևարիների անունը բացատրվել է որպես «ոչ տղամարդկային» (տե՛ս Д. К. Ш., с. 305): Կարծիք է հայտնվել, որ անարիակ չի նշանակում «ոչ արիացիներ» և համապատասխանում է հայերենի *անրյակ «անրջական, անուրջի վերաբերյալ» բառին (տե՛ս Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, էջ 215; Herzfeld E., The Persian Empire, p. 196):

Անարիակների մասին սկզբնաղբյուրների տեղեկությունները հետևյալն են: Պոլիբիոսն անարիակներին հիշատակում է Մարաստանի հյուսիսային հատվածում[1746]: Անարիակներին մի քանի անգամ հիշատակում է Ստրաբոնը: Աշխարհագետը մի դեպքում անարիակներին հիշատակում է կադուսիների և մարդերի միջև[1747], մյուս դեպքում՝ գելերից, կադուսիներից, ամարդներից, ուիտիներից հետո[1748]: Պլինիոս Ավագն անարիակներին տեղադրում է տապյուրների և վրկանների միջև[1749]: Պլինիոսի այս տեղեկությունը համապատասխանում է Ստրաբոնի երկրորդ տեղեկությանը՝ անարիակներին տեղորոշելով մարդերից արևելք: Անարիակներին մարդերից արևմուտք հիշատակում է Պտղոմեոսը[1750], որը համապատասխանում է Ստրաբոնի առաջին տեղեկությանը: Մեր կարծիքով, անարիակների երկու տարբեր տեղորոշումներն էլ ընդունելի են, ընդ որում՝ անարիակների՝ մարդերից արևելք տեղադրվող խումբը մասամբ կարող է նույնանալ Աքեմենյան Պարսկաստանի XI սատրապության մեջ հիշատակվող պավսիկներին, պանտիմաթներին և դարեյտներին[1751] և, հնարավոր է, նաև այլ ցեղերի. օրինակ, ուիտիներին, որոնք թերևս Պտղոմեոսի վադասիներն[1752] են, ստավրերին[1753]: Կադուսիների և մարդերի միջև հիշատակվող անարիակներն էլ աշխարհագրական առումով կարող են նույնանալ դրիբյուկ-դելմիկներին և գելերին, հետևաբար այս դեպքում անարիակների հավաքական անվան տակ ներկայանում են իրանական ցեղերը, որոնք հավանաբար համապատասխանում են «Աշխարհացոյց»-ում հիշատակված Անար(հ)ական Մարքին[1754]:

Դերբիկներ-դրիբյուկներ-դելմիկներ: Պորփյուրոսը դերբիկներին հիշատակում է մասսագետների հարևանությամբ[1755]: Դատելով Ստրաբոնի տեղեկությունից՝ դերբիկները գտնվել են վրկաններից արևելք կամ հյուսիս, քանի որ արևմտյան ուղղությամբ վրկաններից հետո

[1746] ИДПСК, ВДИ, 1947, 3, с. 301.
[1747] Страбон, с. 480, 485.
[1748] Անդ, էջ 481:
[1749] Pliny, Natural History, Vol. II, VI, 46, p. 370.
[1750] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 2, 5.
[1751] Հերոդոտոս, III, 92:
[1752] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 44-45.
[1753] Pliny, Natural History, Vol. II, VI, 46, p. 370.
[1754] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 12:
[1755] ИДПСК, ВДИ, 1948, 2, с. 311. Դերբիկներին իբր նվաճում է Նինոսը (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17): Դերբիկներին հիշատակում է Ռուփոսը (տե՛ս Ռուփոս, էջ 282):

գալիս են ամարդները, իսկ մեկ այլ տեղեկության մեջ ամասիացի աշխարհագետը տապյուրներին, որոնց երկիրը նախկինում պատկանել է Մարաստանին, հիշատակում է վրկանների և դերբիկների միջև[1756]: Տապյուրների երկիրը, իրոք, գտնվել է Կասպից ծովի հարավային ափին և համապատասխանում է Տապրստանին[1757], իսկ դերբիկները գտնվել են ոչ միայն վրկաններից արևելք և հյուսիս, այլև արևմուտք: Ստրաբոնի կողմից տապյուրների տեղադրությունը դերբիկների և վրկանների միջև հաստատվում է նաև Պտղոմեոսի տեղեկությամբ: Դերբիկները Պտղոմեոսի մոտ հիշատակվում են Մարաստանի նկարագրության մեջ՝ գելերի և ամարիակների միջև: Դրիբյուկները դրյուբակտներ և դերբիկներ[1758] ձևերով հիշատակվում են Մարգիանայի և Սոգդիանայի նկարագրության մեջ[1759], ինչը խոսում է այն մասին, որ դերբիկները եղել են վաչկատուն ցեղ, ինչպես տապյուրները, որոնք հիշատակվում են նաև Մարգիանայի կազմում[1760]: Դրիբյուկներ-դրեբիկներին հիշատակում է Պլինիոս Ավագը[1761]: Դերբիկները Կտեսիասի մոտ Միջին Ասիայի արևմտյան մասի սկյութական ցեղերի անվանումն է և, հավանաբար, փոխարինում է մասսագետներին[1762]: Ի. Վ. Պյանկովի կողմից դերբիկների նույնացումը Հերոդոտոսի օրթոկորյուբան-

[1756] Страбон, с. 486, 491. Դերբիկներին կադուսիների և մարդերի (Mardianum) միջև հիշտակում է նաև Անանուն Ռավեննացին (տե՛ս Ravennatis Anonymi Cosmographia, II, 8, p. 60):
[1757] Տե՛ս Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2157, 2174, 2190; «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 95: Տապուրստանի՝ Պատիշխվարգարի հին մայրաքաղաքն էր Սարին, իսկ Սասանյանների ժամանակ՝ Ամոլը (տե՛ս Колесников А., Иран в начале VII века, с. 101), որը «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Տապրստանից առանձին: Տապուրներին Վրկանի հարևանությամբ՝ լեռներում, հիշատակում է Արիանոսը (տե՛ս Արիանոս, էջ 117), իսկ Տապուրների լեռները, այսինքն՝ Էլբուրսը, Վրկանից ծովից ոչ հեռու հիշատակում է Պոլիբիոսը (տե՛ս The General History of Polybius, Vol. II, p. 218): Թուսի մայրաքաղաք Տաբարանը կապում են տապյուրների կամ տոպերների էթնանվան հետ (տե՛ս Хуршудян Э., «Города Ирана», с. 133):
[1758] Դրիբյուկների և դերբիկների նույնացումը նաև մերժվել է (տե՛ս Асатрян Г., О древнем народе Δρίβυκες и этнотопонимах, CC, вып. II-III, 2017-2018, с. 285-286), ինչը հիմնավորված չենք համարում:
[1759] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 42-43, 148-149, 168-169; Tarn W. W., Patrocles and the Oxo-Caspian Trade Route, JHS, Vol. 21, 1901, p. 17.
[1760] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 148-149.
[1761] Pliny, Natural History, Vol. II, VI, 48, p. 372.
[1762] Пьянков И. В., Средняя Азия в известиях античного историка Ктесия (Текст, перевод, примечания), Душанбе, 1975, с. 6; Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 32:

տիներին ու տեղադրումը Կասպից և Արալյան ծովերի միջև[1763], չնայած Մարաստանի հետ տարածքային առումով անմիջականորեն չեն սահմանակցել, կասկածելի է, քանի որ նույնացումն այնքան էլ հիմնավորված չէ: Ըստ էության, Կասպից ծովի հարավային ափին գելերից հետո հիշատակվող դրիբյուկները համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի Դլմունք-Դելումքին[1764] հետագայի դեյլեմիտների երկրին[1765]՝ Գիլանի լեռնային մասին[1766]: «Աշխարհացոյց»-ում գրված է. «եւ մտովք գետոյն որ կոչի Սառառովր, յորում Դերպիկէս գայառ, զոր կարծեն Դիլումս...»[1767]: Դեյլեմը հնում արևելքում տարածվել է ավելի հեռու՝ ընդգրկելով ներկայիս Մազանդարանի մի մասը[1768]:

Ահա այսպես են մեզ ներկայանում գելերի, մարդերի, անարիակաների, դելմիկների տեղադրությունները և պատմաաշխարհագրական այլ բնույթի տեղեկությունների քննությունը:

[1763] Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 43.

[1764] Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2157, 2174, 2190; «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 592:

[1765] Պատմութիւն Սեբէոսի, էջ 360-361, ծնթ. 653: Դելմիկները բազմիցս հիշատակվում են հայկական աղբյուրներում. տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 468; Մովսէս Կաղանկատուացի, էջ 337; Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, հրատ. Ստ. Մալխասեանց, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 188; «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», էջ 95; Պատմութիւն Սեբէոսի, էջ 172-173; Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 11; Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 103: Հայկական աղբյուրներում դելմիկների քննությունը տե՛ս Շալջյան Ս., Դելմիկները և նրանց արշավանքները դեպի Հայաստան, Տեղեկագիր, 1941, թիվ 5-6, էջ 107-115; Յուզբաշյան Կ., Դելմիկները Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» մեջ, ԲՄ, 1960, թիվ 5, էջ 307-311; Աբգարյան Գ., «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, էջ 199-200:

[1766] Колесников А., Иран в начале VII века, с. 101. Թ. Նյոլդեքեն կադուսիներին նույնացնում է ներկայիս Գիլյանի Դելամացի կոչվող լեռնական ցեղերին, որոնք երբեք չվաճվեցին Սասանյանների կողմից (տե՛ս Nöldeke Th., Aufsätze zur Persischen Geschichte, Leipzig, 1887, S. 95): Տե՛ս նաև Bosworth C. E., Dailamīs in Central Iran: The Kākūyids of Jibāl, Iran, Vol. 8, Issue 1, London, 1970, p. 73.

[1767] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 12:

[1768] Колесников А., Иран в начале VII века, с. 101. Վ. Մինորսկին ենթադրում է, որ Deilam-ն այդ տեղանվան արաբականացված ձևն է, իրականում հնչում էր հավանաբար Delam կամ անգամ Delim (տե՛ս Minorsky V., La domination de Dailamites, London, Iranica, Twenty Articles, 1964, pp. 12-30): Ռեյը, Դեմավենդը, Դելման-Դեյլամը և Պադիշվարգար-Տապրստանը հիշատակվում են «Կարնամակում» .(տե՛ս "Книга деяний Ардашира сына Папака", с. 72, 92):

3.13. Պարսա երկրի վարչական կացությունը

Հին պարսկական Պարսան, որից ծագում է հունարեն *Persis*-ը[1769], Աքեմենյան արքայատոհմի բնօրրանն էր: Մ. թ. ա. II-I հազարամյակների սահմանագծին պարսկական ցեղերն աստիճանաբար բնակեցնում են բնիկ էլամական տարածքները: Մասնագիտական գրականության մեջ Աքեմենի և Չիշպիշի նստավայրը համարվել է Սուզայից 100 կմ հյուսիս-արևելք գտնվող Մասջիդ-ի Սուլեյմանեն[1770], սակայն Դ. Ստրոնախի կարծիքով՝ Մասջիդ-ի Սուլեյմանեն թվագրվում է մ. թ. ա. V դարի-մ. թ. II դարի կեսերի միջև ընկած ժամանակաշրջանով[1771]: Ներկայումս ընդունելի է այն տեսակետը, որ Մասջիդ-ի Սուլեյմանեի հուշարձանը տաճարային համալիր է և վերագրվում է վաղ սելևկյան դարաշրջանին[1772]: Աքեմենյան թագավորներից առաջինը, որը հիշատակվում է Պարսումաշ-Պարսուաշի[1773], այսինքն՝ Պարսայի թագավոր, Կյուրոս Ա-ն է[1774]: Կյուրոս Բ-ն «Բաբելոնյան գլանում» Անշանը հիշատակում է որպես իր տոհմի քաղաքը[1775]՝ մասնագիտական գրականության մեջ համարվելով, այսպես կոչված, Անշանյան կայսրության հիմնադիրը[1776]: Է. Հերցֆելդը վաղուց ցույց է տվել, որ Անշանը և Պար-

[1769] Llewellyn-Jones Ll., The Achaemenid Empire, in: King of the Seven Climes. A History of the Ancient Iranian World (3000 BCE - 651 CE), ed. by Touraj Daryaee, Ancient Iran Series Vol. IV, Jordan Center for Persian Studies, 2017, p. 65.

[1770] Ghirshman R., Masjid-i-Solaiman, résidence des premiers Achéménides, Syria, Vol. 27, 1950, pp. 205-220; նույնի՝ La civilisation achéménide et l'Urartu, A Locust's Leg. Studies in honour of S. H. Taqizadeh, London, 1962, pp. 85-88.

[1771] Stronach D., Achaemenid village I at Susa and the Persian migration to Fars, Iraq, Vol. 36, No 1/2, 1974, pp. 239-248.

[1772] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 6.

[1773] Ասուրական և ուրարտական աղբյուրներում հիշատակվող Պարսուա-Պարսուաշ-Պարշուայի տեղադրության տարբեր տեսակետների մասին մանրամասն տե՛ս Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, с. 134 и след. Նշենք նաև, որ Պարսա երկիրը չի հիշատակվում Ավեստայում (տե՛ս Оранский И. М., Введение в иранскую филологию, М., 1960, с. 60; Grenet F., Zarathustra's Time and Homeland: Geographical Perspectives, in: The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, ed. by M. Stausberg, Y. Sohrab-Dinshaw Vevaina, Chichester, UK, 2015, pp. 21-29):

[1774] Weidner E. F., Die älteste Nachricht über das persische Königshaus. Kyros I. ein Zeitgenosse Aššurbânaplis, AO, Bd. 7, 1931-1932, SS. 1-7.

[1775] Eilers W. Der Keilschrifttext des Kyros-Zylinders, Festgabe deutscher Iranisten zur 2500 Jahrfeier Irans, Stuttgart, 1971, SS. 156-166.

[1776] Potts D.T., Cyrus the Great and the Kingdom of Anshan, in: Birth of the Persian Empire, Vol. I, ed. by V. S. Curtis and S. Stewart, London-New York, 2005, pp. 7-28.

սումաշը նույն երկիրն են[1777]: Այդուհանդերձ, ուսումնասիրողների մեծ մասն Անշանը և Պարսան չեն նույնացնում՝ հենվելով Սինախերիբի տեղեկությունների վրա, որտեղ երկու երկրները հիշատակվում են առանձին-առանձին[1778]:

Հնագիտական պեղումների շնորհիվ պարզվել է Անշանի տեղադրությունը. վերջինս գտնվել է Շիրազից 46 կմ հյուսիս գտնվող Թալ-ե Մալյանի տարածքում: Այստեղ վաղ իսլամական շրջանում հայտնի էր Āsh քաղաքը, որը պահպանել էր Անշան անունը[1779]: Աքեմենյան դարաշրջանում այս տարածքը հայտնի էր Պարսա անվանումով, հետևաբար Անշանը և Պարսան միևնույն երկրի տարբեր անվանումներն են, այսինքն՝ գոնե մ. թ. ա. VII դարի կեսից Անշանը հնագույն երկրի արխաիկ անվանումն էր[1780]: Նշենք նաև, որ Պարսուաշը և Անշանը մասնագիտական գրականության մեջ համարվել են տարբեր երկրներ, որոնք գտնվել են քաղաքական ընդհանուր իշխանության տակ[1781]: Անշանը գտնվել է ներկայիս Ֆարսի տարածքում՝ Բայդայի շրջանում[1782], և Աքեմենյաններն այստեղ հայտնվել են ավելի ուշ[1783]:

Համեմատության համար նշենք, որ նույն արխաիզմով պայմանավորված Աքեմենյան դարաշրջանի բաբելոնական տեքստերում Հայաստանը կոչվում էր Ուրաշտու, իսկ հին պարսկական արձանագրություններում՝ Արմինա: Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվում

[1777] Herzfeld E., Archaeological History of Iran, p. 26; նույնի՝ Iran in the Ancient East, London, New York, 1941, p. 181; նույնի՝ The Persian Empire, p. 170. Հմմտ. Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 34; Waters M., Parsumaš, Anšan, and Cyrus, in: Elam and Persia, ed. by J. Álvarez-Mon and M. B. Garrison, Winona Lake, Indiana, 2011, pp. 285-296; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 7. Է. Գրանտովսկին հավանական էր համարում, որ ուշ ժամանակաշրջանում են նույնացվել (տե՛ս Грантовский Э., Նշվ. աշխ., էջ 144):

[1778] Grayson A. K., Novotny J., The Royal Inscriptions of Sennacherib, № 22, p. 182, № 23, p. 199, № 34, p. 223, № 35, p. 231; Part 2, 2014, № 144, p. 194, № 146, p.198, № 230, p. 335; Munson R. V., Who Are Herodotus' Persians?, The Classical World, 2009, Vol. 102, № 4, p. 458; Cuyler Young T. Jr., The Iranian Migration into the Zagros, Iran, Vol. 5, 1967, p. 19.

[1779] Hansman J., Anshan in the Median and Achaemenian Periods, in: The Cambridge History of Iran, Vol. 2, ed. by I. Gershevitch, Cambridge University Press, 1985, pp. 25, 34.

[1780] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 7. Հմմտ. Hansman J., Anshan in the Median and Achaemenian Periods, p. 33.

[1781] Hansman J., Elamites, Achaemenians and Anshan, Iran, Vol. 10, 1972, pp. 108-109; Reiner E., The Location of Anšan, RA 67, 1973, pp. 57-62. Հմմտ. Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, с. 66-67.

[1782] Hansman J., Elamites, Achaemenians and Anshan, p. 120.

[1783] Herzfeld E., The Persian Empire, p. 186.

է Յադայա երկիրը, որը նույն արձանագրության էլամերեն, աքքադերեն, արամեերեն տեքստերում համապատասխանում է Անշանին[1784]: Սա նշանակում է, որ Յադայան գտնվում էր Պասարգադայի և Պերսեպոլիսի շրջանից դուրս՝ ամենայն հավանականությամբ Պարսքի արևմտյան հատվածում: Անշանի և Պարսայի նույնացման պարագայում ժխտվում է նաև Աքեմենյանների երկու ճյուղերի զուգահեռ կառավարման վերաբերյալ տեսակետը նշված երկրներում[1785]:

Հարկավ, Անշանի և Պարսայի նույնացման օգտին կարող են խոսել նաև անտիկ աղբյուրները: Այսպես, բաբելոնական ժամանակագրության մեջ նշվում է, որ Կյուրոս Բ-ն Էկբատանան գրավելուց հետո հարուստ ավարը տանում է Անշան[1786], այն դեպքում, երբ հույն պատմիչ Կտեսիասը գրում է, որ ավարը տարվում է Պասարգադա[1787], այսինքն՝ վերջինս համարժեք է Պարսային: Բերոսոսը նույնպես հայտնում է, որ Կյուրոս Բ-ն Բաբելոն է գալիս Պարսքից[1788]: Հետևաբար, Անշան անվան հիշատակումը բաբելոնական գրականության ավանդույթներով պայմանավորված անաքրոնիզմ է: Կյուրոս Մեծից հետո Աքեմենյան հաջորդ թագավորներն այլևս իրենց չեն հիշատակում որպես Անշանի թագավոր: Անտիկ հեղինակներին անծանոթ է Անշան անվանումը: Այս առումով պետք է մերժել այն թյուր տեսակետը, թե Կյուրոս Մեծը միայն մ. թ. ա. 550 թվականին Աստյուագեսին հաղթելուց հետո է գրավել Պարսան, քանի որ վերջինս ի սկզբանե Կյուրոսի երկիրն էր[1789]:

Ջ. Քամերոնից սկսած՝ որոշ ուսումնասիրողներ ենթադրել են, որ Կյուրոս Ա-ն թագավորել է Անշանում և Պարսումաշում, իսկ Արիարամ-

[1784] Kent R., Նշվ. աշխ., էջ 125; Lecoq, p. 202; Malbran-Labat F., La version akkadienne..., p. 100; "The Bisitun Inscription of Darius the Great", Aramaic Version, p. 36. Կա նաև տեսակետ, որ yadāyā պարզապես նշանակել է «from where» (տե՛ս Bivar A. D. H., Babylon or Persis? A Crux of the Behistun Inscription, IA, Vol. 33, 1998, p. 190), ինչը չենք ընդունում:

[1785] Дандамаев М. А., К вопросу о династии Ахеменидов, ПС, вып. 5, 1960, с. 3-21; Stronach D., Achaemenid village I at Susa and the Persian migration to Fars, p. 248.

[1786] "Mesopotamian Chronicles", pp. 234.

[1787] Ctesias' History of Persia, pp. 167-170. Մ. թ. ա. 550 թվականին Աստյուագեսին հաղթելուց հետո Կյուրոս Մեծը կառուցում է Պասարգադայի պալատը: Պասարգադայի (հին պարսկերեն Pâthragâda, տե՛ս Llewellyn-Jones Ll., The Achaemenid Empire, p. 68) ավերակները գտնվում են Շիրազից մոտ 96 կմ դեպի հյուսիս (տե՛ս Hansman J., Elamites, Achaemenians and Anshan, p. 109):

[1788] The Babyloniaca of Berossus, by S. M. Burstein, Sources and Monographs: Sources from the Ancient Near East, Vol. 1, Fascicle 5, Malibu, 1978, p. 28.

[1789] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 9.

Նան և Արշաման՝ Պարսքում՝ փաստորեն Պարսումաշը և Պարսքը հա-
մարելով տարբեր երկրներ[1790]: Սակայն այս տեսակետն իրավացիո-
րեն մերժվել է Ի. Պյանկովի կողմից, քանի որ Պարսումաշը և Պարս-
քը միևնույն երկիրն են[1791]: Մյուս կողմից էլ Ի. Պյանկովը-Անշանը չի
նույնացնում Պարսքին՝ տեղադրելով Էլամի և Պարսքի միջև: Նրա
կարծիքով, Անշանը տեղադրվում է բախտիարների տարածքում, որ-
տեղ անտիկ աղբյուրները հիշատակում են մարդեր-ուքսերին: Ինչևէ,
Ի. Պյանկովը քաղաքական առումով Անշանը և Պարսքը նույնացնում
է, սակայն աշխարհագրական առումով նշված երկրները համարում է
տարբեր հասկացություններ[1792]:

Ստորև տեսնենք, թե անտիկ աղբյուրներում ինչ տեղեկություններ
կան Աքեմենյան դարաշրջանի Պարսքի մասին: Հերոդոտոսը հայտ-
նում է, որ Դարեհի հայրը՝ Հյուստասպեսը, Պարսքի հյուպարքոսն
էր[1793], սակայն Բեհիսթունի արձանագրությունում Հյուստասպեսը կամ
Վշտասպը հիշատակվում է որպես Պարթևքի և Վրկանի սատրապ[1794]:
Ամեն դեպքում Հերոդոտոսի տեղեկությունը հետաքրքիր է այն առու-
մով, որ Պարսքը համարվել է առանձին սատրապություն: Համաձայն
Պոմպեուս Տրոգոսի՝ Կյուրոս Մեծի ժամանակ Պարսքի կառավարիչն
էր Սյուբարիսը[1795], ինչը խոսում է Պարսքի վարչական միավոր լինելու
մասին:

Արիանոսի տեղեկություններից պարզվում է, որ Ալեքսանդր Մակե-
դոնացու Պարսք ներխուժելու ժամանակ վերջինիս սատրապն էր
Արիոբարզանեսը[1796]: Պերսեպոլիսը և Պասարգադան գրավելուց հե-
տո Ալեքսանդրը Պարսքի սատրապ նշանակեց Թրասաորտոսին[1797]:
Ռուֆոսի տեղեկություններից նույնպես պարզվում է, որ Պարսքը հա-
մարվել է սատրապություն: Ռուֆոսը Պասարգադքի (հավանաբար

[1790] Cameron G. G., History of Early Iran, Chicago, 1936, pp. 212, 223. Հմմտ. Hansman J., Elamites, Achaemenians and Anshan, p. 109.
[1791] Пьянков И. В., Борьба Кира II с Астиагом по данным античных авторов, ВДИ, 1971, 3, с. 32.
[1792] Անդ, էջ 33:
[1793] Հերոդոտոս, III, 70:
[1794] Kent R., Նշվ. աշխ., էջ 122; Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, p. 217.
[1795] Justin, Cornelius Nepos, and Eutropius, literally translated, with notes and a general index by J. S. Watson, London, 1853, I, 7, p. 9; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 195.
[1796] Arrian, Vol. I, III, 18, 2, p. 280.
[1797] Անդ, III, 18, 10-11, էջ 284:

տեղանվան էլամական անվանաձևն է Բատրակատաշ[1798]) սատրապ է
հիշատակում Օրսինին[1799], այսինքն՝ սատրապությունը նշվում է կենտ-
րոնի անունով: Մակեդոնացի աշխարհակալի մահից հետո Պարսքը
շարունակում էր մնալ սատրապություն[1800]:

Ստրաբոնի նկարագրությունից պարզվում է, որ Պարսքին արևել-
քում սահմանակից էր Կարմանիան[1801], արևմուտքում՝ Սուսիանան[1802],
հյուսիսում՝ Մարաստանը[1803], իսկ հարավում հասնում էր Պարսից
ծոց[1804]: Ըստ էության, Ստրաբոնի Կոյլեպերսիսը[1805]՝ Խորին Պերսիսը,
ընդգրկել է Պասարգադայի և Պերսեպոլիսի շրջանը, այսինքն՝ Աքե-
մենյանների բուն հայրենիքը:

Բեհիսթունի և որոշ արձանագրություններում Պարսքն առաջինն է
հիշատակվում Աքեմենյան տերության մեջ մտնող երկրների շար-
քում[1806]: Դարեհ Ա-ի համար Պարսքն ապստամբ երկիր էր, ինչպես
Էլամը, Մարաստանը, Ասորեստանը և այլն[1807]: Դարեհի այլ արձա-
նագրություններում Պարսքը չի հիշատակվում հպատակ երկրների
շարքում, և Աքեմենյան թագավորը թվարկում է Պարսքից դուրս
գտնվող ենթակա երկրները[1808]: Քսերքսեսը նույնպես Պարսքը չի հի-
շատակում հպատակ երկրների շարքում[1809]: Հարկավ, այս հանգա-
մանքով ընդգծվում էր Պարսքի՝ որպես Աքեմենյան տերության ոստա-
նի նշանակությունը: Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություննե-
րից մեկում (DPe) ուշագրավ է արքայի այն հայտարարությունը, որ
Աքեմենյան տիրակալը-պարսկական ժողովրդի հետ միասին է տիրում

[1798] Hallock R. Persepolis Fortification Tablets, p. 676.
[1799] Ռուֆոս, էջ 573:
[1800] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 6, p. 232.
[1801] Հմմտ. Pliny, Natural History, Vol. II, VI, 111, p. 422; Arr. Ind. 38.1-40.1 (տե՛ս Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, М., 2002, с. 285-286):
[1802] Ըստ Պլինիոս Ավագի՝ Պարսքի արևմտյան սահմանը հասել է մինչև Սիտակենե (Pliny, Natural History, Vol. I, II, 237, p. 362; հմմտ. Muller C., FHG, Vol. I, Hecat., fr. 184, p. 12), այսինքն՝ աշխարհագետը Սուսիանան ներառում է Պարսքի մեջ:
[1803] Պարսքի՝ Մարաստանի հետ սահմանի քննարկումը տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի մարական սատրապության տարածքը և սահմանները, էջ 68-69:
[1804] Страбон, с. 675-676, 690.
[1805] The Geography of Strabo, Vol. VII, XV, 3, 6, p. 164.
[1806] Kent R., Նշվ. աշխ., էջ 117, 145, 155:
[1807] Անդ, էջ 121:
[1808] Անդ, էջ 136-137, 141:
[1809] Անդ, էջ 151:

թվարկվող նվաճված երկրներին[1810]: Անկասկած, Աքեմենյան պետության վարչական բաժանման համակարգում Պարսքը վարչական առանձին միավոր էր, իսկ պարսիկները տիրապետող ժողովրդի իրավունքով պետք է եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ ապահարկ լիներին մյուս հպատակ ժողովուրդների համեմատությամբ: Հետևաբար, Հերոդոտոսի այն տեղեկությունը, թե Պարսքն ապահարկ էր[1811], այնքան էլ իրականությանը չէր համապատասխանում[1812]: Տերությունում պարսիկների տիրապետող դիրքի մասին վկայում է նաև Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմում նրանց առաջինը հիշատակվելը[1813]:

Մ. թ. ա. 522-521 թվականներին ապստամբ Պարսքը լուրջ խնդիրներ ստեղծեց Դարեհ Ա-ի համար[1814]: Դարեհ Ա-ի խոսքերից կարելի է եզրակացնել, որ Պարսքն ամբողջությամբ չէր ապստամբել, քանի որ արքայի ենթակայության տակ կար պարսկական զորք՝ պարսիկ զորավարի հրամանատարությամբ[1815]: Դարեհ Ա-ի դեմ Պարսքում երկրորդ անգամ Գաումատայից հետո ապստամբում է Վահյազդատա անունով մեկը, որն իրեն հռչակում է թագավոր՝ ներկայանալով որպես Կյուրոսի որդի Բարդիա: Ըստ Բեհիսթունի արձանագրության՝ Պարսքի բանակն անցնում է Վահյազդատայի կողմը՝ դավաճանելով Դարեհ Ա-ին[1816]:

Ամենայն հավանականությամբ, ապստամբությունը սկսվել էր մայրաքաղաք Պասարգադայից, սակայն Դարեհ Ա-ին հավատարիմ մնացած պարսկա-մարական բանակը պարսիկ Արտավարդիյայի գլխավորությամբ Պարսքի Ռախա քաղաքի մոտ պարտության է մատնում Վահյազդատային: Վերջինս երկրորդ անգամ պարտություն կրելուց հետո գերեվարվում և սպանվում է Պարսքի Հուվադայչայա քաղաքում[1817], հավանաբար Պարսքի արևելյան շրջանում[1818]:

[1810] Անդ, էջ 136; Schmitt R., Die altpersischen Inschriften der Achaimeniden, SS. 117-118.
[1811] Herodotus, Vol. II, III, 97, p. 124. Հմմտ. Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, p. 138.
[1812] Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, p. 241.
[1813] Հերոդոտոս, IV, 61:
[1814] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах, с. 263-264; նույնի՝ Восстание Вахьяздаты (Из истории народных движений в древней Персии), ВДИ, 1960, 1, с. 11-20.
[1815] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах, с. 264-266.
[1816] Kent R., Նշվ. աշխ., էջ 125-126:
[1817] Անդ:
[1818] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах, с. 187.

Պարսքի էթնիկական կազմի մասին կարևոր են Հերոդոտոսի տեղեկությունները: Հույն հեղինակը հայտնում է, որ պարսկական գլխավոր ցեղերը պասարգադները[1819], մարափները, մասպերն են, որոնցից առաջիններին պատկանում էր Աքեմենյանների հզոր տոհմը՝ տեղադրվելով Պասարգադայի շրջանում[1820]: Հերոդոտոսը հիշատակում է նաև պարսկական այլ ցեղերի, որոնցից պանթիալայները, դերուսիները, գերմանիները հողագործներ էին, իսկ դայերը, մարդերը[1821], դրոպիկները (=դերբիկներ[1822]) և սագարտիները վաչկատուն էին[1823]: Մարափները[1824] եղել են տոհմ, Աքեմենյանների տոհմի հին ճյուղը, մասպերի անունը ծագում է արիմասպների էթնանունից[1825] կամ նույնանում է Մասաբբատիկայինի[1826], պանթիալայները, կարծես թե, կապվում են ժամանակակից Ֆահլիյունի կամ Ֆահլիյանի հետ[1827], դերուսիների անվանումը ևս ունի պարսկական

[1819] Պտղոմեոսը պասարգադներին սխալմամբ հիշատակում է Կարմանիայի ծովափնյա շրջանում (տե՛ս Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 8, 12):
[1820] Frye R., The History of Ancient Iran, München, 1983, p. 89.
[1821] Հավանաբար մարդերի այն խումբն է, որը հիշատակվում է Արիանոսի կողմից (տե՛ս Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, Arr. Ind., 40.6, с. 286) և կապված է էլամական տեղանուն Մարդաշի հետ (տե՛ս Potts D. T., Cyrus the Great and the Kingdom of Anshan, p. 23):
[1822] Herzfeld E., Zoroaster and His World, Vol. II, Princeton, 1947, p. 729
[1823] Herodotus, Vol. I, I, 125, p. 164; "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 163-164. Քսենոփոնը, առանց պարսկական ցեղերի անունները նշելու, գրում է, որ այդ ցեղերը տասներկուսն էին (տե՛ս Xenophon, Cyropaedia, Vol. I, I, II, 5, p. 12):
[1824] Հմմտ. Մարափիս անձնանունը Էսքյուլեսի մոտ (տե՛ս Эсхил, Трагедии, в переводе В. Иванова, М., 1989, Персы, 788, с. 39):
[1825] Մարափները և մասպերը Հելլանիկոսի մոտ ներկայանում են որպես Կյուրոս Մեծի եղբայրներ (տե՛ս Muller C., FHG, Vol. I, Hellanic., fr. 164, p. 68; Marquart J., Untersuchungen zur Geschichte von Eran II, S. 137), այսինքն՝ ցեղերի անվանադիրներ:
[1826] Frye R., The History of Ancient Iran, p. 89. Մասպերի անունը նաև ժամանակակից Լուրիստանի ցեղային անվանումն է (տե՛ս Herzfeld E., Zoroaster and His World, Vol. II, p. 729):
[1827] Պանթիալայների անունը փորձել են տեսնել Պևտինգերյան քարտեզի Պանթյուենե կայարանի (տե՛ս Marquart J., Untersuchungen zur Geschichte von Eran II, S. 80), Անանուն Ռավեննացու Պաթիենաս (տե՛ս Ravennatis Anonymi Cosmographia, II, 5, 7, p. 52) անվանումների մեջ և տեղադրել ներկայիս Սիրջան քաղաքի մոտ (տե՛ս Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, p. 238): Նկատենք, որ Ֆահլիյունի կամ Ֆահլիյանի տարածքում տեղադրվում են Ստրաբոնի պատիխորները (տե՛ս Страбон, с. 675), որոնք համապատասխանում են հին պարսկական Pātišuvariš-ին. բառացի «լեռան արևոտ կողմի երկրի ժողովուրդ կամ մարդիկ» կամ էլ «դեպի արևն ընկած» (տե՛ս Bahadori A., Achaemenid Empire, Tribal Confederations of Southwestern Persia and Seven Families, pp. 1-25): Մեր կարծիքով, պանթիալայներն ու պատիխորները նույն ցեղն է:

ծագում՝ «ծառ» կամ «երկարակյաց» նշանակությամբ[1828]: Նշված ցեղերից առավել հավանական տեղադրություն ունեն և նույնանում են գերմանիները՝ կապվելով Կրմանի հետ[1829], որը Դարեհ Ա-ի վարչական վերափոխումներից հետո անջատվում է Պարսքից[1830]:

Պարսքի մասին խոսելիս անհրաժեշտ է նաև նշել, որ Պերսեպոլիս քաղաքի (ժամանակակից Թախտ-ե Ջամշիդը) տեղական անվանումը եղել է Պարսա, որը պահպանվել է էլամական տնտեսական նշանակության վավերագրերում և մեկ Աքեմենյան արձանագրությունում: Սա նշանակում է, որ Պարսք երկիրը, նրա ժողովուրդը և արքայական նստավայրը կոչվել են Պարսա, որի անունը հույները սխալմամբ տարածել են ամբողջ երկրի վրա՝ գրեթե ամբողջ Իրանն անվանելով Պերսիս, այսինքն՝ Պարսկաստան[1831]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Պարսան կարելի է համարել Աքեմենյան տերության թիվ մեկ սատրապությունը, որն օգտվում էր որոշակի արտոնություններից: Ամեն դեպքում Պարսայի էթնիկական կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աքեմենյաններ բուն ոստանը տարածվում էր Պասարգադայի և Պերսեպոլիսի շրջանում, ընդ որում Պարսայի ցեղային կազմակերպության օրինակով կազմված էր ամբողջ տերության վարչական բաժանման համակարգը:

[1828] Marquart J., Untersuchungen zur Geschichte von Eran II, SS. 90-91; Herzfeld E., The Persian Empire, p. 298. Դերուսիները նույնացվել են Գեդրոսիայի հետ (տե՛ս Бартольд В. В., Сочинения, т. VII, Москва, 1971, с. 140, 150, 268), ինչը բացառված չէ, եթե նկատի ունենանք, որ տեղի է ունեցել ցեղային տեղաշարժ:

[1829] Herzfeld E., The Persian Empire, p. 298. Տե՛ս նաև Olmstead A. T., History of the Persian Empire, p. 34; Eilers W., Geographische Namengebung in und um Iran, SS. 19-21; Бартольд В. В., Сочинения, т. VII, с. 140, 150, 268. Մնացած ցեղերի մասին տե՛ս Пьянков И. В., Борьба Кира II с Астиагом по данным античных авторов, с. 26-27.

[1830] The Babyloniaca of Berossus, p. 28; Müller C., FHG, Vol. II, Parisiis, 1848, Beros., fr. 14, p. 508; Josephus: The Life. Against Apion, with an English translation by H. St. J. Thackeray, Vol. I, London-New York, 1926, I, 153, p. 222; Herzfeld E., Zoroaster and His World, Vol. II, p. 732; Henkelman W. F. M., Imperial Signature and Imperial Paradigm, p. 49.

[1831] Дандамаев М., Ахеменидская империя, с. 214-215.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Միջին Ասիայի սատրապական բաժանումը

Պատմահայր Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի XVI սատրապությանը, գրում է. «Պարթևները, քորասմները, սոգդերը և արեյները վճարում էին երեք հարյուր տաղանդ հարկ. սա տասնվեցերորդ նահանգն էր»[1832]: Հերոդոտոսը տարբեր առիթներով մի քանի անգամ ևս հիշատակում է նշված ժողովուրդներին: Տեղեկությունում առաջինը հիշատակված պարթևների սկզբնական պատմության մասին մինչև քոչվոր պարների ներխուժումը Պարթևք գրեթե ոչինչ հայտնի չէ[1833]:

Պարթևները հիշտակվում են Հերոդոտոսի հետևյալ տեղեկությունում, որը, ելնելով քննության շահեկանությունից, մեջբերում ենք ամբողջությամբ. «Ասիայում կա մի դաշտավայր, բոլոր կողմերից լեռներով շրջապատված, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է քորասմներին և գտնվում է նույն քորասմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների սահմաններում: Պարսից իշխանության հաստատումից հետո այն արդեն պատկանում է (պարսից) արքային: Արդ, դաշտավայրը շրջափակող լեռից հոսում է մի մեծ գետ, որի անունն է Ակես: Այս գետը, բաժանված լինելով հինգ թևի, հնում յուրաքանչյուր թևով ոռոգում էր վերոհիշյալ ժողովուրդներից յուրաքանչյուրի երկիրը, քանի որ ամեն մի կիրճից մի թև էր հոսում: Բայց պարսից իշխանության տակ ընկնելուց հետո այդ երկրների վիճակը այսպիսին եղավ: Արքան լեռների այդ կիրճերը փակելով, յուրաքանչյուր կիրճում (ջրարգելակ) դռներ շինեց: Այս պատճառով էլ ջրի ելքը փակվեց և լեռներով շրջափակված դաշտավայրը դարձավ լիճ, քանի որ դաշտավայր մտնող գետը ոչ մի ելք չուներ: Արդ, նրանք, ովքեր հնում օգտագործում էին այդ ջուրը (ոռոգման համար), այժմ դրանից զրկված լինելով, մեծ աղետի մեջ ընկան: Քանզի ձմռանը աստված նրանց անձրև է պարգևում, ինչպես և մյուս մարդկանց, բայց նրանց ցանած կորեկը և քնջութը ջրի կարիք ունեն ամռանը: Ու քանի որ նրանց ոչ մի ջուր չի տրվում, ապա նրանք իրենց կանանց հետ միասին գալիս են Պարսկաս-

[1832] Հերոդոտոս, III, 93:

[1833] Массон М. Е., Некоторые новые данные по истории Парфии, ВДИ, 1950, 3, с. 41 и след.; Фрай Р., Наследие Ирана, с. 79, 244.

տան և, կանգնելով արքայի դռների առաջ, աղաղակում են ողբագին, մինչև որ արքան հրամայում է (ջրարգելակ) դռները բաց անել դեպի ջրի առավել կարիք ունեցողների կողմը: Երբ սրանց հողերը լիովին հագեցնում են, արքան հրամայում է բաց անել մյուս դռները նրանց համար, ովքեր արդեն այժմ մյուսներից ավելի (ջրի) կարիք ունեն: Ինչպես ես լսել և իմացել եմ (Հերոդոտոսը-Խ. Հ.), (ջրարգելակ) դռները բացելու համար (արքան), հարկերից բացի, մեծ գումարներ է վերցնում»[1834]:

Այս տեղեկության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Այսպես, որոշ ուսումնասիրողներ այս տեղեկությունը դիտել են որպես արհեստական ոռոգման մասին հաղորդում և Ակես գետը չեն նույնացրել որևէ գետի հետ, այն դեպքում, երբ Ակեսը նույնացվել է Օքոս, Օքսոս, Մուրղաբ, Հարիռուդ, Հիլմենդ, Ամու-Դարյա գետերից որևէ մեկի հետ [1835]: Ակեսը հիմնականում նույնացվել է Հարիռուդ գետին [1836]:

Հերոդոտոսի վերոբերյալ տեղեկության մեջ կա աշխարհագրական խառնաշփոթ, ինչը պայմանավորված է Հերոդոտոսի ձեռք բերած բանավոր տեղեկությունների բազմազանությամբ: Անշուշտ, տեղեկության մեջ արտացոլվել են Աքեմենյանների ժամանակ տեղի ունեցած ոռոգման աշխատանքները, և նկատի ունենալով նշված ժողովուրդների բնակության տարածքները՝ անհնար է Ակես գետի նույնացումը մի որոշակի գետի հետ, որի ջրերից օգտվեին այդ բոլոր ժողովուրդները: Հետևաբար, Հերոդոտոսի ամբողջ տեղեկությունը պետք է քննել առանձին հատվածներով: Քորասմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների համատեղ հիշատակությունը ցույց է տալիս ոչ թե այդ ժողովուրդներից յուրաքանչյուրի բնակության տարածքն առանձին վերցրած, այլ Աքեմենյան երկու՝ XIV և XVI սատրապությունների ընդհանուր տարածքը[1837], հետևաբար Հերոդոտոսի հիշատակած դաշտավայրը համապատասխանում է Արիային, որը Ստրաբոնը նկարագրում է որպես լեռներով շրջափակված դաշտավայր[1838]: Արիան

[1834] Հերոդոտոս, III, 117:
[1835] Д. К. Ш., с. 201.
[1836] Дьяконов И. М., История Мидии, с. 357; Фрай Р., Նշվ. աշխ., էջ 65; Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, с. 64.
[1837] Անշուշտ, հյուրկանների ներառումը XVI սատրապության կազմի մեջ Դարեհի վարչական վերափոխումներից հետո հնարավոր չէ, չնայած մինչև Դարեհի գահակալումը Պարթևքը և Վրկանը կազմել են մեկ սատրապություն:
[1838] Страбон, с. 487. Հմմտ. Пьянков И. В., Хорасмии Гекатея Милетского, ВДИ, 1972, 2, с. 11.

վարչական առումով մտնում էր XVI սատրապության կազմի մեջ, որից հարավ գտնվում էին սարանգները և թամանները՝ XIV սատրապության կազմում[1839]: Այսպիսի նույնացման դեպքում էլ Ակես գետը համապատասխանում է Արիուս գետին՝ ներկայիս Հարիռուդին, որը հոսում է Արիայով[1840]: Տեղեկության սկզբնամասում քորասմների առանձին հիշատակությունը սրանց կապում է ոչ թե Օքսոսի ստորին հոսանքի շրջանի հետ, ինչն արդեն մյուս ժողովուրդների հիշատակության պարագայում չի տեղավորվում տեղեկության շարունակության ընդհանուր տրամաբանության մեջ, այլ պարթևներից դեպի արևելք՝ մ. թ. ա. VI դարին վերջին զբաղեցնելով Թուրքմենա-Խորասանական լեռների արևելյան մասը և Թաջանդ-Հարիռուդի հովիտը[1841]: Այս վերջին հանգամանքը նույնպես հետազոտողների շրջանում տարակարծությունների տեղիք է տվել: Ուսումնասիրողների մեծ մասը, հենվելով Հերոդոտոսի III, 117 տեղեկության վրա, ենթադրում է Խորեզմի գլխավորությամբ մինչաքեմենյան խոշոր պետական կազմավորման գոյության մասին, որի կենտրոնը գտնվել է Խորեզմի օազիսում, և այդ թագավորության տիրապետությունը տարածվել է XVI սատրապության մեջ մտնող ժողովուրդների վրա[1842]: Սակայն Խորեզմի միավորման հիմնական կենտրոնները ավելի շուտ եղել են պարթևներից դեպի արևելք ընկած տնտեսապես զարգացած Մերվի և, հնարավոր է, Հերաթի շրջանները, որտեղից էլ պարսիկների ճնշման տակ քորասմները աստիճանաբար շարժվում են Ամու-Դարյայի ստորին հոսանքի շրջան՝ ներկայիս Խորեզմի օազիս[1843]: Խորեզմը նվաճվում է Կյուրոսի կողմից մ. թ. ա. 545-539 թվականների միջև ընկած ժամանակահատվածում[1844]:

Յ. Մարկվարտը, որին հետևել են բազմաթիվ ուսումնասիրողներ, Խորեզմին նույնացնում էր, այսպես կոչված, «իրանական (արիական)

[1839] Հերոդոտոս, III, 93:
[1840] The Geography of Strabo, Vol. V, XI, X, 1; 5; XI, 5, pp. 276, 278, 284, 286.
[1841] Пьянков И. В., Хорасмии Гекатея Милетского, с. 10.
[1842] Д. К. Ш., с. 199; Таиров А., Кочевники Арало-Каспия и Хорезм в V-IV вв. до н. э., Вестник Челябинского государственного университета, 2005, т. 10, № 1, с. 53-63. Ուսումնասիրողը խորասմներին համարում է սակեր (անդ, էջ 53):
[1843] Д. К. Ш., с. 199. Տե՛ս նաև Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов..., с. 42. Հմմտ. Frye R., The History of Ancient Iran, pp. 18, 112; նույնի՝ The Heritage of Central Asia, p. 85.
[1844] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах, с. 106. Խորեզմի նվաճումը դնում են նաև մ. թ. ա. 539-530 թվականների միջև, այսինքն Բաբելոնի անկումից հետո (տե՛ս, օրինակ, Массон В. М., Древнеземледельческая культура Маргианы, с. 137):

տարածությունը» Airyanəm vaējah[1845], որը հիշատակվում է «Ավեստայում»՝ որպես իրանական (արիական) ցեղերի բնակության վաղ շրջան[1846]: Սակայն այդ բնակության շրջանի հետ նույնանում է ոչ թե բուն, այլ Մեծ Խորեզմը[1847]:

Խորասմներին պարթևներից արևելք և Χορασμίη քաղաքը հիշատակում է Հեկատեոս Միլեթացին[1848]: Խորասմներին խորոմներ-խորամներ անունով հիշատակում է Կտեսիասը[1849], իսկ Ստրաբոնը խորասմներին հիշատակում է որպես մասսագետների և սակերի ցեղերից մեկը[1850]:

Վերը կատարված քննությունը թույլ է տալիս համաձայնվել նաև Ի. Պյանկովի հետևյալ դիտարկման հետ: Վիթխարի տարածք ընդգրկած XVI սատրապության վճարած հարկը տարեկան կազմել է երեք հարյուր տաղանդ, այն դեպքում, երբ գրեթե նման տարածք ունեցող XIV սատրապությունը վճարել է վեց հարյուր տաղանդ հարկ[1851]: Հնարավոր է, որ XVI սատրապության ժողովուրդները, բացի ամենամյա հարկից, Աքեմենյան արքունիքին վճարել են նաև առանձին հարկ՝ օգտվելով ոռոգման համակարգից[1852]: Համենայն դեպս, XVI սատրապության մեջ մտած Սոգդիանան և Խորեզմը, ըստ *DSf* արձանագրության, այլ պարտավորություններ ևս ունեցել են Աքեմենյանների հանդեպ և պալատական շինարարության համար տրամադրել են համապատասխանաբար լաջվարդ, սարդիոն և փիրուզ[1853]:

Հերոդոտոսի կողմից Սոգդի ներառումը Պարթևքի, Խորեզմի և Արեյայի հետ XVI սատրապության կազմում մասնագիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված երկրները հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվում են որպես առանձին սատրապություններ[1854]: Սակայն նկատենք, որ հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակված հպատակ երկրները չեն ներկայացնում Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգը[1855]: Ուսումնասիրողների կարծիքով, Սոգդը միշտ էլ կապված է եղել Բակտրիայի հետ և Մարգիանայի հետ մտել է բակտրիական միավորման մեջ[1856]: Ըստ էության, այս կարծիքը հիմնված է Բեհիսթունի արձանագրության այն տեղեկության վրա, համաձայն որի Մարգիանան մտել է Բակտրիայի սատրապության կազմի մեջ[1857]: Հետևաբար, եթե նկատի ունենանք, որ Պարթևքի և Սոգդի միջև ընկած Մարգիանան մտել է Բակտրիայի սատրապության մեջ, ապա Մարգիանայից հյուսիս-արևելք ընկած Սոգդի գտնվելը Բակտրիայի սատրապության կազմի մեջ հավանական է: Այսպիսի կացությունը հնարավոր էր մինչև Դարեհ Ա-ի կողմից կատարված համապետական վարչական վերափոխումները: Սակայն Հերոդոտոսի մոտ պահպանված սատրապությունների ցուցակի ուսումնասիրությունը բացահայտում է վարչական նոր իրողությունների հաստատումն Աքեմենյան պետությունում:

Ամենայն հավանականությամբ ապստամբությունների ճնշումից և վարչաքաղաքական վերափոխումներից հետո վիթխարի մարդկային կորուստներ կրած Մարգիանան[1858] ներառվում է XVI սատրապության կազմում, քանի որ միայն այս դեպքում տրամաբանական կլինի պարթևների, քորասմների, սոգդերի և արեյների համատեղ հիշատակությունը մեկ սատրապության մեջ, ընդ որում Բակտրիայի սատրապությունն էլ Մարգիանայի փոխարեն ստանում է Այգլերի երկիրը[1859]:

Ի. Դյակոնովի կարծիքով, XVI սատրապությունը համընկել է հին Խորեզմի պետության և նրանից կախյալ տարածքների հետ, կամ էլ Դարեհ Ա-ի օրոք սատրապության կառավարումը հանձնված է եղել Դարեհ Ա-ի հորը՝ Վշտասպին, որը Բեհիսթունի արձանագրությունում

[1845] Frye R., The History of Ancient Iran, p. 61.
[1846] Marquart J., Ērānšahr, S. 155. Տե՛ս նաև History of Civilizations of Central Asia, Vol. II, p. 42.
[1847] Гафуров В. Г., Таджики: Древнейшая, древняя и средневековая история, М., 1972, с. 37 и след.
[1848] Müller C., FHG, Vol. I, Parisiis, 1841, fr. 173, p. 12.
[1849] Пьянков И. В., Средняя Азия в известиях античного историка Ктесия, с. 49, 93.
[1850] The Geography of Strabo, Vol. V, XI, 8, 8, p. 268. Խորեզմ անվան բացատրությունները՝ «արևային երկիր», «լավ երկիր» և այլն, բավարար չեն (տե՛ս Фрай Р., Նշվ. աշխ., էջ 72):
[1851] Հերոդոտոս, III, 93:
[1852] Пьянков И. В., Хорасмии Гекатея Милетского, с. 12.
[1853] Kent R., Old Persian, p. 144.
[1854] Herzfeld E., The Persian Empire, p. 298; Дьяконов И., Նշվ. աշխ., էջ 346; Массон В. М., Древнеземледельческая культура Маргианы, с. 148; ИТН, с. 203.
[1855] Խորհկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 7-8:
[1856] Бартольд В. В., Сочинения, т. III, М., 1965, с. 25; Массон В. М., Նշվ. աշխ., էջ 149; ИТН, с. 159.
[1857] «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», էջ 18; Kent R., Նշվ. աշխ., էջ 127:
[1858] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах, с. 224.
[1859] Հերոդոտոս, III, 92:

հիշատակվում է որպես Պարթևքի սատրապ[1860]: Այս կապակցությամբ նկատենք, որ ելնելով Բեհիսթունի արձանագրության տվյալներից՝ Վշտասպը Դարեհի դեմ ուղղված ապստամբությունների ժամանակ ոչ միայն Պարթևքի, այլ նաև Վրկանի սատրապն էր[1861]: Ապստամբությունների ճնշումից և Դարեհ Ա-ի վարչաքաղաքական վերափոխումներից հետո Պարթևքը և Վրկանը ներառվում են առանձին՝ առաջինը՝ XVI, իսկ երկրորդը, նկատի ունենալով կասպ-վրկան նույնացումը, XI սատրապությունների մեջ[1862]: Հնարավոր է, որ XVI սատրապության ձևավորումից հետո Վշտասպը նշանակվում է այդ ընդարձակ վարչական միավորի սատրապ, կամ էլ սատրապության ղեկավարումը հանձնվում է Աքեմենյան տոհմի ներկայացուցիչներին:

Սոգդը կամ Սոգդիանան, հավանաբար, ըստ Ի. Դյակոնովի, մտել է Մարաստանի տերության կազմի մեջ[1863]: Կյուրոսի կողմից Սոգդի նվաճման մասին վկայում է Սոգդիանայի հյուսիսային սահմանների մոտ Կյուրոպոլիս քաղաքի հիմնադրումը[1864]: Համաձայն հին աղբյուրների՝ Սոգդիանայի մայրաքաղաքն էր Մարականդան՝ ներկայիս Սամարղանդը[1865]:

Սոգդերը մասնագիտական գրականության մեջ համարվել են սակերի ցեղերից մեկը, որը վաղ անցավ նստակեցության: Այս տեսանկյունից սակեր և Սոգդ (հին պարսկ. *Sug^{u}da*, ավեստ. *Suyda*) անվանումները ստուգաբանորեն համադրվել են, ինչը չի ընդունվել Ի. Դյակոնովի կողմից[1866]: Ջ. Հարմատտան սոգդերի անունը բացատրում է "*burnt with fire*", այսինքն՝ «մաքրված, մաքուր, սուրբ» և կապում կրակի մինչզրադաշտական պաշտամունքի հետ[1867], հետևաբար *Sugda* նշա-

[1860] Дьяконов И. М., Նշվ. աշխ., էջ 348, 438:
[1861] «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», էջ 17-18; Kent R., Նշվ. աշխ., էջ 124, 127; Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 11:
[1862] Տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ 147-157: Կտեսիասը Հյուրկանիան հիշատակում է առանձին սատրապություն (տե՛ս Ctesias' History of Persia, p. 192):
[1863] Дьяконов И. М., Նշվ. աշխ., էջ 349, 358:
[1864] Arrian, Vol. I, IV, 3, pp. 344, 346; Страбон, с. 488-489; Rufus, Vol. II, VII, VI, 16, 19-20, p. 182.
[1865] Пьянков И. В., Мараканды, ВДИ, 1970, 1, с. 35; Д. К. Ш., с. 197. Մարականդայի մասին հին աղբյուրների տեղեկությունները տե՛ս Пьянков И. В., Древний Самарканд (Мараканды) в известиях античных авторов, Душанбе, 1972, с. 10-20.
[1866] Дьяконов И. М., Նշվ. աշխ., էջ 244: Արիանոսը հիշատակում է սոգդեր անունով հնդկական մի ցեղ (տե՛ս Արիանոս, էջ 222):
[1867] Harmatta J., The Origin of the Name Σόγδοι, ACUSD, 1977, XIII, p. 6.

նակել է «Սրբազան երկիր»[1868]: Սոգդերի լեզուն մտել է իրանական լեզվաընտանիքի մեջ[1869]:

Աշխարհագրական առումով սոգդերը բնակվել են Բուխարայի, Սամարղանդի օազիսներում և, հավանաբար, զբաղեցրել Ֆերգանայի բերրի դաշտի որոշ մասը և այլ հարակից տարածքներ: Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից սկսած կարելի է խոսել սոգդերի համայնքների մասին արևելքում, ընդհուպ մինչև Չինաստան[1870]:

Ինչ վերաբերում է արեյներին (հին պարսկ. *Haraiva*)[1871], ապա սրանց բնակության հիմնական տարածքը համապատասխանում է Թաջանդ-Հարիռուդ գետի հովտին, Հերաթի շրջանին, որը նվաճվել էր Մարաստանի կողմից[1872]: Հարիռուդ գետը Ստրաբոնը և Պտղոմեոսը անվանում են *Arios* և *Areias*[1873], իսկ երկիրն էլ՝ *Aria* և *Areia*: Հավանաբար, հին հեղինակները գետանունը և երկրանունը շփոթել են «արիացի» տերմինի հետ: Ռ. Ֆրայի կարծիքով, Հերաթի տարածքում է տեղի ունեցել արիացիների հիմնական բաժանումը՝ մի մասը շարժվել է Հնդկաստան, մյուս մասը՝ արևմուտք: Շարունակելով միտքը՝ ուսումնասիրողը եզրակացնում է, որ «արևելքի պարսիկները» կենտրոնացել են հենց Հերաթի շրջանում կամ էլ վերջինիս բնակչությունը իրեն համարել է «արիացիներ»՝ իրանական (և զրադաշտական) ավանդությունում հենվելով իրենց երկրի նշանակության վրա: Սակայն Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Արիա անվանումը Էրատոսթենեսի մոտ[1874] առաջին անգամ դառնում է Արիանա, որը պարթևական շրջանում լայն ընկալմամբ՝ *Aryānšahr* «արիացիների թագավորություն» ընդգրկում էր ամբողջ արևելյան Իրանը, բացառությամբ Բակտրիայի ու հյուսիսային տարածքների, և համապատասխանում Պարթևական թագավորությանը[1875]:

[1868] Szemerényi O., Four Iranian ethnic names, p. 46.
[1869] "History of Civilizations of Central Asia", Vol. II, p. 47.
[1870] Фрай Р., Նշվ. աշխ., էջ 72:
[1871] Eilers W., Geographische Namengebung in und um Iran, S. 22. Ըստ Է. Հերցֆելդի՝ արեյներն առաջին անգամ հիշատակվում են Սարգոնի «Տարեգրություններ»-ում "Aribi of the rising sun" (տե՛ս Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 330):
[1872] Дьяконов И. М., Նշվ. աշխ., էջ 358:
[1873] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 17, 2. Հմմտ. Արիանոս, էջ 137: Գետի անունը մեկնաբանվում է «հոսող» (տե՛ս Фрай Р., Նշվ. աշխ., էջ 80):
[1874] Страбон, с. 672.
[1875] Фрай Р., Նշվ. աշխ., էջ 80-81: Արիանան ընդգրկում էր Միջագետքի և Հնդկաստանի միջև ընկած տարածքը (տե՛ս Roller D. W., Eratosthenes' Geography, Princeton and Oxford, 2010, pp. 181, 226):

XVI սատրապության վարչական կացության մասին կարևոր տեղեկություններ է պարունակում Հերոդոտոսի հետևյալ հաղորդումը: Հույն պատմիչը, նկարագրելով Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմը, գրում է. «Արիները զինված էին մեդական աղեղներով. նրանց մնացած հանդերձանքը բակտրիացիների նման էր: Արիներին առաջնորդում էր Հյուդառնեսի որդի Սիսամնեսը: Պարթևները, քորասմները, սոգդերը, գանդարները և դադիկները արշավել էին բակտրիացիների նման հանդերձանք ունենալով: Նրանց առաջնորդում էին հետևյալները: Պարթևներին և քորասմներին՝ Փառնակեսի որդի Արտաբազոսը. սոգդերին՝ Արտայոսի որդի Ազանեսը. գանդարներին և դադիկներին՝ Արտաբանոսի որդի Արտյուփիոսը»[1876]: Տվյալ տեղեկության մեջ հիշատակված ժողովուրդները, բացառությամբ արիների կամ արեյների մեդական աղեղների, հանդես են գալիս բակտրիական սպառազինությամբ: Սակայն տեղեկության ուշադիր քննությունը բացահայտում է մի շարք կարևոր իրողություններ:

Քսերքսեսի բանակի նկարագրությունն իր նշանակությամբ համեմատվում է սատրապությունների հերոդոտյան ցուցակի հետ և ներկայացնում է Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգը Քսերքսեսի գահակալության ժամանակ: Օրինակ, XVI սատրապության կազմը Քսերքսեսի գահակալության ժամանակ ենթարկվել է փոփոխությունների: Արիների կամ արեյների և սոգդերի առանձին հրամանատարությունների տակ հիշատակվելը ցույց է տալիս, որ Դարեհի ժամանակ ձևավորված XVI սատրապության էթնիկական կազմը ենթարկվել է վերափոփոխությունների, և տարածքն էլ կրճատվել է: XVI սատրապության կազմում, փաստորեն, դատելով պարսկական բանակի էթնիկական կազմի նկարագրությունից, շարունակում էին մնալ քորասմները և պարթևները: Աշխարհագրական առումով Սոգդի առանձին սատրապություն լինելը միանգամայն հավանական է, իսկ Արեյան թերևս միավորվել է Մարգիանայի հետ, չնայած վերջինս կարող էր ներառված լինել նաև Բակտրիայի սատրապության մեջ: Սակայն առավել հավանական է, որ Արեյան և Մարգիանան միավորված են եղել մեկ սատրապության մեջ[1877]:

XVI սատրապության վարչական նոր փոփոխությունների մասին վկայում են Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նկարագրող հին հեղինակները: Ըստ Արիանոսի՝ Գավգամելայի ճակատամարտին

[1876] Հերոդոտոս, VII, 66:
[1877] Համմտ. Frye R., The History of Ancient Iran, p. 112.

ներկայացած սոգդերը բակտրիացիների հետ միասին միևնույն սատրապության մեջ են[1878], Արեյան առանձին սատրապություն է, իսկ պարթևները վրկանների և տապուրների հետ ներկայանում են առանձին սատրապի՝ Թրատաթերնի իշխանության տակ[1879]: Վրկանը և Պարթևստանը՝ որպես մեկ սատրապություն[1880], ինչպես նաև Արեյան[1881], հիշատակվում են Արիանոսի այլ տեղեկություններում ևս[1882]: Արիանոսը հիշատակում է Արեյայի Սուսիա քաղաքը և նստավայր Արտակոանան[1883]: Ստրաբոնը Արեյան և Դրանգիանան՝ սարանգների երկիրը, համարում է մեկ սատրապություն, ընդ որում՝ հույն հեղինակի համար Արեյան բուն երկրի անվանումն է, իսկ Արիանան օգտագործում է իր ժամանակների համար՝ նկատի ունենալով արևելյան Իրանի ընդարձակ տարածքները[1884]: Ինչ վերաբերում է խորասմներին, ապա սրանց Արիանոսը կապում է արդեն Ամու-Դարյայի ստորին հոսանքի շրջանի հետ[1885]:

Սոգդերը, դատելով Ռուփոսի տեղեկություններից, Աքեմենյան Պարսկաստանի մայրամուտին բակտրիացիների հետ միավորված են եղել միևնույն սատրապության մեջ[1886], և ավելի ուշ Ալեքսանդրը Սոգ-

[1878] Frye R., The Heritage of Central Asia, p. 99.
[1879] Արիանոս, էջ 97: Ռուփոսը սոգդերին և պարթևներին հիշատակում է առանձին, ինչը կապված է մարտադաշտում նրանց զբաղեցրած դիրքով (տե՛ս Ռուփոս, էջ 350-351):
[1880] Տե՛ս նաև Страбон, с. 486. Ալեքսանդրի մահից հետո Վրկանը և Պարթևստանը մեկ սատրապություն են (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, p. 228):
[1881] Արիանոս, էջ 118, 121: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 422, 454: Մի տեղում Արիանոսը արիացիներին և սարանգներին հիշատակում է միևնույն սատրապության մեջ (տե՛ս Արիանոս, էջ 236: Համմտ. Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, p. 228): Չբացառելով նման սատրապության գոյությունը՝ կարելի է նաև ենթադրել, որ արիացիների փոխարեն պետք է նշված լինեին արաքոսիացիները (անդ, էջ 114):
[1882] Արիանոս, էջ 116, 118, 121, 124, 137, 152, 193, 236: Տապուրներն ունեին առանձին սատրապ (անդ, էջ 118-119), որի իշխանությունը տարածվում էր հերոդոտյան XI սատրապության նախկին տարածքի մի մասի վրա: Ավելի ուշ Ալեքսանդրը տապուրներին, մարդերին և Վրկանը միավորում է, ըստ էության Պարթևստանի հետ, մեկ սատրապության մեջ (տե՛ս Ռուփոս, էջ 498): Ռուփոսը հիշատակում է Վրկանի սատրապ Մանապին (անդ, էջ 416): Ռուփոսի համար անկախ վարչական բաժանումից յուրաքանչյուր երկիր թերևս մի սատրապություն էր, կամ էլ Ալեքսանդրն արշավանքների ժամանակ, ելնելով պահի թելադրանքից, կատարում էր ժամանակավոր վարչական վերաձևումներ:
[1883] Արիանոս, էջ 120-121:
[1884] Страбон, с. 129, 487.
[1885] Արիանոս, էջ 149, 176: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 457, 487:
[1886] Ռուփոս, էջ 457, 459: Համմտ. Страбон, с. 485-486.

դիանան դարձնում է առանձին սատրապություն[1887], որը պահպանվում է նաև Ալեքսանդրի մահից հետո[1888]: Արիանոսը հիշատակում է նաև Նավթակի երկիրը՝ ներկայիս Շահրիսաբզը[1889], որը մտնում էր Սոգդիանայի մեջ[1890]:

Այժմ քննենք Բակտրիայի վարչաքաղաքական բաժանման վերաբերյալ հին աղբյուրների տեղեկությունները: Մասնագիտական գրականության մեջ կան կարծիքներ, ըստ որոնց՝ մինչև Աքեմենյանների կողմից նվաճվելը գոյություն է ունեցել Հին Բակտրիական թագավորությունը, և պատահական չէ, որ զրադաշտական ավանդույթում հիշատակվում է բակտրիական թագավոր Վշտասպը՝ Զարատուշտրայի հովանավորը[1891]: Սակայն Հին Բակտրիական թագավորության գոյության մասին հարցը մնում է վիճելի[1892]:

Բակտրիան և սակերն արևելյան Իրանի ու Միջին Ասիայի հետ նվաճվել էին դեռևս Կյուրոսի կողմից մ. թ. ա. 545 և 539 թվականների միջև[1893]: Պլինիոս Ավագը հաղորդում է, որ Կյուրոսն ավերում է Կապիշա քաղաքը, որը գտնվել է, հավանաբար, ներկայիս Քաբուլից հյուսիս[1894]: Արիանոսը հայտնում է, որ Կյուրոսը հարձակվել է հնդիկների վրա, որոնք հավանաբար գանդարիներն են, իսկ արիասպների ցեղն էլ՝ Դրանգիանայի հարավային սահմանի մոտ, օգնում է Կյուրոսին սկյութների դեմ արշավանքում[1895]: Ամենահին տեղեկությունը Բակտրիայի մասին պահանվել է Էսքյուլեսի «Պարսիկներ» ստեղծագործությունում, որտեղ նշվում է Քսերքսեսի հունական արշավանքին բակտրիացիների մասնակցության մասին[1896]:

Բակտրիայի և բակտրիացիների մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Հերոդոտոսը: Պատմահայրը, ներկայացնելով Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների ցուցակը, Բակտրիայի մասին գրում է. «Բակտրիացիներից մինչև Այգլերի (երկիրը բնակվողները) վճարում էին երեք հարյուր տաղանդ հարկ. սա էլ տասներկուերորդ նահանգն էր»[1897]: Բակտրիան և բակտրիացիները տարբեր առիթներով մի քանի անգամ ևս հիշատակվում են Հերոդոտոսի կողմից:

Այսպես, հույն պատմիչը գրում է, որ Կրեսոսին հաղթելուց և գերեվարելուց հետո Կյուրոսին «դեռ խանգարում էին Բաբելոնը և՛ բակտրիական ազգը, և՛ սակերը, և՛ եգիպտացիները: Սրանց դեմ էլ նա մտադիր էր անձամբ արշավելու...»[1898]: Ինչպես նշում են ուսումնասիրողները, Հերոդոտոսը Բակտրիան հիշատակում է Մերձավոր Արևելքի կարևոր պետությունների հետ միևնույն շարքում, որոնք խոչընդոտում էին Կյուրոսի կողմից համաշխարհային կայսրության ստեղծմանը[1899]:

Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմում Հերոդոտոսը բակտրիացիներին հիշատակում է երկու խումբ սակերի հետ՝ «սրածայր բարձր գդակավոր» և ամյուրգյան, միևնույն հրամանատարության տակ[1900]: Ընդ որում, հաջորդ տեղեկությունից պարզվում է, որ արիները, պարթևները, քորասմները, սոգդերը, գանդարները և դադիկները արշավել էին բակտրիացիների նման հանդերձանք ունենալով[1901], ինչը ցույց է տալիս կայսրության մեջ բակտրիացիների զբաղեցրած առաջնակարգ դերի մասին: Բակտրիացիները արշավանքին տրամադրել էին հեծյալներ[1902]: Թեսսալիայում գտնվելու ժամանակ բակտրիացի զինվորները հիշատակվում են սակերի և հնդիկների միջև, իսկ Պլատեայի ճակատամարտում բակտրիացիներից հետո հիշատակվում են հնդիկները և սակերը[1903], որոնք աշխարհագրական առումով ևս Բակտրիայի հարևաններն էին: Հերոդոտոսը բակտրիացիներին և սակերին կողք կողքի հիշատակում է նաև այլ տեղեկությունում՝ խոսելով

[1887] Արիանոս, էջ 149:
[1888] Ռուփոս, էջ 596:
[1889] Пьянков И. В., Мараканды, с. 37.
[1890] Արիանոս, էջ 125, 152:
[1891] Пьянков И. В., Древнейшие государственные образования Средней Азии (Опыт исторической реконструкции), Древние цивилизации Евразии. История и культура, М., 2001, с. 334-348.
[1892] Տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 29-30; Frye R., The Heritage of Central Asia, p. 68.
[1893] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 28.
[1894] Pliny, Natural History, Vol. II, VI, 92, p. 408; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 27.
[1895] Արիանոս, էջ 123, 232: Կյուրոսը Սոգդիանայում՝ մասսագետների դեմ, հիմնադրում է Կյուրոպոլիս կամ Կյուրեսխատա քաղաքը, որը կործանում են մակեդոնացիները (տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 52-53; Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 59, p. 380; Արիանոս, էջ 130-131): Հմմտ. Frye R., The History of Ancient Iran, p. 94.

[1896] Տե՛ս Попов А., Греко-бактрийское царство, С.-Петербург, 2008, с. 31, 34.
[1897] Հերոդոտոս, III, 92: Տե՛ս նաև Herodotus, Vol. II, III, 93, p. 121.
[1898] Հերոդոտոս, I, 153: Քսենոփոնը գրում է, որ Կյուրոսը նվաճում է բակտրիացիներին (տե՛ս Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5):
[1899] Дьяконов М. М., Сложение классового общества в Северной Бактрии, СА, 1954, XIX, с. 125; ИТН, с. 156 и след.; Гафуров В. Г., Таджики, с. 37 и след.
[1900] Հերոդոտոս, VII, 64:
[1901] Անդ, VII, 66:
[1902] Անդ, VII, 86:
[1903] Անդ, VIII, 113; IX, 31:

Բակտրիայի սատրապ Մասիստեսի մասին, որը Քսերքսեսի եղբայրն էր[1904]: Հերոդոտոսի մեկ այլ հաղորդումից էլ պարզվում է, որ գերեվարված բարկացիներին պարսիկները եգիպտոսից տանում և վերաբնակեցնում են Բակտրիայի գյուղերից մեկում, որը կոչվում էր Բարկա[1905]:

Բակտրիան հիշատակվում է նաև հին պարսկական սեպագիր արձանագրություններում: Բեհիսթունի արձանագրությունում Դարեհ Ա-ին հպատակ երկրների շարքում Խորեզմից հետո հիշատակվում է Բակտրիան, որին հաջորդում են Սոգդը, Գանդարան, Սական[1906]: Նույն արձանագրությունում խոսվում է նաև Մարգիանայում բռնկված ապստամբության մասին, որը դաժանաբար ճնշում է Բակտրիայի հավատարիմ սատրապ Դադարշիշը: Ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհ Ա-ն հայտարարում է, որ այդ է իր կատարածը Բակտրիայում[1907], ինչը նշանակում է, որ Մարգիանան մինչև Դարեհ Ա-ի վարչական վերափոխումները մտել է Բակտրիայի սատրապության կազմի մեջ[1908]: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ՝ Մարգիանայի՝ Բակտրիայի կազմում լինելու մասին հաղորդում է նաև Ռուփոսը[1909]: Հին պարսկական մյուս սեպագիր արձանագրություններում Բակտրիան հիմնականում հիշատակվում է Արեյայի և Սոգդիանայի միջև[1910]: Արձանագրություններից պարզվում է նաև, որ Բակտրիան Աքեմենյաններին պալատական շինարարության համար տրամադրել է նաև ոսկի[1911]:

Արտաքսերքսես Գ-ի օրոք Բակտրիայի և Սոգդիանայի սատրապն

[1904] Անդ, IX, 111; 113: Տե՛ս նաև Геродот, IX, 113.
[1905] Անդ, IV, 204: Հմմտ. անդ, VI, 9 (հոնիացիներին պարսիկները սպառնում են Բակտրիա գերեվարությամբ): Տե՛ս նաև Тревер К. В., Памятники греко-бактрийского искусства, М.-Л., 1940, с. 4.
[1906] Տե՛ս «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», էջ 8:
[1907] Անդ, էջ 18:
[1908] Դատելով Բեհիսթունի արձանագրությունից՝ Ֆրադայի՝ Մարգիանայի թագավոր հռչակվելը (տե՛ս Kent R., Նշվ. աշխ., էջ 127, 131) խոսում է այն մասին, որ մինչև Աքեմենյանների կողմից նվաճվելը Մարգիանան թերևս թագավորություն է եղել, որը վերացնում են պարսիկները: Մ. Դյակոնովը Բեհիսթունի արձանագրությունում ընդունում է ոչ թե թագավոր, այլ առաջնորդ ընթերցումը, ինչը, նրա կարծիքով, վկայում է այն մասին, որ մարգիանացիները չեն իմացել թագավորական ավանդույթների մասին (տե՛ս Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, с. 75): Մենք հակված ենք այն կարծիքին, որ գոնե Դարեհ Ա-ի դեմ ուղղված ապստամբությունների ժամանակ Ֆրադան կարող էր իրեն թագավոր հռչակել:
[1909] Ռուփոս, էջ 482:
[1910] Kent R., Նշվ. աշխ., էջ 136, 138, 141, 145, 151, 156:
[1911] Անդ, էջ 144: Բակտրիական ոսկու և արծաթի մասին հաղորդում է նաև Կտեսիասը: Տե՛ս նաև Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 41-42. Հմմտ. Тревер К. В., Памятники греко-бактрийского искусства, с. 10.

էր Ախվամազդան, որի ենթականերից էր Բագավանտը. վերջինիս նստավայրը Խուլմի քաղաքն էր (ներկայիս Խուլմը Աֆղանստանի հյուսիսում)[1912]: Բագավանտի ենթակայության տակ էր նաև Նիխշափայա քաղաքը՝ ներկայիս Քարշին Ուզբեկստանում[1913]:

Բակտրիան և բակտրիացիներն աղբյուրներում գրեթե միշտ հիշատակվում են հնդիկների, սոգդերի և սակերի հետ միասին կամ հարևանությամբ: Օրինակ, Գավգամելայի ճակատամարտում բակտրիացիները, սոգդերը, հնդիկները և Դարեհ Գ-ի անմիջական դաշնակիցներ սակերը միավորված են Բակտրիայի սատրապ Բեսի հրամանատարության տակ[1914]: Տեղեկությունը խոսում է այն մասին, որ Բեսի սատրապական իշխանությունը տարածվել է նաև սոգդերի և հնդիկների (հավանաբար, Արիանոսը նկատի ունի գանդարիներին[1915] ու դադիկներին) վրա: Բակտրիայի սատրապ Բեսի իշխանությունն, իրոք, տարածվել է Սոգդիանայի վրա, ինչի մասին գրում է Արիանոսը[1916]: Ռուփոսի տեղեկություններից նույնպես կարելի է ենթադրել, որ Թանաիս-Սիր-Դարյան կազմել է Բակտրիայի սատրապության հյուսիսային սահմանը[1917]: Անշուշտ, Բեսը Դարեհ Գ-ի պետության մեջ ունեցել է բացառիկ դիրք, և պատահական չէ, որ հենց նա էլ սպանում է Դարեհին և հռչակվում Ասիայի արքա՝ Արտաքսերքսես անվամբ[1918]: Բեսի այս նկրտումները պայմանավորված էին այն կարևոր հանգամանքով, որ Բակտրիան ռազմական և տնտեսական առումով հզոր սատրապություն էր[1919], որտեղ կային խոշոր քաղաքներ.

[1912] Fried L. S., The Role of the Governor in Persian Imperial Administration, p. 320.
[1913] Անդ, էջ 320-321:
[1914] Արիանոս, էջ 97: Հմմտ. անդ, էջ 169: Ստրաբոնը հայտնում է, որ սակերը նվաճել են Բակտրիանան (տե՛ս Страбон, с. 484):
[1915] Վարչական առումով Գանդարան սկզբում Բակտրիայի հետ կազմել է մեկ սատրապություն (տե՛ս Дандамаев М., Луконин В., Նշվ. աշխ., էջ 111):
[1916] Արիանոս, էջ 125: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 421: Հմմտ. Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, p. 228.
[1917] Ռուփոս, էջ 470, 477: Հերոդոտոսի մոտ Սիր-Դարյան համապատասխանում է Արաքս գետին (տե՛ս Հերոդոտոս, I, 201; նաև Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 59, p. 380): Ստրաբոնը գրում է, որ Օքսոս գետը բաժանում է Բակտրիանան և Սոգդիանան՝ վերջինս տեղադրելով Ամու-Դարյայի և Սիր-Դարյայի միջև (տե՛ս Страбон, с. 79, 488): Օքսոսի տակ կարելի է հասկանալ նաև Զարաֆշան գետը:
[1918] Արիանոս, էջ 120: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 421; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 74, p. 176.
[1919] Гафуров В. Г., Таджики, с. 77-78, 83. Պերսեպոլիսի բարձրաքանդակներում բակտրիացիները հարկատու ժողովուրդների թվում պատկերված են 15-րդ տեղում (տե՛ս Дандамаев М., Луконин В., Նշվ. աշխ., էջ 195): Ըստ Ռուփոսի՝ բակտրիացիները պարսից բանակին տվել են 30 000 հեծյալներ (տե՛ս Ռուփոս, էջ 460):

Դրապսակ, Ահորն, մայրաքաղաք Բակտրան, որն իր անունը ստացել է Բակտր գետի անվանումից, Զարիասպ, ավելի ուշ արդեն Ալեքսանդրի հիմնադրած Ալեքսանդրիան[1920]:

Հետաքրքիր են նաև Կտեսիասի տեղեկությունները բակտրիացիների և հարևան ժողովուրդների մասին: Համաձայն Կտեսիասի՝ Կյուրոս Մեծը Կամբյուսեսին նշանակում է իր հաջորդը, իսկ կրտսեր որդուն՝ Թանիոքսարկեսին՝ բակտրիացիների, քորամնաների, պարթևների, կարմաննեի տիրակալ, իսկ ոմն Սպիտամի որդիներից մեկին նշանակում է դերբիկների, իսկ մյուսին՝ բարկանների սատրապ[1921]: Դերբիկները, կարմանները, քորոմնաները, բորկանները, պարթևները հիշատակվում են առասպելական Նինոսի կողմից նվաճված ժողովուրդների թվում[1922]: Բակտրիացիները դրանց շարքում չեն նշվում և Կտեսիասի կողմից բազմիցս հիշատակվում են որպես հզոր և անկախ ժողովուրդ: Նինոսն առանձին արշավանք է կազմակերպում Բակտրիայի դեմ և համառ դիմադրությունից հետո նվաճում երկիրը՝ տիրանալով մայրաքաղաք

[1920] Արիանոս, էջ 125, 127, 130, 137, 151, 158: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 460, 557-558: Ստեփանոս Բյուզանդացին հիշատակում է բակտրիական Ռետիա քաղաքը (տե՛ս Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 41): Համաձայն Ստրաբոնի՝ Բակտրան կոչվել է նաև Զարիասպա (տե՛ս Страбон, с. 486, 488): Հույն աշխարհագետի Դարապսան, Ադրապսան (անդ, էջ 488, 673), հավանաբար, Դրապսակն է: Վերջինիս նույնանում է նաև Ամմիանոս Մարկելինոսի հիշատակած Դրեպսան (տե՛ս Ammianus Marcellinus, Vol. II, XXIII, 6, 59, p. 380):

[1921] Пьянков И. В., Средняя Азия в известиях античного историка Ктесия, с. 93. Նշենք նաև, որ Քսենոփոնի այն տեղեկությունը, թե Կյուրոսն իր Տանաոքսարես (իմա՝ «մարմնով հզոր») որդուն կարգում է մեդացիների, արմենների և կադուսիների սատրապ (տե՛ս Xenophon, Cyropaedia, Vol. II, pp. 428-429), չի համապատասխանում իրականությանը, քանի որ Տանաոքսարեսի՝ Բարդիայի տիրույթները գտնվել են Միջին Ասիայում, և Քսենոփոնը փոխել է Կտեսիասի մոտ հիշատակվող երկրների անունները (տե՛ս Пьянков И., Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана, с. 98-103; հմմտ. Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 66): Քսերքսեսի մահից հետո նրա որդիներից մեկը՝ Հյուստասպեսը, ապստամբում է Արտաքսերքսես Ա-ի դեմ Բակտրիայում և պարտվում (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. II, XI, 69, p. 71; Rawlinson H. G., The Bactrian Empire under the Greek Dynasties, Bombay, 1909, pp. 21-22; Olmstead A., Նշվ. աշխ., էջ 290; Попов А., Греко-бактрийское царство, с. 36):

[1922] Пьянков И. В., Средняя Азия в известиях..., с. 49. Հմմտ. Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 35: Ասորեստանյան զորքերն արևելյան ուղղությամբ չեն անցել մարական շրջաններից այն կողմ (տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 28-29):

Բակտրայի գանձերին[1923]: Կտեսիասի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Բակտրիան հյուսիսում տարածվել է մինչև Թանաիս-Սիր–Դարյա գետը, իսկ արևելքում սահմանակցել է հնդիկներին՝ նրանցից բաժանված լինելով Ինդոս գետով[1924]:

Կտեսիասը աշխարհագրական առումով Բակտրիային ընդարձակ տարածք է հատկացնում՝ նրա կազմում ներառելով սոգդերին, գանդարիներին, դադիկներին[1925], այն դեպքում, երբ սոգդերը, ըստ Հերոդոտոսի, մտել են XVI սատրապության, իսկ գանդարիները և դադիկները՝ VII սատրապության կազմի մեջ[1926]:

Ի. Պյանկովը, քննելով Բակտրիայի և հարևան ժողովուրդների մասին Կտեսիասի տեղեկությունները, ենթադրում է, որ պատմիչը, թվարկելով Նինոսին ենթակա ժողովուրդներին՝ բակտրիացիներ, քորամներ (իմա՝ խորասմներ), պարթևներ, կարմաններ, դերբիկներ, բարկաններ (իմա՝ հյուրկաններ), նկատի ունի այն հանգամանքը, որ նշված ժողովուրդները վարչական միավորներ են՝ սատրապություններ, այսինքն՝ հույն հեղինակը ներկայացնում է Արտաքսերքսես Բ-ի սատրապությունների ցուցակը: Ի վերջո, ուսումնասիրողը եզրակացնում է, որ Կտեսիասի բակտրիացիները ոչ թե հենց բակտրիական ժողովուրդն է, այլ Կտեսիասին ժամանակակից բակտրիական սատրապության բնակչությունը[1927]: Ընդ որում, Ի. Պյանկովի կարծիքով,

[1923] Пьянков И. В., Средняя Азия в известиях..., с. 55-61. Նիկողայոս Դամասկացին գրում է, որ Մեդիային հաղթելուց հետո Կյուրոս Բ-ին են ներկայանում հյուրկանների, պարթևների, սակերի, բակտրիացիների և մյուս ժողովուրդների սատրապները՝ հայտնելով իրենց հպատակությունը (տե՛ս Müller C., FHG, Vol. III, Parisiis, 1849, p. 406, fr. 66):

[1924] Пьянков И. В., Средняя Азия в известиях..., с. 63, 67. Տե՛ս նաև Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 39. Ըստ Ստրաբոնի՝ սկյութները գտնվել են բակտրիացիներից այն կողմ և սահմանակցել են նաև հնդիկներին ու բակտրիացիներին (տե՛ս Страбон, с. 80, 120, 771):

[1925] Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 39-40. Ավելի ուշ Ալեքսանդր Մակեդոնացին Բակտրիայի կազմից կրկին առանձնացնում է Ինդոսից արևմուտք ընկած տարածքը, ի մեջ առյալ նաև Քաբուլի հովիտը, և դարձնում առանձին սատրապություն, որը հետո կրկին միացնում է Բակտրիայի սատրապությանը (տե՛ս Արիանոս, էջ 158, 222; Ռուփոս, էջ 455): Այս սատրապությունը համապատասխանում է գանդարիների կամ պարոպամիսադների (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 82, p. 184) բնակության տարածքին: Պարոպամիսադները նույնացվել են պակտյուացիներին (տե՛ս Herzfeld E., The Persian Empire, p. 337):

[1926] Հերոդոտոս, III, 91; 93; VII, 64; 66:

[1927] Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 38, 40.

Բակտրիան եղել է թոպարքիա, որի մեջ մտնում էին բակտրիացիները, քորամները և պարթևները[1928]: Նկատենք նաև, որ Բակտրիայի սատրապի կողքին կար նաև բարձրագույն ռազմական հրամանատարը՝ կարանոսը, որն Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ Վշտասպ-Հյուստասպեսն էր[1929]:

Ինչ վերաբերում է Այգլերի երկրին, ապա Ի. Պյանկովն այն նույնացնում է Պտղոմեոսի Αὐγαλοί-ին[1930], որը Բակտրիայից բաժանված էր սոգդերով[1931]: Սակայն մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ խոսքը Բակտրիայի մեջ մտնող Մարգիանայի մասին է[1932]: Ինչևէ, «բակտրիացիներից մինչև Այգլերի» ցույց է տալիս, որ այս երկրները անմիջական հարևաններ են եղել: Եթե ինչ-որ տեղ կարծենք, որ Այգլերի երկիրը գտնվել է Մարգիանայում, ապա Մարգիանայում ապստամբությունն արյան մեջ խեղդելուց հետո Դարեհը, հավանաբար, քաղաքական նպատակներով վարչական կացությունը տեղում ձևավորել էր նոր, հավատարիմ ցեղի, թերևս սկյութական, շուրջ[1933]: Չի բացառվում, որ Այգլերի երկիրը գտնվել է XII սատրապության ծայր հյուսիսում, որտեղ սկյութական տարրի առկայությունն ակնհայտ էր:

Այսպիսով՝ XII և XVI սատրապությունների էթնիկական կազմի և տարածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս Աքե-

[1928] Անդ, էջ 48: Ի. Պյանկովը ենթադրում է նաև Արտաքսերքսես Բ-ի ժամանակ մարա-հայկական թոպարքիայի գոյության մասին (անդ, էջ 49), ինչը, մեր կարծիքով, հավանական չէ: Ելնելով մեր ուսումնասիրություններից՝ ենթադրում ենք, որ Հայաստանի սատրապությունը թոպարքիա կարող էր կազմել XVIII և XIX սատրապությունների հետ, հետևաբար, եթե ընդհանրապես հավանական է նման թոպարքիայի գոյությունը, ապա վերջինս ճիշտ կլինի անվանել հայկական թոպարքիա: Պարթևքի՝ Բակտրիական թոպարքիայի կազմում գտնվելու մասին հաղորդում է Արիանոսը, երբ գրում է, որ Դարեհ Գ-ն ձերբակալվեց Բեսի կողմից վերջինիս սատրապությունում, այսինքն՝ Պարթևքում (Արիանոս, III, 21, 5; էջ 115: Հմմտ. անդ, IV, 7, 1):

[1929] Hyland J., Vishtaspa krny: An Achaemenid Military Official in 4th-century Bactria, ARTA 2, 2013, pp. 1-7.

[1930] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 12, 4. Հերոդոտոսի հիշատակած Այգլերի երկրի տարընթերցումներից մեկում՝ Λιγδῶν, փորձել են տեսնել լիգիացիներին՝ լայն առումով կոլխերին, որոնք նշվում են Քսերքսեսի բանակի կազմում (տե՛ս Laird A. G., The Persian Army and Tribute Lists in Herodotus, pp. 308-309, 323): Սակայն այս կարծիքն անհավանական է:

[1931] Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 43-44, прим. 68.

[1932] Տե՛ս Sarre F., Herzfeld E., Iranische Felsreliefe, Berlin, 1910, S. 26.

[1933] Հմմտ. Массон В. М., Древнеземледельческая культура Маргианы, с. 149; Junge J., Orthokorybantioi, col. 1486.

մենյանների կարևոր վարչական միավորներից էին, որոնք ձևավորվել էին իրանական էթնիկական տարրի հիմքի վրա:

4.2. XIV սատրապության էթնիկական կազմը

Պատմահայր Հերոդոտոսը գրում է. «Սագարտիները, սարանգները, թամանները, ուտիները, մյուկերը և Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչները, որտեղ արքան բնակեցնում է, այսպես կոչված, տեղահանվածներին, այս բոլորը վճարում էին վեց հարյուր տաղանդ հարկ. սա տասնչորսերորդ նահանգն էր»[1934]: Պատմահայրը տարբեր առիթներով մի քանի անգամ ևս անդրադառնում է նշված ցեղերին, որոնցից նախ կքննենք առաջինն հիշատակված սագարտիներին, հետո մյուս ցեղերին ու ժողովուրդներին վերաբերող տեղեկությունները:

Սագարտիներ: Հերոդոտոսը սագարտիներին հիշատակում է նաև հետևյալ տեղեկություններում: Ըստ պատմիչի՝ սագարտիները պարսկական վաչկատուն ցեղերից էին[1935]: Սագարտիները հիշատակվում են նաև Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմում. «Կային նաև ինչ-որ վաչկատուն մարդիկ, որոնք կոչվում են սագարտիներ: Նրանց ազգությունը և լեզուն պարսկական է, բայց հանդերձանքը պարսկականի և պակտյուականի միջև մի բան է: Նրանք հանում էին ութ հազար հեծյալ: Նրանք, սովորաբար, չունեն ոչ պղնձե, ոչ երկաթե զենքեր, բացի դաշույններից, և օգտագործում են կաշվե երիզներից հյուսած օղապարաններ, որոնց էլ ապավինած, նրանք գնում են պատերազմի...Նրանք կռնգնած էին պարսիկների կողքին»[1936]: Վերջին տեղեկության մեջ մեկ անգամ ևս Հերոդոտոսը նշում է սագարտիների պարսկական ծագումը, իսկ նրանց հանդերձանքի որոշ նմանությունը պակտյուականին սագարտիներին կապում է Աքեմենյան տերության արևելյան շրջանների հետ: Պակտյուիկեն գտնվել է Ինդոս գետի վերին հոսանքից հյուսիս-արևմուտք ընկած շրջանում և, թերևս, համապատասխանում է ներկայիս Աֆղանստանի Փակտիա, Փակտիկա նահանգներին և մտել է VII սատրապության կազմի մեջ[1937]: Ըստ մասնագիտական գրականության մեջ եղած կարծիքի՝ սագարտիները բնակվել են, հավանաբար, Իրանական բարձրավանդակի կենտրոնական

[1934] Հերոդոտոս, III, 93:

[1935] Անդ, I, 125:

[1936] Անդ, VII, 85-86:

[1937] Անդ, III, 102; IV, 44; VII, 408: Այս Պակտյուիկեն տարբեր է XIII սատրապության մեջ մտնող Պակտյուիկեից (տե՛ս Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի..., էջ 173-192): Ըստ Է. Հերցֆելդի՝ պակտյուացիները պարսպամիսադների էթնիկական անվանումն է (տե՛ս Herzfeld E., The Persian Empire, p. 337):

լեռնային և անապատային շրջաններում: Գոյություն է ունեցել նաև սագարտիների արևմտյան մարական խումբը[1938]: Սրանց գոյության մասին, բացի հին պարսկական աղբյուրից, վկայում է նաև Պտղոմեոսի տեղեկությունը (VI, 2, 5-6), ըստ որի՝ սագարտիները գտնվել են Մարաստանում, Զագրոսի լեռներում[1939]: Ստեփանոս Բյուզանդացու աղբյուրը Սագարտիան համարում է թերակղզի Կասպից ծովում, որտեղ ապրում էր սագարտիներ ժողովուրդը[1940]: Այս տեղեկության մեջ անհայտ է, թե հեղինակը որ թերակղզին նկատի ունի, սակայն այս սագարտիներին նույնպես կարելի է կապել արևմտյան խմբի հետ: Ի. Խլոպինը կարծում է, որ սագարտիները սխալմամբ են ընդգրկվել XIV սատրապության մեջ վրկանների փոխարեն, ինչն անընդունելի է[1941]: Սագարտիան Մարական կայսրության արևելյան մասն էր[1942]: Մասնագիտական գականության մեջ, համաձայն գոյություն ունեցող տեսակետի, սագարտիները նույնանում են ասուրական աղբյուրների Զիկերտուին, ընդ որում, և՛ սագարտիները, և՛ զիկերտացիները հեծյալներ էին[1943]: Ռ. Մելիքովը, հետևելով Է. Գրանտովսկուն, ընդհանրապես բացառում է արևելյան սագարտիների գոյությունը[1944]: Սակայն Հերոդոտոսի տեղեկությունները սագարտիների մասին վկայում են վերջիններիս արևելյան խմբի գոյությունը, ընդ որում արևելյան խմբի գոյությունը հնարավոր էր ինչպես սագարտիների վաչկատուն լինելու հանգամանքով, այնպես էլ Աքեմենյան արքունիքի առանձին ցեղերի վերաբնակեցման քաղաքականությամբ (հմմտ., օրինակ, XIV սատրապության մեջ հիշատակվող տեղահանվածներին):

Սարանգներ: Առանձին ջոկատով հիշատակվում են նաև Քսերքսեսի բանակի կազմում[1945]: Մեկ այլ տեղեկության մեջ էլ նրանց մասին Հերոդոտոսը գրում է. «Ասիայում կա մի դաշտավայր, բոլոր կողմերից լեռներով շրջապատված, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է քորասմներին և գտնվում է նույն քորասմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների սահմաններում: Պարսից իշխանության հաստատումից հետո այն արդեն պատկանում է (պարսից) արքային»[1946]: Այս տեղեկությունն անորոշ է[1947], քանի որ դաշտավայրը չէր կարող գտնվել նշված ցեղերի բնակության սահմաններում, որոնց աշխարհագրությունը բացառում է որևէ նույնացում, և մեզ համար միայն կարևոր է սարանգների և թամանների համատեղ հիշատակվելը: Սարանգները բնակվել են ներկայիս Սիսթանի տարածքում, Իրանի և Աֆղանստանի սահմանում, Խամուն լճի մոտ[1948]: Ի. Խլոպինը սարանգներին տեղադրում է Հյուսիսային Իրանում, Էլբուրսից հարավ[1949]: Ա. Օլմսթեդը տեղադրում է Արեյայի հարավում, Էտիմանդեր գետի հովտում[1950]: Ճիշտ ձևն է Զարանգ կամ Դրանգիանա, որը փորձել են բացատրել՝ որպես «ծովային երկիր»[1951]: Դրանգներ-զարանգները հիշատակվում են հին աղբյուրներում [1952]: Զրանգ շահաստանը հիշատակվում է նաև «Շահրիստանիհա-յի Էրան» պահլավական աշխարհագրական տրակտատում[1953]:

Թամաններ: Բնակվել են Արախոսիայում, ներկայիս Հարավային Աֆղանստանում: Ռ. Ֆրայը թամանների անունն ուղղելով կապում է Իսիդոր Քարակացու հիշատակած Անաուի շրջանի[1954] հետ, որը հա-

[1938] Дьяконов И., История Мидии, с. 339, прим. 1; 340. Սրանք, դատելով Բեհիսթունի արձանագրությունից, գտնվել են նախկին Ասորեստանի մասը կազմող Արբելայի շրջանում (տե՛ս «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», էջ 16-17):

[1939] Marquart J., Untersuchungen zur Geschichte von Eran I, S. 231; Грантовский Э., Сагартии и XIV округ государства Ахеменидов по списку Геродота (III, 93), КСИНА, 1962, вып. 46, с. 246.

[1940] Stephani Byzantii Ethnicorum quae supersunt, ex recensione Aug. Meinekii, I, Berolini, 1849, p. 549.

[1941] Хлопин И., Этнография державы Ахеменидов по Геродоту, с. 187 и след. Վրկանները մտել են XI սատրապության մեջ (տե՛ս Խորհիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ 147-157):

[1942] Olmstead A., Նշվ. աշխ. էջ 115:

[1943] Грантовский Э., Նշվ. աշխ. էջ 272-273; Алиев И., Племена и племенные группы в Атропатене, с. 67-68. Զիկերտացիների նույնացումը հայկական Սղերդին կասկածելի է (տե՛ս Herzfeld E., The Persian Empire, pp. 301-302):

[1944] Грантовский Э., Նշվ. աշխ. էջ 170, 272; Меликов Р., Նշվ. աշխ. էջ 138-139: Ասագարթան մասնագիտական գրականության մեջ ստուգաբանել են «քարայր», «ձիակառք» և այլն (տե՛ս Kent R., Նշվ. աշխ. էջ 173; Дьяконов И., Նշվ. աշխ. էջ 340; Грантовский Э., Նշվ. աշխ. էջ 274; Меликов Р., Նշվ. աշխ. էջ 136):

[1945] Հերոդոտոս, VII, 67:

[1946] Անդ, III, 117

[1947] Տարակարծությունների մասին տե՛ս Д. К. Ш., с. 201-202.

[1948] Дьяконов И., Նշվ. աշխ., էջ 357: Տե՛ս նաև Potts D., The Islands of the XIVth Satrapy, in: New Perspectives in Seleucid History, Archaeology and Numismatics: Studies in honor of Getzel M. Cohen (Beiträge zur Altertumskunde 355), Berlin, 2019, p. 378.

[1949] Хлопин И., Նշվ. աշխ., էջ 289 և հաջ.:

[1950] Olmstead A., Նշվ. աշխ.; էջ 46:

[1951] Фрай Р., Նշվ. աշխ. էջ 78: Տե՛ս նաև Herzfeld E., The Persian Empire, p. 331.

[1952] Страбон, с. 673; Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու պարթևական կայանները, էջ 175; Արիանոս, էջ 114, 123, 247, 252; Ռուփոս, էջ 423:

[1953] Խուրշուդյան Է., «Շահրիստանիհա-յի Էրան», էջ 27:

[1954] Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու պարթևական կայանները, էջ 175:

մապատասխանում է ներկայիս Աֆղանստանի Ֆարահ նահանգին[1955]: Ըստ ուսումնասիրողի՝ թամանների անունը, թերևս, պահպանվել է Ղանդահարից արևելք գտնվող Չաման քաղաքի անվան մեջ[1956]: Է. Հերցֆելդը կարծում է, որ թամանները Արախոսիա աշխարհագրական անվան էթնիկական անվանումն է[1957]:

Ուտիներ և մյուկեր: Ուտիների և մյուկերի տեղադրությունը պատմագիտության մեջ տարբեր ենթադրությունների տեղիք է տվել, այն դեպքում, երբ, կարծես թե, հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրների տեղեկությունները թույլ են տալիս նշված ժողովուրդներին առավել հստակությամբ տեղադրել: Այս առումով, անկասկած, պետք է զգույշ լինել տարժամանակյա աղբյուրների տեղեկություններն առանց լուրջ հիմնավորման արհեստականորեն համադրելուց՝ հեռուն գնացող անհիմն նույնացումներ և տեղադրություններ կատարելով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Հեկատեոս Միլեթացու և Հերոդոտոսի տեղեկություններին, որոնք էլ դարձրել են քննության առարկա՝ չանդրադառնալով ուտիների և մյուկերի վերաբերյալ անտիկ աղբյուրների մնացած տեղեկություններին[1958]:

Այսպես, հույն պատմիչ Հերոդոտոսը գրում է. «Սագարտիները, սարանգները, թամանները, ուտիները, մյուկերը և Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչները, որտեղ արքան բնակեցնում է, այսպես կոչված, տեղահանվածներին, այս բոլորը վճարում էին վեց հարյուր տաղանդ հարկ. սա տասնչորսերորդ նահանգն էր»[1959]: Ինչպես տեսնում ենք, մեջբերված տեղեկությունը XIV սատրապությունը տեղադրում է Հայաստանից և վերջինիս սահմաններից շատ հեռու՝ Պարսից ծոցի և հարավային Աֆղանստանի միջև: Սակայն ստացվել է այնպես, որ որոշ ուսումնասիրողների կարծիքով, Հերոդոտոսի մոտ խոսքը գնում է ուտիների երկու առանձին խմբի մասին, մեկը՝ Իրանի ներքին շրջաններում[1960], մյուսը[1961]՝ Արաքսից հարավ՝ Իրանական

[1955] Ֆրայ Ր., Նշվ. աշխ., էջ 78:
[1956] Նույն տեղում:
[1957] Herzfeld E., The Persian Empire, pp. 332-334.
[1958] Ստորև թվարկենք մի քանի ուսումնասիրություններ. Հակոբյան Ա., Պատմաաշխարհագրական և վիմագրագիտական հետազոտություններ, էջ 401-420; նույնի՝ К хронологии завершения этноконсолидации удинов и лезгин (период ослабления Арабского халифата), Albania Caucasica, вып. I, ответственные редакторы: А. К. Аликберов, М. С. Гаджиев, М., 2015, с. 129-147; նույնի՝ Албания-Алуанк..., с. 74-84; Խորիկյան Հ., Մարաստանի էթնիկական կազմի շուրջ՝ ըստ Ստրաբոնի, էջ 337-341:
[1959] Հերոդոտոս, III, 93:
[1960] Անդ, III, 93.2.

Ադրբեջանում[1962]:

Ի. Դյակոնովի կարծիքով, մերձարաքսյան ուտիները մտել են Այսրկովկասում առաջացած Սկյութական թագավորության կազմի մեջ[1963]: Է. Գրանտովսկին կարծում է, որ եղել է ուտիների մեկ ցեղ՝ Կուրից հարավ և Արաքսի ստորին հոսանքից արևմուտք[1964], այսինքն, ըստ էության, նկատի ունի Մեծ Հայքի Ուտիք աշխարհի տարածքը:

Ուտիները կապվում են հին պարսկական Յաուտիյայի հետ[1965] և, հավանաբար, Կրմանի իսլամական ժամանակաշրջանի ջուտերի նախնիներն են, որոնց չպետք է շփոթել զուտտ-գնչուների հետ[1966]: Ուտիները բնակվում էին Կրմանում: Ռ. Մելիքովը, ընդունելով Յաուտիյայի տեղադրությունը Կրմանում, անհիմն բացառում է[1967] ուտիների նույնացումը Բեհիսթունի արձանագրության Յաուտիյային[1968]: Նշենք, որ հայոց Ուտիք աշխարհի անունը մասնագիտական գրականության մեջ փորձել են կապել «հովիտ» բառի հետ, ինչն ուտիների ցեղանվան հետ ոչ մի ծագումնաբանական առնչություն չունի, և ոչ մի աղբյուր Ուտիքն ուտիների գավառը չի համարում[1969]: Քսերքսեսի հունական արշավանքին ուտիները, մյուկերը, պարիկանիները, ըստ Հերոդոտոսի, զինված էին պակտյուացիների նման, ընդ որում, ուտիները և մյուկերը հանդես են գալիս միասին, իսկ պարիկանիները՝ առանձին[1970]: Հետևաբար ուտիների, ինչպես նաև մյուկերի նույնացումն Ուտիքին և Մուղանին արհեստական է և անհիմն:

Այսպիսով, եթե որոշ ուսումնասիրողներ ուտիներին արհեստականորեն կապում են Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հետ, ապա մյուկերին

[1961] Անդ, VII, 68.
[1962] Marquart J., Untersuchungen..., II, S. 172; Алиев И., История Мидии, с. 103, прим. 5; Меликов Р., Նշվ. աշխ. էջ 117:
[1963] Дьяконов И., История Мидии, с. 280.
[1964] Грантовский Э., Сагартии и XIV округ..., с. 239.
[1965] Laird A. G., The Persian Army and Tribute Lists in Herodotus, p. 310.
[1966] Фрай Р., Наследие Ирана, с. 79. Տե՛ս նաև Herzfeld E., The Persian Empire, p. 300. Ուտիներին Յաուտիյայի և մյուկերին Մակայի հետ կապում է նաև է. Հերցֆելդը (անդ, էջ 196, 300):
[1967] Меликов Р., Նշվ. աշխ.,.էջ 115:
[1968] Kent R., Նշվ. աշխ. էջ 125; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 490; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, SS. 198-199.
[1969] Арутюнян Б., Рауф Меликов, Этническая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.), Գիտության գլոբուս, 2005, h. 5, էջ 144-146: Հմմտ. Կարագյոզյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 185:
[1970] Հերոդոտոս, VII, 68.

էլ նույն սկզբունքով պետք է փնտրեն ուտիների հարևանությամբ, ինչի համար բավական է եղել մյուկերի անվան զուտ արտասանական նմանությունը Մուղանի դաշտի հետ: Մյուկերին ևս որոշ ուսումնասիրողներ բաժանում են երկու խմբի. մեկը՝ Իրանի ներքին շրջաններում, երկրորդը՝ Արաքսի մոտ[1971]: Ռ. Մելիքովը մյուկերի նույնացումը հին պարսկական արձանագրությունների Մակա երկրին բացառում է և տեղադրում է Մուղանում[1972]: Ռ. Ֆրայը մյուկերին համարում է մեկ ցեղ և նույնացնում Մակա-Մեկրանին[1973]: Է. Գրանտովսկին խոսում է մյուկերի մեկ խմբի մասին և տեղադրում Արաքսի ստորին հոսանքի շրջանում, այսինքն՝ Մուղանի տարածքում[1974]: Սակայն Մուղանի և մյուկերի նույնացումը բացառվում է, քանի որ Մուղանի ավելի հին անվանումը՝ Մովական, Մովկան, Մովկանք պահպանել են վրացական աղբյուրները[1975], այսինքն՝ այս դեպքում մյուկերի անվան հետ լեզվական կապը Մուղանի հետ անհիմն է:

Մեր կարծիքով, Մուղան անունն ավելի շուտ կապված է մոգերի, քան թե, ինչպես կարծում է Ի. Ալիևը, մյուկերի հետ[1976]: Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի գավառանունների վրա, որոնց անվանումների կապը զրադաշտական պաշտամունքի և հավատալիքների հետ միանգամայն հնարավոր է: Օրինակ, Որմիզդ-Պերոժ գավառանունը կապված է Ահուրա-Մազդայի հետ և նշանակում է «Որմիզդի հաղթանակի վայր»[1977]: Փայտակարան նահանգի Հրաքոտ Պերոժ գավառը[1978], որը տեղադրվում է Մովականի դաշտում, կապված է իրանական *Frāhat-pērōž > *Frādat-pērōž «հաղթանակի բարեհաջողությանը նպաստող վայր» նշանակության հետ: Սպանդարան Պերոժ գավառն էլ կապված է իրանական էպոսի հերոս Սպանդիադի հետ՝ որպես *Spandaδātān

[1971] Marquart J., Untersuchungen..., II, S. 174; Алиев И., Նշվ. աշխ., էջ 103, ծնթ. 5; 104, ծնթ. 6:
[1972] Меликов Р., Նշվ. աշխ., էջ 122:
[1973] Фрай Р., Նշվ. աշխ., էջ 79: Տե՛ս նաև Bailey H. W., Maka, JRAS, Vol. 114, 1982, pp. 10-13; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, SS. 262-265.
[1974] Грантовский Э., Сагартии и XIV..., с. 236.
[1975] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 143-144, 147, 165-166, 168:
[1976] Алиев И., Племена и племенные группы в Атропатене, с. 63.
[1977] Хуршудян Э., Армения и сасанидский Иран, Алматы, 2003, с. 228, прим. 332, 333.
[1978] Հակոբյան Ա., «Աշխարհացոյց» է դարի Անանունի, էջ 140:

pērōz/ž «Սպանդադատի հաղթանակ, Սպանդադատի և նրա զինակիցների հաղթանակի վայր»[1979]:

Այս տարակարծությունների պատճառը Հեկատեոս Միլեթացու հետևյալ տեղեկությունն է. «...մյուկերից մինչև Արաքս գետը»[1980]: Այս տեղեկությունը սոսկ ցույց է տալիս Ասիայի սահմանը հարավից՝ Կարմիր ծովի ափին բնակվող մյուկերից մինչև հյուսիս՝ Արաքս գետը, որը կարող է լինել Ամու-Դարյան կամ էլ Ինդոսը: Հետևաբար նշված տեղեկության Արաքսի նույնացումը հայկական Երասխին բացառվում է, քանի որ Արաքսը Հերոդոտոսի մոտ համապատասխանում է Սեֆիդռուդին, Դանուբին, Ամու-Դարյային, բայց ոչ Երասխին[1981]:

Ուրեմն, կարող ենք պնդել, որ XIV սատրապության կազմում հիշատակվող ուտիները և մյուկերը ո՛չ աշխարհագրական, ո՛չ էթնիկական առումով բացարձակապես կապված չեն Ուտիքի և Մովական-Մուղանի հետ:

Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչներ: Հերոդոտոսը սրանց, այսպես կոչված աքսորյալների կամ տեղահանվածների հետ, հիշատակում է նաև Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմում՝ Բագայոսի որդի Մարդոնտեսի հրամանատարությամբ[1982]: Հենց սրանց նկատի ունի Արիանոսը, երբ Գավգամելայի ճակատամարտին հիշատակում է Կարմիր ծովի ափից եկած մարդկանց Օրոնտոբատի, Արիոբարզանի և Օրքսինի ղեկավարությամբ[1983]: Հերոդոտոսը նկատի ունի Պարսից ծոցի արևելյան հատվածի և Արաբական ծովի հյուսիսում մինչև Հինգոլ գետն ընկած կղզիները՝ Օարակտան, Կյուրտան և այլն[1984]:

Այսպիսով, XIV սատրապությունը տեղադրվում է Մարական սատրապությունից հարավ-արևելք և Պարսքից արևելք ընկած շրջաններում: Հետևաբար, մյուկերի և ուտիների այդ շրջաններից դուրս տեղորոշումները չեն հաստատվում սկզբնաղբյուրների տեղեկություններով:

[1979] Амбарцумян А., Область Пайтакаран и гора Сабалан. Филологические и этимологические очерки, ԲՀ, 2016, 2, էջ 8:
[1980] Müller C., FHG, Vol. I, pp. 11-12, fr. 170, 183.
[1981] Արաքսի նույնացումների մասին տե՛ս Акопян А., Албания-Алуанк..., с. 76; Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ, էջ 27; նույնի՝ Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, էջ 229:
[1982] Հերոդոտոս, VII, 80:
[1983] Արիանոս, էջ 97:
[1984] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 490. Տե՛ս նաև Potts D., The Islands of the XIVth Satrapy, pp. 375-396.

4.3. XI և XV սատրապությունների տեղադրությունը

Պատմահայր Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի XI սատրապությանը, գրում է.«Կասպերը, պավսիկները, պանտիմաթները և դարեյտները մեկ նահանգ կազմած, վճարում էին երկու հարյուր տաղանդ: Սա էլ տասնմեկերորդ նահանգն էր»[1985]: Պատմահայրը կասպերին հիշատակում է նաև XV սատրապության մեջ. «Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր հիսուն տաղանդ. սա տասնհինգերորդ նահանգն էր»[1986]: Կասպերին հեղինակը հիշատակում է նաև Քսերքսեսի հունական արշավանքին մասնակցող ցեղերի ու ժողովուրդների շարքում. «Կասպերը արշավել էին այծենի հագած և իրենց տեղական եղեգնյա աղեղներով ու ակինակեներով զինված: Նրանց հանդերձանքը այսպիսին էր, իսկ նրանց առաջնորդն էր Արտյուփիոսի եղբայր Արիոմարդոսը»[1987]: Կասպերը և պարեկանիները, ըստ Պատմահոր, տրամադրել էին նաև հեծյալներ, որոնք նույնպես զինված էին իրենց հետևակի նման[1988]: Հերոդոտոսը հաղորդում է, որ արշավանքին մասնակցում էին նաև սակերը. «Բակտրիացիները արշավում էին գլուխներին մեդական գլխարկների նման գլխարկներով և եղեգնյա տեղական աղեղներով ու կարճ նիզակներով: Իսկ սակերը, որոնք սկյութներ են, գլուխներին կրում էին սրածայր բարձր գդակ, հագնում անդրավարտիք և զինված էին իրենց տեղական աղեղներով, դաշույններով, ինչպես նաև սագարիս (կոչված) սակրերով: Սրանց, որոնք սկյութներ էին, կոչում էին ամյուրգյան սակեր: Բակտրիացիներին ու սակերին առաջնորդում էր Հյուստասպեսը, Դարեհի և Ատոսսայի՝ Կյուրոսի դստեր, որդին»[1989]: Բերված վկայություններում, ինչպես տեսնում ենք, կան որոշակի հակասություններ: Եթե սատրապությունների ցուցակում Հերոդոտոսը հիշատակում է կասպերի երկու առանձին խմբերի մասին, ապա Քսերքսեսի հունական արշավանքի ժամանակ կասպերը հիշատակվում են որպես մեկ միասնական խումբ, որը հանդես է գալիս առանց որևէ այլ ցեղի հետ միավորված և մեկ հրամանատարության ներքո: Ըստ որում, ինչպես կտեսնենք ստորև, կասպերի մյուս հատվածը ևս հիշատակվում է այդ արշավանքի ժամանակ, միայն թե այլ անվամբ:

XI սատրապության կասպերին ուսումնասիրողները սովորաբար

[1985] Հերոդոտոս, III, 92:
[1986] Անդ, III, 93:
[1987] Անդ, VII, 67:
[1988] Անդ, VII, 86:
[1989] Անդ, VII, 64:

առանձնացնում են XV սատրապության կասպերից: XI սատրապության կասպերին ուսումնասիրողների մեծ մասը տեղադրում է Կասպից ծովի հարավարևմտյան ափերին՝ Ափշերոնի թերակղզուց դեպի հարավ[1990]: Կասպերին տեղադրում են նաև Կասպից ծովի հարավային առափնյա շրջանում՝ Մարաստանից հյուսիս-արևելք[1991]: Է. Հերցֆելդը կասպերին տեղադրում է Կասպից ծովից հարավ-արևմուտք և հարավ՝ կարծելով, որ այս կասպերի անունից է առաջացել Կասպիական դռներ անվանումը[1992]: Կան, ըստ էության, երկու Կասպիական դրունք՝ մեկը՝ Ռագայի մոտ, մյուսը՝ Թալիշի լեռներում: Նշենք, որ այս տեսակետները հետազոտողները հիմնավորում են սկզբնաղբյուրների տեղեկություններով: Սակայն սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, օրինակ, Հ. Սվազյանին հիմք է տվել XI սատրապությունը տեղադրելու Այսրկովկասում, որը հյուսիսից ամփոփված է եղել Կովկասյան լեռնաշղթայի հարավային փեշերի, արևելքից՝ Կասպից ծովի, հարավից՝ Կուր գետի, իսկ արևմուտքից՝ Ալազան գետի միջև: Այս տարածքում, ըստ հեղինակի, պետք է փնտրել նաև կասպերի հետ հիշատակվող պավսիկներին, պանտիմաթներին և դարեյտներին[1993]: Սակայն, եթե ելնենք միայն այն իրողությունից, որ դարեյտների տեղադրությունը սկզբնաղբյուրներում հստակ է (տե՛ս ստորև), ապա այս տեսակետը ոչ մի ձևով քննություն չի բռնում: Ի. Դյակոնովը կասպերի զգեստը և սպառազինությունը բնորոշ է համարում նաև մ. թ. ա. I հազարամյակի մանացիների և մարերի համար[1994], այսինքն՝ նրանց համարում է այսրկովկասյան ցեղ: Հեղինակը ենթադրում է, որ պավսիկները, պանտիմաթները և դարեյտները եղել են միգուցե կադուսիների (կատիշներ-Խ. Հ.) և մյուս անարիակների առանձին ցեղեր, որոնք բնակվել են հյուսիսում, իբր, ուտիների և աղվանների և արևելքում՝ վրկանների միջև ընկած մերձկասպյան տարածքում[1995]: Ի. Ալիևը բոլոր երեք ցեղերին տեղադրում է հին Կասպիանեի հարևանությամբ[1996]: Երկու սատրապությունների կազմում կասպերի հիշատակվելը նույնիսկ հա-

[1990] Տե՛ս Д. К. Ш., с. 196, прим. 101.
[1991] Անդ:
[1992] Herzfeld E., Նշվ. աշխ. էջ 196:
[1993] Սվազյան Հ., Կասպերի ցեղային միությունն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության շրջանում (մ. թ. ա. VI դ.-մ. թ. ա. IV դ.), ԼՀԳ, 1983, թիվ 6, էջ 89:
[1994] Дьяконов И., История Мидии, с. 103, 364.
[1995] Անդ, էջ 447:
[1996] Алиев И., История Мидии, с. 104, прим. 9; նույնի՝ Очерк истории Атропатены, с. 9, 52.

մարել են սխալ՝ ավելորդ քննության չենթարկելով[1997]:

Ուսումնասիրողների շրջանում կարծիքները բաժանվում են նաև XV սատրապության տեղադրության հարցում: Որոշ հետազոտողներ XV սատրապության կասպերին հատկացնում են Հինդուքուշից հարավ ընկած շրջանները (Քաֆիրիստան-Նուրիստան և Չիտրալ)[1998]: Վ. Ստրուվեն XV սատրապության կասպերին տեղադրում է Արալյան ծովից արևելք (ընդ որում՝ Արալյան ծովը դիտարկելով որպես Կասպից ծովի շարունակություն): Նա կարծում է, որ կասպերը նույնանում են սակերին, որոնք բնակվում են Սոգդից այն կողմ, և Դարեհ Ա-ի օրոք կազմել են ծովից այն կողմ գտնվող սակերի հատուկ շրջանը: Ըստ հեղինակի, Արալյան ծովից արևելք գտնվող այս սակերին հույն հեղինակներն անվանում էին մասսագետներ և դահեր, որոնցից ծովափնյա շրջանում գտնվողները կոչվել են կասպեր[1999]: Պատմագիտության մեջ առաջարկություններ են եղել Κάσπιοι-ն ուղղել Κάσπειροι, Κάσιοι, Πάκτυες[2000]: Հ. Շտեյնը հրաժարվում է լուծել կասպերի հարաբերության հարցը Κάσπειροι-ին կամ Κασπεραῖοι-ին կամ էլ Կասպապայուրոս-Քաբուլին և սրբագրում է Πάκτυες[2001]: Կասպերի անունը կապել են նաև Քաբուլից հյուսիս տեղադրվող Կապիսա քաղաքի անվան հետ[2002], ինչը չենք կիսում: Կասպերին նույնացրել են նաև Կասպատյուրոսի բնակիչների հետ[2003], ինչը որոշակիորեն մոտ է մեր տեսակետին:

Սակայն այս առաջարկություններն ավելի շուտ նոր հարցեր են ծնում, քան պատասխան տալիս քննարկվող հարցերին: Ուսումնասիրողների շրջանում փորձեր են եղել նաև XV սատրապությունը տեղադրել Այսրկովկասում[2004]: Սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին ուսումնասիրությունները, Այսրկովկասում և՛ XI, և՛ XV սատրապությունների տեղադրության ամեն մի փորձ մատնված է անհաջողության: Անդրադառնալով կասպերի խնդրին՝ Բ. Հարությունյանը ցույց է տվել, որ Կովկասյան լեռների և Կուր գետի միջև ընկած տարածքում գտնվել

[1997] Laird A. G., The Persian Army and Tribute Lists in Herodotus, pp. 307, 310.
[1998] Տե՛ս Д. К. Ш., с. 196, прим. 101.
[1999] Струве В., Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, с. 55, 110.
[2000] Տե՛ս Д. К. Ш., с. 395, прим. 764.
[2001] Անդ, էջ 196, ծնթ. 101; էջ 395, ծնթ. 764:
[2002] Vogelsang W., Medes, Scythians and Persians, p. 215.
[2003] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 491.
[2004] Тер-Мартиросов Ф., Границы ахеменидских владений в Закавказье, с. 140; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 103:

է XVIII սատրապությունը[2005]: Հետևաբար, պետք է ճիշտ լինեն այն ուսումնասիրողները, որոնք առաջարկում են XI և XV սատրապությունները տեղադրել Միջին Ասիայում:

Ու. Հաուն և Ջ. Ուելսը ենթադրել են, որ XV սատրապության կասպերը կարող են լինել Քաշմիրի բնակիչները, թեև նման տեղադրությունը համարել են կասկածելի: Միաժամանակ, նրանք ենթադրում էին, որ XI սատրապության կասպերը փոխարինում են Վրկանին, որի բացակայությունը սատրապությունների ցուցակում զարմանք է հարուցում[2006]: Համաձայնվելով այս ենթադրության հետ՝ Բ. Հարությունյանը փորձում է ապացուցել, որ XI սատրապությունը գտնվել է Վրկանի և շրջակա տարածքներում[2007]: Ա. Հակոբյանի կարծիքով ևս, XI սատրապությունը գտնվել է Վրկանում, իսկ XV սատրապության սակերին նույնացնելով Հերոդոտոսի «ամյուրգյան սկյութներին», որոնք Բեհիսթունի արձանագրության «հաումավարգյան սակերն» են, տեղադրում է վրկաններից հյուսիս՝ արևմտյան Թուրքմենիայի ներքին շրջաններում: Նրա կարծիքով, երկու սատրապությունների կասպերը պետք է հարևաններ լինեին, քանի որ Քսերքսեսի բանակում կռվել են միևնույն ջոկատում[2008]: Սակայն հեղինակի ենթադրությունը վերապահվում է հետևյալ կարևոր իրողությամբ: Հերոդոտոսը հաղորդում է, որ «յուրաքանչյուր ազգի նա (իմա՛ Դարեհ Ա-ն-Խ. Հ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը»[2009]: Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ պարսից արքունիքի նպատակը եղել է ոչ թե որևէ էթնոսի բաժանումը տարբեր սատրապությունների միջև, այլ մի քանիսին մեկ վարչական շրջանի մեջ միավորելը: Ի. Դյակոնովը XV սատրապության կասպերին տեղադրում է Կասպից ծովից արևելք՝ մերձկասպյան սակերի հարևանությամբ, իսկ նույն սատրապության սակերը Բեհիսթունի արձանագրության Sakā երկրի ժողովուրդն է: Ինչևէ, ուսումնասիրողը XV սատրապության հարցը բաց է համարում[2010], և այդ բացը

[2005] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 45-114:
[2006] How W. W., Wells J., A Commentary on Herodotus, Oxford, 1928, I-II (տե՛ս Д. К. Ш., с. 196, прим. 101).
[2007] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 87-98:
[2008] Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, էջ 91; նույնի՝ Албания-Алуанк..., с. 45-46.
[2009] Հերոդոտոս, III, 89:
[2010] Дьяконов И., История Мидии, с. 360.

կփորձենք լրացնել մեր քննության արդյունքներով: XI և XV սատրապությունների տեղադրության վերաբերյալ քննության առնենք մի քանի խնդիրներ: XI սատրապության ցեղերից առավել հստակ տեղադրվում են դարեյտները, որոնց Պտղոմեոսը տեղադրում է Կասպից ծովից հարավ՝ ներկայիս Ռեյ (պատմական Ռագա) քաղաքի մերձակայքում[2011]: Պավսիկները, մեր կարծիքով, Պոմպոնիոս Մելասի պեստիկներն են (Pestici), որոնք հիշատակվում են ամարդների և դերբիկների միջև: Մեկ այլ կապակցությամբ պատմիչը, խոսելով Յաքսարտի և Օքսոսի մասին, գրում է, որ երկրորդը, արևելքից արևմուտք հոսելով առաջին անգամ շրջվում է դահերին մոտ և հոսանքն ուղղելով դեպի հյուսիս՝ գետաբերանը բացում է ամարդների և պեսիկների (Paesicas) միջև[2012]: Գրեթե կասկած չի մնում, որ Մելասի երկրորդ հիշատակության պեսիկները նույն պեստիկներն են: Ամարդները կամ մարդերը զբաղեցրել են ներկայիս Ղըզըլ-Ուզեն գետի (պատմական Ամարդոսի) միջին և ստորին հոսանքի շրջանները մինչև գետաբերան, իսկ դերբիկները բնակվել են Կասպից ծովի մերձափնյա շրջանում՝ վրկաններից հյուսիս: Ելնելով XI սատրապության ցեղերի թվարկման հաջորդականությունից՝ պավսիկները պետք է գտնվեին կասպերից հարավ և հարավ-արևմուտք: Օքսոսը Մելասի երկրորդ հիշատակության մեջ նույնանում է ոչ թե այսօրվա Ամու-Դարյային, այլ Ատրեքին կամ ավելի ճիշտ՝ Գորգանին[2013]: Պլինիոս Ավագը պեստիկներին հիշատակում է որպես սկյութական ցեղ[2014]: Պավսիկների հետ նույնանում են նաև Պտղոմեոսի պասիկները[2015]: Ելնելով ասվածից՝ կարելի է կարծել, որ պավսիկները գտնվել են Կասպից ծովի հարավային ափերին, համեմատաբար դեպի, դարեյտներից արևելք, և եղել են սկյութական ցեղ:

Վերևում նշեցինք, որ ըստ պատմագիտական գրականության մեջ եղած կարծիքի՝ XI սատրապության կասպերը փոխարինում են Վրկանին: Որոնք են այն կովանները, որոնք կարող են տվյալ տեսակետի հիմք լինել: Չնայած վրկանները սատրապությունների հերոդոտյան

[2011] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 2, 6.
[2012] ИДПСК, ВДИ, 1949, 1, с. 284-285.
[2013] Օքսոսի այլ նույնացումների մասին տե՛ս Tarn W. W., Patrocles and the Oxo-Caspian Trade Route, pp. 10-29, սակայն այդ նույնացումներին համաձայն չենք:
[2014] ИДПСК, ВДИ, 1949, 2, с. 306.
[2015] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 12, 4. Ամեն դեպքում նշված ցեղերի մեր նույնացումն առավել հավանական է, քան թե ընդհանրապես բացառել որևէ նույնացում (տե՛ս Laird A. G., The Persian Army and Tribute Lists in Herodotus, p. 319):

ցուցակում չեն հիշատակվում, Պատմահայրը տեղյակ է նրանց գոյությանը: Ըստ Հերոդոտոսի՝ «Ասիայում կա մի դաշտավայր, բոլոր կողմերից լեռներով շրջապատված, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է քորասմներին և գտնվում է նույն քորասմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների սահմաններում: Պարսից իշխանության հաստատումից հետո այն արդեն պատկանում է (պարսից) արքային»[2016]: Պատմահոր մյուս հաղորդմամբ՝ «Հյուրկանները ևս զինված էին պարսիկների նման, նրանց առաջնորդն էր Մեգապանոսը, որը հետագայում դարձավ Բաբելոնի կառավարիչ»[2017]: Հերոդոտոսի առաջին տեղեկությունից երևում է, որ քորասմների և պարթևների միջև հիշատակվող հյուրկանները գտնվել են Կասպից ծովի հարավարևելյան շրջանում, իսկ երկրորդ հիշատակության մեջ միևնույն սպառազինությունը ցույց է տալիս հյուրկանների և պարսիկների ընդհանուր իրանական ծագումը և, բացի այդ, կարևոր է նկատի ունենալ, որ հյուրկանները Քսերքսեսի բանակում հիշատակված են պարսիկներից, մեդացիներից, կիսսիացիներից հետո, որը ցույց է տալիս Աքեմենյան տերությունում նրանց տեղը և դերը: Հերոդոտոսի տեղեկությունների պարզաբանման կարևոր սկզբնաղբյուր է Բեհիսթունի արձանագրությունը, որտեղ Վրկանը չի հիշատակվում հպատակ երկրների թվում, սակայն նշվում է նույն արձանագրության մեկ այլ հատվածում. «Պարթևն ու Վարկանան իմ (իմա՛ Դարեհ Ա- Խ.Հ.) դեմ ապստամբեցին և հարեցին Ֆրավարտիշին»[2018]: Ինչպես երևում է, Պարթևստանն ու Վրկանը կազմել են մեկ երկիր, որի կառավարիչը մինչ ապստամբությունը եղել է Վշտասպը՝ Դարեհ Ա-ի հայրը: Ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհը հայտնում է, որ այդ է իր կատարածը Պարթևստանում: Ուստի պետք է կարծել, որ Վրկանը մտել է Պարթևստանի մեջ: Համեմատության համար նշենք, որ Մարգիանա երկրում ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհը կրկին հայտնում է, որ այդ է իր կատարածը Բակտրիայում[2019]: Հետևաբար, Մարգիանան մտել է Բակտրիայի մեջ, և պատահական չէ, որ նույնպես չի հիշատակվում Բեհիսթունի արձանագրության հպատակ երկրների շարքում: Ֆրավարտիշի ապստամբությունը ճնշելուց հետո Վրկանն առանձնացվում է Պարթևստանից,

[2016] Հերոդոտոս, III, 117:
[2017] Անդ, VII, 62:
[2018] Kent R., Նշվ. աշխ., էջ 124, 127; Lecoq, էջ 200:
[2019] Kent R., Նշվ. աշխ., էջ 127; Lecoq, էջ 201-202:

իսկ վերջինս մտնում է XVI սատրապության մեջ: Սակայն Դարեհ Գ-ի օրոք Վրկանը և Պարթևստանը կրկին հայտնվում են մեկ սատրապության մեջ[2020]:

Կասպ-վրկան նույնությանը Բ. Հարությունյանն անդրադառնում է հետևյալ տեսանկյունից: Ըստ նրա՝ «Աշխարհացոյց»-ի մեջ հիշատակվող վրացական Վարջանը (Իբերիան կամ Վիրքը-Խ. Հ.) պետք է սերտ աղերս ունենա Վրկան կամ Վարկան. երկրանվան հետ, և հետաքրքիր է նաև, որ Վիրքի Վարջան անվանը ուղեկցում են Կասպի քաղաքի և Կովկասյան լեռներին տրված Կասպիական լեռներ անվանումները: Շարունակելով միտքը՝ հեղինակը եզրակացնում է, որ Վարկանը կամ Վարգանը պետք է ծագեր «գայլ» բառից և նշանակել է «Գայլի երկիր», ուրեմն էթնոնիմը առաջացել է ցեղային տոտեմ հանդիսացած «գայլ» անունից: Բ. Հարությունյանը ենթադրում է, որ կասպ-վրկանների մի մասը, դատելով կցկտուր անուղղակի նյութից, հաստատվում է Արևելյան Վրաստանի տարածքում՝ նրան փոխանցելով Վրկան-Վարկան-Վարջան, իսկ նրա քաղաքներից մեկին՝ Կասպի անունը, և կարելի է ենթադրել, որ այդ տեղաշարժը կատարվել է, թերևս, Դարեհ Ա-ի վարչական վերակառուցումներից և Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո՝ հիմք ունենալով կասպերի՝ Հյուսիսային Կովկասում գտնվելը[2021]: Ասվածը ցույց է տալիս, որ կասպ-վրկան նույնության հնարավորությունն ինչպես տրամաբանական էր Վրկանից աշխարհի բնակչության համար, այնպես էլ իրական է Վիրքի առնչությամբ: Սկզբնաղբյուրներում կան որոշ տեղեկություններ, որոնք արձանագրում են վրկանների գոյությունն Այսրկովկասում: Հովսեպոս Փլավիոսը գրում է. «Իսկ թե ալանաց ազգը, որը բնակեցրել է Տանայիս գետը և Մեոտիս լճի շրջակայքը, սկյութացիներ են, մենք հայտնել ենք դեռ նախապես մեկ այլ տեղ: Ահա նրանք այդ ժամանակները նպատակ ունենալով արշավել Մեդիա և նրանից ավելի այն կողմ ընկած այլ վայրեր ավարառության համար, համաձայնու-

[2020] Արիանոս, էջ 116, 193:

[2021] Հարությունյան Բ., նշվ. հոդվ., էջ 96-97: Տե՛ս նաև հեղինակի գրախոսությունը Арутюнян Б., Рауф Меликов, Этническая картина Азербайджана..., էջ 143-147: Պևտինգերյան քարտեզի Caspiae կայանը (ներկայիս Խոսպիան) Ախալքալաք քաղաքից հարավ (տե՛ս Манандян Я., Круговой путь Помпея в Закавказье, с. 226), մեր կարծիքով, կապված է կասպերի հետ: Հ. Մանանդյանը Դիոն Կասիոսի Ասպիսը ուղղում է Κασπίς և նույնացնում Caspiae կայանի հետ (անդ, էջ 235): Հետաքրքիր է, որ Է. Հերցֆելդը Կասպ անունն ուզում է տեսնել Կազբեկ լեռնագագաթի անվան մեջ (Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 197):

թյան են գալիս հյուրկանների թագավորի հետ, որը տերն էր այն անցուղու, որ Ալեքսանդր (Մակեդոնացի) թագավորը փակել էր երկաթյա ամուր դարպասներով: Ու քանի որ այդ մուտքը նրանց տրամադրեց, ապա նրանք հոծ բազմությամբ հարձակվեցին մեդացիների վրա...»[2022]: Դեռ Հ. Մանանդյանը կարծում էր, որ հյուրկանների թագավորը վրաց թագավորն է[2023]: Մեր կարծիքով, դա չի բացառվում, սակայն Այսրկովկասի արևելքում կասպ-վրկանների առկայությունը կարող է վերաբերել հենց նրանց, եթե անցուղին նույնացնենք Դերբենդի լեռնանցքի հետ, եթե, իհարկե, խոսքը չի վերաբերում Ալանաց դռներին: Առավել հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Դիոնիսիոսը. «Փասիսը,-գրում է նա,- սկիզբ է առնում Արմենական լեռից: Նրանից հյուսիս-արևելք՝ Կասպից և Եվքսինյան ծովերի միջև, ընկած է պարանոց: Նրա վրա ապրում է իբերներ արևելյան ժողովուրդը, որոնք մի ժամանակ արևելք էին եկել Պիրենեյներից և դաժան պատերազմի մեջ մտել հյուրկանների հետ...»[2024]: Սույն վկայությունը վերաշարադրում է նաև Եվստաթիոսը, ըստ որի՝ Արմենական լեռը, որտեղից սկիզբ է առնում Փասիսը, գտնվում է Հյուրկանիայի սկզբին («այնտեղ որտեղ սկսվում է Հյուրկանիան»), և հյուրկաններին համարում է արևելյան իբերների բնական թշնամիները[2025]: Արմենական լեռը գուցե համապատասխանում է Մոսքական լեռներին, իսկ Փասիսը ներկայիս Ռիոն գետի վտակ Ղվիրիլան է, որից հյուսիս-արևելք Հյուրկանիան է՝ Վիրքը: Բերված տեղեկություններում, ինչ խոսք, իբերները չեն կարող նույնանալ Պիրենեյների իբերների հետ, չնայած որ շատ հեղինակներ նրանց նույնացնում են; և այդ պատճառով էլ, ըստ էության, հյուրկանները կարծես թե բնիկներ են, երբ դատելով աղբյուրների վարկածից՝ նրանք էին գաղթել Այսրկովկաս: Ըստ Պոմպոնիոս Մելասի՝ Կյուրոս (Կուր-Խ. Հ.) և Կամբյուսես (Իորի-Խ. Հ.) գետերն առանձին-առանձին հոսում են իբերների և հյուրկանների հողերով, այնուհետև ծովից ոչ հեռու թափվում միևնույն գետը և մի հունով հասնում մինչև Վրկանից ծովածոց[2026]: Վրկանների տակ կարելի է հասկանալ նաև աղվաններին, որպես աղվանական ցեղերից մեկը, եթե նկատի ունենանք գետի

[2022] Հովսեպոս Փլավիոս, Հրեական պատերազմի մասին, էջ 52:

[2023] Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Բ, Եր., 1978, էջ 14: Տե՛ս նաև Հակոբյան Ա., Գարգարացիները ըստ անտիկ և հայկական սկզբնաղբյուրների, էջ 125:

[2024] ИДПСК, ВДИ, 1948, 1, с. 240.

[2025] Անդ, էջ 253:

[2026] Անդ, ВДИ, 1949, 1, с. 285:

միջին և ստորին հոսանքը, սակայն նկատի ունենալով, որ Իորի գետի վերին հոսանքը գտնվել է Վիրքում, ապա վրկանները կտեղադրվեն Կրկին Վիրքում: Ինչպես տեսնում ենք, որոշ հեղինակներ վրկաններին դեռևս տարբերել են իբերներից, երբ հետագայում երկու էթնոսները որոշակիորեն նույնացվում են: Հետաքրքիր է, որ սկզբնաղբյուրներում վրկանները հանդես են գալիս բորկաններ[2027], բարկաններ[2028] անվանաձևով, թեև տվյալ վկայություններում ներկայանում են որպես տարբեր ցեղեր: Թերևս, այս հանգամանքը՝ միևնույն ժողովրդին երկու անուններով կոչելը, վկայում է վրկանների տեղաշարժի մասին, որի արտահայտությունն է սկզբնաղբյուրներում նույն ժողովրդին առանձին ցեղեր համարելը:

Կատարված քննությունը նոր լույս է սփռում Հերոդոտոսի տեղեկությունների վրա: Փաստորեն, այն, որ Քսերքսեսի հունական արշավանքի ժամանակ վրկանները հիշատակվում են, ցույց է տալիս, որ XI սատրապության ցեղերը, բացի կասպ-վրկան կոնկրետ նույնացումից, հավաքական ամբողջությամբ ներկայացված են վրկանների անվան տակ: Միաժամանակ, կարելի է պնդել, որ XI սատրապության մնացած ցեղերը՝ պավսիկներ, պանտիմաթներ, դարեյտներ, նույնպես ունեցել են իրանական ծագում և հանդես եկել մեկ անվան ներքո: Այսպիսով, կարող ենք պնդել, որ Քսերքսեսի բանակում կասպերի երկու խմբերը չեն միավորվել մեկ հրամանատարության ներքո, քանի որ դրանց մի հատվածը հիշատակված է բուն էթնանվամբ, իսկ մյուսը՝ ցեղային տոտեմ հանդիսացած «գայլ» անվամբ, որն աստիճանաբար դառնում է էթնոնիմ: XI սատրապության ցեղերը, ունենալով ընդհանուր ծագում, Քսերքսեսի բանակում հանդես են գալիս վրկաններ-«գայլեր» հավաքական անվան տակ, երբ սատրապությունների ցուցակում հիշատակվում են առանձին-առանձին: XI սատրապության մեջ կասպերին առաջինը նշելը ցույց է տալիս, որ նրանք «վրկաններ»-ի մեջ եղել են մեծաթիվը, որի շուրջ միավորվել են մյուս «վրկանները» (պավսիկներ, պանտիմաթներ, դարեյտներ), հետևաբար, թերևս

[2027] Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17:

[2028] Ռուփոս, էջ 282: Բորկաններ-բարկաններ և հյուրկաններ հարցի մասին տե՛ս Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов..., с. 44-45. Պատմագիտության մեջ փորձել են՝ նկատի ունենալով Վրկանի բացակայությունը Հերոդոտոսի սատրապությունների ցուցակում, Հերոդոտոսի պարիկանին նույնացնել հյուրկանի հետ (տե՛ս Olmstead A., Նշվ. աշխ., էջ 291), որը Ի. Պյանկովը համարում է ավելորդ, քանի որ Վրկանը գտնվել է Պարթևստանի կազմում (անդ, էջ 45, ծնթ. 79):

կարելի է մտածել, որ մինչև սատրապության ձևավորումը նշված ցեղերը կազմել են ցեղամիություն: Կասպ-վրկան նույնության պարզաբանումները միաժամանակ հնարավորություն են ընձեռում ճշտելու XV սատրապության տեղադրությունը:

Դատելով և՛ Հերոդոտոսի տվյալներից, և՛ պարսկական սեպագիր արձանագրությունների նկարագրության տրամաբանությունից՝ XV սատրապությունը, անկասկած, նույնպես գտնվել է Միջին Ասիայում: Բեհիսթունի արձանագրությունում Դարեհ Ա-ն թվարկում է իրեն ենթակա երկրները, որոնց թվում նաև, ըստ աշխարհագրական հերթականության, գալիս են Խորասմը, Բակտրիան, Սոգդիանան, Գանդարան, Սական (Սկյութիա-Խ. Հ.), Սատագուշը, Արաքոսիան, Մական[2029]: Խորասմները, որոնք, համաձայն Հերոդոտոսի, այլ ժողովուրդների հետ XVI սատրապության հիմնական էթնոսներից մեկն էին, տեղադրվում են Խորեզմի շրջանում: Բակտրիան (XII սատրապության մեջ) ընդգրկել է ժամանակակից Հարավային Տաջիկստանը և Հյուսիսային Աֆղանստանը: Սոգդիանան (XVI սատրապությունում) Մարականդա կենտրոնով գտնվել է ժամանակակից Սամարղանդի և Բուխարայի շրջաններում: Ինչպես տեսնում ենք, Սոգդիանան ընկել է խորասմների և Բակտրիայի միջև, և պետք է, համաձայն աշխարհագրական հերթականության, հիշատակվեր Խորասմից հետո՝ Բակտրիայից առաջ: Գանդարան (VII սատրապությունում) տարածվել է Քաբուլի և Տաքսիլայի միջև ընկած շրջանում: Սատագուշը (VII սատրապությունում սատտագյուտներն են) գտնվել է գանդարիներից հարավ: Արաքոսիան տեղորոշվում է ժամանակակից Ղանդահարի շրջանում: Վարչական առումով Արաքոսիան, որը չկա Հերոդոտոսի սատրապությունների ցուցակում, կարող էր մտնել XVII սատրապության մեջ, որտեղ, ըստ Հերոդոտոսի, մտնում էին պարիկանիները և Ասիայի եթովպացիները: Սական, որն արձանագրության մեջ հիշատակվում է Գանդարայի և Սատագուշի միջև, պետք է գտնվեր Գանդարայից հյուսիս և Բակտրիայից արևելք, քանի որ միայն այս դեպքում կունենանք այն ազատ տարածությունը, որտեղ կարող էր տեղադրվել Սակա երկիրը և Հերոդոտոսի նշած XV սատրապությունը: Տվյալ տարածքը համապատասխանում է ժամանակակից Հյուսիսային Տաջիկստանին և Ամու-Դարյայի վերին հոսանքի շրջանին՝ հարավում ձգվելով մինչև Հինդուքուշի լեռնաշղթան: Ուշագրավ է, որ Հերոդոտոսը ևս և՛ սատրապությունների ցուցակում, և՛ հույն-պարսկական պատերազմներին

[2029] Lecoq, էջ 188; Kent R., Նշվ. աշխ., էջ 117:

մասնակցող ցեղերի շարքում հիշատակում է միայն, այսպես ասած, սակերի մի հատվածին, որոնք երկու վկայությունների (III, 93, VII, 64) դեպքում էլ ակնհայտորեն կապված են Միջին Ասիայի հետ: Սա նշանակում է, որ և՛ Բեհիսթունի սակերը (Sakā երկրի բնակիչները), և՛ Հերոդոտոսի սակերը բացարձակապես նույնանում են: Այդ նույնացումը երկու տարբեր աղբյուրներում արտացոլված է նաև հետևյալ կերպ: Դարեհ Ա-ի Պերսեպոլսի արձանագրություններից մեկում Գանդարայից, Հի(ն)դուշից հետո հիշատակվում են հաումավարգյան և «սրածայր գդակավոր» սակերը[2030]: Գանդարայի տեղադրությունը վերևում արդեն նկարագրել ենք: Հի(ն)դուշը (կամ Սինդ) հնդիկների՝ Ինդոսի արևմտյան ափի բնակիչների երկիրն է: Հաումավարգյան և tigraxaudā սակերը փաստորեն իրենց աշխարհագրությամբ համապատասխանում են Բեհիսթունի արձանագրության Sakā երկրին: Այս իրողությունը պարզ արտացոլվել է նաև Հերոդոտոսի երկում: Պատմահայրը միևնույն վկայության մեջ թեև ոչ ուղղակի հիշատակում է, ընդ որում՝ բակտրիացիներից հետո, երկու խումբ սակերի մասին՝ «սրածայր բարձր գդակավոր» և ամյուրգյան[2031]: Չնայած Հերոդոտոսը տվյալ տեղեկության մեջ խոսում է միայն սակ-սկյութների մասին և այն էլ ընդհանրական ձևով, կա որոշակի տարբերակում (ամյուրգյան սակեր), որոնց հետ արտացոլված են նաև հաումավարգյան սակերը, որոնք իրականում Հերոդոտոսի հիշատակած ամյուրգյան սկյութներն են, և tigraxaudā սակերը, որոնք Հերոդոտոսի այն սակ-սկյութներն են, որոնք նկարագրության մեջ բնութագրվում են նաև իրենց «սրածայր բարձր գդակներով»:

Սակերի մեր առաջարկած տեղադրության օգտին կարող է վկայել Դարեհ Ա-ի հետևյալ արձանագրությունը. «Դարեհ թագավորն ասում է. «Սա է թագավորությունը, որին ես տիրում եմ՝ Սկյութիայից, որը Սոգդիանայի այն կողմում է, մինչև Քուշ (իմա՛ Եթովպիա-Խ. Հ.), Սինդից (իմա՛ Հնդկաստանից-Խ. Հ.) մինչև Սարդես (իմա՛ Լյուդիա-Խ. Հ.), որը շնորհել է ինձ Ահուրամազդան, աստվածներից մեծագույնը: Թող պահպանի Ահուրամազդան ինձ և իմ արքայական տունը»[2032]: Ինչպես տեսնում ենք, Սոգդիանայից այն կողմ (արևելք-Խ. Հ.) գտնվող Սկյութիա-Սակա երկիրը, իրոք, համապատասխանում է XV սատրապության սակերին: Այս առումով հետաքրքիր է մատնանշել, որ Արիանոսը և Ռուփոսը նույնպես ունեն բազմաթիվ տեղեկություններ սկյութների մասին, որոնք հիշատակվում են և՛ բակտրիացիների հետ միասին, և՛ նրանց հարևանությամբ (Տանաիս-Յաքսարտայի, ներկայիս Սիր-Դարյայի աջ ափին), և՛ սոգդերի հարևանությամբ[2033]: Սկյութների մասին նրանց տեղեկությունները թեև ունեն ընդհանուր բնույթ և լայն աշխարհագրություն, ակնհայտ է, որ որոշ վկայություններում սկյութները գտնվել են XV սատրապության մեր տեղադրության սահմաններում: Մեր կարծիքով, Ալեքսանդրիա Էսքաղան (Հեռավոր) հիմնադրելիս Ալեքսանդրը պետք է գործ ունենար Սակա երկրի բնակիչների հետ:

Ինչ վերաբերում է կասպերին, որոնց մի հատվածը հիշատակվում է XV սատրապության մեջ, ապա նրանք, ելնելով Հերոդոտոսի տեղեկություններից, ևս պետք է տեղադրվեն Պարսից տերության ծայր հյուսիս-արևելքում՝ սակերի, գանդարիների և բակտրիացիների հարևանությամբ: Ինչպես երևում է նրանց սպառազինությունից, կասպերը որոշակիորեն կարող են համեմատվել բակտրիացիների (եղեգնյա տեղական աղեղներ), սակերի (տեղական աղեղներ) հետ, իսկ կասպերի ակինակներով զինված լինելը վկայում է նրանց սկյութական ծագման մասին: Պատահական չէ, որ Հերոդոտոսը նրանց հիշատակում է գանդարիներից և դադիկներից հետո, իսկ կասպերից հետո նշում է սարանգներին: Վերջիններս գտնվել են XIV սատրապության մեջ, որը տարածվում էր VII սատրապությունից հարավ-արևմուտք: Ուրեմն, կասպերին կարող ենք տեղորոշել գանդարիների հարևանությամբ, նրանցից հյուսիս, Հինդուքուշից հարավ, Աֆղանստանի, Հնդկաստանի և Պակիստանի սահմաններին: Կասպերը, ամենայն հավանականությամբ, XV սատրապությունում զգալի թիվ են կազմել, որպեսզի, լինելով սկյութական ցեղ, առանձին հիշատակվեին մյուս սակերի կողքին, կամ էլ իրենց հիշատակությամբ «պարտական» են XI սատրապության կասպերին: Ելնելով քննությունից՝ կարելի է ընդունել, որ երկու խումբ կասպերն էլ ունեցել են ընդհանուր սկյութական ծագում, ինչը պարզ երևում է հին աղբյուրներից[2034]:

Այսպիսով, ասվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ կասպերը և վրկանները, համաձայն սկզբնաղբյուրներում պահպանված տեղե-

[2030] Kent R., Նշվ. աշխ., էջ 137: Հմմտ. նաև այլ արձանագրությունները:
[2031] Հերոդոտոս, VII, 64:
[2032] Kent R., Նշվ. աշխ., էջ 137:

[2033] Արիանոս, էջ 97, 101, 132, 150-152: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 330, 470, 476, 543:
[2034] Այսպիսի մոտեցման դեպքում, բնականաբար, լիովին անընդունելի է դառնում կասպերի նույնացումը կասիտներին տեսակետը (տե՛ս Дьяконов И. М., Языки древней Передней Азии, с. 87):

կությունների, նույնանում են. առաջինը եղել է ցեղի ինքնանունը, իսկ երկրորդը՝ նույն ցեղի տոտեմը, որն աստիճանաբար դառնում է էթնոնիմ և առանձին դեպքերում կրում հավաքական բնույթ: Կասպ-վրկանները ցեղային տեղաշարժման արդյունքում հայտնվում են նաև Այսրկովկասում, ինչը ցույց են տալիս աղբյուրները: Հետագայում վրկանները, հաստատվելով Արևելյան Վրաստանի տարածքում, նրան են փոխանցում Վրկան-Վարկան-Վարջան անունը: Ուրեմն, XI և XV սատրապությունները գտնվել են Միջին Ասիայում՝ աշխարհագրորեն տարբեր վայրերում, և Այսրկովկասում նրանց տեղադրության յուրաքանչյուր փորձ[2035] չի համապատասխանում պատմական իրականությանը:

Վերջում անդրադառնանք նաև մեկ այլ հարցի: Ստորև կքննենք կասպերի հիշատակության հետ կապված մի խնդիր, որը վաղուց է հայտնվել ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, սակայն առ այսօր տարակարծությունները շարունակվում են: Խոսքը վերաբերում է Աքեմենյան դարաշրջանով թվագրվող Ելեփանտինե կղզուց հայտնաբերված արամեական փաստաթղթերին, որոնք հիմնականում վերաբերում են մ. թ. ա. V դարի երկրորդ կեսին: Այդ փաստաթղթերը հիմնականում ունեն առևտրական, ամուսնական, նվիրագրական բովանդակություն և հետազոտողների համար լուրջ հետաքրքրություն են ներկայացնում: Եգիպտական սատրապության ծայր հարավում գտնվող Ելեփանտինեի ռազմական գաղութն էթնիկական առումով մի խառնարան էր, որտեղ ծառայում էին Աքեմենյան տերության ամենատարբեր ժողովուրդներն ու ցեղերը, որոնց շարքում էլ, ըստ ուսումնասիրողների, հիշատակվել են նաև կասպերը[2036]: Խնդիրն այն է, որ արամեական փաստաթղթերի վաղ թարգմանություններում «կասպ» (արամեասեմական כסף արմատից «արծաթ» կամ «դրամ» նշանակությամբ[2037]) էթնանվան փոխարեն մասնագետները տեսել են «արծաթագործ» բառը: Հետևաբար, ստորև տեսնենք, թե արամեական տեքստերում ի՞նչ համատեքստում են հիշատակվում կասպերը կամ «արծաթագործները»:

Արամեական պապիրուսներում կասպերը հիշատակվում են հիմնա-

[2035] Gagoshidze I., South Caucasus and Achaemenids, p. 229.
[2036] "The Elephantine Papyri in English: Three Millennia of Cross-Cultural Continuity and Change", by B. Porten, Idocumenta et Monumenta Orientis Antiqui (DMOA), Vol. XXII, Leiden-New York-Koln, 1996, pp. 18, 74.
[2037] Levene D., Jewish Aramaic Curse Texts from Late-Antique Mesopotamia: "May These Curses Go Out and Flee" (Magical and Religious Literature of Late Antiquity, Vol. 2), Leiden-Boston, 2013, p. 75.

կանում որպես վկաներ: Օրինակ, որպես վկաներ՝ մ. թ. ա. 471 թվականի սեպտեմբերի 12-ով թվագրվող փաստաթղթում հիշատակվում են Աթարլիի [*'trly*] որդի «կասպ» Սատիբարզանան և Դարգայի որդի «կասպ» Ինգուլիան [Նաբուլի, *Ynbwly*]: Մ. թ. ա. 447 թվականով թվագրվող թիվ 13 փաստաթղթում հիշատակվում են նույն անձանց որդիները. Աթարլիի որդի «կասպ» *Vyzb[l(w)*]-ն ու Դարգիի որդի «տեղացի կասպ» Բարբարին: Եթե ավելի ուշադիր լինենք թարգմանության, ապա «տեղացի կասպը» կարող ենք ավելի հավանական թարգմանել «վայրի, տեղի... (՞) կասպ», սակայն այդ տեղանունը չի պահպանվել: Մ. թ. ա. 437 թվականի սեպտեմբերի 14-ով թվագրվող փաստաթղթում կրկին խոսք է գնում կասպերի՝ Աթարլիի որդի կասպ Խայխեի (*Ḫyh/Ḫyrw*) և կասպ *Vyzbl*-ի տան մասին: Մ. թ. ա. 434 թվականի հոկտեմբերի 30-ի և 402 թվականի դեկտեմբերի 13-ի պապիրուսներում հիշատակվում են կասպեր Շատիբարան, վերջինիս դուստր *W'bl*-Ու/Վաբիլը Սյուենե քաղաքից կամ Ելեփանտինե ամրոցից (ժամանակակից Ասուանը), Բազայի ու նաև Ֆրիյանա-Փալլիայի որդի Բագազուշտան, Միսդայայի որդի Ինբուլիյան (*Ynbwly*)[2038]:

Kaspum, kspi (*wy'ka*) տերմինն արդեն նշեցինք, որ թարգմանվել է «արծաթագործ» նշանակությամբ, ընդ որում, այս տերմինով իբր ցույց է տրվել փողերի նկատմամբ գործառնական նշանակություն ունեցող պաշտոնյան[2039]: Իրականում ավելի ընդունելի է անվան մեջ էթնիկական պատկանելություն տեսնելը, քանի որ նույն պապիրուսներում անձնանունների կողքին նշվում է նրանց ցեղային ծագումը: Օրինակ, արամեական փաստաթղթերում հիշատակվում են *mgšy*-մագերը[2040] (մագ Միթրասարան ու Թաթան), մեդացիները կամ մարերը (մար Նիսայայի որդի Աթրփառնան), խորեզմցիները[2041], կիլիկեցիները[2042], կա-

[2038] "Aramaic Papyri of the Fifth Century B. C.", by A. Cowley, Oxford, 1923, No. 5, p. 12; No. 13, p. 38; "The Elephantine Papyri in English", pp. 157, 187, 215, 216-217, 247-248; Toorn van der K., Ethnicity at Elephantine: Jews, Arameans, Caspians, Tel Aviv, 2016, Vol. 43, pp. 156-159. Տե՛ս նաև Меликов Р., Նշվ. աշխ., էջ 92-95; Дандамаев М. А., Ахеменидская империя..., с. 165.
[2039] Kraeling E. G., The Brooklyn Museum Aramaic Papyri. New Documents of the Fifth. Century B.C. from the Jewish Colony at Elephantine, New Haven, 1953, p. 158; Меликов Р., Նշվ. աշխ., էջ 95:
[2040] Becking B., The Other Groups that were...Some Remarks on Different Minor Ethnicities in Persian Period Elephantine, JSem, 2017, Vol. 26/2, p. 822.
[2041] The Elephantine Papyri in English, pp. 158, 219, 222; Becking B., The Other Groups that were..., pp. 823-824; Дандамаев М. А., Ахеменидская империя..., с. 275-276.
[2042] "Aramaic Documents of the Fifth Century B. C.", pp. 26, 28, 36.

րիացիները, բակտրիացիները[2043]: Հետևաբար, կասպ անվանումն օգտագործվել է էթնիկական նշանակությամբ ու հազիվ թե նույն Ուաբիլի համար տերմինն օգտագործվեր «արծաթագործ» նշանակությամբ[2044]: Մյուս կողմից էլ նկատենք, որ մ. թ. ա. V դարում Մեմփիսից հայտնաբերված արամեական փաստաթղթերում կասպերը, ի թիվս այլ ժողովուրդների, հիշատակվում են այս քաղաքում տեղակայված ռազմանավերի կառուցման ու վերանորոգման զինարանում աշխատող վարպետներ[2045]: Նշենք նաև, որ եգիպտական աղբյուրները ևս պատմում են երկրում տարբեր օտարականների հայտնվելու մասին, որոնց թվում էին կասպերը, մարերը և այլն[2046]:

Կասպերի՝ վերևում բերված անունների մի մասն ունի զուտ իրանական (Բագազուշտա, «աստծուն հաճելի, ցանկալի»), իսկ մյուսները՝ բաբելոնական (Ուաբիլի անունը թերևս կապված է Բել աստծո անվան հետ) և եգիպտական (Խայխե) ստուգաբանություն[2047]:

Ստորև ներկայացնենք մ. թ. ա. 437 թվականի սեպտեմբերի 14-ով թվագրվող Ելեփանտինեի արամեական փաստաթղթերից մեկի բովանդակությունը. «Էլուլի 7-ին, որը պայնի ամսի 9-րդ օրն է, Արտաքսերքսես արքայի[2048] 28-րդ տարում, Բագուի որդի Բագազուշտան, Նամասավայի ջոկատի կասպը, և Շաթիբարայի դուստր տիկին Ուաբիլը, կասպիացին Սյուենեից[2049], Նամասավայի ջոկատից, ընդամենը 1 տղամարդ ու 1 կին, ասացին Ազարիայի որդի Անանիային, Յահվե աստծո ծառային՝ թելադրելով. «Մենք վաճառեցինք և տվեցինք քեզ Միսդայայի որդի *'pwly*-ի [Ապուլիա-Խ. Հ.] տունը, որը գտնվում է Ելեփանտինե ամրոցում: Նրա [տան] պատերը կանգուն են, բայց նրա բակն անբերրի հող է և չկառուցված, և պատուհաններ կան, բայց չկան հեծաններ: Մենք վաճառեցինք այն քեզ և դու մեզ տվեցիր նրա գինը արծաթով՝ 1 կարշ[2050] 4 սիկղ արքայական կշիռով, [հաշվարկելով] արծաթ զուզը[2051] 1 կարշին ու մեր սիրտը գոհացավ այդ վճարից, որ մեզ տվեցիր: Եվ ահա այն տան սահմանները, որ քեզ վաճառեցինք. սրանից վերև Շաթիբարայի տունն է, ներքև՝ Խնում աստծո քաղաքը (ճանապարհը) և արքայի փողոցը նրանց միջև, արևելքում սահմանակից է արքայական գանձարանին, արևմուտքում գտնվում է Յահվեի տաճարը ու արքայի փողոցն է նրանց միջև: Ես, Բագազուշտան և Ուաբիլը վաճառեցինք ու տվեցինք այն քեզ ու այսօրվանից և ընդմիշտ հեռանում ենք տնից: Դու, Ազարիայի որդի Անանիա, այս տան նկատմամբ իրավունք ունես, նաև քո երեխաները քեզանից հետո և նա, ում դու կցանկանաս տալ այն: Մենք չենք կարող դատական գործ հարուցել այս տան նկատմամբ, որը վաճառեցինք և տվեցինք քեզ ու որից մենք հեռացանք: Ու մենք չենք կարող դատական գործ հարուցել նաև որդուդ ու դստերդ նկատմամբ և նրա նկատմամբ, ում դու կցանկանաս տալ այն: Իսկ եթե մենք հայց ներկայացնենք կամ գործ հարուցենք քո դեմ, քո որդու և դստեր դեմ, կամ նրա նկատմամբ, ում դու կցանկանաս տալ այն, մենք քեզ կտանք 20 կարշ արծաթ, [հաշվարկելով] արծաթ զուզը 10 [կարշին] և տունը նախկինի պես քոնը կմնա ու քեզանից հետո երեխաներինդ ու նրանը, ում դու կցանկանաս տալ այն: Եվ մեր որդին կամ դուստրը չեն կարող քո դեմ հայց ներկայացնել կամ դատական գործ հարուցել այս տան համար, որի սահմանները վերևում գրել ենք: Եթե նրանք դատական հայց ներկայացնեն քո դեմ, քո որդու ու քո դստեր դեմ՝ նրանք քեզ կտան 20 կարշ արծաթ, [հաշվարկելով] արծաթ զուզը 10 [կարշին] և տունը նախկինի պես քոնը ու քո երեխաներինը կմնա քեզանից հետո: Իսկ եթե ուրիշ մարդ դատական գործ սկսի քո դեմ, կամ որդուդ դեմ, կամ դստերդ դեմ, ապա մենք ոտքի կկանգնենք ու կմաքրենք ու քեզ կտանք այն [տունը] 30 օրվա ընթացքում, իսկ եթե չմաքրենք այն, մենք կամ մեր երեխաները քեզ տուն կտանք քո տան պես ու նույն չափերով, մինչև որ Իպուլիայի որդին՝ այր կամ կին, կամ դուստրը կգան, իսկ մենք չենք կարողանա այն մաքրել, այդ ժամանակ մենք քեզ կտանք քո 1 կարշ 4 սիկղ արծաթը և կառույցների [արժեքը], որը դու այնտեղ կառուցել ես ու բոլոր այն միջոցների [արժեքը], որոնք դու օգտագործել ես այդ տան համար: Շեմայահի որդի Հագգայը գրեց Բագազուշտայի և Ուաբիլի թելադրանքով: Եվ այստեղ վկաներ են՝ Միթրայազնայի որդի Միթրադատան, Աթարլիի որդի կասպ Խայխե վկան, կասպ *Vyzbl*-ի տունը, Զամասպայի որդի Այսակա վկան:

[2043] Becking B., The Other Groups that were..., pp. 827-829.
[2044] Меликов Р., Նշվ. աշխ., էջ 96:
[2045] Aimé-Giron M. N., Textes araméens d'Égypte, Service des antiquités de l'Égypte, 1931, Le Caire, pp. 58-62; Дандамаев М. А., Ахеменидская империя..., с. 276-277.
[2046] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 314; Spiegelberg W., Die sogenannte Demotische Chronik des Pap. 215, DS 7, 1914, V, 15-16, S. 20.
[2047] Kraeling E. G., Նշվ. աշխ., էջ 158, 164; Becking B., The Other Groups that were..., p. 825. Տե՛ս նաև Меликов Р., Նշվ. աշխ., էջ 98-100 և հաջ.:
[2048] Խոսքն Արտաքսերքսես Ա-ի մասին է (մ. թ. ա. 465-424 թթ.):
[2049] Այր ու կին նույն ջոկատից են եղել:
[2050] 1 կարշը հավասար է մոտ 10 սիկղի կամ շեկելի:
[2051] Զուզը հավասար է կես սիկղի:

Տան [վաճառքի] փաստաթուղթը, որը Բագազուշտան ու Ուաբրին վաճառեցին Ելեփանտինեում գտնվող Յահվե աստծո ծառա Անանիային»[2052]:

Այս փաստաթուղթը և մյուս համանման վկայությունները ցույց են տալիս, որ կասպերը նույնպես մտել են Ելեփանտինեի ռազմական կայազորում ծառայող ժողովուրդների մեջ և մասնակցել են եգիպտական սատրապության հասարակական-տնտեսական կյանքին, սակայն դժվար է ասել, թե խոսքը ո՛ր սատրապության կասպերին է վերաբերում:

4.4. Սակա երկրի տեղադրությունը

Սակա երկրի և ընդհանրապես սակերի տեղադրության ուսումնասիրությունը մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տվել և դա այն պարագայում, երբ հետազոտողների եզրակացությունները գրեթե ամբողջությամբ հենվում են միևնույն աղբյուրների քննության վրա: Մինչդեռ, հարցն այն է, որ խնդրո առարկայի քննությունը պետք է կատարվի Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման սկզբունքի համատեքստում: Մեր կարծիքով՝ սկզբնաղբյուրների տեղեկություններն անհրաժեշտ է վերլուծել հենց այդ տեսանկյունից, ինչը ներկայացնում ենք ստորև:

Բեհիսթունի արձանագրությունում Սակա-Սկյութիա երկրի մասին կան հետևյալ վկայությունները: Արձանագրության սկզբում Դարեհ Ա-ն, հիշատակելով իր նախնիներին, հայտնում է, որ իրեն հպատակ են հետևյալ 23 երկրները՝ Պարսքը, Էլամը, Բաբելոնիան, Ասուրեստանը, Արաբիան, Եգիպտոսը, «այն երկրները, որոնք ծովի մոտ են», Սարդիսը, Հոնիան, Մեդիան, Արմինան, Կապադովկիան, Պարթևստանը, Դրանգիանան, Արեյան, Խորեզմը, Բակտրիան, Սոգդիանան, Գանդարան, Սկյութիան, Սատտագյուտիան, Արախոսիան, Մական[2053]:

Բեհիսթունի արձանագրության մեկ այլ հատվածում Դարեհ թագավորը հայտնում է, որ իր դեմ ապստամբել են Պարսքը, Էլամը, Մեդիան, Ասուրեստանը, Եգիպտոսը, Պարթևստանը, Մարգիանան, Սատտագյուտիա-Սաթագուշը, Սկյութիան[2054]:

[2052] "The Elephantine Papyri in English", pp. 212-215.
[2053] Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, էջ 8: Տե՛ս նաև Kent R., Նշվ. աշխ., էջ 119: Տե՛ս նաև Lecoq, p. 188.
[2054] Kent R., Նշվ. աշխ., էջ 123; Lecoq, p. 195: Արձանագրության աքքադերեն տարբերակում Սակա-Սկյութիայի փոխարեն կարդում ենք kur gi-mi-ri, ինչն անախրոնիզմ է: Տե՛ս Malbran-Labat F., La version akkadienne..., pp. 94, 97, 108, 112.

Արձանագրության երկու մեջբերումներից էլ ակնհայտ է, որ մինչև Դարեհի թագավոր հռչակվելը Սակա-Սկյութիան մտնում էր Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ և գտնվել է միջինասիական սատրապությունների հարևանությամբ: Ու չնայած Սական հիշատակվում է Դարեհի դեմ ապստամբած երկրների շարքում, սակայն այլ տեղեկություններ այդ ապստամբության մասին արձանագրության մեջ չեն հիշատակվում:

Բազմաթիվ ուսումնասիրողներ Դարեհի դեմ ապստամբած սակերին նույնացնում են Բեհիսթունի արձանագրության V սյունակում հիշատակվող սրածայր գդակավոր սակերին՝ ենթադրելով, որ վերջիններս նվաճվել են դեռևս Կյուրոսի կողմից[2055]: Ռ. Քենթի կարծիքով, սրածայր գդակավոր սակերի առաջնորդ Սկունխան ապստամբել էր դեռևս Դարեհի կառավարման սկզբում և երեք տարի շարունակ՝ մինչև մ. թ. ա. 519 թվականը, մնացել անպարտելի[2056]: Համաձայն Մ. Դանդամաևի, տիգրախաուդա սակերը (բառացի թարգմանությամբ «սրածայր գդակավոր սակեր») նվաճվել են Դարեհ Ա-ի կողմից, և նրանց դեմ ուղղված արշավանքը պատժիչ նպատակ չի ունեցել, քանի որ Սկունխան չի ապստամբել Դարեհի դեմ: Իր կարծիքը հիմնավորելու համար ուսումնասիրողը նշում է, որ ի տարբերություն մյուս ապստամբ առաջնորդների, որոնք մահապատժի են ենթարկվել, և այդ մասին Բեհիսթունի արձանագրությունում կան բավականին մանրամասն տեղեկություններ, Սկունխայի մահապատժի մասին արձանագրությունում ոչ մի խոսք չկա[2057]: Մյուս կողմից Սկունխան մնացած ինքնակոչների պես չի մեղադրվում ստի և խռովության մեջ և Բեհիսթունի բարձրաքանդակի վրա պատկերված է 80 սմ բարձրությամբ սրածայր գդակը գլխին, այն դեպքում, երբ բոլոր խռովարար թագավորները գլխաբաց են պատկերված: Տիգրախաուդա սակերը Բեհիսթունի արձանագրությունում ոչ մի անգամ չեն հիշատակվում որպես ապստամբներ, հետևաբար Դարեհը Սկունխային միայն գահընկեց է անում և նրա փոխարեն հավանաբար նույն միջավայրից այլ առաջնորդ է նշանակում[2058]:

Այս առումով հետաքրքիր է Դարեհ Ա-ի ժամանակներին վերաբերող կնիքներից մեկը: Կնիքին պատկերված է արքայի մենամարտը

[2055] Hinz W., Zur Iranischen Altertumskunde, ZDMG, Wiesbaden, 1939, Bd. 93, SS. 363-380; Junge P., Darius I. König der Perser, Lpz., 1944, S. 50.
[2056] Kent R., Նշվ. աշխ., էջ 161; History of Civilizations of Central Asia, Vol. II, p. 44; Briant P., From Cyrus to Alexander, p. 127.
[2057] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 103.
[2058] Անդ:

սկյութի հետ, որն աչքի է ընկնում իր գլխարկով և մարտական կացնով: Արքան նրան բռնել է ձախ ձեռքով, իսկ աջով սուրն է հանում՝ խփելու համար: Երկրորդ սկյութն արդեն պարտված է և գետնին պառկած[2059]:

Անշուշտ, Մ. Դանդամաևի եզրակացություններն արժանի են ուշադրության, սակայն ապստամբ երկրների շարքում Սակայի հիշատակությունը պահանջում է պատասխանել այն հարցին, թե ինչու՞ Դարեհը չի խոսում այդ երկրում ապստամբությունը ճնշելու մասին: Բեհիսթունի արձանագրության V սյունակի վերջին՝ վերականգնված ընթերցումները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները: Արձանագրության տեղեկությունից պարզվում է, որ Էլամում ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհը զորքով արշավում է Սակաստան: «Այնուհետև սակերը, որոնք կրում էին սրածայր գդակներ, ճակատամարտի են դուրս գալիս: Երբ ես (իմա՛ Դարեհ Ա-ն,-Հ.Խ.) հասա ջրային սահմանին, ամբողջ զորքով նրա մյուս կողմն անցա: Հետո գլխովին ջախջախեցի սակերի մի մասին, իսկ մյուսին էլ գերի վերցրի... Սկունխա անունով նրանց առաջնորդին գերի վերցրին և ինձ մոտ բերեցին: Այն ժամանակ իմ կամքով ուրիշին կարգեցի նրանց առաջնորդ: Ապա երկիրն իմը դարձավ»[2060]: Մեր կարծիքով, մեջբերված հատվածում չպետք է Սակա երկիրը կապել սրածայր գդակներ կրող սակերի երկրի հետ: Սակա երկրի և տիգրախաուդա սակերի կողք կողքի հիշատակությունը ավելի շուտ առանձնացնում է նրանց, քան թե միավորում: Հետևաբար Բեհիսթունի արձանագրության V սյունակում հիշատակվող Սական նույնանում է նույն արձանագրության մեջ նշված Սակա երկրին, որն ապստամբել էր Դարեհի դեմ: Ըստ էության, Սակա երկիր արշաված Դարեհն այլևս չի հանդիպում լուրջ դիմադրության, հավանաբար այն պատճառով, որ Բակտրիայի սատրապ Դադարշիշի հավատարմությունը Դարեհին և նրա ռազմական գործողությունները Մարգիանայում թույլ չեն տալիս, որ Բակտրիայի հարևանությամբ գտնվող Սակա երկրի ապստամբությունը ծավալվի: Դարեհի գլխավորությամբ պարսկական բանակի հայտնվելը Սակայում ստիպում է տիգրախաուդա սակերին պատերազմել Աքեմենյան արքայի հետ: Ամենայն հավանականությամբ, տիգրախաուդա սակերն են սկսել պատերազմը, և չի բացառվում, որ Աքեմենյան տերությունում տիրող խառը ժամանակաշրջանում հարձակումներ են կատարել պետության հեռավոր ծայրամասերի վրա: Ըստ էության, նրանք չեն օգնել պարսկահպատակ իրենց ցեղակիցներին Դարեհի դեմ ուղղված ապստամբության ժամանակ, քանի որ Սակայում ապստամբությունը չտարածվեց: Տիգրախաուդա սակերին նվաճելուց հետո Դարեհը հայտարարում է, որ երկիրն իրենը դարձավ, այն դեպքում, երբ այլ երկրներում բռնկված ապստամբությունները ճնշելուց հետո նաև նշում է, որ այդ է իր կատարածը այս կամ այն երկրում: Նշանակում է, որ տիգրախաուդա սակերը չեն տեղորոշվում Սակա երկրում և առաջին անգամ նվաճվում են Դարեհի կողմից[2061], որը մեղադրում է տիգրախաուդա սակերին Ահուրամազդային չպաշտելու մեջ:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե որտեղ են տեղադրվում տիգրախաուդա սակերը: Սակա երկիրը՝ Գանդարայի և Մակայի միջև, հիշատակվում է նաև Դարեհի Պերսեպոլիսյան արձանագրություններից մեկում (DPe)[2062]: Նաղշե Ռոստամի (DNa) արձանագրությունում, որն արտացոլում է Դարեհին հպատակ երկրների ամբողջական պատկերը, Սակա երկրի փոխարեն արդեն Գանդարայից, Հնդկաստանից հետո և Բաբելոնից առաջ հիշատակվում են հաումավարգա և տիգրախաուդա սակերը[2063]: Դարեհի փոքր արձանագրություններից մեկում (DN) Պարթևստանի և Բաբելոնի միջև հիշատակվում են տիգրախաուդա սակերը[2064]: Այս արձանագրության Գաուբարուվան, ամենայն հավանականությամբ, Բեհիսթունի արձանագրությունում հիշատակված նույն անձնավորությունն է[2065], իսկ տիգրախաուդա սակերի հիշատակությունը թույլ է տալիս մտածել, որ արձանագրությունը ժամանակագրական առումով կապված է Դարեհի թագավորության սկզբի հետ, երբ նվաճվել էր այդ ցեղը: Ընդ որում, այս հիշատակության տիգրախաուդա սակերն աշխարհագրորեն ծածկում են Սակա երկրի տարածքը:

[2059] Ward W., The Seal Cylinders of Western Asia, fig. 1052, p. 328.

[2060] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах, с. 269-270: Տե՛ս նույնի Поход Дария против скифского племени тиграхауда, КСИНА, 1963, вып. 61, с. 176-178.

[2061] Ճիշտ է, Բեհիսթունի արձանագրության V սյունակում նույնպես Էլամում խռովությունը ճնշելուց հետո է Դարեհն ասում, որ երկիրն իրենը դարձավ, սակայն հայտնի է, որ Էլամը մինչև Դարեհի թագավորելը մտնում էր Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ:

[2062] Kent R., Նշվ. աշխ., էջ 136:

[2063] Անդ, էջ 137: Հոնիայի և Սկուդրայի միջև հիշատակված «անդրծովյան սկյութներին» (Sakā tyaiy paradraya), որոնք նույնանում են եվրոպական սկյութներին, չենք անդրադառնում: Այդ մասին տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 27:

[2064] Kent R., Նշվ. աշխ., էջ 140:

[2065] Անդ, էջ 130, 133:

Դարեհի Սուզայի (DSe) և Արտաքսերքսես Բ-ի կամ Գ-ի Պերսեպոլիսի (A?P) արձանագրություններում հաումավարգա և տիգրախաուդա սակերը նշված են նույն հերթականությամբ[2066]: Քսերքսեսի «Persepolis h» արձանագրությունում երկրների և ժողովուրդների թվարկման աշխարհագրությունը գրեթե չի պահպանված, և Կապադովկիայից, Դահայից հետո և Սկուդրայից առաջ, հիշատակվում են հաումավարգա և տիգրախաուդա սակերը[2067]:

Հաումավարգա և տիգրախաուդա սակերի տեղադրության մասին մասնագիտական գրականության մեջ կան տարբեր կարծիքներ: Ժամանակակից գիտական գրականության մեջ հիմնականում՝ սակեր են անվանվում Միջին Ասիայի արևելյան շրջանների և արևելյան Թուրքեստանի հին իրանախոս ցեղերը (մ. թ. ա. I հազարամյակ - մ. թ. ա. առաջին դարեր): Սակայն սակերի անվան տակ լայն առումով հասկացվում են ընդհանրապես՝ բոլոր սկյութները, այսինքն՝ և՛ մասսագետները, և՛ մերձսևծովյան սկյութները[2068]: Դարեհ Ա-ի Բեհիսթունի և Պերսեպոլիսի (DPe) արձանագրություններում հիշատակված Sakā-ն որոշ ուսումնասիրողներ համարել են սակերի առանձին ցեղ և տեղադրել Հյուսիսային Բելուջիստանում[2069]: Սակայն ուսումնասիրողների մեծ մասը վաղ արձանագրությունների Sakā-ն նույնացնում է ավելի ուշ հիշատակվող Sakā-haumavargā-ին[2070]: Հաումավարգա սակերը վաղուց արդեն նույնացվում են Հերոդոտոսի ամյուրգյան սկյութներին, որոնց տեղադրում են Միջին Ասիայի արևելյան շրջաններում՝ հատկացնելով նաև Մարգիանան[2071]: Ա. Բերնշտամը ամյուրգյան սակերին բաժանում է երեք խմբի՝ տյանշանյան, ֆերգանական և յաքսարտյան՝ հաումավարգա սակերի հետ կապելով Հարավարևելյան Ասիայի տարածքում հայտնաբերված հնագիտական հուշարձանները[2072]:

Տիգրախաուդա սակերին, որպես կանոն, տեղադրում են Միջին Ասիայի արևմտյան շրջաններում[2073]: Ի. Դյակոնովը տիգրախաուդա սակերին նույնացնում է Անդրկովկասի Սկյութական թագավորության սկյութների հետ[2074]: Տիգրախաուդա սակերին ենթադրաբար տեղադրել են նաև Ղազախստանի հարավ-արևելքում՝ Շաշի և Մերձտյանշանի շրջաններում[2075]: Տիգրախաուդա սակերին նույնացրել են Հերոդոտոսի օրթոկորյուբանտիների հետ կամ էլ տեղադրել Սիր-Դարյայից այն կողմ[2076]: Մասսագետների հետ նույնացրել են կա՛մ տիգրախաուդա[2077], կա՛մ հաումավարգա սակերին[2078]:

Ինչպես տեսնում ենք, մասնագիտական գրականության մեջ քննարկվող հարցերի մասին կարծիքների պակաս չկա: Այսպես, Ֆ. Անդրեասը սակերին, հաումավարգա սակերին և տիգրախաուդա սակերին համարել է երեք տարբեր ժողովուրդներ[2079]: Ի. Պյանկովը գտնում է, որ հին աղբյուրները (Հերոդոտոս, VII, 64; Պլինիոս Ավագ, VI, 50)[2080] պարսկական «սակերին» նույնացնում են հունական ընդհանրական «սկյութներ» եզրին, մյուս կողմից էլ Սիր-Դարյայի շրջանում ստույգ կերպով գոյություն է ունեցել մի ցեղ, որի ինքնանունը եղել է «սակ»: Ուրեմն, Պլինիոսի սակերը նույնանում են հին պարսկական սեպագիր արձանագրությունների Սակային, այսինքն՝ հաումավարգա սակերին[2081], որոնց նվաճել էր Կյուրոսը[2082]:

[2066] Անդ, էջ 141, 156:

[2067] Անդ, էջ 151: Դահան համապատասխանում է դահերին, այն է՝ «ճահիճների սակերին», իսկ «հարթավայրերի սակերն» էլ տեղադրվում են XVIII սատրապության տարածքում: Ավելի մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 18, 29-31, 33:

[2068] Пьянков И., Саки (содержание понятия), Изв. Отделения общественных наук АН ТаджССР, 1968, 3 (53), с. 12 и след; ИТН, т. I, с. 159; Литвинский Б. А., Древние кочевники «Крыши мира», М., 1972, с. 156 и след.

[2069] Andreas F., Ueber einige Fragen der ältesten persischen Geschichte, "Verhandlungen des XII Internationalen Orientalisten-Kongresses, Hamburg, September 1902", Leiden, 1904, S. 97; Sarre F., Herzfeld E., Iranische Felsreliefe, Berlin, 1910, S. 30; Herzfeld E., Sakastān, AMI, 1932, IV, 1/2, S. 9.

[2070] Дандамаев М. А., Поход Дария..., с. 180 и след.; Грантовский Э., Из истории восточноиранских племен на границах Индии, КСИНА, 1963, вып. 61, с. 24 и след.; Литвинский Б. А., Древние кочевники, с. 163.

[2071] Д. К. Ш., с. 392, прим. 752. Ա. Օլմսթեդը հաումավարգա սակերին տեղադրում է Պամիրում: Տե՛ս Olmstead A., Նշվ. աշխ., էջ 49:

[2072] Бернштам А. Н., Историко-археологические очерки Центрального Тянь-Шаня и Памиро-Алая, МИА, 1952, 26, с. 27, 186, 189, 209 и след. и карта; Литвинский Б. А., Древние кочевники, с. 174 и след.

[2073] Литвинский Б. А., Древние кочевники, с. 172 и след.

[2074] Дьяконов И., История Мидии, с. 248, 338. Ա. Օլմսթեդը տիգրախաուդա սակերին տեղադրում է մարական սատրապության մեջ: Տե՛ս Olmstead A., Նշվ. աշխ., էջ 291:

[2075] Акишев К. А., Кушаев Г. А., Древняя культура саков и усуней долины реки Или, Алма-Ата, 1963, с. 16 и след.

[2076] Д. К. Ш., с. 393; "A Commentary on Herodotus Books I-IV", pp. 490-491.

[2077] Տե՛ս, օրինակ, Herrmann A., Sakai, RE, Stuttgart, 1920, I A, col. 1784; Idem. Massagetai, RE, Stuttgart, 1930, XIV, col. 2125; Струве В., Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, с. 60; Ельницкий Л. А., Скифия евразийских степей, Новосибирск, 1977, с. 97.

[2078] Толстов С. П., Древний Хорезм, М., 1948, с. 243 и след.

[2079] Andreas F., Նշվ. աշխ., էջ 97:

[2080] Herodotus, Vol. III, VII, 64, p. 378; Pliny, Natural History, Vol. II, VI, 50, p. 374.

[2081] Пьянков И., Саки, с. 12-13.

Այս առումով, անկասկած, կարևոր նշանակություն ունեն նաև հունա-հռոմեական աղբյուրները: Հերոդոտոսը XV սատրապության կազմում և հույն-պարսկական պատերազմներին մասնակցող ցեղերի շարքում[2083] հիշատակում է միայն, այսպես ասած՝ սակերի մի հատվածին, որոնք երկու վկայությունների դեպքում էլ ակնհայտորեն կապված են Միջին Ասիայի հետ: Հերոդոտոսը միևնույն վկայության մեջ թեև ոչ ուղղակի հիշատակում է (ընդ որում՝ բակտրիացիներից հետո) երկու խումբ սակերի մասին՝ «սրածայր բարձր գդակավոր» և ամյուրգյան[2084]: Տվյալ տեղեկության մեջ արտացոլված են և՛ հաումավարգյան սակերը (ամյուրգյան սակեր), և՛ տիգրախաուդա սակերը, որոնք նկարագրության մեջ բնութագրվում են իրենց «սրածայր բարձր գդակներով»:

Հերոդոտոսի մյուս տեղեկություններում սակերը հիշատակվում են բակտրիացիների, հնդիկների հարևանությամբ[2085]: Բակտրիացիների և հնդիկների հարևանությամբ սակերին հիշատակում են նաև Արիանոսը և Ռուփոսը[2086]: Պոլիենոսը հաղորդում է, որ Բակտր գետից այն կողմ՝ անապատում ապրող երեք սակ թագավորներ, պատերազմում են Դարեհի դեմ: Թագավորներից մեկի անունն էր Ὀμάργης, որը կապվում է հաումավարգա սակերի հետ[2087]:

Հնդկաստանի հարևանությամբ սակ-սկյութների մասին հիշատակում են նաև Դիոդորոս Սիկիլիացին և Ստրաբոնը[2088]: Համաձայն Հելլանիկոսի, ամյուրգյան սակերը բնակվել են Մարգիանային կից տափաստաններում, և հենց Ἀμύργιον անունը սկյութական դաշտի անվանումն է[2089]: Հե-

[2082] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 102.

[2083] Հերոդոտոս, III, 93; VII, 64:

[2084] Անդ, VII, 64:

[2085] Անդ, I, 153; VII, 9; IX, 113:

[2086] Arrian, Vol. I, III, 8, 3, pp. 244, 246; Vol. II, VII, 10, 5, p. 234; Rufus, Vol. I, IV, 12, 6-7, pp. 270, 272 (մասսագետները նույն սկյութներն են); V, 9, 5, p. 398; Vol. II, VI, 3, 9, p. 26.

[2087] Литвинский Б. А., Древние кочевники, с. 164; Markwart J., Die Sogdiana des Ptolemaios, Orientalia, 1946, Vol. 15, S. 320, n. 1. Դայթակղիչ է այդ երեք եղբայրների մեջ տեսնել հին պարսկական սեպագիր արձանագրությունների միջինասիական սակերի երեք խմբերին: Ἀμόργης անունը հիշատակում է նաև Թուկիդիդեսը: Տե՛ս Thucydides, Vol. IV, VIII, 5, 5; 19, 2; 28, 2-5, pp. 198, 220, 236, 238.

[2088] Diodori Bibliotheca Historia, Vol. I, Pars I, L. I-V, II, 35, 1, p. 185; Страбон, с. 480, 484.

[2089] Müller C., FHG, Vol. I, fr. 171, p. 68; Дандамаев М. А., Поход Дария..., с. 180.

կատեռսի մի տեղեկությունը, անկախ սրբագրումներից[2090], նույնպես ցույց է տալիս, որ Հնդկաստանի հարևանությամբ սկյութների հիշատակությունը վերաբերում է արդեն վաղ Աքեմենյան ժամանակաշրջանին:

Ուսումնասիրողների կարծիքով, հաումավարգա սակերը գտնվել են Չիթրալում, Մունջանում[2091]: Որոշ ուսումնասիրողներ «ամյուրգ», «հաումավարգա» անունները կապում են ոչ թե հաումա բույսի[2092], այլ Մուրղաբ գետանվան հետ՝ Թուրքմենիայի հարավ-արևելքում, որտեղ էլ փնտրում են «ամյուրգյան դաշտավայրը»[2093]: Սակայն Մերվ-Մարգիանա-Մուրղաբ անվանումը կապված է հին իրանական *Margu-ի հետ, որը չի կարող ծագել «հաումավարգայից»[2094]: Իսկ «ամյուրգյան դաշտավայրն» էլ համապատասխանում է Ալայի հովտին[2095]:

Կարևոր է նաև «սոգդերից այն կողմ գտնվող սկյութների» տեղադրության հարցը: Այսպես, Պերսեպոլիսյան արձանագրություններից մեկում (DPh) Դարեհ թագավորն ասում է. «Սա է թագավորությունը, որին ես տիրում եմ՝ Սկյութիայից, որը Սոգդիանայի այն կողմում է, մինչև Քուշ (իմա՛ Եթովպիա- Հ. Խ.), Սինդից (իմա՛ Հնդկաստանից- Հ. Խ.) մինչև Սարդես (իմա՛ Լյուդիա- Հ.Խ.), որը շնորհել է ինձ Ահուրամազդան, աստվածներից մեծագույնը: Թող պահպանի Ահուրամազ-

[2090] "Κασπάπυρος πόλις Γυνδαρική, Σκυθῶν δὲ ἀντίη (ձեռագրում՝ ἀκτή)". Արտահայտության իմաստն է. «Սկյութների և Կասպապյուրոս քաղաքի միջև գտնվում է Հինդուքուշը»: Տե՛ս Д. К. Ш., с. 185: Տե՛ս նաև Грантовский Э., Из истории, с. 25 и след. Տե՛ս նաև՝ Литвинский Б. А., Древние кочевники, с. 164-165. Կասպապյուրոսը կամ Կասպատյուրոսը նույնացվել է Քաբուլի, Քաշմիրի, Մուլթանի հետ կամ էլ պետք է փնտրել Ատոկում և նույնիսկ Փեշավարում (տե՛ս Литвинский Б. А., Նշվ. աշխ., էջ 165):

[2091] Marquart J., Untersuchungen..., II, S.142; նույնի՝ Die Sogdiana des Ptolemaios, S. 320; Грантовский Э., О восточноиранских племенах кушанксого ареала, Центральная Азия в кушанскую эпоху, т. II, М., 1975, с. 89; Литвинский Б. А., Նշվ. աշխ., էջ 166-167: Լայն առումով հաումավարգա սակերին տեղադրում են նաև Ալթայի և Պամիրի լեռնային շրջանների միջև (տե՛ս Narain A. K., The Sakā Haumavargā and the Ἀμύργιοι: The Problem of Their Identity, BAI, New Series, Vol. 1, Inaugural Issue, 1987, p. 30):

[2092] Грантовский Э., Из истории, с. 28; Gershevitch I., Iranian Nouns and Names in Elamite Garb, Transactions of the Philological Society, London, 1969, pp. 168-169.

[2093] Григорьев В. В., О скифском народе саках, СПб., 1871, с. 58; Дандамаев М. А., Поход Дария..., с. 180.

[2094] Литвинский Б. А., Նշվ. աշխ., էջ 168; Пьянков И., К вопросу о маршруте похода Кира II на массагетов, ВДИ, 1964, 3, с. 123. Գետանունը հայտնի է նաև Մարղոր անունով:

[2095] Литвинский Б. А., Նշվ. աշխ., էջ 168: Ուսումնասիրողը լայն առումով Ալայի դաշտը նույնացնում է նաև Ֆերգանային (անդ, էջ 169):

դան ինձ և իմ արքայական տունը»[2096]: Այս տեղեկությունը մի առիթով մենք արդեն քննել ենք և ցույց տվել, որ Աքեմենյան Պարսկաստանի Սակա երկիրը գտնվել է Հյուսիսային Տաջիկստանում և Ամու-Դարյայի վերին հոսանքի շրջանում՝ հարավում ձգվելով մինչև Հինդուքուշի լեռնաշղթան, որից հարավ բնակվել են XV սատրապության կասպեր[2097]: Ստրաբոնը հաղորդում է, որ սակերը սոգդերից բաժանված են Յաքսարտա-Սիր-Դարյա գետով[2098]: Պլինիոս Ավագը սակերին հիշատակում է Յաքսարտայից այն կողմ[2099]: Արիանոսը և Ռուփոսը նույնպես ունեն բազմաթիվ տեղեկություններ սկյութների մասին, որոնք հիշատակվում են և՛ բակտրիացիների հետ միասին, և՛ նրանց հարևանությամբ (Տանաիս-Յաքսարտայի, ներկայիս Սիր-Դարյայի աջ ափին), և՛ սոգդերի հարևանությամբ[2100]: Է. Հերցֆելդը «սոգդերից այն կողմ գտնվող սկյութներին» տեղադրում է Ֆերգանայում և սրանից հյուսիս՝ ենթադրելով, որ para Sugdam-ն ունի տեղանվանական նշանակություն, որը նա հասկանում է որպես Անդրյաքսարտիանա[2101]:

«Սոգդերից այն կողմ գտնվող սկյութներին» ուսումնասիրողները նույնացրել են հաումավարգայի[2102] կամ տիգրախաուդա[2103] սակերի հետ: Մեր կարծիքով, այսպիսի էթնոաշխարհագրական տարբերակումը ճիշտ չէ, քանի որ «սոգդերից այն կողմ գտնվող սկյութներ» հասկացության տակ պետք է հասկանալ սոսկ աշխարհագրական բովանդակություն, քանի որ Դարեհ Ա-ն արձանագրության մեջ ցույց է տալիս իր վիթխարա

[2096] Kent R., Նշվ. աշխ., էջ 137:
[2097] Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ 155-156:
[2098] Страбон, с. 483, 485-486.
[2099] Pliny, Natural History, Vol. II, VI, 50, p. 374.
[2100] Արիանոս, էջ 97, 101, 132, 150-152; Ռուփոս, էջ 330, 470, 476, 543: Տե՛ս նաև Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, p. 164.
[2101] Herzfeld E., A New Inscription of Darius from Hamadan, Memoirs of the Archaeological Survey of India, Calcutta, 1928, 34, pp. 3-4; նույնի՝ The Persian Empire, p. 327. «Սոգդերից այն կողմ գտնվող սկյութներին» մասնագիտական գրականության մեջ նույնացրել են սակարաուկների հետ: Տե՛ս Tarn W. W., The Greeks in Bactria and India, Cambridge, 1951, p. 291. Յ. Մարկվարտը սակաուրակներին կապում է հաումավարգա սակերի հետ. Sakā-haumavargā-saka vr(-g)ak (տե՛ս Marquart J., Das erste Kapitel der Gāpā uštavatī, Orientalia, 50, Roma, 1930, S. 43), ինչը Ռ. Ֆրայը լեզվաբանական առումով չի ընդունում (տե՛ս Фрай Р., Наследие Ирана, с. 70): Սակարաուկների տեղադրության քննությունը դուրս է սույն մենագրության շրջանակներից:
[2102] Junge J., Saka-Studien, SS. 84-85; Hinz W., Zur Behistun-Inschrift des Dareios, ZDMG, 1942, Bd. 96/2, SS. 338-340.
[2103] Marquart J., Die Sogdiana des Ptolemaios, SS. 318-319.

ծավալ կայսրության սահմանները: Հետևաբար, այսպիսի մոտեցման դեպքում «սոգդերից այն կողմ գտնվող սկյութներն» առանց էթնիկական որոշակի նույնականացման տեղադրվում են Բեհիսթունի արձանագրության Սակա երկրում, որը համապատասխանում է Հերոդոտոսի XV սատրապության տարածքին: Նշանակում է, որ և՛ Բեհիսթունի արձանագրության Սակա երկիրը (DPe արձանագրության Սակայի տարածքային ընդգրկմամբ), և՛ Հերոդոտոսի XV սատրապության սակերը ընդհանրական առումով ներկայացնում են և՛ հաումավարգա, և՛ տիգրախաուդա սակերին: Չպետք է մոռանալ, որ հաումավարգա և տիգրախաուդա սակերն արձանագրություններում հիշատակվում են կողք կողքի, ուրեմն պետք է գտնվեին մեկմեկու հարևանությամբ[2104], այլ ոչ թե աշխարհագրական տարբեր վայրերում և սատրապություններում[2105]: Եվ պատահական չէ Հերոդոտոսի այն հաղորդումը, թե «յուրաքանչյուր ազգի նա (իմա՛ Դարեհ Ա-ն- Հ. Խ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը»[2106]: Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ պարսից արքունիքի նպատակը եղել է ոչ թե որևէ էթնոսի բաժանումը տարբեր սատրապությունների միջև, այլ մի քանիսին մեկ վարչական շրջանի մեջ միավորելը: Ուրեմն, Սակա երկիրը, սկզբնապես ընդգրկելով հաումավարգա սակերի բնակության տարածքը, ավելի ուշ ներառում է նաև տիգրախաուդա սակերին, որոնց պետք է փնտրել Սակա երկրի մեջ: Սակայից՝ հաումավարգա սակերի երկրից, Դարեհն անցնում է «ջրային սահմանը», որը, մեր կարծիքով, Սիր-Դարյա գետն է, և մտնում տիգրախաուդա սակերի երկիրը: Նվաճելով տիգրախաուդա սակերին՝ Դարեհը սրանց վարչական առումով միավորում է հարևան հաումավարգա սակերի հետ և մտցնում XV սատրապության կազմի մեջ: Ինչ վերաբերում է Քսերքսեսի նավատորմում հիշատակվող սակերի մասին տեղեկությանը[2107], ապա չի կարելի մտածել, որ խոսքը վերաբերում է տիգրախաուդա սակերին, որոնց պետք է անպայման փնտրել Կասպից ծովի արևելյան ափերին[2108]: Օրինակ՝ Ա. Հերմանը տիգրախաուդա սակերին համարում է նավատիներ

[2104] Հմմտ. "An Historical Atlas of Central Asia", by Y. Bregel, Leiden, Boston, 2003, p. 7.
[2105] Olmstead A., Նշվ. աշխ., էջ 157:
[2106] Հերոդոտոս, III, 89:
[2107] Անդ, VII, 96; 184: Ուրուկից հայտնաբերված փաստաթղթերից մեկում հիշատակվում են սակեր, որոնք ծառայել են նավատորմում (տե՛ս Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 363):
[2108] "The World of Achaemenid Persia", ed. by J. Curtis, St. J. Simpson, London, 2010, p. XIV.

և նույնացնում մասսագետների հետ՝ տեղադրելով Միջին Ասիայի արևմուտքում[2109]: Նախ՝ Հերոդոտոսի տեղեկություններից չի բխում, թե սակերը նավաստիներ էին, երկրորդ՝ սակեր-սկյութներ կային նաև Կասպից ծովի արևմտյան ափերին՝ XVIII սատրապության կազմում[2110]:

Այսպիսով, ի մի բերելով կատարված քննության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ Աքեմենյան Պարսկաստանի Սակա երկիրը համապատասխանում է XV սատրապության մեջ հիշատակվող սակերի երկրին: Վերջինիս մեջ մտնում էին հաումավարգա և տիգրախաուդա սակերը, որոնք արտացոլված են «սոգդերից այն կողմ գտնվող սկյութներ» աշխարհագրական հասկացության մեջ:

4.5. VII սատրապության տեղադրությունը

Հույն պատմիչ Հերոդոտոսը Աքեմենյան Պարսկաստանի VII սատրապության մասին գրում է. «Սատտագյուտները, գանդարիները, դադիկները և ապարյուտները համատեղ վճարում էին (տարեկան) հարյուր յոթանասուն տաղանդ հարկ: Սա յոթերորդ նահանգն էր»[2111]: Մեջբերված տեղեկությունից պարզվում է, որ VII սատրապությունը սատրապությունների ցանկում ամենաքիչ հարկ վճարող վարչական միավորն էր: Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի կազմում հիշյալ սատրապությունից հիշատակվում են միայն գանդարիները և դադիկները՝ Արտաբանոսի որդի Արտյուփիոսի առաջնորդությամբ[2112]:

Ընդհանուր առմամբ նշված սատրապության կազմում հիշատակված ժողովուրդների մասին տեղեկություններն անտիկ աղբյուրներում սակավ են և կցկտուր, ինչը մասնագիտական գրականության մեջ տեղագրական տարաբնույթ ենթադրությունների տեղիք է տվել:

Գանդարան նվաճել կամ հնդիկների դեմ արշավել էր դեռևս Կյուրոս Մեծը[2113]: Սատտագյուտների և գանդարիների բնակության հնդկական

[2109] Herrmann A., Sakai, col. 1784; Литвинский Б. А., Նշվ. աշխ., էջ 172: Մ. Դանդամաևը տիգրախաուդա սակերին տեղադրում է Արալյան ծովից արևելք: Տե՛ս Дандамаев М. А., Поход Дария..., с. 180.

[2110] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 45-114: Տե՛ս նաև Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ, էջ 25-35:

[2111] Հերոդոտոս, III, 91:

[2112] Անդ, VII, 66:

[2113] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 35; Страбон, с. 640; Pliny, Natural History, Vol. II, VI, 92, p. 408. Տե՛ս նաև Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 348; The Cambridge Ancient History, Vol. IV, pp. 170, 198; History of Civilizations of Central Asia, Vol. II, p. 40.

տարածքները[2114] համապատասխանաբար նույնանում են հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվող *Thataguš* և *Gadāra* երկրներին: Սատտագյուտները (մեկնաբանվել է «յոթ գետերի (ժողովուրդ)» կամ «հարյուրավոր խոշոր անասուններ ունեցող» իմաստով)[2115] տեղադրվում են կա՛մ Գանդարայից հարավ, Դրանգիանայի, Հինդոսի և Արաքոսիայի, կա՛մ էլ կենտրոնական-արևմտյան Պակիստանի և հարավային Աֆղանստանի միջև: Համաձայն մեկ այլ կարծիքի՝ նրանք գտնվել են Փենջաբում և Հինդուքուշից հարավ ընկած տարածքում[2116], որն Ալեքսանդր Մակեդոնացին դարձնում է առանձին սատրապություն՝ Թաքսիլա կենտրոնով[2117]: Գանդարան և Սատտագյուտիան բաժանված էին Ինդոս գետի վերին հոսանքով. Սատտագյուտիայի արևելյան սահմանը, հավանաբար, Հյուդասպես գետն էր՝ ներկայիս Ջհելում, իսկ հարավային սահմանը կազմում էր Ակեսին՝ ներկայիս Չենաբ գետը մինչև Ինդոսի հետ միախառնվելը[2118]: Սատտագյուտներին ներառել են նաև Արաքոսիայի մեջ՝ վերջինս համարելով VII սատրապության շրջաններից մեկը[2119]: Այս տեսակետը հիմնավորվում է Բեհիսթունի արձանագրության այն տվյալներով, որ Սատտագյուտիան առանձին-առանձին հիշատակվում է Դարեհ Ա-ին հպատակ և ապստամբ երկրների շարքում, իսկ Արաքոսիան (արամեերեն hrḥwty[2120]) այդ հատվածում չի նշվում: Արձանագրության հետագա շարադրանքում, ընդհակառակը, այլևս չի խոսվում Սատտագյուտիայի մասին, և ներկայացվում են Արաքոսիայում տեղի ունեցած ռազմական գործողությունները[2121]: Բեհիսթունի արձանագրության բաբելոներեն տարբերակում Գանդուտավա անունով գավառը՝ Գանդատամակի ձևով, հիշատակվում է Սատտագյուտիայում[2122]: Գանդուտավայի նույնացումն Աֆղանստանում գտնվող Գանդա-

[2114] Fleming D., Where was Achaemenid India?, BAI, New Series, Vol. 7, Iranian Studies in Honor of A. D. H. Bivar, 1993, p. 67.

[2115] Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, East and West 27, 1977, p. 15.

[2116] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 486.

[2117] Արիանոս, էջ 159, 174, 180; Страбон, с. 650:

[2118] Արիանոս, էջ 174, 180, 222: The Cambridge Ancient History, Vol. IV, p. 200. Է. Հերցֆելդը Գանդարայի տարածքը հասցնում էր մինչև Թաքսիլա (տե՛ս Herzfeld E., The Persian Empire, p. 336):

[2119] Массон В. М., Ромодин В. А., История Афганистана, т. I, М., 1964, с. 66.

[2120] Bowman R. A., Aramaic Ritual Texts from Persepolis, p. 192.

[2121] Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, էջ 8, 12, 20-21:

[2122] Malbran-Labat F., La version akkadienne..., pp. 102, 117.

մակի հետ կասկածելի է[2123], ավելի հավանական է այն Բաննուի շրջանում տեղադրելը: Ընդ որում, նույն բաբելոներեն տարբերակում Դարեհ թագավորը Վիվանայի հաղթանակից հետո ասում է, որ «սա է իր կատարածը Սատտագյուտիայում և Արաքոսիայում»[2124], այսինքն՝ երկու տեղանունները հստակորեն տարբերակվում են: Սատտագյուտների հետ կարող են նույնանալ Արիանոսի և Ռուփոսի հիշատակած օքսիդրակները և մալերը (քսուդրակներ և մալավաներ[2125]) ներկայիս Մուլթանի շրջանում, որոնք հարկատու էին արաքոսիացիներին[2126]:

Հին պարսկական սեպագիր այլ արձանագրություններում Սատտագյուտիան և փղոսկրով հայտնի Արաքոսիան (սանսկրիտերեն *sarasvati* «գետերով հարուստ») հիշատակվում են առանձին, հիմնականում կողքի կողքի, երբեմն աշխարհագրական հերթականությամբ՝ Գանդարա-Սատտագյուտիա-Արաքոսիա կամ Արաքոսիա-Սատտագյուտիա-Գանդարա[2127]: Հետևաբար, աշխարհագրական առումով Սատտագյուտիան և Արաքոսիան տարբեր երկրներ են, որոնք վարչական առումով նույնպես գտնվել են տարբեր սատրապությունների մեջ, բայց Արաքոսիայի սատրապի իշխանությունը ժամանակ առ ժամանակ տարածվում էր նաև սատտագյուտների վրա: Դարեհ Ա-ի իշխանության ամրապնդումից հետո Իրանը և Հնդկաստանը կապող Արաքոսիան[2128] որպես վարչական միավոր, գոնե սկզբնական ժամանակաշրջանում դադարում է

[2123] The Cambridge Ancient History, Vol. IV, p. 200; Vogelsang W., Some Remarks on Eastern Iran in the Late-Achaemenid Period, AH I: Sources, Structures, Synthesis, ed. by Sancisi-Weerdenburg H., Leiden, 1987, p. 186.

[2124] Malbran-Labat F., La version akkadienne..., pp. 102, 118; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 231. Արաքոսիայում և Սատտագյուտիայում տեղի ունեցած երեք ճակատամարտերի վայրերի տեղադրությունների և նույնացումների վերաբերյալ տարբեր տեսակետների մասին մանրամասն տե՛ս Fleming D., Achaemenid Sattagydia and the Geography of Vivana's Campaigns (DB III, 54-75), JRAS, 1982, № 2, pp. 102-112.

[2125] The Cambridge Ancient History, Vol. VI, p. 833; Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Виласин А. А., Индия и античный мир, с. 162.

[2126] Արիանոս, էջ 209, 211-213; Ռուփոս, էջ 547, 558; Vogelsang W., Some Remarks on Eastern Iran in the Late-Achaemenid Period, p. 186; նույնի՝ The Achaemenids and India, in: AH IV, Centre and Periphery, ed. by H. Sancisi-Weerdenburg & A. Kuhrt, Leiden, 1990, p. 100.

[2127] Kent R., Նշվ. աշխ., էջ 136-137, 141, 143, 145, 151, 155-156: Տե՛ս նաև Armayor O. K., Herodotus' Catalogues of the Persian Empire in the Light of the Monuments and the Greek Literary Tradition, Transactions of the American Philological Association, Vol. 108, 1978, p. 3.

[2128] Vogelsang W., Early Historical Arachosia in South-East Afghanistan. Meeting Place between East and West, IA, 1985, Vol. 20, 1985, pp. 55, 62.

գոյություն ունենալ և մտել է, հավանաբար, XVII սատրապության մեջ, որտեղ նրա տեղադրության համար կար ընդարձակ տարածություն: Համաձայն անտիկ աշխարհագետների՝ Արաքոսիայի սահմանն արևելքում հասնում էր մինչև Ինդոս գետը, հյուսիսում՝ Պարոպամիս, արևմուտքում՝ Դրանգիանա, հարավում՝ Գեդրոսիա[2129]: Արաքոսիայի գլխավոր քաղաքը կամ արաքոտների քաղաքը՝ Արաքոտին՝ Իսիդոր Քարացու Ալեքսանդրուպոլիսը[2130] սովորաբար տեղադրում են ներկայիս Ղանդահարի շրջանում[2131]: Էտյումանդրոս գետի (ներկայիս Հիլմենդը) վտակ Արաքոտի (հավանաբար ներկայիս Արղանդաբը) անունից էլ թերևս առաջացել է Արաքոսիայի անվանումը[2132]:

Գավգամելայի ճակատամարտին Արաքոսիան և լեռնային հնդիկները՝ գանդարիները, միևնույն սատրապության մեջ են[2133], չնայած վերևում կատարված քննությունը ցույց տվեց, որ լեռնային հնդիկները կարող են նույնացվել նաև սատտագյուտների հետ[2134], որոնք վարչական առումով կապված էին արաքոսիացիների հետ: Նրանց հետ, հավանաբար, միավորված են եղել նաև դրանգները[2135], այսինքն՝ XIV սատրապության մի մասը նույնպես միավորվել էր VII սատրապության հետ: Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքի ընթացքում նվաճված արաքոսիացիները հիշատակվում են որպես առանձին վարչական միավոր՝ Մենոնի ղեկավարությամբ[2136], որին հաջորդում է Սիբյուրտիոսը[2137]: Վերջինիս ղեկավարության տակ են անցնում նաև գեղ-

[2129] Страбон, с. 485, 487, 670, 672; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VII, 20, 1; Pliny, Natural History, Vol. II, VI, 61; 92, pp. 382, 408.

[2130] Muller C., Geographi Graeci Minores, Vol. I, p. 251.

[2131] Vogelsang W., The Achaemenids and India, pp. 95, 97; History of Civilizations of Central Asia, Vol. II, p. 70; Velayati R., Study of the Cultural, Artistic and Historical Relations between Iran and India in the Achaemenid Period, Journal of Subcontinent Researches, 2011, Vol. 3, № 7, p. 144.

[2132] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 46; Frye R., The History of Ancient Iran, p. 62.

[2133] Արիանոս, էջ 97, 180, 223; Ռուփոս, էջ 526: Տե՛ս նաև Briant P., From Cyrus to Alexander, p. 756.

[2134] Համմ. Petrie C. A., Magee P., Histories, Epigraphy and Authority: Achaemenid and Indigenous Control in Pakistan in the 1st millennium BC, GS, 2007, Vol. 1, p. 9. Արիանոսի մեկ այլ հիշատակության մեջ (VI, 16, 3) լեռնային հնդիկները տարբեր են Գավգամելայի ճակատամարտին մասնակցած նույնանուն ցեղից և գտնվել են հավանաբար Փենջաբում (Petrie C. A., Magee P., Histories, Epigraphy and Authority, p. 13):

[2135] Արիանոս, էջ 114, 224: Տե՛ս նաև Henkelman W. F. M., Imperial Signature and Imperial Paradigm, p. 156.

[2136] Արիանոս, էջ 123; Ռուփոս, էջ 455:

[2137] Plutarch's Lives, Vol. VIII, Eumenes, XIX, 3, p. 136; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, p. 228.

րոսները[2138]: Նկատի ունենանք, որ համաձայն գոյություն ունեցող կարծիքներից մեկի՝ XIV սատրապության թամանները՝ Ավեստայի Sāma-ն[2139], Արաքոսիա աշխարհագրական անվան էթնիկական անվանումն է[2140]: Ավելի ուշ դարաշրջանում պարթևները «Սպիտակ Հնդկաստանի» անվան տակ հավանաբար նկատի են ունեցել Արաքոսիան[2141]:

Գանդարիները, որոնք հիշատակվում են դեռևս Ռիգվեդայում, Աթարվավեդայում, Մահաբհարաթայում, Ռամայանայում[2142], սովորաբար տեղադրվում են Քաբուլի ավազանում, Բակտրիայի և Փեշավարի ու վերջինիցս այն կողմ՝ դեպի արևմուտք ընկած տարածքի միջև[2143]: Գանդարայի մեջ մտնում էին նաև Ինդոսից արևելք ընկած տարածքները[2144]: Համաձայն մեկ այլ կարծիքի՝ Գանդարան տարածվել է Քաբուլի հովտի և ներկայիս Չարսադդայի միջև, Պևկելաոտիս-Փուշկալավաթիից արևմուտք[2145]:

Գանդարայի անունը պահպանվել է ներկայիս Ղանդահար[2146] անվան մեջ: Համաձայն Հեկատեոս Միլեթացու՝ Գանդարայի բնակիչները հնդիկներ էին[2147], որոնք հավանաբար Արիանոսի հիշատակած բակտրիացիների հարևան հնդիկներն են[2148]: Միանգամայն հնարավոր է, որ

[2138] Արիանոս, էջ 235; Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, с. 59, 114.
[2139] The Cambridge Ancient History, Vol. IV, p. 208.
[2140] Herzfeld E., The Persian Empire, pp. 332-334; Frye R., The History of Ancient Iran, p. 80.
[2141] Vogelsang W., Early Historical Arachosia..., p. 59.
[2142] Petrie C. A., Magee P., Histories, Epigraphy and Authority, p. 8.
[2143] The Cambridge Ancient History, Vol. IV, p. 194; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 486; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, S. 217; Vogelsang W., Gandharans, Bactrians, and Scythians: Who was Who in the Sixth Century B.C.?, in: Eastern Approaches: Essays on Asian Art and Archaeology, ed. T. S. Maxwell, Oxford University Press, 1992, pp. 2, 6.
[2144] Vogelsang W., Four short Notes on the Bisutun Text and Monument, IA, 1986, 21, p. 135; նույնի՝ The Achaemenids and India, pp. 97-98.
[2145] Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, pp. 11, 45; Dittmann R., Problems in the Identification of an Achaemenid and Mauryan Horizon in North-Pakistan, AMI, 1984, Band 17, p. 185. Հմմտ. Karttunen K., Gandhāra and the Greeks, BAI, New Series, Vol. 23, 2009, pp. 131-134.
[2146] Henkelman W. F. M., Imperial Signature and Imperial Paradigm, pp. 153-154.
[2147] Müller C., FHG, Vol. I, p. 12, fr. 178.
[2148] Արիանոս, էջ 97: Հմմտ. Peter M., Petrie C., Knox R., Khan F., Thomas K., The Achaemenid Empire in South Asia and Recent Excavations in Akra in Northwest Pakistan, AJA, 2005, Vol. 109, p. 714.

Սատտագյուտիայի տարածքը մասամբ մտնում էր Գանդարայի մեջ[2149]: Բացառված չէ, որ Սատտագյուտիայի կենտրոնն Աքրան էր՝ Բաննուի շրջանում[2150]: Հեկատեոս Միլեթացու մեկ այլ՝ տարընթերցումների տեղիք տված տեղեկությունում Կասպապյուրոսը, որը նույնանում է Հերոդոտոսի Կասպատյուրոս քաղաքին[2151], համարվում է գանդարիական քաղաք, որը գտնվել է սկյութների հակառակ կողմում կամ դիմաց[2152]: Հեկատեոսի տեղեկությունը բառացիորեն այն մասին է, որ Կասպապյուրոսը գանդարիական քաղաք է, սկյութական նավահանգիստ. «Κασπάπυρος πόλις Γανδαρική, Σκυθῶν ακτή» (վերջին բառը սրբագրել են ἀντίη)[2153]: Է. Գրանտովսկին կարծում է, որ սրբագրման կարիք չկա, քանի որ մ. թ. ա. VI դարի վերջին սկյութներն արդեն հասել էին Քաբուլի ստորին հոսանքի շրջան[2154]: Մեր կարծիքով, Հեկատեոսի մեջբերված տեղեկության սրբագրումը տեղին է, քանի որ Սակա երկիրը VII սատրապությունից բաժանված էր Բակտրիայով և XV սատրապության կասպերով[2155]: Մյուս կողմից էլ, օրինակ, Բեհիսթունի և Դարեհ Ա-ի Պերսեպոլիսի (DPe) արձանագրություններում Գանդարան, Սական հիշատակվում են հիմնականում կողք կողքի[2156], հետևաբար Սակա երկիրն ամբողջությամբ համապատասխանում է XV սատրապության տարածքին, և Գանդարայի հարևանությամբ՝ Կասպապյուրոսից հյուսիս-արևելք, գտնվել են սակ-սկյութները: Կասպապյուրոսը նույնացվել է հիմնականում Քաբուլի (հունարեն Καβουρα[2157]) հետ, սակայն հետաքրքիր է, որ սանսկրիտերենում Քաշմի-

[2149] Фрай Р., Наследие Ирана, с. 77.
[2150] Khan F., Knox R., Magee P., Thomas K., Petrie C., Akra: the Ancient Capital of Bannu, JAC, 2000, Vol. 23, № 1, p. 18; Peter M., Petrie C., Knox R., Khan F., Thomas K., The Achaemenid Empire in South Asia..., pp. 732-734; Magee P., Petrie C. A., West of the Indus-East of the Empire: The Archaeology of the Pre-Achaemenid and Achaemenid Periods in Baluchistan and the North-West Frontier Province, Pakistan, in: The World of Achaemenid Persia: History, Art and Society in Iran and the Ancient Near East, ed. by J. Curtis and St J. Simpson, London, 2010, pp. 508, 518.
[2151] Հերոդոտոս, III, 102; IV, 44:
[2152] Müller C., FHG, Vol. I, p. 12, fr. 179.
[2153] Литвинский Б. А., Древние кочевники, с. 164-165; Д. К. Ш., с. 185; Vogelsang W., Gandharans, Bactrians, and Scythians, pp. 2-3, 5. Վերջին հոդվածում հեղինակը չի բացառում Կասպապյուրոսի կապը կասպերի հետ (անդ, էջ 9), ինչը հնարավոր է:
[2154] Грантовский Э., Из истории восточноиранских племен на границах Индии, КСИНА, 1963, вып. 61, с. 25-26.
[2155] Խորխկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ 147-157; նույնի՝ Աքեմենյան Պարսկաստանի Սակա երկրի տեղադրությունը, ՎԷմ, 2012, թիվ 2, էջ 180-188:
[2156] Kent R., Նշվ. աշխ., էջ 117, 136:
[2157] Bailey H.W., Maka, p. 11.

րի անունը *Kasyapa pur* է[2158], ինչն աշխարհագրական առումով թույլ չի տալիս Կասպապյուրոսը տեղադրել Քաշմիրում, քանի որ վերջինս նույնանում է Պտղոմեոսի Կասպեյրային[2159]: Կասպապյուրոսի նույնացումը Մուլթան քաղաքի հետ[2160] հավանական չէ, քանի որ Գանդարայի տարածքը հարավային ուղղությամբ շատ է ընդարձակվում: Մուլթանի շրջանում սովորաբար տեղադրում են սատտագյուտներին[2161], սակայն հազիվ թե նրանք արաքոսիացիներից այդքան հեռու գտնվեին:

Ինչ վերաբերում է դադիկներին և ապարյուտներին, ապա նրանք հին պարսկական սեպագիր արձանագրություններում չեն հիշատակվում: Դադիկներին նույնացնում են Դարդիստանի կամ տաջիկների հետ[2162], իսկ ապարյուտները հավանաբար Պտղոմեոսի հիշատակած պարյուետներ-պարգյուետներն են, որոնց անունը սրբագրվել է պարյուետներ (ըստ Է. Հերցֆելդի՝ *pārvata «լեռնցիներ» բառից[2163])[2164]: Պարյուետներ-պարգյուետները տեղադրվում են Պարոպամիսի հարավային հատվածում և Արաքոսիայի հյուսիսային մասում, Ղազնիից արևելք և Քուրամի վերին հոսանքից հարավ ընկած տարածքում[2165]: Է. Գրանտովսկին աներկբա ընդունում էր, որ պարսյուետները (իրանական Parsava-ից) փաշտունների նախնիներն են[2166], ինչը հնարավոր է: Հետևաբար Հերոդոտոսի ապարյուտները Պտղոմեոսի պարսյուետներն են: Ապարյուտներ-պարսյուետները, թերևս, Արիանոսի նշած լեռնային հնդիկներն են[2167], որոնք համապատասխանում են փուշտունական ներկայիս ցեղերից մեկին՝ աֆրիդիներին կամ ափրիդիներին՝ Փեշավարից հյուսիս և Կոհատի շրջանում[2168]: Ապարյուտները կարող

[2158] DGRG, Vol. I, p. 558.
[2159] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VII, 1, 42.
[2160] The Cambridge Ancient History, Vol. IV, p. 202.
[2161] Vogelsang W., The Achaemenids and India, p. 98.
[2162] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 487.
[2163] Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 341:
[2164] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 18, 4; VI, 20, 3; Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 224, 234. Հմմտ. "A Commentary on Herodotus Books I-IV", p. 487.
[2165] Marquart J., Untersuchungen..., II, SS. 177-178; Грантовский Э., Из истории восточноиранских племен на границах Индии, с. 18.
[2166] Грантовский Э., Из истории восточноиранских племен на границах Индии, с. 22; նույնի՝ О восточноиранских племенах кушанксого ареала, с. 88.
[2167] Արիանոս, էջ 97:
[2168] Ганковский Ю. В., Народы Пакистана, М., 1964, с. 58; Фрай Р., Наследие Ирана, с. 75; The Cambridge Ancient History, Vol. IV, p. 203; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 487.

են նույնվացվել *pouruta*-ին (Mihir Yašt 14)[2169]:

Դադիկների և գանդարիների տեղադրության դեպքում, կարծում ենք, որ Հերոդոտոսի այն տեղեկությունը, թե VII սատրապության կազմում հիշատակված այդ ժողովուրդները Քսերքսեսի հունական արշավանքին հանդերձավորված էին բակտրիացիների նմանությամբ[2170], թերևս խոսում է այն մասին, որ դադիկներին և գանդարիներին պետք է փնտրել հենց բակտրիացիների հարևանությամբ[2171], դեպի հարավային ուղղությամբ, ինչը միանգամայն հնարավոր է: Ա. Օլմսթեդը նույնիսկ գտնում էր, որ մինչև Դարեհ Ա-ի վարչական վերափոխումները Գանդարան միացված էր Բակտրիային[2172], ինչը հնարավոր էր:

Այս տեսանկյունից հնարավոր է Արիանոսի կողմից հիշատակված բակտրիացիների հարևան հնդիկներին[2173] նույնացնել դադիկներ-դարդաների կամ գանդարիների հետ, ընդ որում՝ դադիկներին կարելի է ընդգրկել Գանդարայի մեջ:

Կտեսիասն աշխարհագրական առումով Բակտրիային ընդարձակ տարածք է հատկացնում՝ նրա կազմում ներառելով սոգդերին, գանդարիներին, դադիկներին[2174], այն դեպքում, երբ սոգդերը, ըստ Հերոդոտոսի, մտել են XVI սատրապության, իսկ գանդարիները և դադիկները՝ VII սատրապության կազմի մեջ: Մյուս կողմից Աքեմենյան դարաշրջանի բարձրաքանդակներում հնդիկները, սատտագյուտները և գանդարիները հագնված են միանման[2175], ինչը, անկասկած, մոտ էր իրականությանը:

[2169] Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, pp. 14-15.
[2170] Հերոդոտոս, VII, 66: Հմմտ. Литвинский Б. А., Древние кочевники..., с. 88, 110. Վարչական առումով Գանդարան սկզբում Բակտրիայի հետ կազմել է մեկ սատրապություն (տե՛ս Дандамаев М., Луконин В., Նշվ. աշխ., էջ 111):
[2171] Արիանոս, էջ 158:
[2172] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 144:
[2173] Արիանոս, էջ 97:
[2174] Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов..., с. 39-40. Ավելի ուշ Ալեքսանդր Մակեդոնացին Բակտրիայի կազմից կրկին առանձնացնում է Ինդոսից արևմուտք ընկած տարածքը, ի մեջ առյալ նաև Քաբուլի հովիտը, և դարձնում առանձին սատրապություն, որը հետո կրկին միացնում է Բակտրիայի սատրապությանը (տե՛ս Արիանոս, էջ 158, 222; Ռուփոս, էջ 455): Այս սատրապությունը համապատասխանում է գանդարիների կամ պարոպամիսադների (տե՛ս Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 82, p. 184) բնակության տարածքին: Պարոպամիսադները նույնացվել են պակտյուացիներին (տե՛ս Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 337):
[2175] Дандамаев М.А., Месопотамия и Иран..., с. 350.

Դադիկներին հնարավոր է նույնացնել Պտղոմեոսի Δαράδραι[2176]-ին, որոնք Ստրաբոնի Derdae[2177], Պլինիոս Ավագի Dardae[2178], Արիանոսի և Ռուփոսի դեղալացիներ[2179] անվանումներով հնդկական խոշոր ցեղերն են, որոնք խոսել են հնդիրանական համարվող դարդերեն լեզվով[2180]: Դարդախոս ժողովուրդների բնակության հիմնական տարածքը Հնդկաստանի Ջամմու և Քաշմիր նահանգն է, մասամբ ապրում են նաև Պակիստանի հյուսիսում և Աֆղանստանի հյուսիս-արևելքում: Հերոդոտոսը նրանց տեղադրում է Ինդոս գետի վերին հոսանքի շրջանում և Գիլգիթ գետի ավազանում, որտեղից Աքեմենյան արքունիքը ստանում էր հնդկական ոսկին[2181]: Դարդերը դարադաներ անունով հիշատակվում են դեռևս հին հնդկական տեքստերում[2182]: Նման լայն աշխարհագրության պայմաններում, հավանաբար, դարդերի երկրի արևմտյան մասն է մտել Աքեմենյան տերության կազմի մեջ[2183]: Ստրաբոնը հնդկաղնու փայտով հարուստ[2184] գանդարիների երկիրը՝ Գանդարիտիսը կամ Գանդարիսը, համարում է հնդկական տարածք[2185], որի մեջ մասամբ մտնում է նաև Հերոդոտոսի հիշատակած Պակտյուիկեն[2186]:

Հետաքրքիր է, որ Բեհիսթունի արձանագրության բաբելոներեն և էլամերեն տարբերակներում Գանդարան հիշատակվում է *Parupa-raesanna* ձևով (հին իրանական նշանակությամբ «ավելի բարձր, քան արծիվը»[2187] կամ էլ հին պարսկերեն **para-uparisaina* «Uparisaina-ի դիմացի [մարզ]», «լեռներից այն կողմ»[2188], այսինքն՝ Հինդուքուշից հարավ[2189])[2190], որը հունական Պարոպամիսն է[2191]: Վերջինս անտիկ աղբյուրներում հիշատակվում է նաև լայն աշխարհագրությամբ՝ տարածվելով նաև Հինդուքուշից հյուսիս ընկած շրջանների վրա[2192]: Աշխարհագրական առումով նաև հնարավոր է, որ որոշակի տարբերակում կա[2193] նույն սատրապության երկու անվանումների՝ Պարոպամիսի և Գանդարայի միջև. առաջին անվանումը տրվել է սատրապության լեռնային շրջաններին, իսկ երկրորդը՝ հարթավայրերին[2194]: Գանդարայի մայրաքաղաքներից մեկը Փուշկալավաթի-Պակելաոտիսն էր, որը նույնանում է Չարսադդա քաղաքի մոտ գտնվող Բալա Հիսար վայրին[2195]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ VII սատրապության տարածքն Աքեմենյանների համար ունեցել է առաջնակարգ ռազմավարական նշանակություն: Ըստ այդմ էլ, VII սատրապության տարածքի վարչական վերաձևումներն առաջին հերթին նպատակ ունեին ամրապնդելու կենտրոնական իշխանության ազդեցությունը տերության հյուսիսարևելյան ծայրամասում: Լայն առումով այս սատրապությունը կարելի է տեղադրել ներկայիս Աֆղանստանի արևելյան, Պակիստանի կենտրոնական և Հնդկաստանի ծայրհյուսիսային շրջաններում:

[2176] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VII, 1, 42.
[2177] Страбон, с. 656.
[2178] Pliny, Natural History, Vol. III, XI, 111, p. 500. Պլինիոս Ավագի անդարները կարելի է սրբագրել գանդարներ (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, VI, 67, p. 388):
[2179] Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, p. 43.
[2180] Ганковский Ю. В., Народы Пакистана, с. 56; The Cambridge Ancient History, Vol. IV, p. 203; Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, p. 10; Vogelsang, W., Gold from Dardistan. Some Comparative Remarks on the Tribute System in the Extreme Northwest of the Indian Subcontinent, in: La tribute dans l'empire Perse: Travaux de l'Institut d'Etudes Iraniennes de l'Université de la Sorbonne Nouvelle 13, 1989, Paris, p. 167.
[2181] Vogelsang, W., Gold from Dardistan, p. 168; Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, p. 19; Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, с. 229.
[2182] Ганковский Ю. В., Народы Пакистана, с. 58, 65; Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 341; Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, с. 222, 228-229.
[2183] Ганковский Ю. В., Народы Пакистана, с. 66; Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, p. 20.
[2184] Kent R., Նշվ. աշխ., էջ 143:
[2185] Страбон, с. 649, 651.
[2186] Հերոդոտոս, III, 102; IV, 44: Հմմտ. Массон В. М., Ромодин В. А., История Афганистана, с. 68.

[2187] Benedict W. C., Voigtlander von E., Darius' Bisitun Inscription, Babylonian Version, Lines 1-29, JCS, 1956, Vol. 10, № 1, p. 9. Հմմտ. Vogelsang W., The Achaemenids and India, p. 99 Frye R., The History of Ancient Iran, p. 104.
[2188] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 48-49:
[2189] Фрай Р., Наследие Ирана, с. 75.
[2190] The Sculptures and Inscription of Darius The Great on the Rock of Behistûn in Persia, a new collation of the Persian, Susian, and Babylonian texts, with English translations, ed. by L. W. King and R. C. Thompson, London, 1907, pp. 96, 161; Grillot-Susini F., Herrenschmidt C., Malbran-Labat F., La version élamite de la trilingue de Behistun: une nouvelle lecture, JA, 1993, Vol. 281, p. 21.
[2191] Արիանոս, էջ 222:
[2192] Ռուփոս, էջ 455:
[2193] Հմմտ. Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, SS. 79, 221.
[2194] Khan F., Knox R., Magee P., Thomas K., Petrie C., Akra: the Ancient Capital of Bannu, p. 19.
[2195] Magee P., Petrie C. A., West of the Indus-East of the Empire, p. 515; Petrie C. A., Magee P., Histories, Epigraphy and Authority, p. 13; Fleming D., Achaemenid Sattagydia and the Geography of Vivana's Campaigns (DB III, 54-75), p. 103.

4.6. XX սատրապության տեղադրությունը

Հին պարսկական և անտիկ աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աքեմենյան տերության կազմում եղել են չորս հնդկական սատրապություններ՝ Գանդարան և Սատտագյուտիան Արաքոսիայի՝ «Սպիտակ Հնդկաստանի»[2196] արևելյան հատվածում, Մական՝ ժամանակակից Մակրանը, Պակիստանի ծովափնյա անբերրի շրջանում ու իրանական Բելուջիստանում և վերջապես, այսպես ասած, բուն Հնդկաստանը[2197]՝ XX սատրապությունը, որի մասին տեղեկությունները սակավ են և կցկտուր, իսկ եղած աղբյուրներն էլ ժամանակագրական առումով հիմնականում վերաբերում են հետաքեմենյան դարաշրջանին:

Այսպես, Հերոդոտոսի համար ամենաբազմամարդ ազգը հնդիկներն են[2198]: Հնդկական սատրապության մասին առաջինը գրում է հույն պատմիչ Հերոդոտոսը. «Իսկ հնդիկները, լինելով մեզ հայտնի ազգերի մեջ բոլորից առավել մեծաթիվ, պարտավոր էին, մյուսների հետ համեմատած, բոլորից առավել հարկ վճարել՝ երեք հարյուր վաթսուն տաղանդ ոսկե ավազ. սա քսաներորդ նահանգն էր»[2199]: Հերոդոտոսի տեղեկությունից պարզվում է, որ հնդիկները սատրապությունների ցանկում էթնիկական առումով հիշատակվում են որպես հավաքական ամբողջություն՝ միավորված չլինելով մեկ կամ քանի ժողովուրդների ու երկրների հետ[2200]: Հնդիկները նաև միակ ժողովուրդն են, որն Աքեմենյան արքունիքին հարկը վճարել է ոսկե ավազով, ինչը, կարծես թե, խոսում է այս վարչական միավորի հարուստ լինելու մասին, չնայած որ, որոշ ուսումնասիրողների կարծիքով, հնդկական սատրապությունը չէր կարող նման վիթխարի գումար մուծել[2201]:

Հերոդոտոսի մեկ այլ կարևոր տեղեկության՝ Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի ցեղային կազմի նկարագրության մեջ հնդիկների մասին գրված է. «Հնդիկները հագել էին բույսից պատրաստած զգեստներ. նրանց աղեղները եղեգնյա էին, նետերը նույնպես եղեգնյա, բայց երկաթե ծայրերով: Այսպիսին էր հնդիկների զենքը. նրանց առաջնորդում էր Արտաբատեսի որդի Փառնազաթրեսը»[2202]: Հերոդոտոսի տեղեկությունից պարզվում է նաև, որ արևելքի եթովպացիները, այսինքն՝ XVII սատրապության ժողովուրդներից մեկը, արշավանքին միացված են եղել հնդիկներին[2203], սակայն, քանի որ առաջին տեղեկությունից երևում է, որ հնդիկներին առաջնորդել է Փառնազաթրեսը, ուրեմն Հերոդոտոսի երկրորդ տեղեկությունն այնքան էլ հստակ չէ: Բացառված չէ, որ Քսերքսեսը արևելյան եթովպացիներին, այսինքն՝ հնդիկների մի խմբին[2204]՝ որպես հարևաններ, կարող էր միավորած լինել, այսպես կոչված, բուն հնդիկների հետ, սակայն հույն հեղինակի տեղեկությունն ուղղակիորեն նման ենթադրության հիմք չի տալիս, հատկապես, որ XVII սատրապության կազմում հիշատակված երկրորդ ժողովուրդը՝ պարիկանիները, եղել են առանձին հրամանատարության տակ[2205]:

Պլատեայի ճակատամարտին պարսկական բանակի ռազմական դասավորության շարքում հնդիկները հիշատակվում են բակտրիացիների և սակերի միջև[2206], ինչը նաև աշխարհագրական համապատասխանություն է դրսևորում Աքեմենյան տերության արևելյան մասի վարչական համակարգում, եթե հնդիկներին տեղադրենք բակտրիացիներից արևելք:

Ընդհանուր առմամբ Հերոդոտոսի տեղեկությունները հնդիկների երկրի (հին պարսկերեն *Հինդուշ*, սանսկրիտերեն *Սինդհու*, եբրայերեն *Hdw*) մասին անորոշ են. չեն հիշատակվում Հնդկաստանի սատրապական կենտրոնը և սատրապները[2207], հունական աշխարհագրական միտքը դեռևս ոչինչ չգիտի Հնդկական թերակղզու և Գանգեսի ավազանի մասին[2208]: Օրինակ, պադայներ կոչված հնդիկների[2209] անվան մեջ ուսումնասիրողների մի մասը փորձել է տեսնել սանսկրիտերեն *padja* «չար, վատ» նշանակությունը, իսկ մյուս մասը՝ հարավային Հնդկաս-

---

[2196] Այսպես է անվանում Արաքոսիան Իսիդոր Քարակացին (տե՛ս Muller C., Geographi Graeci Minores, Vol. I, p. 254): Հնդկական սատրապության մասին մանրամասն տե՛ս նաև Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի VII սատրապության տեղադրության շուրջ, ԱՀ, 2016, № 11, էջ 270-283:

[2197] Fleming D., Where was Achaemenid India?, BAI, New Series, Vol. 7, Iranian Studies in Honor of A. D. H. Bivar, 1993, p. 67.

[2198] Հերոդոտոս, V, 3: Համմ. Ctesias' History of Persia, p. 126.

[2199] Հերոդոտոս, III, 94:

[2200] Կիլիկեցիները նույնպես միայնակ են հիշատակվում IV սատրապության կազմում, սակայն վերջինս ո՛չ տարածքով, ո՛չ հարկի չափով չի կարող համեմատվել հնդկական սատրապության հետ:

[2201] Дандамаев М., Ахеменидская империя, с. 150.

[2202] Հերոդոտոս, VII, 65:

[2203] Անդ, VII, 70:

[2204] Համմ. Страбон, с. 643; Vogelsang W., The Achaemenids and India, p. 104.

[2205] Հերոդոտոս, VII, 68:

[2206] Անդ, IX, 31:

[2207] Համաձայն Պերսեպոլիսի արխիվների տվյալների՝ մ. թ. ա. 499 թվականին հիշատակվում է Հինդուշի սատրապ Իրդուբաման (տե՛ս The Cambridge Ancient History, Vol. IV, p. 207):

[2208] The Cambridge History of India, Vol. I, p. 337.

[2209] Հերոդոտոս, III, 99:

տանի *Pandyas* կոչված դրավիդյան բնակչությանը[2210]: Հնդիկների մի մասն էլ, ըստ էության, Հերոդոտոսի կողմից այլուր հիշատակված կալատիներն են[2211], որոնք բնակվել են պարսիկներից հեռու՝ դեպի հարավ, և երբեք չեն ենթարկվել Դարեհ Ա-ին[2212]. կալյատիների անունը սանսկրիտերեն նշանակում է *kala* «սև»[2213]: Ինչևէ, հույն պատմիչի համար հնդիկների միայն մի մասն է գտնվել Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ՝ տարածվելով Ինդոսի (գետի անունից էլ ծագում է երկրի՝ Հինդուշի անունը[2214]) ստորին հոսանքի աջափնյա շրջանում, Մուլթանի և Կարաչիի միջև, արևմուտքում սահմանակցելով Բելուջիստանի, արևելքում՝ Հնդկական անապատի, հյուսիս-արևելքում՝ Գանդարայի և Սատտագյուտիայի հետ[2215]: Նշված տարածքը ներկայումս գտնվում է Պակիստանի կազմում: Նշենք նաև, որ Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություններից մեկում (*DPh*) Հինդուշը հիշատակվում է որպես Աքեմենյան տերության ծայրարևելյան սահմանում գտնվող երկիր[2216], ինչը հաստատվում է նաև այլ աղբյուրներով:

Համաձայն Հերոդոտոսի՝ Հնդկաստանը մ. թ. ա. մոտ 518 թվականին[2217] կամ 515 թվականին[2218] նվաճվել է Դարեհ Ա-ի կողմից, որի հրամանով մինչ այդ՝ հավանաբար մ. թ. ա. 519 թվականին[2219], Սկիլաքս Կարիանդացին Կասպատյուրոս՝ ներկայիս Քաբուլ քաղաքից և Պակտյուիկե երկրից (հմմտ. վեդայերեն *Paktah*[2220]) նավարկում է Ինդոս գետի հոսանքն ի վար՝ դուրս գալով Հնդկական օվկիանոս[2221]:

Քսենոփոնը հնդիկների նվաճումը վերագրում է Կյուրոս Մեծին[2222], սակայն այս դեպքում, ամենայն հավանականությամբ, պետք է նկատի ունենանք գանդարիներին, հատկապես որ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակիցները շարունակում էին մտածել, որ իրական Հնդկաստանը գտնվել է Ինդոսից այն կողմ[2223]: Հնդկական սատրապության և ընդհանրապես Հնդկաստանի մասին կարևորագույն աղբյուրը մնում են Արիանոսը և Ռուփոսը, որոնց տեղեկությունները թույլ են տալիս Ալեքսանդր Մակեդոնացու հնդկական արշավանքի ժամանակ որոշակի պատկերացում կազմել Աքեմենյան տերության ծայրարևելյան մասի վարչական կացության մասին: Համաձայն Արիանոսի՝ Ալեքսանդր Մակեդոնացին մ. թ. ա. 327 թվականի ամռանը[2224] Բակտրիայից շարժվում է հնդիկների երկիրը՝ անցնելով իր հիմնադրած Կովկասյան Ալեքսանդրիա (ներկայիս Բեգրամը[2225]) քաղաքով[2226]: Քաղաքն իր տարածքով մինչև Կոթեն՝ ներկայիս Քաբուլ գետը[2227], Ալեքսանդրը, որպես սատրապություն, տալիս է Տիրիեսպին[2228], այսինքն՝ խոսքը վերաբերում է պարապամիսադների նահանգին: Արիանոսի հետագա շարադրանքից պարզվում է, որ Կոթեն գետից այն կողմ արդեն Թաքսիլի իշխանության տարածքն էր, որը կամովին ընդունում է մակեդոնական թագավորի գերիշխանությունը[2229], սակայն հետագա տողերում հստակ պարզվում է, որ Թաքսիլի իշխանությունը տարածվում էր Ինդոսից արևելք: Կոթեն գետի մոտ Ալեքսանդրի բանակի մի մասը շարժվում է դեպի պևկելաոտների երկիրը՝ Ինդոսի ափին՝ ներկայիս Չարսադդա քաղաքի շրջանում[2230]: Բանակի մյուս մասն Ալեքսանդրի ղեկավարությամբ գրավում է ասպասիների, գուրեյցիների (գուրեյներ, հավանաբար Գարոյ՝ ներկայիս Փանջկոր գետի անունից[2231]) և ասակենների (սանսկրիտերեն գրականության մեջ *Aśvakas*) երկրները, որոնք համապատասխանում են ներկայիս Նավագային, Բաջաուրին, Դիրին և Սվաթին: Այս երկրներում Արիանոսը հիշատա-

[2210] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 498. Տե՛ս նաև The Cambridge History of India, Vol. I, p. 395.
[2211] Հերոդոտոս, III, 38; 97:
[2212] Անդ, III, 101:
[2213] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 436.
[2214] Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 145; Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 346:
[2215] The Cambridge Ancient History, Vol. IV, p. 204; "A Commentary on Herodotus Books I-IV", p. 493; Vogelsang W., The Achaemenids and India, p. 98.
[2216] Kent R., Old Persian, p. 136.
[2217] Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 13:
[2218] Frye R., The History of Ancient Iran, p. 104; The Cambridge Ancient History, Vol. IV, p. 203.
[2219] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 348.
[2220] "A Commentary on Herodotus Books I-IV", p. 613.
[2221] Հերոդոտոս, III, 102; IV, 44:
[2222] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 5, 35:
[2223] Пьянков И. В., Массагеты, соседи индийцев, «Средняя Азия в древности и средневековье (История и культура)», под ред. Б. Г. Гафурова и Б. А. Литвинского, М., 1977, с. 54; Tarn W. W., Alexander and the Ganges, JHS, Vol. 43, 1923, pp. 93-101.
[2224] The Cambridge Ancient History, Vol. VI, p. 826; History of Civilizations of Central Asia, Vol. II, p. 73.
[2225] History of Civilizations of Central Asia, Vol. II, p. 70.
[2226] Արիանոս, էջ 158:
[2227] The Cambridge History of India, Vol. I, p. 322.
[2228] Արիանոս, էջ 158, 222; Ռուփոս, 561:
[2229] Տե՛ս նաև Плутарх, Александр, LIX, Избранные жизнеописания, т. II, с. 420.
[2230] The Cambridge Ancient History, Vol. VI, p. 827.
[2231] Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, с. 263, 290.

կում է Արիգեյ և Մասագա-Maśakāvati (մասագետների անունի՞ց) քաղաքները[2232]. վերջինս ամենամեծն էր այդ տարածքներում և տեղադրվում է Զիարաթի մոտ՝ Չակդարայից 16 կմ դեպի հյուսիս[2233]: Ասակենների վրա Ալեքսանդրը սատրապ է նշանակում Սիսիկոտին[2234]:

Մասագայի գրավումից հետո մակեդոնացիները նվաճում են Բազիրա և Օրա քաղաքները, որոնցից առաջինը նույնանում է Բարիկոտին, իսկ երկրորդը՝ Ուդեգրամին[2235]: Այս նվաճումներն ամրապնդելու համար Ալեքսանդրն Ինդոս գետից արևմուտք ընկած հողերը դարձնում է առանձին սատրապություն՝ Նիկանորոսի ղեկավարությամբ[2236]: Արիանոսն այնուհետև մակեդոնական բանակի ճանապարհին հիշատակում է Ահորն սարը՝ ներկայիս Ունան, Օրոբատիդա քաղաքը՝ ներկայիս Շահբազգարհին, Էմբոլիմա քաղաքը (Ռուփոսի Էքբոլիման[2237])՝ անտիկ Ամբուլիման, ներկայիս Ամբելան[2238], Դիրտու քաղաքը: Ընդհանուր առմամբ հնդկական արշավանքի սկզբնական շրջանում Ալեքսանդրը գրավում է Կոթեն և Ինդոս գետերի միջև ընկած հնդկական երկրները:

Ինդոս գետի հակառակ ափին Ալեքսանդրին հանձնվում է Թաքսիլա խոշոր քաղաքը[2239], որը, ըստ որոշ կարծիքների, հիմնադրել է Դարեհ Ա-ն[2240]: Այստեղ Ալեքսանդրին հպատակություն է հայտնում նաև լեռնային հնդիկների՝ գանդարիների կամ, ավելի ճիշտ, սատտագյուտների թագավոր Աբիսարը[2241] կամ Էմբիսարը[2242]: Թաքսիլայում և

[2232] Արիանոս, էջ 161, 163, 165; Страбон, с. 644, 650; Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 84, 1, p. 186.
[2233] Литвинский Б. А., Древние кочевники, с. 165; Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, pp. 14, 42; History of Civilizations of Central Asia, Vol. II, pp. 74-75.
[2234] Արիանոս, էջ 193:
[2235] Անդ, էջ 77:
[2236] Արիանոս, էջ 166:
[2237] Ռուփոս, էջ 524:
[2238] Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, p. 53.
[2239] Արիանոս, էջ 174, 180: Տե՛ս նաև Страбон, с. 650.
[2240] Ганковский Ю. В., Народы Пакистана, с. 69.
[2241] Արիանոս, էջ 180: Համմտ. Ռուփոս, էջ 526: Աբիսարեսի թագավորությունը տեղադրում են Թաքսիլայից հյուսիս, արևելքում՝ Հյուդասպես գետից այն կողմ (տե՛ս Curtius Rufus, Histories of Alexander the Great, Book 10, p. 91), ինչը նույնացվում է սատտագյուտների բնակության տարածքին: Արիանոսը (Arrian, Indica,. 4) հիշատակում է աբիսարների ցեղի լեռնային շրջանը (տե՛ս Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, с. 235, 263):
[2242] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 87, 3, p. 190; Страбон, с. 650.

հարևան տարածքներում նշանակելով առաձին սատրապ՝ Ալեքսանդրը շարժվում է դեպի Հյուդասպես գետը՝ ներկայիս Ջհելումը, որից այն կողմ Պորի (փուրու ցեղի անունից) երկիրն էր: Վերջինիս հաղթելուց և նրա հարևան հնդիկներին՝ գլավգանիկներին կամ գլավսեմներին, հնազանդեցնելուց հետո Ալեքսանդրն այդ տարածքները մինչև ներկայիս Ռավի գետը տալիս է Պորի կառավարմանը[2243]: Վերջինիս հակառակորդն էր նույնպես Պոր անունը կրող ազգակից իշխանը[2244], որին Ստրաբոնը համարում է Գանդարայի տիրակալը[2245], սակայն դժվար է ենթադրել, որ Գանդարան արևելքում կարող էր հասնել այդքան հեռու՝ Ռավի գետը: Մյուս կողմից էլ պարզ է, որ Ստրաբոնը տվյալ տեղեկությունում Գանդարային տալիս է լայն աշխարհագրություն, այն դեպքում, երբ Գանդարան հիշատակում է նաև Քաբուլ գետի հովտում[2246]:

Այնուհետև Ալեքսանդրն անցնում է Ակեսին՝ ներկայիս Չենաբ գետը, Հիդրաոտ գետը՝ ներկայիս Ռավին, և շարժվում կափեյներ ցեղի վրա: Նրան նախ ենթարկվում են ադրաիստներ կոչված հնդկական ցեղերը, ապա ջախջախվում են կափեյները[2247], իսկ նրանց քաղաքը՝ Սանգալան (Լահորի և Ամրիտսարի մոտ) գրավվում է[2248]:

Մակեդոնացի աշխարհակալն իր ռազմարշավը շարունակում է դեպի Հիփաս (սանսկրիտերեն Վիպաշա)՝ ներկայիս Բեաս գետը[2249], նպատակ ունենալով գրավել գետից այն կողմ ապրող հնդիկներին: Սակայն մակեդոնական բանակը հրաժարվում է շարունակել արշավանքը, և Ալեքսանդրը մինչև Հիփաս գետն ընկած երկիրը հանձնում է Պորի կառավարմանը[2250]՝ վերադառնալով Հյուդասպես գետը, որտեղից նավատորմով պետք է հասներ Մեծ ծովը՝ Հնդկական օվկիանոս[2251]: Այստեղ պարզվում է, որ Ալեքսանդրը Բակտրիայից մինչև Ինդոս գետն ընկած տարածքը՝ որպես սատրապություն, տվել էր Փիլի-

[2243] Արիանոս, էջ 193; Ռուփոս, էջ 524; Страбон, с. 650; Плутарх, Александр, LX, с. 422.
[2244] Անդ, էջ 193-195:
[2245] Страбон, с. 651.
[2246] Անդ, էջ 649:
[2247] Անդ, էջ 651:
[2248] Արիանոս, էջ 196-198:
[2249] Pliny, Natural History, Vol. II, VI, 62, p. 384; Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, с. 219.
[2250] Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, SS. 238-239.
[2251] Արիանոս, էջ 205-206:

պոսին[2252], այսինքն՝ այս տարածքը, կարծես թե, համապատասխանում էր նախկին VII սատրապությանը:

Գետի հոսանքն ի վար նավարկելիս Ալեքսանդրը հնազանդեցնում է բազմաթիվ հնդկական ցեղերի, այդ թվում նաև մալերին, օքսիդրակներին[2253], սոգդերին կամ սոդրերին[2254], օսադներին, իսկ Փիլիպոսի սատրապության սահմանները հասցրեց մինչև Ակեսինի (ներկայիս Տրիմաբը համարելով նրա շարունակությունը) և Ինդոսի միախառնվելու վայրը, որտեղից մինչև օվկիանոս ընկած տարածքի սատրապ էլ նշանակում է Պիթոնեսին՝ տալով նաև հնդկական հողի ողջ ծովափնյա գոտին[2255]: Պիթոնեսի սատրապությունն էլ հենց համապատասխանում է XX սատրապության տարածքին:

Ալեքսանդրը, շարունակելով իր երթուղին, հպատակեցնում է նաև հնդիկ տիրակալներ Մուսիկանին և Սամբիին (*Çambhu*?)[2256], որոնց անուններում արտացոլված են հին հնդկական ցեղեր *Mūsikas*-ի կամ *Mausikas*-ի և *Sammas*-ի անունները, ինչպես նաև Պատալա քաղաքը՝ ներկայիս Թաթտան[2257]: Պատալա քաղաքից Ալեքսանդրը գնում է դեպի Արաբիա գետը՝ ներկայիս Հաբը՝ նվաճելով արավաներ-արաբիտների[2258] և օրեյտների կամ օրիտների՝ «լեռնցիների» (ներկայիս Լաս Բելան) երկրները[2259]: Այստեղից Ալեքսանդրը շարժվում է դեպի շոգ Գեդրոսիա[2260]: Հասնելով մայրաքաղաք Պուրա (թերևս Բամփուրն է[2261])՝ Գեդրոսիայի (Մակայի[2262]) սատրապ նշանակում է Սիբիրտիոսին՝ Կարմանիայի նախկին սատրապին. Սիբիրտիոսին ենթարկվում էին նաև արաքոսիացիները[2263]:

[2252] Անդ, էջ 207, 235: Հմմտ. Rufus, Vol. II, X, I, 20-21, p. 478; Curtius Rufus, Histories of Alexander the Great, Book 10, p. 91.
[2253] Տե՛ս նաև Ռուփոս, էջ 547; Страбон, с. 652; Плутарх, Александр, LXIII, с. 423.
[2254] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 102, 4, p. 204.
[2255] Արիանոս, էջ 222:
[2256] Տե՛ս նաև Ռուփոս, էջ 561, 563; Страбон, с. 647; The Cambridge History of India, Vol. I, p. 377.
[2257] History of Civilizations of Central Asia, Vol. II, pp. 85.
[2258] The Cambridge History of India, Vol. I, p. 380.
[2259] Արիանոս, էջ 229; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, XVII, 104, 8; 105, 1-3, pp. 206-207; Arrian, Indica, 24, 1; 26, 1: Տե՛ս Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, с. 277.
[2260] Страбон, с. 670.
[2261] Curtius Rufus, Histories of Alexander the Great, Book 10, p. 80.
[2262] Frye R., The History of Ancient Iran, p. 113; Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, SS. 233, 248-249.
[2263] Արիանոս, էջ 235; Ռուփոս, էջ 568:

Մենք ամբողջությամբ մեջբերեցինք խնդրո առարկա դարաշրջանի Հնդկաստանի մասին անտիկ տեղեկությունները: Պարսկական սեպագիր արձանագրություններում Հնդկաստանը բազմիցս է հիշատակվում, սակայն այդ տեղեկությունները լրացուցիչ քննության հնարավորություն չեն տալիս: Այսպես, Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվում են Գանդարան, Սատտագյուտիան, Արաքոսիան և Մական այն դեպքում, երբ Հինդուշը հիշատակվում է ավելի ուշ շրջանի սեպագիր արձանագրություններում[2264]: Միաժամանակ տեղեկանում ենք, որ Հինդուշը, Արաքոսիան և Քուշը՝ Եթովպիան, Սուզայի պալատների կառուցման համար փղոսկր են ուղարկել[2265]: Պարզվում է նաև, որ մ. թ.ա. V դարում Նիպպուրի մոտ գտնվել են նաև հնդիկներից կազմված ռազմական գաղութներ[2266]:

Ահա այսպես են մեզ ներկայանում Աքեմենյան Պարսկաստանի XX սատրապության վարչական կացության և պատմաաշխարհագրական նույնացումների ու տեղադրությունների հարցերը:

[2264] Kent R., Նշվ. աշխ., էջ 117, 136:
[2265] Անդ, էջ 143: Տե՛ս նաև Дандамаев М., Ахеменидская империя..., с. 223.
[2266] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 351, 353.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

5.1. Վարչական բաժանման սկզբունքն Աքեմենյան Պարսկաստանում

Մասնագիտական գրականության մեջ սատրապությունների թվարկման հերթականությունը միշտ էլ տարակարծությունների տեղիք է տվել: Օրինակ, Ի. Դյակոնովի կարծիքով, պատմահայր Հերոդոտոսի ցուցակում սատրապությունները թվարկված են նրանց՝ Մարական, այնուհետև Աքեմենյան տերությանը միացնելու հերթականությամբ[2267]. Նրա համոզմամբ I-XII սատրապությունները առաջ են տարվել Հոնիան առանձնացնելու համար, և այս խումբը պետք է հաջորդեր XIII-XVII (կամ XVIII) սատրապություններին: Համաձայն մեկ այլ տեսակետի՝ արևմտյան սատրապությունների առաջինը հիշատակվելը պարզապես պայմանավորված է հին հունական ավանդույթներով (օրինակ, տրոյական պատերազմում հակառակորդ բանակների նկարագրությունը) կամ հոնիական աշխարհագրական պատկերացումներով[2268], այսինքն՝ խոսքը վերաբերում է Հերոդոտոսի հելլենակենտրոն մտածողությանը:

Մեր կարծիքով, արևմտյան սատրապություններին և առաջին հերթին փոքրասիական սատրապություններին վարչական տեսանկյունից նախապատվություն տալը պայմանավորված էր ոչ միայն այդ երկրների համար խորթ պարսկական տիրապետության ամրապնդման մտահոգությամբ, այլև ռազմավարական տեսանկյունից ավելի հեռուն գնացող ծրագրերով, որոնք երկար սպասեցնել չտվեցին:

Հաստատելով իր նախորդների տիրապետությունների սահմանները և իր հերթին նույնպես ընդլայնելով կայսրության սահմանները՝ Դարեհ Ա-ն՝ որպես հեռատես պետական գործիչ, լավ էր հասկանում, որ պարսից տիրապետության ամրապնդման հեռանկարները Փոքր Ասիայում, Թրակիայում, Էգեյան ծովի կղզիներում անկայուն կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ Բալկանյան թերակղզու հույները

[2267] Дьяконов И. М., История Мидии, с. 342 և այլն: Ջ. Քամերոնի կարծիքով, խոսքը ոչ թե սատրապությունների ցուցակի մասին է, այլ թվարկվում են սոսկ հպատակ ժողովուրդները (տե՛ս Cameron G. G., The Persian Satrapies and related matters, JNES, Vol. 32, 1973, № 1-2, pp. 47-56):

[2268] Armayor O. K., Herodotus' Catalogues of the Persian Empire..., pp. 1-9.

կպահպանեն իրենց քաղաքական ազատությունը: Այս էր պատճառը, որ Դարեհը վարչական վերափոխումները նախ և առաջ սկսեց արևմտյան Փոքր Ասիայում, քանի որ այս շրջանները պետք է հանդիսանային այն սկզբնական ամրակետը, որտեղից սկսվելու էր պարսից արտաքին քաղաքական ծավալման նոր փուլը՝ սկզբում դեպի սևծովյան սկյութական տարածությունները, այնուհետև՝ Բալկաններ: Եվ շատ չանցած՝ մ. թ. ա. 499 թվականի հոնիական ապստամբությունը ցույց տվեց Դարեհի քաղաքական հեռատեսությունը:

Վարչական վերափոխումները Փոքր Ասիայից սկսելը պայմանավորված էր նաև մի շատ կարևոր հանգամանքով, այն է՝ Բեհիսթունի արձանագրությունում Եփրատից այն կողմ՝ արևմուտք ընկած ոչ մի երկիր չի հիշատակվում Դարեհի դեմ ապստամբած մյուս երկրների շարքում, ինչը և զգալիորեն պայմանավորել է, որ ապստամբությունների ճնշումից հետո վերափոխումները սկսվեին համեմատաբար կայուն այդ տարածքներից[2269]: Այս համատեքստում հետաքրքիր է Բ. Հարությունյանի այն տեսակետը, թե սատրապությունների թվարկման հերթականությունը պայմանավորված է նրանց ձևավորման ժամանակագրական հերթականությամբ: Համաձայն այդ տեսակետի՝ սատրապությունների կազմավորումը ժամանակագրական հերթականությամբ բաժանվում է հինգ փուլերի. ա) I-VI սատրապությունները, բ) VII-XI սատրապությունները, գ) XII-XIII սատրապությունները, դ) XIV-XVII սատրապությունները և ե) XVIII, XIX, XX սատրապություններ[2270]: Ժամանակագրական փուլերի առանձնացումը ցույց է տալիս, որ աշխարհագրական հերթականությունը ցուցակում գրեթե պահպանված չէ, քանի որ այս կամ այն սատրապությունը տվյալ աշխարհագրական միջավայրից (օրինակ՝ արևմուտքից) անմիջապես թռիչք է կատարում Միջին Ասիա և, ընդհակառակը, արևելյան շրջաններից՝ դեպի հարավ: Աշխարհագրական հերթականությունը պահպանվում է VIII-XI, XV-XVI, XVIII-XIX սատրապությունների պարագայում: Եվ ընդհանրապես, ինչպես պարսկական սեպագիր արձանագրություններում

[2269] Հերոդոտոսը հաղորդում է, որ Դարեհի համար ծանր ժամանակներում Փռյուգիայի, Լյուդիայի, Հոնիայի սատրապ Օրոյտեսը չի օգնում արքային և զբաղված էր չարագործություններ կատարելով (Հերոդոտոս, III, 120-128), սակայն Օրոյտեսի վերաբերմունքը Դարեհի նկատմամբ չի վերածվում բացահայտ զինված անհնազանդության և շուտով գահի վրա ամրապնդված Դարեհի հրամանով Օրոյտեսը սպանվում է:

[2270] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 49-53:

թվարկվող երկրները, այնպես էլ սատրապությունները թվարկվում են ոչ խիստ ընդգծված աշխարհագրական հերթականությամբ:

Մեր կարծիքով, սատրապությունների ձևավորման նման ժամանակագրական պայմանականությունը բացատրվում է այն քաղաքականությամբ, որը Դարեհ Ա-ն իրականացրեց ապստամբ երկրների նկատմամբ, որպեսզի հնարավորինս կանխի հետագա խռովությունները պետության դեմ: Վերևում նշեցինք, թե ինչով էր պայմանավորված նախ կայսրության արևմտյան հատվածում (I-VI սատրապությունները) վարչական վերափոխումների իրականացումը: Մեր համոզմամբ, կայսրության համեմատաբար խաղաղ շրջաններում սատրապությունների ձևավորումից հետո պարսից արքունիքի ուշադրությունը կենտրոնանում է արդեն այն երկրների վրա, որոնք չէին ընդունել Դարեհի թագավորական իշխանությունը և ապստամբել էին նրա դեմ:

Այսպես, VI սատրապությունից հետո հիշատակվող սատրապություններն ուղղակի կամ անուղղակի եղել են կա՛մ որպես ապստամբ երկրներ, կա՛մ էլ պատերազմական գործողությունների թատերաբեմ: VII սատրապության մեջ, ի թիվս այլ ժողովուրդների, հիշատակվում են նաև սատտագյուտները, իսկ Բեհիսթունի արձանագրությունում Դարեհը Սաթագուշը հայտարարում է ապստամբ երկիր՝ չնայած արձանագրության հետագա շարադրանքում ավելի ստույգ տեղեկություններ չի տալիս[2271]: Բեհիսթունի արձանագրության պարսկերեն տեքստում (նաև էլամերեն տարբերակում) Դարեհն Արաքոսիայում Վահյազդատայի ուղարկած բանակին հաղթելուց հետո հայտնում է, որ այդ էր իր կատարածը Արաքոսիայում[2272]: Սակայն արձանագրության աքքադերեն տարբերակում Դարեհը, խոսելով նույն իրադարձությունների մասին, հայտնում է Սատտագյուտիայի Գանդատամակի (պարսկերեն տեքստի Գանդուտավան է) վայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին և վերջում ավելացնում, որ այդ է իր կատարածը Սատտագյուտիայում և Արաքոսիայում[2273]: Բերված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Սատտագյուտիայում Դարեհի բանակը գործել է

[2271] Արձանագրությունում Եգիպտոսը ևս հայտարարված է ապստամբ երկիր, բայց այլ տեղեկություններ նրա մասին չունենք: Մեզ համար առավել ընդունելի է Է. Բիքերմանի կարծիքը, համաձայն որի՝ Եգիպտոսում Դարեհի կառավարման սկզբին ոչ մի ապստամբություն էլ չի եղել, եթե չհաշվենք Լիբիայի ժամանակավոր անջատումը և անկախությունը (հարցի մանրամասն քննությունը տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 104-105):

[2272] Kent R., Նշվ. աշխ., էջ 128:

[2273] Malbran-Labat F., La version akkadienne..., pp. 117-118.

Արաքոսիային սահմանակից շրջանում և, հավանաբար, Վահյազդատայի ուղարկած բանակին հաղթելուց հետո Արաքոսիան մտնում է VII սատրապության մեջ: Փաստորեն, ինչպես տեսնում ենք, չնայած Վահյազդատան Արաքոսիայում և Սատտագյուտիայում պատերազմում էր Վիվանայի դեմ իր ուղարկած բանակով, այդուհանդերձ VII սատրապությունը կարելի է համարել այն սատրապություններից մեկը, որտեղ տեղական իշխանությունը հանձին Արաքոսիայի սատրապ Վիվանայի պահպանում է հավատարմությունը Դարեհի նկատմամբ: Այսինքն՝ Դարեհը վարչական վերափոխումները նախ իրականացնում է կայսրության համեմատաբար կայուն նահանգներում՝ I-VII սատրապություններում, որից հետո ձեռնամուխ է լինում արդեն այն նահանգների վարչական վերափոխումների իրականացմանը, որոնք նրա գահակալության առաջին տարիներին դիմել էին բացահայտ զինված ապստամբության և չէին ճանաչել նրա իշխանությունը: Ապստամբ այդ երկրների մի մասը այս կամ այն վարչական փոփոխություններով մտնում են VIII-XI սատրապությունների մեջ:

Արևմուտքում ամբողջությամբ և արևելքում մասամբ վարչական վերակազմություններ կատարելուց հետո Դարեհն իր ուշադրությունը կենտրոնացնում է կայսրության կենտրոնական նահանգների վրա, որոնք խռովությունների ժամանակահատվածում կրել էին մարդկային և նյութական մեծ կորուստներ, այսինքն՝ տվյալ նահանգներում նոր խռովությունների վտանգ վերափոխումների տվյալ փուլում այլևս հնարավոր չէր, և միանգամից կազմավորվում են 4 սատրապություններ: Սպասելի էր, որ այս երկրների հետ Հայաստանը ևս կենթարկվեր վարչական վերակազմության, սակայն հաջորդ երկիրը, որն իր հավատարմությունը պահպանել էր Դարեհի նկատմամբ ապստամբությունների ժամանակաշրջանում, Բակտրիան էր, որը մինչև Այգլերի երկիրն ընդգրկվեց XII սատրապության կազմի մեջ: Արդեն իսկ նկատված աշխարհագրական նմանատիպ թռիչքային փոփոխությունները ցույց են տալիս, որ պարսից արքունիքն ընդհանրապես խուսափում էր ամբողջական վարչական վերափոխումներ իրականացնել միևնույն աշխարհագրական տարածքում, և այդպիսի կտրուկ թռիչքները հանդիսանում էին ընդհանուր վարչական վերափոխումների շղթայի միջանկյալ օղակները, որոնք կայսրության տվյալ հատվածում մինչև մյուս սատրապության կամ սատրապությունների ձևավորումը ամուր հիմք պետք է հանդիսանային վարչական բնույթի հետագա գործողությունների իրագործման համար: Եվ, բնականաբար, այդ ճանա-

պարհին եղած դժվարությունները պարսից արքունիքը փորձում էր լուծել ոչ թե միանգամից և ուժերի մեծ լարումով, այլև հատված առ հատված, ինչը թույլ կտար տեղերում կայսերական քաղաքականությունն իրականացնել առավել արդյունավետ և հեռատեսորեն:

Այս իսկ պատճառով հաջորդ երկիրը, որը համառ և երկարատև դիմադրություն էր ցույց տվել Դարեհին, Հայաստանն էր, որ ենթարկվեց վարչական վերակազմության և ներառվեց XIII սատրապության մեջ[2274]: Ըստ էության պարսից արքունիքի համար Հայաստանի նշանակությունն այնքան զգալի է եղել, որ վերջինս չէր միավորվել VIII-XI սատրապությունների հետ վարչական վերակազմության նույն փուլում: XIII սատրապությանը հաջորդող XIV սատրապության կազմում հիշատակվող ուտիները թերևս կապված էին Դարեհի դեմ ապստամբած ժողովուրդների հետ:

Բեհիսթունի արձանագրության մեջ հիշատակված Յաուտիյան, որի Թարավա քաղաքում ապստամբեց Վահյազդատան[2275], Յ. Մարքվարտի կողմից նույնացվել է XIV սատրապության ուտիներին[2276] , որոնք հավանաբար Վահյազդատային օգնելու համար դուրս են բերվում Պարսքի կազմից և հարկատու դառնում: XV և XVI սատրապությունները սահմանակցել են Բակտրիական սատրապությունից հյուսիս ընկած շրջանում[2277]: XV սատրապության սակերը, հավանաբար, մասամբ կապված են Բեհիսթունի արձանագրության V սյունակում հանդես եկող սակերին[2278], իսկ XVI սատրապության պարթևները վրկանների հետ միասին ապստամբել էին Դարեհի դեմ: Պարիկանիներից և Ասիայի եթովպացիներից կազմված XVII սատրապությունը խռովությունների ժամանակաշրջանում խաղաղ էր մնացել, և այս սատրապության ձևավորումը հող նախապատրաստեց քիչ ավելի ուշ հար-

[2274] Է. Հերցֆելդը Հայաստանը համարում է X սատրապությունը՝ վերջինիս մեջ ընդգրկելով նաև XVIII և XIX սատրապությունների ցեղերին (տե՛ս Herzfeld E., The Նշվ. աշխ., էջ 313; Hewsen R., The Boundaries of Achaemenid «Armina», RÉA, t. XVII, 1983, pp. 123-143):

[2275] Kent R., Նշվ. աշխ., էջ 127:

[2276] Marquart J., Ērānšahr, S. 30. Ապստամբությանը ուտիների մասնակցության մասին տե՛ս Дандамаев М. А., Восстание Вахьяздаты, с. 19.

[2277] Տե՛ս, օրինակ, Հարությունյան Բ. Հ., Հայաստանի պատմության ատլաս, էջ 17:

[2278] Մ. Դանդամաևը այս սակերին նույնացնում է տիգրախաուդա սակերի հետ, սակայն կարծում է, որ Դարեհի արշավանքը պատժիչ բնույթ չի ունեցել, քանի որ նրանք մինչև Դարեհն անկախ են եղել (տե՛ս Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 103): Սակայն պետք է նկատի ունենալ, որ Սակա երկիրը Դարեհի կողմից հիշատակվում է ապստամբ երկրների շարքում:

ևան՝ XX սատրապության կազմավորման համար: Վարչական վերափոխումների արդյունքում առաջացած XVIII և XIX պահմանային սատրապությունները ձևավորվում են Սև ծովի հարավարևելյան և Կովկասյան մեծ լեռնաշղթայից հարավ ընկած շրջաններում[2279]: Հարավում հզոր և հարուստ Սատրապական Հայաստանի առկայությունը թույլ է տալիս պարսից արքունիքին էթնիկական առումով խայտաբղետ այդ շրջաններում միանգամից ձեռնամուխ լինել երկու սատրապությունների ձևավորմանը: Իսկ վարչական վերակառուցումների վերջին փուլում ծայր արևելքում կազմավորվում է XX՝ հնդկական սատրապությունը: Սակայն սրանով վերջանում է սոսկ սատրապական ցուցակը, որտեղ թվարկվում են 20 սատրապությունները:

Իրականության մեջ գոյություն ուներ ավելի ուշ ձևավորված XXI սատրապությունը, որը սեպագիր արձանագրություններում արտացոլված է Սկուդրա, «անդրծովյան սկյութներ» և «վահանակիր հույներ» աշխարհագրական անունների տակ: Այսպիսով, առաջանում է վարչական բաժանման մի համակարգ, որի ձևավորման սկզբունքն ուղղակիորեն հիշատակում է Հերոդոտոսը: Պատմահայրը գրում է.«Յուրաքանչյուր ազգի նա (իմա՛ Դարեհ Ա-Խ. Հ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը»[2280]: Ինչպես տեսնում ենք, բերված տեղեկության մեջ արտացոլված է վարչական բաժանման երկու սկզբունք: Առաջինն այն էր, որ պարսից արքունիքը միևնույն ժողովրդին ընդգրկում էր ոչ թե տարբեր սատրապությունների մեջ, այլ մի քանիսին ներառում էր մեկ վարչական միավորի մեջ: Հարկավ, ինչպես իրավացիորեն նկատվել է, սատրապությունների ստեղծումով վարչական բաժանման հիմքում դրվեց միանգամայն նոր գաղափար՝ վարչական մեկ միավորի մեջ ներառել մի քանի երկրներ կամ ժողովուրդներ, որոնց գլուխ կանգնած պարսից սատրապը միշտ էլ կարող էր, նրանց միմյանց դեմ գրգռելով և հակադրելով, ապահովել պարսից գերիշխանությունը կամ տիրապետությունը[2281]: Ինչ վերաբերում է երկրորդ սկզբունքին՝ «հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը», ապա այս սկզբունքի արտացոլումը Հերոդոտոսի մոտ այնքան էլ

[2279] Այս սատրապությունների տեղադրության մասին մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը..., Գլուխ Բ, Գ:

[2280] Հերոդոտոս, III, 89:

[2281] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 50:

հստակ չէ: Անշուշտ, հարցի լուծման բանալին պետք է փնտրել հենց նույն սատրապությունների ցուցակում, և ըստ այդմ էլ, այս հարցում մեր պարզաբանումներն այսպիսին են: Հեռավոր ազգությունները պետք է այլ կարգավիճակ ունենային, որպեսզի չհիշատակվեին հենց սատրապությունների կազմում, մյուս ժողովուրդների հետ միասին: Իսկ միևնույն սատրապության ցեղերից մեկին փնտրել տվյալ սատրապության սահմաններից հեռու, հակասում է պարսից արքունիքի վարչական քաղաքականության սկզբունքներին, ինչպես ենթադրում է, օրինակ, Ի. Պյանկովը[2282]: Վերջինս IX սատրապության օրթոկորյուբանտիներին՝ հին պարսկական արձանագրությունների տիգրախաուդա սակերին, նույնացնում է դերբիկների հետ և տեղադրում Կասպից և Արալյան ծովերի միջև, իսկ XII սատրապության մեջ հիշատակվող Այգլերի երկիրն էլ նույնացնում է Պտղոմեոսի Αὐγαλοί-ին[2283], որը Բակտրիայից բաժանված էր սոգդերով[2284]:

Մեր կարծիքով, հեռավոր ազգություններն այն ժողովուրդներն էին, որոնք Դարեհին, բացի հարկերից, ինչպես վկայում է Հերոդոտոսը, նաև ընծաներ էին մատուցում[2285] և մասնակցել են Քսերքսեսի հունական արշավանքին: Եթովպացիները, կոլխերը և նրանց հարևանները, արաբները՝ որպես ծայրամասային ժողովուրդներ, այլ հարաբերություններով էին կապված Աքեմենյան Պարսկաստանի հետ, քանի որ նրանց բնակության շրջաններում պարսից իշխանությունն ավելի թույլ էր, և նշված ցեղերն ունեին որոշակի առավելություններ մյուս ժողովուրդների նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ նրանք ընծա-

[2282] Хорикян О. Г., Об этническом составе X сатрапии ахеменидской Персии, с. 128-132.

[2283] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 12, 4. Սակայն մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ խոսքը Բակտրիայի մեջ մտնող Մարգիանայի մասին է (տե՛ս Sarre F., Herzfeld E., Iranische Felsreliefe, S. 26): Ինչևէ, «բակտրիացիներից մինչև Այգլերի» ցույց է տալիս, որ այս երկրները անմիջական հարևաններ են եղել: Եթե ինչ-որ տեղ կարծենք, որ Այգլերի երկիրը գտնվել է Մարգիանայում, ապա Մարգիանայում ապստամբությունն արյան մեջ խեղդելուց հետո Դարեհը, հավանաբար, քաղաքական նպատակներով վարչաքաղաքական կացությունը տեղում ձևավորել էր նոր, հավատարիմ ցեղի, թերևս սկյութականի (իմմտ. Массон В. М., Древнеземледельческая культура Маргианы, с. 149; Junge J., Orthokorybantioi, col. 1486) շուրջ: Չի բացառվում, որ Այգլերի երկիրը գտնվել է XII սատրապության ծայր հյուսիսում, որտեղ սկյութական տարրի առկայությունն ակնհայտ էր:

[2284] Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов..., с. 43-44, прим. 68.

[2285] Հերոդոտոս, III, 97; Herodotus, Vol. II, III, 97; Геродот, III, 97.

ներ և հարկեր էին մատուցում պարսից արքունիքին, այդուհանդերձ նրանց պարտավորությունները համեմատաբար մեղմ էին: Սակայն պետք է ասել, որ ժամանակ առ ժամանակ նրանց պարտավորությունները եղել են նույնը, ինչ որ մյուսներինը: Օրինակ՝ Քսերքսեսի ժամանակ նշված ժողովուրդները պարտադիր կերպով մասնակցել են հունական արշավանքին, ընդ որում, նրանցից կազմված զորամասերը գլխավորել են պարսիկ զորահրամանատարները: Հետաքրքիր է նաև, որ եթովպացիների, կոլխերի, արաբների շարքում հիշատակվում են Նյուսե սրբազան երկրի բնակիչները, որոնց Հերոդոտոսը տեղադրում է Հնդկաստանում, ասիական եթովպացիների երկրում[2286]: Սակայն դատելով այն հանգամանքից, որ Նյուսեի և եգիպտոսին սահմանակից եթովպացիներն ընծաները միասին են բերում, նշանակում է, որ Նյուսե սրբազան երկիրը նույնպես գտնվել է արևմտյան եթովպացիների երկրում[2287]: Եթե կոլխերի պարագայում կարելի է ասել, որ միացված են եղել XIX սատրապությանը[2288], ապա եթովպացիները վարչական առումով, ըստ էության, միացված են եղել եգիպտական սատրապությանը, իսկ արաբները կարող էին հանդես գալ և՛ V, և՛ IX սատրապությունների կազմում, չնայած Քսերքսեսի հունական արշավանքին արաբները և արևմտյան եթովպացիները միավորվում են մեկ հրամանատարության ներքո, ընդ որում, նրանց առաջնորդում է Արսամեսը՝ Դարեհի և Արիստոնեի՝ Կյուրոսի դստեր որդին[2289], ինչը, իրոք, վկայում է նրանց առանձնահատուկ կարգավիճակի մասին: Պարսկական սեպագիր աղբյուրներում եթովպիան հիշատակվում է Քուշ անվան ներքո, որը Դարեհը համարում է իր տերության երկրներից մեկը, որտեղ ձգվում էին թագավորության սահմանները, և որտեղից բերվում էր արքունիքին անհրաժեշտ փղոսկրի մի մասը[2290], ինչի մասին գրում է նաև Հերոդոտոսը: Հետևաբար, եթովպացիների վրա պարսիկների իշխանությունն իրական էր, քանի որ կոլխերի դեպքում էլ Հերոդոտոսը նշում է, որ պարսիկները տիրում էին մինչև Կովկաս լեռը: Ինչ վերաբերում է արաբներին, ապա նրանց մասին խոսել ենք վերևում և վերջում ավելացնենք միայն, որ իրականության մեջ կային արաբական որոշ ցեղեր, որոնց հետ պարսիկների հարաբերությունները դաշ-

[2286] Անդ:

[2287] Համմտ. Herodotus, III, 97, ծնթ. 1, էջ 125: «Probably the mountain called Barkal in Upper Nubia; this is called "sacred" in hieroglyphic inscriptions».

[2288] Խորհկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության..., էջ 114-126:

[2289] Հերոդոտոս, VII, 69:

[2290] R. Kent. Նշվ. աշխ., էջ 136, DPh; էջ 143, DSf.

նակցային էին և այդ ցեղերը վարչական առումով ոչ մի հարաբերություն չունեին Աքեմենյան Պարսկաստանի սատրապական համակարգի հետ:

5.2. Սկուդրայի վարչական կարգավիճակն Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգում

Հույն պատմիչ Հերոդոտոսը, թվարկելով Աքեմենյան Պարսկաստանի քսան սատրապությունները և դրանց վճարած հարկաչափը, գրում է, որ «ահա այս հարկերն էին գալիս Դարեհին Ասիայից և Լիբիայի մի փոքր հատվածից: ***Ժամանակ անց հարկ է սպացվում նաև կղզիներից ու Եվրոպայում մինչև Թեսալիա*** (ընդգծումը մերն է-Հ. Խ.) ապրողներից»[2291]: Այս վերջին տեղեկության մեջ «ժամանակ անց»-ը ցույց է տալիս, որ մինչ հունական կղզիների, Թրակիայի ու Մակեդոնիայի նվաճումը, Դարեհ Ա-ի վարչական վերափոխումներն արդեն կատարված իրողություն էին, և այդ իրողությունն արտացոլված էր Հերոդոտոսի մոտ պահպանված սատրապությունների ցուցակում: Հունական կղզիները՝ Սամոսը, Լեմնոսը, Քիոսը, նվաճվել են մոտ մ. թ. ա. 517 թվականին, և մոտավորապես մ. թ. ա. 517 թվականին նվաճվել է նաև Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասը[2292]: Ժամանակին կարծել ենք[2293], որ մ. թ. ա. մոտ 513/512 թվականին[2294] Մակեդոնիան[2295] և Թրակիան կազմում են մեկ սատրապություն՝ Սկուդրա անվանումով[2296],

[2291] Հերոդոտոս, III, 96; VII, 108:

[2292] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 108-109.

[2293] Խորիկեան Յ., Սատրապութիւնների հերոդոտեան ցուցակը (Պատմաաշխարհագրական քննութիւն), Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԼԴ., Պէյրութ, 2014, էջ 147-148:

[2294] Հմմտ. Шашлова Т. Ю., Фракийцы как подданные ахеменидов (по данным персидских источников), Известия Саратовского университета. Новая серия. Серия: История. Международные отношения, 2014, Т. 14, вып. 4, с. 49; Stronk J. P., Crossing the Straits: The Persians in Thrace, Talanta, 30-31, 1998-1999, p. 65; Rehm E., The Impact of the Achaemenids on Thrace: A Historical Review, in: Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers, edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, p. 140; Vasilev M. I., The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia, Leiden, Boston, 2015, p. 59.

[2295] Հմմտ. Հերոդոտոս, V, 17-20; VI, 44; VIII, 140-142:

[2296] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 111; Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 157-158; Brosius M., Pax Persica and the Peoples of the Black Sea Region: Extent and Limits of Achaemenid Imperial Ideology, in: Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers, edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, p. 31; Vasilev M. I., The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia, p. 114.

այն դեպքում, երբ համապետական բնույթի վարչական վերափոխումներն արդեն կատարվել էին: Մ. թ. ա. 492 թվականին Մարդոնիոսի արշավանքով Մակեդոնիան էլ ավելի ամուր թելերով կապվեց պարսից գերիշխանությանը:

Դարեհ Ա-ի Նաղշե-Ռոստամի (DNa) արձանագրությունում արդեն Հնդկաստանը և Մակեդոնիան ու Թրակիան ընդգրկող Սկուդրա սատրապությունը հիշատակվում են միասին[2297]:

Հոնիային նվիրված մեր հոդվածում քննարկել ենք հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվող աշխարհագրական բառակապակցությունների նույնականացման և տեղագրության հարցերը[2298], հետևաբար՝ ստորև փորձենք առավել հիմնավորել Սկուդրա սատրապության գոյության հարցը:

Մասնագիտական գրականության մեջ Սկուդրա սկյութական անվանումով[2299] առանձին սատրապության գոյության հարցը տարակարծությունների տեղիք է տվել: Այսպես, ենթադրվել է, որ *Skudra* անվան տակ սեպագիր արձանագրությունը նկատի է ունեցել Թրակիայում ապրող սկյութական ցեղերին[2300] կամ պայոններին, թրակացիներին ու մակեդոնացիներին[2301]: Աքեմենյանների բարձրաքանդակներում

[2297] Kent R., Նշվ. աշխ., էջ 137: Դարեհ Ա-ի DSe, DSm արձանագրություններում և հիերոգլիֆ արձանագրությունում (տե՛ս Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques, p. 258; Roaf M., The Subject Peoples on the Base of the Statue of Darius, p. 75) ու Քսերքսեսի XPh արձանագրությունում Սկուդրան նույնպես հիշատակվում է (Kent R., Նշվ. աշխ., էջ 142, 145, 151):

[2298] Խորիկյան Հ., Հոնիան Աքեմենյան Պարսկաստանի վարչական համակարգում, ՀԱ, Վիեննա-Երևան, 2014, թիվ 1-12, էջ 469-484:

[2299] Tuplin Ch., Revisiting Dareios' Scythian Expedition, in: Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers, edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, pp. 297, 300. Սկուդրա անունը, թերևս, նույնական է Մուրաշուի արխիվներում հայտնի *Iskudurū (Uskudurū)* անձնանվանը (տե՛ս Henkelman W. F. M., Stolper M. W., Ethnic identity and the ethnic labelling at Persepolis : the case of the Skudrians, in: Organisation des pouvoirs et contacts culturels dans les pays de l'empire achéménide, ed. by. P. Briant, M. Chauveau, Persika 14, Paris, 2009, pp. 288-289):

[2300] Szmerényi O., Four Iranian Ethnic Names, pp. 23-25; Kullanda S., External relations of Scythian, Вопросы языкового родства: Международный научный журнал, № 11, М., 2014, с. 85-87. Փորձել են նույնիսկ Սկուդրան տեղադրել Վրաստանի տարածքում (տե՛ս Gropp G., Sassen die Skudra wirklich in Thrakien? Ein Problem der Satrapieriverteilung in Kleinasien, in: Achaemenid Anatolia, ed. T. Bakir, 2001, Leiden, pp. 37-42): Հիմնավորված չէ նաև Սկուդրայի և Պափլագոնիայի նույնացումը (տե՛ս Gropp Von G., Die Darstellung der 23 Volker auf den Reliefs des Apadana von Persepolis, IA, 44, 2009, SS. 337-338):

[2301] Vasilev M. I., The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia, p. 120.

սկուդրացիները պատկերված են իրանական կամ սկյութական զգեստներով[2302], այսինքն՝ էթնիկական առումով Սկուդրան պետք է ընդգրկեր Թրակիան: Հնչել է նաև կարծիք, որ Թրակիայի փռյուգիական հին անվանումը եղել է Սկուդրա[2303]: Որոշ ուսումնասիրողներ Սկուդրայի և Թրակիայի նույնացումը բացառում են՝ առաջինը տեղադրելով նույնիսկ Փոքր Ասիայի արևմուտքում կամ կենտրոնական շրջանում[2304] կամ էլ Էգեյան ծովի հունական ափից հյուսիս ընկած շրջաններում[2305]: Չնայած Սկուդրա անունը զուգահեռաբար հանդիպում է Բալկանների հյուսիսում[2306], հիշատակվում է բրիգների Կյուդրա քաղաքը[2307], Փոքր Ասիայում՝ Փռյուգիայի Կյուդրարա քաղաքը[2308], այդուհանդերձ, տեղանունը թրակիական չի համարվում[2309]:

Համաձայն մեկ այլ կարծիքի՝ Սկուդրան՝ որպես սատրապություն, ընդգրկել է միայն եվրոպական Թրակիան, որի սահմանն արևմուտքում հասնում էր մինչև Թերմաիկոսի ծոցը[2310], այսինքն՝ ժամանակակից Թուրքիայի եվրոպական մասը և Բուլղարիայի արևելյան հատվածը[2311], այն դեպքում, երբ վասալական Մակեդոնիան պահպանել էր թագավորական իշխանությունը[2312]: Սակայն թագավորական իշխանության պահպանումը չէր նշանակում, որ տվյալ երկիրն առանձին

[2302] Kullanda S., External relations of Scythian, p. 85; Roaf M., The Subject Peoples on the Base of the Statue of Darius, p. 91.
[2303] Fol A., Hammond G. L., Persia in Europe, apart from Greece, in: The Cambridge Ancient History, Vol. IV, p. 246; Bacheva G. D., Detecting a Satrapy: The Skudra Case, Thracia XX, Sofia, 2012, p. 11.
[2304] Vassileva M., Persians in Thrace, A Companion to Ancient Thrace, ed. by J. Valeva, E. Nankov, D. Graninger, Chichester, 2015, p. 322.
[2305] Stronk J. P., Crossing the Straits: The Persians in Thrace, p. 66.
[2306] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I, III, 13, 39. Սկուդրան նույնացվել է նաև մ. թ. XIII դարից հայտնի բյուզանդական Սկուտարին՝ ներկայիս Ուշկյուդարը՝ Ստամբուլի ասիական մասը (տե՛ս Henkelman W. F. M., Stolper M. W., Ethnic identity and the ethnic labelling at Persepolis, p. 299):
[2307] Страбон, с. 298.
[2308] Herodotus, Vol. III, VII, 30, p. 344.
[2309] Vassileva M., Persians in Thrace, p. 322. Սկուդրացիների նույնացումը և տեղորոշումը Փռյուգիայում, Լյուդիայում, Բյութանիայում մեզ համար ընդունելի չէ, չնայած այն հանգամանքին, որ հույների համար թրակացի համարվողները պարսիկների կողմից սկուդրացիներ էին ընկալվում (տե՛ս Henkelman W. F. M., Stolper M. W., Ethnic identity and the ethnic labelling at Persepolis, pp. 293-299):
[2310] Boteva D., Re-reading Herodotus on the Persian Campaigns in Thrace, in: Herodotus and the Persian Empire, ed. R. Rollinger, B. Truschnegg, R. Bichler, Wiesbaden, 2011, p. 736.
[2311] Szemerényi O., Four Iranian ethnic names, p. 26.
[2312] Vassileva M., Persians in Thrace, p. 322.

սատրապություն կամ էլ որևէ սատրապության մաս չէր: Համեմատության համար նշենք, որ XIII սատրապության մեջ ներառված Հայաստանը շարունակեց պահպանել թագավորական իշխանությունը, ընդ որում՝ հենց թագավորները հաճախ սատրապներ էին:

Ուսումնասիրողների համար մտորումների տեղիք է տվել նաև այն իրողությունը, որ հոյն հեղինակները Էգեյան ծովի հյուսիսային մերձափնյա շրջաններում պարսից զորավարներին հիշատակում են որպես հյուպարքոսներ և ստրատեգոսներ (որոշակիորեն նույնանում է կարանոսին[2313]), որոնք իրենց գործառույթներով զիջում էին սատրապներին: Կրկին համեմատության համար նշենք, որ Արևմտյան Հայաստանի հյուպարքոս Տիրիբազոսն իր իրավասություններով չէր զիջում սատրապին[2314], հետևաբար ռազմաքաղաքական առումով անկյուն այս շրջաններում չի կարելի բացառել սատրապության գոյությունը: Տեղին է նշել, որ Հերոդոտոսը հայտնում է, որ Կամբյուսեսը Եգիպտոսի հյուպարքոս էր նշանակել Արյուանդեսին[2315], այսինքն, եթե նկատի ունենանք, որ VI սատրապությունը լայն առումով հայտնի էր որպես եգիպտական սատրապություն, ապա Արյուանդեսը Եգիպտոսի սատրապն էր: Սակայն այստեղ խնդիրն այն է, որ Արյուանդեսը երկրի, ոչ թե քաղաքի կամ շրջանի հյուպարքոսն էր:

Հիմնավոր չէ նաև այն կարծիքը, որ Սկուդրայի վարչական կենտրոնը եղել է Սեստոսը (ներկայիս Աղբաշ ամրոցի մոտ[2316] կամ էլ ներկայիս Զեմենիկը[2317]), իսկ Արտայուկտեսը[2318] նրա սատրապներից մեկն էր[2319]: Հերոդոտոսի տեղեկությունը նման եզրակացության հիմք չի տալիս, քանի որ Արտայուկտեսը պարզապես Սեստոսի կառավարիչն է եղել՝ ենթարկվելով սատրապին, իսկ Սեստոսը աշխարհագրական առումով չէր կարող Սկուդրայի վարչական կենտրոնը լինել: Արտայուկտեսը հյուպարքոս էր, ինչպես Դորիսկոսի հյուպարքոս Մասկամեսը, Էյոնի հյուպարքոս Բոգեսը[2320]: Այս դեպքում հիմնավոր չէ նաև ենթադրել, որ թրակիական սատրապությունը կոչվում է իր կենտրոնի՝

[2313] Rung E., Some Notes on *Karanos* in the Achaemenid Empire, IA, Vol. 50, 2015, pp. 334-335.
[2314] Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 93:
[2315] Herodotus, Vol. II, IV, 166, p. 370; Rung E., Some Notes on *Karanos* in the Achaemenid Empire, p. 335.
[2316] Bacheva G. D., Detecting a Satrapy: The Skudra Case, p. 12.
[2317] Stronk J. P., Crossing the Straits: The Persians in Thrace, p. 62.
[2318] Հերոդոտոս, VII, 33; 78; IX, 115-116; 119:
[2319] Balcer J. M., Persian Occupied Thrace (Skudra), Historia, Bd. 37, H. 1, 1988, pp. 1, 3.
[2320] Հերոդոտոս, VII, 105-107:

Սեստոսի անունով[2321]: Հետաքրքիր է նաև այն տեսակետը, որ Թրակիան՝ որպես ծայրամաս, բնականաբար նկատի ունենանք նաև Մակեդոնիան, առանձին սատրապություն չեն կազմել և ղեկավարվել են Սարդեսից[2322]: Նման կարծիքի կարող է մղել այն հանգամանքը, որ, օրինակ՝ եգիպտական սատրապության մաս կազմող լիբիացիները (Փուտ-Լիբիա), եթովպացիները (Քուշ-Նուբիա) պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվում են առանձին-առանձին, սահմանային շրջաններ[2323] այն դեպքում, երբ դրանք մտել են VI սատրապության մեջ, այսինքն՝ եվրոպական Թրակիան կարող էր սատրապության մաս կազմել[2324]: Սակայն, մեր կարծիքով, Հերոդոտոսի վերոնշյալ տեղեկությունը՝ ***«Եվրոպայում մինչև Թեսսալիա»*** հստակ սահմանագծում է մեկ այլ, տվյալ դեպքում՝ Սկուդրա սատրապության գոյությունը, որի կենտրոնը ենթադրվել է Փիլիպպոլիսը՝ ներկայիս Պլովդիվը[2325]:

Այս սատրապությունը՝ հատկապես Արևմտյան Թրակիան, հայտնի էր նաև ոսկու հարուստ հանքերով[2326], ինչը պարսիկների համար կարևոր նշանակություն ուներ հետագա ռազմաքաղաքական ձգտումներում: Սկուդրացիները՝ որպես գյուղատնտեսական աշխատողներ, հիշատակվում են Դարեհ Ա-ի Պարսքի և Էլամի արքայական կալվածքներում[2327]:

Այսպիսով, Սկուդրան կարող ենք համարել Աքեմենյան տերության XXI սատրապությունը:

5.3. Վերաբնակեցումներն Աքեմենյան տերությունում

Նվաճված ժողովուրդների վերաբնակեցումները զգալի տեղ են գրավել Աքեմենյանների ռազմաքաղաքական և տնտեսական շահերի ոլորտում: Այս մասին հաղորդում են հին պարսկական սեպագիր և անտիկ աղբյուրները: Հույն պատմիչ Հերոդոտոսը բազմիցս տեղեկություններ է տալիս Աքեմենյան արքաների հրամաններով կազմա-

[2321] Balcer J. M., Persian Occupied Thrace (Skudra), p. 4.
[2322] Անդ, էջ 11, 15, 19-20: Հմմտ. Rehm E. The Impact of the Achaemenids on Thrace, pp. 150-151.
[2323] Bacheva G. D., Detecting a Satrapy: The Skudra Case, p. 21.
[2324] Stronk J. P., Crossing the Straits: The Persians in Thrace, p. 68.
[2325] Brosius M., Pax Persica and the Peoples of the Black Sea Region, p. 31; Vasilev M. I., The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia, p. 121.
[2326] Balcer J. M., Persian Occupied Thrace (Skudra), p. 11.
[2327] Шашлова Т. Ю., Фракийцы как подданные ахеменидов, с. 48; Vassileva M., Persians in Thrace, p. 322; Rehm E. The Impact of the Achaemenids on Thrace, p. 148.

կերպված վերաբնակեցումների մասին: Այսպես, եգիպտական սատրապության մեջ մտնող հելլենական Բարկա քաղաքը նվաճելուց հետո Դարեհ Ա-ն գերեվարված բարկացիներին աքսորում է Բակտրիա, որի գյուղերից մեկը նրանց անունով կոչվում է Բարկա[2328]: Մինչ այդ Եգիպտոսի գրավումից հետո Կամբյուսեսի հրամանով 6000 եգիպտացիներ տարվում են Սուզա[2329], որտեղ եգիպտացիները զգալի թիվ են կազմել[2330]:

Հերոդոտոսը հայտնում է նաև պայոնների մի մասին Ասիայում՝ Փռյուգիայում վերաբնակեցնելու մասին[2331]: Հերոդոտոսի այլ տեղեկություններից պարզվում է, որ այս կամ այն քաղաքը կամ կղզին (Միլետ, Սամոս) գրավելուց հետո պարսիկները բնակչությանն անխնա մատնում էին ստրկության[2332]: Գերեվարված միլետացիները բնակեցվում են Կարմիր կոչված ծովի՝ Պարսից ծոցի մոտ՝ Ամպե քաղաքում, որի մոտով հոսում էր Տիգրիս գետը[2333]: Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ պարսից արքան, այսպես կոչված, աքսորյալներին կամ տեղահանվածներին բնակեցնում էր Կարմիր ծովի կղզիներում, XIV սատրապության կազմում[2334]: Բացառված չէ, որ աքսորյալները կանոնավոր հենց այդ կղզիներ էլ ուղարկվել են: Այսպիսի ենթադրության տեղիք տալիս է նաև Ստրաբոնը, երբ գրում է, որ Կարմանիայից հարավ ընկած Օգյուրիս կղզում մակեդոնացիներին միանում է փռյուգական սատրապի աքսորյալ որդի Միթրոպաստեսը[2335]:

Դարեհ Ա-ն իբր մտադրություն է ունեցել փյունիկեցիներին բնակեցնել Հոնիայում, իսկ հոնիացիներին՝ Փյունիկիայում կամ էլ Բակտրիայում[2336]: Վերջինիս տարածքում Ալեքսանդր Մակեդոնացին գրավում է բրանքիդների քաղաքը, որոնք ծագումով Միլետի քրմական տոհմ էին[2337]:

Վերաբնակեցումները պայմանավորված էին ոչ միայն ռազմական

[2328] Հերոդոտոս, IV, 204:
[2329] Ctesias' History of Persia, p, 178; Potts D., The Islands of the XIVth Satrapy, p. 389.
[2330] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 286:
[2331] Հերոդոտոս, V, 12; 14-15; 17; 23; 98:
[2332] Անդ, III, 149; VI, 18-19:
[2333] Անդ, VI, 20: Ամպեի հնարավոր նույնացումների մասին տե՛ս Historical Commentary on Herodotus Book 6, by L. Scott, Leiden-Boston, 2005, pp. 121-122.
[2334] Հերոդոտոս, III, 93; VII, 80:
[2335] Страбон, с. 709-710.
[2336] Հերոդոտոս, VI, 3; 9:
[2337] Անդ, I, 46; Ռուփոս, էջ 464-465; Страбон, с. 489; Briant P., From Cyrus to Alexander, pp. 434, 505.

անհրաժեշտությամբ[2338] և հետագա ապստամբությունները կանխելու համար, այլև տնտեսական նպատակով: Օրինակ, Դիոդորոս Սիկիլիացին հայտնում է, որ Եգիպտոսը նվաճելուց հետո անհամար գանձերը պարսիկները տանում են Ասիա, իսկ եգիպտացի վարպետներին հրավիրում են կառուցելու Պերսեպոլիսի, Սուզայի և Մարաստանի նշանավոր պալատները[2339]: Այս տեղեկությունից ընդհանուր առմամբ կարելի է ենթադրել, որ Աքեմենյան արքաների վերաբնակեցրած բնակչության մեջ արհեստավորները զգալի թիվ պետք է կազմեին: Սուզայի պալատի կառուցմանը հիշատակվում են տարբեր ազգության բազմաթիվ վարպետներ[2340]՝ բաբելոնացիներ, ասորեստանցիներ, կարիացիներ, հոնիացիներ, սարդեսցիներ, մարեր, եգիպտացիներ[2341]: Ընդ որում, չմոռանանք, որ պալատական շինարարությանը մասնակցելը նվաճված ժողովուրդների համար կամավոր ցանկություն չէր, այլ պարտականություն:

Դիոդորոսի մեկ այլ տեղեկությունից իմանում ենք, որ Քսերքսեսի հունական արշավանքից հետո բեովտիացիները բնակեցվել են Տիգրիսի ստորին հոսանքի և Քոասպես գետի միջև[2342]: Սրանք, հավանաբար, Հերոդոտոսի հիշատակած երետրիացիներն են, որոնց Դարեհ Ա-ն բնակեցրել էր Կիսսիա երկրի Արդերիկկա վայրում՝ Սուսայի մոտ[2343], և մ. թ. I դարում նրանք դեռևս խոսում էին հունարեն ու հիշում էին իրենց ծագման մասին[2344]: Ընդհանրապես նկատի ունենանք, որ Հարավային Միջագետքում աքսորված ժողովուրդները զգալի թիվ են կազմել, ինչը պայմանավորված էր հատկապես տնտեսական շահերով: Մուրաշուի առևտրական տան արխիվներից պարզվում է, որ փոյուգիացիները, սարդեսցիները (իմա՛ լյուդիացիները), կիմերները (իմա՛ սակերը), արաբները, հնդիկները և այլն Հարավային Միջագետքում, հատկապես Նիպպուրի շրջանում, ունեցել են իրենց հա-

[2338] Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, p. 285.
[2339] Diodori Bibliotheca Historica, Vol. I, I, 46, p. 59.
[2340] Խոսքը, անկասկած, վերաբերում է արքայական կալվածքներում աշխատողներին, որոնք կոչվում էին *kurtaš* (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Izdimirski M., Deportations of *kurtaš* Workers in the Achaemenid Empire according to Classical Literary Tradition, ŽA, Fasc. 1-2, 2018, pp. 51-63):
[2341] Kent R. G., The Record of Darius's Palace at Susa, JAOS, Vol. 53, No. 1, 1933, pp. 6-8; նույնի՝ Old Persian, p. 143.
[2342] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 110, p. 212.
[2343] Հերոդոտոս, VI, 101; 119: Plato, Laws, with an English translation by R. G. Bury, Vol. I, Cambridge-Massachusetts-London, 1961, Loeb Classical Library, pp. 238, 240.
[2344] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 286:

մայնքները[2345], սակայն միշտ չէ, որ դրանք բոլորը ռազմագերիներ են եղել: Սրանց մի մասը ռազմական վերաբնակիչներ էին, որոնք ունեին իրենց ռազմական գաղութները: Հարավային Միջագետքն իր հարուստ քաղաքներով և տնտեսությամբ կարելի է բնորոշել էթնիկական խառնարան, որտեղ հավաքված էին ամբողջ տերության գրեթե բոլոր ժողովուրդները[2346]:

Այդ ժողովուրդներից մեկն էլ, այսպես կոչված, արտաքսված կամ գաղթական կոչված կարիացիներն էին, որոնց հիշատակում է Արիանոսը Գավգամելայի ճակատամարտին[2347]: Ըստ Դիոդորոս Սիկիլիացու՝ Սուզա քաղաքի մերձակայքում ևս կային կարիական գյուղեր[2348], այսինքն՝ խոսքը կարիացի վերաբնակիչների մասին էր, որոնք այստեղ կարող էին հայտնվել շինարարական աշխատանքների նպատակով: Կարիական բնակավայր եղել է նաև Նիպպուրի մոտ[2349]:

Վերաբնակեցված ժողովուրդներից էին նաև Գավգամելայի ճակատամարտին հիշատակվող հորտուացիները Էվբեա կղզուց[2350], որոնց, թերևս, կարելի է տեղորոշել Էլամի և Մարաստանի միջև: Նման տեղորոշման պարագայում սրանք նույնանում են երետրիացիներին:

Մ. թ. ա. 345-344 թվականներին ապստամբ Սիդոնի գրավումից հետո[2351] բազմաթիվ գերիներ Արտաքսերքսես Գ-ի հրամանով տարվում են Բաբելոն և Սուզա[2352]: Այս նույն թագավորի հրամանով, եգիպտոսի հետ երկարատև պատերազմից հետո, մեծ թվով ապստամբ հրեաներ Հուդայից աքսորվում և բնակեցվում են Կասպից ծովի ափին՝ Հյուրկանիայում, որտեղ ապրում էին դեռ մ. թ. V դարում[2353]:

[2345] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 359-371; Van der Spek R. J., Cyrus the Great, Exiles, and Foreign Gods, pp. 256, 259; Henkelman W. F. M., Stolper M. W., Ethnic identity and the ethnic labelling at Persepolis : the case of the Skudrians, in: Organisation des pouvoirs et contacts culturels dans les pays de l'empire achéménide, ed. by. P. Briant, M. Chauveau, Persika 14, Paris, 2009, pp. 271-329; Stolper M. W., Entrepreneurs and Empire: the Murašû Archive, the Murašû Firm, and Persian Rule in Babylonia, Leiden, 1985, pp. 72-79.
[2346] Մանրամասն տե՛ս Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 293-294; Eph'al I., The Western Minorities in Babylonia in the 6th-5th Centuries B.C.: Maintenance and Cohesion, Orientalia, Nova Series, Vol. 47, No. 1, 1978, pp. 74-90.
[2347] Արիանոս, էջ 97, 101:
[2348] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVII, 110, 20-30, p. 212.
[2349] Potts D. T., The Carian Villages, CDLB, 2018, Vol. 2, pp. 3-4.
[2350] Ռուփոս, էջ 351:
[2351] Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 250-251.
[2352] "Mesopotamian Chronicles", pp. 240-241.
[2353] Orosius, Seven Books of History against the Pagans, Translated with an introduction and notes by A. T. Fear, Liverpool University Press, 2010, III, 7, 6, pp. 119-120.

Անկասկած, այս գերեվարումներն ու ստրկացումներն առաջին հերթին ներքաղաքական կայունացման նպատակ ունեին՝ խոովարար օջախներում ճնշելով ապստամբությունները և ահաբեկելով հպատակ ժողովուրդներին:

Պերսեպոլիսի արխիվներում բազմաթիվ հիշատակություններ կան Աքեմենյան տերության տարբեր ժողովուրդների մասին, որոնք, օրինակ՝ սկուդրացիները, բնակվել են Պարսքում և հարևան տարածքներում[2354]: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ Միջագետքը՝ տերության ամենահարուստ նահանգը, նաև հասարակության տարբեր խավերի համար կամավոր աշխատանքի մեծ շուկա էր, բազմամշակութային միջավայր: Պատահական չէ, որ տերության տարբեր ծայրերից առևտրականները լցվել էին Բաբելոնիայի քաղաքներ՝ կատարելով ամենատարբեր գործարքներ[2355]:

Մեծ թվով տարբեր ազգերի (հույներ, փյունիկեցիներ, հրեաներ, պարսիկներ, մարեր և այլն) ներկայացուցիչներ կային Եգիպտոսի տարբեր քաղաքներում, ինչը փոխում էր եգիպտական ազնվականության կենցաղն ու մշակույթը: Որոշ ազնվականներ յուրացնում էին իրանական անուններ, օրինակ՝ եգիպտացի Պսամմետիքոսի որդու անունն էր Բագադատ[2356]: Պետք է նշել նաև, որ Աքեմենյանները ռազմավարական առումով խիստ առաջնակարգ նշանակություն ունեցող սատրապություններում կենտրոնացնում էին կայազորներ, որոնք հիմնականում կազմված էին պարսիկներից: Միևնույն ժամանակ պարսկական արիստոկրատիայի նշանավոր ներկայացուցիչները տիրույթներ էին ստանում տերության տարբեր մասերում՝ ամուսնանալով տեղական ազնվականության ներկայացուցիչների հետ[2357]: Օրինակ, Հելլեսպոնտոսյան կամ Փոքր Փռյուգիա սատրապությունում բնակություն էին հաստատել պարսկական նշանավոր տոհմեր Փառնավազյաններ, Սպիթրիդատյանները և Արիոբարզանյանները[2358]: Խնդիրն այն է, որ զինվորական կամ պետական ծառայությունների բերումով այլ

[2354] Henkelman W. F. M., Stolper M. W., Ethnic identity and the ethnic labelling at Persepolis, pp. 307-315.
[2355] Дандамаев М. А., Месопотамия и Иран..., с. 367.
[2356] Дандамаев М. А., Луконин В. Г., Նշվ. աշխ., էջ 299-300:
[2357] Sekunda N., Achaemenid Settlement in Caria, Lycia and Greater Phrygia, AH VI, Asia Minor and Egypt: Old Cultures in a New Empire, ed. by A. Kuhrt, H. Sancisi-Weerdenburg, Leiden, 1991, p. 141.
[2358] Մանրամասն տե՛ս Sekunda N. V., Persian Settlement in Hellespontine Phrygia, AH III, Method and Theory, ed. by A. Kuhrt, H. Sancisi-Weerdenburg, Leiden, 1988, pp. 175-196.

երկրներում հաստատված պարսիկները ժամանակի ընթացքում ստեղծում էին իրենց համայնքները՝ մշակութային և այլ փոխազդեցությունների մեջ գտնվելով տեղական էթնիկական միջավայրի հետ: Այս երևույթը, իհարկե, տարբեր է պարսից արքունիքի կողմից նվաճված ժողովուրդների վերաբնակեցման քաղաքականությունից, սակայն այս իրողությունը, թերևս, կարելի է բնութագրել որպես ծառայողական կամ պաշտոնական միգրացիա (գաղթ, արտագաղթ): Վերջինս բնորոշ էր նաև ռազմական ծառայություն կատարող ժողովուրդներին, որոնք, օրինակ, հաստատվել էին Հարավային Միջագետքում: Հարկավ, ծառայողական կամ բռնի քաղաքականության դեպքում էլ նպատակը սատրապություններում իշխանության ամրապնդումն էր, սակայն առաջինի դեպքում արդյունավետությունը շատ ավելին էր: Պարսից արքայի և վերջինիս ազնվականների տիրույթները, օրինակ Կապադովկիայում[2359], պետք է պաշտպանվեին, անշուշտ, ոչ միայն տեղական զինվորական ուժով, այսինքն՝ էթնիկական տեղաշարժերը ծառայողական կամ պաշտոնական միգրացիայի միջոցով այս դեպքում ևս հավանական էին:

Ռազմական գաղութների հաստատումը տերության տարբեր մասերում հաստատում է նաև Ստրաբոնը, երբ գրում է, որ Լյուդիայում կար Վրկանից անունով դաշտը[2360], ինչը խոսում է այն մասին, որ այստեղ եղել է վրկանների կամ հյուրկանների ռազմական ճամբարը:

5.4. Ակաուֆաչիյա երկրի տեղադրությունը

Ստորև քննության առնենք սկյութների հետ կապված աղբյուրագիտական մեր կարծիքով մի շատ կարևոր տեղեկություն, որը մասնագիտական գրականության մեջ տարբեր բացատրություններ է ստացել: Խոսքը վերաբերում է Դարեհ Ա-ի եգիպտական հիերոգլիֆ արձանագրությանը, որտեղ հիշատակվում են Աքեմենյան Պարսկաստանին ենթակա 24 երկրներ, որոնց շարքում 12-րդ տեղում նշվում են «Les Saka des marais et les Saka des plaines» (ճահիճների սակեր և հարթավայրերի սակեր)[2361]: Մասնագիտական գրականության մեջ, օրինակ, տիգրախաուդա սակերը նույնացվել են ճահիճների սկյութների, իսկ ամյուրգյան սկյութները՝ հարթավայրերի կամ դաշտերի սկյութների հետ[2362]: Սակայն տիգրախաուդա և հաումավարգա սակերի հետ նույ-

[2359] Страбон, с. 507.
[2360] Անդ, էջ 589:
[2361] Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques, pp. 253-266.
[2362] Posener G., La première domination Perse en Égypte, Caire, 1936, pp. 54, 184-185.

նացումը, ըստ էության, հիմնավորված չէ, քանի որ թեկուզև նույնիսկ նույն համարի տակ, այդուհանդերձ եգիպտական տվյալ արձանագրության սակերը, դատելով Դարեհ Ա-ի վարչական վերակառուցումների սկզբունքից, գտնվել են աշխարհագրորեն տարբեր վայրերում[2363]: Մենք առաջարկում ենք հետևյալ տեղադրությունը, որը բխում է որոշ աղբյուրների համադրական քննությունից: Այսպես, Հերոդոտոսը հայտնում է, որ «Արաքս գետը բխում է մատիենների երկրից, որտեղից և Գյունդես գետը, որը Կյուրոսը բաժանեց երեք հարյուր վաթսուն ջրանցքների, բաժանվում է քառասուն բերանների, որոնք բոլորը, մեկից բացի, դուրս են գալիս ճահիճների և խոռոչների մեջ: Պատմում են, որ այդ ճահճուտներում ապրում են հում ձուկ ուտող մարդիկ, որոնք սովորաբար օգտագործում են փոկի կաշուց պատրաստած հագուստ: Իսկ Արաքսի բերաններից մեկը բաց տեղանքով հոսում է դեպի Կասպից ծով»[2364]: Անշուշտ, Հերոդոտոսի այս և մյուս տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ Արաքսի անվան տակ հանդես են գալիս տարբեր գետեր, օրինակ հենց փոկերի մասին հիշատակությունը վկայում է, որ խոսքը գնում է Վոլգայի ստորին հոսանքի մասին[2365], սակայն մեջբերված տեղեկության վերլուծությունից պարզվում է, որ Արաքսը պատմական Օքսոսն է, ներկայիս Ամու-Դարյան[2366], որի գետաբազուկն ըստ երևույթին Ուզբոյն էր, իսկ Օքսոսի գետաբերանում, մեր կարծիքով, գտնվել են դահերը, որոնք հիշատակվում են ***XPh*** արձանագրությունում: Սովորաբար հին աղբյուրները զանազանում են դահերին և մասսագետներին, ընդ որում մինչև Կասպից ծովի արևելյան ափերին հաստատվելը դահերը բնակվել են Կասպից ծովից արևելք: Սակայն, մեր կարծիքով, այդ տարբերությունը պայմանավորված էր ուշ ժամանակաշրջանում դահերի դերի կտրուկ մեծացումով: Այսպես, Ստրաբոնը դահերին, որոնք սկյութական ցեղ

[2363] Այդպես է ենթադրել օրինակ Balcer-ը՝ դաշտերի սակերին նույնացնելով ամյուրգյան սակերին, ճահիճների սակերին էլ տեղադրել է Մեոտիս լճի ճահիճների շրջանում (տե՛ս Balcer J. M., The date of Herodotus IV.1 Darius' Scythian Expedition, Harvard Studies in Classical Philology, Harvard University Press, Cambridge (Mass.), 1972, Vol. 76, pp. 126-127):

[2364] Հերոդոտոս, I, 202:

[2365] Hennig R., Der Araxes des Herodot = die Wolga, Pettermann's Mitteilungen, 1929, II, 7/8, S. 169 f. Արաքսի մասին տարբեր նույնացումների քննությունը տե՛ս Пьянков И., Массагеты Геродота, ВДИ, 1975, 2, с. 65-67.

[2366] Այդ մասին տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ, էջ 27:

են, տեղադրում է Կասպից ծովի արևելյան ափերին՝ վրկաններից հյուսիս կամ էլ Մեոտիսից վերև[2367]: Վերջին տեղեկության տակ պետք է ըստ էության նկատի ունենալ Արալյան ծովը, քանի որ դատելով Ստրաբոնի այլ տեղեկությունից՝ ապարն-դահերը եկել են արևելքից՝ նվաճելով Պարթևստանը: Միևնույն ժամանակ նույն տեղեկության մեջ, ինչը կարևոր է մեր հետագա քննության համար, աշխարհագետը նշում է, որ դահերի գտնվելը վերոհիշյալ շրջանում չի ընդունվում շատերի կողմից[2368]: Արիանոսի և Ռուփոսի տեղեկությունները դահերի վերաբերյալ պահանջում են առանձին քննություն, քանի որ նրանց տեղեկություններում կան հակասություններ: Երկու պատմիչներն էլ դահերին հիշատակում են Գավգամելայի ճակատամարտում Դարեհ Գ-ի բանակի կազմում, բակտրիացիների հետ ձախ թևում[2369]: Արիանոսը հաղորդում է, որ դահերը Տանաիսից այն կողմ բնակվող ժողովուրդ է[2370]: Տանաիսը նույնանում է Սիր-Դարյային, այսինքն՝ դահերը բնակվել են գետից հյուսիս: Սակայն հետաքրքիր է, որ հետագա շարադրանքում արդեն Արիանոսը դահերի փոխարեն խոսում է այսպես կոչված աբիամցի սկյութների մասին[2371]: Ռուփոսի մոտ նույնպես Տանաիսը ամբիացի սկյութների և ընդհանրապես բոլոր սկյութների սահմանն էր[2372]: Ռուփոսի մեկ այլ տեղեկության մեջ դահերը հանդես են գալիս խորասմների, սակերի, հնդիկների հետ, որոնք կարող էին օգնություն ցույց տալ Բեսին[2373]: Հաջորդ տեղեկության մեջ նշվում է, որ Թրատաթերնը, որը Խորեզմի կառավարիչն էր, միանալով հարևան մարզի մասսագետներին և դահերին, նույնպես մարդիկ ուղարկեց արքային (իմա՛ Ալեքսանդրին)՝ իր հպատակությունը վկայելու[2374]: Այստեղ ակնհայտ է, որ մասսագետները և դահերը, ավելի ճիշտ նրանց մի մասը, մինչև Ալեքսանդրին ենթարկվելը եղել են անկախ, ինչպես և անկախ է եղել Խորեզմը: Ընդ որում, մասսագետներին և դահերին առավել հավանական է տեղադրել Խորեզմից արևմուտք, քանի որ դեպի արևելք տեղադրելու դեպքում դահերը հանդես կգային ավելի

[2367] Страбон, с. 481, 483, 487.

[2368] Անդ, էջ 486-487:

[2369] Arrian, Vol. I, III, 11, 3, p. 254; Rufus, Vol. I, IV, 12, 6, p. 270.

[2370] Arr. Vol. I, III, 28, 8; 10, pp. 320, 322.

[2371] Անդ, IV, 1, 1-3, էջ 334:

[2372] Rufus, Vol. II, VII, 6, 10-12, pp. 178, 180; 7, 1-2, p. 187; 12, p. 190.

[2373] Անդ, VII, 4, 6, էջ 152:

[2374] Անդ, VIII, 1, 8, էջ 234:

շուտ բակտրիացիների հետ: Այս վերջին ենթադրության համար հիմք կարող են ծառայել Արիանոսի որոշ հաղորդումները: Այսպես, վերջինիս մոտ նշվում է, որ Ալեքսանդրի մոտ եկավ Փարասմանը՝ խորասմների արքան՝ հազար հինգ հարյուր հոգանոց հեծելազորով, և պատմեց, որ ապրում է կոլխերի և ամազոնուհիների ցեղերի հարևանությամբ և վերջիններիս ու Էվքսինյան ծովի մոտ բնակվող ցեղերին հնազանդեցնելու գործում կօգնի արքային[2375]: Անշուշտ, խորասմների հարևանությամբ կոլխերի, ամազոնուհիների և Սև ծովի մոտ գտնվող այլ ցեղերի հիշատակությունը խիստ կասկածելի են դարձնում խորասմներին վերաբերող տեղեկության հավաստիությունը:

Սակայն հաջորդ պարբերությունը որոշակի հիմք է տալիս մտածելու, որ խորասմները ինչ-որ դիվանագիտական նախաձեռնություն ցուցաբերել են իրենց սահմաններից ոչ հեռու գտնվող Ալեքսանդրի հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, քանի որ, ըստ պատմիչի, Ալեքսանդրը Փարասմանի հետ հարաբերությունների կարգավորումը հանձնարարում է Բակտրիայի և հարևան սատրապների կառավարիչ պարսիկ Արտաբազին[2376]: Այս ենթատեքստում սխալ է խորասմների թագավորի կամ Խորեզմի կառավարչի սեփական անունով (Փարասման, Թրատաթերն) հիշատակվելը: Մեր կարծիքով, Թրատաթերնն իրականում համապատասխանում է Արիանոսի կողմից Գավգամելայի ճակատամարտում հիշատակվող պարթևների, վրկանների, տապուրների սատրապ Թրատաթերնին[2377]: Հետևաբար, Ռուփոսի վերոհիշյալ տեղեկությունը (VIII, 1, 8) վերանայելու դեպքում մասագետների և դահերի տեղադրությունը պարթևներից, վրկաններից, տապուրներից հյուսիս առավել իրական է, քան թե Խորեզմից արևելք: Ուրեմն դահերի տեղադրությունն Ուզբոյի (իմա՛ Ամու-Դարյայի) ստորին հոսանքում չի հակասում աղբյուրների տեղեկությանը, և նրանց տեղորոշումը հյուսիսային Մերձարալում[2378] այնքան էլ վստահություն չի առաջացնում վերոհիշյալ աղբյուրների քննության շրջանակներում: Կամ էլ, ինչն առավել հավանական է, դահերը, ինչպես Աքեմենյան Պարսկաստանի որոշ ցեղեր, օրինակ կասպերը, բաժանված լինելով առանձին ճյուղերի, գտնվել են աշխարհագրորեն տարբեր շրջաննե-

[2375] Arr. Anab., IV, 15, 4, p. 386.
[2376] Անդ, IV, 15, 5, էջ 386:
[2377] Անդ, III, 8, 4, էջ 246:
[2378] Пьянков И., К вопросу о маршруте похода Кира II на массагетов, ВДИ, 1964, 3, с. 124-125.

րում, ինչը և պայմանավորել է աղբյուրներում եղած հակասությունները: Սակայն, հարկավ պետք է նկատի ունենալ, որ դահերը՝ որպես քոչվորներ, տվյալ դեպքում թերևս վարձկաններ, կարող էին հիշատակվել Ալեքսանդրի հետ պատերազմում տարբեր վայրերում: Ավելի ուշ դահերն արդեն Ալեքսանդրի բանակում էին[2379]: Եվ ընդհանրապես դահերի հիշատակությունը առավել շատ պայմանավորված է Արիանոսի և Ռուփոսի անձնական մոտեցմամբ, քանի որ նրանց ժամանակ դահերը սկյութական ցեղերի մեջ ամենահայտնին էին այն առումով, որ նրանցից էր ծագում Պարթևական թագավորության հիմնադիր Արշակը և Ալեքսանդրի հզորությունն անընդհատ ընդգծելու համար շեշտվում է նաև դահերի նկատմամբ հզոր նվաճողի հաղթանակների մասին, այսինքն՝ արևելքում հռոմեացիների գլխավոր թշնամի հանդիսացող Պարթևական թագավորությունը, որը, ըստ Արիանոսի և Ռուփոսի, քաղաքական առումով նույնանում է դահերին, դատելով պատմությունից, այնքան էլ անպարտելի հակառակորդ չէր:

Հերոդոտոսը հաղորդում է, որ «Կասպից կոչված այս ծովն արևմուտքից սահմանափակվում է Կովկասով, իսկ արևելքում դեպի արևածագ ձգվում է հայացքով անընդգրկելի մի հարթավայր: Այդ հարթավայրի մեծագույն մասը բնակեցնում են մասսագետները, որոնց դեմ Կյուրոսը մտադրվեց արշավել»[2380], այսինքն՝ մեր մեկնաբանության պարագայում դահերը համարվել են մասսագետների՝ տվյալ դեպքում սկյութական (Հերոդոտոսը նշում է, որ ոմանք մասսագետներին համարում են սկյութական ազգ), ցեղերից մեկը կամ էլ դահերը՝ որպես տվյալ տարածաշրջանի բնակիչներ, անհայտ են եղել հեղինակին (թերևս Հերոդոտոսի դայերն են): Ընդ որում, հիշյալ տեղեկության հարթավայրի փոքր մասը մտել է Աքեմենյան տերության՝ ըստ էության XI սատրապության կազմի մեջ, որի հյուսիսային սահմանը թերևս Ուզբոյն էր: Վրկանների հարևանությամբ սակերի գոյության մասին հաստատում է Քսենոփոնը[2381]: Ուշ շրջանի հին հեղինակները վրկաններից

[2379] Arrian, Vol. II, V, 12, 2, p. 36. Ըստ Ի. Վ. Պյանկովի՝ դահեր-«պարթևների» տեղաշարժը Սիր-Դարյայի միջին հոսանքից հյուսիս ընկած շրջաններից դեպի Կասպից ծովից արևելք տարածվող անապատ, ապա նաև Պարթևական թագավորության կազմավորումը ընթացել է երեք փուլերով՝ մ. թ. ա. IV դարից-մ. թ. ա. III դարի կեսեր (տե՛ս Пьянков И., К вопросу о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию, Переднеазиатский сборник, III, М., 1979, с. 195, прим. 4):
[2380] Հերոդոտոս, I, 204:
[2381] Xenophon, Cyropaedia, Vol. II, V, 2, 25, p. 32.

հյուսիս հիշատակում են դերբիկներին[2382], որն, ըստ էության, պայմանավորված էր սակա-մասսագետական դաշնության մեջ այս ցեղի ավելի ուշ ժամանակաշրջանում պայմանավորված վերելքով: Դատելով Կտեսիասի տեղեկություններից և նկատի ունենալով այդ տեղեկություններում տեղ գտած բազմաթիվ հակասական հաղորդումները՝ թվում է, թե դերբիկները, որոնց դեմ արշավում է Կյուրոս Մեծը, գտնվել են սակերի և հնդիկների հարևանությամբ, ընդ որում, դերբիկները մարտի ժամանակ մեծ չափով օգտագործում են փղերին[2383]: Անշուշտ, Կտեսիասի տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս մտածել, որ դերբիկների հիշատակությունը սակերի և հնդիկների հարևանությամբ կասկածելի է, քանի որ հեղինակը դերբիկներին շփոթում է կա՛մ դիրբերի հետ, որոնք գտնվել են բակտրիացիների և հնդիկների հարևանությամբ և հայտնի էին իրենց խաղաղակեցությամբ[2384], կա՛մ էլ դատելով այն հաղորդումից, որ ճակատամարտում Կյուրոսի սպանվելուց հետո պարսիկներին օգնության են շտապում սակերն Ամորգի (իմա՛ ամյուրգյան սակերը) գլխավորությամբ և պարտության մատնում դերբիկներին, կիսում ենք Ի. Վ. Պյանկովի տեսակետն այն մասին, որ դերբիկները Կտեսիասի մոտ Միջին Ասիայի արևմտյան մասի սկյութական ցեղերի անվանումն է և հավանաբար փոխարինում է մասսագետներին[2385]: Այս բացատրությունից բխում է այն հետևությունը, որ եթե ուշ ժամանակներում դերբիկները Կասպից ծովի արևելյան ափին բնակվող որոշակի ցեղ էին, ապա Կտեսիասի մոտ դերբիկները հավաքական ամբողջություն էին, որի մասն էին թերևս կազմում դահերը, այսինքն՝ «ճահիճների սակերը»: Չնայած

[2382] The Geography of Strabo, Vol. V, XI, 8, 8, p. 268; XI, 9, 1, pp. 270, 272; XI, 11, 8, pp. 290, 292; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, VI, 10, 2; Pliny, Natural History, Vol. II, VI, 48, p. 372; Rufus, Vol. I, III, 2,7, p. 74 և այլ հեղինակներ: Ի. Վ. Պյանկովի կողմից դերբիկների նույնացումը Հերոդոտոսի օրթոկորյուբանտիներին կասկածելի է, քանի որ նույնացումն այնքան էլ հիմնավորված չէ (տե՛ս Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов..., с. 43):

[2383] Пьянков И. В., Средняя Азия в известиях античного историка Ктесия с. 90-91.

[2384] Անդ, էջ 89:

[2385] Անդ, էջ 6: Ս. Պ. Տոլստովը կարծում է, որ Կյուրոսին հաղթել են դերբիկները (տե՛ս Толстов С. П., По следам древнехорезмийской цивилизации, М.-Л., 1948, с. 108): Հին աղբյուրներում տեղեկություններ կան այն մասին, որ Կյուրոսին հաղթել են այլ ցեղեր: Օրինակ, Բերոսոսը հաղորդում է, որ Կյուրոսը կործանվել է դահերի հովիտներում (տե՛ս The Babyloniaca of Berossus, p. 29): Հիշատակվում են նաև սկյութները, սակերը, աբիացիները (տարբեր աղբյուրների ամբողջական քննությունը տե՛ս Пьянков И., К вопросу о маршруте похода Кира II на массагетов, с. 115-130. Տե՛ս նաև Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах с. 115-116):

նշենք, որ այսպիսի մոտեցման պարագայում հենց նույն դերբիկները ևս կարող էին համապատասխանել «ճահիճների սակերին», սակայն դահերի հետ մեր նույնացումը պայմանավորված է այն հստակ տրամաբանությամբ, որ դահերը հիշատակվել են պարսկական սեպագիր արձանագրություններում և պետք է անպայմանորեն իրենց համապատասխան հիշատակությունը այս կամ այն անվանաձևով ունենային այլ՝ տվյալ դեպքում եգիպտական հիերոգլիֆ արձանագրության մեջ:

Նույն տրամաբանությամբ և որոշ տեղեկությունների համադրմամբ «դաշտերի սակերն» էլ նույնանում են ***XPh*** արձանագրության Ākaufaçiyā-ին[2386]: Այնպիսի մի տարածաշրջան, ինչպիսին Կովկասն էր, հազիվ թե տեղ չգտներ պարսկական սեպագիր արձանագրություններում, իսկ Հերոդոտոսի տեղեկությունների քննությունը հաստատում է այդպիսի տեսակետը: Ākaufaçiyā բառի մեջ ā-ն մեր կարծիքով ժխտական նախածանց է, իսկ kaufa- նշանակում է «լեռ, սար»+-iyā- ցեղանվանակերտ վերջածանց[2387]: Թրակիայի և Լիբիայի միջև հիշատակվող Ākaufaçiyā-ն տեղադրել հստակ մի վայրում դժվար կլինի: Փորձ է արվել տեղադրել այն XVII սատրապության կազմում՝ Աքեմենյան Պարսկաստանի հարավ-արևելքում[2388]: Մենք առաջարկում ենք այլ տեղադրություն, որը բխում է Հերոդոտոսի տեղեկությունների տրամաբանությունից: Սատրապությունների ցուցակում հիշատակվող մատիենները, սասպեյրները, ալարոդները հանդես են գալիս XVIII սատրապության կազմում, իսկ Քսերքսեսի բանակի նկարագրության մեջ ալարոդները և սասպեյրները միավորված են մեկ հրամանատա-

[2386] Kent R., Նշվ. աշխ., էջ 151:

[2387] Անդ, էջ 165, 187:

[2388] Lecoq, p. 138; Schaeder H. H., Zwei altiranische Ortsnamen, ZDMG 96, 1942, SS. 127-31: Է. Հերցֆելդը գրում է, որ «the Akōfaçiya lived in southern Lāristān and Kirmān on the Indian Ocean», իսկ մեկ այլ տեղում էլ գրել էր, որ «the Qufs, Kōç, inhabitants of the Bashākird mountains between Hormuz and the Kōh i Bāriç, appear in Xerx.Pers.daiv. as OP. akōfaçiya>kōfiç (qufs)>kōhiç >kōç, from OP. kōfa «mountain», *kōfaka «mountaineer» (տե՛ս Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 300-301, 365: Հմմտ. նաև Henkelman W. F. M., Of Tapyroi and Tablets, States and Tribes: The Historical Geography of Pastoralism in the Achaemenid Heartland in Greek and Elamite Sources, BICS, Vol. 54, No. 2, 2011, p. 6). Ա. Օլմսթեդը Akaufaka-ն (the Mountain Land) տեղադրում է ներկայիս Աֆղանստանում՝ Քաբուլից հյուսիս (տե՛ս Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 231): Տե՛ս նաև Асатрян Г., Этническая композиция Ирана: От "Арийского простора" до Азербайджанского мифа, Ер., 2012, с. 16. XVII սատրապությունում հիշատակվող, այսպես կոչված, արևելյան կամ ասիական թեռվապագիների հետ նույնացման մասին տե՛ս Junge P. J., Ākaufačiya. Ein Beitrag zur Länderkunde des alten Iran, ZDMG 98, 1944, SS. 369-76.

րության ներքո: Թերևս XVIII սատրապությունը, որն ըստ վերջին ուսումնասիրությունների գտնվել է Կուրից հյուսիս մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթան, արևմուտքում սահման ունենալով Սուրամի լեռները[2389], համապատասխանում է ***XPh*** արձանագրության Ākaufaciyā-ին, որը, մեր կարծիքով, նշանակում է «ոչ լեռնցի», այսինքն՝ դաշտային, հարթավայրային երկրի բնակիչ, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանում հայտնի Աղվանք-Ալբանիան լիովին կարող էր հավակնել նմանօրինակ բնորոշմանը: Եթե Ākaufaçiyā նշանակում է միայն «լեռնցի», ապա նույնիսկ այդ դեպքում մեր տեղադրության սահմանները գրեթե չեն խաթարվի, քանի որ էթնիկական այդպիսի բնութագրման պարագայում կընդլայնվեն մեր առաջարկած տեղադրության աշխարհագրական սահմանները, և Ākaufaçiyā-ի անվան տակ կներկայացնենք Կովկասյան մեծ լեռնաշղթայի ողջ տարածաշրջանում՝ ներառյալ XIX սատրապությունում (ավելի ստույգ արևելյան հատվածում) ապրող ցեղերին, իսկ Կովկասը, ըստ Հերոդոտոսի, Աքեմենյան պետության հյուսիսային սահմանն էր: Եվ տրամաբանական է, որ Կովկասի այս կամ այլ կերպ արտացոլումն արձանագրությունում ամբողջությամբ համապատասխանում է Աքեմենյան Պարսկաստանի վարչական համակարգին վերաբերող մյուս աղբյուրների տեղեկությունների համադրմանը:

Ākaufaciyā անվան երկու մեկնաբանությունների իմաստային տարբերությունները համենայն դեպս չեն ժխտում աշխարհագրական միևնույն կամ գրեթե միևնույն շրջանում առաջարկվող տեղադրությունը: Խնդիրն այն է, որ Հերոդոտոսի մոտ հիշատակվող XVIII և XIX սատրապությունների ցեղերը, որոնք Աքեմենյան տերության մեջ ունեցել են վարչական և ռազմական առումով էական նշանակություն (սատրապական ցուցակ, Քսերքսեսի բանակի կազմը և առանձին տեղեկություններ), գոնե ինչ-որ կերպ, թեկուզև մեկ կամ երկու անգամ, պետք է հանդես գային սեպագիր արձանագրություններում: Հետաքրքիր է նաև, որ Հոնիան եգիպտական նշված արձանագրությունում չի հիշատակվում, սակայն դա չի նշանակում, որ բոլոր պարսկական արձանագրություններում անխտիր հիշատակվող Հոնիան կա՛մ վարչական միավոր, կա՛մ աշխարհագրական հասկացություն գոյություն չուներ: Ուրեմն Այսրկովկասը պարսկական սեպագիր և եգիպտական հիերոգլիֆ արձանագրությունում հիշատակվում է երկու անգամ՝ առաջին անգամ՝ Ākaufaciyā,

[2389] Տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 101:

երկրորդ անգամ՝ «դաշտերի սակեր» անվանաձևերով: «Դաշտերի սակերին» հստակորեն կարելի է տեղորոշել Կուրի ձախափնյակում, այսինքն՝ XVIII սատրապության կազմում: Ընդ որում, սկյութական էթնոսի գոյությունը տվյալ տարածքում վաղուց արդեն բազմաթիվ աղբյուրագիտական և հնագիտական նյութերի հիմնավորմամբ քաղաքացիություն է ստացել պատմագիտության մեջ: Ավելի կոնկրետ նույնացմամբ «դաշտերի սակերը» նույնանում են կոլխերի և մարերի միջև հիշատակվող սասպեյրներին[2390]: Հերոդոտոսի տեղեկությունների քննությունն էլ ցույց է տալիս, որ սասպեյրները եղել են բավականին հայտնի ժողովուրդ, որպեսզի բազմիցս հիշատակվեին պատմահոր կողմից: Ուշագրավ է, որ նույնիսկ Աքեմենյան տերության մայրամուտին XVIII սատրապությունը շարունակում էր մնալ պետության անբաժանելի մասը, և այս առումով ուշադրություն ենք հրավիրում Արիանոսի մի տեղեկության վրա: Ըստ պատմիչի՝ Գավգամելայի ճակատամարտին Ատրոպատեսի հետ էին կադուսիները, աղվանները և սակեսինները, ընդ որում, մարերն ու կադուսիները ճակատամարտին հանդես են գալիս առանձին-առանձին դասավորությամբ, իսկ աղվաններն ու սակեսինները՝ միասին[2391]: Մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն ցույց է տրվել, որ սակեսինների նույնացումը հայկական Շակաշեն գավառի հետ և դրանով իսկ այդ երկրամասը տեսնել Աղվանքի մեջ սխալ է, քանի որ սակեսինների և աղվանների նույն շարքում հիշատակվելը բաժանում է աղվանների բնակեցման տարածքը Սակասեննեից և երկու տերմինների նույնացումը հիմնված է միայն հարաբերական համահնչյունության վրա[2392]: Ինչ վերաբերում է Պլինիոս Ավագի սակասաններին[2393], ապա սրանք տեղադրվում են Ասեաց փոր գավառում և ոչ մի կապ չունեն Շակաշենի հետ[2394]: Սա նշանակում է, որ ինչպես սակ-սկյութների մի հատվածը կարողացել էր հաստատվել Ասեաց փորում, մյուսը՝ Շակաշենում, ապա երրորդն էլ, ելնելով սակեսինների և աղվանների համատեղ հի-

[2390] Herodotus, Vol. II, IV, 37; 40; Herodotus, Vol. I, I, 104. Սասպեյրների տեղադրության մասին տե՛ս Հարությունյան Բ., նշվ. հոդվ., էջ 79-84: Хорикян О., К локализации саспиров XVIII сатрапии Ахеменидской Персии, Иран-наме. Научный востоковедческий журнал, Алматы, 2015, 3-4, с. 194-200.

[2391] Arrian, Vol. I, III, 8, 4; 11, 4, pp. 246, 256.

[2392] Акопян А., Албания-Алуанк..., с. 13. Շակաշենի նույնացումը սակեսինների հետ սխալ է համարում նաև Հ. Սվազյանը (տե՛ս Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Եր., 2006, էջ 101-103)):

[2393] Pliny, Natural History, Vol. II, VI, 29, p. 358.

[2394] Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 98-99:

շատակումից և միասնական հանդես գալուց, հաստատվել էր Կուրի ձախափնյակում: Սակասաններ-Սակասենե-սակեսիններ անվանումները որոշակի ինչյունաբանական տարբերություններով հանդերձ ցույց են տալիս, որ սրանց մեջ սակ-սկյութների անվանման առկայությունն անժխտելի է: Սակեսիններն աշխարհագրորեն տեղորոշվում են XVIII սատրապությունում, որտեղ կար սկյութական մեծ գաղթականություն, ընդ որում, ավելի լայն առումով սակեսիններին նույնացնում ենք սասպեյրների հետ, իսկ այս նույնացումը ցույց է տալիս, որ Աքեմենյան պետության մայրամուտին սատրապության սահմանները փոփոխության չէին ենթարկվել[2395]: Հետևաբար քննություն չի բռնում նաև այն ուսումնասիրողների տեսակետը, որոնք փորձում են XV սատրապությունը տեղադրել Այսրկովկասում՝ փորձելով սակերին տեղորոշել Սակասենի տարածքում, այսինքն՝ Գանձակ (ներկայումս՝ Գյանջա) քաղաքի շրջակայքում[2396]:

5.5. Աքեմենյան ռազմավարչական մի պաշտոնի շուրջ

Անտիկ հեղինակներն Աքեմենյան տերության գոյության ողջ ընթացքում՝ մ. թ. ա. VI-IV դարերում, հիշատակում են վարչաաշխարհագրական բառակապակցություններ, որոնց տեղադրությունը և դրանք կառավարող պետական բարձրաստիճան պաշտոնյաների՝ պարսից արքունիքում զբաղեցրած դիրքն առ այսօր հստակ պարզաբանում չի ստացել: Ստորև կքննենք հին հեղինակների՝ խնդրո առարկայի մասին բոլոր տեղեկությունները՝ անհրաժեշտության դեպքում համադրելով Աքեմենյան սեպագիր արձանագրություններում հիշատակվող աշխարհագրական բառակապակցությունների հետ[2397]:

[2395] Ի. Պյանկովի մարական սատրապության օրթոկորյուբանտիների նույնացումը ալսրկովկասյան սակեսիններ հետ (տե՛ս Дьяконов И., История Мидии, с. 248, 447) համարում է սխալ և օրթոկորյուբանտիներին նույնացնում է դերբիկների հետ, որոնք բնակվել են Կասպից և Արալյան ծովերի միջև, չնայած Մարաստանի հետ տարածքային առումով անմիջականորեն չեն սահմանակցել (տե՛ս Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов..., с. 43, 49): Օրթոկորյուբանտիներին համարել են նաև թրակա-փռյուգական գեղ և տեղադրել հին Մարաստանի տարածքում (տե՛ս Պետրոսյան Ս., Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին, էջ 46-58; Хорикян О. Г., Об этническом составе X сатрапии ахеменидской Персии, с. 128-132):

[2396] XV սատրապության տեղադրության մասին մանրամասն տե՛ս Khorikyan H., On Location of XI and XV Satrapies of Achaemenid Persia, pp. 23-29.

[2397] Այդ բառակապակցություններն արդեն քննարկել ենք մեր մեկ այլ աշխատության մեջ: Տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 35-39:

Այսպես, Հերոդոտոսը հայտնում է, որ Դարեհ Ա-ն Օտանեսին նշանակել էր առափնյա (շրջանի-Խ. Հ.) զորքերի ստրատեգոս՝ հրամանատար[2398], այսինքն՝ Օտանեսի ձեռքում կենտրոնացված էր միայն ռազմական իշխանությունը: Հերոդոտոսը միաժամանակ գրում է, որ Դարեհ Ա-ի եղբայր Հյուստասպեսի որդի Արտափրեներսը Ասիայի առափնյա բոլոր ժողովուրդների կառավարիչն էր, ուներ մեծ զորք և շատ նավեր[2399]: Քսերքսեսի ժամանակ Ասիայի առափնյա զորքերի ստրատեգոսը Հյուդառնեսն էր[2400], ինչը նշանակում է, որ Հյուդառնեսը վարչական կառավարման լիազորություններ չի ունեցել: Ստացվում է, որ ժամանակ առ ժամանակ ռազմական և վարչական իշխանությունները կա՛մ բաժանված են եղել մի քանի հոգու միջև, կա՛մ էլ միավորված՝ մեկ հոգու մեջ:

Դիոդորոս Սիկիլիացին Կյուրոս Մեծի ժամանակ Հարպագոսին հիշատակում է որպես ծովի ստրատեգոս[2401], այսինքն՝ խոսքը վերաբերում է առափնյա ժողովուրդների հրամանատարին կամ էլ առափնյա շրջաններում գտնվող նավատորմի հրամանատարին: Դիոդորոս Սիկիլիացին Կյուրոս Կրտսերին անվանում է ծովի մոտ գտնվող սատրապությունների կառավարիչ (հեգեմոն)[2402]: Պլուտարքոսը Կյուրոս Կրտսերին հիշատակում է Լյուդիայի սատրապ և առափնյա նահանգների ստրատեգոս[2403]: Մեկ այլ տեղեկությունում Դիոդորոս Սիկիլիացին և Քսենոփոնն այդ պաշտոնում՝ ծովափի կառավարիչ, հիշատակում են ստրատեգոս Ստրուտոսին[2404]: Դիոդորոս Սիկիլիացին նշում է, որ այդ պաշտոնին հավակնում էր նաև ստրատեգոս Օրոնտեսը[2405], իսկ Մենտորը նշանակվում է Ասիայի մերձափնյա շրջանների գլխավոր հրամանատար[2406]: Մենտորը մեկ այլ տեղեկությունում հիշատակվում է ասիական ծովափի կառավարիչ՝ նրա՝ որպես գլխավոր հրամանատարի վրա դնելով ապստամբների դեմ պատերազմելու պարտականությու-

[2398] Herodotus, Vol. III, V, 25, p. 26.

[2399] Անդ, V, 30, էջ 30:

[2400] Անդ, VII, 135, էջ 436:

[2401] Diodorus of Sicily, with an English translation by C. H. Oldfather, Vol. IV, Books IX-XII, Cambridge-Massachusetts-London, 1956, IX, 35, 1, p. 46.

[2402] Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars II, XIV, 19, 25; 26, 80, pp. 825, 834.

[2403] Plutarch's Lives, Vol. XI, Artaxerxes, II, 3, p. 130.

[2404] Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars II, XIV, 99, 45, p. 904; Ксенофонт, Греческая история, IV, 8, 17, с. 367.

[2405] Diodori Bibliotheca Historica, Vol. II, XV, 91, 5, p. 500.

[2406] Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVI, 50, 30, p. 55

ները[2407]: Տիսսափեռնեսը ծովափնյա շրջանի ստրատեգոսն էր[2408], այսինքն՝ այն տարածքների, որոնք կառավարում էր Կյուրոս Կրտսերը[2409], Փառնաբազոսը ևս եղել է ծովին սահմանակից շրջանների հրամանատարը[2410]: Թեմիստոկլեսի նամակներից մեկում հիշատակվում է «ծովի մոտ ապրող (ծովափնյա) ժողովուրդների թագավորի սատրապ» (σατράπῃ βασιλέως ἐπί τοῖς πρὸς θαλάσσῃ ἔθνεσιν) Արտաբազոսը[2411], այսինքն՝ պարսից արքան նկատի է առնված որպես «ծովափնյա ժողովուրդների» գերագույն տիրակալ: Դատելով այլ աղբյուրներից՝ Արտաբազոսը Դասկիլեյայի սատրապն էր[2412]:

Համաձայն Արիանոսի՝ Դարեհ Գ-ն Մեմնոնին նշանակել էր Ստորին Ասիայի[2413] կամ ողջ ծովափնյա շրջանի կառավարիչ և ամբողջ նավատորմի հրամանատար[2414]: Մեջբերված տեղեկություններում հիմնականում տեսնում ենք, որ գործ ունենք առափնյա զորքերի ստրատեգոսի հետ, և բնական է, որ առանձին դեպքերում ստրատեգոսը համադրելու էր իր ռազմական գործունեությունը վարչական պարտականությունների հետ՝ դառնալով նաև առափնյա ժողովուրդների կառավարիչ կամ սատրապ (Հերոդոտոս, V, 30; Դիոդորոս Սիկիլիացի, XIV, 19, 25; 26, 80; XVI, 52, 5; Պլուտարքոս, Արտաքսերքսես, II, 3; Արիանոս, I, 20, 3; II, 1, 1): Առանձին դեպքերում, օրինակ՝ Կյուրոս Կրտսերի պարագայում, հենց վարչական բարձր դիրքն էր պայմանավորում նաև ռազմական պաշտոնի համադրումը: Ամեն դեպքում, ուշադրություն դարձնենք մի իրողության վրա, որ առափնյա զորքերի ստրատեգոսը ռազմական պաշտոն էր, այսինքն՝ սատրապի կողքին մշտապես կար ռազմական պաշտոնյա, որը սահմանափակելու էր սատրապի իշխանությունը: Հետևաբար, Փոքր Ասիայում մշտապես տեղի ունեցող պատերազմների պայմաններում ռազմական առաջնորդը դառնում էր նաև սատրապ, կամ էլ սատրապն էր օժտվում ռազմական լիազորություններով: Անտիկ հեղինակների տեղեկությունների

[2407] Անդ, XVI, 52, 5, էջ 57:
[2408] Thucydides, Vol. IV, VIII, 5, 4, p. 198.
[2409] Ксенофонт, Греческая история, III, 1, 3, с. 304. Տե՛ս նաև Shourkaei H. B., La satrapie de Phrygie hellespontique (Daskyleion), p. 10.
[2410] Diodori Bibliotheca Historica, Vol. I, Pars II, XIII, 36, 25, p. 722.
[2411] Themistoclis Epistolae, XVI, p. 755, in: Epistolographi Graeci.
[2412] Thucydides, Vol. I, I, 129, p. 216.
[2413] Հերոդոտոսը նույնպես Ասիան բաժանում էր երկու մասի՝ Վերին և Ստորին Ասիայի՝ բաժանելով Հալյուս գետով (տե՛ս Հերոդոտոս, I, 72; 95, 103; 105; 177; IV, 1), այսինքն՝ Ստորին Ասիան ընկնում էր Հալյուսից արևմուտք և հարավ-արևմուտք:
[2414] Arrian, Vol. I, I, 20, 3; II, 1, 1, pp. 86, 124.

գերակշիռ մասը ցույց է տալիս, որ Փոքր Ասիայի առափնյա զորքերն ունեցել են հրամանատար, ընդ որում՝ առափնյա զորքերը տարածական առումով պետք է ընդգրկեին լայն աշխարհագրություն, հետևաբար ստրատեգոսի ենթակայության տակ էին Աքմենյան տերության՝ Փոքր Ասիայի արևմտյան և հարավային առափնյա շրջաններում կենտրոնացած զորքերի և նավատորմի հրամանատարությունը: Անկասկած, ռազմական նման տիտղոսի առաջացումը կապված էր հույների հետ անընդմեջ պատերազմներով: Հետևաբար, Փոքր Ասիայում տեղի ունեցող իրադարձություններին քաջատեղյակ Հերոդոտոսը, որը նաև ժամանակագրական առումով պատմիչներից առաջինն է իր վերը մեջբերված տեղեկությամբ (V, 25), միանշանակ խոսում է սատրապից տարբեր պարսից ռազմական բարձրաստիճան պաշտոնյայի մասին, որը հին հեղինակների մոտ հիմնականում հայտնի էր «առափնյա զորքերի ստրատեգոս» տիտղոսով:

Բարձրաստիճան ռազմական պաշտոնյան կարանոսն էր, որի մասին հիշատակում է Քսենոփոնը: Վերջինս հայտնում է, որ Կյուրոս Կրտսերին պարսից արքան հանձնում է ամբողջ առափնյա ժողովուրդների/շրջան(ներ)ի իշխանությունը և նշանակում Կաստոլոսի (Լյուդիայի կենտրոնական մասում) դաշտում հավաքվող (իմա՛ զորահանդեսի) զորքերի կարանոս[2415]: Հույն պատմիչը նույն տեղեկությունը կրկնում է նաև «Անաբասիս»-ում, այն տարբերությամբ, որ Կյուրոս Կրտսերին հիշատակում է որպես ստրատեգոս և Լյուդիայի, Մեծ Փռյուգիայի ու Կապադովկիայի սատրապ[2416]: Քսենոփոնի տեղեկություններից կարող ենք ենթադրել, որ և՛ կարանոսը[2417], և՛ ստրատեգոսը հավասարազոր ռազմական պաշտոններ են: Ընդ որում, Կյուրոս Կրտսերի ձեռքում մի քանի սատրապությունների և ռազմական կառավարման կենտրոնացումը, թերևս, խոսում է, այսպես ասած, ավելի ընդարձակ ռազմավարչական միավորների՝ տոպարքիաների գոյության մա-

[2415] Xenophon, Hellenica, Books I-V, with an English translation by C. L. Brownson, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, I, IV, 3, pp. 32, 34; Ксенофонт, Греческая история, I, 4, 3, с. 257. Ավելի ուշ գլխավոր հրամանատարը Տիսսափեռնեսն էր (տե՛ս Xenophon, Hellenica, III, 2, 13, p. 202):
[2416] Xenophon, Anabasis, Vol. III, I, I, 2; IX, 7, pp. 2, 82.
[2417] Կարանոս բառի ծագման, ստուգաբանությունների և նշանակությունների մասին մանրամասն տե՛ս Rung E., Some Notes on *Karanos*..., pp. 334-340; Рунг Э. В., Κάρανος/Kārana в военно-административной системе Ахеменидской империи, Иран и античный мир: Политическое, культурное и экономическое взаимодействие двух цивилизаций, Тезисы докладов международной научной конференции (Казань, 14-16 сентября 2011 г.), Казань, 2011, с. 18-19.

սին, որոնց քանակը Աքեմենյան տերությունում տարբեր ժամանակներում չորսից յոթն էր[2418]: Հետևաբար, Կյուրոս Կրտսերի ձեռքում էր կենտրոնացած տերության արևմտյան կողմի, ուշ շրջանի սասանյան տերմինաբանությամբ քուստի պաշտպանությունը, իսկ կարանոսն էլ որոշակիորեն կարող է համեմատվել սասանյան պադգոսպանի հետ: Աքեմենյան կառավարման համակարգին քաջատեղյակ Քսենոփոնի մեկ այլ աշխատությունից տեղեկանում ենք, որ Կյուրոս Կրտսերից առաջ ռազմական և վարչական իշխանությունները հստակ տարանջատված են եղել[2419]: Ընդհանրապես, հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Կյուրոս Կրտսերի «Կաստոլոսի դաշտում հավաքվող զորքերի կարանոս» տիտղոսը շատ ավելի խորն իմաստ ուներ: Աքեմենյան արքայազնի իշխանության տակ գտնվող զորքերի հավաքումը Կաստոլոսի դաշտում սոսկ ռազմական ստուգատես չէր, այլև սատրապական իշխանությունը կարանոսի ռազմավարչական լիազորություններով իր հավատարմությունն էր արտահայտում մեծ արքային՝ հավաքագրելով վարչական միավորի տարածքից գանձվող հարկերը, գումարելով դատական նիստեր: Այսպիսի համանման իրողությունները տարածված էին տարբեր ժամանակներում տարբեր ժողովուրդների մոտ. օրինակ, հին հռոմեական «Մարսյան դաշտերը» կամ ֆրանկների «Մարտյան դաշտերը»:

Կեղծ-Արիստոտելի մի հետաքրքիր տեղեկությունից պարզվում է, որ «Ասիայի ամբողջ կայսրությունը (իմա՛ պարսից տերությունը-Խ. Հ.)՝ արևմուտքում սահման ունենալով Հելլեսպոնտոսը, արևելքում Ինդոսը, ըստ ցեղերի բաժանված էր Մեծ արքայի զորավարների, սատրապների և հպատակ-արքայորդիների միջև»[2420]: Փաստորեն, տեղեկությունից ակնհայտ է, որ պարսից տերության կառավարումն իրականացվում էր զորավարների՝ կարանոս-ստրատեգոսների, սատրապների և արքայազների միջոցով, ընդ որում՝ արքայազների վերջում հիշատակվելը ցույց է տալիս, որ նրանք համադրել են ռազմավարչական՝ ստրատեգոսի և սատրապի իշխանությունը: Նշենք նաև, որ մեր կարծիքով, հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվող «նրանք (այն երկրները), որոնք ծովի մոտ են» (*tyaiy drayahyā*) աշխարհագրական բառակապակցությունն առավել կամ պակաս տարածքային ընդգրկումով կարելի է նույնացնել առափնյա զորքերի/ժողովուրդների/շրջանների զորավարի ղեկավարած տարածքի, այսինքն՝ Փոքր Ասիայի հարավային ծովափնյա շրջանների հետ: Առափնյա զորքերի/ժողովուրդների/շրջանների զորավարի գլխավոր առաքելությունը, ըստ երևույթին, նաև նավատորմի ընդհանուր հրամանատարությունն էր, հետևաբար, առափնյա բառի ընդգծումը հենց այդ իմաստով պետք է ընդունենք, հատկապես, որ նավատորմի կառավարումն անմիջականորեն դրված էր Աքեմենյան արքայորդիների վրա[2421]: Աշխարհագրական առումով առափնյա զորքերը/ժողովուրդները/շրջանները համապատասխանում են Հերոդոտոսի հիշատակած առափնյա Ասիային[2422]՝ Փոքր Ասիայի արևմտյան և հարավային ծովամերձ երկրներին՝ Հոնիային, Կարիային, Լյուկիային, Կիլիկիային:

Մեր քննության համար հետաքրքրություն է ներկայացնում Կտեսիասի տեղեկությունը Կյուրոս Մեծի կրտսեր որդու՝ Բարդիա-Տանաոքսարեսի մասին, որի տիրույթներն է համարում Բակտրիան, Խորեզմը, Պարթևքը, Կարմանիան[2423]: Ամենայն հավանականությամբ, իր բովանդակությամբ կարանոսին համարժեք է Տանաոքսարեսի δεσπότης (տեր, տիրակալ, առաջնորդ) բնորոշումը, ի տարբերություն, կողքին հիշատակվող Սպիտակես և Մեգաբերնես սատրապների[2424]:

Վերջում անդրադառնանք նաև մի հարցի: Կարանոսի հիմքում ընկած է հին պարսկերեն *kāra* «զորք-ժողովուրդ, աշխարհազոր, ժողովուրդ» բառը[2425]: Եթե հին պարսկերեն *spāda* բառը կապված էր կանոնավոր, մշտական բանակի հետ, ապա *kāra* բառն ուներ «զորք-ժողո-

[2418] Հերոդոտոս, VII, 82; Xenophon, Anabasis, Vol. III, I, VII, 11-12, pp. 64, 66. Այս մասին մանրամասն տե՛ս Rung E., Some Notes on *Karanos*..., pp. 348-350; Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 48. Քսենոփոնի նշած չորս զորավարներից մեկի՝ Տիսսափեռնեսի հիշատակությունն իրավացիորեն խոսում է այն մասին, որ պարսից արքան, այլևս չճանաչելով Կյուրոս Կրտսերի ռազմավարչական լիազորությունները, վերջինիս փոխարինել էր իրեն հավատարիմ Տիսսափեռնեսով, այսինքն՝ Փոքր Ասիան համարվել է առանձին ռազմական շրջան:

[2419] Xenophon, Memorabilia. Oeconomicus. Symposium. Apologia, translated by E. C. Marchant, O. J. Todd, Cambridge-Massachusetts-London, 1997, Loeb Classical Library, Oec., IV, 10-13; 16, pp. 394, 396.

[2420] De Mundo, ed. by E. S. Forster, Oxford, 1914, 398[a].

[2421] Հերոդոտոս, VII, 97:

[2422] Անդ, I, 177; VI, 43:

[2423] Ctesias' History of Persia, p. 173.

[2424] Անդ: Համմն. Пьянков И. В., Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана, с. 102.

[2425] Rung E., Some Notes on *Karanos*..., p. 336; Хуршудян Э., Государственные институты парфянского и сасанидского Ирана, Алматы, 2015, с. 198. Հավանական է, որ կարանոս բառի հիմքում ընկած է սանսկրիտերեն *nay* «տանել, առաջնորդել» բայը և կարանոս նշանակել է *kāra-naya* («զորքի առաջնորդ, զորահրամանատար»): Տե՛ս Рунг Э. В., Тиссаферн и Гидарниды..., с. 20.

վուրդ, աշխարհազոր, ժողովուրդ» նշանակությունը[2426]: Աքեմենյանների ժամանակ աշխարհազորը հավաքվում էր իրանական ժողովուրդներից, հատկապես պարսիկներից: Այս տեսանկյունից, իհարկե, Փոքր Ասիայի կարանոսի ենթակայության տակ միայն իրանական ժողովուրդներ, առավել ևս միայն պարսիկներ չէին կարող լինել[2427]: Հարկավ, կարանոսի ռազմական ուժերի կորիզը պետք է պարսիկներից կազմված լիներ, իսկ ընդհանուր առմամբ նրա ենթակայության տակ բազմազգ բանակ էր՝ կազմված ինչպես Փոքր Ասիայից, այնպես էլ տերության այլ հատվածներից հավաքագրված զինվորներից:

[2426] Хуршудян Э., Государственные институты парфянского и сасанидского Ирана, с. 198; Frye R., The History of Ancient Iran, p. 119.
[2427] Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 356:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ի մի բերելով կատարված քննության արդյունքները, կարող ենք եզրակացնել՝

ա) Հոնիական հարուստ քաղաքներն Աքեմենյան Պարսկաստանի I սատրապության համակարգում և ընդհանրապես Փոքր Ասիայում ավելի քան երկու հարյուր տարի պահպանեցին իրենց ռազմաքաղաքական ու տնտեսական կարևորագույն նշանակությունը:

բ) Կարիացիների հետ Աքեմենյանները հաստատել էին վարչական կառավարման այնպիսի համակարգ, որը պայմանավորված էր ոչ միայն պարսիկների քաղաքականությամբ, այլ նաև Կարիայի ներքին առանձնահատկությամբ: Կարիան I սատրապության կազմում ուներ ռազմավարական կարևոր նշանակություն և բավականին ընդարձակ տարածք, որը կառավարվում էր պարսիկ սատրապի կամ էլ տեղական կառավարիչների, հատկապես՝ Հալիկառնասոսի դինաստների կողմից:

գ) Լյուկիական «դինաստիական պրինցիպատը» կրկնում է Աքեմենյան տերության քաղաքական կառավարման համակարգը, երբ Լյուկիայի տարածքը ներկայանում է որպես պարսից տերության առանձին «միկրոկոսմոս», որտեղ Քսանթոսի դինաստն իր վասալների նկատմամբ ուներ այն նույն դերն ու նշանակությունը, ինչ որ Աքեմենյան արքաներն իրենց ենթակա սատրապների և կայսերական պաշտոնյաների նկատմամբ:

դ) Մագնեսյանների, էոլիացիների, միլյուացիների, պամփյուլիացիների նկատմամբ պարսից արքունիքը հաստատում էր կառավարման այնպիսի համակարգ, որը պայմանավորված էր I սատրապության ձևավորման տեղական առանձնահատկություններով: Մյուս կողմից էլ, ի վերջո, Աքեմենյանների նպատակն էր առավելագույնս արդյունավետ կազմակերպել հարկատվության գործը և հաջողությամբ պաշտպանել Փոքր Ասիան բալկանյան հույների հարձակումներից:

ե) II սատրապությունը կամ Լյուդիան տերության հարուստ նահանգներից մեկն էր և պարսից արքունիքի համար ուներ բացառիկ նշանակություն, ինչը կապված էր Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության հետ: Այս իրավիճակով էլ պայմանավորված՝ լյուդիական սատրապության տարածքը պարբերաբար ենթարկվում էր վարչական վերաձևումների. որոշ ենթաշրջաններ դառնում էին առանձին սատրապություններ կամ միացվում էին հարևան սատրապություններին:

զ) Հելլեսպոնտոսյան և Մեծ Փոյուգիաներն Աքեմենյան Պարսկաստանի համար ունեցել են առաջնակարգ նշանակություն: Ձույգ Փոյուգիաներն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանում պարբերաբար ենթարկվում էին վարչական վերաձևումների՝ միավորվելով այս կամ այն վարչական միավորին, կամ էլ կազմելով առանձին սատրապություն: Երկու Փոյուգիաներն ընդգրկված էին III սատրապության մեջ. Փոքր կամ Հելլեսպոնտոսյան Փոյուգիան համապատասխանում էր .Հերոդոտոսի հիշատակած աջակողմյան հելլեսպոնտոսցիներին, իսկ Մեծ Փոյուգիան՝ փոյուգիացիներին:

է) III սատրապությունն ունեցել է ընդարձակ տարածք, որի սահմաններն Աքեմենյան տիրապետության ընթացքում փոփոխվում էին, և նույն սատրապության նախկին ենթաշրջաններ որոշ դեպքերում վերակազմավորվում են առանձին սատրապությունների:

ը) Կապադովկիա անունը, առաջանալով Պակտյուիկեից հյուսիս և նշանակելով Ստորին կամ Ներքին Պակտյուիկե, ժամանակի ընթացքում վերանում է հյուսիսում և ամրապնդվում հարավում, և ավելի ուշ արդեն Պակտյուիկեի տարածքը մատնանշելու համար գործածվում է Կապադովկիա անունը: Արևելքում Կապադովկիան Պակտյուիկեն ներառելուց հետո Հայաստանի սատրապությունից բաժանված էր Կոռոմանդոնի (Որոմանդոն), Զիգոնի լեռներով, Անտիտավրոսի հյուսիսարևմտյան ճյուղավորումներով և ներկայիս Եշիլ-Իրմակ կոչվող լեռնաշղթայով:

թ) Չնայած իր փոքր տարածքին՝ Կիլիկյան սատրապությունն Աքեմենյանների համար ուներ կարևոր ռազմավարական նշանակություն, ինչը պահպանվեց Աքեմենյան Պարսկաստանի գոյության ողջ ժամանակաշրջանում: Սկզբնաղբյուրների բազմակողմանի քննությունը ցույց է տալիս, որ Կիլիկյան սատրապությունը հյուսիս-արևելքում երբեք չի հասել Մելիտինե, քանի որ հետագա Կոմագենե կոչված երկրի տարածքը մտել է Սատրապական Հայաստանի կազմի մեջ:

ժ) Եգիպտոսն Աքեմենյան տերության հարուստ և ընդարձակ սատրապություններից մեկն էր, որտեղ Աքեմենյան թագավորները մշտապես ձգտում էին ռազմաքաղաքական-տնտեսական գործուն միջոցներով ամուր պահել իրենց իշխանությունը: Վարչական առումով VI սատրապությունը բաժանված էր չորս ենթաշրջանների՝ Եգիպտոս, Լիբիա, Կյուրենե և Բարկա:

ժա) Պարսիկներին հայտնի Արաբիա երկրանունը հետագայում տարածվում է ամբողջ Արաբական թերակղզու վրա, այն դեպքում, երբ հին

աղբյուրներում արաբների տեղադրությունն աչքի է ընկնում աշխարհագրական լայն ընդգրկմամբ: Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա, ելնելով վերջինիս տարածքը զբաղեցնող ժողովուրդների էթնոկրոնական տեղական առանձնահատկություններից՝ պարսից արքունիքը վարչական առումով այն բաժանում է մի քանի ենթաշրջանների, որոնք ընդհանրական առումով հունահռոմեական աղբյուրներում հայտնի են Պաղեստին կամ Պաղեստինյան Սիրիա անվանումով:

ժբ) Հին պարսկական սեպագիր արձանագրությունների Աթուրան ընդգրկում էր Անդրգետքը և Ասորեստանը, ընդ որում՝ անտիկ աղբյուրների Սիրիան նույնպես համապատասխանում էր Անդրգետքին և առանձին դեպքերում նաև Ասորեստանին:

ժգ) Փյունիկյան քաղաքներն իրական դաշնություն չեն կազմել, քանի որ պատերազմների ժամանակ փյունիկյան նավերը ղեկավարում էր ոչ թե գլխավոր հրամանատարը, այլ յուրաքանչյուր քաղաքի թագավորը, չնայած փյունիկյան մյուս թագավորների նկատմամբ Քսերքսեսի արշավանքի ժամանակ Սիդոնի թագավորն ուներ գերակա դիրք: Փյունիկիայի նկատմամբ պարսից արքունիքի քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես «կառավարվող ինքնավարություն»:

ժդ) Միլիդուն լայն առումով համապատասխանում է Պակտյուիկեին և վերջինիս բաբելոնական համարժեքն է: Մ. թ. ա. V դարի վերջին Եփրատից արևմուտք ընկած տարածքները, ի մեջ առյալ հետագա Փոքր Հայքը, մտել են XIII սատրապության մասը կազմող Արևմտյան Հայաստան հյուպարքիայի մեջ: XIII սատրապության կենտրոնը Վան քաղաքն է եղել:

ժե) Հայաստանն անձամբ չնվաճվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, այսինքն՝ վերջինս չէր կարող Հայաստանը համարել «նիզակով նվաճված երկիր»:

ժզ) Հերոդոտյան սասպեյրները բնակվել են Վիրքում և ծագումով եղել են, թերևս, սկյութական ցեղ: Սասպեյրների տեղադրության ցանկացած փորձ Հայկական լեռնաշխարհում մատնված է անհաջողության, քանի որ այդ ցեղը գտնվել է XVIII սատրապության կազմում, իսկ վերջինս էլ տեղադրվում է Կուր գետի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի միջև:

ժէ) Ապոլոդորոսի Արաքսը նույնանում է Փասիսի վտակ Ղվիրիլային, հետևաբար, Արաքսի նույնացումը հայկական Երասխին սխալ է, և երբեք էլ Իբերիայի քաղաքական սահմանները չեն հասել մինչև Երասխի վերին ու միջին հոսանքների շրջանները:

ժը) Հին Էլամի տարածքն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության դարաշրջանում համապատասխանում էր Էյումայիս, Սու-

սիանա, Կիսիա կամ Քոսսեյա, Ուքսիա անուններով երկրներին, որոնցից յուրաքանչյուրն աշխարհագրական առումով ամբողջությամբ կամ մասամբ նույնանում էր Էլամին կամ վերջինիս այս կամ այն մասին:

ժթ) IX սատրապությունը կազմված էր վարչական երկու ենթաշրջաններից՝ Բաբելոն քաղաքից և դեպի հյուսիս ընկած «մնացյալ Ասորեստանից»: Հին աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Աքեմենյան Պարսկաստանի այս նահանգը հիմնականում ընդգրկում էր Ստորին Միջագետքը՝ Բաբելոնիայի մարզը, և հին Աշշուրի տարածքը: Ընդորում, Ասորեստանի հյուսիսարևմտյան ընդարձակ մի հատվածը մտնում էր հայկական սատրապության կազմի մեջ:

ի) X կամ մարական սատրապությունն Աքեմենյան Պարսկաստանի ընդարձակ և հարուստ սատրապություններից մեկն էր, որը կազմված էր չորս ենթաշրջաններից: Աքեմենյան տիրապետության վերջին շրջանում և հատկապես Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ այդ վարչական միավորները դարձել էին առանձին սատրապություններ, որոնք պատմական կարևոր դերակատարություն ունեցան նաև հետագա դարաշրջանում:

իա) Կադուսիները տարածվել են Կասպից ծովի հարավարևմտյան ափամերձ տարածքներում: Մարական, Աքեմենյան և հաջորդող ժամանակներում կադուսիները պահպանում են իրենց անկախ կամ կիսանկախ գոյությունը՝ դաշնակցային հարաբերություններով կապվելով իրանական այս կամ այն պետության հետ:

իբ)Պարսան կարելի է համարել Աքեմենյան տերության թիվ մեկ սատրապությունը, որն օգտվում էր որոշակի արտոնություններից: Աքեմենյանների բուն ոստանը տարածվում էր Պասարգադայի և Պերսեպոլիսի շրջանում, ընդ որում Պարսայի ցեղային կազմակերպության օրինակով կազմված էր ամբողջ տերության վարչական բաժանման համակարգը:

իգ) XII և XVI սատրապությունների էթնիկական կազմի և տարածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս Աքեմենյանների կարևոր վարչական միավորներից էին, որոնք ձևավորվել էին իրանական էթնիկական տարրի հիմքի վրա:

իդ) XIV սատրապությունը տեղադրվում է Մարական սատրապությունից հարավ-արևելք և Պարսքից արևելք ընկած շրջաններում: Հետևաբար, մյուկերի և ուտիների այդ շրջաններից դուրս տեղորոշումները չեն հաստատվում սկզբնաղբյուրների տեղեկություններով:

իե) XI և XV սատրապությունները գտնվել են Միջին Ասիայում՝ աշխարհագրորեն տարբեր վայրերում, և Այսրկովկասում նրանց տեղադ-

բության յուրաքանչյուր փորձ չի համապատասխանում պատմական իրականությանը: Արամեական փաստաթղթերը ցույց են տալիս, որ կասպերը մտել են Ելեփանտինեի ռազմական կայազորում ծառայող ժողովուրդների մեջ:

իզ) Աքեմենյան Պարսկաստանի Սակա երկիրը համապատասխանում է XV սատրապության մեջ հիշատակվող սակերի երկրին: Վերջինիս մեջ մտնում էին հաումավարգա և տիգրախաուդա սակերը, որոնք արտացոլված են «սոգդերից այն կողմ գտնվող սկյութներ» աշխարհագրական հասկացության մեջ:

իէ) VII սատրապության տարածքի վարչական վերաձևումներն առաջին հերթին նպատակ ունեին ամրապնդելու կենտրոնական իշխանության ազդեցությունը տերության հյուսիսարևելյան ծայրամասում: Լայն առումով այս սատրապությունը կարելի է տեղադրել ներկայիս Աֆղանստանի արևելյան, Պակիստանի կենտրոնական և Հնդկաստանի ծայրհյուսիսային շրջաններում:

իը) Աքեմենյան տերության կազմում եղել են չորս հնդկական սատրապություններ՝ Գանդարան և Սատտագյուտիան Արաքոսիայի՝ «Սպիտակ Հնդկաստանի» արևելյան հատվածում, Մական՝ ժամանակակից Մակրանը, Պակիստանի ծովափնյա անբերրի շրջանում ու իրանական Բելուջիստանում և վերջապես, այսպես ասած, բուն Հնդկաստանը՝ Հինդուշը՝ XX սատրապությունը:

իթ) Դարեհ Ա-ի վարչական վերափոխումները կատարվել են ժամանակագրական հերթականությամբ՝ ըստ հինգ փուլերի:

լ) Մակեդոնիան և Թրակիան կազմել են մեկ սատրապություն՝ Սկուդրա անվանումով, որը կարելի է համարել Աքեմենյան տերության XXI սատրապությունը:

լա) Նվաճված ժողովուրդների վերաբնակեցումները զգալի տեղ են գրավել Աքեմենյանների ռազմաքաղաքական և տնտեսական շահերի ոլորտում:

լբ) Այսրկովկասը պարսկական սեպագիր և եգիպտական հիերոգլիֆ արձանագրություններում հիշատակվում է երկու անգամ՝ առաջին անգամ՝ Âkaufaciyā, երկրորդ անգամ՝ «դաշտերի սակեր» անվանաձևերով:

լգ) Հին աղբյուրներում տարբեր անուններով («առափնյա զորքերի ստրատեգոս», «առափնյա բոլոր ժողովուրդների կառավարիչ», «ծովի ստրատեգոս» և այլն) բազմիցս հիշատակվող պարսկական բարձրաստիճան ռազմական պաշտոնյան համապատասխանել է կարանոսին:

SUMMARY

The conducted examination shows that first of all the safety of the country and the security of joining entity based on the Achaemenids administrative policy. Accordingly the Achaemenids, joining different tribes and peoples in one administrative unit, could keep their stable power on the large and multi-tribe territories of Asia Minor, Northern African and Eastern Mediterranean satrapies (Egypt, Arabia, Palestine, Syria and Phoenicia) and etc., as they could make the peoples of the stated satrapy against one another any time they wanted. For example, the VI Satrapy was divided into four subdistricts: Egypt, Libya, Cyrene and Barca.

On the other hand, it has been proven that Asia Minor especially with its western and southern parts developed on the basis of the unions made from the cities or the majority of any city from the point of view of administrative reshaping. This policy of the administrative reshaping was conditioned by the local peculiarities, which made the Persian court take into consideration the current situation of the given satrapy or the territory being its part joined by the interaction of the external factors.

The examination also has shown that the Persian power always remained unstable in Asia Minor as the Ionian cities of Asia Minor tried to be free acquiring the assistance from the Balkan Greeks. Recurrently the latter made invasions to Asia Minor and had notable success. Accordingly, taking into account this circumstance, the administrative reshaping constantly took place in Asia Minor, the borders of the satrapy changed, the prior sub-territories or hyparchies became satrapies, this or that local dynasts or satraps got tangible advantages and very often they tried not to obey the Achaemenids because of having large human and material capabilities.

We have also concluded:

1. Milidu broadly corresponded to Pactyica and is the latter's Babylonian equivalence. At the end of V century B.C. the territories lying west from the Euphrates, including future Armenia Minor, were most likely within hyparchy of Western Armenia, a part of 13th satrapy. The centre of the XIII Satrapy was Van.

2. Armenia was not occupied personally by Alexdander of Macedon, i.e. the latter could not consider Armenia as a "spear-conquered country".

3. Herodotus' Saspeires dwelled in Virk and probably were of Scythian descent. Any attempt to locate the Saspeires in the Armenian Highlands is a failure as the tribe was a part of the XVIII Satrapy and the latter lies between the River Kur and the Caucasus Mountains.

4. The Araxes River of Apollodorus is identified with Kvirila, tributary of the Phasis, consequently, the identification of the Araxes with the Armenian Yeraskh is not right and the political borders of Iberia never reached the upper and middle courses regions of the Yeraskh.

5. The territory of ancient Elam during the reign of Achaemenid Persia corresponded to the countries named Elymais, Susiana, Cissiya or Cossaei, Uxia, each of which geographically -completely or partially- was identified with Elam or any of its parts.

6. IX Satrapy consisted of two administrative sub-regions, namely the city of Babylon and "the rest of Assyria", lying to the north. The study of the ancient sources shows that this state of Achaemenid Persia mostly included Lower Messopotamia – the province of Babylon and the territory of ancient Assur. Moreover, a large part of northwestern Assyria was part of the Armenian Satrapy.

7. X or Median Satrapy was one of the vastest and richest satrapies of Achaemenid Persia, consisting of four sub-regions. In the last period of Achaemenid rule and especially during the invasions of Alexander of Macedon, these administrative units became separate satrapies, which also played a historically important role in the following era.

8. The Cadusians also extended on the southwestern shores of the Caspian Sea. In the Median, Achaemenid periods and in later times the Cadusians maintained their independent or semi-independent existence by allying with this or that Iranian country.

9. Parsa can be considered as number one satrapy of Achaemenid Empire, which enjoyed certain privileges. The Achaemenid dynasty itself was spread in the region of Pasargadae, Persepolis. Moreover, the system of administrative division of the whole empire was modeled on the example of the Persian tribal organization.

10. A study of the ethnic composition and the territory of the XII and XVI Satrapies shows that the latter were one of the most important administrative units of the Achaemenids, formed on the basis of the Iranian ethnic element.

11. XIV Satrapy lay somewhere in the regions south-east of Median

Satrapy and east of Persia. Therefore, the locations of the Myci and Utii outside these regions are not confirmed by the source data.

12. XI and XV Satrapies were found in Central Asia, in geographically different places, and every attempt to place them in the Caucasus does not correspond to the historical reality. The Aramaic documents show that the Caspians were among the nations serving in the military garrison of Elephantine.

13. The country of Sakā in Achaemenid Persia corresponds to the land of the Sacae mentioned in the XV Satrapy. The latter included Sakā-haumavargā and Sakā-tigraxaudā, which are reflected in the geographical concept of "the Scythians who are beyond the Sogdians".

14. The administrative redivisions of the territory of the VII Satrapy was primarily aimed at strengthening the influence of the central government in the northeastern part of the empire. In a broad sense this satrapy could be placed in the area of today's eastern Afghanistan, central Pakistan, and the far north of India.

15. The Achaemenid Empire consisted of four Indian Satrapies: Gandara and Sattagydia in the eastern part of Arachosia-"the White India"; Maka, currently Makran, in a barren coastal region of Pakistan and Iranian Balochistan; and finally, so to speak, proper India– Hindush-XX Satrapy.

We have also discussed the administrative division principle of Achaemenid State, administrative status of Skudra, resettlement policy, the location of Ākaufačiya country in Transcaucasia, issues of the military-political status of Karanos presenting historical-geographical, linguistic and political new viewpoints.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀ-Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), ԵՊՀ

ԼՀԳ -Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան

ԲԵՀ-Բանբեր Երևանի համալսարանի, Երևան

ԲՀ-Բանբեր հայագիտության, Երևան

ԲՄ-Բանբեր Մատենադարանի, Երևան

ՀԱ-Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երևան

ՄԱ-Մերձավոր Արևելք, Երևան

ՄՄԱԵԺ-Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան

ՊԲՀ-Պատմաբանասիրական հանդես, Երևան

ՊՄ-«Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան

ՎԷմ-«Վէմ» համահայկական հանդես, Երևան

Տեղեկագիր-ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան

ВДИ-Вестник древней истории, Москва

Д. К. Ш.-Доватур А. И., Каллистов Д. П., Шишова И. А., Народы нашей страны в «Истории» Геродота, Москва, 1982.

ИДПСК-Латышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе

КСИНА-Краткие сообщения Института народов Азии АН СССР, Москва

МИ-Метаморфозы истории, научный альманах, Псковский государственный университет

МИА-Материалы и исследования по археологии СССР, Москва-Ленинград

ПИФК-Проблемы истории, филологии, культуры, Магнитогорский государственный технический университет им. Г. И. Носова, Москва–Магнитогорск–Новосибирск

ПС-Палестинский сборник, Ленинград

СА-Советская археология, Москва

СНВ-Страны и народы Востока, Москва

СЭ-Советская этнография, Москва

ACUSD-Acta Classica Universitatis Scientiarum Debreceniensis

AH-Achaemenid History

AJA-American Journal of Archaeology, Baltimore / Princeton

AJBA-Australian Journal of Biblical Archaeology, Australian Society of Biblical Archaeology, University of Sydney

AJP-American Journal of Philology, Johns Hopkins University Press

AJSLL-The American Journal of Semitic Languages and Literatures, Chicago

AJT-The American Journal of Theology, Chicago

AMI-Archäologische Mitteilungen aus Iran, Verlag von Dietrich Reimer in Berlin,

AO-Archiv für Orientforschung, Graz

AOAT-Alter Orient und Altes Testament, Kevelaer / Neukirchen-Vluyn

Aramazd-Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, Oxford

ARTA-Achaemenid Research on Texts and Archaeology, Paris

AS-Anatolian Studies, London

ASHL-The Archaeology of Society in the Holy Land

AURA-Athens University Review of Archaeology, National and Kapodistrian University of Athens

AWE-Ancient West and East, Leiden

BA- The Biblical Archaeologist, New Haven

BAI-Bulletin of the Asia Institute, Bloomfield Hills

BASOR -Bulletin of the American Schools of Oriental Research, New Haven

BICS-Bulletin of the Institute of Classical Studies, London

BSOAS-Bulletin of the School of Oriental and African Studies, Oxford – Cambridge

CA-Colloquia Antiqua, Peeters, Leuven – Paris – Bristol, CT

CahDAFI-Cahiers de la Délégation Archéologique Française en Iran, Paris

CAJ-Cambridge Archaeological Journal, Cambridge

CC-Caucaso-Caspica, Российско-Армянский (Славянский) университет, Ереван

CDLB-Cuneiform Digital Library Bulletin, University of California

CLIS-Columbia Lectures on Iranian Studies, Costa Mesa, New York

CO-Classica et Orientalia, Harrassowitz Verlag, Wiesbaden

CPh-Classical Philology, Chicago

DABIR-The Digital Archive of Brief Notes & Iran Review, Samuel Jordan Center for Persian Studies and Culture, University of California, Irvine

DGRG-"Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, Vol. I, Boston, 1854; Vol. II, London, 1857.

DS-Demotische Studien, Leipzig

FHG-Fragmenta Historicorum Graecorum, Parisiis

GS-Gandhāran Studies, Centre for Gandhāran and Buddhist Studies, PK, University of Peshawar

Herom-Herom. Journal on Hellenistic and Roman Material Culture, Leuven University Press

Historia-Historia: Zeitschrift für Alte Geschichte, Wiesbaden

HŚ-Historia i Świat, Siedlce, Siedlce University of Natural Sciences and Humanities

Iran-Iran. Journal of the British Institute of Persian Studies, London

IA-Iranica Antiqua, Leiden

IC-Iran and Caucasus, Brill, Leiden

IS-Iranian Studies, Oxford

JA-Journal Asiatique, Paris

JAC-Journal of Asian Civilizations, Islamabad, PK, Taxila Institute of Asian Civilizations

JAOS-Journal of the American Oriental Society, Boston, New Haven

JANES-Journal of the Ancient Near Eastern Society of Columbia University, New York

JBL-Journal of Biblical Literature, The Society of Biblical Literature, Atlanta

JCS-Journal of Cuneiform Studies, New Haven

JHS-Journal of Hellenic Studies, The Society for the Promotion of Hellenic Studies, London

JNAA-Journal of the Numismatic Association of Australia, Sydney

JNES-Journal of Near-Eastern Studies, Chicago

JANEH-Journal of Ancient Near Eastern History, De Gruyter, Western Washington University

JNWSL-Journal of Northwest Semitic Languages, University of Stellenbosch

JRAS-Journal of the Royal Asiatic Society, London

JSEES-Japanese Slavic and East European Studies, Kyoto University

JSem-Journal for Semitics, University of South Africa, Department of Biblical and Ancient Studies

JSOT-Journal for the Study of the Old Testament, Sage Publications

JSR-Journal of Subcontinent Researches, University of Sistan and Baluchestan

NEA-Near Eastern Archaeology, The American Schools of Oriental Research

RA-Revue d'Assyriologie et d'archéologie orientale, Paris

RÉA-Revue des Études Arméniennes, Paris

RE-Pauly–Wissowa Realencyclopädie der classischen Altertumswissenschaft, Alfred Druckenmüller verlag in München, Stuttgart

SA-Scripta antiqua. Вопросы древней истории, филологии, искусства и материальной культуры, Москва

SAOC-Studies in Ancient Oriental Civilization, Chicago-Illinois

Tel Aviv-Tel Aviv Journal of the Institute of Archaeology of Tel Aviv University

TPS-Transactions of the Philological Society, London

ZA-Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, Berlin-New York

ZDMG-Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft, Leipzig – Stuttgart – Wiesbaden

ZPE-Zeitschrift für Papyrologie und Epigraphik, Bonn

ŽA-Živa Antika, Skopje

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, ՀՍՍՌ Մատենադարանի հրատ., Եր., 1944, 419 էջ:

2. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, ԵՊՀ հրատ., Եր., 1983, 552 էջ:

3. «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Ի տպարանի Մխիթարեանց, Վենետիկ, 1881, VIII+62+46 էջ:

4. Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2014, 1345+352 էջ:

5. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1965, 367 էջ:

6. Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի», «Հայաստան» հրատ., Եր., 1987, 654 էջ:

7. Դարեհ Վշտասպի՝ Բիսեթունյան արձանագրությունը, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի, ԵՊՀ հրատ., Եր., 1964, 30 էջ:

8. Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1985, 203 էջ:

9. Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, ԵՊՀ հրատ., Եր., 1989, 448 էջ:

10. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխատասիրությամբ Վ. Մ. Վարդանյանի, ԵՊՀ հրատ., Եր., 1985, 560 էջ:

11. Կոստանդին Ծիրանածին, Բանակաթեմների մասին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1970, LXV+368 էջ:

12. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք. Հ. 298 թ., կազմողներ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան, ԵՊՀ հրատ., Եր., 2007, 550 էջ:

13. «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», Սուրբ

Ղազար, Վենետիկ, 1862, ԺԱ+184 էջ:

14. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկ-յաշարյանի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1986, 651 էջ:

15. Հոմերոս, Իլիական, հին հունարեն բնագրից թարգմ. Հ. Համ-բարձումյան, Հայպետհրատ, Եր., 1955, 512 էջ:

16. Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, թարգմանութ-յուն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Կրկյաշարյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9, Հին հունական աղբյուրներ, Ա, Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, 267 էջ:

17. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխաս-յանցի, ԵՊՀ հրատ., Եր., 1982, 540 էջ:

18. Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013, 142 էջ:

19. Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2003, 2601 էջ:

20. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, պատրաստեցին՝ Մ. վրդ. Մելիք-Ադամեան, Ն. սրկ. Տէր Միքայէլեան, Վաղարշապատ, Տ-պարան Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1898, Է+448 էջ:

21. Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մա-սին, հ. Ա, Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, Եր., 1934, 268 էջ:

22. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Եր., 1991, ԿԳ+485 էջ:

23. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1983, 412 էջ:

24. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հա-յոց, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի, ԵՊՀ հրատ., Եր., 1996, 397 էջ:

25. Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1842, 12+204 էջ:

26. Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, տպ. Ն. Աղանեանի, Թիֆլիս, 1912, 191 էջ:

27. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1979, 448 էջ:

28. Պլուտարքոս, Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Ս. Գրքա-շարյան, Սարգիս Խաչենց հրատ., Եր., 2001, XII+392 էջ:

29. Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանո-թագր. Հ. Բարթիկյանի, Բյուզանդական աղբյուրներ, Ա, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1967, XIV+364 էջ:

30. Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», «Հայաստան» հրատ., Եր., 1987, 654 էջ:

31. Սանտալճեան Յ. Վ., Ասորեստանեայ եւ Պարսիկ սեպագիր ար-ձանագրութիւնք, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1901, 262 էջ:

32. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, հրատ. Ստ. Մալխասեանց, Ի տպարանի Ի. Ն. Սկորոխոդովի, Ս.Պե-տերբուրգ, 1885, ԽԸ+439 էջ:

33. Ստրաբոն, քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, ԵՊՀ հրատ., Եր., 1940, 124 էջ:

34. «Սրբոյ Հօրն Մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», ի տպ. Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1843, 640 էջ:

35. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, ԵՊՀ հրատ., Եր., 1987, 456 էջ:

36. Քարթլիս ցխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանութ-յունը ուսումնասիրությամբ և բառգրքով լույս ընծայեց Ի. Աբուլաձեն, Թբիլիսիի պետական համալսարանի հրատ., Թբիլիսի, 1953, 343 էջ (վրացերեն և հայերեն):

37. Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1970, 282 էջ:

38. Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Հայաստա-նի Գրողների Միության «Նոր-Դար» հրատ., Եր., 2000, 411 էջ:

39. Арриан, Поход Александра, перевод с древнегреческого М. Е. Сергеенко, Издательство АН СССР «Наука», М.-Л., 1962, 384 с.

40. Геродот, История в девяти книгах, перевод и примичания Г. Стратановского, Издательство «Наука», Л., 1972, 599 с.

41. Дионисий Александрийский (Периэгет), Описание ойкумены, ВДИ, 2006, 2, с. 234-251.

42. Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, 2, с. 257-356.

43. Картлис цховреба, глав. ред. Р. Метревели, Издательство

Артануджи, Тбилиси, 2008, 455 с.

44. Квинт Курций Руф, История Александра Македонского, Издательство Московского университета, М., 1963, 478 с.

45. Книга деяний Ардашира сына Папака, транскрипция текста, пер. со среднеперс., введ., коммент. и глоссарий О. М. Чунаковой, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1987, 163 с.

46. Корнелий Тацит, Анналы, т. I, Издательство «Наука», Л., 1969, 444 с.

47. Ксенофонт, Анабасис. Греческая история, пер. С. Лурье, «Издательство Астрель», М., 2010, 638 с.

48. Ксенофонт, Киропедия, издание подготовили В. Г. Борухович и Э. Д. Фролов, Издательство «Наука», М., 1976, 334 с.

49. Латышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, ВДИ, 1947, 3, с. 235-315; 4, с. 171-289; 1948, 1, с. 223-315; 2, с. 215-314; 3, с. 217-330; 4, 225-298; 1949, 1, с. 185-295; 2, с. 271-356; 3, с. 205-308; 4, с. 227-305; 1952, 2, с. 265-323.

50. Патканов К. П., Армянская География VII века, Типография Императорской Академии Наук, СПБ, 1877, 84+26 с.

51. Плутарх, Избранные жизнеописания, Издательство «Правда», М., 1987, т. I, 592 с., т. II, 608 с.

52. Скилак Кариандский, Перипл обитаемого моря, ВДИ, 1988, 2, с. 260-269.

53. Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Стратановского, Издательство «Наука», Л., 1964, 943 с.

54. Хрестоматия по истории Древнего Востока, под редакцией В. В. Струве и Д. Г. Редера, Издательство восточной литературы, М., 1963, 544 с.

55. Феофилакт Симокатта, История, перевод С. П. Кондратьева, Издательство Академии Наук СССР, М., 1957, 224 с.

56. Фукидид, История, пер. Ф. Мищенко, Академический проект, М., 2012, 557 с.

57. Эсхил, Трагедии, в переводе В. Иванова, Издательство «Наука», М., 1989, 589 с.

58. Aeschylus, Persians and Other Plays, translated by Ch. Collard, Oxford University Press, New York, XCIII+2008 p.

59. Ammianus Marcellinus, with an English translation by J. C. Rolfe, Vol. II, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1972, Loeb Classical Library, VII+683 p.

60. "Aramaic Documents of the Fifth Century B. C.", abridged and revised edition by G. R. Driver, The Clarendon Press, Oxford, 1957, XV+106 p.

61. "Aramaic Papyri of the Fifth Century B. C.", by A. Cowley, The Clarendon Press, Oxford, 1923, XXXII+319 p.

62. Arrian, Anabasis Alexandri, with an English translation by E. Iliff Robson, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, Vol. I, 1967, XVI+450 p., Vol. II, 1966, VIII+445 p.

63. Chabot J. B., Synodicon Orientale, Imprimerie Nationale, Paris, 1902, 695 p.

64. Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, Voluminis primi, Pars secunda, Editore Alfredo Firmin-Didot, Parisiis, 1901, II+1023 p.

65. Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, Sumptibus et typis Caroli Tauchnitii, t. I, Lipsiae, 1843, XXIV+284 p; t. II, Lipsiae, 1845, 269 p.

66. Cornelius Nepos, Harvard University Press, London, Cambridge, Massachusetts, 1960, Loeb Classical Library, XV+744 p.

67. Cornelius Nepos, by T. K. Arnold, E. A. Johnson, D. Appleton & Co., New-York, 1850, 403 p.

68. Corpus des Inscriptions Royales en Elamite Achemenide, par François Vallat, Thèse présentée pour l'obtention du Doctorat de IIIe cycle, Paris, 1977, 256 p.

69. Ctesias' History of Persia: Tales of the Orient, by L. Llewellyn-Jones and J. Robson, Routledge Taylor & Francis Group, London-New York, 2010, X+253 p.

70. De Mundo, ed. by E. S. Forster, Clarendon Press, Oxford, 1914, 391^{a}+486^{b}.

71. Der griechische Alexanderroman von Adolf Ausfeld, Druck und Verlag von B. G. Teubner, Leipzig, 1907, XI+253 S.

72. Dio Chrysostom, with an english translation by J. W. Cohoon, Vol. I, Harvard University Press, London-Cambridge-Massachusetts, 1949, Loeb Classical Library, XV+570 p.

73. Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Libraria Weidmannia G. Reimer, Lipsiae, 1826, IV+494 p.

74. Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars I,

Sumptibus C. H. F. Hartmanni, Lipsiae, 1828, VIII+944 p.

75. Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars II, Sumptibus C. H. F. Hartmanni, Lipsiae, 1829, XVIII+ 944 p.

76. Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Libraria Weidmannia G. Reimer, Lipsiae, 1826, Vol. II, 548 p., Vol. III, Lipsiae, 1826, 580 p.

77. Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. IV, Libraria Weidmannia G. Reimer, Lipsiae, 1826, XLVIII+549 p.

78. Diodorus of Sicily, with an English translation by C. H. Oldfather, Vol. IV, Books IX-XII, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1956, 373 p.

79. Epistolographi Graeci, ed. R. Hercher, Editore Ambrosio Firmin Didot, Parisiis, 1873, LXXXVI+843 p.

80. Geographi Graeci Minores, recognovit C. Müllerus, Editore Ambrosio Firmin Didot, Parisiis, Vol. I, 1855, CXLV+577 p., Vol. II, Parisiis, 1861, LVII+665 p.

81. Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. I, Books I-II, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1975, Loeb Classical Library, XXI+504 p.

82. Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. III, Books V-VII, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1938, Loeb Classical Library, XVIII+569 p.

83. Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. II, Books III-IV, William Heinemann, New York, London, 1928, Loeb Classical Library, XVIII+416 p.

84. Hudūd al-'Alam, The Regions of the World. A Persian Geography 372 A. H.-982 A. D., translated and explained by V. Minorsky, with the Preface by V. V. Barthold, The Cambridge University Press, London, 1982, LXXXII+524 p.

85. Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, Text and English/German Translations, Dr. Ludwig Reichert Verlag, Wiesbaden, 1998, X+260 p.

86. Josephus, Jewish Antiquities, with an English translation by H. St. J. Thackeray, Vol. IV, Books I-IV, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1961, XX+649 p.

87. Josephus, The Jewish Antiquities, with an English translation by R. Marcus, Vol. VI, Books IX-XI, Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, 1958, Loeb Classical Library, XII+532 p.

88. Josephus: The Life. Against Apion, with an English translation by H. St. J. Thackeray, Vol. I, "W. Heinemann, G. P. Putnam's Sons", London-New York, 1926, XX+425p.

89. Justin, Cornelius Nepos, and Eutropius, literally translated, with notes and a general index by J. S. Watson, "H. G. Bohn", London, 1853, 551 p.

90. Malbran-Labat F., La version akkadienne de l'inscription trilingue de Darius à Behistun, GEI, Roma, 1994, 174 p.

91. Manetho, with an English translation by W. G. Waddel, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1948, Loeb Classical Library, XXXII+256 p.

92. Müller C., Langlois V., Fragmenta Historicorum Graecorum, Vol. V, Editore Ambrosio Firmin Didot, Parisiis, 1870, Pars Prior, LXXI+209 p., Pars Altera, XXXI+421 p.

93. Müller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. IV, Editore Ambrosio Firmin Didot, Parisiis, 1868, III+856 p.

94. Müller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. III, Editore Ambrosio Firmin Didot, 1849, 729 p.

95. Müller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. II, Editore Ambrosio Firmin Didot, Parisiis, 1848, XLII+631 p.

96. Müller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. I, Editore Ambrosio Firmin Didot, Parisiis, 1841, XCI+754 p.

97. Orosius, Seven Books of History against the Pagans, Translated with an introduction and notes by A. T. Fear, Translated Texts for Historians, Vol. 54, Liverpool University Press, 2010, VIII+456 p.

98. Plato, Laws, with an English translation by R. G. Bury, Vol. I, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1961, Loeb Classical Library, XVII+501 p.

99. Pliny, Natural History, Vol. III, Libri VIII-XI, with an English translation by H. Rackham, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, IX+616 p.

100. Pliny, Natural History, Vol. I, Libri I-II, with an English translation by H. Rackham, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, XIV+378 p.

101. Pliny, Natural History, Vol. II, Libri III-VII, with an English translation by H. Rackham, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, IX+664 p.

102. Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, Vol. VII,

Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, IX+623 p.

103. Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, Vol. VIII, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1959, Loeb Classical Library, IX+424 p.

104. Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, Vol. XI, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1954, Loeb Classical Library, VII+493 p.

105. Plutarch's Lives, translated from the original greek by J. Langhorne and W. Langhorne, H. S. & J. Applegate Publishers, Cincinnati, 1850, XX+688 p.

106. Polyaenus's Stratagems of War, by R. Shepherd, Printed for George Nicole, Bookseller to His Majesty, Pall-Mall, London, 1793, XXXVI+366 p.

107. Polibii Historiae, Vol. IV, Libri XX-XXXIX, ed. Th. Buettner-Wobst, B. G. Teubner, Stuttgart, 1985, LVI+552 p.

108. Polybii Historiae, Vol. III, Libri IX-XIX, ed. Th. Buettner-Wobst, B. G. Teubner, Stuttgart, 1985, XXIV+430 p.

109. Polybius, The Histories, with an English translation by W. R. Paton, Vol. III, Harvard University Press, London, Cambridge, Massachusetts, 1979, Loeb Classical Library, 554 p.

110. Pompei Trogi Fragmenta; collegit O. Seel, in aedibus B. G. Teubneri, Lipsiae, 1961, XXIII+208 p.

111. Procopius, ex recensione G. Dindorfii, Vol. I, Impensis Ed. Weberi, Bonnae, 1833, XVI+534 p.

112. Ravennatis Anonymi Cosmographia, ed. M. Pinder et Parthey, in aedibus Friderici Nicolai, Berolini, 1860, XXI+674 p.

113. Rufus Curtius Quintus, History of Alexander, with an English transl. by John C. Rolfe, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, Vol. I, 1971, XXXV+429 p., Vol. II, 1946, 629 p.

114. Scriptores Historiae Augustae, recensuit H. Peter, Vol. II, in Aedibus B. G. Teubneri, Lipsiae, 1865, 362 p.

115. Stephani Byzantii Ethnicorum quae supersunt, ex recensione Aug. Meinekii, Tomus Prior, Impensis G. Reimer, Berolini, 1849, VI+818 p.

116. Strabonis Geographica, ed. C. Müller, Editore Ambrosio Firmin Didot, Parisiis, 1853, VII+713 p.

117. "The Athenian Tribute Lists", by B. D. Meritt, H. T. Wade-Gery, M. F. McGregor, Vol. III, The American School of Classical Studies at Athens, Princeton, New Jersey, 1950, XX+366 p.

118. The Babyloniaca of Berossus, by S. M. Burstein, Sources and Monographs: Sources from the Ancient Near East, Vol. 1, Fascicle 5, undena publication, Malibu, 1978, 39 p.

119. "The Bisitun Inscription of Darius the Great", Aramaic Version, Corpus Inscriptionum Iranicarum, Part I, Inscriptions of Ancient Iran, Lund Humphries, London, 1982, X+68 p.+XXV Plates.

120. "The Elephantine Papyri in English: Three Millennia of Cross-Cultural Continuity and Change", by B. Porten, Idocumenta et Monumenta Orientis Antiqui (DMOA), Vol. XXII, E.J. Brill, Leiden-New York-Koln, 1996, XVII+621p.+11 Plates.

121. The General History of Polybius, Vol. II, by Mr. J. Hampton, Printed for J. Johnson &..., London, 1809, XXIII+425 p.

122. The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, Vol. V, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1969, Loeb Classical Library, VIII+542 p.

123. The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, Vol. VII, Books 15-16, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1954, Loeb Classical Library, 379 p.

124. The Natural History of Pliny, by J. Bostock and H. T. Riley, Vol. II, "Henry G. Bohn", London, 1855, XII+555 p.

125. The Romance of Alexander the Great by Pseudo-Callisthenes, Transl. from the Armenian Version with an Introduction by A. M. Wolohojian, Columbia University Press, New York, London, 1969, 196 p.

126. Thucydides, History of the Peloponnesian war, with an English translation by Ch. F. Smith, Vol. I, Books I-II, Harvard University Press, London, Cambridge, Massachusetts, 1956, Loeb Classical Library, XXII+461 p.

127. Thucydides, History of the Peloponnesian war, with an English translation by Ch. F. Smith, Vol. IV, Books VII-VIII, Harvard University Press, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library, 459 p.

128. Xenophon, Anabasis, with an English translation by Carleton L. Brownson, Vol. III, Books I-VII, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1980, Loeb Classical Library, XVI+635 p.

129. Xenophon, Cyropaedia, Vol. I, with an English translation by W. Miller, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1960, Loeb Classical Library, XVI+399 p.

130. Xenophon, Cyropaedia, with an English translation by W. Miller, Vol. II, "W. Heinemann, The Macmillan Co.", London-New York, 1914, Loeb Classical Library, 478 p.

131. Xenophon, Hellenica, with an English translation by C. L. Brownson, Books I-V, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1961, Loeb Classical Library, XIV+493 p.

132. Xenophon, Memorabilia. Oeconomicus. Symposium. Apologia, translated by E. C. Marchant, O. J. Todd, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1997, Loeb Classical Library, XXIX+673 p.

133. Xenophon, Scripta Minora, with an English translation by E. C. Marchant, Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, 1946, Loeb Classical Library, XLVI+464 p.

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐՔԵՐ

1. Աբգարյան Գ., «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1965, 253 էջ:

2. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երկեր, հտ. Դ, ԵՊՀ հրատ., Եր., 2009, 720 էջ:

3. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, «Հայաստան» հրատ., Եր., 1987, 639 էջ:

4. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, «Հայաստան» հրատ., Եր., 1972, 430 էջ:

5. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), «Զանգակ-97», Եր., 2005, 784 էջ:

6. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Եր., 1963, 154 էջ:

7. Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Հեղինակային հրատ., Եր., 2014, 172 էջ:

8. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Հեղինակային հրատ., Եր., 2010, 57 էջ:

9. Կարագյոզյան Հ., Սեպագիր տեղանուններ Այրարատում և հարակից նահանգներում, «Մագաղաթ», Եր., 1998, 393 էջ:

10. Կարապետյան Ի. Ա., Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI-IV դդ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2003, 114 էջ+55 աղյուսակ:

11. Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI- մ. թ. IV դդ.), «Լուսակն» հրատ., Եր., 2005, 311 էջ:

12. Հակոբյան Ա., Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական ուսումնասիրություններ (Արցախ և Ուտիք), Ազգային մատենադարան, հտ. 241, Մխիթարյան հրատ., Վիեննա-Երևան, 2009, 476 էջ+2 քարտեզ:

13. Հակոբյան Թ. Խ. և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, ԵՊՀ հրատ., Եր., 1986, XXXI+992 էջ:

14. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, VIII+991 էջ:

15. Հայաստանի հարակից երկրների պատմություն, խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ., հ. I, Հին շրջան, «Զանգակ» հրատ., Եր., 2013, 600 էջ+24 էջ ներդիր:

16. Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Մակմիլան Արմենիա, Եր., 2005, 103 էջ:

17. Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևանի համալսարանի հրատ., Եր., 2001, 404 էջ; գրքին կից Հարությունյան Բ. Հ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Եր., 2001:

18. Հարությունյան Բ. Հ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դ. դ.), «Հայագիտակ», Եր., 1998, 90 էջ:

19. Հիւբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Պիլէզիկճեան, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1907, ԺՋ+448 էջ:

20. Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, Երկեր, հ. Ե, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1984, 615 էջ:

21. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1977, 635 էջ:

22. Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, ԵՊՀ հրատ., Եր., 2003, 400 էջ:

23. Մուրադյան Պ., Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաս-

տանը, պրակ Ա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2008, 412 էջ:
24. Շահինյան Լ., Հայաստանը և առաջին Արշակունիները, «Լույս», Եր., 1993, 415 էջ:
25. Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Եր., 2006, 473 էջ:
26. Ստեփանյան Ա., Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, Եր., 2012, 385 էջ:
27. Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, «Զանգակ-97», Եր., 1999, 264 էջ:
28. Քոսյան Ա., Տուն Թորգոմայ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 1998, 79 էջ:
29. Акишев К. А., Кушаев Г. А., Древняя культура саков и усуней долины реки Или, Издательство АН Казахской ССР, Алма-Ата, 1963, 320 с.
30. Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Издательство АН Армянской ССР, Ер., 1987, 304 с.
31. Алиев И., Очерк истории Атропатены, Азербайджанское государственное издательство, Баку, 1989, 160 с.
32. Алиев И., История Мидии, Издательство АН Азербайджанской ССР, Баку, 1960, 360 с.
33. Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей, Издательство "Гитутюн" НАН РА, Ер., 2001; 542 с.+рис. 183.
34. Арутюнян Н., Топонимика Урарту, Издательство АН Армянской ССР, Ер., 1985, 308 с.
35. Асатрян Г., Этническая композиция Ирана: От "Арийского простора" до Азербайджанского мифа, Кавказский центр иранистики, Ер., 2012, 130 с.
36. Бартольд В. В., Сочинения, т. VII, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1971, 663 с.
37. Бартольд В. В., Сочинения, т. III, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1965, 711 с.
38. Бернштам А. Н., Историко-археологические очерки Центрального Тянь-Шаня и Памиро-Алая, МИА, Издательство АН СССР, М.-Л., 1952, 26, 346 с.
39. Бикерман Э., Государство Селевкидов, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1985, 264 с.
40. Бикерман Э., Хронология древнего мира, Главная редакция

восточной литературы издательства «Наука», М., 1975, 336 с.
41. Бойс М., Зороастрийцы: Верования и обычаи, пер. с англ. и прим. И. М. Стеблин-Каменского, Центр «Петербургское востоковедение», Санкт-Петербург, 1994, 288 с.
42. Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, Российская академия наук, Издательская фирма «Восточная литература», М., 2002, 359 с.
43. Вергазов Р. Р., Официальный стиль в искусстве Ахеменидского Ирана и художественная жизнь северных провинций империи, Диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения, на правах рукописи, М., 2018, 438 с.
44. Габриелян Р., Армения и Атропатена, Издательство РАУ, Ер., 2002, 318 с.
45. Ганковский Ю. В., Народы Пакистана, Издательство «Наука», М., 1964, 279 с.
46. Гафуров В. Г., Таджики: Древнейшая, древняя и средневековая история, Издательство «Наука», М., 1972, 664 с.
47. Гиндин Л.А., Цымбурский В. Л., Гомер и история Восточного Средиземноморья, Издательская фирма «Восточная литература» РАН, М., 1996, 328 с.
48. Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1970, 395 с.
49. Григорьев В. В., О скифском народе саках, Типография Императорской Академии Наук, СПб., 1871, 202 с.
50. Дандамаев М. А., Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения, Петербургское лингвистическое общество, Санкт-Петербург, 2013, 392 с.
51. Дандамаев М. А., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.: Социальные институты и идеология, Санкт-Петербург, Факультет филологии и искусств СПбГУ, 2009, 512 с.
52. Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, М., Главная редакция восточной литературы издательства «Наука», 1985, 319 с.
53. Дандамаев М. А., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1980, 416 с.

54. Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.), Издательство восточной литературы, М., 1963, 289 с.

55. Джанашиа С. Н., Труды, Т. II, под ред. Н. Бердзенишвили, Издательство АН Грузинской ССР, Тбилиси, 1952, 536 с. (на груз. яз.).

56. Доватур А. И., Каллистов Д. П., Шишова И. А., Народы нашей страны в «Истории» Геродота, Издательство «Наука», М., 1982, 455 с.

57. Дорн Б., Каспий. О походах древних русских в Табаристан, Типография Императорской Академии Наук, СПб., 1875, LVI+718+IV с.

58. Дройзен И., История эллинизма, т. I, Издательство «Феникс», Ростов-на-Дону, 1995, 608 с.

59. Дьяконов И. М., Предыстория армянского народа, Издательство АН Армянской ССР, Ер., 1968, 264 с.

60. Дьяконов И. М., Языки древней Передней Азии, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1967, 492 с.

61. Дьяконов И., История Мидии, Издательство АН СССР, М.-Л., 1956, 485 с.

62. Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, Издательство восточной литературы, М., 1961, 444 с.

63. Ельницкий Л. А., Скифия евразийских степей, Издательство «Наука», Сибирское отделение, Новосибирск, 1977, 256 с.

64. История древнего мира, т. II, под ред. И. М. Дьяконова, В. Д. Нероновой, И. С. Свенцицкой, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1989, 572 с.

65. «История таджикского народа», т. I, под ред. Б. Г. Гафурова, Б. А. Литвинского, Издательство восточной литературы, М., 1963, 596 с.

66. Касумова С. Ю., Южный Азербайджан в III-VII вв., Издательство «Элм», Баку, 1983, 166 с.

67. Колесников А., Завоевание Ирана арабами (Иран при «праведных халифах»), Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1982, 270 с.

68. Колесников А., Иран в начале VII века, «Палестинский сборник», Издательство «Наука», Л., 1970, 144 с.

69. Лаптева М., У истоков древнегреческой цивилизации: Иония XI-VI вв. до н. э., ИЦ «Гуманитарная Академия», Санкт-Петербург, 2009, 512 с.

70. Литвинский Б. А., Древние кочевники «Крыши мира», Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1972, 269 с.

71. Максимова М. И., Античные города юго-восточного Причерноморья, Издательство АН СССР, М.-Л., 1956, 472 с.

72. Массон В. М., Ромодин В. А., История Афганистана, т. I, Издательство «Наука», М., 1964, 464 с.

73. Массон В. М., Древнеземледельческая культура Маргианы, МИА, вып. 73, Издательство АН СССР, М.-Л., 1959, 216 с.

74. Меликишвили Г. А., К истории древней Грузии, Издательство АН Грузинской ССР, Тбилиси, 1959, 507 с.

75. Меликишвили Г. А., Наири–Урарту, Издательство АН Грузинской ССР, Тбилиси, 1954, 446 с.

76. Меликов Р., Этническая картина Азербайджана в период Ахеменидского владычества (VI-IVвв. до. н. э.), Издательство «Нурлан», Баку, 2003, 198 с.

77. Мусхелишвили Д. Л., Из исторической географии Восточной Грузии (Шаки и Гогарена), Издательство «Мецниереба», Тбилиси, 1982, 101 с.

78. Олмстед А., История Персидской империи, Центрполиграф, М., 2012, 575 с.

79. Очерки истории Грузии, Т. I. Грузия с древнейших времен до IV в. н. э., под ред. Г. А. Меликишвили, О. Д. Лордкипанидзе, Издательство «Мецниереба», Тбилиси, 1989, 508 с.

80. Оранский И. М., Введение в иранскую филологию, Издательство восточной литературы, М., 1960, 490 с.

81. Пигулевская Н., Сирийские источники по истории народов СССР, Издательство Академии Наук СССР, М.-Л., 1941, 171 с.

82. Пигулевская Н., Месопотамия на рубеже V-VI вв. н. э. Сирийская хроника Иешу Стилита как исторический источник, Издательство Академии Наук СССР, М.-Л., 1940, 176 с.

83. Попов А., Греко-бактрийское царство, Издательство С.-Петербургского университета, Санкт-Петербург, 2008, 240 с.

84. Пьянков И. В., Средняя Азия в известиях античного историка Ктесия (Текст, перевод, примечания), Издательство «Дониш», Душанбе, 1975, 191 с.

85. Пьянков И. В., Древний Самарканд (Мараканды) в известиях античных авторов, Издательство «Дониш», Душанбе, 1972, 60 с.

86. Рунг Э. В., Греция и Ахеменидская держава: История дипломатических отношений в VI-IV вв. до н. э., Факультет филологии и ис-

кусств СПбГУ, Нестор-История, Санкт-Петербург, 2008, 484 с.

87. Салмин А. К., История чувашского народа: Савирская гипотеза, Чувашский государственный институт гуманитарных наук, Чебоксары, 2016, 128 с.

88. Салмин А. К., История чувашского народа: анализ основных версий, Нестор-История, Санкт-Петербург, 2017, 464 с.

89. Струве В., Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Издательство АН СССР, Л., 1968, 356 с.

90. Тревер К., Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э.-VII в. н. э), Издательство АН СССР, М.-Л., 1959, 391 с.

91. Тревер К. В., Памятники греко-бактрийского искусства, Издательство АН СССР, М.-Л., 1940, 178 с. + Таблицы (1-50).

92. Толстов С. П., Древний Хорезм, М., Издание МГУ, 1948, 352 с.+Таблицы 87.

93. Тураев Б. А., История Древнего Востока, Харвест, Минск, 2002, 752 с.+8 л. ил.

94. Фрай Р., Наследие Ирана, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1972, 468 с. с илл.

95. Хуршудян Э., Государственные институты парфянского и сасанидского Ирана, Издательство «Институт Азиатских исследований», Алматы, 2015, 400 с.

96. Хуршудян Э., Армения и сасанидский Иран, "Print-S", Алматы, 2003, 474 с.

97. Шахермайр Ф., Александр Македонский, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1986, 384 с.

98. Шифман И. Ш., Финикийский язык, Изд. 3-е, Едиториал УРСС, М., 2010, 64 с.

99. Языки мира: Древние реликтовые языки Передней Азии, Academia, М., 2010, 240 с.

100. "A Commentary on Herodotus Books I-IV", ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press. Inc., New York, 2007, LVI+721 p.

101. Adiego J. I., The Carian Language, Brill, Leiden, Boston, 2007, XIII+526 p.

102. Aimé-Giron M. N., Textes araméens d'Égypte, Service des antiquités de l'Égypte, Imprimerie l'Institut français d'archéologie orientale, 1931, Le Caire, VII+135 p.+15 Planches.

103. Altheim F., Weltgeschichte Asiens im griechischen Zeitalter, Bd. I,

Max Niemeyer Verlag, Halle, 1947, 412 S.+mit 52 Abbildungen und 5 Karten.

104. "An Historical Atlas of Central Asia", by Y. Bregel, Brill, Leiden, Boston, 2003, XII+109 p.

105. Avi-Yonah M., The Holy Land from the Persian to the Arab Conquests (536 B.C. to A.D. 640): A Historical Geography, Baker Books, Grand Rapids, Michigan, 1977, 249 p.

106. Ball J., Egypt in the Classical Geographers, Government Press, Bulâq, Cairo, 1942, VI+203 p.

107. Bowman R. A., Aramaic Ritual Texts from Persepolis, The University of Chicago Press, Chicago, Illinois, 1970, XIII+194 p.

108. Brandenstein W., Mayrhofer M., Handbuch des Altpersischen, Otto Harrassowitz, Wiesbaden, 1964, XII+160 S.

109. Briant P., From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, translated by P. T. Daniels, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2002, XX+1196 p.

110. Bryce T., Ancient Syria: A Three Thousand Year History, Oxford University Press, Oxford, New York, 2014, XIV+379 p.

111. Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, Routledge, London, New York, 2009, LVI+887 p.

112. Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, Museum Tusculanum Press, Copenhagen, 1986, XVI+273 p.

113. Cameron G. G., History of Early Iran, The University of Chicago Press, Chicago, Illinois, 1936, XVI+260 p.

114. Carter E. Ch., The Emergence of Yehud in the Persian Period: A Social and Demographic Study, "Journal for the Study of the Old Testament", 294, Sheffield Academic Press, Sheffield, 1999, 392 p.

115. Clay A.T., Business Documents of Murashû Sons of Nippur dated in the Reign of Darius II (424-404 B.C.), Published by the Department of Archaeology and Palaeontology of the University of Pennsylvania, Philadelphia, 1904, XIX+87 p.+72 PL.+XVII PL.+2 p.

116. Cooke G. A., A Text Book of North-Semitic Inscriptions, The Clarendon Press, Oxford, 1903, XXIV+407 p.+XIV Plates.

117. Cramer J. A., A Geographical and Historical Description of Asia Minor, Oxford University Press, 1832, Vol. I, VIII+474 p., Vol. II, IV+424 p.

118. Curtius Rufus, Histories of Alexander the Great, Book 10, transl. by J. C. Yardley, with Introduction and Historical Commentary by J. E.

Atkinson, Oxford University Press, 2009, XIV+274 p.

119. Dan R., From the Armenian Highland to Iran. A Study on the Relations between the Kingdom of Urartu and the Achaemenid Empire, Serie Orientale Roma, Nuova Serie 4, ISMEO, Roma, 2015, XXI+177 p.

120. Dandamayev M., Iranians in Achaemenid Babylonia, CLIS 6, 1992, XI+241 p.

121. Debord P., L'Asie Mineure au IVe siècle (412-323 a. C.), Ausonius Éditions, Études 3, Universite Michel de Montaigne - Bordeaux III, Bordeaux, 1999, 558 p.

122. Del Monte G., Tischler J., Répertoire Géographique des Textes Cunéiformes, VI. Die Orts-und Gewässernamen der hethitischen Texte, Dr. Ludwig Reichert Verlag, Wiesbaden, 1978, XVII+596 p.

123. "Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, Vol. I, Little, Brown, and Company, Boston, 1854, XI+1108 p; Vol. II, Walton & Maberly, London, 1857, VIII+718 p.

124. Dougherty R. P., The Sealand of Ancient Arabia, Yale Oriental Series, Researches, Vol. XIX, New Haven, Yale University Press, London, H. Milford, Oxford University Press, 1932, XII+204 p.

125. Dussaud R., La pénétration des Arabes en Syrie avant l'Islam, Bibliothèque archéologique et historique de l'Institut français d'archéologie de Beyrouth, t. LIX, P. Geuthner, Paris, 1955, 234 p.+4 cartes+27 figures.

126. Eilers W., Geographische Namengebung in und um Iran. Ein Überblick in Beispielen, Philosophisch-Historische Klasse Sitzungsberichte, Jg. 1982, Heft 5, Verlag der Bayerischen Akademie der Wissenschaften, München, 1982, 67 S.

127. Frye R., The Heritage of Central Asia, Markus Wiener Publishers, Princeton, 1998, 264 p.

128. Frye R., The History of Ancient Iran, C. H. Beck'sche Verlagsbuchhandlung, München, 1984, XVI+411 p.

129. Gardiner A. H., Ancient Egyptian Onomastica, Vol. II, Oxford University Press, 1947, 324 p.

130. Garstang J., Gurney O. R., The Geography of the Hittite Empire, The British Institute of Archaeology at Ankara, London, 1959, X+133 p.

131. Geiger W., Ostīrānische Kultur im Altertum, Verlag von Andreas Deichert, Erlangen, 1882, VIII+520 S.

132. Grayson A. K., Novotny J., The Royal Inscriptions of Sennacherib,

King of Assyria (704–681 BC), Part 1, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2012, XXIX+267 p.

133. Greaves A., The Land of Ionia: Society and Economy in the Archaic Period, Wiley-Blackwell, Oxford, 2010, XVI+269 p.

134. Hallock R. Persepolis Fortification Tablets, The University of Chicago Press, Chicago, Illinois, 1969, X+776 p.

135. Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Franz Steiner Verlag GMBH, Wiesbaden, 1968, XXIII+392 p.

136. Herzfeld E., Zoroaster and His World, Vol. II, Princeton University Press, 1947, VIII+851 p.

137. Herzfeld E., Iran in the Ancient East, Oxford University Press, London, New York, 1941, VII+353 p.

138. Herzfeld E. E., Archaeological History of Iran, Oxford University Press, London, 1935, XI+112 p.

139. Historical Commentary on Herodotus Book 6, by L. Scott, Brill, Leiden-Boston, 2005, XIII+716 p.

140. History of Civilizations of Central Asia, ed. J. Harmatta, Vol. II, UNESCO Publishing, Paris, 1996, 573 p.

141. Hoffmann G., Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, In Commission bei F. A. Brockhaus, Leipzig, 1880, 325 S.

142. Jacobs B., Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, Dr. Ludwig Reichert Verlag, Wiesbaden, 1994, IX+320 S.

143. Jigoulov V. S., The Social History of Achaemenid Phoenicia, Equinox Publishing Ltd., London, 2010, X+276 p.

144. Junge P., Darius I. König der Perser, Otto Harrassowitz, Leipzig, 1944, VIII+208 S.+8 Tafeln+1 Karte.

145. Junge J., Saka-Studien. Der ferne Nordosten im Weltbild der Antike, Klio, N. F. Beiheft 28, Dieterich, Leipzig, 1939, VIII+116 S.+2 Pl.

146. Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., American Oriental Society, New Haven, 1953, XI+219 p.

147. Kraeling E. G., The Brooklyn Museum Aramaic Papyri. New Documents of the Fifth. Century B.C. from the Jewish Colony at Elephantine, Yale University Press, New Haven, 1953, XVI+320 p.+XXIII Pl.

148. L'archéologie de l'empire achéménide: nouvelles recherches. Actes du colloque organisé au Collège de France, 21-22 novembre 2003, Persika *6,* P. Briant et R. Boucharlat éd., Paris, Éditions de

Boccard, 2005, 352 p.

149. "Les inscriptions de la Perse achéménide" traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq, Gallimard, Paris, 1997, 330 p.

150. Levene D., Jewish Aramaic Curse Texts from Late-Antique Mesopotamia: "May These Curses Go Out and Flee" (Magical and Religious Literature of Late Antiquity, Vol. 2), Brill, Leiden-Boston, 2013, XIV+164 p.

151. Lewis D. M., Sparta and Persia. Lectures delivered at the University of Cincinnati, autumn 1976 in memory of Donald W. Bradeen, "Cincinnati Classical Studies", № 1, Brill, Leiden, 1977, X+168 p.

152. Marquart J., Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Weidmannsche Buchhandlung, Berlin, 1901, 358 S.

153. Marquart J., Untersuchungen zur Geschichte von Eran II, "Philologus: Zeitschrift für das klassische Altertum", Supplementband X/1, Dieterich'sche Verlagsbuchhandlung. Theodor Weicher, Leipzig, 1905, 258 S.

154. Marquart J., Untersuchungen zur Geschichte von Eran I, "Philologus: Zeitschrift für das klassische Altertum", Dieterich'sche Verlags-Buchhandlung, Göttingen, 1896, SS. 213-244.

155. Markwart J., Messina G., A Catalogue of the Provincial Capitals of Ērānshahr, Analecta Orientalia 3, Pontificio Istituto Biblico, Roma, 1931, 120 p.

156. Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Mechitharisten-Buchdruckerei, Wien, 1930, 125+648 S.

157. "Mesopotamian Chronicles", by J.-J. Glassner, Society of Biblical Literature, Atlanta, 2004, XX+365 p.

158. Nöldeke Th., Aufsätze zur Persischen Geschichte, T. O., Weigel, Leipzig, 1887, 158 S.

159. Nöldeke Th., Geschichte der Perser und Araber aus der arabischen Chronik des Tabari, E. J. Brill, Leyden, 1879, XXVIII+503 S.

160. Nyberg H. S., Die Religionen des alten Iran, Mitteilungen der Vorderasiatischen-Ægyptischen Gesellschaft, Bd. 43, J. C. Hinrichs Verlag, Leipzig, 1938, IX+506 S.

161. Olmstead A. T., History of the Persian Empire, The University of Chicago Press, Chicago, 1960, XXXII+568 p.

162. Payne A., Wintjes J., Lords of Asia Minor: An Introduction to the Lydians, Philippika, Harrassowitz Verlag, 2016, Wiesbaden, X+145 p.

163. Persepolis, Takht-I-Jamshid, by Ali-Sami, 5th ed., Musavi Printing Office, Shiraz, 1967, II+138 p.

164. Petit Th., Satrapes et satrapies dans l'empire achéménide de Cyrus le Grand à Xerxès Ier, Bibliothèque de la Faculté de Philosophie et Lettres de l'Université de Liège, Fascicule 254, «Les Belles Lettres», Paris-Liège, 1990, 304 p.

165. Potts D. T., The Archaeology of Elam: Formation and Transformation of an Ancient Iranian State, Cambridge University Press, 1999, XXIX+490 p.

166. Provencal V. L., Sophist Kings: Persians as Other in Herodotus, Bloomsbury Academic, London, New Delhi, New York, Sydney, 2015, IX+330 p.

167. Ramsay W. M., The Cities and Bishoprics of Phrygia, Vol. I, The Clarendon Press, Oxford, 1895, XXII+352 p.

168. Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, Royal Geographical Society, "John Murray", London, 1890, 495 p.

169. Rawlinson G., The Sixth Great Oriental Monarchy (Parthia), Dodd, Mead & Company, New York, 1873, 1976, XV+458 p.

170. Rawlinson H. G., The Bactrian Empire under the Greek Dynasties, The "Times of India" Office, Bombay, 1909, XII+150 p.

171. Roller D. W., Eratosthenes' Geography, Princeton University Press, Princeton-Oxford, 2010, XIV+304 p.

172. Salvini M., Corpus dei Testi Urartei, Vol. I, Le iscrizioni su pietra e roccia (Documenta Asiana 8), I testi CNR Istituto di Studi sulle Civiltà dell'Egeo e del Vicino Oriente, Roma, 2008, 653 p.

173. Sarre F., Herzfeld E., Iranische Felsreliefs, Verlegt bei E. Wasmuth A.-G., Berlin, 1910, VIII+277 S.+ Tafel LI.

174. Schmitt R., Die altpersischen Inschriften der Achaimeniden, Reichert Verlag, Wiesbaden, 2009, 208 S.

175. Schubert R., Herodots. Darstellung der Cyrussage, Wilhelm Koebner, Breslau, 1890, 85 S.

176. Spiegelberg W., Die sogenannte Demotische Chronik des Pap. 215 der Bibliothèque Nationale zu Paris nebst den auf der Rückseite des Papyrus stehenden Texten, DS 7, J. C. Hinrichs'sche Buchhandlung, 1914, III+145 S.+IX Tafeln.

177. Stolper M. W., Entrepreneurs and Empire: the Murašû Archive, the Murašû Firm, and Persian Rule in Babylonia, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1985, XXI+324 p.

178. Szemerényi O., Four Iranian ethnic names: Scythian-Skudra-Sogdian-Saka, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, Wien, 1980, 47 p.

179. "The Armenian People from Ancient to Modern Times", Vol. I, edited by R. G. Hovhannisian, St. Martin's Press, New York, 1997, XII+372 p.

180. The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Vol. 17, Š, Part. I, Chicago, Illinois, 1989, XXVIII+492 p.

181. The Cambridge Ancient History, Vol. VI, Cambridge University Press, 1994, XX+1077 p.

182. The Cambridge Ancient History, Vol. IV, Cambridge University Press, 1988, XXI+909 p.

183. The Cambridge Ancient History, Vol. II, The Egyptian and Hittite Empires, Cambridge, 1931, XXV+751 p.

184. The Cambridge History of India, Vol. I, Ancient India, ed. by E. J. Rapson, Cambridge University Press, 1922, XXIV+736 p.+XXXIV Plates.

185. The Cambridge History of Judaism, Vol. I, ed. W. D. Davies, L. Finkelstein, Cambridge University Press, 1984, XV+464 p.

186. The Oxford History of Ancient Egypt, ed. by I. Shaw, Oxford University Press, Oxford, 2000, XV+525 p.

187. The Sculptures and Inscription of Darius The Great on the Rock of Behistûn in Persia, a new collation of the Persian, Susian, and Babylonian texts, with English translations, ed. by L. W. King and R. C. Thompson, Oxford University Press, London, 1907, LXXX+223 p.

188. "The World of Achaemenid Persia", ed. by J. Curtis, St. J. Simpson, I. B. Tauris & Co Ltd, London, 2010, XVII+645 p.

189. Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Georgetown University Press, 1963, 601 p.

190. Vasilev M. I., The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia, Brill: Leiden, Boston, 2015, XI+257 p.

191. Ward W., The Seal Cylinders of Western Asia, Published by the Carnegie Institution of Washington, Washington, 1910, XXIX+428 p.

192. Weiskopf M., The so-called "great Satrap's revolt": 366-360 B.C., "Historia", Heft 63, Franz Steiner Verlag GMBH, Stuttgart, 1989, 112 p.

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ասատրյան Գ., Գուրաններ, Իրան-նամէ, Եր., 1995, թիվ 1, էջ 21-30:

2. Բոյաջյան Վ., Շահնամեում բելուջների հիշատակության հարցի շուրջ, Իրան-նամէ, Եր., 1999, թիվ 32-34, էջ 110-112:

3. Գրեկյան Ե., Էրեբունի ամրոցը, ՊԲՀ, 2018, թիվ 3, էջ 38-68:

4. Դանիելյան Է., Մարդերի ցեղը հին Հայաստանում (մ. թ. ա. V-մ. թ. I դդ.), ՊԲՀ, 1976, թիվ 1, էջ 203-208:

5. Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», ՊԲՀ, 1971, թիվ 4, էջ 171-182:

6. Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, ՊԲՀ, 1968, 2, էջ 89-116:

7. Իգումնով Վ., Կարագյոզյան Հ., Հմայակյան Ս., Օձասարի սեպագիր արձանագրությունը, ՊԲՀ, 1997, թիվ 1, էջ 193-202:

8. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի մարական սատրապության տարածքը և սահմանները, ՄՄԱԵԺ, հ. XXX, 2016, էջ 57-93:

9. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի VII սատրապության տեղադրության շուրջ, ԱՀ, 2016, XI, էջ 270-283:

10. Խորիկյան Հ., Սիրիան Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգում, ՀԱ, 2015, թիվ 1-12, էջ 9-24:

11. Խորիկյան Հ., Փյունիկիայի վարչական կացությունը Աքեմենյան Պարսկաստանի V սատրապության կազմում, ԱՀ, IX, 2015, էջ 484-498:

12. Խորիկեան Յ., Սատրապութիւնների հերոդոտեան ցուցակը (- Պատմաաշխարհագրական քննութիւն), «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԼԴ., Պէյրութ, 2014, էջ 143-161:

13. Խորիկյան Հ., Հոնիան Աքեմենյան Պարսկաստանի վարչական համակարգում, ՀԱ, 2014, թիվ 1-12, էջ 469-484:

14. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության սասպեյրների տեղադրության շուրջ, ՄԱ, 2014, IX-X, էջ 165-173:

15. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի III սատրապության վարչական բաժանումը, ՀԱ, 2013, թիվ 1-12, էջ 209-236:

16. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի Սակա երկրի տեղադրությունը, ՎԷմ, 2012, թիվ 2, էջ 180-188:

17. Խորիկյան Հ., Մարաստանի էթնիկական կազմի շուրջ՝ ըստ Ստրաբոնի, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2012, էջ 337-341:

18. Խորիկյան Հ., Քուստի Խորուարանի Նոտարտա և Շիրական

երկրների տեղադրության շուրջ, ՀԱ, 2011, թիվ 1-12, էջ 261-288:
19. Խորիկյան Հ., Հին Հայաստանը մ. թ. ա. VI-IV դարերում՝ ըստ Մովսես Խորենացու, ՎԷմ, 2011, թիվ 2, էջ 154-163:
20. Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները Աքեմենյան Պարսկաստանի կազմում, ԼՀԳ, 2010, թիվ 1-2, էջ 107-118:
21. Խորիկյան Հ., Անտոնիոսի պարթևական արշավանքի հետ կապված մի հարցի շուրջ, ՄՄԱԵԺ, 2009, հտ. XXVII, էջ 28-35:
22. Խորիկյան Հ., Հերոդոտյան սասպեյրների տեղորոշման հարցի շուրջ, Հանրապետական գիտական նստաշրջան: Նյութերի ժողովածու, Գյումրի, 2008, էջ 138-142:
23. Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, ՊԲՀ, 2008, թիվ 1, էջ 222-231:
24. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ, ՄՄԱԵԺ, հտ. XXVI, 2007, էջ 25-35:
25. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, ԼՀԳ, 2006, թիվ 1, էջ 147-157:
26. Խորիկյան Հ. Գ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, ԲԵՀ, 2006, թիվ 2, էջ 114-126:
27. Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 2005, թիվ 3, էջ 173-192:
28. Խուրշուդյան Է., «Շահրիստանիհա-յի Էրան» (պահլավական աշխարհագրական տրակտատ), Իրան-նամէ, Եր., 1993, թիվ 4, էջ 26-28.
29. Կարագյոզյան Հ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, ԼՀԳ, 1978, թիվ 10, էջ 55-76:
30. Կարապետյան Ի. Ա., Արմավիրի խեցեգործության մի նոր տարատեսակ, ԼՀԳ, 1973, թիվ 11, էջ 68-73:
31. Կրկյաշարյան Ս., Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, Տեղեկագիր, 1963, թիվ 9, էջ 55-66:
32. Հակոբյան Ա., «Աշխարհացոյց» է դարի Անանունի. գիտա-քննական բնագիր, ՀԱ, 2013, թիվ 1-12, էջ 35-194:
33. Հակոբյան Ա., Հայ ժողովրդի էթնոհամախմբման գործընթացի պատմա-մշակութային առանձնահատկությունները, ՎԷմ, 2013, թիվ 1, էջ 34-69:
34. Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, ԼՀԳ, 1983, թիվ 1, էջ 87-99:
35. Հակոբյան Ա., Գարգարացիները ըստ անտիկ և հայկական

սկզբնաղբյուրների, ՊԲՀ, 1982, թիվ 4, էջ 116-130:
36. Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր, ՎԷմ, 2011, թիվ 2, էջ 30-64:
37. Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, ՎԷմ, 2010, թիվ 4, էջ 24-57:
38. Հարությունյան Բ., Թոգարմա երկիրը և Հայկյանները, «Աստվածաշնչական Հայաստան», «Նոյյան Տապան», Եր., 2005, էջ 128-145:
39. Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, ՀԱ, 1999, թիվ 1-12, էջ 45-114:
40. Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1995, թիվ 1, էջ 191-208:
41. Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 256-266:
42. Հարությունյան Բ. Հ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, ԼՀԳ, 1981, թիվ 12, էջ 61-76:
43. Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՀ, 1977, թիվ 2, էջ 176-198:
44. Ղարագյոզյան Ա., Անտիկ աղբյուրների Պարիադրես լեռը, ՊԲՀ, 1999, թիվ 2-3, էջ 288-294:
45. Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, ՊԲՀ, 1961, թիվ 2, էջ 211-244:
46. Մովսիսյան Ա., Հայաստանի հարավարևմտյան սահմանն ըստ Հերոդոտոսի տեղեկությունների, ՊՄ, 2019, թիվ 1, էջ 6-10:
47. Մովսիսյան Ա., Դիտարկումներ Հայաստանի Ք. ա. V-III դարերի պատմության շուրջ, ՄՄԱԵԺ, հտ. XXIX, 2014, էջ 80-96:
48. Յուզբաշյան Կ., Դելմիկները Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» մեջ, ԲՄ, 1960, թիվ 5, էջ 307-311:
49. Շալջյան Ս., Դելմիկները և նրանց արշավանքները դեպի Հայաստան, Տեղեկագիր, թիվ 5-6, 1941, էջ 107-115:
50. Շահինյան Լ., Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Վահեի մասին, ՊԲՀ, 1973, թիվ 4, էջ 172-178:
51. Պետրոսյան Ս., Արարատյան լեռների հին անունների և անվանադիրների մասին, ՊԲՀ, 2010, թիվ 3, էջ 220-227:
52. Պետրոսյան Ս., Հացազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 187-204:
53. Պետրոսյան Ս. Գ., Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին, ՊԲՀ, 1979, թիվ 4, էջ 46-58:

54. Պետրոսյան Ս., Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI-V դդ.), ՊԲՀ, 1977, թիվ 1, էջ 207-220:

55. Պետրոսյան Ս., Փայտակարանը և Պարսպատունիքը մ. թ. I դարի երրորդ քառորդում, ՊԲՀ, 1975, թիվ 2, էջ 167-182:

56. Սարգսյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, Պատմագիտական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2006, էջ 46-72:

57. Սվազյան Հ., Կասպերի ցեղային միությունները Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության շրջանում (մ. թ. ա. VI դ.-մ. թ. ա. IV դ.), ԼՀԳ, 1983, 6, էջ 81-89:

58. Ստրոնախ Դ., Էրեբունու արձաթյա պնդյակները նոր լույսի ներքո, ՊԲՀ, 2010, թիվ 3, էջ 180-197:

59. Վարդանյան Վ., Մարդերը Վասպուրականում, ՊԲՀ, 1971, թիվ 3, էջ 49-60:

60. Տիրացյան Գ. Ա., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ – մ. թ. ա. III դ. վերջ), ՊԲՀ, 1981, թիվ 2, էջ 68-84:

61. Տիրացյան Գ. Ա., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), ՊԲՀ, 1980, թիվ 4, էջ 84-95:

62. Տիրացյան Գ. Ա., Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 1969, թիվ 4, էջ 147-156:

63. Տիրացյան Գ. Ա., Ուրարտական քաղաքակրթությունը և աքեմենյան Իրանը, ՊԲՀ, 1964, թիվ 2, էջ 149-164:

64. Տիրացյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. III-II-րդ դարերի պատմության մասին, Բանբեր Մատենադարանի, 1962, թիվ 6, էջ 7-24:

65. Տիրացյան Գ. Ա., Արին-բերդի պունազարդ դահլիճը և սատրապային կենտրոնների հարցը Հայկական լեռնաշխարհում, Տեղեկագիր, 1960, թիվ 7-8, էջ 99-114:

66. Տեր-Մարտիրոսով Ֆ., Արենիի հունարեն արձանագրությունը (Հայաստանի մ. թ. II դարի քաղաքական իրադարձությունների շուրջը), ՊԲՀ, 1989, թիվ 1, էջ 177-189:

67. Ցականյան Ռ., «Տուն Թորգոմա»-ն սկզբնաղբյուրներում, Արևելագիտությունը Հայաստանում, հտ. 3, Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2017, էջ 161-180:

68. Քոսյան Ա., Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ, ԲՀ, 2014, թիվ 1, էջ 5-25:

69. Քոսյան Ա., Ուրարտական տերության ծայրագավառը (Ալթընթեփեի օրինակով), Խալդյան զորությամբ..., Հոդվածների ժողովածու նվիրված Բ. Պիոտրովսկու 100-ամյակին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2010, էջ 21-33:

70. Քոսյան Ա., Աստվածաշունչը և հայոց ազգածագման խնդիրը Խորենացու «Հայոց Պատմության» մեջ, Աստվածաշնչական Հայաստան, «Նոյյան Տապան», Եր., 2005, էջ 146-150:

71. Քոսյան Ա., Արամ Նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), ՊԲՀ, 1999, թիվ 1, էջ 237-259:

72. Օհանյան Մ., Աքեմենյան XVIII սատրապության սահմանները, Իրան-նամէ, Եր., 1999, թիվ 32-34, էջ 95-100:

73. Акопян А., К хронологии завершения этноконсолидации удинов и лезгин (период ослабления Арабского халифата), Albania Caucasica, вып. I, ответственные редакторы: А. К. Аликберов, М. С. Гаджиев, Институт востоковедения РАН, Москва, 2015, с. 129-147.

74. Алиев И., Племена и племенные группы в Атропатене, ВДИ, 1987, 3, с. 62-83.

75. Амбарцумян А., Область Пайтакаран и гора Сабалан. Филологические и этимологические очерки, ԲՀ, 2016, 2, էջ 5-25:

76. Аракелян Б. Н., О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ՊԲՀ, 1969, թիվ 4, էջ 157-174:

77. Арутюнян Б., Рауф Меликов, Этническая картина Азербайджана в период Ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.), Գիտության գլոբուս, Եր., 2005, հ. 5, էջ 143-147:

78. Асатрян Г., О древнем народе Δρίβυκες и этнотопонимах, CC, вып. II-III, 2017-2018, с. 285-292.

79. Асатрян Г., Этногенез курдов и ранние армяно-курдские контакты, IC, Vol. 1, Tehran, 1997, pp. 1-16.

80. Баранов Д., Ликийская династическая система VI-V веков до н. э., Вестник Воронежского государственного университета, 2010, 2, с. 55-59.

81. Болтунова А. И., Описание Иберии в «Географии» Страбона, ВДИ, 1947, 4, с. 142-160.

82. Вергазов Р. Р., Официальный стиль Ахеменидов и его отражение в искусстве северных сатрапий на материале архитектуры, ПИФК, 2017, 2, с. 294-306.

83. Вергазов Р. Р., Типология дворца-ападаны в классической

архитектуре ахеменидского Ирана: проблема происхождения и развития, Актуальные проблемы теории и истории искусства, Санкт-Петербургский государственный университет, 2016, 6, с. 23-30.

84. Гельцер М. Л., Финикия на рубеже VII-VI вв. до н. э., КСИНА, 1962, вып. 46, с. 188-201.

85. Горожанова А., Политические структуры в Ликии V в. до н. э. (Проблема ассимиляции инокультурных компонентов в автохтонной среде), Вестник Нижегородского университета, 2012, 6, с. 137-142.

86. Горожанова А., Родосско-ликийский конфликт (по данным «Илиады» Гомера), Вестник Нижегородского университета, 2008, 5, с. 137-142.

87. Грантовский Э., О восточноиранских племенах кушанксого ареала, Центральная Азия в кушанскую эпоху, т. II, М., 1975, с. 76-92.

88. Грантовский Э., Из истории восточноиранских племен на границах Индии, КСИНА, 1963, вып. 61, с. 8-30.

89. Грантовский Э., Сагартии и XIV округ государства Ахеменидов по списку Геродота (III, 93), КСИНА, 1962, вып. 46, с. 227-251.

90. Дандамаев М.А., Клинописные данные об армянах, Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей (Сборник докладов), Ер., 1990, с. 102-106.

91. Дандамаев М. А., Поход Дария против скифского племени тиграхауда, КСИНА, 1963, вып. 61, с. 175-187.

92. Дандамаев М. А., К вопросу о династии Ахеменидов, ПС, вып. 5, Л., 1960, с. 3-21.

93. Дандамаев М. А., Восстание Вахьяздаты (Из истории народных движений в древней Персии), ВДИ, 1960, 1, с. 11-20.

94. Дьяконов И. М., Янковская Н. Б., Эламский диалог Гильгамеша и Сидури и другие эламские тексты из Аргиштихинеле (Армавир), ՊԲՀ, 1989, թիվ 2, էջ 55-62:

95. Дьяконов М. М., Сложение классового общества в Северной Бактрии, СА, XIX, 1954, с. 121-140.

96. Еремян С. Т., Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, 4, с. 47-59.

97. Еремян С., Проблема этногенеза армян в свете учения И. В. Сталина о языке, Տեղեկագիր, 1951, թիվ 6, էջ 37-51:

98. Ефремов Н. В., Династия Гекатомнидов в современных им греческих надписях, Вопросы эпиграфики, вып. IV, М., 2010, с. 82-165.

99. Иванчик А. И., Адиего И., Новая лидийская надпись из Келен и проблема лидийского присутствия во Фригии в эпоху Ахеменидов, ВДИ, 2015, 1, с. 14–27.

100. Лившиц В., Согдийский посол в Чаче, СЭ, 1960, вып. 2, с. 91-109.

101. Манандян Я., Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду, Труды, т. V., Ер., 1984, с. 238-255.

102. Массон М. Е., Некоторые новые данные по истории Парфии, ВДИ, 1950, 3, с. 41-55.

103. Погребова М. Н., Закавказье и киммерийцы ассирийских текстов конца VIII в. до н. э., Древние цивилизации Евразии. История и культура, «Восточная литература» РАН, М., 2001, с. 317-333.

104. Пьянков И. В., Древнейшие государственные образования Средней Азии (Опыт исторической реконструкции), Древние цивилизации Евразии. История и культура, «Восточная литература» РАН, М., 2001, с. 334-348.

105. Пьянков И. К вопросу о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию, Переднеазиатский сборник, III, М., 1979, с. 193-207.

106. Пьянков И. В., Массагеты, соседи индийцев, «Средняя Азия в древности и средневековье (История и культура)», под ред. Б. Г. Гафурова и Б. А. Литвинского, Главная редакция восточной литературы издательства «Наука», М., 1977, с. 53-57.

107. Пьянков И. Массагеты Геродота, ВДИ, 1975, 2, с. 46-70.

108. Пьянков И. В., Хорасмии Гекатея Милетского, ВДИ, 1972, 2, с. 3-21.

109. Пьянков И. В., Борьба Кира II с Астиагом по данным античных авторов, ВДИ, 1971, 3, с. 16-37.

110. Пьянков И. В., Мараканды, ВДИ, 1970, 1, с. 32-48.

111. Пьянков И., Саки (содержание понятия), Изв. Отделения общественных наук АН ТаджССР, Душанбе, 1968, 3 (53), с. 13-19.

112. Пьянков И. В., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э., ВДИ, 1965, 2, с. 35-50.

113. Пьянков И., К вопросу о маршруте похода Кира II на массагетов, ВДИ, 1964, 3, с. 115-130.

114. Пьянков И. В., Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана, ВДИ, 1961, 4, с. 98-103.

115. Рунг Э. В., Тиссаферн и Гидарниды в контексте политической

истории Ахеменидской державы в V в. до н. э., ВДИ, 2012, 1, с. 16-39.

116. Рунг Э. В., О сатрапских династиях в Ахеменидской державе: Фарнакиды в Даскилии, Ученые записки Казанского университета, т. 153, кн. 3, 2011, с. 87-94.

117. Рунг Э. В., Κάρανος/Kārana в военно-административной системе Ахеменидской империи, Иран и античный мир: Политическое, культурное и экономическое взаимодействие двух цивилизаций, Тезисы докладов международной научной конференции (Казань, 14-16 сентября 2011 г.), Казань, 2011, с. 18-19.

118. Рунг Э. В., Ранние греческие тираны и персы, "История: Мир прошлого в современном освещении", Санкт-Петербург, 2008, с. 83-114.

119. Свенцицкая И. С., Ионийские города в составе Лидийского царства, Проблемы античной истории и культуры, I, Ер., 1979, с. 254-259.

120. Таиров А., Кочевники Арало-Каспия и Хорезм в V-IV вв. до н. э., Вестник Челябинского государственного университета, 2005, т. 10, 1, с. 53-63.

121. Тер-Мартиросов Ф., Маршрут похода Арташеса к Ервандашату, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, հ. Գ, ԵՊՀ հրատ., Եր., 2014, էջ 52-67:

122. Тер-Мартиросов Ф., Армения в составе империи Ахеменидов, Армения-Иран: История. Культура. Современные перспективы взаимодействий, Сборник статей, М., 2013, с. 98-113.

123. Тер-Мартиросов Ф., Типология колонных сооружений Армении Ахеменидского периода, Գիտական աշխատություններ, III, Գյումրի, 2001, էջ 15-21:

124. Тер-Мартиросов Ф., К стратиграфии Армавирского холма, ԼՀԳ, 1974, թիվ 1, էջ 57-67:

125. Тирацян Г. А., Города Армении эллинистического времени в свете археологических исследований (Вопросы генезиса, топографии, градостроительной структуры, архитектурного облика), ВДИ, 1979, 2, с. 160-175.

126. Тирацян Г. А., Золотая пектораль из Армавира (Армения), СА, М., 1968, 4, с. 190-198.

127. Трейстер М. Ю., Клад серебряных ритонов ахеменидского круга из Эребуни, SA, Том 3, 2013, с. 343-424.

128. Хазарадзе Н., Гекатеевы матиены, Вопросы древней истории (Кавказско-ближневосточный сборник, IV), Тбилиси, 1973, с. 111-119.

129. Хлопин И., Этнография державы Ахеменидов по Геродоту, СНВ, 1969, вып. 8, с. 278-291.

130. Хорикян О. Г., Об этническом составе X сатрапии ахеменидской Персии, МИ, вып. 6, 2015, с. 128-132.

131. Хуршудян Э., «Города Ирана», Иран-наме, 2010, 3, с. 108-159.

132. Шашлова Т. Ю., Фракийцы как подданные ахеменидов (по данным персидских источников), Известия Саратовского университета. Новая серия. Серия: История. Международные отношения, 2014, Т. 14, вып. 4, с. 47-51.

133. Ackroyd P. R., The Written Evidence for Palestine, AH IV, Centre and Periphery, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1990, pp. 207-220.

134. Africa W. T., Herodotus and Diodorus on Egypt, JNES, Vol. 22, No. 4, 1963, pp. 254-258.

135. Agut-Labordère D., Administrating Egypt under the First Persian Period. The Empire as visible in the Demotic sources, in: Die Verwaltung im Achämenidenreich. Imperiale Muster und Strukturen/Administration in the Achaemenid Empire. Tracing the Imperial Signature, Herausgegeben von/Edited by B. Jacobs, W. F. M. Henkelman, M. W. Stolper, CO, Band 17, 2017, pp. 677-697.

136. Aharoni Y., Excavations at Ramat Rahel, BA, Vol. 24, № 4, 1961, pp. 97-118.

137. Andreas F., Ueber einige Fragen der Ältesten persischen Geschichte, Verhandlungen des XIII. Internationalen Orientalisten-Kongresses, Hamburg, September 1902, Brill, Leiden, 1904, SS. 93-99.

138. Anson E. M., Antigonus, the Satrap of Phrygia, Historia, Bd. 37, H. 4, 1988, pp. 471-477.

139. Armayor O. K., Herodotus' Catalogues of the Persian Empire in the Light of the Monuments and the Greek Literary Tradition, "Transactions of the American Philological Association", Vol. 108, 1978, pp. 1-9.

140. Asatrian G., Borjian H., Talish and the Talishis, IC, Vol. 9.1, 2005, pp. 43-72.

141. Atkinson K. M. T., The Legitimacy of Cambyses and Darius as Kings of Egypt, JAOS, Vol. 76, No. 3, 1956, pp. 167-177.

142. Bacheva G. D., Detecting a Satrapy: The Skudra Case, Thracia XX, "Ral Kolobar", Sofia, 2012, pp. 11-26.

143. Bahadori A., Achaemenid Empire, Tribal Confederations of

Southwestern Persia and Seven Families, IS, Vol. 50, № 2, pp. 1-25.

144. Bailey H.W., Maka, JRAS, Vol. 114, 1982, pp. 10-13.

145. Balcer J. M., Persian Occupied Thrace (Skudra), Historia, Bd. 37, H. 1, 1988, pp. 1-21.

146. Balcer J. M., The Greeks and the Persians: The Processes of Acculturation, Historia, Bd. 32, H. 3, 1983, pp. 257-267.

147. Balcer J. M., The date of Herodotus IV.1 Darius' Scythian Expedition, Harvard Studies in Classical Philology, Harvard University Press, Cambridge (Mass.), 1972, Vol. 76, pp. 99-132.

148. Basello G. P., Elam between Assyriology and Iranian Studies, in: A. Panaino and A. Piras (eds.). Schools of Oriental Studies and the Development of Modern Historiography. Melammu Symposia 4. Milan: Università di Bologna & Islao, 2004, pp. 1-40.

149. Becking B., The Other Groups that were...Some Remarks on Different Minor Ethnicities in Persian Period Elephantine, JSem, 2017, Vol. 26/2, pp. 820-848.

150. Beikzadeh S., Ghadim F. I., Achaemenid Architecture in South Caucasus and the Black Sea Cultural Basin, Tüba-Ar, Vol. 20, Ankara, 2017, pp. 129-146.

151. Benedict W. C., Voigtlander von E., Darius' Bisitun Inscription, Babylonian Version, Lines 1-29, JCS, 1956, Vol. 10, № 1, pp. 1-10.

152. Betlyon J. W., The Provincial Government of Persian Period Judea and the Yehud Coins, JBL, 1986, Vol. 105, № 4, pp. 633-642.

153. Bing J. D., Datames and Mazaeus: The Iconography of Revolt and Restoration in Cilicia, Historia, Bd. 47, H. 1, 1998, pp. 41-76.

154. Bivar A. D. H., Babylon or Persis? A Crux of the Behistun Inscription, IA, Vol. 33, 1998, pp. 187-193.

155. Bodzek J., Remarks on the Origins of Achaemenid Satrapic Coinages, Folia Numismatica 28/1, Supplementum ad Acta Musei Moraviae, Scientiae sociales XCIX, 2014, pp. 3-10.

156. Bodzek J., A Note on a Satrapal Coin – Perhaps another Mazaces Issue?, Notae Numismaticae, Krakow, t. IX, 2014, pp. 13-20.

157. Bodzek J., Achaemenid Asia Minor:Coins of the Satraps and of the Great King, In: The First International Congress of the Anatolian Monetary History and Numismatics - Proceedings, ed. by K. Dörtlük, O. Tekin, R. Boyraz Seyhan, & M. Wilson, Suna & Inan Kiraç Research Institute on Mediterranean Civilization, Antalya, 2014, pp. 59-78.

158. Bosworth A. B., The Government of Syria under Alexander the Great, The Classical Quarterly, New Series, Vol. 24, No. 1, 1974, pp. 46-64.

159. Bosworth C. E., Dailamīs in Central Iran: The Kākūyids of Jibāl, Iran, Vol. 8, Issue 1, London, 1970, pp. 73-95.

160. Boteva D., Re-reading Herodotus on the Persian Campaigns in Thrace, in: Herodotus and the Persian Empire, ed. R. Rollinger, B. Truschnegg, R. Bichler, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2011, pp. 735-759.

161. Bowden B., Alexander in Egypt: Considering the Egyptian Evidence, in: Alexander in Africa, ed. Ph. Bosman, Acta Classica Supplementum V, Pretoria, 2014, pp. 38-55.

162. Bresciani E., The Persian Occupation of Egypt, in: The Cambridge History of Iran, Vol. 2, Cambridge University Press, 1985, pp. 502-528.

163. Briant P., Cités et satrapes dans l'empire achéménide: Xanthos et Pixôdaros, in: Comptes rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, 142e année, № 1, 1998, pp. 305-347.

164. Brosius M., Pax Persica and the Peoples of the Black Sea Region: Extent and Limits of Achaemenid Imperial Ideology, in: Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers, edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, pp. 29-40.

165. Brown S., Media in the Achaemenid Period: the Late Iron Age in Central West Iran, in: AH IV, Centre and Periphery, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1990, pp. 63-76.

166. Bryce T., Political Unity in Lycia during the "Dynastic" Period, JNES, 1983, Vol. 42, № 1, pp. 31-42.

167. Burstein S. M., Alexander in Egypt: Continuity or Change?, in: AH VIII, Continuity and Change, ed. by H. Sancisi-Weerdenburg, A. Kuhrt & M. C. Root, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1994, pp. 381-387.

168. Cameron G. G., The Persian Satrapies and related matters, JNES, Vol. 32, 1973, № 1-2, pp. 47-56.

169. Cameron G. G., Darius, Egypt, and the "Lands beyond the Sea", JNES, Vol. II, No. 4, 1943, pp. 307-313.

170. Capdetrey L., Le roi, le satrape et le *koinon*: la question du pouvoir en Carie à la fin du IVe siècle, in: Stephanèphoros de l'économie antique à l'Asie mineure. Hommages à Raymond Descat by K. Konuk, Mémoires 28, Ausonius Éditions, Bordeaux, 2012, pp. 229-246.

171. Carter Ch. E., Syria-Palestine in the Persian Period, in: NEA, ed. by

Richard S., Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2003, pp. 398-412.

172. Carter Ch., The Province of Yehud in the Post-Exilic Period: Soundings in Site Distribution and Demography, "Second Temple Sdudies", 2: Temple Community in the Persian Period, ed. by Tamara C. Eskenazi and Kent H. Richards, Sheffield Academic Press, 1994, pp. 114-120.

173. Childs A. P. W., Lycian Relations with Persians and Greeks in the Fifth and Fourth Centuries Re-Examined, AS, Vol. 31, The British Institute of Archaeology at Ankara, 1981, pp. 55-80.

174. Çokay-Kepçe S., Recke M., Achaemenid Bowls in Pamphylia, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-fourth Centuries B.C.), ed. by I. Delemen, Turkish Institute of Archaeology, Istanbul, 2007, pp. 83-96.

175. Colburn H. P., Memories of the Second Persian Period in Egypt, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, SBL Press, Atlanta, 2015, pp. 165-202.

176. Cook J. M., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, in: The Cambridge History of Iran, Vol. 2, Cambridge University Press, 1985, pp. 200-291.

177. Cuyler Young T. Jr., The Iranian Migration into the Zagros, Iran, Vol. 5, № 1, 1967, pp. 11-34.

178. Dan A., The Rivers called Phasis, AWE, Vol. 15, 2016, pp. 245-277.

179. Dandamayev M. A., Neo-Babylonian and Achaemenid State Administration in Mesopotamia, in: Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2006, pp. 373-398.

180. Dandamayev M. A., Achaemenid Imperial Policies and Provincial Governments, IA, Vol. 34, 1999, pp. 269-282.

181. Dandamaev M., Achaemenid Mesopotamia: Traditions and Innovations, AH VIII, Continuity and Change, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1994, pp. 229-234.

182. David F. G., Arabia During Achaemenid Times, AH IV, "Centre and Periphery", Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1990, pp. 131-148.

183. Devedjyan S., Hobosyan S., Davtyan R., Post-Urartian tombs of Lori Berd, Aramazd, Vol. XII, Issue 1, 2018, pp. 109-123.

184. Diakonoff I. M., Media, in: The Cambridge History of Iran, Vol. 2: The

Median and Achaemenian Periods, Cambridge University Press, 1985, pp. 36-148.

185. Dittmann R., Problems in the Identification of an Achaemenid and Mauryan Horizon in North-Pakistan, AMI, 1984, Band 17, pp. 155-193.

186. Dumbrell W. J., The Tell el-Maskhuta Bowls and the "Kingdom" of Qedar in the Persian Period, BASOR, 1971, № 203, pp. 33-44.

187. Dusinberre E. R. M., Satrapal Sardis: Achaemenid Bowls in an Achaemenid Capital, AJA, Vol. 103, № 1, 1999, pp. 73-102.

188. Eilers W. Der Keilschrifttext des Kyros-Zylinders, Festgabe deutscher Iranisten zur 2500 Jahrfeier Irans, Stuttgart, 1971, SS. 156-166.

189. Elayi J., An Updated Chronology of the Reigns of Phoenician Kings during the Persian Period (539-333 BCE), "Transeuphratène", 32, 2006, pp. 11-43.

190. Elayi J., The Phoenician Cities in the Achaemenid Period: Remarks on the Present State and Prospects of Research, AH IV, "Centre and Periphery", Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1990, pp. 227-237.

191. Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, JNES, Vol. 41, No. 2, 1982, pp. 83-110.

192. Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, JANES, Vol. 12, 1980, pp. 13-28.

193. Eph'al I., The Western Minorities in Babylonia in the 6th-5th Centuries B.C.: Maintenance and Cohesion, Orientalia, Nova Series, Vol. 47, No. 1, 1978, pp. 74-90.

194. Eshel H., The Governors of Samaria in the Fifth and Fourth Centuries B.C.E., in: Judah and the Judeans in the Fourth Century B.C.E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2007, pp. 223-234.

195. Fantalkin A., Tal O., Judah and Its neighbors in the Fourth century BCE: A Time of Major Transformations, "From Judah to Judaea", Socio-Economic Structures and Processes in the Persian Period, ed. by J. Unsok Ro, Sheffield Phoenix Press, 2012, pp. 133-196.

196. Fleming D., Where was Achaemenid India?, BAI, New Series, Vol. 7, Iranian Studies in Honor of A. D. H. Bivar, 1993, pp. 67-72.

197. Fleming D., Achaemenid Sattagydia and the Geography of Vivana's Campaigns (DB III, 54-75), JRAS, 1982, № 2, pp. 102-112.

198. Fol A., Hammond G. L., Persia in Europe, apart from Greece, in: The

Cambridge Ancient History, Vol. IV, Cambridge University Press, 1988, pp. 234-253.

199. French D., Pre- and Early-Roman Roads of Asia Minor. The Persian Royal Road, Iran, Vol. 36, 1998, pp. 15-43.

200. Fried L. S., The Role of the Governor in Persian Imperial Administration, in: In the Shadow of Bezalel: Aramaic, Biblical, and Ancient Near Eastern Studies in Honor of Bezalel Porten, ed. by Alejandro F. Botta, Brill, Leiden, Boston, 2013, pp. 319-331.

201. Fried L. S., The Artaxerxes Correspondence of Ezra 4, Nehemiah's Wall, and Persian Provincial Administration, in: 'Go Out and Study the Land' (Judges 18:2), Archaeological, Historical and Textual Studies in Honor of Hanan Eshel, ed. by A. M. Maeir, J. Magness, L. H. Schiffman, Brill, Leiden, Boston, 2012, pp. 35-57.

202. Fried L. S., The Political Struggle of Fifth Century Judah, Transeuphratène 24, 2002, pp.

203. Frye R., Assyria and Syria: Synonyms, JNES, Vol. 51, № 4, 1992, pp. 281-285.

204. Gagoshidze I., South Caucasus and Achaemenids, «Արագածի թիկունքում»: Հնագիտական հետազոտություններ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2018, էջ 225-229:

205. Gates Ch., Tracking the Achaemenid Persians in Anatolia, AJA, Vol. 109, № 4, 2005, pp. 789-792.

206. Gershevitch I., Iranian Nouns and Names in Elamite Garb, TPS, 1969, pp. 165-200.

207. Ghirshman R., La civilisation achéménide et l'Urartu, in: A Locust's Leg. Studies in honour of S. H. Taqizadeh, Percy Lund, Humphries & Co., Ltd., London, 1962, pp. 85-88.

208. Ghirshman R., Masjid-i-Solaiman, résidence des premiers Achéménides, Syria, Vol. 27, 1950, pp. 205-220.

209. Georges P. B., Persian Ionia under Darius: The Revolt Reconsidered, Historia, Bd. 49, H. 1, 2000, pp. 1-39.

210. Grave P., Kealhofer L., Bilgen N., Marsh B., The Archaeology of Achaemenid Power in Regional Western Anatolia, McDonald Institute for Archaeological Research, CAJ, Vol. 26, Issue 4, 2016, pp. 697–720.

211. Grenet F., Zarathustra's Time and Homeland: Geographical Perspectives, in: The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, ed. by

M. Stausberg, Y. Sohrab-Dinshaw Vevaina, Chichester, UK, 2015, pp. 21-29.

212. Grillot-Susini F., Herrenschmidt C., Malbran-Labat F., La version élamite de la trilingue de Behistun: une nouvelle lecture, JA, 1993, Vol. 281, pp. 19-59.

213. Gropp Von G., Die Darstellung der 23 Völker auf den Reliefs des Apadana von Persepolis, IA, 44, 2009, SS. 283-359.

214. Gropp G., Sassen die Skudra wirklich in Thrakien? Ein Problem der Satrapienverteilung in Kleinasien, in: Achaemenid Anatolia, ed. T. Bakir, 2001. Leiden, pp. 37-42.

215. Guidi I., Ostsyrische Bischofe und Bischofssitze im V, VI und VII Jahrhundert, ZDMG, Bd. 43, Leipzig, 1889, SS. 388-414.

216. Hammond N. G. L., Alexander and Armenia, Phoenix, Vol. 50, No. 2, Classical Association of Canada, 1996, pp. 130-137.

217. Hansman J., Anshan in the Median and Achaemenian Periods, in: The Cambridge History of Iran, Vol. 2, ed. by I. Gershevitch, Cambridge University Press, 1985, pp. 25-35.

218. Hansman J., Elamites, Achaemenians and Anshan, Iran, Vol. 10, 1972, pp. 101-125.

219. Harmatta J., The Origin of the Name Σόγδοι, ACUSD, 1977, XIII, pp. 3-6.

220. Heltzer M., Some Aspects of Achaemenid Taxation in the V Satrapy (Phoenicia), in: M. Molina et al. (edd.), Arbor scientiae. Estudios del Proximo Antiguo dedicados a Gregorio del Olmo Lete, AUSA, Sabadell (Barcelona), Aula Orientalis, 17-18, 1999-2000, pp. 349-352.

221. Henkelman W. F. M., Imperial Signature and Imperial Paradigm: Achaemenid administrative structure and system across and beyond the Iranian plateau, in: Die Verwaltung im Achämenidenreich. Imperiale Muster und Strukturen/Administration in the Achaemenid Empire. Tracing the Imperial Signature, Herausgegeben von/Edited by B. Jacobs, W. F. M. Henkelman, M. W. Stolper, CO, Band 17, 2017, pp. 45-256.

222. Henkelman W. F. M., Of Tapyroi and Tablets, States and Tribes: The Historical Geography of Pastoralism in the Achaemenid Heartland in Greek and Elamite Sources, BICS, Vol. 54, No. 2, 2011, pp. 1-16.

223. Henkelman W. F. M., Jacobs B., Stolper M. W., Introduction: Tracing the Imperial Signature, in: Die Verwaltung im Achämenidenreich. Imperiale Muster und Strukturen/Administration in the Achaemenid Empire. Tracing the Imperial Signature, Herausgegeben von/Edited by B. Jacobs, W. F. M.

Henkelman, M. W. Stolper, CO, Band 17, 2017, pp. VIII-XXXIII.

224. Henkelman W. F. M., Kuhrt A., Rollinger R., Wiesehöfer J., Herodotus and Babylon Reconsidered, CO, Band 3, Herausgegeben von R. Bichler, B. Jacobs, G. B. Lanfranchi, R. Rollinger, K. Ruffing und J. Wiesehöfer, Wiesbaden, 2011, pp. 449-470.

225. Henkelman W. F. M., Stolper M. W., Ethnic identity and the ethnic labelling at Persepolis: the case of the Skudrians, in: Organisation des pouvoirs et contacts culturels dans les pays de l'empire achéménide, ed. by P. Briant, M. Chauveau, Persika 14, Éditions de Boccard, Paris, 2009, pp. 271-329.

226. Hennig R. Der Araxes des Herodot = die Wolga, Pettermann's Mitteilungen, 1929, II, 7/8, SS. 169-174.

227. Herda A., Greek (and our) views on the Karians, Luwian Identities: Culture, Language and Religion Between Anatolia and the Aegean, Brill, Leiden, Boston, 2013, pp. 421-506.

228. Herles M., Achaemenids and the Southern Caucasus, in: Bridging Times and Spaces, Festschrift in Honour of Gregory E. Areshian on the Occasion of His Sixty-Fifth Birthday, ed. by P. S. Avetisyan and Y. H. Grekyan, Oxford, 2017, pp. 133-153.

229. Herrmann A., Massagetai, RE, XIV, Stuttgart, 1930, cols. 2124-2129.

230. Herrmann A., Sakai, RE, I A, Stuttgart, 1920, cols. 1770-1806.

231. Herzfeld E., Medisch und Parthisch, AMI, Bd. VII, Ht. I, Berlin, 1934, SS. 9-64.

232. Herzfeld E., Sakastān, AMI, 1932, IV, 1/2, SS. 1-116.

233. Herzfeld E., A New Inscription of Darius from Hamadan, "Memoirs of the Archaeological Survey of India", Calcutta, 1928, № 34, 1-7+III pp.

234. Hewsen R. H., Introduction to Armenian Historical Geography III: The Boundaries of Orontid Armenia, RÉA, t. XVIII, 1984, pp. 347-366.

235. Hewsen R., The Boundaries of Achaemenid «Armina», RÉA, t. XVII, 1983, pp. 123-143.

236. Hinz W., Zur Behistun-Inschrift des Dareios, ZDMG, 1942, Bd. 96/2, SS. 326-349.

237. Hinz W., Zur Iranischen Altertumskunde, ZDMG, 1939, Bd. 93, SS. 363-380.

238. Hoglund K., The Achaemenid Context, in: "Second Temple Studies", 1: Persian Period, ed. by Ph. R. Davies, "Journal for the Study of the Old Testament", Supplement Series 117, Sheffield Academic Press, 1991, pp. 54-72.

239. Hyland J., Vishtaspa krny: An Achaemenid Military Official in 4th-century Bactria, ARTA 2, 2013, pp. 1-7 (http://www.achemenet.com/pdf/arta/2013.002-Hyland.pdf).

240. Işin G., An Achaemenid Stamp Seal from Patara, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-fourth Centuries B.C.), ed. by I. Delemen, Turkish Institute of Archaeology, Istanbul, 2007, pp. 75-82.

241. Izdimirski M., Deportations of *kurtaš* Workers in the Achaemenid Empire according to Classical Literary Tradition, ŽA, Fasc. 1-2, 2018, pp. 51-63.

242. Jacobs B., Armenien von der Eroberung durch die Perser bis in die Zeit Alexanders des Grossen, Armenien: Frühzeit bis 1. Jahrtausend-Sprache, Kunst und Geschichte, Linzer Archäologische Forschungen 18, Linz, 1990, SS. 37-46.

243. Junge J., Parikanioi, RE, XXXVI, 3, Stuttgart, 1949, cols. 1482-1483.

244. Junge P. J., Ākaufačiya. Ein Beitrag zur Länderkunde des alten Iran, ZDMG, Bd. 98, 1944, pp. 369-376.

245. Junge J., Orthokorybantioi, RE, XXXVI, 1, Stuttgart, 1942, cols. 1484-1490.

246. Jursa M., Taxation and Service Obligations in Babylonia from Nebuchadnezzar to Darius and the Evidence for Darius' Tax Reform, CO, Band 3, Herausgegeben von R. Bichler, B. Jacobs, G. B. Lanfranchi, R. Rollinger, K. Ruffing und J. Wiesehöfer, 2011, pp. 431-448.

247. Kaper O. E., Petubastis IV in the Dakhla Oasis: New Evidence about an Early Rebellion against Persian Rule and Its Suppression in Political Memory, in: Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Ancient Near East Monographs 13, Society of Biblical Literature Press, Atlanta, 2015, pp. 125-149.

248. Karttunen K., Gandhāra and the Greeks, BAI, New Series, Vol. 23, 2009, pp. 131-134.

249. Katzenstein J., Tyre in the Early Persian Period (539-486 B. C. E.), BA, Vol. 42, № 1, 1979, pp. 23-34.

250. Kent R. G., The oldest Old Persian inscriptions, JAOS, Vol. 66, 1946, pp. 206-212.

251. Kent R. G., The Lists of Provinces, JNES, Vol. II, 1943, pp. 302-306.

252. Kent R. G., The Darius Suez c Inscription, JNES, Vol. I, 1942, pp. 415-421.

253. Kent R. G., The Record of Darius's Palace at Susa, JAOS, Vol. 53, No. 1, 1933, pp. 1-23.

254. Kesecker N. T., The Elamite Version of the Inscription of Xerxes I at Van (XV), ՎԷՄ, 2018, թիվ 1, էջ 31-37:

255. Khan F., Knox R., Magee P., Thomas K., Petrie C., Akra: the Ancient Capital of Bannu, North West Frontier Province, Pakistan, JAC, 2000, Vol. 23, № 1, pp. 2-203.

256. Khorikyan H., The Administrative Division of the 13th Satrapy of Achaemenid Persia in the Reign of Darius II, МИ, вып. 10, 2017, pp. 174-180.

257. Khorikyan H., On Location of XI and XV Satrapies of Achaemenid Persia, HŚ, nr 5, 2016, pp. 23-29.

258. Khorikyan H., The Western and Southern Boundaries of Satrapic Armenia in the VI-IV Centuries B.C., ԲՀ, 2015, թիվ 2, էջ 41-68:

259. Kloner A., Stern I., Idumea in the Late Persian Period (Fourth Century B. C. E.), in: Judah and the Judeans in the Fourth Century B.C.E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2007, pp. 139-144.

260. Knauss F., Ludwig N., Mehnert G., Sens U., Wicke D., Ein Perserbau auf dem Ideal Tepe bei Karačamirli (Aserbaidschan), ARTA 2, 2007, pp. 1-51 (http://www.achemenet.com/document/2007.002-Knauss.pdf).

261. Knauss F., Ancient Persia and the Caucasus, IA, Vol. XLI, 2006, pp. 79-118.

262. Koch H., Elamisches Gilgameš-Epos oder doch Verwaltungstäfelchen?, ZA 83, 1993, SS. 219-236.

263. Konuk K., The Hecatomnids, in: Antik Anadolu'nun Taniklari: Testimonies of Anatolian Antiquity: Muharrem Kayhan Collection, Arkas Sanat Merkezi, Izmir, 2015, pp. 32-39.

264. Konuk K., Asia Minor in the Archaic and Classical Periods, in: Survey of Numismatic Research 2008-2013, General Editors C. Arnold-Biucchi – M. Caccamo Caltabiano, Internatlonal Numismatic Commission, International Association of Professional Numismatists, Special Publication 16, Taormina, 2015, pp. 83-92.

265. Konuk K., The Coinage of Hyssaldomos, Dynast of Mylasa, Zurück zum Gegenstand. Festschrift für Andreas E. Furtwängler, Herausgegeben von R. Einicke, S. Lehman..., Band II, Beier & Beran Langenweißbach, 2009, pp. 357-363.

266. Konuk K., Erbbina in Caria?, in: Ancient History, Numismatics and Epigraphy in the Mediterranean World. Studies in Memory of Clemens E. Bosch and Sabahat Atlan and in honour of Nezahat Baydur, ed. by O. Tekin, Istanbul, 2009, pp. 193-199.

267. Kopanias K., Cilicia and Pamphylia during the Early Iron Age: Hiyawa, Mopsos and the Foundation of the Greek Cities, AURA, Vol. 1, 2018, pp. 69-95.

268. Kuhrt A., The Assyrian Heartland in the Achaemenid Period, Dans les pas des Dix-Mille, éd. P. Briant, Pallas, 43, 1995, pp. 239-254.

269. Kuhrt A., Achaemenid Babylonia: Sources and Problems, in: AH IV, Centre and Periphery, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1990, pp. 177-194.

270. Kuhrt A., The Cyrus Cylinder and Achaemenid Imperial Policy, JSOT, 1983, Vol. 8, № 25, pp. 83-97.

271. Kullanda S., External relations of Scythian, Вопросы языкового родства: Международный научный журнал, 2014, № 11, Российский государственный гуманитарный университет, Москва, pp. 81-90.

272. Laird A. G., The Persian Army and Tribute Lists in Herodotus, CPh, Vol. XVI, № 4, 1921, pp. 305-326.

273. Lehmann-Haupt C. F., Satrap, RE, München, 1921, cols. 82-188.

274. Lemaire A., Administration in Fourth-Century B.C.E. Judah in Light of Epigraphy and Numismatics, in: Judah and the Judeans in the Fourth Century B. C. E., ed. by O. Lipschits, G. Knoppers, R. Albertz, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2007, pp. 53-74.

275. Levin Y., The Southern Frontier of Yehud and the Creation of Idumea, A Time of Change: Judah and its neighbours in the Persian and Early Hellenistic Periods, T&T Clark, London, New York, 2007, pp. 239-252.

276. Lipschits O., Achaemenid Imperial Policy, Settlement Processes in Palestine, and the Status of Jerusalem in the Middle of the Fifth Century B. C. E., in: Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2006, pp. 19-52.

277. Lloyd A. B., Darius I in Egypt: Suez and Hibis, in: Persian Responses: Political and Cultural Interactions with (in) the Achaemenid Empire, ed. C. Tuplin, The Classical Press of Wales, Swansea, 2007, pp. 99-115.

278. Llewellyn-Jones Ll., The Achaemenid Empire, in: King of the Seven Climes. A History of the Ancient Iranian World (3000 BCE - 651 CE), ed. by Touraj Daryaee, Ancient Iran Series Vol. IV, Jordan Center for Persian

Studies, 2017, pp. 63-103.

279. MacGinnis J., Herodotus' Description of Babylon, BICS, 1986, № 33, pp. 67-86.

280. Magee P., Petrie C. A., West of the Indus-East of the Empire: The Archaeology of the Pre-Achaemenid and Achaemenid Periods in Baluchistan and the North-West Frontier Province, Pakistan, in: The World of Achaemenid Persia: History, Art and Society in Iran and the Ancient Near East, ed. by J. Curtis and St J. Simpson, London, 2010, pp. 503-522.

281. Mallowan M., Cyrus the Great (558-529 B. C.), Iran, Vol. X, 1972, pp. 1-17.

282. Manoledakis M., The Local Peoples of the Southern Black Sea Coast, in: CA 18, Essays on the Archaeology and Ancient History of the Black Sea Littoral, ed. by M. Manoledakis, G. R. Tsetskhladze and I. Xydopoulos, 2018, pp. 147-171.

283. Manoledakis M., The Southern Black Sea in the Homeric Iliad: Some Geographical, Philological and Historical Remarks, in: Exploring the Hospitable Sea. Proceedings of the International Workshop on the Black Sea in Antiquity (Thessaloniki, 21-23 September 2012), ed. by M. Manoledakis, British Archaeological Reports Series, Oxford, 2013, pp. 19-37.

284. Machinist P.,The First Coins of Judah and Samaria: Numismatics and History in the Achaemenid and Early Hellenistic Periods, AH VIII, Continuity and Change, Leiden, 1994, pp. 365-380.

285. Markwart J., Die Sogdiana des Ptolemaios, Orientalia, Roma, 1946, Vol. 15, Fasc. 1-2, SS. 123-149; Fasc. 3, SS. 286-323.

286. Marquart J., Das erste Kapitel der Gāpā uštavatī, Orientalia, Roma, № 50, 1930, SS. 1-7+III-VI+1-80.

287. Mazar B., The Aramean Empire and its Relations with Israel, BA, Vol. 25, № 4, 1962, pp. 98-120.

288. Melikian-Chirvani A. S., The International Achaemenid Style, BAI, New Series, Vol. 7, Iranian Studies in Honor of A. D. H. Bivar, 1993, pp. 111-130.

289. Michels Ch., The Persian Impact on Bithynia, Commagene, Pontus, and Cappadocia, CO, Band 19, 2017, pp. 41-55.

290. Minorsky V., Roman and Byzantine Campainges in Atropatene, Iranica, Twenty Articles, Vol. 775, Publications of the University of Tehran, Stephen Austin & Sons Ltd., Tehran, 1964, pp. 86-109.

291. Minorsky V., La domination de Dailamites, London, Iranica, Twenty

Articles, Vol. 775, Publications of the University of Tehran, Stephen Austin & Sons Ltd., Tehran, 1964, pp. 12-30.

292. Morony G. M., Continuity and Change in the Administrative Geography of Late Sasanian and Early Islamic Al-Irāq, Iran, Vol. 20, London, 1982, pp. 1-49.

293. Mittmann S., Tobia, Sanballat und die Persische Provinz Juda, JNWSL, Vol. 26/2, 2000, University of Stellenbosch, SS. 1-50.

294. Munson R. V., Who Are Herodotus' Persians?, The Classical World, 2009, Vol. 102, № 4, pp. 457-470.

295. Narain A. K., The Sakā Haumavargā and the 'Αμύργιοι: The Problem of Their Identity, BAI, New Series, Vol. 1, Inaugural Issue, 1987, pp. 27-31.

296. Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods? Trade between Judea and Phoenicia during the Achaemenid Period, JBL, 130, № 2, 2011, pp. 281-298.

297. Olmstead A. T., Tattenai, Governor of "Across the River", JNES, Vol. 3, № 1, 1944, p. 46.

298. Olmstead A. T., A Persian Letter in Thucydides, AJSLL, Vol. 49, № 2, 1933, pp. 154-161.

299. Oppenheim A., The Babylonian Evidence of Achaemenian Rule in Mesopotamia, in: The Cambridge History of Iran, Vol. 2, Cambridge University Press, 1985, pp. 529-587.

300. Parpola S., Sacas, India, Gobryas, and the Median Royal Court: Xenophon's *Cyropaedia* through the Eyes of an Assyriologist, in: Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. by G. B. Lanfranchi, M. Roaf and R. Rollinger, History of the Ancient Near East, Monograph series 5, S.a.r.g.o.n. Editrice e Libreria, Padova, 2003, pp. 339-350.

301. Payne A., Lycia-Crossroads of Hittite and Greek Traditions?, in: Papers on Ancient Literatures: Greece, Rome and the Near East, ed. by E. Cingano & L. Milano, S.a.r.g.o.n. Editrice e Libreria, Padova, 2008, pp. 471-487.

302. Pearce L., "Judean": A Special Status in Neo-Babylonian and Achemenid Babylonia?, in: Judah and the Judeans in the Persian Period, ed. by O. Lipschits, G. Knoppers, M. Oeming, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2011, pp. 267-277.

303. Pedley J. G., Carians in Sardis, JHS, Vol. 94, 1974, pp. 96-99.

304. Peter M., Petrie C., Knox R., Khan F., Thomas K., The Achaemenid Empire in South Asia and Recent Excavations in Akra in Northwest Pakistan,

AJA, 2005, Vol. 109, pp. 711-741.

305. Petrie C. A., Magee P., Histories, Epigraphy and Authority: Achaemenid and Indigenous Control in Pakistan in the 1st millennium BC, GS, 2007, Vol. 1, pp. 3-22.

306. Piller K. C., The Cadusii in Archaeology? Remarks on the Achaemenid Period (Iron Age IV) in Gilan and Talesh, IC, Vol. 17, 2013, pp. 115-151.

307. Poebel A., The Name of Elam in Sumerian, Akkadian, and Hebrew, AJSLL, Vol. 48, № 1, pp. 20-26.

308. Potts D., The Islands of the XIVth Satrapy, in: New Perspectives in Seleucid History, Archaeology and Numismatics: Studies in honor of Getzel M. Cohen (Beiträge zur Altertumskunde 355), De Gruyter, Berlin, 2019, pp. 375-396.

309. Potts D. T., The Carian Villages, CDLB, 2018, Vol. 2, pp. 1-7.

310. Potts D., Guriania, Γουράνιοι and the Gūrān, in: From Source to History: Studies on the Ancient Near Eastern worlds and beyond dedicated to Giovanni Battista Lanfranchi on the occasion of his 65th birthday on June 23, 2014, ed. by Gaspa Salvatore..., AOAT 412, Ugarit-Verlag, Münster, 2014, pp. 561-571.

311. Potts D.T., Cyrus the Great and the Kingdom of Anshan, in: Birth of the Persian Empire, Vol. I, ed. by V. S. Curtis and S. Stewart, London-New York, I.B.Tauris & Co Ltd, 2005, pp. 7-28.

312. Raimond E., Hellenization and Lycian Cults During the Achaemenid Period, in: Persian Responses: Political and Cultural Interaction with (in) the Achaemenid Empire, ed. by Ch. Tuplin, The Classical Press of Wales, Swansea, 2007, pp. 143-162.

313. Raimond E., Persian Power and Lycian Religion, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-fourth Centuries B.C.), ed. by I. Delemen, Turkish Institute of Archaeology, Istanbul, 2007, pp. 69-74.

314. Rainey A. F., The Satrapy "Beyond the River", AJBA, 1969, № ½, pp. 51-78.

315. Ray J . D., Egypt 525-404 B. C., in: The Cambridge Ancient History, Vol. IV, Cambridge University Press, 1988, pp. 254-286.

316. Rehm E. The Impact of the Achaemenids on Thrace: A Historical Review, in: Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers, edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, pp. 137-160.

317. Reiner E., The Location of Anšan, RA 67, 1973, pp. 57-62.

318. Roaf M., The Subject Peoples on the Base of the Statue of Darius, Cahiers de la Délégation Archéologique Française en Iran, 4, 1974, pp. 73-160.

319. Robinson D., Ancient Sinope, AJP, The Johns Hopkins University Press, Vol. 27, № 2, 1906, pp. 125-153.

320. Rollinger R., The Terms "Assyria" and "Syria" again, JNES, Vol. 65, № 4, 2006, pp. 283-287.

321. Rollinger R., Kerkenes Dağ and the Median "Empire", in: Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. by G. B. Lanfranchi, M. Roaf and R. Rollinger, History of the Ancient Near East, Monograph series 5, S.a.r.g.o.n. Editrice e Libreria, Padova, 2003, pp. 321-326.

322. Rung E., The End of the Lydian Kingdom and the Lydians after Croesus, Political Memory in and after the Persian Empire, ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, pp. 7- 26.

323. Rung E., Some Notes on *Karanos* in the Achaemenid Empire, IA, Vol. 50, 2015, pp. 333-356.

324. Salmin A., ΣΑΣΠΕΙΡΕΣ/ΣΑΥΑΡΟΙ/ΣΑΒΕΙΡΟΙ in the 5th century BC to the 8th century AD, JSEES, Vol. 37, 2016, pp. 17-34.

325. Sarakinski V., The Fallacy of the European Satrapy, ŽA, Fasc. 1-2, 2010, pp. 77-108.

326. Seager R., Tuplin Ch., The Freedom of the Greeks of Asia: on the Origins of a Concept and the Creation of a Slogan, JHS, Vol. 100, 1980, pp. 141-154.

327. Schaeder H. H., Zwei altiranische Ortsnamen, ZDMG 96, 1942, SS. 127-138.

328. Schmitt R., Die achaimenidische Satrapie tayaiy drayahyā, Historia, Bd. 21, Heft 4, 1972, SS. 522-527.

329. Sekunda N., Achaemenid Settlement in Caria, Lycia and Greater Phrygia, AH VI, Asia Minor and Egypt: Old Cultures in a New Empire, ed. by A. Kuhrt, H. Sancisi-Weerdenburg, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1991, pp. 83-143.

330. Sekunda N. V., Persian Settlement in Hellespontine Phrygia, AH III, Method and Theory, ed. by A. Kuhrt, H. Sancisi-Weerdenburg, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1988, pp. 175-196.

331. Shannahan J. Satrapal Coins in the Collection of the Australian Centre for Ancient Numismatic Studies: Tiribazus, Pharnabazus, and Mazaeus,

Journal of the Numismatic Association of Australia, Sydney, Vol. 27, 2016, pp. 41-57.

332. Shourkaei H. B., La satrapie de Phrygie hellespontique (Daskyleion): des origines à la chute de l'Empire perse achéménide, DABIR, 2018, № 5, pp. 1-16.

333. Simon Z., Against the Identification of Karkiša with Carians, in Nostoi: indigenous culture, migration + integration in the Aegean Islands + Western Anatolia during the late bronze + early iron ages, ed. by N. Chr. Stampolidis, C. Maner, K. Kopanias, Koç University Press, 2015, pp. 791-809.

334. Sprengling M., The Aramaic Papyri of Elephantine in English, AJT, Vol. XXI, № 3, 1917, pp. 411-452.

335. Stern E., Between Persia and Greece: Trade, Administration and Warfare in the Persian and Hellenistic Periods (539-63 BCE), ASHL, ed. by T. E. Levy, Leicester University Press, London, New York, 1995, pp. 432-445.

336. Stern E., New Evidence on the Administrative Division of Palestine in the Persian Period, AH IV, Centre and Periphery, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1990, pp. 221-226.

337. Stolper M. W., The Babylonian Enterprise of Belesys, Dan les pas des Dix-Mille, Pallas, 43, 1995, pp. 217-238.

338. Stolper M. W., The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C., JNES, Vol. 48, № 4, 1989, pp. 283-305.

339. Stolper M. W., Bēlšunu the Satrap, in: Language, Literature, and History: Philological and Historical Studies Presented to Erica Reiner, ed. by F. Rochberg-Halton, American Oriental Society, New Haven, Connecticut, 1987, pp. 389-402.

340. Stronach D., Achaemenid village I at Susa and the Persian migration to Fars, Iraq, Vol. 36, No 1/2, 1974, pp. 239-248.

341. Stronk J. P., Crossing the Straits: The Persians in Thrace, Talanta, 30-31, 1998-1999, pp. 55-72.

342. Summers G. D., Summers F., The Kerkenes Dağı Project, in: Ancient Anatolia: Fifty Years' Work by the British Institute at Ankara, ed. by R. Matthews, British Institute of Archaeology at Ankara Special Publication, London, 1998, pp. 177-194.

343. Summers G. D., Archaeological Evidence for the Achaemenid Period in Eastern Turkey, AS, Vol. XLIII, 1993, pp. 85-108.

344. Syme R., The Cadusii in History and in Fiction, JHS, Vol. 108, 1988, pp. 137-150.

345. Tarhan T. M., Median and Achaemenid Periods at Tušpa, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (Sixth-Fourth Centuries B.C.), ed. by İnci Delemen, Istanbul, 2007, pp. 117-130.

346. Tarn W. W., Alexander and the Ganges, JHS, Vol. 43, 1923, pp. 93-101.

347. Tarn W. W., Patrocles and the Oxo-Caspian Trade Route, JHS, Vol. 21, 1901, pp. 10-29.

348. Toorn van der K., Ethnicity at Elephantine: Jews, Arameans, Caspians, Tel Aviv, 2016, Vol. 43, pp. 147-164.

349. Tuell S. S., The Southern and Eastern Borders of Abar-Nahara, BASOR, No. 284, 1991, pp. 51-57.

350. Tucci G., On Swāt. The Dards and Connected Problems, East and West 27, IsMeo, 1977, pp. 9-103.

351. Tuplin Ch., Revisiting Dareios' Scythian Expedition, in: Achaemenid Impact in the Black Sea: Communication of Powers, edited by J. Nieling and E. Rehm, Aarhus University Press, 2010, pp. 281-312.

352. Tuplin Ch., A Foreigner's Perspective: Xenophon in Anatolia, in: The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (6th-4th Centuries B.C.), ed. by I. Delemen, Turkish Institute of Archaeology, Istanbul, 2007, pp. 7-31.

353. Tuplin Ch., Darius' Accession in (the) Media, in: Writing and Ancient Near Eastern Society: Papers in honour of Alan R. Millard, ed. by Bienkowski P., Mee Ch., Slater E., T & T Clark, New York, London, 2005, pp. 217-244.

354. Tuplin Ch., Xenophon in Media, in: Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. by G. B. Lanfranchi, M. Roaf and R. Rollinger, History of the Ancient Near East, Monograph series 5, S.a.r.g.o.n. Editrice e Libreria, Padova, 2003, pp. 351-389.

355. Tuplin C., The Seasonal Migration of Achaemenid King: A Report on Old and New Evidence, in: AH XI, Leiden, 1998, pp. 63-114.

356. Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, in: Coinage and Administration in the Athenian and Persian Empires: The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History, Oxford, 1987, pp. 109-166.

357. Unger E., Urartu, "Reallexikon der Vorgeschichte", ed. M. Ebert, XIV, Berlin, 1928, S. 32.

358. Vallat F., La lettre élamite d'Arménie, ZA 87, 1997, pp. 258-270.

359. Vanderhooft D. S., The Edomite Dialect and Script: A Review of the Evidence, in: D. Edelman (ed.), You Shall Not Abhor an Edomite For He is Your Brother: Edom and Seir in History and Tradition, Atlanta: Scholars Press, 1995, pp. 137-157.

360. Van der Spek R. J., Cyrus the Great, Exiles, and Foreign Gods: A Comparison of Assyrian and Persian Policies on Subject Nations, in: Extraction & Control: Studies in Honor of Matthew W. Stolper, ed. by Michael Kozuh, Wouter F. M. Henkelman, Charles E. Jones and Christopher Woods, Studies in Ancient Oriental Civilization (SAOC), № 68, Chicago-Illinois, 2014, pp. 233-264.

361. Vassileva M., Phrygia and the southern Black Sea littoral, in: The Danubian Lands between the Black, Aegean and Adriatic Seas (7th Century BC-10th Century AD), ed. G. R. Tsetskhladze, A. Avram and J. Hargrave, Oxford, 2015, pp. 91-96.

362. Vassileva M., Persians in Thrace, in: A Companion to Ancient Thrace, ed. by J. Valeva, E. Nankov, D. Graninger, Chichester: Wiley Blackwell, 2015, pp. 320-336.

363. Velayati R., Study of the Cultural, Artistic and Historical Relations between Iran and India in the Achaemenid Period, JSR, 2011, Vol. 3, № 7, pp. 137-156.

364. Vogelsang W., Medes, Scythians and Persians: The Rise of Darius in a North-South Perspective, IA, 1998, Vol. 33, pp. 195-224.

365. Vogelsang W., Gandharans, Bactrians, and Scythians: Who was Who in the Sixth Century B.C.?, in: Eastern Approaches: Essays on Asian Art and Archaeology, ed. T. S. Maxwell, Delhi, Oxford University Press, Bombay, Calcutta, Madras, 1992, pp. 1-15.

366. Vogelsang W., The Achaemenids and India, in: AH IV, Centre and Periphery, ed. by H. Sancisi-Weerdenburg & A. Kuhrt, Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1990, pp. 93-110.

367. Vogelsang, W., Gold from Dardistan. Some Comparative Remarks on the Tribute System in the Extreme Northwest of the Indian Subcontinent, in: La tribute dans l'empire Perse: Travaux de l'Institut d'Etudes Iraniennes de l'Université de la Sorbonne Nouvelle 13, 1989, Paris, pp. 157-171.

368. Vogelsang W., Some Remarks on Eastern Iran in the Late-Achaemenid Period, AH I: Sources, Structures, Synthesis, ed. by Sancisi-Weerdenburg H., Nederlands Instituut voor het Nabije Oosten, Leiden, 1987, pp. 183-189.

369. Vogelsang W., Four short Notes on the Bisutun Text and Monument, IA, 1986, Vol. 21, pp. 121-140.

370. Vogelsang W., Early Historical Arachosia in South-East Afghanistan. Meeting Place between East and West, IA, 1985, Vol. 20, 1985, pp. 55-98.

371. Waerzeggers C., Babylonians in Susa. The Travels of Babylonian Businessmen to Susa Reconsidered, in: Der Achämenidenhof, Herausgegeben von B. Jacobs und R. Rollinger, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2010, pp. 777-813.

372. Waerzeggers C., The Carians of Borsippa, Iraq, 68, 2006, pp. 1-22.

373. Waters M., Parsumaš, Anšan, and Cyrus, in: Elam and Persia, ed. by J. Álvarez-Mon and M. B. Garrison, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2011, pp. 285-296.

374. Weidner E. F., Die älteste Nachricht über das persische Königshaus. Kyros I. ein Zeitgenosse Aššurbânaplis, AO, Bd. 7, 1931-1932, SS. 1-7.

375. Williamson Ch., Labraunda as Memory Theatre for Hellenistic Mylasa, Herom, 2013, Vol. 2, pp. 143-167.

376. Worp K. A., Observations on Some Military Camps and Place Names in Lower Egypt, ZPE 87, 1991, pp. 291-295.

377. Yakubovich I., The Carian Language, by Ignacio J. Adiego, JNES, 2012, Vol. 71, № 1, pp. 131-133.

378. Yigal B., Judeans in Sippar and Susa during the First Century of the Babylonian Exile: Assimilation and Perseverance under Neo-Babylonian and Achaemenid Rule, JANEH, 2014, 1(2), pp. 119–172.

379. Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques. Darius et l' Égypte, JA, t. 260, 1972, f. 3-4, pp. 253-266.

380. Zadok R., Notes on the Historical Geography of Mesopotamia and Northern Syria, Abr-Nahrain, Vol. XXVII, Brill, Leiden, New York, København, Köln, 1989, pp. 154-169.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

HOVHANNES KHORIKYAN

ADMINISTRATIVE DIVISION OF ACHAEMENID PERSIA

Գրաչափ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
28.5 պայմ.տպ. մամուլ: Տպաքանակ՝ 200:



ISBN 978-9939-826-87-5